

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

23

The Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots
“MATENADARAN” and “Friends of the Matenadaran”
Benevolent Fund express their gratitude to “JTI ARMENIA”
CJSC for sponsoring the publication of this volume

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական
հիմնադրամը երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ
ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին սույն հատորի հրատարակությանը
աջակցելու համար



**“MATENADARAN”
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS
BULLETIN OF MATENADARAN**

23

**“Nairi” publishing house
YEREVAN – 2016**

**“МАТЕНАДАРАН”
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА
ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

23

**Издательство “Наири”
ЕРЕВАН – 2016**

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

23

«ՆԱԻՐԻ»

ԵՐԵՎԱՆ – 2016

Բանբերի սույն հատորը նվիրվում է Մատենադարանի տնօրեն,
ԳԱԱ թղթակից անդամ
Հրայր Թամրազյանի հիշատակին

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան Օ. Վարդազարյան, Գ. Գասպարյան, Վ. Թորոսյան

«Բանբեր Մատենադարանի», շ. 23 Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. – Եր.: «Նաիրի» հրատ., 2016:

Շ. 23/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2016:

«Բանբեր Մատենադարանի» 23-րդ հատորում ընդգրկված են «Նարեկացիական ընթերցումներ» 2-րդ միջազգային գիտաժողովի (28-29 հոկտեմբերի, 2016) նյութերը, Տայքին նվիրված միջազգային գիտաժողովի (22-24 հունիսի, 2016) նյութերի ընտրանի, ինչպես նաև հայագիտության տարբեր բնագավառների նվիրված հոդվածներ, Մատենադարանում պահվող ձեռագրերի նկարագրություն և հին բնագրերի հրատարակումներ:



... Եվ վերջապես, իմ վերջին տարիների աշխատանքը Մատենադարանում, որ ես համարում եմ իմ կենսագրության, իմ ստեղծագործության կարևորագույն մասը, ուր ի մի են եկել նշված հոգևոր սկիզբները – այն բոլորիս համար լեցուն է եղել ձեռքբերումներով և թռիչքաձև զարգացումներով – լինի դա նոր, սքանչելի կառույցի շինությունը, թե հին, կոթողային շենքի նորակերտումը, հազարավոր ձեռագրերի և հնատիպ գրքերի, հարյուր հազարավոր վարերագրերի ձեռքբերումը, գիտական անփյտելի նվաճումները, Մատենադարանի խորքային ու տարածական զարգացումները և վերջապես հայագետների նոր, տաղանդավոր ու շնորհաշատ սերունդների ասպարեզ մտնելը, որոնցով Մատենադարանը մեր հոգևոր անդաստանում վերածվել է ծաղկուն մի պարտեզի:

Մատենադարանի նորակերտումն, առանց չափազանցության, վերջին տասնամյակների պատմամշակութային ամենամեծ իրադարձությունն է մեր անկախ պետականության ամենամեծ ձեռքբերումներից մեկը:

Իրոք այդ վերակերտումը վարմանահրաշ էր, և նրա տեսիլքը՝ «սիրտ պատռելու չափ պայծառ», ինչպես Չարենցն է գրել Թամանյանի մասին...

Մատենադարանը մեր Սրբազան հիշողության շտեմարանն է, որը կենդանի է պահում սերունդների շղթան, այն կարծես մեր կորուսյալ դրախտի վերհուշն է, որը լուսավորում է մեր լինելության ճանապարհը և կանխորոշում մեր ապագան:

Հրաչյա Թամրազյանի ելույթից իր ծննդյան
60-ամյակի առիթով միջոցառման ժամանակ

Մատենադարան, 5 դեկտեմբերի, 2014

ՀՐԱԶՅԱԹԱՄՐԱԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մեր ժամանակներում քիչ են այն մտավորականները, ովքեր մինչև վերջ՝ անկախ հանգամանքներից, հավատարիմ են մնացել իրենց կոչմանը: Հրաշյա թամրազյանը վստահորեն այդ մտավորականներից էր: Եվ բարեբախտություն պետք է համարել, որ հենց նա՝ ստանձնեց Մատենադարանի տնօրինությունը 2007 թ. սկսած:

Եվ իսկապես թամրազյանը դավանանքի և հավատամքի մարդ էր:

Որպես բանաստեղծ՝ անխափան հետևեց մեր պոեզիայի դասական ավանդներին՝ դրանք անընդհատ թարմացնելով միջնադարյան մեր մատենագիրների կենսունակ ավիշով: Արդեն նոր ժամանակներում նա մեր բանաստեղծություն բերեց դարերով բյուրեղացած հայի քրիստոնեությունը թե՛ իր առաքելական արմատներով, թե՛ իր անզիջում ավանդապահությունը և թե՛ ազգի ինքնությունը հաստատող և վերահաստատող հարասություններով: Սա մի համադրություն էր, որ հույս էր ներշնչում, քանի որ թամրազյանի գաղափարաբանության հիմքում մարդու ազնիվ կերպարն է՝ ի հակադրություն իրականության մեջ ծաղկող ստորություն, սերն է ի հեճուկս ծավալվող ատելություն, և հավատը՝ ի հակադրություն հոգևոր աղանդավորության:

Թամրազյանն իր ողջ գրականությամբ, ինչպես Գրիգոր Նարեկացին, աղոթում էր մեզ համար, հորդորում էր մեզ հղկել ու կատարելագործել ներքին մարդուն, պատգամներ էր հղում մաքրագործելու և մաքրագործվելու, պատվիրում էր տեսնել բարին և մերժել չարը, և անգամ չարամիտներին դարձի բերելու մեծ հավատ ունեւր: Նրա պատգամները միայն մեկ ատաղձ ունեն՝ մարդու բարոյական նկարագիրը, ուր բանաստեղծը, թարգմանիչը, գիտնականը, պետական գործիչը ներդաշնակվում է զարմանալիորեն, միասնական է դառնում և անբեկանելի՝ ամեն տեսակի արգարացումների հանդեպ:

Գրական ասպարեզ իջնելով XX դարի 80-ական թվականներին՝ թամրազյանը բանաստեղծական խոսքի նորարարական իմաստաբանության հիմնադիրներից մեկը եղավ: Թամրազյանի բանաստեղծական աշխարհը հայոց լեզվի և գրականության բազմաթիվ նոր երակների բացահայտման և զարգացման կենսունակ ուղեցույց դարձավ: Ըստ էության, թամրազյանն ընտրեց բանաստեղծելու ամենադժվար եղանակը, քանի որ ավանդական ձևերի մեջ նորարար լինելը բովանդակային հզոր լիցքերի վկայությունն է:

XX դարում ձևավորված բանաստեղծական խոսքի գերիրապաշտական բազմաթիվ հոսանքներ են ներառված թամրազյանի պոեզիայում, սակայն ոչ թե որպես պարզ հետեղություն կամ ոճավորում, այլ որպես մեկնակետ և հայացք, որպես արձագանք ժամանակակից կյանքի իրողություններին: Այս

առուժով Թամրազյանի բանաստեղծությունը նոր հանգրվանների և տարածքների նվաճման վառ օրինակ է: Ասվածի վկայությունն է նաև այն փաստը, որ Հ. Թամրազյանը թարգմանել և հրատարակել է XX դարասկզբի ռուսական բանաստեղծության ականավոր ներկայացուցիչների՝ Բ. Պաստեռնակի, Ս. Եսենինի և այլոց երկերը, ինչպես նաև կազմել և հրատարակել է «XX դարասկզբի ռուսական պոեզիան» ժողովածուն, որը ծրագրային հայտ էր գրականությունը վերակենդանացնելու՝ Թամրազյանի դավանած նոր սկզբունքների:

Անկասկած Թամրազյանի գաղափարի նվիրյալ է, և, որպես գիտնական ու բանասեր, իր գիտական գործունեության ողջ ընթացքում մեղմաբան աշխատում էր՝ շրջանառության մեջ դնելով նորանոր մոտեցումներ և հիմնարար մեկնակետեր՝ մասնավորապես նարեկացիագիտության և X դարի հայ մատենագրության ուսումնասիրման բնագավառում: Հատկապես նրա վերջին մենագրությունները՝ «Գրիգոր Նարեկացին և նորայատոնականությունը», «Գրիգոր Նարեկացին և Կիրիլիայի բանաստեղծական արվեստի դպրոցը», «Գրիգոր Նարեկացին և նարեկյան դպրոցը» (եռահատոր), ինչպես նաև վերջին տարիներին լույս տեսած՝ X դարի մատենագրությունն ամփոփող «Մատենագիրք Հայոց» մատենաշարի երկու ստվարածավայ հատորները, որոնց կազմողն ու խմբագիրն է Հ. Թամրազյանը, միանգամայն նոր հորիզոններ են ուրվագծում Հայոց պատմության և հայ մշակույթի համար այդ շրջադարձային փուլերի ուսումնասիրման բնագավառում: Այս հատորներում, ի թիվս բանասիրության հայտնի երկերի, բազում նորահայտ բնագրեր են հրատարակվել, որոնք ամբողջացնում են հայագիտության պատկերացումները այդ շրջանի հայ ժողովրդի պատմության և մշակույթի մասին:

Հ. Թամրազյանը նոր հանգրվանների ջատագով էր:

Նրա տնօրինության ժամանակ Մատենադարանը վերակերտվեց՝ կառուցվեց վարչական և արխիվային նոր մասնաշենքը, իսկ հին մասնաշենքն ամբողջովին վերածվեց թանգարանային համալիրի, ինչը հնարավորություն ստեղծեց արդիականացնելու ձեռագիր և տպագիր հավաքածուների պահպանության պայմանները, մեծացավ ցուցադրվող ցուցանմուշների թիվը՝ հնարավորություն ստեղծելով առավել լայն ծավալով հանրահռչակելու մեր հոգևոր գանձերը: Պայմաններ ստեղծվեցին միջազգային շափորոշիչներին համապատասխան գիտաժողովներ, սեմինարներ և վարպետության դասեր անցկացնելու համար: Եվ այսօր, շնորհիվ Թամրազյանի ջանքերի, Մատենադարանը հզոր մի կառույց է՝ իր գիտական, գիտատեխնիկական ստորաբաժանումներով և թանգարանային համալիրով:

Մատենադարանում վերջին տարիներին կատարված արմատական փոփոխությունները հիմնականում պայմանավորված են այնպիսի հիմնարար ծրագրերի իրականացումով, ինչպիսիք են գիտատեխնիկական նոր բաժինների ստեղծումը, սերնդափոխության խնդիրը լուծելու նպատակով երիտասարդնե-

րի մեծ ներհոսքի ապահովումը, ֆոնդային և վերականգնողական աշխատանքների արդիականացումը, արտերկրի գիտական հաստատությունների հետ կապերի ամրապնդումն ու ընդլայնումը, ձեռագիր հավաքածուների թվայնացման աշխատանքների կազմակերպումը, թանգարանային համալիրի ընդլայնումն ու արդիականացումը: Այս և այլ բազում ծրագրերի ոգեշնչման ու կազմակերպման անխոնջ, ամենօրյա սատարողն էր Թամրազյանը:

Թամրազյանի տնօրինության տարիներին նրա անմիջական ոգեկոչումով և ամենօրյա ջանքերի շնորհիվ Արցախում Գանձասարի վանքի հարևանությամբ բացվեց Արցախի ձեռագրական գանձերը ներկայացնող Մատենադարանի մասնաճյուղը: Հատկապես ձեռագրային ֆոնդի հարստացման գործում այդ տարիներին աննախադեպ արդյունքներ գրանցվեցին: Մատենադարանի ձեռագրային հավաքածուն Հ. Թամրազյանի տնօրինության տարիներին ավելացավ շուրջ 2000 միավորով, իսկ ձեռք բերված արխիվային վավերագրերի թիվն անցնում է 30000 միավորից:

Սա վկայությունն է Թամրազյանի անկասելի վարչարարական շնորհի: Վարչարարություն, որ տվյալ դեպքում հիմնված է աշխատանքային առողջ մթնոլորտի ստեղծման գերակայության վրա:

Մեր հայրենիքի և հայ ժողովրդի հոգևոր սահմանն սկսվում է Մատենադարանից:

Հրաչյա Թամրազյանը մեր հոգևոր եզերքների և մշակույթի պաշտպանի վառ օրինակ եղավ մեզ համար: Դա է նրա հաղթանակը մահվան հանդեպ...

Գուրգեն Գասպարյան

ՀՐԱԶՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հրաչյա Հրանտի Թամրազյանը ծնվել է 1953 թ. դեկտեմբերի 5-ին, Երևանում:

1971 թ. ավարտել է Երևանի Ն. Կրուպսկայայի (այժմ՝ Նիկոլ Աղբալյան) անվան դպրոցը:

1976 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը:

1977-1988 թթ. աշխատել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, սկզբում որպես ավագ լաբորանտ, ապա՝ կրտսեր և ավագ գիտաշխատող:

1983 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Անանիա Նարեկացին և X դ. հայ բանաստեղծությունը» թեմայով:

1999 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Նարեկյան դպրոցը» թեմայով ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան:

1985 թ. ընտրվել է Հայաստանի Գրողների միության անդամ:

1988 թ. «Սովետական գրող» (այնուհետև՝ «Նաիրի») հրատարակչությունում գլխավոր խմբագիր:

1991-1994 թթ. «Նաիրի» հրատարակչության տնօրեն:

1994 թ. ՀՀ Կառավարությանն առընթեր Հրատարակչության պետ:

1995-1997 թթ. ՀՀ Տեղեկատվության նախարար:

1997-2007 թթ. «Նաիրի» հրատարակչության գլխավոր տնօրեն և համատեղում Մատենադարանի ավագ գիտաշխատող:

2007-2016 թթ. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն:

2015 թ. ընտրվել է Միլանի Ամբրոզիան ակադեմիայի անդամ, ինչպես նաև ստացել է ակադեմիայի Արևելքի բաժնի ակադեմիկոսի կոչում:

2015 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Մրցանակներ

Թարգմանական գործունեության համար

1984 թ. «Ավանգարդ» թերթի մրցանակ:

1985 թ. «Գարուն» ամսագրի մրցանակ:

2003-2005 թթ. Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի և Հայաստանի Գրողների միության սահմանած «Աևոն Մկրտչյանի» անվան մրցանակներ:

2014 թ. ՌԴ գրողների միության «Ս. Ա. Եսենինի անվան «Ոսկե աշուն» գրական-հասարակական մրցանակ և շքանշան՝ «ՌԴ և ՀՀ ժողովուրդների միջև մշակութային կապերի ամրապնդման հարցում մատուցած ծառայությունների համար»:

ՌԻ գրողների միության Մ. Յու. Լերմոնտովի անվան դիպլոմ և մեդալ՝ բանաստեղծական-թարգմանական գործունեության համար:

Գրական և հայագիտական գործունեության համար

1991 թ. Հայաստանի Գրողների միության Ավ. Իսահակյանի անվան մրցանակ «Նոր տոմար» ժողովածուի համար:

2003 թ. «Տարվա լավագույն բանաստեղծական ժողովածու», մրցանակ՝ «Զվարթ գիտություն» ժողովածուի համար:

2007 թ. Հայաստանի Գրողների միության «Գրական վաստակի համար» շքանշան:

2010 թ. Թեքեյան Մշակութային միության «Վահան Թեքեյանի» մրցանակ՝ «Մայր հղացք» բանաստեղծական ժողովածուի համար:

2011 թ. «Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին» մեդալ «հայ գրականության, գրականագիտության բնագավառում ունեցած ծանրակշիռ ավանդի և անուրանալի ծառայության համար հայագիտության ասպարեզում»:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության 50-ամյակի հուշամեդալ՝ «համատեղ գիտական, մշակութային, ազգանվեր արդյունավետ գործունեության համար»:

2011 թ. «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ:

2012 թ. ՀՀ Նախագահի մրցանակ գրականության ասպարեզում:

2013 թ. ՀՀ ԳԱԱ հուշամեդալ՝ «Հայագիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար»:

2015 թ. ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի Զինգիդ Այթմատովի անվան գրական մրցանակ:

2015 թ. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության «Վաչագան Բարեպաշտի» անվան մրցանակ:

Մատենադարանի 2007-2016 թթ. կառուցապայմանագրերի ձեռքբերումները

2007-2016 թթ. Մատենադարանի աշխատակազմի համալրում 250 աշխատողներով, որոնցից 90-ը՝ գիտաշխատող, ինը գիտական բաժինների համալրմանը զուգահեռ ևս ինը բաժինների և խմբերի կազմավորում:

Մատենադարանի ձեռագրական հավաքածուի, համալրման, նվիրատվությունների, ուսումնասիրությունների վրա հիմնված վերահաշվարկների ու ճշգրտումների արդյունքում շուրջ 5000 ձեռագրերի հավելում (17 500-ից 22.550), ձեռագրերի թվայնացմամբ սպասարկման նոր համակարգի ներդրում:

Ֆոնդերի պահպանության և վերանորոգման ասպարեզում արտերկրի 70-ից ավել կենտրոնների հետ համագործակցության պայմանագրեր:

2007-2016 թթ. Արխիվային ֆոնդերի համալրման, եղած նյութերի գիտական մշակման և ուսումնասիրման արդյունքում մոտ 42.000 միավորով հարստացում:

2011 թ. Մատենադարանի գիտական մասնաճյուղի նոր մասնաշենքի բացում:

2013 թ. Մատենադարանի հին շենքի վերանորոգում և բացում՝ որպես թանգարանային հատված՝ նախկին 1-ի փոխարեն 14 ցուցադրություններով:

2015 թ. Մաշտոցի անվան Մատենադարանի մասնաճյուղի բացում Արցախում («Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան-Փանծասար» գիտամշակութային կենտրոն):

«Մատենագիրք հայոց» մատենաշարի Զ-ի հատորների, «Յուզակ Ձեռագրաց» մատենաշարի Դ-Թ հատորների, Յուզակ Մատենադարանի ձեռագիր Ղուրանների, Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (հատոր Գ) հրատարակություն, «Բանբեր Մատենադարանի» ժողովածուի 18-22 համարների հրատարակություն:

2012 թ. ԱՊՀ գործադիր կոմիտեի (ք. Մինսկ) որոշմամբ՝ «մշակութային ժառանգություն» ուղղությամբ Մեսրոպ Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին ԱՊՀ բազային կազմակերպության կարգավիճակի շնորհում:

2012 թ. Զմմառի վանքի մեծավոր հայր, Պատրիարքական Կղերի Միաբանության Ընդհանուր փոխանորդ գերպո. Գաբրիել Թ.Մ.Վ. Մուրադյանի և Մատենադարանի տնօրինության միջև համաձայնագրի ստորագրում Զմմառի վանքի չցուցակագրված-չնկարագրված ձեռագրերի նկարագրության և ձեռագրացուցակի պատրաստության աշխատանքները կատարելու վերաբերյալ: Սրա արդյունքում Մատենադարանի մի խումբ գիտաշխատողների իրականացրած մոտ 500 ձեռագրերի նախնական նկարագրություն և թվայնացում («Յուզակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի, հատոր Գ.» հրատարակության պատրաստում):

2014 թ. «Մատենադարանի երիտասարդ գիտաշխատողների միավորում» հասարակական կազմակերպության հիմնադրում:

2015 թ. Մարիա և Բեատրիս Արդյանների կողմից Մատենադարանի նախաձեռնությամբ «Մաշտոց» հայ մշակույթի պահպանման և զարգացման հիմնադրամի ստեղծում:

Պարբերական գիտաժողովների հիմնադրում

2011 թ. «Հիշողության կերպարանքները» միջազգային գիտաժողով (6 գիտաժողով):

2012 թ. Մատենադարանի «Երիտասարդական գիտաժողով» (երկու գիտաժողով- 2013 թ., 2016 թ.):

2016 թ. «Նարեկացիական ընթերցումներ» միջազգային գիտաժողով:

Միջազգային գիտաժողովների կազմակերպում

2008 թ. Լևոն Խաչիկյանի ծննդյան 90-ամյակին նվիրված Հայագիտական միջազգային գիտաժողով:

2009 թ. Մաշտոցի անվան Մատենադարանի հիմնադրման հիսնամյակին նվիրված միջազգային գիտական նստաշրջան:

2011 թ. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով:

2011 թ. Հայագիտական և իրանագիտական միջազգային գիտաժողով նվիրված Մատենադարանի ձեռագրական ժառանգության իրանագիտական արժեքին (Իրանի Իսլամական հանրապետության տեխնոլոգիաների և հետազոտությունների նախարարության միջազգային գիտական համագործակցությունների կենտրոնի, Սպահանի համալսարանի և ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի հետ համատեղ):

2014 թ. Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (AIEA) 13-րդ գիտաժողով: **2015 թ.** «Վերապրած մշակույթ». գիտաժողով նվիրված ցեղասպանության 100-րդ տարելիցին:

2016 թ. «Պատմական Տայք. Պատմություն, մշակույթ, դավանանք» (Մաշտոցի անվան Մատենադարանի, «Հայաստանի բյուզանդագիտական ուսումնասիրությունների ազգային կոմիտեի» նախաձեռնությամբ, ինչպես նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասնակցությամբ):

Գիտաժողովներ

2007 թ. Մաշտոցի անվան Մատենադարանի 30-րդ գիտական նստաշրջան:

2016 թ. «Ճամփորդություն հայ տպագրության քառուղիներով». գիտաժողով նվիրված Ոսկան Երևանցու ծննդյան 400-ամյակին:

Խոշոր ցուցադրություններ

2010 թ.

Կոմիտասի ծննդյան 140-ամյակին նվիրված ցուցադրություն

Կիրիկիայի մանրանկարչություն

Միմեոն Երևանցու 300-ամյակին նվիրված ցուցադրություն

Պարսկերեն ձեռագրեր

2011 թ.

Վերանորոգված կազմեր

Մաշտոցի ծննդյան 1650-ամյակին նվիրված ցուցադրություն

Ձեռագրերի պատճենների ցուցադրություն

2012 թ.

Հայոց գրատպության 500-ամյակին նվիրված ցուցադրություն

Արցախի մանրանկարչություն

Պարսկերեն ձեռագրեր

Ձեռագրերի պատառիկներ

Ձեռագրերի պատճեններ

2013 թ.

Շիրակացի – 1400

Հալեպահայերի ձեռագործությունը

2015 թ.

«Վերապրած ձեռագրեր», ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ցուցադրություն (3 դահլիճ)

Պարսկերեն ձեռագրեր

Գրիգոր Նարեկացի. «Նարեկացիական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի շրջանակներում անցկացվող մեծ ցուցահանդես

Լուսանկարիչ Անթուան Խան Սևրուզյանի և գեղանկարիչ Անդրե Սևրուզյանի արվեստին նվիրված ցուցահանդես (4 դահլիճ). «Մշակույթների հանդիպում» խորագրով սեմինարի անցկացում:

Ամստերդամի հնատիպ գրքերին նվիրված ցուցահանդես

ՀՐԱԶՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Մենագրություններ

1. Անանիա Նարեկացի. Կյանքն ու մատենագրությունը, Երևան, 1986, 364 էջ:

2. Նարեկյան դպրոցը, Երևան, 1999, 236 էջ:

Նարեկյան դպրոցը, Երևան, 2001, 236 էջ:

3. Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը, Երևան, 2004, 440 էջ:
Григор Нарекаци и неоплатонизм, перевод М. Дарбинян-Меликян, Ереван, 2011, 520 с.

4. Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը, Երևան, 2005, 116 էջ:

Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը, Երևան, 2015, 116 էջ:

5. *Saint Grégoire de Narek*, Erévan, 2006, 96 p.

6. Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոցը, Երևան, 2007, 184 էջ:

7. Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացույ ասացեալ, Երևան, 2009, 55 էջ:

8. Անանիա Նարեկացու «Ներբողեան ասացեալ ի Սուրբն Կաթողիկէ Եկեղեցի» երկը, Երևան, 2013, 63 էջ:

9. Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, Գիրք Ա (Բնագրագիտական հետազոտություններ), Երևան, 2013, 332 էջ:

10. Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, Գիրք Բ, Երևան, 2015, 455 էջ:

11. Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, Գիրք Գ, Երևան, 2017, 450 էջ:

Մատենաշարեր

12. «Գրիգոր Նարեկացի. Մատենագրութիւնք», *Մատենագիրք հայոց, ժԲ հատոր*, առաջաբանի հեղինակ, կազմող և խմբագիր՝ Հ. Թամրազյան, Անթիլիաս, 2008, 1200 էջ:

13. «Նարեկյան դպրոցը և ժ. դարի հայ մատենագրությունը», *Մատենագիրք հայոց, ժ հատոր*, առաջաբանների հեղինակ, բնագրագիտական հետազոտությունների և ֆունկցիոնալ բնագրերի մի մասի պատրաստող, կազմող և խմբագիր՝ Հ. Թամրազյան, Անթիլիաս, 2009, 1159 էջ:

Մատենագիրք հայոց, ժ հատոր. Առաջաբաններ

«Ժ դարի հայ մատենագրութիւնը», էջ 11-16:

«Խոսրով Անձեւացու գրական ժառանգութեան հարցի շուրջ», էջ 19-34:

«Անանիա Նարեկացի», էջ 311-327:

«Հակաճառութիւն ընդդէմ թանդրակեցւոցն», էջ 428-438:

«Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» դաւանաբանական երկը», էջ 456-479:

«Անանիա Նարեկացու «Ներբողեան ասացեալ ի Սուրբն Կաթողիկէ եկեղեցի» երկը», էջ 599-618:

«Գրիգոր Նարեկացուն վերագրուող երկերի հեղինակային պատկանելութեան հարցը նոր փաստերի լոյսի ներքոյ», էջ 1017-1018:

«Գրիգորի Նարեկացու ասացեալ վասն վարդապետաց եւ իմաստուն քահանայից վախճանի բան գովութեան եւ մխիթարութեան», էջ 1095-1102:

Մատենագիրք հայոց, ժ հատոր. Բնագրեր

Խոսրով Անձեւացի

«Բանք Երանելոյն Խոսրովայ առ վասն եկեղեցականան», էջ 228-234:

Անանիա Նարեկացի

«Խրատ քահանայից», «Խրատ վասն համբերութեան եւ խաղաղութեան», «Խրատ վասն խոնարհութեան», «Բանք աղաւթից», «Վասն անցաւոր աշխարհիս», «Յաղագս խորհրդոց զգուշութեան», «Խրատք ոգեշահք յաղագս զղջման եւ արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի», «Խաւք եւ խրատք աւետարանական, առաքելական եւ մարգարէական, որ տանին զմեզ ի կեանսն յաւիտենական եւ ոչ տան խոտորել յաշ կամ յահեկ», «Նորին Անանիայի գլխաւորեալ եւ համառատ բանք վասն յառաջ ասացելոցդ», էջ 328-428:

«Ներբողեան ասացեալ ի Սուրբն Կաթողիկէ եկեղեցի», էջ 619-646:

Գրիգոր Նարեկացի

«Վասն վարդապետաց եւ իմաստուն քահանայից վախճանի բան գովութեան եւ մխիթարութեան», էջ 1095-1105:

Հոդվածներ և ուսումնասիրություններ

1. «Գիրք Ծաղկանց»-ի պատմական հիմքերը», *ԼՀԳ*, 1977, թիվ 9, էջ 70-75:
2. «Անանիա Նարեկացու խրատաշարքը», *ԼՀԳ*, 1979, թիվ 11, էջ 78-93:
3. «Անանիա Նարեկացու «Վասն անցավոր աշխարհիս» բանաստեղծությունը», *ՊԲՀ*, 1980, թիվ 4, էջ 184-195:
4. «Անանիա Նարեկացու «Հայոց պատմության» հարցի շուրջ», *ԲեՀ*, 1980, թիվ 3, էջ 185-189:
5. «Անանիա Նարեկացին և X դարի հայ բանաստեղծությունը», *Երևան*, 1983 (թեկնածուական ատենախոսության սեղմագիր), 26 էջ:
6. «Բանաստեղծական արվեստի Նարեկյան դպրոցը», *Միջնադարյան հայ գրականության միջազգային գիտաժողով*, 1986, թեզիսներ, հայերեն, ռուսերեն, ԳԱ հրատ., էջ 63-66, 193-196:
7. «Անանիա Նարեկացին և Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը», *ԲեՀ*, 1993, թիվ 2, էջ 134-140:
8. «Պյութագորա-պլատոնական թվի փիլիսոփայությունը Նարեկյան դպրոցի գրական ավանդույթում», *Աշտանակ (հայագիտական պարբերագիրք)*, Ա, Երևան, 1995, էջ 35-48:
9. «Նարեկյան դպրոցը», *Գարուն* (գրակ. հաս. հանդես), 1995, թիվ 5, էջ 62-63:
10. «Նոստրով Անձևացու գրական ժառանգության հարցի շուրջ», *ԲեՀ*, 1997, թիվ 1, էջ 88-93:
11. «Սաղմոսների մեկնությունները Նարեկյան դպրոցի գրական ավանդույթում», *ԲեՀ*, 1998, թիվ 3, էջ 181-190:
12. «Բանաստեղծական արվեստի խնդիրները Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ», *Աշտանակ (հայագիտական պարբերագիրք)*, Բ, 1998, էջ 114-133:
13. «Նոստրով Անձևացու խրատներն ու ֆարոգները», *ՊԲՀ*, 1999, թիվ 2-3, էջ 241-249:
14. «Գրիգոր Նարեկացու ստեղծագործության պատկերային համակարգը և պոետիկան», *Բյուրակն* (գրական հանդես), 1998, թիվ 1, էջ 4-5:
15. «Գրիգոր Նարեկացին իր «Մատեան ողբերգութեան» երկի հարակայության և հոգևոր հեռանկարի մասին», *Գարուն*, 1999, թիվ 5, էջ 39-42:
16. «Բանաստեղծական արվեստի ընկալումը Գրիգոր Նարեկացու «Մատեանում», *Գրական թերթ*, 1998, թիվ 7, էջ 10-11:
17. «Գրիգոր Նարեկացու տեսիլները և աստվածացման գաղափարը նրա «Մատեանում», *Հայացք Երևանից* (ամսագիր), 1999, թիվ 6, էջ 40-42:
18. «Բանարվեստի Նարեկյան դպրոցը», *Հայացք Երևանից*, 1999, թիվ 11, էջ 42-45:

19. «Նարեկյան դպրոցը» (դոկտորական ատենախոսության սեղմագիր), Երևան, 1999, 50 էջ:
20. «Խոսուով Անձնացու «Մեկնութիւն ժամակարգութեան» երկն իբրև կրթական ձեռնարկ», *Աշտանակ (հայագիտական պարբերագիրք)*, Գ, 2000, էջ 93-98:
21. «Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոցը», *AIEA (Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցություն)*, IX, *Generalkonferenz. Würzburg, Oktober, (Թեգիսներ)*, 2002, էջ 23:
22. «Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոցը», *ՊԲՀ*, 2003, թիվ 2, էջ 40-58:
23. *Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան»*. 1173 թ. ձեռագրի նմանահանությունը, Առաջաբան, Երևան, 2004, էջ 5-23:
24. «Նարեկացիագիտության խնդիրներն ու հեռանկարները», *Հայաստանի Հանրապետություն (օրաթերթ)*, 4 հոկտեմբերի, 2003, էջ 4:
25. «Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը», *Գարուն*, 2004, էջ 40-46:
26. «X դարի հայ բանաստեղծության փիլիսոփայական հիմքերը», *Գրականագիտական հանդես*, թիվ 1, 2005, էջ 20-26:
27. «Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոցը» (Ներսես Լամբրոնացին Գրիգոր Նարեկացու վարձագիր և մեկնաբան), «Հասկ» *հայագիտական տարեգիրք*, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 139-147:
28. «Ներսես Լամբրոնացին հոգևոր արվեստների մասին», *Լևոն Խաչիկյան-90 (նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի)*, Երևան, 2010, էջ 255-261:
29. «Անանիա Նարեկացու «Ներբող ասացեալ ի Սուրբն Կաթողիկէ Եկեղեցի» երկը», *էջմիածին*, 2009, թիվ 7, էջ 40-60:
30. «Դիոնիսիոս Արեոպագացին և Գրիգոր Նարեկացին», *էջմիածին*, 2010, թիվ 11, էջ 50-73:
31. «Ստեղծագործ անհատի և արվեստի տեսության խնդիրները Մեսրոպ Մաշտոցի «Յանախապատում հառերում», *ԲՄ*, 2012, թիվ 19, էջ 9-20:
32. «Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն «Ո՛վ է դա»-ի երկը», *ԲՄ*, 2014, թիվ 20, էջ 45-49:
33. «Դիոնիսիոս Արեոպագացին և Գրիգոր Նարեկացին», *Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (AIEA) 13-րդ համաժողով, Թեգիսներ*, Երևան, 2014, էջ 5-8:
34. «Դիոնիսիոս Արեոպագացին և Գրիգոր Նարեկացին», *ԲՄ*, 2014, թիվ 21, էջ 15-34:
35. «Բանաստեղծության հարակալության խորհուրդն ըստ Գրիգոր Նարեկացու», *ԲՄ*, 2015, թիվ 22, էջ 31-47:

36. « La vie de Saint Grégoire de Narek » (aperçu critique), *Saint Grégoire de Narek : théologien et mystique*, ed. J.-P. Mahé and B. L. Zekiyan, *Orientalia Christiana Analecta* 275, colloque international tenu à l'Institut Pontifical Oriental, Rome, 2006, pp. 33-49.

37. « L'école de Narek et la littérature arménienne du X siècle », *Saint Grégoire de Narek et la liturgie de l'église*, colloque international organisé par le Patriarcat arménien catholique de l'Université Saint-Esprit de Kasilik (USEK), Liban, 2010, pp. 125-133, *Revue théologique de Kasilic*, n° 3-4.

38. “The Visions of Grigor Narekac'i”, *The Armenian Apocalyptic Tradition: A Comparative Perspective*, ed. Kevork B. Bardakjian and Sergio La Porta, Brill, 2014, pp. 437-442.

39. *Grégoire de Narek, Le livre de lamentation*, introduction, traduction et notes établies par Annie et Jean-Pierre Mahé, Erévan, 2012, postface par Hrachya Tamrazian, pp. 487-520.

40. *Gregorio di Narek, Il libro della lamentation*, Jerevan, 2016, traduzione e note di Boghos Levon Zekiyan, prefazione di Hrachya Tamrazian, pp. 3-7.

41. Narekas Grigors, *Žēlabu Grāmata*, Riga, 2017 (no senarmēņu valodas tulkojusi Valda Salmiņa), Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան (լատիներեն թարգմանությունը՝ Վալդա Սալմինյայի, ներածությունը՝ Հ. Ռամրազյանի, էջ 5-7):

Բացման խոսք (ապագիր)

42. «Բացման խոսք», *Լևոն Խաչիկյան 90. նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի 2008 թ.)*, Երևան, 2010, էջ 7-8:

43. «Մաշտոցի խորհուրդը» (*Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի բացման խոսք*), *ԲՄ*, թիվ 19, 2012, էջ 5-7:

44. «Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (AIEA) 13-րդ համաժողովի բացման խոսք», *ԲՄ*, թիվ 21, Երևան, 2014, էջ 6-9:

45. «Նարեկացիական ընթերցումներ, Բացման խոսք», *ԲՄ*, թիվ 22, 2015, էջ 5-9:

Բանաստեղծական ժողովածուներ

1. «Եթե կարոտը կյանքի նշան է», 1982:
2. «Ապակե քաղաք», 1985:
3. «Ձայների կղզի», 1989:

4. «Նոր տոմար», 1991:
5. «Լուսնային ծես», 1995:
6. «Աղեղնավոր», 1999:
7. «Պաշարված ամրոց», 1999:
8. «Զվարթ գիտություն», 2001:
9. «Հարասություններ», 2003:
10. Համլետ», 2002:
11. «Մի հոգու թատրոն», 2005:
11. “Ars poetica”, 2007:
12. «Ասացող երկիր», 2007:
13. «Մայր հղացք», 2008:
14. Բանաստեղծություններ, էսսեներ, գրական դիմանկարներ, հոգվածներ, 2010:
15. «Սրբազան խավար», 2011:
16. «Մարդ-ակնթարթ», 2012:
17. «Ներաշխարհ», 2013:
18. «Սրբազան խավար», 2015:
19. «Շղթայված օրեր», 2016:

Թարգմանական բանաստեղծական ժողովածուներ

1. XX դարասկզբի ռուսական բանաստեղծությունը, կազմող, խմբագիր, մի շարք հեղինակների թարգմանիչ՝ Հ. Թամրազյան, Երևան, 1982:
2. Սերգեյ Եսենին, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1982:
3. Սերգեյ Եսենին, Բանաստեղծություններ և պոեմներ, կազմող՝ Հ. Թամրազյան, Երևան, 2005:
4. Բորիս Պաստեռնակ, Երևան, 1985:
5. Վլադիմիր Մայակովսկի, Վաղ շրջան (պոեմներ և բանաստեղծություններ), Երևան, 1996:
6. Բորիս Պաստեռնակ, Բանաստեղծություններ, Երևան, 1985, 1994:
Բորիս Պաստեռնակ, Բանաստեղծություններ, Երևան, 2010:

Հոդվածներ արդի գրականության մասին

1. «Երկրի աղը», «Արար» մշակութային հավելված, Երևան, 1996, թիվ 1:
2. «Քառը ձգտում է հավիտենության» (հոդվածաշար), Հարասություններ, Երևան, 2003, էջ 453-484:
3. «Լինելության ճանապարհ», Հայաստանի Հանրապետություն, հավելված, թիվ 6, 1990, էջ 44-48:

4. «Արժանի լինենք իր բարեգութ հայացքին» (Հրանտ Մաթևոսյանի արձակի մասին), *Գրական թերթ*, թիվ 18, 13 մայիսի, 2005, էջ 4:

5 «Նախ պետք է հոգու անդունդից վեր մագլցել (Հասարակությունը և մշակույթը)», *Ժամանակ*, թիվ 155, 24 օգոստոսի, 2006:

Գրքերի առաջաբաններ

1. Բորիս Պաստեռնակ, *Բանաստեղծություններ*, Երևան, 1985, 1994, հավելումներով՝ 2010:

2. Վլադիմիր Մայակովսկի, *Վաղ շրջան* (պոեմներ և բանաստեղծություններ), Երևան, 1996:

3. Սերգեյ Եսենին, *Բանաստեղծություններ և պոեմներ*, Երևան, 2005:

4. Աղասի Այվազյան, *Ընտիր երկեր*, Երևան, 2001:

5. Լևոն Խեչոյան, *Երրորդ ուղին, Արշակ արքա, Դրաստամատ Ներքինի*, Երևան, 2002:

6. Էդվարդ Միլիտոնյան, *Այս պահին*, Երևան, 2003:

7. Աշոտ Ավդալյան, *Հիշատակի զարդատուփ*, բանաստեղծություններ, Երևան, 2005:

**«ՆԱՐԵԿԱՑԻԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԳ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»
(28-29 հոկտեմբերի, 2016)՝**

ՆՎԻՐՎԱԾ ՀՐԱԶՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՆՅՈՒԹԵՐ

ԺԱՆՊԻԵՌ ՄԱՀԵ

ՀՐԱԶՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԸ ԵՎ ՆԱՐԵԿԱՑԻԱԿԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Նարեկ, Խոսրով Անձևացի, Փիլոն, նորպլատոնականություն, խորհրդապաշտություն, արտասուք, ինքնախոսություն, խոստովանություն:

Բոլորս ծանոթ ենք Նարեկի վսեմաբան նախերգանքին. «Ձայն հառաչանաց հեծուլթեան ողբոց սրտից աղաղակի / Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց ...» (Մատեան, Ա, 1)¹: Բայց թերևս պակաս հայտնի են Մատեան-ի վերջին խոսքերը. «Ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ / Շնորհաւք Քո, գթած, ի Քեզ զաւրացեալ՝ Քև նորոգեցայց, / Ձատեալ ի մեղաց անմահ կենդանութեամբ՝ / Ի յարութեանն արդարոց» (Մատեան, ՂԵ., 3):

Ահա այս բառերն են ուզում արտասանել այսօր և այստեղ՝ Մատենադարանի սրբավայրում, լուսահոգի ակադեմիկոս Հրաչյա Թամրազյանի երանաշնորհ հիշատակին: Վերջին 50 տարիների ընթացքում եղել են, անշուշտ, մի քանի ականավոր նարեկացիագետներ, որոնց անունները կարոտով են ոգեկոչում Պարույր Սեակ, Մկրտիչ Մկրչյան, Վազգեն Գևորգյան, Լևոն Մկրտչյան, Արշալույս Ղազինյան, Պողոս Խաչատրյան և ուրիշներ: Բոլորի աշխատանքներին, երբեմն էլ անձնական օգնությանը, պարտական են զգում:

Սակայն 1980-ական թվականներին, Հրաչյա Թամրազյանի առաջին գրվածքները կարդալիս, իսկույն խանդավառվեցի և միանգամից գտա վաղուց ծագած իմ բոլոր հարցադրումների հստակ պատասխանը: Ինչպե՞ս կարող են բացատրել այս հանկարծագրուտ շլացումը: Այն ժամանակ արդեն քաջածանոթ էի Մատեան-ին, տոգորված էի բանաստեղծի խոսքով, նրա շնչով, բայց դեռ չէի վերծանել երկի կառուցվածքի և էությունից առեղծվածը:

Ձէի հասկանում, թե որտեղից է ծագել Նարեկը, որ ժամանակին է պատկանում, կամ ինչու է երևան եկել X դարի Վասպուրականում: Ձէ՞ որ հեղինակը

¹ Մատենի հղումներն արված են ըստ **Գրիգոր Նարեկացի, Մատենան Ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985:**

խոսքն ուղղում է ոչ թե հատուկ հայերին, այլ «առ ամենայն հասարակ տնկեցեալ յերկրի ազգ բանականաց» (Մատեան, 3, 2), այսինքն բոլոր հողածին մարդկանց, նույնիսկ ֆրասիացիներին: Բացի այդ բանաստեղծը ոչ միայն իր ժամանակակիցների մասին է մտածում, այլ նպատակ ունի խոստովանել բոլոր մարդկային մեղքերը՝ «Ի սկզբնահայրն սկսեալ մինչև ի սպառումն ծննդոց նորա» (Մատեան, ՀԲ., 1), այսինքն՝ Ադամից մինչև այն սերունդները, որ պիտի ապրեն մեզնից հետո գալիք հազարամյակներում:

Ահա այդպիսի նպատակներ ունեցող Մատեան-ը կարծես թե չի կարող մեկ վայրի և մեկ ժամանակի արգասիքը հանդիսանալ: Հազիվ թե հնարավոր լինի վերագրել այն մեկ մարդկային հեղինակի: Ավելի շուտ, թվում է, այն երկնքից ընկած մի աստվածային հայտնություն է: Բայց ինքը՝ Գրիգոր Նարեկացին, թույլ չի տալիս մեզ այսպիսի սրբապիղծ վարկած ընդունել, որովհետև բազմիցս ինքն իրեն է նկարագրում «յետին բանահիւսաց և կրտսեր վարժապետաց» (Մատեան, յիշատակարան), գիրքը հորինելիս «տխրատեսակ մրով» (Մատեան, ԼԴ., 10), այսինքն մթնագույն, տխուր թանաքով:

Զգիտեի, թե ինչպես լուծեմ այս սֆինքսային հանելուկը, երբ կարդացի Հրաշյա Քամրազյանի հոդվածները Անանիա Նարեկացու ստեղծագործությունների, հատկապես ԽՐԱՎ-ների մասին: Ակնհայտորեն մեկ հազարամյակից ի վեր մոռացված այդ քերթողական գլուխգործոցների վերագտնվելը պատմական շղթայի կորսված օղակն էր բերում Մատեան-ի ծնունդը հետազոտելու համար:

Տարիների ընթացքում Քամրազյանը կառուցել է երեք գրքից բաղկացած եռամուտ մի կոթողային դարպաս, որի շնորհիվ մատչելի է դառնում միջնադարյան Հայաստանի գլխավոր գրական և հոգևոր դրախտը՝ Նարեկյան դպրոցը:

Բոլորս գիտենք, որ Վասպուրականը եղել է Ուրարտուի և հայ ժողովրդի իսկական օրրանը: Ե՞րբ է Հայաստանն այդ օրրանը կորցրել: Կարծում եմ հնում, համենայն դեպս՝ Առաջին Աշխարհամարտից շատ ավելի վաղ: Այդ հարցում, ըստ երևույթին, վճռական դեր է խաղացել 1210 թ. Իվան է Երկայնաբազուկի՝ Խլաթում կրած պարտությունը: Եթե Զաքարյաններին հաջողվեր այն ժամանակ հարավային Հայաստանը ազատագրել մահմեդական լծից, հետագա դարերի ընթացքում Վասպուրականի ճակատագիրը լրիվ տարբեր կլիներ: Վանքեր ու եկեղեցիներ կվերակառուցվեին, այլազգիները կթուլանային, հայ բնակչությունը կամրապնդվեր:

Ներկայումս ցեղասպանության հետևանքով հայերի մասին հիշողությունն ամբողջովին ջնջվել, արմատախիլ է արվել Վանա լճի ափերից: Նարեկավանքից ոչ մի քար չի մնացել: Առտեր կղզու անունը մոռացության է մատնվել. այսօրվա բնակիչներն այն Kuş adası են անվանում: Բայց Քամրազյանի աշխատասիրությունների հիման վրա նյութապես անհետացած Նարեկյան դպրոցը մտովի ամբողջապես պահպանել ենք: Ներքուստ ենք ճանաչում նրա առօր-

յա կյանքը, նրա վարդապետների անունները, երկերը և դպրությունը: Հրաշյա թամրագյանի ղեկավարութեամբ այդ բոլորը հավաքվել, հրատարակվել է Մատենագիրք Հայոց մատենաշարի Ժ և ԺԲ հատորներում:

Թամրագյանը երեք գիրք է նվիրել այդ հոգևոր ժառանգութեանը՝ Անանիա Նարեկացի (1986 թ.), Նարեկյան դպրոցը (1999 թ.)² և Գրիգոր Նարեկացին և նորպատանակաճուրղները (2004 թ.): Նրա անցած մտավոր ճանապարհն, ըստ իս, բաժանվում է երկու հանգրվանի: Մի կողմից նկարագրվել են Նարեկավանքի պատմական շրջանակը, մտավորական մթնոլորտը, ուսման ընթացքը, բաբունապետների մեթոդներն ու վարդապետութունները: Մյուս կողմից վերլուծվել են խոսքով Անձևացու և Անանիա ու Գրիգոր Նարեկացիների երկերի առնչութունները հայոց նախորդող մատենագրութեան հետ՝ հատկապես նորպատանակական գաղափարների տեսանկյունից:

Հավանաբար, Գրիգոր Նարեկացին ավելի սերտ և հաճախակի շփումներ է ունեցել Անանիա վանահոր, քան խոսքով Անձևացու հետ: Սակայն բանաստեղծը ամենամեծ ուշադրությունն է դարձրել իր հոր՝ խոսքովի գրվածքներին, ոչ միայն Բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ քառագուրեանց և աղաւթից երկին, որի հիշատակարանը հենց ինքն է գրել³, այլև, ըստ երևույթին, խրատական գրվածքներին⁴:

Մատենան-ի մի քանի հիմնական հատկանիշ ակներևաբար բացահայտում է խոսքովի ազդեցութունը: Նախ և առաջ՝ ինչպես և խոսքովը, Գրիգորը համարձակութուն է ունեցել «առ Աստուած խաւսութիւնն, և որպէս Մովսէսն յԱստուծոյ տեսութիւնն ոգւով»⁵:

Երկրորդ՝ Նարեկացին հորից է սովորել աղոթել «արթուն մտաւք և անզբաղ խորհրդով և կատարեալիմաստ հոգով»⁶: Ուստի և Մատենան-ի գրեթե բոլոր գլուխները վերնագրված են «(...) նորին հսկողի (...) ի խորոց սրտից խաւսք ընդ Աստուծոյ»:

Երրորդ՝ արթուն մնալու համար անհրաժեշտ է ազատվել անգիր արած աղոթքներից, մեքենայաբար կրկնվող ձևաբանութուններից: Հետևաբար, պետք է հրաժարվել մարգարեների, Քրիստոսի և առաքյալների բառացի մեջբերումներից՝ նրանց խոսքերը իսկապես յուրացնելու համար, բացահայտելով դրանք նոր բառերով և իսկույն անցնելով սրտի խոսքին և լուռ, անխոս խոկման:

Օրինակ, որպես արեղա Գրիգոր Նարեկացին Մաղմոսարանն անգիր գիտեր: Հետևաբար Մատենան-ի Կ.-ԿԱ. գլուխներում բանաստեղծը ավելորդ է համարում մեկ սաղմոսի կես տնից ավել մեջբերել: Այդքանը բավական է

² Գրքի երկրորդ հատորը լույս է տեսել 2016 թվականին:

³ Տե՛ս Մատենագիրք Հայոց, Ժ հ., Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 227:

⁴ Զ. Թամրագյան, Նարեկյան դպրոցը, հ. 1, Երևան, 1999, էջ 52-67.

⁵ Տե՛ս Մատենագիրք Հայոց, Ժ հ., Ժ դար, էջ 226, §§ 608-609:

⁶ Նույն տեղում, Հայոց, Ժ հ., Ժ դար, էջ 225, § 603:

մնացածը վերհիշելու համար. «Զի՞արդ թէ՛ խորտակեսցին բազուկը մեղաւորի և շարի — և գայլն որ գկնի» (Մատեան, Կ, 1): Անշուշտ, վանականները շարունակում էին արտասանել Դավթի երգը, բայց ինքը՝ Գրիգորն արդեն սլացել էր դեպի երկնքի բարձունքները կամ սուզվել էր իր սրտի խորքը՝ «զգայութեանց խորհրդակիր սենեկի» (Մատեան, Ա., 1): Ահա այս արվեստը, նա, անկասկած սովորել էր Անձեակացու մեկնություններն ընթերցելով:

Հայտնի է բոլորիս, որ Մատեան-ի գրեթե բոլոր գլուխների վերնագրի առաջին բառն է «վերստին», և կամ «վերստին յաւելուած կրկին հեծութան»: Ընթերցողի համար այս մակբայը խիստ վհատեցնող է: Ստուգաբանությունից ելնելով «վերստին» այլ նշանակություն ունի քան «նորից», «կրկին», «դարձեալ» և այլն: Սրգիփոսյան աշխատանքի արձագանգը կարծես լինի այն: Մատեան-ի մեկ աղոթք կարդալուց հետո, սկսում ես հուշս փայփայել, թե տեղ ես հասել, շոշափելի արդյունք կտեսնես, չէ՞ որ Սրգիփոսի պես՝ զղջման և ապաշխարության ճնշող ծանրությունք քար ես բարձրացրել սարի գագաթ: Բայց հագիվ տեղ հասած՝ «վերստին» բառին զուգընթաց, քարը ներքև է գլորվում, և ամեն ինչ պետք է սկզբից կրկնել: Հնարավոր չէ շտալ այն հարցը, թե քանի՞ անգամ և մինչև ե՞րբ է այդպես լինելու:

Ինչու՞ Մատեան-ն ունի 95 գլուխ և ոչ 100 կամ 1000: Կողմնորոշվելու համար պետք է դիմել Անանիա Նարեկացու՝ Հրաշյա Թամրազյանի հայտնաբերած, մեկնաբանած և հրատարակած *Խրատ-ներին*: Անկասկած, որպես առաջնորդ և վանահայր, Անանիան անընդհատ խրատներ էր տալիս Նարեկի վանականներին: Բայց իրեն՝ խրատատուին, ո՞վ կարող է խրատել: Աստված անշուշտ՝ Քրիստոսի և Սուրբ Հոգու ձայնով: Սակայն մարդը ստեղծվել է ըստ Աստծո պատկերի, այսինքն՝ անձնիշխանությամբ օժտված: Ուրեմն, Անանիայի խրատներն ուղղված են եղել ոչ միայն ուրիշներին, այլև հենց իրեն:

Հետևաբար, *Խրատ-ները* կարելի է համեմատել Օգոստինոսի Soliloquia-ների, այսինքն՝ «ինքնախոսությունների» հետ, որոնցում նրա միտքը կամ ոգին ինքն իր հետ է խոսում, հաստատելով սրտի դարձը և որոնելով ճշմարտությունը:

Խրատներում նույնպես, Անանիան հորդորում է ինքն իրեն երևան հանել մտքի լուռ ձայնով, խայտառակել անցավոր աշխահիս պատրանքներն ու ստերը: «Յորժամ լինի քեզ նստել / յուտել և յըմպել և յուրախանալ, / դու զա՛յն ած զմտաւ, / թէ ահաւասիկ յառնեմք և փառս տամք, / և անցանէ ուրախութիւնս: / Եւ յորժամ տեսանես մարդ փառաւոր, զարդարուն, / դու զա՛յն ած զմտաւ, / թէ ահաւասիկ վախճանի և ի հող դառնայ⁷»:

Ինչպես իրավացիորեն բացատրել է Թամրազյանը, այս խոկումների կամ ներքին խոսակցությունների նպատակն էր զղջման արտասուք առաջ բերել: Բոլորս դրանցից լավ պաշտպանվել գիտենք՝ մեր սրտի կարծրությունք,

⁷ Տե՛ս Մատենագիրք Հայոց, Ժ հատոր, Ժ դար, էջ 351, §§ 23, 24:

այսինքն՝ եսասիրության կեղևով կամ ավելի ճիշտ ասած՝ զրահով: Մակայն եկե՛ք պատկերացնենք ամենաքարսիրտ մի մարդու, ասենք՝ մի դաժան արքայի կամ բռնակալի, որը հազարավոր անմեղ զոհերի բանտարկել կամ սպանել է սովել... և նրան կյանքում գոնե մեկ անգամ, մի այնպիսի դառը վիշտ կամ սարսափելի փորձանք է պատահել, որից նա երբեք չի մխիթարվել: Վերքը կիսով չափ մոռացված է, բայց սպին դեռ կա, լրիվ չի բուժվել, անջնջելի է: Ուստի և եթե պատահաբար հիշեցնենք այդ մարդուն իր կրած ցավը, նա անպայման պետք է լա: Ահա ներքին ամրոցն այդպես բացելով, հնարավոր կդառնա նրա սրտի կարծրությունը մեղմել և ուղղորդել նրան դեպի զղջում: Այդ նպատակին հասնելու համար նրան պետք է բյուրավոր մտապատկերներ ցույց տալ, և թերևս դրանցից մեկը ցավագին հուշեր արթնացնի:

Նույն մեթոդին է դիմում նաև Գրիգոր Նարեկացին: Մատյանի 8-րդ և 9-րդ գլուխներում բանաստեղծը խոսքն ուղղում է ոչ թե Աստծուն, այլ սեփական հոգուն. «Եւ արդ, զի՞նչ գործեսցես, անձն իմ կորուսեալ, / կամ ու՞ր թաքիցես, կամ զիա՞րդ ապրեսցես, / կամ ո՞րպէս ելցես ի մեղացդ բանտէ (...))» (Մատեան, Ը., 1): Բանտի պատերը քանդելու համար, պետք է մեղավոր հոգուն բառերով քարկոծել. «Եւ վասն զի եդի զքեզ նպատակ / հանդէպ երեսաց տեսութեան մտացս, / անձն իմ անպիտան, / վիմաւք ձգելոց արձանաց բանից (...))» (Մատեան, Թ., 3):

Ինչ խոսք, քարերի պես նետվող բառերը ոչ թե վերացական խոսքեր են, այլ մտապատկերներ: Սրանք հայելու պես արտացոլում են մեղքից այլանդակված հոգու դիմագծերը. «Զի՞նչ աւրինակ առ այս քեզ նմանագույն և յարմարական / աստանաւր եդից, անձն իմ պարտավոր» (Մատեան, Բ., 1): Հետևաբար, ոչ թե լոկ բառերով, այլ պատկերներով է Գրիգորը քարկոծում իր հոգին, Անանիայի և Ովսէ մարգարեի խրատներին հետևելով. «Առէ՛ք ընդ ձեզ բանս, ասէ Ովսէէ, / և դարձարու՛ք առ Տէր Աստուած ձեր, / եւ ասացէ՛ք ցնա՛ կարող ես թողոյ զմեղս» (Մատեան, ԻԸ., 4):

Հայտնի է, որ Օգոստինոսը Soliloquia-ն գրել է իր դարձից քիչ հետո՝ 386 թվականին, իսկ դրանից 11-13 տարի անց, այսինքն 397-400 թվականներին, հորինել է Confessiones՝ խոստովանություններ, խոսքեր առ Աստված: Նմանապես, Գրիգոր Նարեկացին նախ ներշնչվել է Անանիայի խրատական մենախոսություններից, իսկ հետո վերածել դրանք Աստծուն ուղղված ճառերի և աղոթքների:

Անանիայի աղբյուրների շարքում Հրաչյա Թամրազյանն իրավամբ հիշատակում է Մեսրոպ Մաշտոցին, հատկապես նրա շարականը. «Զղջման իմոյ զարտասուս / Անկանեմ առաջի Քո՞ Քրիստոս»⁸: Կարելի է ավելացնել Կորյունի վկայությունը. «... եւ առաւել աղաւթս մշտնջենամուռնչս և բազկատարած պաղատանս առ Աստուած և արտասուս անդադարս» (Կորյուն, Վարժ Մաշտոցի, V):

⁸ Հ. Թամրազյան, Անանիա Նարեկացի, կյանքը և մատենագրությունը, Երևան, 1986, էջ 298:

Ինչ վերաբերում է զղջման արտասուքին, պարզ է, որ Անանիա Նարեկացին և Մեսրոպ Մաշտոցը կիրառել են եվագր Պոնտացու խրատները, որոնք մեջբերվում են «Յաղագս զղջման և արտասուաց» երկում. «Յորժամ խորհուրդք պատերազմողին ի վերայ քո եկեսցէ, դու ընդդեմ ախոյանին զտէգ արտասուացն ուղղեսջիր»⁹: Այսպիսով, Հրաչյա Թամրազյանի կազմած՝ Անանիա Նարեկացու Խրատագրքի քննական բնագիրը հնարավորություն է տալիս վերագտնել Նարեկի արմատները հայոց ինքնուրույն և թարգմանական մատենագրության մեջ:

Աստժո ճանաչողության երկու ճանապարհ կա: Առաջինը՝ սրտինը կամ արցունքներինը, միստիկական, խորհրդապաշտական բնույթ ունի: Այն հենվում է նախ և առաջ աստվածաշնչային և հայրաբանական աղբյուրների վրա: Երկրորդ ճանապարհը փիլիսոփայական է: Այն օգտվում է «արտաքին» հեղինակների երկերից և ամենից շատ տարածված է եղել XI դարում հյուսիսային Հայաստանում, հատկապես Սանահնա վանքում, ինչպես տեղեկանում ենք Գրիգոր Մագիստրոսի Սարգիս վարդապետին հղած թղթից¹⁰:

Թամրազյանի հետազոտությունների շնորհիվ գիտենք, որ Անանիա վանահայրը ծնվել է Այրարատում և Արշարունիքից եկել է Ռշտունիք՝ Նարեկավանքը հիմնարկելու համար: Հետևաբար, Նարեկյան դպրոցն օժտված է հետևյալ առանձնահատկությամբ. այն միավորում է հարավային Հայաստանի միստիկական և հյուսիսային Հայաստանի փիլիսոփայական մոտեցումները:

Վերջինս Թամրազյանը մանրամասնորեն ուսումնասիրել է նորալատոնականությանը նվիրված իր գրքում: Նա ցույց է տվել, որ Գրիգոր Նարեկացին մշտապես հիմնվել է Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Դիոնիսիոս Արեոպագացու և Փիլոն Ալեքսանդրացու երկերի վրա: Սրանք մեջբերելով, Թամրազյանը նկարագրել է քրիստոնյայի հոգևոր մահը՝ ազատագրումը կրքերից և նրա աստվածացման փուլերը, որոնք արտացոլված են Մառտեան-ի ընդհանուր կառուցվածքում: Այդ վերլուծությունները անժխտելի են և նոր լույս են սփռում Նարեկյան դպրոցի գրական ստեղծագործության վրա:

Իմ կողմից կցանկանայի ավելացնել մի դիտարկում: Նորալատոնականությունը հեթանոսական ծագումով փիլիսոփայություն է: Սակայն, չպետք է եզրակացնել, որ այն ընդունելով, Գրիգոր Նարեկացին շեղվել է աստվածաշնչյան և քրիստոնեական ավանդույթներից: Իրականությունն ավելի բարդ է: Վերջերս Օլգա Վարդազարյանը Փիլոնի հայերեն թարգմանության մասին ուշագրավ հոգված հրապարակեց¹¹: Դրանում շեշտվում է երեք կարևոր կետ. Ա) ըստ

⁹ Տե՛ս Մատենագիրք Հայոց, Ժ հ., Ժ դար, էջ 395, § 243:

¹⁰ Տե՛ս Գրիգոր Մագիստրոս, «Թուրք և չափաբեկանք», Մատենագիրք Հայոց, ԺԱ դար, ԺԶ հատու, Երևան, 2012, էջ 329-330՝ «Առ վարդապետն Սարգիս» 50 (ԻԱ):

¹¹ O. Vardazaryan, “The ‘Armenia Philo’: A Remnant of An Unknown Tradition,” in *Studies on the Ancient Armenian Version of the Philo’s Works*, eds. S. Mancini-Lombardi, P. Pontani, Brill: Leiden & Boston, 2011, էջ 191-216.

Փիլոնի հայերեն լուծմունքների՝ եբրայեցի գիտնականը ծանոթացել է սուրբ Պետրոսի հետ, մկրտվել է սուրբ Հովհաննես առաքյալի կողմից և վկայություն է տալիս Երուսաղեմից գաղթած առաջին քրիստոնյա համայնքի մասին, որը հետևել է Հակոբ Տեառնեղբոր կարգած տարեկան ծիսակատարությանը, Բ) հայերեն թարգմանված Փիլոնի երկերը համախմբված են որոշակի հերթականությունում՝ մի մտային ճանապարհ ուղղագծելու համար: Կարծում ենք՝ Նախախնամությունից դեպի Աստուծո խոկումը տանող այդ ճանապարհը սերտ կապ ունի նորալատոնական սկզբունքների հետ: Գ) Փիլոնի ճառերը, հնարավոր է, օգտագործվել են վաղքրիստոնեական Երուսաղեմում երախաներին և նորընծա քրիստոնյաներին ուսուցանելու համար: Այդ պատճառով է, որ դրանք հայերեն են թարգմանվել և կարևոր տեղ են գրավել հայոց եկեղեցական գրականության մեջ:

Որոշ շափով նույնն է պատահել նաև Դավիթ Անհաղթի դեպքում. չնայած նրա փիլիսոփայական երկերը անտիկ գիտական մտքի անկապտելի մաս են կազմում, նա միշտ համարվել է քրիստոնյա հեղինակ, նաև նրան վերագրվել են Հայաստանեայց եկեղեցու դավանությունը պաշտպանող հակաճառություններ: Իսկ Դիոնիսիոս Արեոպագագուցու մասին պատմում են, թե եղել է Պողոս առաքյալի հավատարիմ ունկնդիրներից մեկը:

Հետևաբար, հայ միջնադարյան մատենագիրների համար նորալատոնական սկզբունքները ոչ մի դեպքում խորթ չեն քրիստոնեականությանը, այլ ընդհակառակը՝ մաս են կազմում առաքելական և Երուսաղեմի սուրբ քաղաքի ժառանգության:

Մատեան-ի 46-րդ գլուխը լավ փորձաքար է՝ հասկանալու համար, թե ինչպես է Գրիգոր Նարեկացին կարողանում հաշտեցնել փիլիսոփայական և աստվածաշնչյան գաղափարները: Բանաստեղծը փորձում է պատասխանել հետևյալ հարցին. «Թե յո՞վ և յո՞յր պատկեր և վասն ո՞յր գոյացայ» (Մատեան, ԽԶ., 1): Ճգնություն բոլոր ավանդույթներով հանդերձ, քրիստոնեությունը՝ պլատոնական փիլիսոփայությանը հակառակ, չի կարող մարմինը արհամարհել և լրիվ դատապարտել, որովհետև Ադամի մարմինը Աստուծո ձեռքի գործն է, Քրիստոսը մարմնացել է իրապես, և ոչ երևութապես՝ «մարմնով յարեալ ի մեռելոց» և «մարմնով համբարձալ յերկինս»: Հետևաբար, հողածին մարդը ստեղծվել է ըստ Աստուծո պատկերի, ոչ միայն հոգով այլև մարմնով:

Այդ է շեշտում Նառեկը շատ հստակ կերպով. «Ահա ի յոտս տանողականս / (...) ըստ ձեռոյ հրեշտակի կառուցար (...) / Իբր զճրագ բազմաբերանեան/ ի յաշտանակի, մարմնիդ հաստատեցաւ գլխոյդ բոլորութիւն, / (...) զԱստուած տեսանել և զմնացականացն իմաստասիրել» (Մատեան, ԽԶ., 1): Այսպիսով, մարդը ոչ թե մարմնում բանտարկված հոգի է, այլ մարմնավոր շաղկապ է տեսանելի և անտեսանելի աշխարհների միջև:

Քննարկելով Պողոս Խաչատրյանի հրատարակած՝ վիճելի հեղինակու-

թյամբ, բայց Գրիգոր Նարեկացուն վերագրվող 15 երկ¹², Հրաշյա Թամրազյանը գտել է, որ դրանցից 6-ը պատկանում են մեծ բանաստեղծի գրչին: Նա դրանք վերստին հրատարակել է Մարթա Արաբյանի հետ աշխատակցությամբ¹³:

Նախ և առաջ խոստովանեմ, որ դեռ ժամանակ չեմ ունեցել լրիվ ուսումնասիրելու այդ բարդ հարցը: Իմ կարծիքով, պետք է հաշվի առնել ոչ միայն բնագրերի ոճն ու բովանդակությունը, այլև ձեռագրագիտական բոլոր հանգամանքները: Օրինակ՝ Նարեկացուն վերագրվող խրատները, ըստ իս՝ շատ կասկածելի վերնագիր ունեն. «Սրբոյ վարդապետի յոթներանեան մենաւորի Գրիգորի՝ համառուտի բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ դիւանադպիրի»¹⁴:

«Հարագատ» բառը ինչպե՞ս հասկանալ այստեղ: Որքան գիտենք, Գրիգոր Նարեկացին երկու եղբայր է ունեցել միայն՝ Հովհաննես և Սահակ: Վարդան անունով հարագատ մեզ հայտնի չէ: Նմանապես «դիւանադպիր» կոչումը միին է Արծրունյաց Վասպուրականում: Հայոց պատմության մեջ, կարող է եղած լինել մեկից ավելի «յոթներանեան մենաւոր Գրիգոր»: Մի խոսքով, եթե գրիչը նպատակ ունենար Խրատ-ները Նարեկացուն վերագրելու, անպայման ավելի հստակ կարտահայտվեր¹⁵:

Հետևաբար, միայն բովանդակության վրա հիմնվելով կարելի էր ենթադրել թերևս, թե Խրատ-ները Գրիգոր Նարեկացու երկն են: Բայց նկատվող նմանությունները և առնչությունները անվիճելի ապացույցներ չեն պարունակում: Հնարավոր է Նարեկացու ճառերից ներշնչված մեկ ուրիշ Գրիգոր վարդապետ այդ խրատական երկը հորինած լինի: Ուրեմն, իմ կարծիքով, չպետք է շտապել վերջնական եզրակացություններ անելիս:

Ֆրանսիական դասական գրականություն ուսումնասիրող բոլոր ուսանողների պես, ես էլ քսան տարեկան հասակում կարդացել եմ հուշակավոր գրականագետ Սենտ-Բյուվի (Sainte-Beuve) գիրքը XVII դարի ամենահամբավվոր գրական օջախի՝ Պորտ Ռուայալի (Port-Royal) վանքի մասին: Սկզբում կարծում էի, թե հարցը լոկ աստվածաբանական բնույթ ունի: Բայց գրքի մեջ խորանալով, հասկացա, որ դեպքերը լավ ըմբռնելու համար պետք է ոգեկոչել Ֆրասիայի ամբողջ մտավորական զարգացումը XVI-XVII դարերի ընթացքում:

Ահա նույն տպավորությունն եմ ստացել, մեր սիրելի Թամրազյանի երկերը կարդալուց: Նարեկյան դպրոցի պատմությունը վերլուծելը հնարավորություն

¹² Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. էջմիածին, 1996.

¹³ Տե՛ս Մատենագիրք Հայոց, Ժ հատոր, Ժ դար, էջ 1017-1112, և Մատենագիրք Հայոց, ԺԲ հատոր, Ժ դար՝ Գրիգոր Նարեկացի, էջ 884-912 և 1009-1086:

¹⁴ Մատենագիրք Հայոց, ԺԲ հատոր, Ժ դար՝ Գրիգոր Նարեկացի, էջ 1022:

¹⁵ Տե՛ս Թ. Մինասյան, «Վարդան դիվանադպիրի ինֆնության խնդրի շուրջ», էջմիածին, 2006, Ե, էջ 27-33: Ըստ Բեդիմակի՝ Խրատ-ների Բեդիմակը Գրիգոր Սկևտացին է, իսկ Վարդան դիվանադպիրը Վարդան Արևելցին է:

է ընձեռում ոչ միայն ծանոթանալու հայ երեք հանճարեղ մատենագիրներին՝ հոսարովի, Անանիայի և Գրիգորի հետ, այլև հասկանալու առաջին հազարամյակի հայ գրականության ընդհանուր նշանակությունը:

Այսօր ո՛չ Պորտ-Ռուսյալը, ո՛չ էլ նարեկավանքը չկան: Բայց այդ վսեմ սրբարանների հոգևոր ժառանգությունը լրիվ պահպանվել է: Երևանի Մաշտոցի Մատենադարանը այն վայրն է, որտեղ հայ ժողովրդի հիշողության նշխարները կարողանում են նոր կյանք գտնել գիտության շնորհիվ: Մեր սիրելի ընկերը՝ լուսահոգի ակադեմիկոս Հրաչյա Թամրազյանն այն մեծ և ազգանվեր գիտնականներից է եղել, ովքեր իրենց ժողովրդի և համամարդկային հիշողության համար ոչ միայն փրկել, այլև վերակերտել են միջնադարյան Հայաստանի ամենափառավոր սխրանքը:

Հրաչյան բանաստեղծ էր: Նրա այդ շնորհը համարում եմ երկնային կապ Գրիգոր նարեկացու հետ: *Quis caelum possit nisi caeli munera nosse ? / Et reperire deum, nisi pars ipse deorum est ?* (Manilius, *Astronomica* I, 631-632) - «Ո՞վ կարող է ճանաչել երկինքը, եթե ոչ երկնային շնորհը: / Եւ ո՞վ կարող է գտնել Աստծուն, եթե ինքն աստվածներից մեկը չէ»:

JEAN-PIERRE MAHÉ HRACHYA TAMRAZIAN ET NAREKAVANK՝

Mots-clef: Narek, Xosrov, Philon, néoplatonisme, mystique, larmes, soliloque, confession.

Les travaux de Hrachya Tamrazian ont tiré de l'oubli où elles avaient sombré depuis près de mille ans, les productions poétiques et musicales, philosophiques et théologiques de Narekavank՝, principal foyer intellectuel de l'Arménie méridional au Xe siècle. Dans ses deux premiers ouvrages, Anania Narekac՝i, sa vie, son oeuvre (1986) et L'école de Narek (1999, 2016), il a reconstitué le milieu d'origine de Grégoire de Narek. Dans Grégoire de Narek et le néoplatonisme, il a retracé les liens du Matean avec la littérature arménienne antérieure, aussi bien originale que traduite du grec ou du syriaque.

À son père Xosrov, Grégoire a emprunté l'idée de la veille spirituelle et de l'art de parler à Dieu. De son maître Anania, il a appris à passer du soliloque à la confession, un peu comme Augustin en Occident. La source de cette voie mystique de la connaissance de Dieu par le cœur et par les larmes est Évagre le Pontique, traduit en arménien à l'époque de Maštoc՝.

Au nord de l'Arménie, d'où Anania était originaire, on pratiquait aussi une voie philosophique d'inspiration néoplatonicienne. Grégoire a su combiner les deux voies. Comme Hrachya Tamrazian l'a bien montré,

il a connu le néoplatonisme par les versions arméniennes de David, Philon et Denys l'Aréopagite. Ce fonds de philosophie païenne était depuis longtemps christianisé. Quant à Philon, c'était un héritage de l'école catéchétique de Jérusalem.

En éditant dans les *Matenagirk' Hayoc'* (vol. X et XII) toute la production de l'école de Narek, Hrachya Tamrazyan a accompli une extraordinaire œuvre de mémoire.

ЖАН-ПЬЕР МАЭ

ГРАЧЬЯ ТАМРАЗЯН И МОНАСТЫРЬ НАРЕКАВАНК

Ключевые слова: Нарек, Хосров Андзеваци, Филон, неоплатонизм, мистика, слезы, разговор с самим собой (*soliloquia*), исповедь.

Труды Грачья Тамразяна спасли от почти тысячелетнего забвения поэтическое и музыкальное, философское и богословское наследие монастыря Нарекаванк, главного интеллектуального центра южной Армении X в. В двух своих первых книгах, “Анания Нарекаци: жизнь, труды” (1986) и “Нарекская школа ” (1999, 2016), он воспроизвел среду, в которой сформировался Григор Нарекаци. В книге “Григор Нарекаци и неоплатонизм” он проследил связи “Нарека” (“Книги скорбных песнопений”) с армянской литературой предшествующего периода, как оригинальной, так и переведенной с греческого и сирийского.

От своего отца Хосрова Григор перенял идею духовного бдения и искусство разговора с Богом. У своего учителя Анании он научился переходить от разговора с самим собой к исповеди, подобно Августину на Западе. Источником такого мистического пути познания Бога через сердце и слезы является Евагрий Понтийский, переведенный на армянский в эпоху Маштоца.

На севере Армении, откуда Анания был родом, практиковался также философский путь вдохновения, неоплатонический. Григор сумел совместить оба пути. Как показал Грачья Тамразян, с неоплатонизмом он был знаком благодаря армянским переводам Давида, Филона и Дионисия Ареопагита. Эти основы языческой философии уже давно были христианизированы. Что касается Филона, это было наследие катехетической школы Иерусалима.

Издание Граच्या Тамразяном всей продукции Нарекской школы в серии *Матенагирк Хайоц* (X и XII тома) можно считать эпохальным достижением в арменоведении.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԼԱՌԻԴԻՈ ԳՈՒՋԵՐՈՏՏԻ

ՆԱՐԵԿԱՅՈՒ ԾԻՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՆԱԿ ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ներկայ գեկոյցը պիտի չհիմնուի բանասիրական խստապահանջ քննութեան մը, կամ բնագիրներու ժամանակագրական ուսումնասիրութեան, կամ աստուածաբանական թէ իմաստասիրական մանրագնին վերլուծումի մը և կամ թեկուզ լոկ անոնց չափաբերութեան, երաժշտութեան կամ ճարտասանական ու բանաստեղծական փոխաբերութիւններուն վերաբերեալ բծախնդիր հետազոտութեան մը վրայ: Ան պարզապէս կ'ուզէ բոլորահայեաց տպաւորութիւն մը ընձեռել, Գրիգոր Նարեկացիի Մատեանը ընթերցողի մը հակազդեցութիւնը հասկնալու փորձ մը ըլլալ, հանդիպադրելով զայն՝ ծիսական գործածութեան համար շարագրուած իր գրութիւններուն:

Կը պատահի որ, առաջին ակնարկին, մէկը հարցնէ՝ թէ ի՞նչպէս կարելի է որ Երգ Երգոցի մեկնութեան հեղինակը ըլլայ նաեւ Ներբողեանները շարագրող միեւնոյն անձը: Արդարեւ, առաջինին գրեթէ սղագրական պարզութենէն՝ կ'անցնինք առատազեղ պատկերներու սահանքի մը՝ որոնք յաճախ կը հանգուցուին և իրար կը կանչեն, ու առաւել յաճախակի կը յայտնուին իբրեւ աստուածաշնչեան մէջբերումներու ժողովածու, երբեմն բառացի, երբեմն վերլիշուած որպէս հանգիտութիւն, երբեմն նոյնիսկ մեկնաբանուած և իրարու մէջ ձուլուած:

Համանման վարանում մը կարելի է գտնել այն անձին մէջ, որ կը սուզուի Գանձարանի պատառիկներուն՝ այնքան ակնյայտօրէն ներշնչուած ծիսական գործածութենէն՝ որ թերեւս նոյնիսկ բացայայտ թուի, առ նուազն մասամբ այն ոգեկոչուած պատկերներուն համար, այնու, որ քաղուած են որոշակի հասարակաց սկզբնաղբիւրէ մը (koine), որ արեւելեան այլ ծէսերու մէջ կարելի է գտնել, յատկապէս բիւզանդականին, որու ութձայնեան կազմին Գրիգոր քաջածանօթ էր, և զայն կը համեմատէ «Մատեան Ողբերգութեան»ի աղաղակի և հեծեծանքի սաստիկ յորձանքին, ոգեկոչումին՝ որ խօսքը կը խլէ, դուրս կը ցայտեցնէ՝ իր անբաւարարութեան գիտակից հոգիի մը անսահման ցաւէն. հոգի մը՝ որ կը յայտնուի ապշահար, վարանոտ, երբեմն նոյնիսկ արգահատելիօրէն վրդոված՝ անկարելի շնորհքի մը ներխուժումէն, շատ յարակարծային՝ պարզապէս ընկալուելու համար իսկ, և առաւել եւս՝ ըմբռնուած զայն փորձընկալողէն:

Ոմանք ուզած են այս հակադրութիւնները վերագրել շարագրութեան տարբեր ժամանակներուն և որով հեղինակի հասունութեան տարբեր հանգրուաններուն, ուրիշներ՝ տարբեր գրական սեռի, և այլք՝ պատուիրողին ակնկալութիւններուն: Ոմանք ուզած են ցոյց տալ մշակութային, հոգեւոր, աստուա-

ծաբանական, խորհրդագգածական և նոյնիսկ հոգեբանական կառույցին յաջորդականութիւնը, որ տառացիօրէն եզրակացնելի է լեզուական փայլատակումներէն, Նարեկի Տեսանողին բանաստեղծական հանձարէն՝ ի վերջոյ ցոյց տալու համար, թէ հեղինակին մէջ հակասութիւն չկայ:

Այստեղ պիտի ուզէի համառօտ կերպով կանգ առնել Գանձարանի գրական և աստուածաբանական յատկանիշներուն վրայ, հասնելու համար ապա այդ հակադրուող տպաւորութիւններու բանաւոր դրդապատճառի մը, որ կարենայ համեմատուիլ Մատեանի ընթերցումին:

Հատակտուր յօրինուածներու պարագայ մըն է, առնուազն մինչեւ ցայժմ մեզի հասածը. «Գանձ» կամ «Քարոզ»-ի գովերգային կառույցը բոլորովին նոյնանման կը թուի ըլլալ դասական Շարականի մը, յարմարելով երբեմն ներփակուած բանաձեւերու բնանիւթային կուտակումին, երբեմն նկատելիօրէն հեռանալով ծիսական ժամերգութեան երգասացութեան պատկերէն և աստուածաբանական ըմբռնումէն, բայց բնաւ երբեք արտայայտութեան կերպէն: Առաւել եւս, անշփոթելիօրէն «Նարեկեան» կը թուի «տաղ» կամ «փոխ» կամ «մեղեդի»ի բանաստեղծական ոճը, իր հարկադրող նմանաձայնութիւններով, մրճահարող յարակրկնութիւններով և արրտօսրահոսքերով, երբեմն անմեկնելի զեղչումներով կամ աներեւակայելի կանոնազանցութիւններով, խիզախ փոխաբերութիւններով, զարմանալի համազգացականութիւններով:

Յօրինուածքներու առաջին և երկրորդ սեռի աստուածաբանական պարունակութիւնները անթերիօրէն հետեւողական և յաճախ զուգադիպող կը թուին, իսկ արտայայտութիւնը՝ շատ այլազանեալ: Իրենց տարբերութեան ազդեցութիւնը, սակայն, սոսկ ոճային չէ: Եթէ «Գանձ»-ի մը առասիչ նկարագրութիւնը գրեթէ ուսուցողական, յստակ է և գրեթէ միշտ միիմաստ ու միաձեւ սահմանելի, երկրորդ կերպարին մէջ աստուածաբանական պարունակութիւնը ակնարկներով աուցուն կը դառնայ, բացայայտ, սակայն ոչ նախատեսելի: Պարզապէս աւելի դժուար արտայայտութիւն և մեկնաբանութիւն մը չէ, որքան բառազեղչումի կազմ մը, որ բազմազան՝ ոչ միիմաստ, ոգեկոչումներ կը թույլատրէ, սակայն կարող են զիրար հետապնդել և իրարու վրայ կուտակուիլ, զիրար ամբողջացնել և նոյնիսկ զիրար հակասել:

Այս ձեւերը արտակարգօրէն Նարեկեան ոճը կը կազմեն՝ հաստատելու աստուածայինին բացասութիւնը: Չկարենալով լռել Աստուծոյ մասին, արտայայտուած խօսքը կը մերժէ՝ մինչ կը հաստատէ, կը միացնէ յարակարծային ենթականեր. ի վերջոյ կ'արտայայտէ տրամաբանական բացարձակ հակասականութիւնը, որ քրիստոնէութեան հիմը կը կազմէ, և որ շանթահարած է Արեւելքը, ինչպէս նաև առաջին քրիստոնեայ Արեւմուտքը: Անհունին՝ սահմանափակուիլը, Աննիւթականին՝ շօշափելի դառնալը, զուտ Հոգիին՝ մարմնանալը, Անեղծին՝ մահկանացու ըլլալը, ոչնչացումի գազաթնակէտին՝ Փրկարար ըլլալը, մահկանացուին՝ Կենարար ըլլալը, բոլորովին պարտուողին՝ Յաղթական ըլլալը:

Վերջապէս, այստեղ Աստուծոյ անճառելիութիւնը կը յայտնուի՝ որ մարդ կը դառնայ, կը մեռնի և յարութիւն կ'առնէ և գուգահեռօրէն, աստուածանալը՝ մարդկային արարածին, ինչպէս Տանթէն պիտի ըսէր ներաստուածացումը կամ աստուածեղութիւնը (*indiarsi*) (Արքայութիւն, Դ, 28): Հրէութիւնն ու Իսլամութիւնը դարեր շարունակ ցոյց տուած են, թէ որքան դժուար, մինչեւ իսկ անսխորթ կրնայ ըլլալ այս յարակարծութիւնը, և գայթակղած են:

Նարեկացին հաւանաբար այս «փրկագործ տնօրէնութեան» ամենաբարձր երգիչն է, որ այնքան հեռու կը թուի ըլլալ Փասքալի «փիլիսոփաներու աստուծոյ»-ն անհասանելի կատարելութենէն, և որով շատ անհաւանական է նաեւ դրապաշտ մտածողութեան հետեւորդներուն ալ:

Հետեւեալ պատկերներէն միայն մէկին պիտի անդրադառնամ: «Ծննդեան տաղ»-ին մէջ ահաւասիկ կը յայտնաբերուի «ծոց»-ի փոխաբերութիւնը: Յովհաննու աւետարանի յառաջաբանին մէջ (Ա 18), կը խօսուի Աստուծոյ Միածնի մասին որ է «ի ծոց Հօր» (*eis ton kolpon tou Patros*): Դէպի վայր շարժում, ինչպէս կը տեսնուի, և ոչ թէ տեղի մէջ շարժում, ինչպէս արդի լեզուներուն մէջ կը միտին թարգմանել, համարժէք բանաձեւի մը բացակայութեան պատճառով: Հայերէն թարգմանութիւնը կատարեալ կերպով կը համապատասխանէ յունարէն բնագրին, փոխարինելով նոյնիսկ «Աստուած»՝ «Որդի»-ով (ինչպէս կը վկայեն կարգ մը յունարէն ձեռագրեր և շատ մը թարգմանութիւններ): Ան կը պահպանէ նոյն շարժումը դէպի տեղ (որ է ի ծոց Հօր): Ըլլալը (է), ուրեմն կայունութիւն չի նշեր, այլ շարժում, փոխադարձ փնտռութիւն, Հօր և Որդոյ միջեւ ողջագործում, այն, ինչ որ աստուածաբանական եզրով կը կոչուի «շրջաբերութիւն», յունարէն «*perikhoresis*», լատիներէն «*circumincessio*»՝ Սիրոյ յաւիտեանական շարժումը Ս. Երրորդութեան երեք Անձերուն միջեւ:

Ահաւասիկ, ուրեմն, Նարեկի մօտ «ի ծոց Ծնողի» արշալոյս անունը («Տաղ ծննդեան», Բա. 4) կը յայտնուի երբ Կոյսը ծնունդ կու տայ «իր ծոցին ծաղիկին» («ծոցոյ իւրոյ») (Բա. 6): Բանին ի յաւիտենից ծնունդը կը դառնայ մարդկային ծնունդ: Երկու գործողութիւններն ալ կը կատարուին ծոցին մէջ, Հօր առաջինը, Կոյսին՝ երկրորդը: Ծնունդի այս շարժումը՝ սէրն է, երգուած որպէս աստուածային նախաձեռնութիւն՝ որ երկու ծնունդները կը միացնէ: Ամպը, որ ծածկած էր Մարիամ Կոյսը հրեշտակի աւետման ատեն և նախապէս առաջնորդած էր Իսրայէլի ժողովուրդը դէպի Աւետեաց երկիրը, մեր վրայ անձրեւել տուած էր սիրոյ քաղցրութիւնը: Սէրը, ուրեմն, ամպէ մը կը ծնի, սակայն այս պիտի չպատահէր, եթէ նոյն ինքը ամպը սէրէ մղուած չըլլար (Բա. 10): «Սէրը՝ որ արեւը և միւս աստղերը կը շարժէ» պիտի ըսէր Տանթէն (Արքայութիւն, ԼԳ. 145): Ամպի շարժումը միեւնոյնն է՝ զոր տեսած էինք աւետարանական Բանին շարժումին մէջ: Այսպէս, կը շարունակէ Գրիգոր, սէրը կը յայտնաբերէ սէրը, ծնած՝ սէրէն: Եւ այսպէս, սիրոյ տենչանքը թոյլ կու տայ սիրոյն միանալ սէրին: Այս ուժգնագոյն բանաձեւին մէջն է յանհունս փոխհետապնդումը Ամենասուրբ

երրորդութեան անձերուն, նաեւ իրենց անմատոյց երանութենէն դուրս ոլորտի մը մէջ, մինչ կը փութան ներմարդացնելու Բանը Կուսամօր ծոցին մէջ:

Նոյնքան հրապուրիչ է ժամանակի խորհուրդը՝ Յիսուսի Տեսողնդառաջումին մէջ (Տիրոջ քառասնօրեայ Տաճար գալը): Ծերունի Սիմէոն, որ կանխիմաց եղած էր թէ՛ պիտի շմեռնէր մինչեւ աշխարհիս Փրկիչը տեսնէր, խօսքին իրականացումը կը տեսնէ, կանխասաց մարգարէութիւնը, Բանին յանկարծակի ժամանումով «լի խորհուրդով» (խորհրդաբեր, Գա. 20): Հօրմէ նախասահմանուած ժամանակին լրումն է. և այս կ'իրականանայ վարդին փթթումովը Մօր ծոցին մէջ, այսինքն՝ Բանին մէջ, որ մարմին կ'ըլլայ: Աւետարանի օրն է (աւետաբեր, Գա. 20), այսինքն՝ Բարի Աւետման, որն է նոյնինքն Աւետարանի նշանակութիւնը: «Նոր երանութեան» օրն է (նոր երանեալ, Գա. 22). այն է ժամանակին և անոր կատարման, որ ըստ Յովհաննու Աւետարանին մէջ ցոյց կու տայ Բանին՝ մահուան – բարձրացումի – փառաւորութեան պահը, և նաւակատիքն է նոր արարչագործութեան մը: Այս «նոր երկինք եւ նոր երկիր» (Յայտնութիւն Յովհաննու ԻԱ. 11) բանաձեւը Գրիգորի գերագանցօրէն հաճոյ բնանիւթ մըն է և իր բոլոր գործերը կ'ողողէ՛ ներառեալ Մատեանը, ուր ստեղծագործութեան վերանորոգումը (այն՝ զոր ան յաճախ «Գարուն» կը կոչէ) յոյսի գեփիւռ մը կը ներշնչէ ողբէն այրած կոկորդին՝ անակնկալ անկարելի ներշնչում մը, վերահաս, որպէս սոսկ շնորհք գերագոյն ուժաթափութեան մը պահուն: Քրիստոսի յարութեան նման, երբ ան իր գահը կը բարձրանայ, «չոր անապատ»է մը ելլելով, եռացող երկրէն՝ դէպի կուսական վեհագոյն երկինքը (Յարութիւն, Տաղ, Զա. 14-15): Տիրոջ օրն է, անվախճան օր, ծանօթ միայն Աստուծոյ:

Սիրոյ ժամն է, առաւօտեան ժամը, արեւելքէն ծագող առաւօտեան աստղի ժամն է: Եւ սէրը ման կու գայ («Ճեմեալ»՝ «Տաղ Յարութեան», Զգ. 2), կը շրջագայի («սիրոյ շրջան», Զգ. 10)՝ աստղերով շրջապատուած: Ծովը արագ կը շարժի, կը յառաջանայ («վաղընթաց ածեալ», Զգ. 14) դէպի արեւելեան դուռը: Ու այս դրան մէջ Մահէն արշալոյս կը կարգայ, որ վրացերէն «դուռն երկնից» կը կոչուի, Տէրեան՝ Եգեկիէլի (Խէ. 1-2) նկարագրած դուռը՝ Կոյսին մարմնին նման փակ, «սիւռուած ցօղ»-ով բեղմնաւորուած: Կրումի ժամն է («ժամ կատարման»)՝ Համբարձման երկրորդ Տաղին (Ըբ. 12) մէջ:

Ծովն ալ Գրիգորի համար կրկնակի իմաստ ունի. աստե՛նականը՝ ընդունարան ամէն տեսակի հրէշներու, ամէն շարիքի. և երկնայինը՝ վերանորոգման վայր, մկրտութեան ջուրերու նշան, որ սկսեալ Քրիստոսի՝ Յորդանանի մէջ սուզումէն, իրեն՝ Փրկիչն ընդառաջ գացին (Ջրօրհնէք, Ա. 41-49): Եկեղեցւոյ Տաղի երկու ծովերն են («Տաղ եկեղեցւոյ», ժա. 13-14), անհուն ծովը, ծաղիկներու գոյնով խայտաբղէտ, որ կը ներկայացնէ Քրիստոսի կերպարանափոխութիւնը Առաքեալներուն դիմաց, Այլակերպութեան Տաղին մէջ (թ. 5-7), ուր չեն պակսիր ակնարկներ Վարդավառի տօնին՝ իր վարդերու ընծայաբերումով աւելի քան Պայծառակերպութեան լոյսին:

Մարիամ և Եկեղեցին՝ կատարելապէս դերփոխարինելի՝ ինչպէս բարձրագոյն աստուածաբանութեան մէջ, Գանձարանի խնջոյքը կը հանդիսանան:

Ապշեցուցիչ երեւոյթ մըն է ձգողական տենդը՝ Եկեղեցւոյ և անոր տիեզերականութեան հանդէպ, Եկեղեցւոյ նուիրուած Տաղին մէջ, «Նախաշաւիղ լոյսի՝ բոլոր ազգերուն համար» («Քարող Եկեղեցւոյ», Ժ. 19), «նշան՝ հեռաւոր ազգերու համար, աշխարհիս կոչ՝ փողի ձայնով» (Ժ. 36-37), որպէս տիպար այլազան ձեւերու, բազմաձեւ շէնք, հնազանդութեան հասարակաց վայր՝ ժամանակներու և ազգերու համար, հաւաքուած Քրիստոսի անունով (հմմտ. Ժ. 80-87), կուրծքին սեղմուած՝ որպէս առանց ստիպողութեան բարի գալուստ («անբռնադատ»), ձեռքէ բռնած («ձեռամբ»), փափկանկատ սիրով («սիրով քաղցրութեամբ») և պաշտպանութեան դղեակը առաջնորդուած (Ժ. 100-102), երկնքի և երկրի ներդաշնակութիւն, բարձրութիւն և խորութիւն («Տաղ Եկեղեցւոյ», Ժա. 1-2): Թուշուն մը կ'արթննայ ու կ'երգէ հեթանոսներուն, բոլոր մարդկանց կ'երգէ, որպէսզի խաչին վրայ Քրիստոսի արեան այգեկութիւն միանան՝ ինչպէս նաեւ Կանա հարսանիքի բաժակին: Եկեղեցւոյ խորհուրդը կ'եզրափակուի խրախճանային հրաւերով մը, արեւելեան հանդիսաճաշի իւրաքանչեւ ոճով մը. «կը հրաուիրեմ, կը հրաուիրեմ հանդիսաճաշին. եկէ՛ք, նոր ժողովուրդներ, կերէ՛ք, կերէ՛ք իմ հացս եւ խմեցէ՛ք իմ գինիս: Առյաւէտ ապրեցէ՛ք, յաւիտեան դարերով» (Ժբ. 10-14):

Եւ միեւնոյն տօնական մթնոլորտով արեւելեան փոխաբերութիւններով առլցուն, պարսկական բանաստեղծութեան պարտէզներու հաճոյքներով խրախուսուած, յօրինուեցաւ նաեւ «Վերափոխման Մեղեդին», ուր առաւել քան երբեք Աստուածամայր և Եկեղեցի զիրար կը հետապնդեն ու կը նոյնանան. նոճիներ՝ որպէս Վահագնի կնիւն, կամարածեւ յօնքեր, լուսափայլ աստղ, ծովանման աչքեր, նոնենիանման թուշեր, ծաղկազարդուած դափնի, որու ցօղունը սիրով տրոփած սրտէ կը ծնի, երգ և պար, ալեծածան թիկունքներ, վարդի թերթի նման շրթունքներ, քնարանման լեզու, երեսը ծածկող՝ զարդարուած վարսեր, վարդեայ կուրծքեր, մանիշակեայ ձեռքեր, սուղ հանդերձանք, պատուական ափաններով գօտի, կաթկթող լոյսի կաթիլներ, երբ իր ոտնաքայլերով կը շարժի («Մեղեդի ծննդեան», Ժ՛Ի ա.): Սայեաթ Նովայի կամ Լայլա Նիզամիի դիմաց կը գտնուինք:

Վեհագոյն բանաստեղծութիւն՝ առ նուազն ամենէն աւելի քնարերգակ մասերուն մէջ: Աստուածաբանական նիւթեր՝ եղանակաւորումով կատարուած, հաճելի Գրիգոր Նարեկացիի, անհետազօտելի խորութեամբ և արտասովոր խորաթափանց ակնարկներով:

Բայց և այնպէս, քաջավարժ ենք Մատեանի՝ ողբերգութեան աղաղակին, որպէսզի մենք մեզի հարց շտանք, թէ ո՞վ է իսկապէս Գրիգորը և թէ ինչպէ՞ս կարող է գեղեցկութեան շողշողումը զուգուիլ՝ ապաշխարանքէ տանջուած մարմնի մը մոխիրին հետ: Եւ ճիշդ այդ է Մատեանին արտասովոր նորութիւնը,

որ մեզ քիչ մը թերահաւատ կը թողու իր հրաշագեղ գրական արտադրութեան մնացորդին դիմաց, և յատկապէս հոն, ուր մեզի այնքան խաղաղած կը թուի փրկութեան լաւատեսութեամբ:

Արդարեւ, «Գանձարանը» ծիսական աղօթքէն տարբեր երկ մըն է, որ իր իսկ բնութեամբ ազգի մը բիւրեղացած յիշատակը կը կազմէ: Համայն փրկուածներուն երգը, ժողովարանի երգը: Ան գովաբանութեան և կամ ալ խորհուրդին ձայնը կ'արտայայտէ: Խօսքեր են, որոնցմով քրիստոնեայ ամէն ժողովուրդ կը ջանայ Քրիստոսի գործին ընկերանալ, որ յատկապէս ժողովի գումարման միջոցաւ կը փրկէ խորհրդական սուրբ նշաններու միջոցաւ, ուր իսկական համարենակցութիւն մը կը ստեղծուի՝ Տիրոջ հետ, և որ հաւատացեալներուն կը հասնի վայրերու և դարագլուխներու տարբերութեանը մէջ: Խօսքերը «փոխանցուած» խօսքեր են, բնանիւթի մը շուրջ անսահման փոփոխութիւններ են: Աղօթքը աւանդութիւն է, մանաւանդ թէ՛ գլխաւոր հաղորդամիջոցն է աւանդութեան. այսինքն՝ սերունդէ սերունդ հաւատքի փոխանցումն է: Բացայայտ է, որ իւրաքանչիւր սերունդ կը կանոնաւորէ ու կը կազապարէ աւանդութիւնը, իր մասնակցութիւնը կը բերէ, զայն կ'ընթերցէ, զայն կը մեկնաբանէ ու կ'երգէ, իր ժամանակներու յատուկ ֆիզիքական և հոգեւոր կենսամիջոցներով: Սակայն կը մնայ ժայռը՝ մշտականօրէն վաւերականի եւ գործօնին:

«Գանձարանի» Գրիգորը՝ տօներու վերաբերեալ իր բնագրերու վերագրումի խորհրդաւորութեամբ, երբեմն մեկնաբանութեան խիստ դժուարութեամբ, ծիսական հեղինակ է, և իր խօսիլը բողոքին համար աղօթք է: Եւ եթէ, ի վերջոյ, Հայ եկեղեցւոյ պաշտօնական աղօթքին մէջ իրմէ շատ բան չէ մնացած, հաւանաբար որովհետեւ ան այս հեղինակած գրութեան մէջն ալ այնքան անձնական է և իր արձագանգները այնքան այլազան ու բազմազան են, որ կարող է զանոնք՝ տաքնապած ժողովականներու՝ որպէս հասարակաց, խաղաղած, տիեզերական ձայն մը լսելի դարձնել: Այս է Նարեկը, և այս է լեզուի ոճը, որմով կ'արտայայտուի: Գուցէ տակաւին շատ բան կայ իրմէ, որպէսզի ժողովուրդը կարենայ հասկնալ իր լեզուն: Այն ինչ որ մեզ կը տպաւորէ ծիսական անանձնաւոր թերութեամբ, իր մէջ անձնաւորը կը գործէ:

Կ'ուզենք գուցէ ըսել, ուրեմն, որ Մատեանը լոկ անձնական ողբի ե՞րգ մըն է, անկրկնելի, ուժգնօրէն կապուած կեանքին, զգայականութեան, Գրիգոր մարդու ողբերգութեան... և ա՛յս միայն: Շատ մակերեսային պիտի ըլլար դրականօրէն պատասխանել: Վստահաբար, մեր խստօրէն անհատական զգայնութեան համար, գոյութենապաշտութենէ մը դրոշմուած, որուն մէջ հարցումին նեղութիւնը հրապուրիչ կը թուի՝ աւելի քան որեւէ առարկայական պատասխանէ, որով նման նախընտրութիւն մը անխուսափելիօրէն կը յայտնաբերուի: Սակայն շատ ծանր սխալ մը պիտի ըլլար ասոր միայն սահմանափակուիլ. Նարեկը պիտի ներկայացուէր որպէս ժամանակավրէյ բանաստեղծ մը, նախաշարիդ մը, ռահվիրայ մը: Ա՛յս է մեծութիւնը:

Կը կարծեմ, թէ Մատեանին անմատչելի մեծութիւնը սա է, բայց նաեւ ու յատկապէս՝ ասոր հակառակը: Վստահաբար անհատին փորձառութիւնն է, մեծապէս բնորոշուած իր պատմութենէն, բայց ան մարդկային պատմութեան նշանաբան կը դառնայ, ուր բոլորը իրենց անձնական գոյութեան պատկերը ցոլացած կը տեսնեն, ոչ թէ մարդկային դիմագիծերը որպէս ստորոգութիւն, այլ այն մարդկայինը, որ յատկանիշն է շատերուն, բոլորին և իւրաքանչիւրին: Նարեկը ասոր բոլորովին գիտակից է և զայն յստակօրէն կը հաստատէ. իր ցաւը՝ ցաւին ձայնն է, համաշխարհային յանցանքին. «կամաւորապէս մեղադրելով ինքզինքս՝ կը վկայեմ, թէ աններելի յանցանքներու համար բիւր բամբասանքներու արժանի եմ, նախահայր Ադամէն սկսելով մինչև մարդկային վերջին ծնունդը գործուած մեղքերը իմ մէջս ունենալով, ու ամենուն համար ես ինքս պարտական զգալով» (Մատեան Ողբերգութեան, ՀԲ. ա): Ան հալոց մըն է, որուն մէջ կը ձուլուին ամբողջ մարդկութեան եղբրական հարցականները: Սակայն, աւելին եւս՝ հառաչանք-մարդն է, որ ազատօրէն ու գիտակիցօրէն կ'ընդունի աշխարհիս ցաւը իր մէջ կրել:

Մատեանը մեզ կ'առինքնէ, քանի որ ապաշխարութեան երկ մըն է, զոհն է, որ անասուններու արեան կը շաղախէ՝ տառապած կեանքը անհատ-մարդկութեան: Զայնն է անոր, որ բոլորին և իւրաքանչիւրին հսկայ խաչը ստանձնած է: Եւ ճիշդ այս բանին համար, որովհետեւ, ի վերջոյ, ան եղած է «պատկեր և նմանութիւն»՝ Քրիստոսի տիեզերական քաւիչին, և թէ Գրիգոր գիտէ, որ կրնայ յուսալ՝ Աստուծոյ ներողութեան, լոյսին, առկախ աղաղակի լռութենէն անդին: Ան ինքնիրեն համար չ'աղերսեր, բոլորին համար կ'աղերսէ: Ի տարբերութիւն ծէսին և իր լեզուին, իր բարեխօսութիւնը շնորհաբեր է, քանի որ իր հեծեծանքը անշփոթելիօրէն իրը կը մնայ, սակայն կ'ընդունի, իւրաքանչիւրին ցաւը կը մարսէ և ասոր համար ալ բոլորինն է: Անհատականին մէջ, որ համաշխարհային կ'ըլլայ, իր երեսը կ'այլակերպուի Քրիստոսի դիմագիծով, որ Մեծ Քաւիչն է, ինչպէս իւրայատուկ և յամառօրէն կը յայտնուի Հայոց հոգեւոր ականդութեան մէջ: Իր մէջ շունչ կ'առնէ փրկութեան խոր իմաստը, մատուցուած ոչ այնքան հանդարտ անձէ մը, որ զայն կ'ընդունի որպէս ժամանակի մէջ կատարուած եղելութիւն մը, այլ որպէս սպասման ձայն, արարչագործութեան ձայնը՝ ծննդաբերութեան երկունքին մէջ, փրկուած՝ լոկ յոյսով (հմմտ. Հռոմ Ը. 22-24): Գրիգոր՝ Քրիստոսի երկրորդ գալստեան աղերսն է, քանի աղէտը, նոյնիսկ եթէ արդէն փրկուած, կը շարունակէ: «Արդէն»-ն է, բայց յատկապէս «տակաւին»-ը, իղձը, որ մարդկային մարմինը վերջապէս և զգալիօրէն ազատուած ըլլայ և ուրախութեամբ ողողուի:

Եթէ ծիսակատարութիւնը կը տօնախմբէ Քրիստոս Փրկչի պատմութեան apex-ը (գագաթնակէտը), Մատեանը մեր այսօրեային տակաւին անկապ, խեղճ պատմութեան ձայնն է, փրկութեան յայտնաբերումին ակնկալութեամբ, որպէսզի տիեզերքի հիւսուածքին մէջ ներթափանցէ, այն տիեզերքին, որ ենթահողն է Գրիգոր Նարեկացիի բոլոր երկերուն:

ԹԵՈՒ ՄԱՍՐՏԸՆ ՎԱՆ ԼԻՆՏ

FOR WHOM THE BELL TOLLS. ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՂԲԲԱՆԸ ԵՒ ԶՈՆ ԴՈՆԻ «ՈՒՄ ՀԱՄԱՐ Է ՂՕՂԱՆՋՈՒՄ ԶԱՆԳԸ»

(ԱՂՕԹՔՆԵՐ ԱՆՍՊԱՍԵԼԻ ԴԻՊՈՒԱԾՆԵՐԻ ԱՌԹԻԻ, XVII)

Նարեկացիական ընթերցումները այս տարի կազմակերպվում են երկրորդ անգամ: Մենք արդեն չիշել ենք, որ այս ողջունելի նախաձեռնությունը, ինչպես էլ նույնքան բարեյաջող այլ ծրագրեր, հանդէս բերեց հանգուցեալ մեր սիրելի ընկեր եւ գործակից, սիրուած եւ յարգուած գիտնական ու բանաստեղծ, Մատենադարանի Տնօրէն Հրաչեայ Թամրազեանը: Յօդուածս նուիրում եմ իր յիշատակին, յոյս փայփայելով, որ գուցէ դա իրեն հաճոյք կպատճառէր:

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը մեզ յիշեցնում է բնութեան, մեր կեանքի պայմանական վիճակի եւ անխուսափելի վախճանի մասին: Մի կողմից բոլորս միաւորուած ենք մահուան ենթակայ լինելու հանգամանքով: Միւս կողմից նոյն շնչով քրիստոնեայ մտածողը, ամէն քրիստոնեայ հաւատացեալ կ'աւելացնի, թէ նաեւ յարութեան յոյսով ենք ապրում: Յօդուածս շօշափում է այդ երկու հիմնական թեմաների միահիւսուածութիւնը: Եթէ Զոն Դոնի ստեղծագործութիւնը թաղման զանգի միջոցով մեռնելու մասին մի խորհրդածութիւն է, ապա Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ի իննսուներկուերորդ բանը ժամահարին է ներկայացնում որպէս յարութեան նշան: Իրենց ձայնը, իրենց կոչը, եւ երկրորդիս նիւթական բնոյթը, իր աստուածաշնչային, ինչպէս նաեւ առասպելական զուգորդութիւնները տարբեր փոխաբերոյթներ կամ այլաբանութիւններ են յառաջ բերում, որոնք վերջում մարդ արարածի յաւերժական յոյսն ու հրճուանքն են ներկայացնում¹:

Ինչո՞ւ Զոն Դոն եւ Գրիգոր Նարեկացի: Երկուսն էլ իրենց լեզուի եւ մշակոյթների ամենանշանաւոր բանաստեղծներից են: Գրիգոր Նարեկացու ստեղ-

¹ Օգտագործուած հրատարակութիւններ՝ **John Donne**, *Selections from Divine Poems, Sermons, Devotions, and Prayers*, ed. **John Booty** (The Classics of Western Spirituality), New York – Mahwah, 1990; **John Donne**, *Devotions upon Emergent Occasions. Together with Death's Duel* (Ann Arbor Paperbacks), Ann Arbor, Michigan, 1959 (2000), **Գրիգոր Նարեկացի**, *Մատեան ողբերգութեան* (ՄՀ, ԺԲ հատոր, Ժ դար Գրիգոր Նարեկացի), Երեւան 2012: Զոն Դոնի ստեղծագործութեան մասին պատկերացում կազմելու համար կարող են օգտակար լինել հետեւալ կայքէջերը՝ <https://www.poetryfoundation.org/poems-and-poets/poets/detail/john-donne>, <http://digitaldonne.tamu.edu/>, <http://contentdm.lib.byu.edu/cdm/search/collection/JohnDonne/mode/all>:

ծագործութիւնները բնագրով կարգալու համար արժէ գրաբար սովորել: Նարեկացին ոչ միայն հրաշալի բանաստեղծ է, բանի կախարդ, այլեւ բժիշկ՝ ձայնով եւ իմաստով բուժող: Ջոն Դոնը մեծ հեղինակութիւն ունէր որպէս քարոզիչ, իր ժամանակին շատ յայտնի էր, եւ վերջին դարում նրա բանաստեղծութիւններն ու արձակ էջերը կրկին շատ բարձր են գնահատուում:

Նախ ուրուագծենք Ջոն Դոնի կեանքն ու ստեղծագործութիւնները: Մ'վ էր Ջոն Դոնը, եւ ինչո՞ւ եմ նրա գործերից մէկը բաղդատում Նարեկի հետ: Առաջին հարցին պատասխանելու համար պետք է տեղափոխուել Անգլիա: Ջոն Դոնը ծնուել է 1573-ին, կաթոլիկ ընտանիքում: Կաթոլիկ լինելը այն ժամանակաշրջանի Անգլիայում հեշտ չէր. 1593-ից սկսած՝ Անգլիկան եկեղեցին չճանաչող մարդկանց՝ այսպէս կոչուած *recusants*, որոշակի պատիժների էին ենթարկում:

Ջոն Դոնի հայրը մահացաւ, երբ նա երեք տարեկան էր: 1584 թուականի հոկտեմբերին տասնմէկ տարեկանում նա մտաւ Հարթ Հոլ (Hart Hall)՝ Օքսֆորդի համալսարանի քոլէջներից մէկը եւ տարբեր առարկաներ ուսումնասիրեց: Հաւանաբար երեք տարի անց գնաց Քէմբրիջ: 1592-ի մայիսին երիտասարդ Ջոնը (նրան նաեւ Ջէք էին անուանում), փոխադրուեց Լոնդոնի յայտնի Լինքոլն Ին (Lincoln Inn)՝ իրաւաբանական ուսումը շարունակելու համար: Չնայած հաւաստի տեղեկութիւններ չկան, Ջոն Դոնը դարձել է Անգլիկան եկեղեցու հետեւորդ, աւարտել ուսումնառութիւնը Լինքոլն Ինում եւ մի քանի տարի ճամբորդել է: 1596-ին մասնակցել է Կադիզ եւ Ազորեան կղզիների դէմ Անգլիայի ռազմական գործողութիւններին: Յաջորդ տարի ծառայութեան է անցել Սէր Թոմաս Էջրթընի (Sir Thomas Egerton) մօտ՝ որպէս անձնական քարտուղար: Էջրթընը զբաղեցնում էր Անգլիայի ամենակարեւոր պաշտօններից մէկը եւ բարձր էր գնահատում Դոնի կատարած աշխատանքը:

Ջոն Դոնը մինչեւ իր կեանքի վերջը մեծ հետաքրքրութիւն է ցուցաբերել պետութեան կառավարման խնդիրների հանդէպ: Նա ուզում էր այդ ասպարէզում անուն հանել, սակայն դա տեղի չունեցաւ: Էջրթընի տանն էր հաստատվել տասնյոթ տարեկան Ան Մորը (Anne More)՝ Էջրթընի քրոջ աղջիկը: Ջոնն ու Անը սիրահարուեցին եւ 1601 դեկտեմբերին գաղտնի պսակուեցին: Դոնը մի քանի ամիս անց միայն համարձակուեց խոստովանել դա Անի հօրը՝ Ջորջ Մորին (George More), որ Անգլիայի խորհրդարանի անդամ էր: Նա խիստ բարկացաւ եւ ձերբակալել տուեց Դոնին՝ նրան սատարած ընկերների հետ միասին, փորձելով նաեւ չեղեալ յայտարարել ամուսնութիւնը: Սակայն 1602-ին ամուսնութիւնը վաւերացուեց, եւ Ջորջ Մորը հաշտուեց իր փեսայի հետ, բայց Դոնն այլեւս չկարողացաւ աշխատել Էջրթընի մօտ եւ յաջորդ տասներեք տարիների ընթացքում բազմազաւակ ընտանիքը պահեց չափազանց նեղ պայմաններում, առանց պաշտօնի եւ միայն ընկերների օգնութեամբ:

Դոնը մշտապէս ուսումնասիրում էր Աստուածաշունչը, զբաղւում էր աստուածաբանութեամբ, զուգահեռաբար բանաստեղծութիւններ էր գրում լատիներէն եւ անգլերէն: Պետական ծառայողի ասպարէզը նրա համար փակ էր: Դոնը յայտնի դարձաւ որպէս աստուածաբան եւ հռետոր եւ Անգլիայի թագաւոր Ջեյմս I (James I, 1603-1625), համոզում էր նրան քահանայ դառնալ: Դոնը երկար դիմադրում էր, քանի որ համոզուած չէր, թէ արժանի է, բայց ի վերջոյ տեղի տուեց թագաւորի յորդորներին եւ 1615-ի յունուարին ձեռնադրուեց քահանայ: 1617-ին Դոնի կինը՝ Անը ծննդաբերելիս մահացաւ, ինչը նրա համար ծանր յարուած էր: 1621-ին Դոնը դարձաւ Անգլիայի ամենահռչակաւոր՝ Ս. Պօղոսի տաճարի աւագ քահանայ (Dean of Saint Paul's Cathedral): 1623-ին մահամերձ վիճակում էր, երբ գրեց «Աղօթքներ անսպասելի դիպուածների առթիւ» (*Devotions upon Emergent Occasions*): 1631-ին, մահից մէկ ամիս առաջ, թագաւորի ներկայութեամբ արտասանեց իր վերջին քարոզը՝ «Մահուան մենամարտը» (*Death's Duel*), եւ մահացաւ մարտի 31-ին:

Ջոն Դոնի «Աղօթքներ անսպասելի դիպուածների առթիւ» երկի եւ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի զուգադրման շարժառիթն ինձ համար խիստ անձնական է: Ինձ միշտ հետաքրքրել են բանաստեղծութեան եւ բարեպաշտութեան յարաբերութիւնները, ինչպէս նաեւ լեզուի եւ կրօնի փոխառնչութիւնները: Վերջապէս՝ վաղուց իմ ուշադրութիւնը գրաւել էր անգլիացի՝ այսպէս կոչուած metaphysical՝ բնագանց բանաստեղծի եւ ապագայ եկեղեցականի ստեղծագործութիւնը, յատկապէս՝ սիրային բանաստեղծութիւնները, իսկ դրանից քիչ ժամանակ անց իմ հետաքրքրութեան ոլորտում յայտնվեցին X դարի հայ կրօնաւոր-բանաստեղծ Գրիգոր Նարեկացու երկերը:

Այս զուգադրումն ինձ հետաքրքիր էր թւում. թէպէտ Նարեկացու քերթուածները խորապէս ուսումնասիրում են, Ջոն Դոնի կրօնական գործերը պակաս ուշադրութեան են արժանացրել, ինչպէս անգլիախօս աշխարհում, այնպէս էլ Հայաստանում: Ջոն Դոնի բանաստեղծութիւններում կարելոր դեր են խաղում զգայական աշխարհը եւ մարդու հինգ զգայարանները: Նրա սիրային բանաստեղծութիւններում տարփալից պատկերները բաւականաչափ շատ են, ըստ իս՝ արտայայտուած յումորով եւ մեծ յարգանքով: Ընդհանրապէս, Ջոն Դոնն աչքի է ընկնում աշխարհը, կեանքի բոլոր երեւոյթներն ըմբռնելու մեծ ունակութեամբ, եւ դա զուգորդուելով իր բանաստեղծական տաղանդի հետ, մեզ պարզեւել է կեանքի զանազան բնագաւառների եւ դիպուածների հրաշալի նկարագրութիւններ, գրուած իւրաքանչիւր բարոկկո ոճով, որտեղ կարելոր դեր են խաղում հակադրութիւնները:

Դոնի նկարագրութիւնը մեզ յիշեցնում է Կոստանդին Երզնկացու բանաստեղծութիւնների հիմնական թեման, որտեղ, ինչպէս ես եմ դրանք ընկալում, բանաստեղծն իր սէրը եւ տենչանքը երիտասարդ երգչուհուն՝ Մորճի հանդէպ ընկալում է որպէս ձգտում առ Աստուած: Ջոն Դոնի բանաստեղծութիւնները

նաեւ յիշեցնում են Միսաք Մեծարենցի խորհրդապաշտական քերթուածները, օրինակ՝ «Ձմռան պարզ գիշեր»-ը, որտեղ եւս խորհրդաւոր կերպով միահիւսած են բանաստեղծական եւ բնագանցական՝ մետաֆիզիկական ուժերը: Մեծարենցն իր վերաբերմունքը նարեկացու հանդէպ արտահայտել է իր հրաշալի «Նարեկացիի հետ» արձակ բանաստեղծութեան մէջ: Վերջապէս, նարեկացին ինքն է ցոյց տուել, թէ որքան խորն էր կեանքի երեւոյթների իր զգայական ընկալումը, թէ ինչպէս էր ինքն իր զգայարանների միջոցով հիանում Աստծոյ արարչութեամբ, լինի դա բնութիւնը, Աստուածամայրը՝ որպէս կին, թէ եկեղեցին: Այդ բոլորին միաւորում է Հին Կտակարանի «Երգ երգոց»-ի նրա մեկնութիւնը, որտեղ թագաւորի եւ կնոջ սէրը բացատրում է որպէս Աստծոյ յարաբերութիւնը եկեղեցու հետ:

Աւելացնեմ, ներկայացուող թեման կարելի էր ձեւակերպել նաեւ այլ կերպ, շեշտելու համար նրա արդիականութիւնն ու առնչութիւնը մեր այսօրուայ կեանքին: Խորագիրը կարող էր այսպէս հնչել՝ «Ջոն Դոն եւ Գրիգոր Նարեկացի՝ կիրառական գրականագիտութիւն», կամ «Փոխակերպութիւն՝ խորհրդապաշտական տեքստերի կարեւորութիւնը արդի պայմաններում»:

Այս թեմայի շուրջ խօսելիս դժուար է գիտնականի հեռաւորութիւն պահել, անձնական մասնակցութեան ձգտումը զսպել: Իմ համոզմամբ՝ մանաւանդ այս տիպի գրուածքները մեզանից անմիջական անձնական մասնակցութիւն են պահանջում: Անկասկած, կարելի է որոշ հետազօտութիւններ կատարել, գիտական եզրայանգումների գալ, դա ճիշտ է եւ անհրաժեշտ, աւելին՝ դա մեր պարտականութիւնն է, բայց կան նաեւ այդ տեքստերի բովանդակութիւնից բխող այլ կարգի՝ պատասխան պահանջող հարցեր: Ալբէր Կամիւն կեանքի արժէքի մասին հարցի առիթով ասել է. «նախ պէտք է պատասխանել (*il faut d'abord répondre*)²: Ուրեմն, ո՞րն է մեր յարաբերութիւնը այդ գերբնական աշխարհի թեման շօշափող բնագրերի հետ: Ամէն ոք պէտք է այն իր համար յայտնաբերի, եւ այդ որոնումները, այդ յայտնաբերումը, կարող է մեծ փոփոխութիւններ յառաջ բերել մէկ անձի կեանքում:

Ընդհանուր առմամբ կարող ենք ինքներս մեզ հարց տալ, թէ ինչպէս են խորհրդապաշտ տեքստերը փոխում մեր յարաբերութիւնը գերբնական աշխարհի հետ: Դրա հետ անմիջապէս կապուած է նաեւ մէկ ուրիշ հարց, թէ ինչի՞ վրայ է հիմնուած մեր վերաբերմունքն ուրիշների հանդէպ այսօրուայ աշխարհում՝ մի աշխարհում, որը կարող է լինել պոստ-մոդեռն (հետ-արդիական) կամ, ինչպէս կբնորոշեի ինձ ծնած երկիրը՝ պոստ-քրիստոնեայ:

Այժմ անցնենք բնագրերին, նախ՝ Ջոն Դոնի երկերին: Սկսենք մի բանաստեղծութիւնից, որը Դոնը գրել է ծանր հիւանդութեան ժամանակ՝ 1623 կամ 1630-ին: Այստեղ խորհրդապաշտ բանաստեղծը շօշափում է հիւանդութեան

² Albert Camus, *Le mythe de Sisyphe*, Paris, 1961, 15.

վերջին փուլը եւ այլ աշխարհի իրականութիւնները, դիմելով գիտութեան վերջին յայտնագործութիւնների, իր ժամանակի համար դեռեւս նոր շուրջերկրեայ նաւարկութիւնների յայտնաբերումների, բժշկական միջամտութիւնների, նաեւ Աստուածաշնչի իր խոր իմացութեանը:

Օրհներգ Աստծուն, իմ Աստծուն՝ [գրուած] իմ հիւանդութեան ժամանակ.

Քանի որ գալիս եմ այն սուրբ սենեակը,

Որտեղ քո Սրբերի երգչախմբի հետ ընդմիշտ

Ինձ կդարձնեն քո երաժշտութիւնը, գալիս եմ

եւ նուագարանն եմ լարում այստեղ, դռան մօտ

եւ ինչ որ պիտի անեմ այն ժամանակ, այստեղ եմ կանխաւ մտածում:

Մինչդեռ իմ բժիշկներն իրենց սիրոյ ուժով դարձել են

Աշխարհագիրներ, եւ ես՝ իրենց քարտեզը, որ փռուել եմ

Մէջքի վրայ այս անկողնում, այնպէս, որ իրենց միջոցով կցուցադրուի,

Որ սա է իմ հարաւ-արեւմտեան յայտնագործութիւնը՝

տենդի նեղութեամբ, այս նեղուցներով մեռնելը:

Հրճուում եմ, որ այս նեղուցների մէջ իմ արեւմուտքն եմ տեսնում,

Որովհետեւ, թէպէտ եւ նրանց հոսանքերը ոչ մեկին

չեն թողնում վերադառնալ,

Ինչպէ՞ս իմ արեւմուտքը կարող է վնասել ինձ: Արեւմուտքն ու արեւելքը

Բոլոր տափակ քարտեզների վրայ (եւ ես այնպիսին եմ) մէկ են,

Այնպէս էլ մահը յարութեանն է դիպչում:

Արդե՞ք, Խաղաղ օվկիանոսն է իմ տունը եւ կամ

Արեւելեան հարստութիւնները, Երուսաղէմը.

Անեանը, եւ Մագելանը, եւ Ջիբրալթարը՝

Բոլորն էլ նեղուցներ են եւ սոսկ նեղուցներ,

որոնք նրանց մօտ են տանում,

Կինի այնտեղ, որտեղ Յաբեթն էր բնակւում, կամ Քամը, կամ Սեմը:

Մենք կարծում ենք, որ Եդեմի Դրախտն ու Գողգոթան,

Քրիստոսի խաչն ու Ադամի ծառը միեւնոյն տեղում էին կանգնած:

Նայի՛ր, Տէ՛ր եւ գտի՛ր երկու Ադամին էլ, որ իմ մէջ են հանդիպել,

Մինչ առաջին Ադամի քրտինքը դէմքիս շուրջն է,

Թո՛ղ վերջին Ադամի արիւնն իմ հոգին ընդգրկի:

Արդ, նրա ծիրանու մէջ փաթաթուած ինձ ընդունի՛ր, Տէ՛ր,

նրա այս փշերի միջոցով տո՛ւր ինձ նրա միւս թագը,

եւ, ինչպէս ուրիշների հոգիներին քարոզել եմ քո խօսքերը,

Թո՛ղ սա լինի իմ Տողը՝ իմ Քարոզն իմ հոգու համար.

«Տէրը նրա համար է վայր գցում, որ յարութիւն տայ»:

Վերջին տողը բնութագրում է Դոնի փորձառութիւնը. նկարագրուած շարժումը դէպի ցած վերջնական չէ, ընդհակառակը՝ վերջնականն է շարժումը դէպի վեր՝ յարութեան յոսով, եւ յարութիւնն ինքը: Նման մի բան տեսնում ենք Նարեկի՝ ժամահարին նուիրուած իննսուներկուերորդ բանում, այն տարբերութեամբ, որ այստեղ սկզբից եւեթ յարութեան յոյսը կայ:

«Մատեան ողբերգութեան» եւ «Աղօթքներ անսպասելի դիպուածների առթիւ» երկուսն էլ աղօթքի եւ խորհրդածման ստեղծագործութիւններ են, որտեղ մարդ արարածը իր տագնապի ժամին Աստծուն է աղաղակում *de Profundis*՝ «ի խորոց սրտի»: Դոնի դէպքում դա հիւանդութեան ժամանակ է, երբ նա մահամերձ է մի վիճակ, որն ինքն ընկալում է որպէս գոյութեան ճգնաժամ: Իսկ Նարեկացու դէպքում ծննդեան պահից ենք շարունակ գոյութեան ճգնաժամ ապրում, նաեւ շարունակ ոչ միայն փրկութեան յոյս, այլեւ վստահութիւն կարող ենք ունենալ՝ հիմնուած Աստծոյ սիրոյ վրայ:

Երկու գործն էլ եկեղեցականների արտասանած՝ մարդկային վիճակին վերաբերող աղօթքներ են եւ վկայում են այդ երկու հաւատացեալների կատարեալ վստահութիւնը Քրիստոս-Աստծուն: Երկուսն էլ շերմեռանդ մտքերի արդիւնք են, եւ երկուսն էլ՝ բանաստեղծական տեսանկիւնից հրաշալի: Սակայն այդ զուգահեռները ամենահիմնականը չեն ներկայացնում: Երկու բանաստեղծներն էլ յատուկ նրբազգացութեամբ են օժտուած փրկութեան պատմութեան մէջ եղած պարատոքսների, ինչպէս նաեւ լեզուի եւ պատկերների հնարաւորութիւններով դրանք ցուցադրելու հանդէպ: Չնայած նրանք այդ առումով եզակի չեն – Քրիստոնէութիւնը հիմնուած է պարատոքսի վրայ – բայց երկուսն էլ խորը գիտակցում են, որ շնորհը եւ ողորմածութիւնը պարատոքսալ երեւոյթներ են:

Համեմատութեան եւս մի եզր կայ՝ գործերի բնոյթը. թէ՛ մէկը, թէ՛ միւսը կեանքը փոխակերպելու գործիք է: Դրանք գեղագիտական նպատակով չեն գրուած (գեղագիտականը ենթարկուած է մի աւելի բարդ նպատակի), չնայած եթէ մարդ դրանք կարգայ սոսկ հաճոյքի համար, կարող է նաեւ օգուտ քաղել դրանց հոգեկան ուժից ու խորութիւնից:

Դոնի «Աղօթքներ անսպասելի դիպուածների առթիւ» երկը գրուել է 1623 թուականի ձմռանը, երբ Լոնդոնի Սուրբ Պօղոս տաճարի աւագ քահանան ծանր հիւանդ էր ու մահամերձ: Հիւանդութիւնը տեւեց երեք շաբաթ, եւ այդ ընթացքում Դոնը շատ խորհեց մահուան մասին՝ սովորականից աւելի, չնայած շատ անգամ էր առիթ ունեցել մահուան մասին մտածելու: Սակայն յայտնի քարոզիչը առողջացաւ եւ ամբողջացրեց իր Աղօթքները՝ բաղկացած 23 գլխից (կամ կայանից կամ աստիճանից): Ամէն աստիճան երեք բաժին ունի:

Ամբողջական վերնագիրն է՝ «Աղօթքներ անսպասելի դիպուածների առթիւ եւ իմ հիւանդութեան որոշ աստիճաններ՝ բաժանուած» (*Devotions upon Emergent Occasions and several Steps in my Sickness. Digested into*)՝ 1. Խորհրդածութիւններ մեր մարդկային վիճակի մասին (*Meditations upon our*

Humane Condition), 2. Բողոքներ եւ վիճաբանութիւններ Աստծոյ հետ (*Expostulations, and Debaterments with God*), 3. Աղօթքներ առ Աստուած տարբեր առիթներով (*Prayers, upon the several occasions, to Him*):

Բաժանումը եւ խորհրդածումների տեսնիկան գուցէ որոշ առնչութիւններ ունի Իգնատիոս Լոյոլացու «Հոգեկան Վարժանքներ»-ի մօտեցման հետ, նաեւ ժամանակակից անգլիական հոգեւոր հեղինակների ազդեցութիւն կարող է առկայ լինել:

Ուշադրութիւն կուզէի հրաւիրել Աղօթքների 17-րդ գլխի վրայ, որը հաւանաբար գրքի ամենայայտնի մասն է ներկայացնում: Յետոյ շատ կարճ կանդրադառնամ «Մատեան ողբերգութեան» 92-րդ բանին՝ նուիրուած ժամահարին:

Աղօթքներ XVII

Nunc lento sonito dicunt, morieris. Now, this bell tolling softly for another, says to me: Thou must die. «Արդ այս զանգը, որ մեղմօրէն ղօղանջում է ուրիշի համար, ինձ ասում է՝ դու պէտք է մեռնես»:

XVII Խորհրդածութիւն

1. «Գուցէ այն մարդը, ում համար ղօղանջում է զանգը, այնքան ծանր հիւանդ է, որ չգիտէ, թէ իր համար է ղօղանջում. եւ գուցէ ես ինձ իրականից այնքան առողջ եմ համարում, որ ինձ շրջապատողներն ու վիճակ տեսողներն այն ինձ համար են հնչեցրել, իսկ ես տեղեակ չեմ»:

2. «Եկեղեցին համապարփակ է, ընդհանրական, նոյնպիսիք են նրա բոլոր արարքները. նրա արած ամէն բան բոլորիս է պատկանում»:

3. «Երբ նա երեխայ է մկրտում, այդ գործողութիւնն ինձ է վերաբերում, որովհետեւ այդ երեխան իր մկրտութեամբ միացած է այն մարմնին, որը նաեւ իմ գլուխն է³, եւ պատուաստած այն մարմնին, որի մի մասն եմ կազմում»:

4. «Եւ երբ այն (եկեղեցին) մարդ է թաղում, այդ գործողութիւնն ինձ է վերաբերում: Ամբողջ մարդկութիւնը մի հեղինակից է եւ մի հատոր է կազմում. երբ մի մարդ մահանում է, գրքից մի գլուխ պատուած չէ, այլ թարգմանուած, փոխադրուած մի աւելի լաւ լեզուի, եւ իւրաքանչիւր գլուխ պէտք է այդպէս թարգմանուի. Աստուած տարբեր թարգմանիչներ (փոխադրիչներ) է օգտագործում, որոշ մասեր թարգմանուած են ծերութեան միջոցով, ուրիշները՝ հիւանդութեամբ, այլք՝ արդարութեամբ, բայց ամէն մի թարգմանութիւն Աստծոյ ձեռքով է, եւ նրա ձեռքը կվերակազմի մեր բոլոր սփռուած էջերն այն մատենադարանի համար, որտեղ ամէն գիրք միւսի համար բաց վիճակում է դրուած»:

5. «Այդ պատճառով, ուրեմն, ինչպէս զանգը ղօղանջելով կանչում է ոչ միայն քարոզչին, այլեւ [ամբողջ] համայնքը, այնպէս էլ այս զանգը մեզ բոլոր-

³ Իր մկրտութեամբ երեխան դառնում է եկեղեցոյ անդամ. Դոնն էլ է եկեղեցոյ անդամ, եւ եկեղեցին է նրան ղեկավարում (Կող. Ա. 18):

րիս է կանչում, սակայն որքա՞ն աւելի շատ է կանչում ինձ, ում այս հիւանդութիւնն այնքան մերձեցրել է մահուան դռանը»:

6. «Մի վէճ կար, որը մինչեւ անգամ դատական գործ դարձաւ (նրա մէջ խառնուած էին բարեպաշտութիւն եւ արժանապատուութիւն, նաեւ հաւատք ու յարգանք), թէ կրօնական միաբանութիւններից ո՞րն առաւօտեան առաջինը պէտք է զանգը հնչեցնի աղօթքի կանչելու համար: Որոշուեց, որ բոլորից վաղ արթնացածները պէտք է առաջինը հնչեցնեն զանգը»:

7. «Եթէ ճիշտ հասկանանք արժանապատուութիւնն այս զանգի, որ մեր երեկոյեան աղօթքի համար է ղօղանջում, մենք այն ուրախութեամբ մերը կդարձնենք՝ առաւօտեան շուտ վեր կենալով, այն գիտակցութեամբ, որ այն մերը կդառնայ, ինչպէս նրանն է, ում իսկապէս պատկանում է»:

8. «Ձանգն այն մարդու համար է ղօղանջում, ով կարծում է, թէ իր համար է ղօղանջում: Թէպէտ այն նորից կընդհատուի, սակայն այն վայրկեանից, երբ այդ դէպքը սկսեց ազդել իր վրայ, նա⁴ միացել է Աստծոյ հետ»:

9. «Ո՞վ իր աչքերը չի բարձրացնի դէպի արեւը, երբ այն ծագում է: Կամ ո՞վ իր հայեացքը գիսաստղից կհեռացնի, երբ այն երեւում է»:

10. «Ո՞վ է ականջ դնում զանգին, ինչ առիթով էլ որ ղօղանջելիս լինի: Բայց ո՞վ կարող է անհաղորդ մնալ ղօղանջին, որն աշխարհից տանում է իր մի մասնիկը»:

11. «Ոչ մի մարդ կղզի չէ՝ ինքն իր մեջ ամփոփուած: Ամէն մարդ մի նշխար է մայրցամաքի, մի մասնիկ է երկրի»:

12. «Եթէ ծովը ցամաքից մի հողաբեկոր է տանում, Եվրոպան կնուազի, ինչպէս կնուազէր, եթէ տանէր հրուանդանը, տանէր քո բարեկամի կամ քո սեփական կալուածքը: Իւրաքանչիւր մարդու մահ նուազեցնում է ինձ, քանզի ես մարդկութեան մասնիկն եմ: Հետեւաբար, բնաւ ոչ մէկին մի ուղարկի՛ր իմանալու, թէ ում համար է ղօղանջում զանգը, այն քեզ համար է ղօղանջում»:

13. «Ոչ էլ սա կարող ենք թշուառութեան ողորմութիւն կամ թշուառութեան փոխառում անուանել, որպէս թէ թշուառ չենք մենք մեզնով, այլ պէտք է հարեւանի տնից աւելին բերենք՝ մեզ վրայ վերցնելով մեր հարեւանների թշուառութիւնը»:

14. «Յիրաւի, սա ներելի ընչաքաղցութիւն կլինէր, քանզի դժբախտութիւնը հարստութիւն է եւ մարդիկ համարեայ աղքատ են»:

15. «Ոչ մի մարդ այնքան դժբախտութիւն չունի, որը հասուն լինի եւ այդ դժբախտութեամբ՝ Աստծուն արժանի լինի...»:

16. «Եթէ մարդ գանձ է տանում ձուլակտորի կամ մի կտոր ոսկու ձեւով եւ դրանից մաս չունի կանխիկ դրամով, նրա գանձը չի ծածկի ճամփորդական ծախսերը»:

⁴ Այսինքն՝ այդ մարդը:

17. «Փորձանքը գանձ է իր էութեամբ, բայց կիրառութեամբ կանխիկ դրամ չէ, եթէ նրա օգնութեամբ աւելի ու աւելի շօտենանք մեր տանը՝ դրախտին»:

18. «Գուցէ մի ուրիշ մարդ էլ է հիւանդ՝ մահացու հիւանդութեամբ, եւ այս հիւանդութիւնը գուցէ նրա աղիքներում է գտնուում, ինչպէս ոսկին՝ հանքում, եւ անօգուտ է իր համար. բայց այս վանգը, որն ինձ հետ նրա հիւանդութեան մասին է խօսում, այդ ոսկին հանում է եւ ինձ համար կօգտագործի [դա հնարաւոր է], եթէ ուրիշի վտանգի մասին խորհելով, ես զննեմ իմ սեփականն ու այդպիսով ինքս ինձ ապահովեմ՝ ապաւինելով Աստծուն, ով մեր միակ ապահովութիւնն է»:

XVII Վիճաբանութիւն

19. «Աստուած իմ, Աստուած իմ, արդեօ՞ք լոյսը խաւարից հանելու քո միջոցներից մէկն այն է, որ նրան, ում համար զօղանջում է զանգը, այժմ՝ իր այս աղօտ տեսողութեամբ վերակացու, վերատեսուչ, եպիսկոպոս եւ նշանակում բոլոր նրանց վրայ, ովքեր նրա՞ ձայնը կլսեն այս զանգի մէջ, եւ այս գործողութեամբ մեզ կհաստատեն հաստատում»:

20. «Արդեօ՞ք տկարութիւնից ուժ քաղելու քո միջոցներից մէկն այնպէս անելն է, որ մէկն, ով չի կարող անկողնուց վեր կենալ կամ անկողնում շարժուել, գայ իմ տունը եւ այդ հնչմամբ ինձ հաղորդի առողջ եւ առոյգ յորդորների ուժը»:

21. «Աստուած ի՛մ, Աստուած ի՛մ, ինչպիսի՛ որոտ չէ լաւ լարուած ծնծղան, ինչպիսի՛ խոպոտ ձայն, ինչպիսի՛ կոշտ ձայն չէ մաքուր հնչող երգեհոնը, եթէ դու բարեհաճես նրան քո ձայնը հաղորդել»:

22. «Եւ ո՞ր երգեհոնը լաւ չեն նվագում, եթէ քո ձեռքը նրա վրայ լինի: Քո ձայնը, քո ձեռքն այս հնչման մէջ է, եւ այս մէկ հնչման մէջ եւ այս ամբողջ համերգն եմ լսում»:

23. «Լսում եմ քո Յակոբին, որն իր որդիներին է կանչում եւ ասում. «Ժողովեցարուք, զի պատմեցից ձեզ ինչ որ պատահեցի ձեզ ի վախճանի աւուրց»⁶, ինքն ասում է. «Այն, ինչ ես եմ հիմա, դուք պէտք է լինեք յետոյ»:

24. «Լսում եմ, թէ ինչպէս է քո Մովսէսն ասում ինձ եւ բոլոր նրանց, ով այս ձայնի հասանելիութեան շրջանակում է. «Այս է արհնութիւն զոր արհնեաց [զձեզ] յառաջ քան զվախճանելն [իմ]»⁷, այսինքն՝ մեռնելուց առաջ դուք մահը պիտի դիտէք իմ մահուան մէջ»:

25. «Լսում եմ, ինչպէս է մարգարէն ասում եզեկիային. «Հրաման տուր վասն տան քոյ, զի մեռանիս դու եւ ոչ ապրեսցիս»⁸: Նա օգտագործում է թա-

⁵ Այսիմֆն՝ հիւանդի:

⁶ Ծնն. ԽԹ 1: Աստուածաշնչից մէջբերումներն ըստ Զոհրապեանի հրատարակութեան:

⁷ Հմմտ. Բ Օրին. ԼԳ 1:

⁸ Գ Թագ. Ի 1:

գաւորի ընտանիքը, եւ անուանում սա «տունը կարգի բերել», այն նպատակով, որպէսզի նախապատրաստի մեզ մահուան մասին խորհրդածելուն»:

26. «Լսում եմ, թէ ինչպէս է ձեր առաքեալն ասում. «Երաւունս համարիմ մինչդեռ եմ ի մարմնի աստ՝ զարթուցանել ձեզ յիշատակօք: Գիտեմ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ յինչն մարմնոյս»⁹: Սա նրա կտակի հրապարակումն է, եւ այս զանգն է մեր ժառանգութիւնը, նրա ներկայ վիճակի կիրառումը մեր օգտագործման համար»:

27. «Լսում եմ այն, ինչ բոլոր հնչիւնները երաժշտութիւն է դարձնում եւ ամէն երաժշտութիւն՝ կատարեալ, լսում եմ, թէ ինչպէս է քո որդին ինքն ասում. «Մի խոովեսցին սիրտք ձեր», միայն ես եմ լսում այն փոփոխութիւնը, որ մինչ քո որդին ասում է այնտեղ. «երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի», այս մարդը այս հնչման միջոցով ասում է. ես ուղարկում եմ քեզ՝ գերեզմանի համար մի տեղ պատրաստելու»:

28. «Բայց ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ, եթէ դրախտը փառք է եւ ուրախութիւն, ինչո՞ւ փառաւոր եւ ուրախալի իրերը մեզ չեն առաջնորդում, չեն համոզում մտնել դրախտ»:

29. «Քո ժառանգութիւնները քո առաջին կտակում Հին Կտակարանում, առատութիւն եւ յաղթանակ էին, գինի եւ իւղ, կաթ եւ մեղր, ընկերների դաշինքներ, թշնամիների կործանում, խաղաղ սրտեր ու զուարթ դէմքեր, եւ այս սրահներով տարար նրանց քո ննջասենեակ, այս փառքով եւ ուրախութեամբ՝ դէպի դրախտի ուրախութիւնն ու փառքը:

30. «Ինչո՞ւ ես փոխել քո հին գործելակերպը եւ տարել մեզ կարգապահութեամբ եւ մեռցնելով, սգալով ու ողբալով, ողորմելի արդիւնքների եւ այդ թշուառութեան ողորմելի կանխազգացումների միջոցով, մեզ վերագրելով ուրիշների թշուառութիւնը եւ տիրելով նրանց թշուառութեանը, ասես մեզ են պատկանում ի վնաս մեզ»:

31. «Արդեօ՞ք դրախտի փառքն ինքնին կատարելագործող չէ, այլ այս աշխարհում վճատութեան եւ անփառունակութեան հակապատկերի կարիքն ունի՞ դա իրագործելու համար»:

32. «Արդեօ՞ք դրախտի ուրախութիւնն ինքնին կատարելագործող չէ, այլ այս կեանքի թթուութեան կարիքն ունի՞ նրան համ հաղորդելու համար»:

33. «Արդեօ՞ք այդ փառքն ու այդ ուրախութիւնը միայն յարաբերական փառք եւ յարաբերական ուրախութիւն են եւ ոչ թէ ինքնին այդպիսիք, այլ այս աշխարհի տրամութեան եւ անփառունակութեան համեմատ»:

34. «Գիտեմ, Աստուած ի՞մ այն բոլորովին այլ է»:

35. «Քանի որ դու ինքդ, որ ամէն ինչ ես, նիւթից չես ստեղծուած, քեզ հետ եղած ուրախութիւններն ու փառքն էլ ստեղծուած չեն այս հանգամանքներից եւ ոչ մէկից՝ [այն է] էական ուրախութիւնից եւ էական փառքից»:

⁹ Բ Պեւ. Ա. 13-14:

36. «Բայց ինչո՞ւ ուրեմն, Աստուած իմ, չես ցանկանում, որ դրանք այստեղ սկսուեն»:

37. «Ներիր, ո՞վ Աստուած, այս անշնորհակալ անխոհեմութիւնը. հարցնում եմ, թէ ինչո՞ւ դու չես ստեղծում (բայց այժմ իմ մէջ գտնում եմ, որ դու [ընդհակառակը՝] դա անում ես) այնպիսի ուրախութիւն, այնպիսի փառք, որ ես ինձ համար, բոլորի համար այն եզրակացութեանն եմ յանգել, թէ նրանք, ովքեր այս աշխարհում իրենց վշտի մէջ ուրախութիւն չեն գտնում, կամ փառք՝ իրենց ընկճուածութեան մէջ, ահաւոր վտանգի են ենթարկուած՝ երկուսից էլ զրկուելու գալիք աշխարհում»:

XVII Աղօթք

38. «Ո՛վ յաւերժական եւ ամենաշնորհ Աստուած, որ բարեհաճել ես մեզ հետ խօսել՝ ոչ միայն բնութեան ձայնով, որ մեր սրտերում է խօսում, եւ քո բանի ձայնով, որ մեր ականջին է խօսում, այլ նաեւ անբան արարածների խօսքով, Բաղաամի էջի միջոցով, անհաւատ մարդկանց ճառերով, Պիղատոսի խոստովանութեամբ, իր իսկ՝ սատանայի խօսքով, քո որդու ճանաչմամբ եւ վկայութեամբ, այս տխուր եւ թաղման զանգի ղօղանջի մէջ ես խոնարհաբար ընդունում եմ քո ձայնը»:

39. «Եւ նախ օրհնում եմ քո փառաւոր անունը, որ այս հնչման եւ ձայնի մէջ կարող եմ լսել քո հրահանգները՝ խորհելու համար իմ սեփական վիճակի մասին, ուրիշ մարդու վիճակում գտնուելով, եւ իմանալու, թէ այս ուրիշի համար ղօղանջող զանգը գուցէ ինձ էլ ներս տանի»:

40. «Քանի որ մեղքերի հատուցումը մահն է¹⁰, ես նրան արժանի եմ, քանի որ մահը հիւանդութեան վերջն է, այն պատկանում է ինձ, եւ թէպէտեւ այնպիսի անհնազանդ ծառայ եմ, որ կարող էի մեռնելուց վախենալ, այնուամենայնիւ ես չեմ վախենում քեզ պէս ողորմած տիրոջ մօտ գալ: Ուստի, ո՞վ Աստուած իմ, քո ձեռքն եմ յանձնում իմ հոգին, գիտեմ, որ դու այն կընդունես՝ ապրեմ, թէ մեռնեմ»:

41. «Որովհետեւ քո ծառայ Դաւիթը դա արեց¹¹, երբ իրեն քո պաշտպանութեան տակ դրեց՝ իր կեանքն ապահովելու համար, եւ քո օրհնեալ որդին արեց դա, երբ մահանալիս իր հոգին յանձնեց»:

42. «Հայտարարի՛ր քո կամքն իմ մասին, ո՞վ Տէր, կեանքի կամ մահուան համար քո ընտրած պահին, ընդունի՛ր այժմ իմ անձնատուր լինելը, քո ձեռքն եմ, ո՞վ Տէր, յանձնում իմ հոգին»:

43. «Եւ այսպէս, ո՞վ Աստուած իմ, քո խրատով նախապատրաստուած, քո պատժով մեղմացած, եւ քո հոգու ազդեցութեամբ քո կամքին համակերպուած, հոգուս համար քո ներումը ստացած լինելով եւ մարմնիս համար մեղմացում

¹⁰ Հոովմ. 9:23:

¹¹ Սաղ. 1:5 (Դոնի համար՝ Սաղ. 31.5):

չհայցելով, համարձակում եմ, ո՛վ Տէր, խոնարհաբար աղօթքներս չղել առ քեզ նրա աջակցութեան համար, ում զանգի ձայնը կանչել է ինձ այս ծէսին»:

44. «Պահի՛ր նրա հոգին, ո՛վ Աստուած, մինչեւ այդ հոգին լիովին քննած կլինի իր վիճակը, եւ ինչքան քիչ բոլոր էլ ունենայ մնալու այդ մարմնում, թո՛ղ քո Հոգու զօրութիւնը յատուցի ժամանակի սակաւութիւնը եւ բարեւաւի նրա վիճակը, մինչեւ նա վախճանուի: Ներկայացրո՛ւ նրան իր մեղքերը, այնպէս որ իմանայ, թէ ինչ էս ներում, եւ կասկած չունենայ քո ներման վերաբերեալ. թող նա կանգ առնի իր մեղքերի անսահմանութեան վրայ, բայց կանգ առնի¹² քո ողորմութեան անվերջութեան վրայ, թող նկատի իր թերութիւնները, բայց պարուրուի քո որդի Յիսուս Քրիստոսի արժանիքներով, ներքին մխիթարութիւն ներշնչի՛ր նրա սրտին, եւ զօրութիւն պարգեւի՛ր նրան՝ դրա արտաքին վկայութիւնները տալու, այնպէս, որ բոլոր նրան շրջապատողները դրանից մխիթարուեն եւ ունենան այս խրատը, անգամ այն քայքայման մէջ, թէ չնայեած մարմինը գնում է ամէն մարմնի ճանապարհով, բայց հոգին գնում է բոլոր սրբերի ճանապարհով»:

45. «Երբ քո որդին խաչի վրայ բացականչեց. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ ես ինձ լքել»¹³, ոչ այնքան իր անձի անունից էր խօսում, այլ եկեղեցու անձի եւ նրա շարժարուած անդամների անունից, ովքեր իրենց խորին մտահոգութիւններում կարող էին վախենալ քեզնից լքվելուց»:

46. «Այս հիւանդը, ո՛վ ամէնօրհնեալ Աստուած, նրանցից մէկն է. սրա օգտին եւ յանուն սրա լսի՛ր՝ քո որդին ինչպէս է կանչում է առ քեզ. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ ես ինձ լքել», եւ մի՛ լքիր նրան, այլ քո ձեռքով նրա մարմինը դիր գերեզման (եթէ դա է նրան վերաբերող քո որոշումը) եւ աջովը ընդունիր նրա հոգին քո արքայութեան մէջ եւ միացրո՛ւ նրան եւ մեզ սրբերի հաղորդակցութեամբ»:

47. «Ամէն»:

Նարեկացու ընթերցումների ընթացքում պրոֆեսոր Մահէն նշեց Անանիա Նարեկացու ազդեցութիւնը Գրիգոր Նարեկացու Մատեան-ի վրայ, մանաւանդ արտասուքով խորհրդածելու առիթով¹⁴: Չկրկնենք, այլ փոխարէնն անդրադառնանք Մատեան-ի 92-րդ՝ ժամհարին նուիրուած բանին:

Ինչպէս պրոֆեսոր Մահէն է բացատրել իր թարգմանութեան մէջ, 92-րդ եւ 93-րդ բաները դիպտիքոս՝ երկփեղկ սրբապատկեր են կազմում, եւ եկեղեցուն

¹² Այսինքն՝ կենտրոնանայ, ուշադրութիւն բեւեռի:

¹³ Մատթ. Իէ 46, Մկ. ԺԵ 34:

¹⁴ **Stéu Annie et Jean-Pierre Mahé**, *Grégoire de Narek Tragédie. Matean Olbergut'e an Le Livre de Lamentation*, Louvain: Peeters, 2000, եւ գրքի ներածութեան առանձին հրատարակուած հայերէն թարգմանութիւնը: Անանիա Նարեկացու մասին առաջին ամբողջական ուսումնասիրությունը տես **Հրայշա Թամրազյան**, *Անանիա Նարեկացի. Կյանքը և մատենագրութիւնը*, Երևան 1986:

նուիրուած Բան 75-ի հետ միասին զօրեղ վկայութիւն են Թոնդրակեանների դէմ: Բան 92-ը կոչ է անում ժամահարի ձայնով մտածելու ոչ թէ մահուան, այլ ընդհակառակը՝ յարութեան մասին: Օրուայ լուսաբացին ժամահարի ձայնը մեզ կանչում է Աստուծոյ ներկայութեամբ ծիսակատարութեան, նրա ձայնը մեզ տանում է դէպի յաւերժական լոյս: Այս Բանը մի շատ գեղեցիկ օրինակ է նրա, թէ ինչպէս է Նարեկացին իր Մատենանում միաւորում աստուածաշնչային եւ առասպելական տարրերը՝ իր ժամանակակիցների գիտակցութեան մէջ եղած պատկերներն արդիականացնելու, արթնացնելու համար, որպէսզի մարդը մարմնով, մտքով ու հոգով ճանապարհ ընկնի դէպի Քրիստոսոս: Ըստ ժողովրդի մօտ աննդուած առասպելի՝ դարբնոցում լսուած զարկերը Մասիսում բանտարկուած Արտաւազդի շղթաները պինդ են պահում, որպէսզի նա չազատուի: Նարեկացին պնդում է դրա փոխարէն, որ ժամահարի զարկերի ձայնը մեզ յիշեցնում է Քրիստոսի խաչի մասին, եւ նրա միջոցով մեր փրկութեան՝

Մտցէ՛ ձայնդ այդ աստուածաբեալ ընդ պատուաստ յապիցս շաղկապութեան՝ հանել ի հոգոյս զպարտիս դիւաց եւ զմուտս անիծից եւ մեղաց ապականութեան (ՂԲ.Թ):

Կցանկանայի աւարտել մի գիտողութեամբ, որն աւելի շուտ անձնական, քան գիտական շեշտադրում ունի: Այդպիսի գիտողութիւն ինձ թոյլ եմ տալիս, որովհետեւ եւ՛ Ջոն Գոնը, եւ՛ Սուրբ Գրիգոր Նարեկացին ոչ միայն գիտութեան ուսումնասիրութեան «նիւթ» են ներկայացնում: Այդ երկու աստուածաբանները՝ կրօնի մասին մտածողներ եւ բանաստեղծներ՝ Գոնը եւ Նարեկացին, երկու հրաշալի նուէր են մեզ եւ պարգեւել: Մակայն մեզ նուէր են տուել ոչ թէ ցուցափեղկում ցուցադրելու, հեռուից հրճուելու, կամ առանց անձնական մասնակցութեան ուսումնասիրելու համար: Այդ երկու գանձը տուել են մեզ՝ որպէս քրիստոնեաների, որ դրանցով ապրենք, զարգանանք մեր ներքին կեանքը, աւելի արժանի լինենք Աստուծոյ արարած կոչուելու: Գիտական աշխատանքն, իհարկէ, դրան չի խանգարում, ինչպէս նաեւ ուսումնասիրութեան մէջ այդ անձնական տարրը չի խանգարում գիտութեանը:

Վերջին խօսքը յանձնում եմ Նարեկացուն՝ Բան 92 առաջին բաժնից. «Գոհանամ զքէն, թագաւոր, միայն մարդասէր, արարիչ երկնի եւ երկրի, Որդի Աստուծոյ կենդանուոյ, այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ քո յիշատակի ի լրութիւն հնչման փայտիդ հրաւիրման, որով բախեալ զձայնարձակութեանցն զազդողարան՝ սթափեցաք, կանգնեցաք՝ ի վեր յարուցեալ ի մեռաւրինակս թմրմանէ, ուստի իբր կոչմամբ սիոփանաց բանի՝ բերեալ ձգեցաք ի ժամ պաշտաման աւրհնաբանութեան՝ յանդիման լինել Քեզ ուրախութեամբ հանդէպ հատուցմանս բեմի»:

ՅԱԻԵԼՈՒԱՆՆԵՐ

ԱՂՕԹՔՆԵՐ ԱՆՍՊԱՍԵԼԻ ԴԻՊՈՒԱՇՆԵՐԻ ԱՌԹԻ ՄԱՏԵԱՆԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

The Stations of the Sickness

Հիանդութեան աստիճաններ

1. INSULTUS MORBI PRIMUS¹⁵

The first Alteration, the first Grudging of the Sickness – «Առաջին փոփոխութիւնը, հիւանդութեան առաջին շարահամութիւնը»:

2. POST ACTIO LAESA

The strength and the function of the senses, and other faculties, change and fail – «Զգայարանների եւ միւս ունակութիւնների ուժն ու գործունէութիւնը փոխուում եւ սպառուում են»:

3. DECUBITUS SEQUITUR TANDEM

The patient takes his bed – «Հիւանդը անկողին է պառկում»:

4. MEDICUSQUE VOCATUR

The physician is sent for – «Բժիշկ են կանչում»:

5. SOLUS ADEST

The physician comes – «Բժիշկը գալիս է»:

6. METUIT

The physician is afraid – «Բժիշկը վախենում է»:

7. SOCIOS SIBI JUNGIER INSTAT

The physician desires to have others joined with him – «Բժիշկը ցանկանում է, որ ուրիշներն իրեն միանան»:

8. ET REX IPSE SUUM MITTIT

The king sends his own physician – «Թագաւորն իր անձնական բժշկին է ուղարկում»:

9. MEDICAMINA SCRIBUNT

Upon their consultation, they prescribe – «Խորհրդակցելուց հետոյ նշանակում են»:

10. LENTE ET SERPENTI SATAGUNT OCCURRERE MORBO

They find the disease to steal on insensibly, and endeavour to meet it

¹⁵ Լատիներէն եւ անգլերէն բնագրերը լրիւ չեն համապատասխանում: Լատիներէնի առկայութիւնն ու գործածութիւնը բացատրելու համար վարկածներ են առաջարկուել, շեշտելով լատիներէնի կարեւոր դերը երկի մեկնաբանութեան համար: Տե՛ս **Mary Arshagouni**, “The Latin ‘Stationes’ in John Donne’s ‘Devotions upon Emergent Occasions’”, *Modern Philology*, 89 no. 2 (1991), 196-210: Այստեղ չենք կարող այդ հարցին անդրադառնալ: Հայերէն ենք թարգմանել միայն անգլերէն խորագրերը, իսկ լատիներէնները մեծ մասամբ դրանց իմաստն են արտայայտում, երբեմն՝ անլի սեղմ:

SO – «Գտնում են, որ հիւանդութիւնը շարունակում է աննկատ ուժգնանալ, եւ ձգտում են նոյն կերպ ընդդիմանալ նրան»:

11. NOBILIUSQUE TRAHUNT, A CINCTO CORDE, VENENUM,
SUCCIS ET GEMMIS, ET QUAE GENEROSA, MINISTRANT
ARS ET NATURA, INSTILLANT

They use cordials, to keep the venom and the malignity of the disease from the heart – «Սրտի դեղ են օգտագործում սիրտը հիւանդութեան թոյնից եւ կործանարար ազդեցութիւնից պաշտպանելու համար»:

12. ----- SPIRANTE COLOMBA
SUPPOSITA PEDIBUS, REVOCANTUR AD IMA VAPORES

They apply pigeons, to draw the vapours from the head – «Կիրառում են աղանիներ՝ գոլորշիները գլխից հանելու նպատակով»:

13. INGENIUMQUE MALUM, NUMEROSO STIGMATE, FASSUS
PELLITUR AD PECTUS, MORBIQUE SUBURBIA, MORBUS

The sickness declares the infection and malignity thereof by spots – «Հիւանդութիւնը բծերով ի յայտ է բերում վարակուածութիւնն ու նրա վնասակարութիւնը»:

14. IDQUE NOTANT CRITICUS MEDICI EVENISSE DIEBUS

The Physicians observe these accidents to have fallen upon the critical day – «Թիշկները նկատում են, որ այս եղելութիւնները վճռական փուլ են մտեր»:

15. INTEREA INSOMNES NOCTES EGO DUCO, DIESQUE
I sleep not day or night – «Ձեմ քնում գիշեր-ցերեկ»:

16. ET PROPERARE MEUM CLAMANT, E TURRE PROPINQUA,
OBSTREPERAE CAMPANAE ALIORUM IN FUNERE, FUNUS

From the bells of the church adjoining, I am daily remembered of my burial in the funeral of others – «Հարեւան եկեղեցու զանգակները ուրիշների յուղարկաւորութեամբ ինձ ամէն օր յիշեցնում են իմ թաղման մասին»:

17. NUNC LENTO SONITU DICUNT, MORIERIS

Now, this bell tolling softly for another, says to me, Thou must die – «Հիմա այս զանգը որ մեղմօրէն ղօղանջում է ուրիշի համար, ասում է ինձ, թէ դու պէտք է մեռնես»:

18. -----AT INDE
MORTUUS ES, SONITU CELERI, PULSUQUE AGITATO

The bell rings out, and tells me in him, that I am dead – «Ձանգը ղօղանջում է, եւ նրա մէջ ինձ ասում է, որ մեռել եմ»:

19. OCEANO TANDEM EMENSO, ASPICIENDA RESURGIT
TERRA; VIDENT, JUSTIS, MEDICI, JAM COCTA MEDERI
SE POSSE, INDICIS

At last the physicians, after a long and stormy voyage, see land: They have so good signs of the concoction of the disease, as that they may safely proceed to purge – «Վերջապէս բժիշկները, երկարեւ փոթորկալից ճամբորդութիւնից հետոյ ցամաք են տեսնում. հիւանդութեան զարգացման այնպիսի լավ նշաններ ունեն, որ առանց վտանգի կարող են լուծողական տալ»:

20. ID AGUNT

Upon these indications of digested matter, they proceed to purge – «Մարսած նիւթի նշանները ստանալուց հետոյ անցնում են լուծողական տալուն»:

21. ----- ATQUE ANNUIT ILLE,

QUI, PER EOS, CLAMAT, LINGUAS JAM, LAZARE, LECTUM

God prospers their practice, and he, by them, calls Lazarus out of his tomb, and me out of my bed – «Աստուած նրանց գործը յաջողեցնում է եւ նրանց միջոցով կանչում Ղազարոսին իր գերեզմանից»:

22. SIT MORBI FOMES TIBI CURA

The physicians consider the root and occasion, the embers, and coals, and fuel of the disease, and seek to purge or correct that – «Բժիշկները քննում են հիւանդութեան արմատն ու պատճառը, կայծերը, ածուխն ու վառելիքը եւ փորձում մաքրել կամ ուղղել այն»:

23. METUSQUE, RELABI

They warn me of the fearful danger of relapsing – «Ինձ զգուշացնում են կրկին հիւանդանալու ահաւոր վտանգի մասին»:

THEO MAARTEN VAN LINT

THE BOOK OF LAMENTATION'S PRAYER 92 AND JOHN DONNE'S FOR WHOM THE BELL TOLLS (DEVOTIONS UPON EMERGENT OCCASIONS, XVII)

Keywords: Grigor Narekac'i, John Donne, mystical poetry, Christianity, Early Modern literature, Medieval poetry, metaphysical poets, translation.

The article briefly presents the life and work of John Donne (1573-1631), touching upon his transition from baroque love poet to devout priest, and from Catholic born in a recusant family to Dean of St Paul's Cathedral in London. It presents two works written in times of grave illness, the poem *A Hymn to God my God in my sickness* and a chapter from his *Devotions Upon Emergent Occasions* (1624), and indicates some of the features comparable with Prayer 92 from Grigor Narekac'i's *Book of Lamentation*, devoted to the simandron. As far as known, this is the first attempt at a translation of these works in Eastern Armenian.

ТЕО МААРТЕН ВАН ЛИНТ
КНИГА СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ, МОЛИТВА 92, И ПО КОМ
ЗВОНИТ КОЛОКОЛ ДЖОНА ДОННА
(Молитвы по возникающим поводам, XVII)

Ключевые слова: Григор Нарекаци, Джон Донн, мистическая поэзия, христианство, ранняя современная литература, средневековая литература, метафизические поэты, перевод.

Статья кратко представляет жизнь и деятельность Джон Донна (1573-1631), превращение поэта любви, пишущего в стиле барокко, в священника по призванию, и католика, рожденного в семье *рекусантов*, в декана англиканского Собора Святого Павла в Лондоне. Два произведения, написанные во время серьезных болезней автора: *Гимн Богу моему, написанный во время болезни*, и глава из *Молитвы по возникающим особым поводам* (1624) оказывается возможным сопоставить с молитвой 92 из *Книги скорбных песнопений* Григора Нарекаци, посвященной симандру. В статье предлагается первый опыт перевода названных произведений Джона Донна на восточно-армянский язык.

Տ. ՇԱՀԵ Ծ. ՎԱՐԳԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆ

ՍՈՂՈՄՈՆԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ

(Ս. Գրիգոր Նարեկացու կողմից աստվածաշնչյան անվավեր գրքի
օգտագործման մի օրինակ)

Բանալի բառեր՝ Սբ. Գրիգոր Նարեկացի, Մատեան Ողբերութեան, անվավեր գրականություն, Սողոմոն թագավոր, ապաշխարություն:

Նարեկ մատյանի ուսումնասիրությունը, կարելի է ասել, հայագիտության ամենաբեղմնավոր ոլորտներից մեկն է: Ս. Գրիգոր Նարեկացու ստեղծած երկին անդրադարձել ու շարունակում են անդրադառնալ թե՛ աստվածաբանները, թե՛ բանասերները, թե՛ փիլիսոփաները, թե՛ լեզվաբանները և թե՛ նույնիսկ (սա բավական նոր երևույթ է) բժիշկ-հոգեբանները: Սակայն, հակառակ այսօրվա ուսումնասիրված լինելուն՝ Նարեկ մատյանում կիրառված սկզբնաղբյուրների վերհանման առումով, արդի նարեկագիտության մեջ դեռ բավական շատ բան կա անելու: Սույն հոդվածը նվիրված է այդպիսի սկզբնաղբյուրներից մեկի քննարկմանը, որն իր բնույթով ու բովանդակությամբ, թերևս, Նարեկ մատյանի կենտրոնական թեմայի՝ ապաշխարության տեսական-աստվածաբանական հիմքերից մեկն է: Խոսքը Ի Մեկնութենէ Մնացորդաց վասն ապաշխարութեան Սողոմոնի խորագրով անվավեր գրվածքի մասին է, որի ազդեցության և ուղղակի մեջբերման հետքերը նկատելի են Նարեկի ԽԸ գլխում:

Ինչպես արդեն նկատում է այս անվավեր երկի քննական բնագրի հրատարակիչ Մայքլ Սթոունը, ի մեկնութենէ արտահայտությունը վերաբերում է Եփրեմ Ասորուն վերագրված Մնացորդաց գրքի պատումի հիման վրա ստեղծված անվավեր մի երկի մեկնությանը, քանի որ բնագրում Սողոմոնի ապաշխարության երկու դրվագներից հետո դրված է Եփրեմ Ասորուն վերագրված մեկնությունը¹: Ըստ Սողոմոնի ապաշխարության մասին պատմող անվավեր գրվածքի՝ իմաստուն արքայի ապաշխարությունը փոխանցվել է երկու տարբեր պատումներով².

¹ Տե՛ս **M. E. Stone**, *Selected Studies in Pseudepigrapha and Apocrypha, with Special Reference to the Armenian Tradition*, E. J. Brill: Leiden–New York–København–Köln, 1991, pp. 61-64:

² Տե՛ս ամֆ. էջ 66-67:

ՏԱՐԲԵՐԱԿ Ա

Իսկ Սողոմոն արար իւր կանայս բազումս, եւ թն հարիր,.... եւ յայտնապէս պոռնկեցաւ դէմ յանդիման տաճարին եւ թշնամեացն իւրոց: Բայց եղեւ նմա ժամ պարապոյ ի սենեկի իւրում խորհեցաւ ի միտս իւր յիշեալ զպատուէր հար իւրոյ Դաւթի. Գնալ քեզ, ասէ, ի ճանապարհս Տեառն եւ յաւրէնս Մովսիսի ծառայի նորա: Իբրեւ յիշեաց զպատուէրս հար իւրոյ, եւ զժամ մահուն Դաւթի, ելաց նա ի խորոց սրտէ իւրմէ մինչեւ ոռոգանել զսենեակս եւ զմահիճս իւր ի տան ձմերոցաց արքայութեան իւրոյ: եւ եդ սահման ապաշխարութեան անձին իւրոյ զդուրս սենեկի իւրոյ ինքնին բանալ առանց բացողին....

Այս գրվագների մասին մեկնությունները քաղված են Եփրեմ Ասորուն վերագրված՝ Մնացորդաց գրքի մեկնության երեք հատվածներից.

ՀԱՏՎԱԾ Ա

Երանելի Եփրեմ ասէ այսպէս. Եթէ Սողոմոն իմաստունն յետ մեղացն եւ հեռանալոյն յԱստուծոյ ի խաբից կանանցն, յաւուր միում նստէր ի ձմերոց՝ ի տան հար իւրոյ Դաւթի, եւ յիշեաց զպատուիրան նորա ի ժամ մահուն, եւ եմուտ ի սենեակ իւր, եւ ելաց առաջի Տեառն լալիւն մեծ, եւ եդ սահման անձին իւրոյ լալ մինչեւ ի դուռն սենեկին, առանց ձեռին բացցէ զոր այլքն ասեն փակեսցի. բայց բանալն է ի դէպ նշանակ լինել բացման դրան ողորմութեան Աստուծոյ. որպէս եւ եղեւն: Զի բացաւ դուռն սենեկին ինքնին.

ՏԱՐԲԵՐԱԿ Բ

Ըստ այլում այսպէս: Իսկ Սողոմոն ի վերայ այսքան յանցանաց ի մեծի տրտմութեան եղեալ, անյուսու-թեամբ կոշեաց զսենեկապետ իւր եւ հրամայեաց այրել զբազմութիւն գրոց իւրոց զոր էր խաւսեալ ի շնորհաց հոգւոյն եւ նորա արարեալ զհրամանն. ապա հարցեալ Սողոմոնի եթէ Զի՞նչ տեսեր. եւ նա ասէ. Լոյս անբաւ ընդ բոցոյն վերացաւ յերկինս. եւ նա վասն այնր ելաց ի խորոց սրտէ իւրմէ:

ՀԱՏՎԱԾ Բ

Եւ իբրեւ մերժեցաւ նա յօգնակա-նութենէ Տեառն, հրամայեաց սենեկապետին իւրոյ հրկէզ առնել զիւր գրեանն՝ որ էին հոգւով գիտու-թեամբ երեք հազար առակաց: Ի մայրիցն Լիբանանու մինչեւ ցզոպայն որ յորմն ելանէ. եւ ի թռչնոց եւ ի գազանաց եւ ի սողնոց. բայց առեալ մասն ինչ թագուցանէր, զոր եւ յետոյ իսկ գրեցին բարեկամքն Եփեկիայի: Եւ իբրեւ հարցանէր Սողոմոն վասն պատուիրանացն հրկի-զութեան, թէ արդարեւ կիզեցա՞ն բո-լոր գրեանն, եւ զի՞նչ նշան հայե-ցածն ցուցանէր: Պատասխանեալ սենեկապետն ասէ. Բորբոքեալ բո-ցոյն՝ հուր կիզանող վերացեալ մտա-նէր ընդ երկնիւք: Պատասխանեալ

Սողոմոնն ասէ. Այն՝ հոգին սուրբ էր որ ազդեալ էր ինձ խօսել զնոսա: Եւ եղեալ յարտասուս՝ զղջացեալ ելաց դառնապէս. եւ համարեցաւ նմա Աստուած յապաշխարութիւն:

ՀԱՏՎԱԾ Գ

... ապա ելեալ արտաքս եւ ասաց ի մտի իւրում, եթէ բազմութիւն գրեանցն իմ պատճառ լինի բազմաց կորստեան, թերանալոյ յԱստուծոյ եւ ի բարեաց գործոց: Քանզի ասեն, թէ նա այն ամենայն իմաստութեամբ ընդէ՞ր մեկնեցաւ ի Տեառնէ, եթէ բարի է պաշտելն զնա: Եւ հրամայեաց հաւատարմաց իւրոց այրել զամենայն գրեանն՝ որք էին ի նմանէ ասացեալքն յառակս եւ յօրհնութիւնս, իբրեւ ութ հազար: Որք եւ տրտմութեամբ ելին յերեսաց նորա, խորհեցան եւ ոչ այրեցին. եւ եկեալ պատմեցին, եթէ լուսով եւ անուշ հոտով լցաւ ամենայն երկիր, եւ ապա հաւաքեալ վերացաւ յերկինս որպէս զաղանի, եւ մտեալ ծածկեցաւ: Եւ լուեալ զայս՝ եհար զնա սիրտ իւր, եւ տրտմեալ ի խղճէ մտացն հեղձնոյր³:

Ս. Գրիգոր Նարեկացին իր Մատյանի ԽԸ գլխում Սողոմոնի ապաշխարութեան «հիշատակարանն» իբրև իր անձնական ապաշխարութեան օրինակ է նկատում.

Այս Սողոմոնի յուսոյ աղերսանք իմոյս առեալ տիպ,
Քանզի ոչ այլ ոք բազմագեղ, որքան զնա ինձ զուգաշաւիղ...
Այլ քանզի սաստիկս եւ քստմնելիս ունի Սողոմոն
Ձդարձին իւրոյ յիշատակարան՝ ինքնապարսաւն կշտամբութեամբ,
Իբր մեռեալ իսկապէս համայն աշխարհիս անձնասիրութեան,
Ձոր եթէ զիսկն ոք նկատեսցէ, Ունայնութեամբքն է իմանալի,
Այլ եւ ի մատեանս քահանայիցն եւ ի գիրս Աքիայ Սիլոնացոյ,
Յորում զփոյթն իւրում ընթացիցն արտասուելիս իմն յեղանակէ...
Ձայս ամենայն մասունս բանից խոստովանական կանոնադրութիւն
Ի սիրտս բնաւից նախասերմանեաց ժողովողս՝
Կանոնադիր դարձելոց զղջման...
Որ յոգնահոսան արտասուաց ելիւք
Ձմէջ յատակի յարկին հեղեղեալ ապարանիցն իւր խրախճանութեան՝
Սաստկակսկիծն ապաշաւանաւք,
Հաւրն կրիցն գերազանցեաց՝ ողորմելի ոգւոյն հեծութեամբ:

Մատյանի լուծմունքներում և մեկնություններում⁴, ինչպես նաև արդի որոշ թարգմանություններում այս հատվածին տրված բացատրությունները

³ Տե՛ս անդ, էջ 67-68:

⁴ Նարեկի լուծմունքների մասին ավելի մանրամասն տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. էջմիածին, 1996, էջ 240-320:

գրեթե նույնն են⁵: Այսպէս, Մատթանի որոշ ձեռագրերում այս գլխի համար լուսանցքներում, խորագրի դիմաց, առկա են նշումներ՝ «Առ Սողոմոն», «Սողոմոնի է», «Վասն կռոցն Սողոմոնի Իսրայէլի», «Ի Սողոմոն արքայ» ևն, ինչը վկայում է, որ արդեն միջնադարյան գրիչները հատուկ ուշադրութիւն են հրավիրել այն բանի վրա, որ ԽԸ գլուխն ամբողջութեամբ նվիրված է Սողոմոնին ու նրա ապաշխարութեանը⁶: Միջնադարյան մեկ այլ լուծմունք (ձեռ. ՄՄ 5650) մեկնում է «Այլ եւ ի մատեանս քանանայիցն եւ ի գիրս Ափայ Սիլոնացոյ, Յորում զփոյթն իւրում ընթացիցն արատաւելիս իմն յեղանակէ...» արտահայտութիւնը հետևյալ հետաքրքիր տեղեկութեամբ. «Քահանայք յետ դարձին խօսեցան եւ գրեցին բազում բանս վասն Սողոմոնի եւ բազումք՝ վասն այլ իրի, որ չէ հրամայեալ յԱստուածաշունչ գիրս, բայց պատմութիւն է, եւ յիշեն վարդապետք եկեղեցոյ, Եւսեբի եւ այլք: Եւ չէ այժմ ի միջի Գիրք քահանայիցն, որ բազում ինչ պատմեն վասն դարձին Սողոմոնին: Այլ եւ Աքիա Սիլոնացի բազում ինչ պատմէ վասն զղջմանն: Այս Աքիայս մարգարէ էր եւ յաւուրս Սողոմոնի...»⁷: Նարեկի մեկնիչներից Հայր Գաբրիել Ավետիքյանն ու Հակոբ պատրիարք Նալջանը⁸ վերոբերյալ հատվածն իրավամբ համեմատում են Բ Մնաց. Թ 29-ում առկա վկայութեան հետ, որտեղ մասնավորապէս նշված է. «Սողոմոնի պատմութեան մնացած մասը, սկզբից մինչեւ վերջը, գրուած են Նաթան մարգարէի գրուածքներում, սիլոնացի Աքիայի գրուածքներում, տեսանող Յովելի՝ Նաբաթի որդի Յերոբոամին վերաբերող տեսիլքում»: Ավետիքյանը նույնիսկ հավանական է համարում այն փաստը, որ Նարեկացին ակնարկում է Գ Թագ. ԺԳ 19-ում հիշատակվող Իսրայէլի թագավորների ժամանակագրութեան գիրքը⁹: Բնականաբար, նշված բոլոր երկերի բացակայութեան պատճառով բերվող բացատրութիւններն ունեն գուտ ենթադրութեան արժեք: Ավելի հետաքրքիր է դիտարկել ԽԸ գլխում Նարեկացու հաղորդած մեկ այլ տեղեկութիւն: Նա Սողոմոնի ապաշխարութեան կամ դարձի «հիշատակարան» է համարում Ունայնութեանց գիրքը. «Զդարձին իւրոյ յիշատակարան՝ ինքնապարսաւն կշտամբութեամբ, Իբր մեռեալ իսկապէս համայն աշխարհիս անձնասիրութեան, Զոր եթէ զխսկն ոք նկատեսցէ, Ունայնութեամբն է իմանալի...»: Վաղ եկեղեցու հայրերի, ինչպէս նաև հրեական միջնադարյան մեկնութիւններում Ունայնու-

⁵ Տե՛ս Grégoire de Narek, *Tragédie. Matean olbergut'ean: Le Livre de Lamentation*, introduction, traduction et notes par Annie et Jean-Pierre Mahé (Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 584, Subsidia 106), Louvain 2000, p. 468, n. 713.

⁶ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան*, աշխ. Պ. Խաչատրյանի, Ա. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 1054:

⁷ Տե՛ս անդ, էջ 1055:

⁸ Տե՛ս Յակոբ արքեպիսկոպոս Նալեան, *Մեկնութիւն աղօթից եւ ներբողինաց Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ*, Կ. Պոլիս, 1745, էջ 348-366; Հ. Գաբրիել Աւետիքեան, *Նարեկ աղօթից համառօտ եւ զգուշաւոր լուծմամբ բացայայտեալ*, Վենետիկ, Ս. Ղազար, 1859, էջ 244-251:

⁹ Տե՛ս անդ, էջ 248-249:

թյան կամ ժողովողի գիրքը գրեթե միշտ նույնացվել է Սողոմոնի դարձի պատմության հետ¹⁰։ Այսպես, օրինակ, ժողովողի Թարգումի մեջ նշվում է, որ երբ Սողոմոնն Աստծո հոգով գուշակեց Իսրայելի թագավորության բաժանումը և Տիրոջ տաճարի կործանումը, ասաց. «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է...»¹¹։ Աշխարհի ունայնությունը ժողովողի գրքում քրիստոնյաներին բերում է ապաշխարության և աստվածային սիրո ճանաչողության։ Այս վերջին մեկնությունը եկեղեցական հայրերի (մասնավորապես Ս. Գրիգոր Նյուսացու դասական մեկնության) և ուսուցիչների ընկալումն է ժողովողի գրքի վերաբերյալ¹²։ Նարեկացին ինքն էլ այս համոզումն ունի. «Ձայս ամենայն մասունս բանից խոստովանական կանոնադրութիւն, Ի սիրոս բնաւից նախասերմանեաց ժողովողս՝ Կանոնադիր դարձելոց զղջման...»։ Սակայն հետագա տողերում Մատթանի հեղինակը բերում է մի պատկեր, որն առկա չէ ո՛չ ժողովողի գրքում, ո՛չ էլ վերը հիշատակված հայրաբանական մեկնություններում.

Որ յոգնահոսան արտասուաց ելիւք

Ձմէջ յատակի յարկին հեղեղեալ ապարանիցն իւր խրախճանութեան՝

Մաստկակակիծն ապաշաւանաւք,

Հաւրն կրիցն գերազանցեաց՝ ողորմելի ոգւոյն հեծութեամբ։

Սողոմոնի ապաշխարության այս պատկերն առկա է միայն Ի մեկնութենէ Մնացորդաց վասն ապաշխարութեան երկում։ Այսպիսով, Նարեկացին հաջորդաբար թվարկում է Սողոմոնի ապաշխարության մասին ակնարկող նրա իսկ գրած երկերը (ժողովող և Հոբի գիրք, որին նույն գլխում անվանում է՝ «...Աւտացոյն, ի նմանէ ստեղծեալն բազմահրաշատուն մարգարէաճանոն պատմագրութիւն»)՝ վերջում մեջբերելով նաև Սողոմոնի ապաշխարության մասին պատմող այս անվավեր գրքից համապատասխան հատվածը։ Ի դեպ, արդեն այս երկի ու Նարեկամատյանի միջև առկա նմանության մասին ակնարկել էին Մխիթարյան երկու նշանավոր հայագետներ՝ Գաբրիել Ավետիքյանն իր Նարեկի մեկնության մեջ և Բարսեղ Սարգիսյանն իր կազմած Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրացուցակում¹³։ Սակայն երկուսն էլ ձեռքի տակ չունեին վերոնշյալ անվավեր գրքի բնագիրը՝ անհրաժեշտ աղբյուրագիտական համեմատությունը կատարելու համար։

¹⁰ Տե՛ս **Shahé Ananyan**, "La figure de Salomon et les livres sapientiaux dans la tradition arménienne," *Revue des Etudes Arméniennes* 34 (2012), pp. 30-34: Հմմտ. նաև **C. Mopsik**, *L'Ecclésiaste et son double araméen (Qohélet et son Targum)*, Verdier, 1990:

¹¹ Տե՛ս **C. Mopsik**, նշվ. աշխ., էջ 33:

¹² Տե՛ս **Grégoire de Nysse**, *Homélie sur l'Ecclésiaste*, coll. *Sources Chrétiennes* 416, Paris 1996, pp. 113-123:

¹³ Տե՛ս **Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան**, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վենետիկ*, հտ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1914, էջ 109:

Անհրաժեշտ ենք համարում շեշտել ևս երկու կարևոր հանգամանք: Ս. Գրիգոր Նարեկացին ապաշխարող Սողոմոնի կերպարի մեջ տեսնում է խորհրդագգածական-հոգևոր կյանքի համար երկու կարևորագույն գործոն՝ սրտի ապաշխարութիւնը և զղջման, դարձի արտասուքներ: Նարեկացին իր երկի խճ գլխում այս երկու հասկացութիւնները գտնում է Սողոմոնի գրքի՝ Ժողովողի երկում և նրա ապաշխարութեան մասին պատմող դրվագում, որտեղ մասնավորապէս ասվում է. «...եւաց նա ի խորոց սրտէ իւրմէ մինչեւ ոռոգանել զսենեակս եւ զմահիճս իւր ի տան ձմերոցաց արքայութեան իւրոյ»: Հատկանշական է, որ «ի խորոց սրտէ» արտահայտութեամբ է ամենից ավելի հատկորոշվել Ս. Գրիգոր Նարեկացու աղոթամատչանը...

Անհրաժեշտ ընդհանրացումները թողնելով մեկ այլ առիթի և սահմանափակվելով միայն աղբյուրների այս քննութեամբ՝ կարող ենք եզրակացնել:

Ա. Սուրբ Գրիգոր Նարեկացու Աղոթամատչանում կիրառված սուրբգրային և արտասուրբգրային, անվավեր ու պարականոն երկերից, ինչպէս նաև հայրաբանական գրականութեան սկզբնաղբյուրների վերհանումն այսօր մեծապէս կարող է նպաստել Նարեկի առավել ամբողջական ընկալմանն ու բացատրութեանը:

Բ. Վերոնշյալ աղբյուրագիտական դիտարկումը ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու, որ Նարեկ մատչանի մեջ կիրառված սկզբնաղբյուրների վերհանումը լուրջ ներդրում կարող է դառնալ հետևյալ հարցում՝ արդյո՞ք Նարեկը գրվել է իբրև մեկ ամբողջական գործ, թե՞ տարբեր տարիների ու առիթների համար գրված աղոթքների մեկտեղման արդյունքում: Աղբյուրների կիրառման և դրանց տրված մեկնաբանութիւնների քննարկումը հաճախ բերում է Նարեկի մեջ իրարից բավական տարբեր մասերում գետեղված գլուխների միջև անսպասելի նմանութիւնների:

**o. ШАЭ АНАНЯН
ПОКАЯНИЕ СОЛОМОНА И СВЯТОЙ ГРИГОРИЙ НАРЕКАЦИ.
ПРИМЕР ИСПОЛЬЗОВАНИЯ АПОКРИФИЧЕСКИХ КНИГ В
КНИГЕ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ**

Ключевые слова: Св. Григор Нарекаци, *Книга скорбных песнопений*, апокрифы, царь Соломон, покаяние.

Автор предлагает, на примере использования апокрифа “Покаяние царя Соломона” в 48-ой главе Книги *скорбных песнопений* Св. Григора Нарекаци, новый механизм исследования патристических, библейских и апокрифических источников, использованных в знаменитой книге Св. Григора Нарекаци, а именно: а) идентификация дословных цитат из патристических, библейских и апокри-

фических источников в *Книге скорбных песнопений*, и б) изъяснение специальных оборотов и богословских терминов в установленных источниках, которые так или иначе отразились в *Книге скорбных песнопений*. Подобные исследования могут оказаться весьма полезными для изучающих *Книгу* с точки зрения богословских взглядов Св. Григора Нарекаци и сложения литературной формы этого произведения, а также для уточнения даты его создания.

R. F. SHAHE ANANYAN

THE REPENTANCE OF SOLOMON AND ST. GREGORY OF NAREK: AN EXAMPLE OF USING APOCRYPHA IN THE BOOK OF LAMENTATIONS

Keywords: St. Gregory of Narek, Book of Lamentations, apocrypha, King Solomon, repentance.

Based on the example of the use of the apocryphon *King Solomon's Repentance* in chapter 48 of St. Grigor Narekatsi's *Book of Lamentations*, the author suggests a new mechanism for studying the patristic, biblical and apocryphal sources of this famous work, namely: a) identification of verbatim quotations from these sources in the *Book of Lamentations*, and b) explanation of special idioms and theological terms in these sources, which in some way have been reflected in the *Book of Lamentations*. Such studies may prove to be useful for understanding Narekatsi's theological views and the literary form of his work, as well as for clarifying the date of its creation.

ԱՐՈՒՄՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՁԱՅՆԻ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀՆՉՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՆԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր՝ ձայնապատկեր, ձայնանմանակում, խորհրդաձայներ, հնչույթ-աշխարհներ, նոր ոգեղեն երգեցողություն, շնչավոր գործիք, հոգևոր շուրթերի պտուղ, ոգեղեն ձայներանգներ, տիեզերական մեղեդի, ձայնի փոխակերպումներ, անսպառ երգեցողություն՝ հարահնչողություն, ռիթմի քավող-մաքրագործող զորություն:

Երգեցողության հնչյունային «պատկերներ», տիեզերական երաժշտություն (տաղեր)

Քրիստոնեական մեկնություններն առհասարակ, ելնելով տիեզերական Բանի գերագույն արժեքից, համակված են խոսքի, ձայնի, երաժշտության ամենախորունկ զգացողությամբ:

Ձայնի ամենանուրբ թափանցումները, նրա հնչողության հետ կապված ամենազգայուն բնորոշումները հառնում են նարեկացու տաղ-տեսիլներում՝ ոգեղեն ոլորտներում ձեռք բերելով իրենց գունեղ ու նրբին շղարշները: Սրանք դառնում են լուսեղեն տեսիլքի մեջ բացվող հեռանկար, դանդաղ սահում ռիթմերի, հարակրկնությունների, հոսքերի ու դարձերի, հնչյունային կուտակումների ու տարածումների մեջ: Եվ ամեն անգամ ապշեցնում է բանաստեղծ-բառաստեղծի այս մոգությունը, որով նա կերտում է իր կախարդված տարածությունները, ձայնապատկերներն ու ոգեղեն մեղեդիները աստվածակերպ հյուսվածքների մեջ:

«Մենդեան» մեղեդիում պատկերանում է Աստվածամորն ընծայվող «երգ զարմանալի, երգ շարժվարժենի»-ն¹: Այս նորաստեղծ բառով («շարժուն և վարժ»), ըստ էության, արտահայտվում է երգասացության թե՛ ոգեղեն աննյութ-թեթևասահ շարժուն բնույթը, թե՛ արվեստի հմտությունը՝ գեղգեղանքների «անբռնազբոս» արագընթաց կողմը: Մարիամի երգեցողությունը բնորոշվում է բառահյուսվածքով, որ նաև զուտ հնչողությամբ՝ բաղաձայնների կուտակումներով, զույգ նմանակումներով, ստեղծում է ելևէջների ցուլցացող նրբակերտ, խաղացկուն զարդանախշային տպավորությունը՝ «ատիճա՛ղ-պա-

¹ Այս և հետագա ընդգծումները մերն են: Ս. Գապամանյանը շեշտում է այս բառի առաջին արմատի նշանակությունը՝ «շարժելու, շատ շարժումն է ընող» (տե՛ս Ս. Գաբամանյան, *Նոր բառգիրք հայերէն լեզուի*, Կ. Պոլիս, 1910), Լ. Հովհաննիսյանը՝ երկրորդ արմատինը՝ «վարժ» (տե՛ս Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառարան. նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Երևան, 2010):

տիճաղ, ստղի-խտղի»: Այստեղ բառիմաստներին զուգահեռ հյուսվում է բառանմանակումների, նույն հնչույթների շուրջ շարահարվող իմաստների շղթան: «Ատիճաղ» և «պատիճաղ» բառերը բացատրվում են որպես «ողորուն»², «խտղի»-ն՝ «ախորժեղի, հեշտալի»³, իսկ «ստղի»-ն Հ. Աճառյանը կապում է «ստեղն» բառի հետ⁴. Երաժշտական առումով ամենաընդհանուր իմաստով այն մատնանշում է հարուստ, ճյուղավորված երգեցողություն («ստեղն»-ի ուղիղ նշանակությունն է «ճյուղ, ծիլ, ցողուն»): «Ստեղն» բառի հետ է կապվում և «ստեղի» երաժշտական եզրը՝ որպես «ծանր եղանակով գեղգեղեալ», ութ-ձայն հիմնական համակարգից «ճյուղավորված» երգեցողություն, առավել բարդ-զարդարուն ելևէջային համակարգ⁵:

Այս ելևէջները հոսում միախառնվում են երկթերթ բերանի շուրթերից ծորացող վարդի լեզվի քաղցրերգող տավղի մեջ.

Ատիճա՛ղ-պատիճա՛ղ ստղի-խտղի երգով.

Հոսէր գելեկան ընդ միմեանս.

Հանդարտիկ խաղայր, թիկնէթեկին ճեմէր:

Բերանն երկթերթի, վարդն ի շրթանցն կաթէր.

Լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն:

Խնկեալ ի կնդրկէ բուրուան՝ հրով աստուածայնով լցեալ,

Ջայն քաղցրանուագ, որ ի նմանէ հնչէր:

(«Մեղեղի Ծննդեան»⁶)

² Այս երկու բառն ունեն նույն նշանակությունը (երկուսն էլ վկայված են Ս. Գապամանյանի բառարանում. Պատիճաղը՝ որպես ոլորուն, ատիճաղը՝ նրան համարժեք տե՛ս Նոր բառգիրք հայերէն լեզուի), Գ. Ջահուկյանը նշում է. «ատիճաղ՝ փարսրված, ոլորուն: Հավանաբար «պատիճաղ»-ից՝ ատիճաղ-պատիճաղ կրկնության մեջ պ-ն կորցրած (Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010): Հ. Աճառյանը «պատիճաղը» համարում է «անստոյգ բառ», որ մեկ անգամ ունի Նարեկացին, «ՆԲՀԼ յիշում է «ատիճաղ» բառի հետ, բայց մոռանում է մեկնել: ՋԲ (Ջախջախեան, Բառգիրք Հայ-խոտղերեն, Վենետիկ, 1837 Ս. Թ.) մեկնում է «ոլորապատ, գալարապատ փարեալ, պատեղով պատեալ, պլլում, ոլլրտկած»: Նույնը հեղինակը նշում է «ատիճաղ»-ի հետ կապված (տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ա. հ., Երևան, 1971, Գ հ., Երևան, 1979):

³ Տե՛ս Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, նույնը՝ Ս. Գաբամանեան, Նոր բառգիրք հայերէն լեզուի:

⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Գ հ.:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, «Գանձտետր», ՄՀ, Ժ դար, ԺԲ հ., Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 715-716 (այսուհետև՝ ՄՀ ԺԲ), երկի անվանումն ու էջը: Այս տաղի մյուս տարբերակում նշված է «Ատիճաղ-պատիճաղ ստղի-խտղի հոուն». «հոուն» բառը Գ. Ջահուկյանը բացատրում է որպես «հղանցք» (տե՛ս Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան 2010): Հ. Աճառյանը նշում է, որ այս բառի առանձին գործածությունը չի հանդիպում, և բառը հիշատակվում է միայն Մ. Ավգերյանի բառարանում (Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865. տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Գ հ., Երևան, 1977): «Հտղի» բառը, բացի նշվածի, չի հանդիպում մեզ հայտնի ոչ մի այլ բառա-

Արդեն նյութական տավղի ձայնը Ղազարոսի Հարություն գանձում Նարեկացին արթնացնում է այլ բառակերտվածքներում: Այն պատկերանում է նախ որպես ահագանգ, որին ներհյուսվում է Տիրոջ կենդանատու ձայնը.

Սկզբնազարդ գոյի անայր երբեմն ի նոյն վայրի,
Վայր ճոխ ճեմէին տաւիղ, ամին բերելոյ աւրհաս.
Աւրհաս վաղաւէտ վճիռ, սէր համբերատար մահին...
Քորք քաջահաւատ յուսով ընդ առաջ ելանեն Փրկչին...
– Փրկի՛չ, Տէր Յիսուս Քրիստոս, եթէ աստ էիր դիպեալ,
եղբայրն իմ ո՛չ էր մեռեալ,
Ե՛կ և տե՛ս գաղէտ աղէտակոծ սրտի.
Սրտից ճանապարհ ձայն աղերսագոյ ողբոց...
Ձայն կենդանատուն ձայնէր. «Ղազար, եկ արտաքս»:

Այնուհետև «սքանչելահրաշ խմբի» հարություն ավետիսից հետո Քրիստոսի ճանապարհն ուղեկցող երգն ու տավղի ձայնը բնորոշվում են որպես «եռաստոիչ» և «բամբերգային»: Բամբը քնարի ամենահաստ, թավ ձայն արձակող լարն է⁷, եռաստոիչը՝ որպես եռերգություն («սոինչ»)՝ այստեղ ամենաընդհանուր երգ իմաստով⁸), փաստորեն Սուրբ Երրորդությանն ուղղված երգեցողու-

րանում: Բանաստեղծական տողն այս դեպքում կարող է կապվել նախորդի հետ՝ «Ձեռացն եղիշոյ կամարանն կապէր. Ատինաղ-պատինաղ, ստղի-հտղի հուռն»: Առաջին տարբերակը, սակայն, ավելի հավաստի է թվում:

⁷ «Բամբ՝ հաստ թելն ֆնարի խոշորաձայն և ձայն խոշոր» (ՆԲՀԼ): «խոշոր» բառի իմաստն է «ամոռորկ, կոշտ, անհարթ, խորթութոք, հաստ, խիստ» (նույն տեղում): «Բամբերգային» ամբողջական բառը ներկայացված է բառարանի հավելվածում՝ «բամբերգային. որ հանէ զբամբ կամ պամպ ձայն երգոց՝ ըստ հաստ աղեաց ֆնարի»: այստեղ հեղինակը տալիս է նաև նարեկացու Հարության տաղի մի տարբերակ՝ «Ձնար ֆնար տաւիղ՝ բամբ շարժողին ֆաղցրաձայնեալ» (տե՛ս ՆԲՀԼ. հ. Բ, Մնացորդք և յաւելուած [Մնացորդք նորագիտ բառից և վկայութեանց յաւուրս տպագրութեան ի վեր երևելոյ]): Չնայած սրան, այս բառը հայտնվում է Լ. Հովհաննիսյանի՝ Հայկազյան բառարանում չվկայված բառերի բառարանում՝ բնութագրվելով որպես «բամբ ձայնով» հնչողություն (տե՛ս, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր):

⁸ Այս բառը հանդիպում է Ս. Գապամանյանի բառարանում (նաև «եռաստիչ» ձևով)՝ որպես «երեմ ձայն հանող» (տե՛ս Նոր բառգիրք հայերէն լեզուի). նրան երկրորդում է Լ. Հովհաննիսյանը՝ «եռաձայն, երեմ ձայն հանող» (տե՛ս Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր): «Սոինչ» բառահոդվածի տակ «եռաստիչ», «եռաստիչ» բառերը վկայված են Հ. Անաոյանի «Հայերեն արմատական բառարան»-ում: Վերջինս հղում է «սոինչ» եզրի առաջնային աղբյուրներից մեկին (Գիոնիսիոս Քրակացու ֆեռակա-նության մեկնության հայերեն թարգմանությանը), որտեղ «սոինչ»-ն օգտագործվում է «մրմունջ» բառի հետ՝ սուկ «սվվոց» իմաստով (στυμμός, տե՛ս Ն. Ադունց, Հայերենագիտական ուսումնասիրություններ, Երկեր Գ, Երևան, 2008, էջ 6-7), այնուհետև Մագիստրոսի 40-րդ թղթին, որտեղ այն օգտագործված է «երգ, լիտի երգ» իմաստով, իսկ նարեկացու գանձում սրանից բարդված «եռաստիչ», «եռաստիչ» ձևերի հետ կապված տալիս է ընդհանուր «երգ» նշանակությունը՝ ըստ Երեմիա վարդապետի բառարանի. «մրմունջ և սոինչ ասի, զոր ձայնի նուագեն» (Բառգիրք Հայոց արարեալ ի Ս. Էջմիածին, Երեմիայ վարդապե-

թյունն է: Բուն նվագը հնչունավորվում է ձայնարձակման նմանակմամբ՝ նկարագրական «տավիղապճիո» բառով (որպես տավղանվագ, «քնարի թելերը զարնող»⁹). այստեղ շեշտված է ձայնի արտածման պահը՝ լարերին հավելուց առաջացող «աղմուկը»:

Այս կուտակումները ծնում են գունեղ, «շոշափելիության» աստիճանի հասցված ձայնապատկերի «մարմինը», որ առավել խտացնում, հարստացնում է բնության, ձևերի փթթումի տեսարանը. եռերգության բնորոշման համար նարեկացին ևս ընտրում է ոչ թե «սոխչ» կամ «սոխչ», այլ ավելի «թանձր»՝ «ստոխչ» ձևը («Տաւիղ եռաստուիչ, բամբերգայնոց տաւիղ, Տաւիղապճիո՛ երգ Գալիլեա զուարճից»):

Եվ այս վառ նվագը դրվագվում է հոգևոր և զգայական աշխարհների վերածնության, բույսերից ու ծաղիկներից սիրո բռնկումով ծիածանի ու արփիի երանգներին միախառնվող լուսե արահետների տեսարանում.

Խումբս երամ տղայոցն երփնաթերթից ծաղկանց,
Ոստինակոտոր արմաւենեաց նոճի...
Խուռն հագրէվարդին մանուշակաբեր բիւրին,
Բիւր սիրողայնոց ածէր, գոյն ծիածանին խառնեալ,
Խառն ի խուռն ահին, հոյլ ծերունեաց պերճից.
Տերև ձիթենեաց տարածանեն ընդ ոտիւք,
Ընդ ոտիւք մաքրողին մաքրինաճեմ հրարփին,
Տաւիղ եռաստուիչ, բամբերգայնոց տաւիղ,
Տաւիղապճիո՛ երգ Գալիլեա զուարճից.
Չուարճ գարնանաբոյս, Նոր Սիոնի ընծայ...»

(«Գանձ ի Յարութիւն Ղազարու», ՄՀ ԺԲ, էջ 641-642):

տի, տպ. ի յԱլիկոնայ, 1698, էջ 217. տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Գ հ., Երևան, 1979): «Սոխչ»-ը կա Հայկազյան բառարանում իր նախնական նշանակությամբ. «սոխչէ, սոխչ, սոխիմ, շոխիչ, շոնչիւն, շշիւն, սուլումն, հնչիւն իբր սրնգի, նախարակի և այլն» (նԲՀԼ): «Շոխչ» ձևով այս եզրը նարեկացին օգտագործում է և այլուր՝ բնորոշելով մասնավորապես Սուրբ Աստվածածնին նվիրված իր ներբողը. «...և արդ անա սկսցոմ զկնի գծագրութեան գումարահոլով պատմաբանութեանս խառնել դուն ինչ գրութիւնս համառատագիր դրուատից... սրբոյ Տիրուհոյն և Աստուածածնին, ընծայ մատուցեալ պտուղ հանութեան կամացն էութեան աննառն իսկութեան՝ **զշոխչ շնորհաց բերկրալիւր շրթանց**, ի հոռ անուշից» (**Գրիգոր Նարեկացի**, «Պատմութիւն Ապարանից Սուրբ Խաչին», ՄՀ ԺԲ, էջ 929):

⁹ Ըստ Ս. Գապամանյանի՝ «Բնարի թելեր» (տե՛ս Նոր բառգիրք հայերէն լեզուի), ըստ Լ. Հովհաննիսյանի՝ «տավղանվագ» (տե՛ս Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր): Հ. Աճառյանը ներկայացնում է «պփիո» արմատը՝ որպես «Բնարի թելերը զարնելը. արմատ առանձին, անգործածական, որից՝ պփնել. Բնարի թելերը զարնել». այնուհետև նույն իմաստով «տաւիղապճիո» ձևը՝ «Բնարի թելերը զարնող» (տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն Արմատական բառարան*, Դ հ.):

Առհասարակ հայ մատենագրության մեջ բազմիցս պատկերվում է բնության զարթոնքի, արթնացող բնության ու կենդանիների տարածած զարմանահրաշ երգեցիկ ձայների, սրան միացող հոգևոր օրհներգությունների տեսարանը: Սրա ամենագեղեցիկ օրինակներն են Սահակ Չորափորեցու «Արմավենյաց» և Թեոդորոս Քոթենավորի՝ Սուրբ Կույսին նվիրված ճառերը¹⁰: Ողջ տիեզերքը համակվում է տարատեսակ հնչողություններով, կյանքի բոլոր ձևերն այն արտածում են իրենց ոլորտներից, ու տարածվում է արարչության մեջ բազմաձայնությունը: Նման պատկերի հանդիպում ենք Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» «Ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում» տեղիի մեկնության մեջ (Երգ Բ. 12): Այստեղ հեղինակը գեղեցիկ համեմատություն է անում սրբասաց այրերի և գարնան երգեցիկ հավթերի միջև. ինչպես թռչուններն են տարածում իրենց ճուղղությունը, այնպես հոգևոր գարնանը տարածություններում սփռվում են հրեշտակային երգասացությունները. «Որպէս հաւք ի ժամ գարնայնոյն արարանան և տարածանին ընդ երկիր, նոյնպէս և ի գալ հոգևոր գարնայնոյս ցնծան սուրբքն, մանաւանդ առաքեալք և մարգարէք և վարդապետք և որք նոցա քարոզութեամբ հրեշտակային և հոգևոր երգովք արհնեն զԱստուած ի գիշերի և ի տուրնջեան: Այս է «Ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում»: Այգիք ծաղկեցին և ետուն զհոտ իւրեանց: Այգի՛ զհաւատացեալս անուանեաց, որք ծաղկեցան այլ և այլ և պէսպէս գունովք և պտղովք և հոտովք...»¹¹:

Առհասարակ Նարեկացու տաղերում հոգևոր գարնան, բույսերի փթթումի, գույների ճառագման երանգները մշտապես ուղեկցվում են երաժշտության ձայներանգներով: Հոգևոր երգեցողության՝ որպես հրեշտակային կեցության, տիեզերական լուսերգության ոլորտներին ձուլվելու պատկերները բազում են Նարեկացու քերթվածներում (տե՛ս ստորև):

Բնության ծավալումից, արարման զարմանալի էջքից կաթող կամ նրա մեջ զնգացող երաժշտության թրթռումն է հառնում Վարդավառի և Հարություն տաղերում: Այստեղ երաժշտության խորհրդապատկերը կապվում է ավելի խորունկ ոլորտների հետ: Այն ծնունդ է առնում «անոսր»-ոգեղեն տարածություններից, տիեզերական զարմանալի խորհրդապատկերներից ու բնության մեջ սրա անդրադարձումներից՝ արփիի վարսերից վառվող գոհար վարդից, երկնային ծովային ծաղկի ծավալումից մինչև ճյուղի վրա շողշողացող պտուղը, որին սնում է տերևը. այստեղ էլ հայտնվում է տավիղը. «Տերևն տաւիղ տուողին, Ձոր երգէր Դաւիթ հրաշալին»:

Գոհար վարդն վառ առեալ	Երփին երփնունակ ծաղկին,
Ի վեհից վարսիցն արփենից.	Շողշողէր պլտուղն ի ճղին:
Ի վեր ի վերայ վարսից	Քրքում վակասիր պտուղն,

¹⁰ «Երանելայն Թեոդորոսի միայնակեցի Գովեսա ի Սուրբ Աստուածածինն և ի միշտ Կոյսն Մարիամ», «Սաճակայ հայոց կաթողիկոսի ասացեալ Յարմաւենեացն օր, որ է ողբգովեան», տե՛ս Յովհաննու Իմաստասիրի Աւճնեցոյ Մատենագրութիւնք, Վեմեաիկ, 1833, 1953:

¹¹ Գրիգոր Նարեկացի, «Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի», ՄՀ ԺԲ, էջ 788:

Ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
Պղպշէր գոյնըն այն ծաղիկին.

Մնանէր խուռըն տերևով.
Տերև տաւիղ տուողին,
Զոր երգէր Դաւիթ հրաշալին:

Այս անվերջորեն ի վեր ծավալվող, վառվող, պղպշացող լուսածաղկի, տարածութիւններ «բացող» լուսահեղումից պատկերը տավրով անցնում է երկրային գույների դաշտը («Ի փունջ խուռներամ վարդից գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան, այս սաւա և տաւախ ծառերդ վարդագոյն ոստս արծակեցին»): Եվ ցողով կրկին վերընթաց թափառում է դեպի ամպ, երկինք, արեգակ, լուսին, սրա շուրջ աստղեր, և բարձրագոյն տիեզերական երաժշտական երկու խաչաձև շրջապտույտներ («գունդ-գունդ խաչաձև գնդակ, Յարինուած երկնից շրջանակ»):

Շուշանըն շողէր հովտին,
Շողշողէր դէմ արեգականն:
Այն հիւսիսային հաւէն
Հով հարեալ գոհար շուշանին.
Յայն հարաւային լեռնէն
Քաղցր աւդով ցաւէր շուշանին:
Շուշանըն շաղով լցեալ,

Շող շաղով և շար մարգարտով.
Ծաղկունքդ ամէն շաղ առին,
Շաղն՝ յամպէն, ամպն՝ յարեգանէն:
Աստղունքդ ամէն շուրջ առին
Դէմ լուսնին՝ գունդ-գունդ բոլորին.
Գունդ-գունդ խաչաձև գնդակ,
Յարինուած երկնից շրջանակ:

(«Տաղ Վարդավառին», ՄՀ ԺԲ, էջ 704-705):

Բնության, գույների փթթումի ու ծավալումի խորունկ սրտում վայրէջքի ու վերելքի հանգույցներում ղողանջում է զարմանալի տավիրը: Այն հնչում է խորը, արարչութիւն սրտի մեջ հեղվող, նրա սիրով բռնկված, ճառագող տարածութիւնների լուսե շավիղներում, բնութիւն ցոլանքների մեջ:

Ողջ տիեզերքն է համակված ձայնով, հեղեղված երկնային ներդաշնակութիւններով: Տիեզերական երաժշտութիւն անտիկ ուսմունքը շարագրված է Պլատոնի «Տիմեոս»-ում. տիեզերքի հոգին կառուցվել է երեք սկզբունք պարունակող խտանյութից, որ հավասարաչափ, ըստ երաժշտական համամասնութիւնների, բաժանվել ու կապակցվել է վերստին: Այնուհետև այն կիսվել է երկու մասի և վերածվել միմյանց խաչաձև հատող, իրար մեջ դրված երկու խաչաձև շրջանների (Plato *Tim.* 35b-36c): Այս երկու շրջանների շրջապտույտներից մեկում արծարծվում է երկնային երաժշտութիւնը, մյուսում՝ բոլոր տիեզերական գոյերի, նրա մեջ սահող իրերի անձայն խոսքը: Երկու խաչաձև գնդերի պատկերը հյուսվում է, ինչպես տեսանք, «Վարդավառի» տաղում («գունդ-գունդ խաչաձև գնդակ, Յարինուած երկնից շրջանակ»): Այնուհետև, այս մաքուր շրջանների հանգույցներում էլ, ըստ Պլատոնի, տեղադրվում են երկնային լուսատուները, որ արծարծում են արդեն երկնային երաժշտութիւնը: Նրանցից յուրաքանչյուրը, ըստ երկրագնդից իր հեռավորութիւն, արձակում է տիեզերական լարի մեջ իր հնչունը՝ մյուսների հետ կազմելով երկնային հեպտախորդը (Plato *Tim.* 37d-38e):

Նարեկացին սա վերակերտում է տավղի պատկերի մեջ, որ տարածվում է բոլորված աստղերի սիրտ շրջանի մեջ՝ դեպի վեր ու վար, տեղից տեղ. նախորդ տաղում այն սփռված էր բարձրագույն երկնային տարածություններում¹².

Մի՞թէ յայն ի վայր,
 Մի՞թէ յայն ի վայր վայրի
 Տաւիղ տարածեալ.
 Կամ սիրոյ շրջան,
 Կամ սիրոյ շրջան առեալ,
 Աստեղբք բոլորեալ»

(«Տաղ Յարութեան», ՄՀ ժԲ, էջ 651):

Սքանչացման այս շրջանաձև պտույտներում իրար կցվող, հանդարտ ծավալվող տարածությունների մեջ (եռատող տների մեջ կնկվող սկզբնամասերով արձագանքող տողերով) այս ձայնը զնգում է արևի շողքից, հյուսվում բնության լուսե ցանցին, միանում կրկնատարածությունների արձագանքին.

Աղերս ձայնաղի,
 Աղերս ձայնաղի առնէր
 Ի ծայրս արևու:
 Ի զարդ շաւիղից,
 Ի զարդ շաւիղից փայլեալ
 Ոսկեթել շողից:

(ՄՀ ժԲ, էջ 652)

«Քառասնօրյա գալստյան» տաղում Լոգոսի զարմանալի տիեզերական էջքի տեսարանում, որ հասնում է մինչև Քրիստոսին պատասպարած Մարիամի մարմին, այս յոթներգյա աղին կապվում է ավելի խորին հնչույթի՝ դեռևս տարածություններից վեր տիեզերական Բանի հետ.

Մինն էին ել ի նմինն ի յերկուց,	Չափ վայր ասպարէզ իջեալ ի տեղի
Մի երկակի հանգոյն էից զուարճ միշտ.	տարրայնոյ տարփ
Միշտ անբաւ այսր հրաշունակի բան,	Տարփ ի վեր արփային տարփ,
Բան խորհրդաբեր կթներգին աղի շափ,	Տարփ ի վայր նուսխայարէն ճէմ
	Ճէմ կուսինածոց ծաղիկ, վարդ փթթեալ ի
	գիրկս մար:

(«Տաղ քառասնարեայ Գալստեան Տեան», ՄՀ ժԲ, էջ 635¹³)

¹² Այս մասին տե՛ս Ա. Թամրազյան, «Թիվը՝ որպես տեսության և ստեղծագործության հիմք. Անտիկ ավանդույթի արտացոլումն ու վերակերպումները հայ միջնադարում», ԲՄ, 20, 2014 էջ 319-321:

¹³ Այս և հաջորդող գանձի վերլուծությունը նորպլատոնական գոյաբանական համակարգի ծիրում ներկայացրել է Հ. Թամրազյանը (տե՛ս նրա «Թվի փիլիսոփայությունը և արվեստի գոյաբանական տեսությունը Գրիգոր Նարեկացու երկերում», Գրիգոր Նարեկացին և նոր-

Այս անճառելի էջքը դարձյալ խորհրդավոր բառաշղթաներով պատկերանում է Ղազարոսի Հարություն գանձում. այս անգամ այն հանգրվանում-իջնում է մինչև ավանակի վրա բազմած Քրիստոսի երկրային արահետներ՝ անէից եղող է-ից դեպի տիպ, տիպից ներընդունակ ներ, ներընդունակ ներ-ից ներբողական նվաստատիպ կերպ, կերպից շուք, արդեն տարածության մեջ շուքից կետ և վերջապես կետից էլ մետ՝ կշիռ, այսինքն որոշակի, նյութական թանձրացում:

Արարչության այս գոտուց էլ՝ արդեն ծավալային-զանգվածային դաշտ մտնող մետ-կշից (նաև ութմի նշանակություն կարող է ունենալ), ծնունդ է առնում երաժշտությունը: Եվ տիեզերական ճամփորդությունից տեսարանը տեղափոխվում է է-ի երկրային ճանապարհորդության վայրեր, որն ուղեկցվում է երաժշտական գունեղ տոնախմբությունմբ, ձիթենու ոստերով, «ոստազվարճ» երգով և իր արքայաճեմ արահետներով ձուլվում երկնային ծիածանափայլ շավիղներին: Եվ այստեղ կրկին երաժշտությունը տարածվում է տիեզերական շնչառության՝ ել և էջքերի սրտում¹⁴.

*Կէտ կատարելոց կցորդակցեալ և էակացեալ մէտ*¹⁵.

Մէտ տաղերամին ձայնաստեղծեալ երբայական տղայք,

Տղայք գովասանական համանգամայն ձիթաստանեան ոստազուարճ երգ.

*Երգ ովսաննայաբեր, արքայաճեմ ոահ*¹⁶,

պլատոնականությունը, Երևան, 2004, էջ 124-128): Հեղինակը նշում է. «Մերագնագույն էությունը՝ մեկը, դառնում է երկուս, որը երկուս է, բխում է մեկից «զվարճությամբ», և այդ աստվածային բխման հետ է կապվում նաև «հրաշունակ բանի» խոսքի և աստվածային չափի խորհուրդը, որ կապված է թվերի աստվածային խորհրդի հետ և այդ տաղում առնչվում է նաև յոթ թվի «խորհրդաբեր» գործոցանը, որով ստեղծվում է երգը, մեղեդին» (նույն տեղում, էջ 124-125), «Աստված իր մարդեղությամբ իրար է կապում աստվածային աշխարհին ու բնությունը՝ հնչեցնելով աստվածային «զուարե, հրաշունակ» խոսքն ու մեղեդին: Եվ խորհրդավոր այդ կապը, վերընթաց և վայրընթաց այդ շարժումը, որով գոյավորվում և շարժվում են էությունների աշխարհին ու բնությունը՝ ենթարկված աստվածային չափին, կայանում է աստվածային էությունների վայրէջում դեպի տարածությունը («վայր ասպարեզ իջեալ ի տեղի»), որի միջոցով կազմավորվում է, տարրանում է բնությունը («տարրայնոյ տարփ»): Եվ այս ամենը կատարվում է աստվածային սիրով, տարփանքով, որով լի է ողջ բնությունը» (էջ 143-144):

¹⁴ Այս գանձի առաջին հատվածի հետ կապված («էն նորոյ նորին նոյն նիւթ... Մէտ տաղերամին ձայնաստեղծեալ երբայական տղայք») Հ. Թամրազյանը նշում է. «Ստեղծվում է վերընթաց և վայրընթաց շարժման մի կառույց, նյութեղեն և աննյութեղեն աշխարհների անվերջ մի շրջապտույտ... Այս հատվածում ևս Նարեկացին շեշտում է տաղի, մեղեդու աստվածային էությունը, որն այս դեպքում նրա գոյաբանական հանգույցն է. Գերագույն էության և նրանից բխած էությունների աշխարհի հետ, թվերի պես՝ իբրև արարչագործ գործության, կապված է չափի (մէտ) գաղափարը, որով «ձայնաստեղծվում» է տաղը... սա ևս արվեստի «գոյաբանական» տեսության մի նմուշ է՝ ներամփոփված Գրիգոր Նարեկացու՝ աստվածային արարչագործության շրջային «էակցված» տաղի մի ֆանի տողերում... Այս ամենի հետ, ահա, էակցված է արվեստի երկը՝ ներհյուսված խոսքից, պատկերից, մեղեդուց, որ ստեղծված է աստվածային չափով և միջանկյալ է աննյութեղեն և նյութեղեն աշխարհների միջև» (ընդգծումները՝ մեր. տե՛ս Հ. Թամրազյան, նույն տեղում, էջ 126-127):

¹⁵ «Մէտ. միջին կետ կշոռց, որ դոյզն իոբ միտէ, այսինքն հակի ի մի կողմն, չափ, կշիռ...» (նԲՀ):

¹⁶ «ձանապարհ, ուղի, արահետ» (նԲՀ):

Ռահ արքայաճեմ ձորձաձուկ ծիածանին գնացք,
Գնացք լուսաշաւիղ, յաւանակաւ եկք...
ժողովք երբայական հոյլք բիւրոց երգաբանեն փա՛ռք,
Փառը՛ք լուսատուին այժմ, յաւիտեա՛նս. Ամէն:

(«Տաղ ի Յարութիւն Դազարու», ՄՀ ժԲ, էջ 645-646):

Երաժշտութիւնը կշիռ-«մետ»-ի՝ ուիթմի, յոթնադի կենդանացած քնարի՛ որպէս Սուրբ Հոգու յոթ շնորհների հետ է կապվում նաև Սուրբ Հոգու Գալստյան տաղում («Հրով մաքրողին վեր առաքեմք իննաբար երգ ի նա մէտ՝ եւթնադի շնորհաց Հոգւոյն Սրբոյ...»)¹⁷: Այս երկու ատրիբուտներին միանում է և ինը խորհրդանշական թիվը, որ, կարծես թէ, վերաբերում է երաժշտական կշռին («Իննաբար երգ ի նա մէտ»):

Ըստ տոնի խորհրդի՝ Նարեկացին կերտում է աստվածային ներշնչանքի հորձանքներում ծավալվող հնչունային տարածութիւնը վերին ոլորտների հայրաշարժ բխման հանկարծահնչուն ձայնից, նրա հողմահունչ բոցով ներշնչվող-ծավալվող խառնիխուռն լեզուներից («բոցատիպ խուռնամանուած»), սրանց բյուրակերպ, ավետաքարոզ արձագանքներով լցվող օդից, որ պսակվում է այս հրով մաքրագործված, հրով մաքրագործողին առաքվող իննաշաւի, յոթնաշնորհ երգով: Այս հատվածը Գործք Առաքելոցի Հոգեգալստյանը նվիրված պատկերի հարասութիւնն է, երբ բոցեղեն լեզուներն իջնում են առաքյալների վրա, և նրանցից յուրաքանչյուրը Սուրբ Հոգու ներշնչանքով սկսում է խոսել տարբեր լեզուներով.

Յանկարծահնչեաց հայրաշարժ բղխումն
Հրահոսավտակ բոցաշաւիղ եռանդն, որոյ դրանդն ի յերկնից
Հողմահնչեաց բոց ի բոցատիպ խուռնամանուած լեզուացն:

Ի ձայն բիւրակերպ՝ աւգինատիպ¹⁸ լրումն,
Աւետաքարոզ՝ տրտմականաց դասուց,
Պետրոսեան երամ՝ հրաւիրողակ բարեաց:
Հրով մաքրողին վեր առաքեմք
Իննաբար երգ ի նա մէտ՝
Եւթնադի շնորհաց Հոգւոյն Սրբոյ:

(«Տաղ Սուրբ Հոգւոյն Գալստեան», ՄՀ ժԲ, էջ 674¹⁹):

¹⁷ Այս խորհրդանիշները ունիվերսալ են հայ միջնադարյան մատենագրության մեջ (այս մասին տե՛ս մեր ուսումնասիրությունը՝ «Մարդու կազմության տեսության վերախմաստավորումը հայ միջնադարյան մեկնողական ավանդույթի մեջ»՝ «Տասնադի սաղմոսարանի և յոթնադի ֆնարի խորհուրդը», Ա. Քամրազյան, էսսեներ և ուսումնասիրություններ, Երևան, 2013, էջ 244-254):

¹⁸ «Օդի նման» (տե՛ս օրինակ Ս. Գաբաւմանեան, Նոր բառգիրք հայերէն լեզուի):

¹⁹ Հմմտ. Գործք Բ. 2-6. «և եղև յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ հողմոյ. և ելից զամենայն տունն, յորում նստիին: և երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև ի հոյ,

Սուրբ Հոգու փառաբանությունից, նրա անուններից հետո քերթողը խնդրում է թույլ տալ իրեն երրորդությունը հղել իր մշտատև երգեցողությունը.

Կամեցող բարեաց, բարեգործեա՛ յիս՝ ի բազմամեղս
 Երգել երգենից պատիւ միշտ էականից՝ կամաւ քո
 և գիս վերանորոգեա ի փառս²⁰:

Տարածությունները լցնող բարբառների արձագանքների ծավալումը ևս նարեկացին ներկայացնում է զարմանալի խտություն միայն մի փոքր հատվածում բառաբարդումների, բառապատկերների հորձանքների մեջ («հանկարծահնչելը», «հողմահնչելը», «բյուրակերպ», «օղատիպ» ձայնի տարածելը՝ տարածությունները լցնելը [«աւղինատիպ լրումն»], հրի հորձանքներով տարածվող [«հրահոսավտակ»], բոցերի ճանապարհներով ընթացող [«բոցաշաւիղ»], խառնիխուռն հյուսված [«խուռնամանված»²¹] լեզուների բաժանվող աստվածային «եռանդը»): Սրանք ստեղծում են երկնքից երկիր ձգվող ներշնչանքի, հրեղեն հողմապտույտի մեջ բյուրավոր լեզուների բաժանման ու միաժամանակյա հնչողության պատկերը, որի ետևում բացվում է երկրից հառնող երգը:

Նույն խորհրդին նվիրված մեկ այլ տաղում ևս ներկայացվում է «մեծահնչուն» հողմին, հրեղեն լեզուներով նորոգվող երկրի աղմուկին միացող հրեշտակային պարերգությունը, սերովբեական սրբասացությունը.

Ձայնիւ ցնծութեամբ, քաղցրանուագ հնչմամբ,
 Քեզ եղանակեմք զսրովբէական բարբառն,
 Եռակի հիւսմամբ երեքանձնեա պետին
 Մի աստվածութեան և համագոյ բնութեան...
 Ձայն աւետարտ այսար հնչեաց Սիոն՝
 Ազգաց և ազանց յերուսաղէմ քաղաք:
 Լեզուաւք հրեղինաւք նոր նորոգի երկիր,
 Պարէ ցնծալով հրեշտակական երգովք...
 Ծագումն փառաց այսար յարփույն փայլեաց,
 Լեզուաւք հրեղինաւք մեծահնչիւն հողմովք...

(«Տաղ Քալստեան Սուրբ Հոգւոյն», ՄՀ ժԲ, էջ 741-742)

Սուրբ Հոգով ներշնչվող, հազարալեզու աղմուկով լցվող աշխարհի ծագերի, առաքյալների շուրթերից տիեզերածավալ քարոզների բխման, սրա մեջ հեղվող հրեշտակային պարերգությունների պատկերը հանդիպում է և այլուր²²:

և նստա իւրաբանչիւր ի վերայ նոցա: և լցան ամենեմեան Հոգւով Սրբով, և սկսան խաւսել յայլ լեզուս, որպէս և Հոգին տայր բարբառել նոցա»:

²⁰ Նույն տեղում:

²¹ «Խիտ իւրաւո հետ հիստած՝ խտնուած» (Ս. Գաբամանեան, Նոր բառգիրք հայերէն լեզուի):

²² «Սուրբ Հոգւոյ սաստիկ և ահաւոր հնչմամբ և որոտիւմ և շարժմամբ և հրաբուլիս և կայծակնատարափ ցոլացմամբ կիզանող լեզուացն բազմութեամբ բարժանեալ...», «Ի տաւն հանդիսի մեծի գովեստի և ի բանականցս դասուց խմբեալ նուագի, աստ աւրհնի կրկին

Հնչյունը ճեղքում է տիեզերքի սիրտը, տարածվում-ծավալվում բռնկվում արարչության ծագերում, հեղեղում նրա ամեն մասնիկը, աղմկում ամեն ծնունդի ու ծավալման մեջ և հնչում, կանչում նրա ամենախորունկ տեսարանների ետնախորշից:

Սուրբ Խաչին նվիրված տաղում այս կանչը Գաբրիելյան փողի պես ողորմիկ ձայն է արձակում Խաչից՝ հավքը կանչում է իր հարսնացուին՝ եկեղեցուն: Եվ այս ձայնը պարուրվում է իրեն համապատասխան միջավայրով. այն հնչում է նրբահյուս, «նոսր», լռությամբ, մաքուր թախիժով հագեցած տարածություններում, որ հեղինակը կերտում է ձայնարկումների կրկնություններով ընդգծելով նաև հեռավոր կանչի, հեռավոր դատարկ, բաց տարածության տպավորությունը («Աննըմանին ո՛վ նըման. Աննըմա՛ն») դարձերով, որ կրկնապատկվում են փոխի՝ հավքի պատասխանի մեջ²³).

Հաւիկ մի պայծառ կացեալ
Ի յայն խաչաթևին վերայ,
Թևս արծաթածալ ունէր
Արեգական շողոյն նման:
Աննըմանին ո՛վ նման.
Աննըմա՛ն:

Զձայնիկն ողորմիկ ածէր՝
Գաբրիէլեան փողոյն նըման,
Զաչերն արտասուաւք լընոյր՝
Առաւաւտուն ցաւղոյն նըման:
Աննըմանին ո՛վ նման.
Աննըմա՛ն:

(«Տաղ Սուրբ Խաչին», ՄՀ ԺԲ, էջ 735)

Այսպես Նարեկացու տաղերում, գանձերում ամենուրեք հոգու հայացքի առջև տեսիլների ծավալմանը զուգահեռ արթնանում է հեռավոր կամ ներսից բխող, իր ետևից տանող-վերացարկող կամ մոտեցող-ահագնացող, կրկնապատկվող կամ դատարկության մեջ նրբագիծ գծագրող ձայնը: Սովորաբար տեսիլքի «շնչավորումը»՝ սրա մեջ ձայնի արթնացումը, հնչեցումը Նարեկացու քերթվածներում նախապատրաստվում է իր համապատասխան «տարածություն»՝ բառաշերտերով, ութմերով, ներքին շղթայական դարձերով ազուցվող տողերով բացվող հնչունային միջավայրով, որոնց գունային-տարածական ծալքերում կարող է մարմին առնել համապատասխան ձայնը:

Երաժշտությունն այստեղ օժտվում է գոյաբանական ամենախոր իմաստներով և հնչողությունների ամենաբազմազան մարմնացումներով:

բաղձանաւ, քան ի դրախտն վայելչական» (Գրիգոր Նարեկացի, «Մատեն», ՀԵ. ԺԱ): «Յւրանասնէկի երկակի լեզուացն այլասեռն ձայնիցն ի մի տեսակ զուգաշուրթն խասակցութեան համահաւաքիչ, բարժանելոց յոճակի ազգաց՝ անասանէկի շողկապք սիրոյ, դասք և դասապետք վայելչականք պարուց...» (Գրիգոր Նարեկացի, «Ներքող ի սուրբ առաքեալսն», ՄՀ ԺԲ, էջ 984):

²³ Ես խաչ կանգընել կամիմ.
Աննըմա՛ն:
– Աննըման է,
Աննըմանին ո՛վ նըման:

– Ի խաչ ելանել կամիմ.
Աննըմա՛ն:
– Աննըման է.
Աննըմանին ո՛վ նման...
(նույն տեղում, էջ 737):

Ձայնի նամփոփությունը

Ձայնի գոյաբանական խորը նշանակությունն հետ կապված զարմանալի պատկեր է հառնում նաև Սողոմոնի տաճարի նկարագրության մեջ: Այստեղ մտքի հայացքի առաջ աստիճանական կանգնեցվում-նկարվում է տաճարը՝ որպես տիեզերքի սրտում զետեղվող, նրա հոգևոր խտանյուղը պարունակող սրբազան կատարելատիպ-տարածություն: Այն խորհրդանշում է ոգեղեն արարչագործությունը: Եվ սրան զուգահեռ հյուսվում է ձայնի վերաբանաստավորման խորհրդավոր ուղին: Արարման, ստեղծաբանության հիմքում ընկած է ձայնի ճանապարհորդությունը՝ իր քառասյին անտարանջատ աղմկային կուտակումներից մինչև կարգավորված-ռիթմավորված ոգեղենացած հնչյունը:

Ձուրքն ի վերուստ իջեալ առ Սողոմոն արքայն,
Շինէին գտաճարն, արկէին զքարն,
Քերէին զվէմըն արձանադրեալ փայտիցն²⁴:

Տաճարի հիմքը դնելիս ձայնը գրսևորվում է դեռևս իր անտարանջատ, տարերային, նախնական-քառասյին ուժի մեջ: Պատկերվում են մեծ, «աղմկային» տարածությունները, սրանց մեջ կոշտ նյութից ձևակերտումը՝ հող, երկիր, քարին հարվածներ մուրճով.

Դողացաւ երկիր, շարժեցան լերինք,
Հռչակեցան բարձունք, պատառեցան արձանք՝
Ի ձայնէ ուռնայգրղրղր²⁵ ճայթմանցն:

Սրան հաջորդում է տաճարի աստիճանական նկարակերտությունը՝ վերվար, իրար շարակցվող մասնիկներով կապերով, կամարներով. այս աստվածային ճարտարաշինությունը ծավալվում է ռիթմի կարգավոր բանաստեղծական հոսքի մեջ.

Ի վերնական սեմոցն՝ զվարսն հատանէին,
Ի ներքսական սեմոցն՝ զնուշն քանդակէին,
Ոսկէխաղաց առնէին զարծաթապատ բեկռան՝
Ի լրծակէ ի լրծացն,
Շողնանման շարեր զՍողոմոն ական, կամարակապ կապէր՝
Ի կողակէ ի կողակ²⁶.
Հաւ թիթղունս առնէր գայն մարգարտաշարերն...

²⁴ ՄՀ ԺԲ, էջ 731:

²⁵ Այս բառաբարդումով դարձյալ ներկայացված է ամբողջական բառապատկեր՝ գործիքի, նրա գործողության, արձակած ձայնի («ուռն») նշանակում է «մուրհ», նաև «ուրագ»):

²⁶ «Շենքի պահանգ, կապ, բարաուրների վերնախարիսխը, վերևի շեմքը, շինուածքի դուրս կարկառուած մասը» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ. Բ, Երևան, 1973): Նույնը նԲՀԷ «պահանգ, կապ շինուածոց և վերնախարիսխ բարաուրաց որպէս կզակ դրանն և ի դուրս ելեալ կողմն շինուածոյ»:

Եվ գույների ճառագումից հետո («զարդ զամենայն գունոցն, ըզշողն և զշուշանն, ըզյորդանն և զծիրանին, և զբեհեզն և ըզբոցագոյն կարմիրն») այստեղ՝ որպես տաճարի մասնիկներ, դրվագվում են ոգեղեն տիեզերքի բնակիչները զարմանք-հարցադրումով.

Մ'ւմ նրման են երկինքն, ո՞ւմ նրման են խորանքն,
Մ'ւմ նրման են մարդակն, ո՞ւմ նրման են պըսակքն,
Մ'ւմ նրման են սինքն, ո՞ւմ նրման են գերանքն,
Մ'ւմ նրման են խարիսխըն, կամ ո՞ւմ վայել է տաճարն:

Սրան ի պատասխան պատկերանում է ոգեղեն շնչավոր տաճարը մարդակ-մարգարեների, պսակ-առաքյալների, սյուն-մարտիրոսների, գերան-քերովբենների, խարիսխ-Սուրբ Կույսի, տաճար-Փրկչի ձևով, որոնց նկարագրությանն անցնում է քերթողը և նույն հանդարտ-զարմացական ութմի մեջ հարցնում այս բուլտրի՝ խորանների, կամարների, կողակների, վարագույրների, կանթեղների, զանգակների թիվը: Այս կրկնությունների մեջ ավելի դանդաղ, ասես կախարդված շարժումների մեջ է բացվում տաճարի պատկերը, նրա ներքին, ավելի ու ավելի ծավալվող տարածությունները, ընդգծվում է սրանց պայծառակերտությունը.

– Երկինքն՝ երկնից նրման, խորանքն՝ խորանաց նրման.
Մարդակըն՝ մարգարէից նրման, պըսակքն՝ առաքելոց նրման.
Սինքերն՝ մարտիրոսաց նրման, գերանքն՝ սերովբէից նրման.
Խարիսխն՝ Սրբոյ Կուսին, տաճարըս վայել է Փրկչին:

Խոյակքն՝ խոյանըման և սինքն՝ բեռնապինդ.
Խարիսխն է մարգարտահատ, հիմունքն է անընդհատ թաղմամբ.
Դուռն և մուտըն՝ գեղեցկատեսիլ.
Երկիրն ծիրանագոյն որպէս ծովու նրման:

Քա՞նի թիւ խորանացն, քա՞նի թիւ կամարացն,
Քա՞նի թիւ կողակացն, քանի՞ թիւ վարագուրացն...

Այսպես բարձրացվում-կցվում, գույն-իմաստ-թիվ են առնում տաճարի պատկերները հայեցողության առաջ: Եվ վերջում այս ծիսական փակ տարածությունը համակում է արդեն ոգեղենացված հնչյունը, և բոլորովին այլ ներդաշնակություններում է թնդում տաճարը.

Կարգեցան ըսպասաւորքն մեծի սրբոյ տաճարին.
Քարչէին զլարերն, ճոխային ճախարակքն,
Դղըրդայր տաճարն, ճիչէին ծիծեռնիքն,
Հընչէին զանգակքն, և ցնծայր Սողոմոն արքայն.
Երգըս ի բարձունս երգէին նուագելով, Ասէին՝ ալէլուիեա՛յ, ալէլուիեա՛յ:
(«Գովասանութիւն ի Սողոմոնի տաճարին», ՄՀ ԺԲ, էջ 731-732):

Ձայնը վերակերտվում, նրբանում է թուշնի, երաժշտական գործիքների գունեղանգներում (թուշնի ձայնը միջնադարյան մեկնողական համակարգում հրեշտակային լեզվի, իմաստային այլ ոլորտներ թափանցելու խորհուրդն ունի. սրա օրինակները բազում են մեկնություններում, տե՛ս նաև վերը):

Այսպես հանդարտահոս ութմերում քանդակվում է ոգեղեն անոթը, շարահարվում են միմյանց նրա առեղծվածային զարդանախշ-էությունները և ողողվում պայծառ ներդաշնակություններով: Կրկնվող ձայնարկումների դարձերում հյուսվում է աստիճանական հառնումի կախարդանքը՝ տաճարն իր գունային-հնչյունային ամբողջության մեջ. այն մարմնանում է բանաստեղծության ողջ կառուցում պատկերների թարթումի մեջ, կրկնությունների շղթաներում. և ձայնն անցնում է իր ընթացքը սրա ետնախորքում:

Նարեկացու տաղերը շնչում են, հորդում են ձայնային ալիքների, մեղեդիների արձագանքների մեջ, որ ներհյուսվում են գունային համակարգին: Գեղարվեստական մտահղացումն իրագործվում է և՛ ութմական-բառարմատային հյուսվածքներում, և՛ սրանց մեջ արտահայտվող իմաստներում. այս երկուսն ընթանում են զուգահեռ՝ դանդաղ բացելով լեզվաստեղծության իրենց առեղծվածային հանգույցներում պատում-պատկերները:

Նարեկացու «Մատեանը», տաղերը, ներբողները և մեկնությունները հառնում են որպես շարժուն-մշտաբուխ, կենդանի հնչեղ-ասուն անոթներ: Ըստ Հրաչյա Թամրազյանի՝ այստեղ բառ-պատկերներում խտացված գունախաղերը, «բառաշխարհը, գունաշխարհը՝ պոետիկայի տարրերի, առձայնույթի և բաղաձայնույթի բարձրարվեստ կիրառություն մեջ նաև մեղեդային հոսքեր են ձևավորում ու տարածում՝ հասցնելով կատարյալ արտահայտչականության»²⁷: Ձայնային հոսանքները թափառում են բոլոր ներսուզումների ու արտազեղումների մեջ՝ որպես ետին պլանում բացվող խորհրդապատկեր և ողջ բանաստեղծական հյուսվածքը պարուրող ոգեղեն միջավայր, ներքին, խորունկ ձայն և զուտ արտաքին հնչյունային տարածության ֆոն, և վերջապես քերթվածի հնչյունային-ութմական ընթացքը ծավալող սկիզբ կամ ահագնացող ութմական հորձանքներ ծնող տարերք, ինչպես «Մատեանում»:

Ձայնային մոգական շղարշները ներհոսել-քարացել են բանաստեղծական նկարեն ցանցի մեջ՝ ութմավորելով թարթող պատկերաշարերի ներդաշնակ հոսքերը, սրանք կերտելով իրենց շափերում ու դարձերում, հյուսելով պատկերների մեջն ու շուրջը:

Երաժշտությունն այստեղ հառնում է որպես խորապատկեր երկու աշխարհների հանգույցի կետում, բարձրագույն ոլորտներում և բնության պարունակներում: Եվ նրա հնչողությունները վերարթնացվում են ամենագունեղ ու բազմազան ձևերով:

²⁷ Տե՛ս նաև Ա. Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան գպրոցը, Գիրք Ա, էջ 269:

Մարդ հոգևոր քնար. Տիեզերական բազմաձայնություն (ներբողներ)

Նարեկացու քերթվածներում արտացոլված են և երաժշտության հետ կապվող այլ առեղծվածային խորհրդապատկերներ, որ բխում են քրիստոնեական հոգևոր կենցաղավարության, այստեղ բյուրեղացած երաժշտության մասին ուսմունքի խորը ակունքներից:

Ձայնի, երաժշտության ընկալումները քրիստոնեական ավանդույթում ձեռք են բերում իրենց ամենավերացարկված և միաժամանակ ամենակենդանի, ամենուր թրթռացող և երևակվող երանգները: Երաժշտությունը թափանցում է ամենուր՝ իմաստների ամենախորին ու անարտահայտելի, ամենաներքին ու հեռավոր շերտեր՝ դառնալով այլ հնչողություն: Այն նախ և առաջ կապվում է տիեզերական «Բանի» հետ, որ մարմին է առնում, արթնանում և մարդու, նրանից արտաձվող հոգևոր երգեցողության տիրույթներում:

Քրիստոնեական մեկնությունները համակված են այս զգացողությամբ. երաժշտությունը հորդում է ամենի մեջ ու ամենից, դուրս գալիս իր հնչողության սահմաններից, փարվում իր լուսություններին, քարացած-կախարդված իրերին, բազմաձայնում արարածների մեջ ու վերադառնում ինքն իրեն, ստեղծում այլ, արտաժամանակյա հանգույցներ: Եվ նրանով համակված հոգին բնակվում է այս ամենի սրտում: Այն դառնում է համակ լսողություն: Այսպես ձայնն իրերի մեջ հոգու, կենդանության, աստվածային կանչի խորհրդանիշն է՝ ավելի ու ավելի նուրբ ու անորսալի, ավելի ու ավելի ներքին, կախարդված դարձող փոխակերպումներով, հրեշտակային զեղումներից մինչ տիեզերքի խորունկ արվարձաններում իմաստների ու իրերի լուռ մերձեցումները²⁸: Այս սրբազան դաշտ մտնելու, օձվելու խորհուրդը պատկերվում է հոգու «երաժշտանալու», նոր հնչողություններով հագենալու այլաբանությամբ: Կենդանացող, երգեցիկ-ասացող հոգին՝ Աստծո քնարը, հնչում է Բանի մատների տակ, իր ընդերքներից դուրս բերում նրա իմաստները, թափանցում ոգեղեն պարերգությունների և նյութական «անբան» աշխարհների անձայն ակնարկների հավերժ շրջապտույտների դաշտ²⁹:

²⁸ Այս մասին տե՛ս մեր ուսումնասիրությունը, «Մարդու կազմության տեսության վերաբնասատվորումը հայ միջնադարյան մեկնողական ավանդույթի մեջ», էջ 159-306, 402-490:

²⁹ Քրիստոնեական ավանդույթում տարածված է արարչագործությամբ մեկ սփռված, տարատեսակ փոխակերպումներով նրա գոյության անսպառությունն ու ոգեղենությունը բարեհուշակող իրերի, տիեզերական լուսատուների տեսարանը. սրանք ասես իրենց կարգավոր մարմնում ցույց են տալիս իրենց հղացած արարչին, ազդարարում նրա մասին: Սա ծնում է արարչության խորունկ լուսության, Աստծո անիմանալի, անընդհատական ներկայության, լուս ծավալվող տիեզերքի բոլոր ծագերը լցնող, աղաղակող օրհներգության յուրօրինակ վերապրումը: Մարդն այստեղ դառնում է տիեզերական ունկնդիր: Հայ մատենագրության մեջ բազմիցս վերածարձվում է տիեզերական մունետիկների, տարածություններում հնչող անձայն, պայծառ բարոզի, տիեզերական գրեթե պատկերը, որ վերաբնացնում է նաև Գրիգոր Նարեկացին «Վասն ուղիղ հաւատոյ և մահուր վարուց առաքինութեան» մեկնության մեջ (տե՛ս Մատենագիրք հայոց, Ժ հ., Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 1052-1053. այսուհետև՝ ՄԶ Ժ):

իր «շնչավոր» գործիքով մարդն արտածում է նոր, հոգևոր երգեցողութիւնը: Այս համատեքստում մարդ-քնարը հակադրվում է հեթանոս նյութական-զգայական գործիքներին. համաքրիստոնեական այս խորհրդապատկերը³⁰ հայտնվում է Գրիգոր Նարեկացու քերթվածներում:

Այսպես՝ առաքյալները բնորոշվում են որպես «տառ ամանակաց ծննդոց մարդկութեան նուագք»³¹, խաչի ներքո ժողովվող եկեղեցին՝ հավատացյալները՝ սաղմոսների հոգետավիղ քնարահարուսթյան գործիքներ³² (ստորև), Աստծո խորհուրդների մեջ բնակվող հոգուց ծնունդ առնող ներքողը՝ «հրաշապատում դրուատականի», «հրեշտակական լեզուին դիւրերագ և հրանիւթական երգոց գործի, բարեբան բանի յաղթական ձայնի»³³: Սուրբ առաքյալների ներքողում Նարեկացին իր երգն անվանում է «տառի երգի պտղածին ճյուղ, Սուրբ Երրորդուսթյան անվան էության պսակող ու նորոգող», որ միանում է երկնային հարսանեկան պարին կցորդված առաքյալներին³⁴:

Այդ երգեցողությամբ հոգին բարձրանում է վերին սրբարանների ոլորտ, սերովբենների հետ միասին փող հնչեցնում երեքսրբյանը երգելով, դառնում Սուրբ Երրորդուսթյան հոգևոր հնչումների Քնար.

Զձոգիդ կենարար առ ի Հարէ բղխումն...
Ի սրբարանիդ վեր համբարձեալ սուրբ,
Ի ձայն փողոյ երգեմք քեզ գերգս՝
Ընդ սերովբէիցն, երեքսրբեանըս սուրբ:
Սուրբ Երրորդութեանդ արժանասցուք լինել
Քընար միշտ հոգևոր հնչմաց,
Յայժմուս և յաւէտ երգել զփառս յաւիտենից:

(«Տաղ Համբարձմանն Քրիստոսի Աստուծոյ», ՄՀ ԺԲ, էջ 665)

Սաղմոսերգութիւնը դառնում է անօգուտ, երբ հոգին անպտուղ է մնում տիեզերական այս բազմերգության մեջ (ինչպես պտղալից ճյուղ է այս հնչույթների մեջ նորոգվող երգը).

Քանզի զհա՛րդ ի յարդիւնս ինձ աւգտից սաղմոսն եկեսցէ,
Յորժամ անպտուղ ի բազմերգութենէն լինիցիմ՝
Ոչ նուագել Հոգւով, ըստ թելադրելոյն Պաւղոսի (հմմտ. Ա. Կորնթ. ԺԳ. 15):

(«Մատեան ողբերգութեան», Կ. Գ)

³⁰ Այս մասին տե՛ս մեր նշված աշխատությունը, էջ 216-217, 225-244 և այլուր:

³¹ **Գրիգոր Նարեկացի**, «Ներբող ի սուրբ առաքեալսն», ՄՀ ԺԲ, էջ 979:

³² Հմմտ. «Սաղմոսեաց երբեմն Դավիթ, սաղմոսեմք և մեք ընդ Դաւթայ այսօր. նա քնար ունելով յանշունչ ներդից, և եկեղեցի քնար ունի ի շնչավոր ներդից: Լեզում մեր աղիք քնարի են...» (Յովնան Ոսկեբերան, «Ի սաղմոսն ձևե»): տե՛ս *Յովհաննու Ոսկեբերանի ձառք*, Վեներիկ, 1861, էջ 113):

³³ **Գրիգոր Նարեկացի**, «Ներբող ի սուրբ Յակոբ Մծբնայ բան նուիրական գովեստի», ՄՀ ԺԲ, էջ 1002:

³⁴ **Գրիգոր Նարեկացի**, «Ներբող ի սուրբ առաքեալսն», ՄՀ ԺԲ, էջ 984:

եւ ընդէ՛ր է ինձ բնան, որ ի սաղմոսին,
 Այնպիսեաց բանիցն ի կիր արկանել...
 Հանապազ երգել իմովքս տաղաւք...
 Զիա՞րդ, որ ոչ միացուցի յիմոցս կրից կաթիլ մի պղտոր
 Ընդ յստակ արտաւար աղբերց երգողին...

(«Մատեան ողբերգութեան», ԿԱ. Ա)

Այստեղ, աշխարհների ներսում, նրանց համանվագների առեղծվածային-սրբազան հանգույցների մեջ, ուր թափանցում ու բնակություն է հաստատում հոգին իր քնարով, ցանկացած ներքին-արտաքին ձայն, միտք, լուռություն, դառնում է այդ համահնչույթի մի ցոլարձակումը, շյուղը, ներհյուսումը նրա սրտին: Այստեղ անսպառ բխումի ոլորտն է, ուր չի խամրում, չի լուռում փառաբանությունը. և քերթվածը դառնում է բացարձակ տարածություն:

Երգեցողությամբ տիեզերքի ամենանուրբ օրհներգության ոլորտները թափանցելու և անլուելի պարերգությանը կցվելու պատկերները բազմաթիվ են Նարեկացու ներբողներում:

Գրիգոր Նարեկացին բազմիցս նշում է իր ներբողների, ողբասացությունների՝ որպես կենդանի, հնչող ոգեղեն մարմինների մասին: Սրանք ամփոփում են բոլոր ողբերն ու հեծեծանքները, կանչերը, կանխաձայնություններն ու նորասացիկ երգերը, տիեզերական ներդաշնակություններին համաշունչ ձայնարկումներն ու նրբին միաձուլումները: Եվ մահկանացու մարդու փոխարեն միշտ աղաղակում են «անդադար հնչմամբ հեծութեան լալոյ առանց լուելոյ» («Մատեան», ԿԶ. Ա): Աստվածածնին նվիրված ներբողի ավարտին նշվում է այս «երգագրության» ոգեղեն մարմնի հարահնչողությունը. այն կենդանի էակ է, քանի որ սրա պես հյուսված է մարմնից ու հոգուց՝ ասացողի «փոխատրված» (Բ տարբ.՝ ընծայված) մարմնի թանաքով շարված գրից ու զգայական շնչի խոսքի պատկերից, որպեսզի այս երկուսի՝ մարմնի ու շնչի՝ մեկ կենդանի արարածի մեջ միախառնությունից հարաժամ փառավորվի Աստվածամայրը, ինչպես անեղծ պաշտոնյաների օրհնաբանությունից (Ա տարբ.՝ ինչպես անեղծական փառաբանողից)³⁵: Խաչի ներբողում նրա հետ կապված բոլոր խորհրդապատկերները հյուսվելուց հետո քերթողը նշում է. այս նվագներով է այսուհետ հավետ մաքրագործվելով և նվիրական պատարագ մատուցելով մարդը գովա-

³⁵ **Գրիգոր Նարեկացի**, «Ներբող ի Սուրբ Կոյսն», ՄՀ ԺԲ, էջ 962, 974: Այս ներբողն անվանում է «զբան երգութեան բերանոյ շրթանց մերումս լեզուի», «զերգագրութիւն սակաւամասնեայ մերս գովեստի անջնչական տառ», որով միշտ փառավորվելու է Աստվածամայրը և իր խնդրանքների միջոցով պարգևելու է մարդուն անդատապարտ համարձակություն Դատավորի առջանի առաջ, այնտեղ էլ արժանանացնելով իր երանությունը հանդիպելուն և խոսքի ընծաներով փառաբանելուն (ՄՀ ԺԲ, էջ 962-963):

բանեղու խաչը³⁶ . այսպիսի, այսքան «ընտրական», «բարեգարդ» բառերով է այն միշտ բարեբանվում³⁷ : Այս ուղորտներում միահյուսվում են ձայնը շնչավոր պատկերը, մարմին-գիրը, երգ-ոխիթներն ու սրանց ետևում բացվող իմաստները: Աստվածածնին նվիրված ներբողը հեղինակը «շուիչ», իսկ խաչի ներբողը «երգողաբարբառ բարեբանութիւն» է անվանում:

Հնչողության ամենախտորին ու մաքուր տիրույթներ թափանցած անվերջանալի երգեցողությունը հակադրվում է, ինչպես նշեցինք, «նյութական» երաժշտությանը: Այն արտածվում է միայն շնչավոր գործիքով՝ մարդկային ձայնով և միաձուլվում հրեշտակների ձայներին: Այս համատեքստում Նարեկացին կերտում է բառեր, նոր արտահայտություններ, ինչպես «հոգիատաւիղ քնարահարություն»³⁸ , «վարդի լեզվի քաղցրերգացող տավիղ», «հոգեշարժ քնար»³⁹ :

Այստեղ կարևոր են երեք ատրիբուտներ՝ երգեցողության «աննյութ», այնուհետև անսպառ՝ հարածամ լինելը, և մաքրագործված-երաժշտացած, մարմնի կենդանի անդամներով սրա իրագործումը: Սրանց համար Գրիգոր Նարեկացին ունի բազմաթիվ գեղեցիկ ձևակերպումներ՝ երգեցողություն «անթարթ բերանով», «անարգել շուրթերով», «աննիրհելի փառաբանություն», հրանյութ ազգի «անհանգչելի նվազ ներբողից», ներշնչանքի չպակասող հորձանքը, այն բխեցնող գործիքի մաքրագործումը պատկերանում է «լի բերան», «բերկրալի բերան», «ընտիր շուրթեր», «մաքուր լեզու», «ըղձաձայնություն», «ձայն մաքուր ընծայի» և այլ արտահայտություններով:

Ամբողջովին ոգեղեն երգեցողության պատկերներով ու սրանց պայծառ հնչույթներով են թափանցված Նարեկացու ներբողները: Սուրբ խաչին նվիրված քերթվածում ևս հակադրվում են **անկենդան** երաժշտությունը և **բանավոր մարդու** պատարագ-փառատրությունը, որ տեսել է **Կենդանի փայտը**, այլ ոչ **անշունչ տապանակը** կամ տախտակի վրա գրված օրենքը: Այս ճառի փառաբանությունը խարսխված է նսայու՝ «երկինքն իմ աթոռն է և երկիրը՝ ոտքերի

³⁶ Նույն տեղում, Ա. տարբ., էջ 940: Նմանատիպ ձևակերպում է Նարեկացին տալիս Մարիամի բնորոշումներից հետո. «Արդ, յայսֆանս և ի սոյնպիսիս, և յև ընտրելական երգս բանահիսից գերահոչակեալ ես» («Ներբող ի Սուրբ Կոյսն», ՄՀ ժԲ, էջ 959):

³⁷ Նույն տեղում:

³⁸ **Գրիգոր Նարեկացի**, «Ճառ լուսոյ խաչի», ՄՀ ժԲ, էջ 939:

³⁹ **Գրիգոր Նարեկացի** , «Ներբող ի Սուրբ Կոյսն», ՄՀ ժԲ, էջ 958: Բազմաթիվ են նման օրինակներն առհասարակ հայ մատենագրության մեջ. Քեղդորոս Քոթենավորն, օրինակ, այս համատեքստում օգտագործում է «հոգիաներկ և **մարմնամբար**» երգող, հին ժամանակներից ձայնող Դավթի պատկերը (տե՛ս **Քեղդորոս Քոթենավոր**, «Ներբողեան ի Սուրբ խաչն աստուածընկալ և ի տնօրէնութիւն Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի», *Յովհաննու Իմաստասիրի Աւանգետյ Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1833, էջ 159): Ըստ ՆԲՀԼ-ի այս բառը վկայված է դեռևս Ագաթանգեղոսի երկում. «Ըստ սաղմոսի **մարմնամբար** դաւթեան երգոցն» կապված դարձյալ Դավթի սաղմոսների հետ:

պատվանդանը» (Ես. 49. 1) խոսքերի վրա: Սրանք Աստծուն օթևանելու, պարունակելու տեսարանով առավել մոտ են տիեզերական խաչի խորհրդին և «հոգելից լեզվով», «բանի բխումով» ամփոփում են Քրիստոսի՝ երկնային էություն, աստվածային էջքի, խաչին բազմելու կանխատեսությունը⁴⁰: Երաժշտության հետ կապվող խորհրդաբանության երկրորդ հանգույցը բխում է այս ասույթից: Խաչի պատկերի միջոցով իրար են կցվում, միմյանց ներհյուսվում բոլոր աշխարհները, նրանք պարունակում են մարդեղացած Տիրոջն ու պարունակվում նրանում և այս սերտաճում-անդրադարձումներում ծավալում իրական զարմանալի բազմաձայնությունը: Խաչը դառնում է տիեզերքի հանգույցը, կիզակետը, որից բխում է բազմաշերտ ու բազմանիստ համաձայնույթը:

Այս ճառին ներհյուսված են հնչողության, երաժշտության՝ քրիստոնեական փորձառության մեջ հաստատված բոլոր պատկերները՝ սկսած անկենդան երաժշտական գործիքներից, բնության անձայն փառաբանությունից, վերջացրած երկնային փառաբանությամբ և նոր ոգեղեն երգեցողությամբ: Գրիգոր Նարեկացին նշում է՝ եթե Եսային այս խոսքերով «ճշգրտաբանեց» և «երգագրեց» բոլոր էությունները պարունակողի՝ այս էությունների մեջ պարունակվելը («զմենողն էից պարունակեալ յէակաց երգագրեաց»), այս սովերական նախատիպը («զուրուական տեսակ»), ապա որքա՛ն առավել մենք ենք կարոտ հայտնաբանական խոսքի զորությանը, խաչի խորհրդի զորության պայծառությունը համբավելուն⁴¹:

Միտնում միայն ապագայի երևույթների ցանկությունն էր տոնվում «ամենապատկառ պատվասիրությամբ» անզգայական տավղով («տաւղաց երգարանաւքն հնչէր և զգուշապէս, սրտի սարսափմամբ միշտ երկրպագէր»): Եվ ըստ այլ տեսություն՝ մարգարեական (խոսքը սաղմոսասաց Դավթի մասին է) ակնարկի, անտառի ծառերն են հրճվանքով ցնծում ճանաչելով ստեղծողի հայտնությունը (ակնարկում է Սաղ. 12-13. «Դաշտն ուրախանայ և ամենն, որ նորանում կայ, թող ցնծան անտառի ամեն ծառերը Տիրոջ առաջին, որ նա գալիս է...»⁴²): Եվ եթե այս մեծ արարչության փոքր արարածները, ընդունելով սովերական Գրի հրամանը, վայելչական և ուրախալից խնդությամբ Տնկողի և Ստեղծողի կենսաբեր գալուստն են նվազում «բազմադրվատ» ձայնով, անբան բերանի ձայնի բարբառով, անհայտ, անտիպ տեսակի ձեռքերում և [նրանից] անմասն բնության ոտքերում (ակնարկում է «և երկիրն իմ ոտքի պատվանդանն է» հատվածը՝ Ես. 49. 1), ապա որքան առավել պետք է ներբողվի խաչի

⁴⁰ «Ապա ուրեմն ի հոգելիցն լեզուէ բղխումն կայրակաց բանից վտակաց՝ բազմական էին դաւանեաց գերկին, և հանգչարան ոտից պատուանդան՝ զհրաշագան խաչս փրկական, անմահն իսկոսբեան յաղատոս մարմնոյն խառնմամբ եղեալ արարան» (Գրիգոր Նարեկացի, «Ներբող ի Սուրբ Խաչն», ՄՀ ԺԲ, էջ 942):

⁴¹ Նույն տեղում:

⁴² Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանների, Էջմիածին, 1994:

հայտնությունը, մեծ նշանը... Ինչպիսի ըղձական ձայնի նվեր պետք է ընձեռի Աստծո պատկերն ունեցող բանական մարդը՝ այսքան շնորհների հաղորդ դառնալով: Քանի որ երգաբանության բխման հորինվածքի, շարադրանքի հոլովումը («հոլովումն յաղուածոյ բղխման երգաբանութեանս») կարծրանյութ վեմի քարից քերածին չի վերաբերում⁴³:

Խաչին, ըստ մարդկային կարողության, նվիրաբերվում է քաղցրաբարբառ օրհնության խոսքերի մաքուր ընծայի ձայնը («ձանեացուք ձայն մաքուր ընծայից քաղցրաբարբառ արհնութեամբ»⁴⁴):

Այսպես Բանի ստվերն օրհնաբանող անբան գործիքները վերափոխվում են Բանին տեսած բանական, շնչավոր երաժշտական գործիքի օրհներգության: Մյուս շեշտադրումը՝ խաչի միջոցով սերտաճած աշխարհների՝ միմյանց մեջ բազմաձայնության ծավալումը արտահայտված է հաջորդող շարադրանքում:

Բյուր հազարավոր բոցեղեն զվարթունքներին գումարվում են խաչով դաստիարակված, կիրթ կցորդություններ իրեն հաղորդ լինելուն արժանացած շառավիղները. մարդասերմ բույսերից սերող զավակի տոհմը, բանական բազմաթիվ բնությունները միախումբ դասակցություններ ու երգակցություններ, ընծայվում են իր կողմից՝ իր միջոցով իրեն. «Բարեբանեա՛լ ես, կենդանակի՛ր աստուածեան նշան փայտիդ փրկութեան, որ ի հազարաւորս բիւրոց բոցեղէն զուարթնոց զզարմ զաւակի մարդկասերմ բուսոց բանական բազմաթիւ բնութեանս քեւ դաստիարակեալ՝ ի կիրթ կցորդութիւն քում հաղորդութեան, խրախոյս հանդիսի միախումբ դասակցութեամբ, միապար երգակցութեամբ ընծայեցուցանես ի քեզ բազմելոյդ մաքուր արհնաբանս»⁴⁵:

Այսպես Բանի տիրույթներում ծավալվում են նրան պարունակող ու նրա մեջ պարունակվող, նրանով իրար մեջ դրվազված ու գաղտնագրված հրեշտակային, բանական ու անբանական աշխարհների ձայները. խաչը կատարելապես պարունակելի է դարձնում անբան աշխարհների մեջ հայտնված Բանը:

Այնուհետև նարեկացին անդրադառնում է խաչի փառաբանության նախօրինակներին՝ Սողոմոն իմաստունի «երգագիր տառերով», Եզեկիելի տեսիլի Աստծո պատվանդանի «գեղեցիկ երգաբանություններ», նույնը դավանող, այս ամենը պսակող սերովբեների «շրջապարություններ պաշտպանված» ոլորտների եռակի սրբասացություններ⁴⁶:

Եվս մեկ անգամ հայտնվում է ոգեղենացած, ներդաշնակ իմաստներով թափանցված մարդու՝ որպես կենդանի գործիքի պատկերը՝ խաչի զորություններ եկեղեցու մեջ հավաքված բազմալեզու անդամները համեմատվում են գործիքների հետ, որ մշտապես սաղմոսների իմաստներում արձակվում են իրենց հոգե-

⁴³ Նույն տեղում, էջ 943:

⁴⁴ Նույն տեղում, էջ 946-947:

⁴⁵ Նույն տեղում, էջ 947:

⁴⁶ Նույն տեղում, էջ 947, հմմտ. Ա. տարբ., էջ 935:

տավիղ նվագածուկները: Այսպես նշում է խաչն առաջնորդում է ոչ անբանական փարախները, այլ խոհականություն ունեցող մարդկային հոտը՝ որպես սաղմոսների երգերի հոգիատավիղ քնարահարությունների գործիքների («գործի հնչման սաղմոսաց հոգիատավիղ քնարահարություն»⁴⁷): Նրան փառաբանում են բարեզարդ, ընտրական բառերով՝ մաքրագործվելով հավետ այս նվագներով և պատարագ մատուցելով⁴⁸:

Ներբողը պսակվում է փառաբանության տեսարանով, քերթողը խնդրում է թույլ տալ միանալ ու երգակցել հրեշտակների երկյուղած («զգուշական») աննիրհելի փառաբանությանը, պարակցել նրանց հետ, բարետրական երգաբանութեամբ փառավորել Ջորացուցչին խաչի վրա, խաչի հետ, առ նա, խաչով միանալով նրան՝ անվախճան ձայնի փառավորմամբ, ներբողելով, միշտ հիշատակելով Քրիստոսին չոր և չոգու հետ, երկրպագելի Սուրբ Երրորդությունը, «որում անսահման գովութիւն երգոց...»⁴⁹:

Այսպես այս ճառի աստիճանական ընթացքում կենդանացող բարբառին միահյուսվում են մյուս բոլոր՝ «վաղաբարբառ» մարգարեական երգերը⁵⁰, բնության ձայները՝ դառնալով միական ոգեղեն մարմին և կենդանացվում կենդանի էություն հայեցողության մեջ:

Նույն մոդելը կիրառված է Մարիամին նվիրված ներբողում: Այստեղ ևս տիեզերական փառաբանության պատկերում հայտնվում է բազմաձայնության ավելի խորին ընկալումը. մարդեղացմամբ ձայն՝ բանականություն են առնում արարչության բոլոր շերտերը, ընդգրկվում են տիեզերական բոլոր ծավալները և հնչում ծայրեծայր՝ Բանին հաղորդ դարձած բոլոր մասնիկներով՝ նրա մեջ ծավալվելով, նրան կրկնորդելով: Այսպես, ըստ Նարեկացու՝ եթե երկինքը պատմում է Աստծո փառքը⁵¹ և հուղաչի ժողովուրդը տեսնում էր անհողի փառքն ըստ «գիմառության» (այսինքն՝ երկինքը «պատմում է») փոխաբերաբար՝ մարդու միջոցով Ա. Թ.), ապա անձնավոր Բանի մարմին առնելով, պետք է տիրակիր երկիրն արժանի ըզձականություն մը հնչեցնի բերկրանքի բարբառումները՝ լծակցելով իրեն վերին երկինքը (Բ տարբ.՝ հնչեցնի «հոյժ ճահողպակ») ներդաշնակ, համահունչ⁵²): Այս պատճառով հոգևոր հրճվանքով խրախուսվելով

⁴⁷ Նույն տեղում, էջ 951:

⁴⁸ Նույն տեղում, Ա տարբ., էջ 940:

⁴⁹ Նույն տեղում, էջ 952, հմմտ. Ա տարբ., էջ 940-941:

⁵⁰ Նույն տեղում, էջ 951:

⁵¹ Ա տարբերակում նշում է՝ «Երկինքը պատմում է **Բնակվողի** արդարության մասին» («Ներբող ի Սուրբ Կոյսն», ՄՇ ժԲ, էջ 953):

⁵² Սուրբ Կոյսին, ինչպես խաչին նվիրված ներբողները պահպանվել են երկուական տարբերակով (տե՛ս ՄՇ ժԲ, **Գրիգոր Նարեկացի**, «Առընթեր գրութիւն սակաւ սոփեստիս յարկացեալ հիւփի գներբողենիս ճատ լուսոյ խաչի», էջ 930-941, Ներբող ի Սուրբ խաչն [Բ տարբ.], էջ 942-952, «Ներբող ի Սուրբ Կոյսն», էջ 953-964, «Ներբող ի Սուրբ Կոյսն» [Բ տարբ.], էջ 965-975):

երկու դասից մեկ խումբ [կազմելով] իրագործում են այս տոնը եղականների զգայական սեռը և հրեշտակների անմարմին դասը, «Ընդ որս և մեք կցորդք... պարեմք հոգեպէս տարփմամբ՝ երգելով քեզ ընդ երկնայնոցդ ձայն սրբասաց»⁵³ :

Այս ճառը բացվում է երկնայինների տավղահարութեամբ՝ բանակարգ և բյուրաբեղուն գովեստով (ստորև): Եվ դարձյալ, ինչպես խաչի ներբողում, Նարեկացին նշում է. եթե այս հոգիանյութ, արագընթաց, վերնաթռիչ, անեղծական փառաբանիչները՝ որպես երկրորդ լույսի նշույլներ, իրենց կայանով ստորայիններից ավելի վեհ լինելով, «հույժ անտեսաբար սպասավորութեամբ» են բարձրյալ Բանի բնակութեանը (Մարիամին) դիմում բարեզարդ բերկրանքով, ընդարձակ անջրպետ ունենալով նրա ու իրենց միջև, ապա ո՞ր երգը կարող է ըստ արժանվույն, համապատասխան գովաբանութեամբ («ո՞ր երգ պատկանագիր ի ճահ գովեստից») ընտանի հարազատութեամբ պատմել Անտեսի մարմնարանի ու մեծի ճեմարանի (այլ թվարկումներ) այսքան երանութունների սկզբնապատճառի մասին⁵⁴: Պետք է երգել ողջ գորութեամբ. «և արդ, երգեսցէ բանս ընծայութիւն արհնառաք փառաց տուչութեան ի բաղձանաց փափագման սրտի, որքան զարեսցէ»:

Առհասարակ այս ճառն իր ուրիշներում խոյանում է որպես ճարտարապետական կառույց՝ անվերջ թվարկումների, հարակրկնութունների, նույն շարահյուսական կառույցներում հանդիպողում-համադրում-հակադրումների զանգվածներում: Սրանք առավել ինտենսիվ են դառնում ճառի ավարտին՝ վերածվելով ուրիշական կուտակումների: Այսպես բնագիրը վերածում է կենդանի բարբառի, երգի, աղոթասացութեան, որ միախառնել է ներբողական արհեստահյուսակ առասացութունը, փոխատրաբար այլաբանութեանը. այս առումով այս և խաչին նվիրված ներբողների մասին Նարեկացին խոսում է դեռ Ապարանքի Ս. խաչի պատմության մեջ. «...սրբոյ Տիրուհուն և Աստուածածնին, ընծայ մատուցեալ պտուղ հաճութեան... զշուրջ շնորհաց բերկրալիր շրթանց, ի հոտ անուշից... բարձրաձայնեսցուք երգողաբարբառ բարեբանութիւնս այս խաչանիշ նորոգ նշանի նորոգանուագ նկարս բանի, ի կարգ գովեստի նորոգ ներբողի»⁵⁵: Եվ այս ուրիշները կցվում են տիեզերական երգասացութունների նրբին ոգեղեն ներշնչանքի հանգույցներին, որոնցով հագեցած է ներբողի ողջ հյուսվածքը: Օրհնաբանութունները ներխուժում են ուրիշավորված կառույցների միակերպ-կրկնվող հանգույցների մեջ, նրանց ավարտին, ձուլում, ընդհատում դրանք իրենց տեսիլներում՝ դուրս լինելով այդ ուրիշներից (ստորև դրանք ընդծված են թավ տառատեսակով):

⁵³ **Գրիգոր Նարեկացի**, «Ներբող ի Սուրբ Կոյսն», ՄՀ ժԲ, էջ 966: Հմմտ. Ա. տարբ. «Առդ, պարեսցում հոգեպէս տարփմամբ, բանակբ բնակութեան խմբի երկնային առագաստին. Զհոգևոր հարսանեացն զիղձս քեզ, ամենասուրբ և արարչընկալ Տիրուհի և Աստուածածին» (ՄՀ ժԲ, էջ 953-954):

⁵⁴ Նույն տեղում, էջ 953, 965:

⁵⁵ **Գրիգոր Նարեկացի**, «Պատմութիւն Ապարանից Ս. խաչին», ՄՀ ժԲ, էջ 929:

Ռիթմավորված հոսքը ստեղծվում է պարբերության նույն սկզբնաձև-վերջնա-ձևերով («Խնդա և ուրախ լեր ձայնի երգոցս արհնութեան քունդ երանութեան բանագովութեան, խրախացիր և ձայնի ողջունի Գաբրիելեան ատետացն»⁵⁶ ... Սուրբ Աստուածածին: Ներբողեա՛լ ես... սուրբ Աստուածամայր: Բերահամբաւեա՛լ ես... սուրբ Աստուածածին: Երանեա՛լ ես... սուրբ Աստուածամայր»⁵⁷), կամ նույն կոչով (հաշորդող «Խրախացի՛ր»-ների շարքը. «Խրախացիր յաւէտ հրճուանաւք», «Խրախացիր համայն տարփանաւք», «Խրախացիր անբաւ բերկրանաւք», «Խրախացիր յողջոյն նախընծայ երկնային...»): Էջ 967-968), որ ավարտվում է օրհնաբանություններով. «Վասն այսորիկ... հրեշտակացն պարբ պաշտպանեալ, ընդ առաքելոցն գումար դասակցեալ, զմիայն արժանիդ պատուեալ գովէին, Սուրբ Աստուածածին», «Վասն որոյ շնորհ ունելով քեզ արհնեալք... Երանեմք քեզ, Սուրբ Աստուածածին», «Ուստի... նորոգ հաստատեալ, գոհաբանեմք գուրբ Տիրամայրդ», «Վասն որոյ բացեալ զբերան պառաւոյն ամլածին որդոյն, արհնէր զարհնեալդ ի կանայս, Սուրբ Աստուածածին: Նա և դու լցեր... բարբառովն գոհութեան... յարինակ հանրական եկեղեցոյ, որ է քո միշտ արհնաբան. Զի երանեն... քեզ ամենայն ազգք... ի բերկրեալ լեզուս շրթանց զուարթնոց միշտ բարեբանեալ...» (էջ 968):

Հաշորդող շարադրանքում ավելի են խտանում ռիթմական կառույցները՝ ձգելով իրենց ցանցն արդեն նախադասությունների մեջ. և գրեթե բոլորն ավարտվում են երգաբանության տեսարանով: Սրանք հյուսվում են հարակրկնություններից. «Վասն զի ոչ ընդ քեզ միայն, այլ եւ ի քեզ, ոչ միայն փարեցաւ բազմեալ, այլ եւ բնակեցաւ տաղաւարեալ, ոչ միայն միացաւ ի զանգուած մարմնոյ, այլ եւ մարդացաւ... ի քէն սկսելոյ, ոչ միայն զաւղեցաւ...այլ եւ ընկղմեցաւ...»⁵⁸ Յաղագս որոյ եւ մեք երկրաւորս գմատակարարդ եւ զսպասատր մեծս խորհրդոյ երանեմք ըղձական երգաւ... որ զամենայնի եւ ամենեցուն պսակեալն հոգեշունչ երգաւ՝ ի քեզ ընկալար, ոչ ի մասնէ, այլ ի լրութենէ, ոչ հատմամբ, այլ հաստատութեամբ, ոչ բաժանաբար, այլ ամբողջապէս... Քանզի ... զերկիր եւ զերկին տարար յարգանդի. եւ ոչ միայն ի տես... այլ եւ շաւղափմամբ, ոչ միայն ողջունեալ, այլ եւ ըմբռնեալ...» (էջ 968-969): Այս ռիթմերը վերակերտվում են ձայնարկումների, հանգավորված ավարտների բանաստեղծական ներշնչված պատկերներում. «ՌՎ շնորհաշուք գեղով... փաղփաղեալ, ՌՎ համեստ հեզութեամբ... պարապողեցեալ, ՌՎ զարդուք երկնայնովք... ընկալեալ... Արհնեալդ միայն ի կանայս՝ շրթամբք քանայնոցն մար մարգարէին Յովհաննու, փառաւոր եւ ի դասուց համազարմ նմանացեղիցս ցանկալիք երգաւ ներբողականս տաղաւք» (էջ 969): Ռիթմը պարբերաբար դառնում է ավելի տարածուն կամ ինտենսիվ կարճացող ու ծավալվող «անդամների» հաշվին. այսպես այն ինտենսիվանում է նույն սկզբնաձևերով. «Ի մարդկային զարմէ հրեշտակ երկնային, յեղծականաց սեռից

⁵⁶ Հմմտ. Ա. տարբ. «Խնդա և ուրախ լեր ձայնի երգութեան պատրաստաւասցս բան գովութեան...» («Ներբող ի Սուրբ Կոյսն», ՄՀ ժԲ, էջ 954):

⁵⁷ Գրիգոր Նարեկացի, «Ներբող ի Սուրբ Կոյսն», ՄՀ ժԲ, էջ 966-967: Այս հատվածում այսուհետև էջը տրվում է ներբողի բնագրից հետո:

⁵⁸ Այստեղ և հաշորդող օրինակներում չեն բերվում բոլոր նույնատիպ թվարկումները, որ հաճախ մեծ կառույցներ են կազմում:

անմահ սերովբէ, ի հողային նիւթոյ ոսկի Սոփերայ, ի ծովային բերմանց... Սակս որոյ իբր զնիւթ գործաւնեայ այսֆանեայ բարեաց արհնեայ ես դու ի կանայս» (էջ 970), այնուհետեւ հյուսվում է նույն հանգաձևերով, որ հանդես են գալիս փոխնիփոխ և միմյանց մէջ՝ «Աննիհելի դիտմամբ... նկատեալ, կտակ մակագիծ... հաստատեալ... տառ տարբերական տողիւ ձևացեալ, տումար տենչալի անսխալ դրոշմեալ... Զգեստ լուսանիւթ երկից արքային, աւթոց... բնակողին, յարկ... շինողին, առիթ... անեղին, գործի... բնութեան... արինակ ուղղութեան անայլայլակ վրիպութեան, անպակաս... թերութեան, իսկուհի... գաւառին, մասնակից... գթութեանն, անպարտակիրն... վերստին, անամանակն... ծննդեան: Դու... դիեցուցեալ, եւ... պարփակեցեալ: Եւ զկենցաղոյս... ձգեցեալ, եւ... փոխեցաւ, եւ... ծանուցաւ: Եւ... համբարձաւ, եւ... հանգուցաւ, ... եւ... թագուցեալ, եւ... հասուցեալ, եւ... համարձակեցաւ, եւ... կացուցաւ, եւ... պատուեցաւ: Արդ յայսֆանս եւ ի սոյնպիսիս, եւ յևս ընտրելական երգս բանահիւսից գերահռչակեալ ես» (էջ 970-971), «Քեւ զանմատոյց հուրն կիզանող անապական ծառքմամբ ծախեցաւ, քեւ զարագեալն... տեսաւ, քեւ զանկցորդն... նկատեցաւ... քեւ... արհնաբանեցաւ... Արդ այսքանեաց սրբազնական մասանցս ճառեցելոց դու միայն պատճառ... Տիրամայր սուրբ Աստուածածին» (էջ 971): Ռիթմն ինտենսիվանում է Քրիստոսին վերաբերող հատվածում կրկնակի անդամներով հարակրկնութուններով, որոնք իրար մէջ նաև կապ են հաստատում (բայց... որքան... նույն եւ... ըստ որում, իսկ... որ եւ... նոյն իսկ... որպէս), և յուրաքանչյուրի հանգաձևերով՝ «Քանզի թէ չե՛ր ի քէն աճեալ... ոչ է՛ր պողաբերեալ... եւ թէ չե՛ր համբուրեալ... ոչ է՛ր ճառեցեալ... եւ թէ չե՛ր հետեւեալ... ոչ է՛ր քարոզեալ... Բայց մարմնացաւ, որքան մարդացաւ, նոյն եւ յայտնեցաւ, ըստ որում ծանուցաւ... Իսկ մաքրեցաւ, որպէս երգեցաւ, իսկ մկրտեցաւ, որ եւ վկայեցաւ, նոյն իսկ պատմեցաւ, որպէս ճառեցաւ, իսկ տնանկացաւ, որով ճոխացաւ, իսկ հնազանդեցաւ, որով պաշտեցաւ... իսկ ամաչեցոյց, որով պատկառեաց, իսկ բերկրեցոյց, որով տրտմեցաւ, իսկ զգեցոյց, որով մերկացաւ...»: Միմյանց մէջ պարունակվող հակադրութիւնների այս հորձանքից հետո ռիթմը դառնում է առավել միագիծ-սրբութեան գեպի վեր շարժումով միայն մեկ անդամներով. «Եւ սլացաւ, որպէս վերնային, թոեաւ, որպէս հոգեղէն, ծածկեցաւ, որպէս զանքնին, փախեաւ, որպէս զանհաս... բոսորաբուղիս կալկակաք ներկեաւ, անկից վիրացն խոցով հարցաքննեցաւ, ի վեհից անմահ հրեշտակացն հաւատացաւ...⁵⁹: Ուստի եւ քեզ բերկրեցելոյդ զավորակամն արհնաբանութիւն բանիս երկրորդեմ» (էջ 972): Ավարտին արդեն ողջ հյուսվածքը թափանցող այս ռիթմերը կառուցվում են նաև բանալի բառերով. «Աւրհնեալ ես դու ի կանայս գլուխ նոցին պանծանաց, եւ պայծառ պսակ: Պսակ կուտութեան մաքուր հարսնութեան, պսակ ընտրութեան փորձ գովութեան, պսակ... Արդ... յարժանահայց եւ յամենազար քոյ բարեխաւութեանդ միշտ ապաւինեալ՝ մնամք ի հաստատութեան, խնամեալք եւ հագուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութեան ամուր պատուարի սուրբ Աստուածածնիդ: Պատուար պճնայարէն ի զանազան մաքրագարդ ականց յարմարեալ, պատուար հրապարփակ... պատուար բոցանշոյլ... Ուրոյ աղագաւ արհնեցաւ արդարդ քոյ կուտութիւն ի շրթունս նոցին... Զքեզ յաւէտ արհ-

⁵⁹ Հմմտ. էջ 960:

նաբանութեամբ միշտ պսակեմք ի նուիրեալ տեղիս սրբութեան քոն տանարի... Աւոյ, աղաչեմք, ընկալ զերգարան արհնութիւնս մերունս լեզուի...» (էջ 972-973):

Եվ ավարտվում է ճառը հեղինակի անվանատառերի ծայրակապով կառուցված եթերային տեսիլներով. և ճառին ներհյուսված իր այս անունը խնդրում է վերանկարել վերնային դպրոցի մատչանում: Ներքողը, ըստ նրա, հյուսված է իր մարմնի գրից. սա ընդգծում են նաև իր անվանատառերը, և շնչից՝ որպես կենդանի էակ միշտ Աստվածամորը ծառայող:

Այսպես ամբողջությամբ համադրապատկերների, գույների, ձայներանգների, ուրիշների նրբին թաղանթով պատված այս ճառի՝ որպես բացառիկ, բանաստեղծական անոթի, հյուսվածքն ամենուր շրջանակված է երկնային-երկրային համանվագներով: Առհասարակ հրեշտակային երգեցողության ներշնչված պատկերները՝ որպես ձայնային ճանապարհորդությունների, նրա փոխակերպումների շղթայի վերջին հանգրվան, սովորաբար պսակում են նախորդող նյութը՝ հեծեծանքը, ողբաձայն հսկումը կամ սրբին, եկեղեցու խորհրդին նվիրված ներքողը: Չայնը, սուզվելով տիեզերական պարունակների մեջ, անցնելով աղոթասացության ուրիշների ընթացքներով, հանգրվանում-ձուլվում է լուսերգության վերջին կայաններին:

Երգեցողությամբ դեպի այս ոլորտներն է ճանապարհվում հոգին. «և որ լուսով զգեցայց և իշխանութիւն ունիմ յերկինս ուղևորել և ընդ հրեշտակս պարել»⁶⁰, ուր մարդկային երգասացությունը դառնում է «հրեշտակական բազմապատիկ նուագերգութիւն»⁶¹, խառնվում-միակցվում է ոգեղենների ձայներին ու ընդունվում նրանց հետ միասին. «Անիմանալի թագաւոր, Որ վերարհնիս ի հրեղէն զարացն անլըռելի ձայնիւ, Հաճեցար և ի ստորնայնոցս Առնուլ քեզ արհնաբանիչս...»⁶²:

Հոգևոր երգեցողությունը՝ որպես հրեշտակային կեցություն. «Նոր» երգեցողություն⁶³

Օրհնեցողությամբ մարդը կցվում է հրեշտակների շնչառությանը. այն հրեշտակային կեցության՝ անախտության ու ազատության, որևէ կարիքից զերծ

⁶⁰ Գրիգոր Նարեկացի, «Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի», ՄՀ ԺԲ, էջ 817-818:

⁶¹ Գրիգոր Նարեկացի, «Պատմութիւն Ապարանից Ս. Խաչին», ՄՀ ԺԲ, էջ 917:

⁶² Գրիգոր Նարեկացի, «Քարոզ համարէն առաքելոց և հայրապետաց», ՄՀ ԺԲ, էջ 743:

⁶³ Հոգևոր «Նոր» երգի պատկերը, որ հիմնվում է Սաղ. ՂԵ. 1 հարասության վրա, ֆրիստոնեական մեկնությունների կայուն խորհրդապատկեր է (տե՛ս օրինակ Կղեմես Ալեքսանդրացի, «Նորա հեթանոսաց») Clément d'Alexandrie. *Le protreptique*, ed. C. Mondésert, 2nd edn. Paris, 1949, p. 52-193. 1.5-1.6): «Նոր» օրհնության տեսարանով է բացվում Անանիա Նարեկացու՝ կաթողիկե եկեղեցուն նվիրված ներքողը. սրան միանում է նախատես ֆարոգությամբ, տիեզերաֆարոզ ու հոգեհնչող Դավիթ նվագերգողը, որ հրաշաձայնեց «հոգեմուտան տալիմ հրաշազարդապէս խախանալ և բերկրիլ ի խախանան սրբութեան աստուածակերտ ուրախութեանցն առնուլ զպատարագս...» (մեջբերում է նույն սաղմոսի «Առեմ զպատարագս և մտեմ ի սրահս նորա» տեղին՝ ՂԵ. 8. տե՛ս Անանիա Նարեկացի, «Ներքողեան ասացեալ ի սուրբն կաթողիկե եկեղեցի», ՄՀ Ժ, էջ 619):

լինելով միայն բերկրանքի պտույտների մեջ բնակություն ձևն է. մեկնելով երգ երգոցի «և կոկորդք քո, իբրև զգինի ազնիւ» տեղին [երգ է 9], Նարեկացին նշում է ինչպես գինին ուրախացնում է խմողներին, այնպես անարատների, սրբերի երգերը, նրանց կոկորդների «բանը» ուրախացնում են երկնավոր փեսային առավել, քան հրեշտակների սրբասացությունը: Զարմանալի չէ, քանի որ հրեշտակները փառաբանում են կարողությամբ և անախտությամբ, իսկ մարդը՝ հողեղեն զանգվածը՝ պատված լինելով ախտով, նմանվում է անախտներին ու կարիք չունեցողներին: Մարդու սերովբեների կոկորդն առնելն ու նրանց երգին ձուլվելը լի է սքանչացմամբ. «Կարի սքանչմամբ լի է կոկորդ զսերովբէից առնուլ և զնոցայն երգել»⁶⁴: Օրհներգությունը Աստծո կերակուրն է. այսպես Գրիգոր Նարեկացին մեկնում է Հոբի գրքի՝ քարանձավի ծածուկ տեղերում բնակվող ու իր կերակուրը փնտրող անգղի տեսարանը (Յոբ. 1Թ. 27-28), բարձրագույն օրրաններում՝ մթացեալ, անձանաչելի խավարային մեզի մեջ բնակվող Հոր կերակուրն են հրեշտակների և մարդկանց փառաբանությունը, հրեշտակների մշտնջենավոր, անլուելի օրհնաբանությունն ու սրբերի բարի գործերն ու պողաբերությունը⁶⁵: Այստեղ աղոթքը պատկերանում է որպես հոգևոր շուրթերի պտուղ, այն արահետներ է նետում հոգու տիեզերական մեծ ճամփորդություններում. այս երգը, հիմնվելով դարձյալ ՂԵ. 1 տեղի վրա, Նարեկացին անվանում է «բան նորասացիկ և արհնութիւն նոր». «Արդ, ո՛վ երանելի ժառանգք և որդիք Վերին Երուսաղէմին և մանկունք լուսեղէն և պանծալի առագաստի, լուարուք զայս բան նորասացիկ և արհնութիւն նոր, զի գրեալ է, եթէ՛ «Արհնեցէք զՏէր յարհնութիւն ի նոր» (ՂԵ. 1) և ընծայաբանական և պողաբերութիւն հոգևոր շրթանց», «զարուլթեամբն Աստուծոյ առ ոտն կոխեսցուք իբրև զհրեղէն լարս, զսուրբ զաղաւթս յերկինս առաքեսցուք», «ընդ հրեշտակս արհնեսցուք զԱստուած», «Բացցուք զշտեմարանս մտաց մերոց և անցցուք իբրև զՄազորաւթն՝ փայլելով զպտուղ արհնութեան ի շրթանց մերոց, և իբրև զգիշերավարն պայծառասցուք» (հմմտ. Յոբ. 1Ը. 32)⁶⁶: Իր այս բանավոր պտղով տիեզերքով մեկ ձգված աղոթքի հրեղեն լարով հոգին կյանքի ալիքների ծովից բարձրանում է երկնային ոլորտներ՝ փայլելով լուսատուների մեջ, օրհներգելով հրեշտակների հետ, ցնծալով Աստծո առաջ և նրանով սուզվելով Սուրբ Հոգու իմաստության անդունդները⁶⁷: Սրան ներհյուսվում են վերին ոլորտների առավել ազդեցիկ ձայնային հոսանքներ. բացելով մտքի շտե-

⁶⁴ Գրիգոր Նարեկացի, «Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի», ՄՀ ԺԲ, էջ 856-857:

⁶⁵ Այս հաավածում բավական եղծված է ձեռագիրը (Գրիգոր Նարեկացի, «Մեկնութիւն «Ով է դա»-ի», ՄՀ ԺԲ, էջ 904-905):

⁶⁶ Գրիգոր Նարեկացի, «Մեկնութիւն «Ով է դա»-ի», ՄՀ ԺԲ, էջ 908, 909, 910: Նույն կերպ Աստվածածնին նվիրված ներբողն անվանվում է անհատ իսկոպյան բարեհաճ կամփ պողի ընծա, բերկրալի շուրթերի շնորհների ընծա, իսկ խաչին բարձրաձայնվող երգը՝ «այս խաչանիջ նորոգ նշանի նորանուագ նկարս բանի, ի կարգ գովեստի նորոգ ներբողի» (ՄՀ ԺԲ, էջ 929):

⁶⁷ Գրիգոր Նարեկացի, «Մեկնութիւն «Ով է դա»-ի», էջ 909:

մարանները և անցնելով հարավային համաստեղություններով, փայլելով օրհնության պտղով, ժամանում են Հայր աստվածության ահավորության մեջ, որ նման է անգղի: Նրա ձագերը արյան ավազանի մեջ նոր ծնունդով թոթափված անլուելի «մեծածայնությամբ» գիշեր-ցերեկ աղաղակում են Երրորդության փառքը⁶⁸: Նարեկացին կերտում է զարմանալի, արտառոց տիեզերական տարածություններ, որ ծնվել են Հոբի գրքի համապատասխան տեղի խորհրդապատկերներից՝ ամեն անգամ նոր խորհրդածայներով, զարմանահրաշ, արտառոց հնչյութ-աշխարհներով, խայտաբղետ համանվագներով: Չայնային ոլորտները վերածվում են ոգեկոչումների ունիվերսալ արահետների, և մարդն այդ լաբիրինթոսում դրանք հսկող, ու հավերժ ութմերում արձանացնող ձայնարկուի:

Որպես տիեզերական հոգի՝ երկնային երաժշտությունն ուղեկցում է բոլոր հոգևոր իրադարձությունները, արթնացվում ամեն հրաշափառ տեսիլի առաջ: «Մեկնութիւն Ուլ է դա»-ի» երկն ամբողջովին թափանցված է ձայնի, երգեցողության կրկնատարածություններով: Օրհնաբանությունն ուղեկցում է Քրիստոսին ողջ ճանապարհի ընթացքում՝ ասես իր հոգեղեն ցանցով շղարշելով նրա հետագիծը:

Նրա ծնունդը ավետում են հրեշտակները, սքանչանալով, սոսկալով առ մարդիկ Աստծու սիրուց, երգելով աղաղակումով, «բարձրածայն մեծածայնությամբ» «Փառք ի բարձունս»⁶⁹, դարձյալ «մեծածայն» օրհնում են մկրտությունը: «Ահավորությամբ», մեծ սոսկանքով օրհնում են նրան խաչ բարձրանալիս, երբ լուծում են բոլոր արարածներն ու սասանվում է երկիրը, երբ, սուգ առնելով, խավարում են լուսատուները, կրկին՝ «մեծածայն» օրհնում, գերեզմանի այրի շուրջն ու ներսում փողի ձայնի պես օրհնությամբ երգ են հնչեցնում Հարության ժամանակ՝ մեծ ցնծությամբ կանանց ավետիս մատուցելով, կանայք էլ՝ առաքյալներին: Մեծածայն օրհնում են Համբարձման ժամանակ, երբ «հազարք հազարաց և բիւրք բիւրոց հրեշտակաց և հրեշտակապետաց առաջի և զկնի աղաղակէին, թէ՛ «Համբարձէ՛ք, իշխանք, զգրունս ձեր ի վեր» (Սղմ. ԻՔ. 7): Եվ վերջապես, օրհնվում է Սուրբ Երրորդությունը հավիտյանս հավիտենից բոլոր արարածներին՝ հրեշտակների և մարդկանց կողմից⁷⁰:

Չայնային պատկերներն արթնանում են աստվածամերձեցման ահեղ պահերին:

Երբ Աստված իջնում է «խավարային օդով և ջրալից մեզով» Մինայում զարհուրած հնչեցվում են «զձայն արհնութեան, իբրև զփող քաղցր և զհեշտալի զբարբառն շուրջանակի», և լեռը շարժվում է՝ դղրդալով Աստծո ահեղ փառքից: Այդպես և երկնային զորքն ու անախտ հարսանիքի անմարմնական հավերժական հարսները, դո-

⁶⁸ Նույն տեղում, էջ 909-910:

⁶⁹ Քրիստոնեական ավանդույթով այս հրեշտակային երգեցողությանն է կցվում եկեղեցին համանվագ «Փառք ի բարձունս» երգով («Ընդ դասս երջանիկ զաւրացն երգակցալ հողեղեննս «Փառք ի բարձունս» ասելով... Ի զաւրս վերինս երգաբանեալ յանմարմնոց հրեշտակաց»): Գրիգոր Նարեկացի, «Քարոզ ի Սուրբ Ծնունդն և Մկրտութիւնն», ՄԶ ժԲ, էջ 628):

⁷⁰ Գրիգոր Նարեկացի, «Մեկնութիւն «Ուլ է դա»-ի», ՄԶ ժԲ, էջ 885:

ղալով կիզանող, անշեշ անմերձակա աստվածային հրից, սոսկալով միայն եռակի սրբասացութուն են աղաղակում, զարհուրած տազնապով «Սուրբ, սուրբ» են աղաղակում⁷¹:

Մարդկային ու հրեշտակային երգեցողութունները ձուլած այս հավերժական քաղցրանվագ փառաբանությունն ու տարփանքը նարեկացին պատկերում է բերկրանքի, զվարթության, անսպառ լուսահեղման, անդադար երգաբանության բազմաթիվ տեսարաններում.

«Ներբողեա՛լ ես... Բերահամբաւեա՛լ ես... Երանեա՛լ ես ի լեզուս անբիծս ընտրական շրթանց... Խրախացի՛ր... որ ի լոյս փառաց ցնծութեան շրջապատեցար, և երկրաւոր մարմնով երկնային գոլ գովեցար երգով... ըստ բանի աստուածագրեցիկ քումդ բարբառոյ... ըղձական սրտիւ ի գուարթ լեզուս շրթանց բերկրելոց միշտ երանեսցէ զքեզ Եկեղեցի դասուցն անդրանկաց, որք... ախորժալուր և քաղցրանուագ արհնաձայնութեամբք... փառատրեն»⁷², «Երանեա՛լ ես... որ ամենայնի զամենայն յամենեցունց պսակեալ հոգեշունչ երգով ի քեզ ընկալար...», «...ցանկալի երգովք ներբողեալ տաւալաբ ... և արդ, արդարաբար և արժանապէս հոգեշարժ քնարաւ զքեզ համբաւեմք, սուրբ Աստուածածին, որ բազմամասնեայ երգով միշտ արհնաբանիւր մարմնով և շնչով շնորհապատում վերանորոգեալ... Ահա այսոքիւք ըստ քումդ բանի յիրաւի անարգել շրթամբք զքեզ երանեսցուք»⁷³: «Սակս որոյ լի բերանով... երանեմք զՏիրուհիդ սուրբ Աստուածածին...»⁷⁴: «Փառաւորեմք վերաձայնեալ նուագաւք արհնութեան երգով... արհնաձայն գոհաբանութեամբ, անքնին ներբողիւ գովեալ» (ՀՆ. Գ), «արհնեալ հանապազ յաւէժ անդադար երգաձայնութեամբ...» (ԻԶ. Գ):

Երբեմն այս համաձայնույթը կերտվում է երկնային-երկրային հնչյունների ներդաշնակ միախառնությամբ:

Տիեզերքը ողողված է ոգեղեն ձայներանգներով վերնայինների լուսաբերան բոցաշնչություններ և սրան կցվող երկրայինների «հրեշտակորեն», «հասակամտաբար» պարերգություններ (ՂԳ. Բ): «Մատեանի» այս նույն գլուխը բացվում է սերովբեական երգեցողության տեսարանով. «Սուրբ, ահաւոր անուն... փափագ յարախորժելի, ի սրբերգենիցն փառատրողաց միշտ սրբաբանեալ» (ՂԲ. Ա), որին կցվում է մարդկային անդադար հեծությունը բոլոր անդամներով ու հոգու ուժերով, ձայնարձակությունն ու երգաձայնությունը, գոհությունը խառնվող աղերսը. «և արդ... ձեռն համբառնամ տարածմամբ բազկացս, երիկամանցս գործակցութեամբ, սրտիս հեծութեամբ, լեզուիս և շրթանցս ձայնարձակութեամբ»⁷⁵... գոհաբանութիւն Քեզ վերընծայեմ... Սուրբ, Սուրբ

⁷¹ Նույն տեղում, էջ 904:

⁷² **Գրիգոր Նարեկացի**, «Ներբող ի սուրբ Կոյսն», *ՄՁ ժԲ*, էջ 955-956:

⁷³ Նույն տեղում, էջ 958:

⁷⁴ Նույն տեղում, էջ 970:

⁷⁵ Այստեղ, ըստ Էսոբյան, արտացոլված են հոգու երեք մասերը. անտիկ-ֆրիստոնեական համակարգում հոգին բաղկացած է «ցանկական», «արիական» և բանական հատվածներից: Ստորին՝ ցանկական հատվածը կապվում է երիկամների հետ, հոգու «արիական»

և միայն միշտ Սուրբ, աւրհնեալ հանապազ յաւէժ անդադար երգածայնութեամբ... գոհութիւն խառնեալ ընդ աղերս՝ ասել ըստ Դավթի...» (ՂԳ. Թ):

Հավերժ երգեցողության շրջապտույտներին միացող ձայները պատկերանում են ամենատարբեր ձևերով անթարթ բերանով հարազվարճ բարբառող փառաբանիչները⁷⁶, Սուրբ Հոգու սաստիկ և ահավոր հնչմամբ, հրաբուխ, կայծակնատարափ ցուլացմամբ կիզանող լեզուների բազմության բաժանման և բանականների նվազով («Մատեան» ՀՅ. ԺԱ), կամ նոր հրեղեն լեզվով նորոգվող երկրի, այս մեծահնչուն հողմին միացող հրեշտակային պարերգության, սերովբեական բարբառով ցնծության ձայնի քաղցրանվազ հնչմամբ⁷⁷, հրանյութի ազգի անհանգչելի ներբողների նվազով, պանծալի երգով⁷⁸, հողմահողով հնչմամբ առաքյալների անձերին միավորմամբ, Տիրամորը փառաբանող ստորնայինների հրաշաձայն երգերով, առաքելախումբ նվագի երգաբանությունամբ, սրբերի մշտական օրհնությունամբ հավերժ զվարճ բերկրալից տոնին⁷⁹, երկրային պարավորների բազմախումբ փառաբանությունամբ, հոգեղենների հույլի, արփիափայլ սեռի հետ հրաշազանությունամբ պարակցելով ու օրհնելով, տիեզերքի մեջ գետեղված եկեղեցուց վերին փառաբանության ոլորտներին ուղղված բազմաձայն հնչողության («յոզնաձայնի ջոկք, որ ի սմա, զվերնականսն հընչեցուցանեն»), երկրային պարավորների պայծառազվարճ համարձակությունամբ արփիափայլ սերովբեներին պարակցող, «սերովբեաճոխ» վերին հրաշքներին, «սրովբեաճոխ» վեհերին պարակցող, համագունդ փառաբանությունամբ⁸⁰, հրանյութի ազգի ներբողների անհանգչելի նվազով, պանծալի երգով⁸¹ և այլն:

Հրեշտակային կեցություն անբաժանելի ատրիբուտն է հոգու խայտանքը՝ պարը, որին միանում են բոլորը. «Պարէ եւա դստերաւք իւրովք ի խնճոյս՝ ուրախութեամբ զարդարեալ, Պարակից եղեալ դասուց սերովբէիցն...»⁸²: Այն ևս ոգեղենացված է՝ արտահայտվելով ոչ մարմնի շարժումներով, այլ երկնային շառավիղներում հոգու պտույտներով:

Ոգեղեն երգեցողության այս վերապրումը ծնում է միջնադարյան հոգևոր-գեղագիտական փորձառություն մի ամբողջ շերտ մարդու մեջ խորին հնչույթների արթնացման, նրա տարբեր հատվածների՝ որպես երաժշտական գործիքների հնչողության, հոգևոր երգեցողության տարատեսակ հնարանքների միջնադարյան արվեստը: Ըստ սրա սաղմոսներում հիշատակվող բոլոր «անշունչ»

կամ «ստումտական» մասը՝ ստի, վերին բանական հատվածի ոլորտը գլուխն է, որ այստեղ արտացոլված է Աստծուն հղվող խոսքի պատկերում:

⁷⁶ Գրիգոր Նարեկացի, «Քարոզ ի սուրբ Հովհաննես Մկրտիչն», ՄՀ ԺԲ, էջ 655:

⁷⁷ Գրիգոր Նարեկացի, «Տաղ Գալստեան Սուրբ Հոգոյն», ՄՀ ԺԲ, էջ 741-742:

⁷⁸ Գրիգոր Նարեկացի, «Քարոզ Սրբոյն Խաչին», ՄՀ ԺԲ, էջ 717:

⁷⁹ Գրիգոր Նարեկացի, «Քարոզ համարէն սուրբ առաքելոցն», ՄՀ ԺԲ, էջ 723-726:

⁸⁰ Գրիգոր Նարեկացի, «Քարոզ եկեղեցոյ և տապանակին Տեառն», ՄՀ ԺԲ, էջ 691-693:

⁸¹ Գրիգոր Նարեկացի, «Քարոզ Սրբոյ Խաչին», ՄՀ ԺԲ, էջ 717:

⁸² Գրիգոր Նարեկացի, «Քարոզ, ասացեալ ի փոխումն ամենաւրհնեալ Սուրբ Աստուածածնին», ՄՀ ԺԲ, էջ 707:

երաժշտական գործիքները միջնադարյան մատենագրության մեջ մեկնվում են որպես շնչավոր մարմնի հատվածներ, ձայնարտաբերման օրգաններ կամ հոգու ուժեր: Մարդը «ձուլում» է իր մեջ բոլոր գործիքների ձայներանգներն ու միանում հրեշտակային դասին:

Երաժշտական գործիքները վերածվում են ոչ միայն ձայներանգ-խորհրդապատկերների, այլև մարմնի մեջ արթնացող հնչունային-գունային ամբողջ տարածությունների, երգեցող աղոթքի զեղումներում կենդանի թրթռացող ձայն-ոլորտների⁸³: Նման մեկնությունները ոչ միայն երգեցողության նրբին արվեստի, այլև երաժշտական գործիքների, ձայնարտաբերման, տեմբրի ընկալման գունեղ, հետաքրքիր նմուշներ են: Նման մեկնությունների արձագանքներ հայտնաբերում ենք Նարեկացու քերթվածներում:

Հոգևոր երաժշտական գործիքներ

Հովհաննես Մկրտչին նվիրված քարոզում Մարիամը բնորոշվում է որպես «անխոնավ թմբուկ»․ այստեղ հեղինակն ականարկում է Կարմիր ծովով անցած ու չթրջված համանուն Մարիամ մարգարեուհու թմբուկը (ծովն անցնելուց հետո, ըստ Ելից գրքի, Մարիամն օրհներգում է Աստծուն թմբկահարության մեջ ու պարով, Ելք. ԺԵ. 20⁸⁴): Ախտերի ծովի մեջ չթրջված այս գործիքը համադրվում է «անշաղախ» կուսություն հետ.

Յանուան է նախնոյն Մարիամ,
 Կուսաւոր իմն թարգմանաբար և յանխոնաւ թմբկէն
 Անշաղախոյ յայտնեցաւ կուսութիւն...
 Աղերսիւ և արտաստուգոյ ձայնիւ պաղատիմք առ մայրդ Աստուծոյ՝
 Երգաբանս և երգիչքս
 և բնաւ խմբեալքս՝ ի յիշատակի մեծիս Յովհաննու...

(«Քարոզ ի սուրբ Հովհաննես Մկրտչին», ՄՀ ԺԲ, 660-661)

Հովհաննես Մկրտչին այս քարոզում անվանվում է «տատրակ քաղցրահասաւ՝ ըստ կանխաձայնութեան հոգեպատում երգողին կատարման»⁸⁵:

⁸³ Պետք է նշել, որ առավել հաճախ նման մեկնությունները դիտարկվել են որպես եկեղեցում երաժշտական գործիքների բացակայության պայմաններում սրանք պարզ այլաբանության վերածելու անհրաժեշտություն: Այս երևույթը, սակայն, շատ ավելի խորը ըմբռնումների արձագանք է և ծնում է, ի վերջո, մարդկային ձայնի գերզգայուն ընկալման, մարմնի տարբեր հատվածներում նրա առաջացման, միաձայն երգեցողության տարատեսակ հնարանների միջնադարյան բացառիկ փորձը, իր տեսակի մեջ բացարձակ փակ աշխարհը:

⁸⁴ Առհասարակ Կարմիր ծովը քրիստոսաբանական մեկնություններում ներկայանում է որպես մեղեդի հորձանք. այն բացվում է Քրիստոսի խաչով՝ Մովսեսի գավազանով, որ ընկղմում է մարդու ախտերը՝ փարավոնի երիվարները, և թույլ է տալիս անվնաս անցնել հոգուն. անխոնավ թմբուկն այս համատեքստում դառնում է հոգու ձայնը:

⁸⁵ Նույն տեղում, էջ 656:

Այս պատկերին որպես հակառակատիպ Մատեանի՝ մեռածին նվիրված գլխում հայտնվում է ուժգնաբարբառ, խրոխտահնչուն զարկող թմբուկը, որն իր «չրացիր» խոնավությամբ, զգայական՝ «անվայելուչ», թուլացնող ու թմե-րով (օգտագործում է «թուլադաշնակել» բառաբարդումը) ներքև է քաշում ու կորստյան մատնում մարդուն: Մրան միանում է դարձյալ «օդախոնավ մեղկու-թյամբ» գայթակղող քնարը: Այստեղ շեշտվում են և գործիքների նվագածու-թյան ձևերը՝ քնարի ձայնարձակումը՝ «ձայնատրուկունը» և թմբկի թաղան-թապատվածութունը՝ «մզնարհեստութունը»:

«Քանզի այսու աւծմամբ հոգևորականաւ, խզեալ կամ հատեալ ի սնտրիասէր, մահակերպարան, տաղտկազազրական հեշտութեանց հակառակողին»⁸⁶, որ աւզախո-նաւ մեղկութեամբ զքնարս ձայնատրական⁸⁷ և կամ զարկուած վերածածկութեան մզնարհեստ⁸⁸, ուժգնաբարբառ, խրոխտահնչական կազմածոյ թմբկիս գործականու-թեան չրացիր իմ գիշութեամբ անվայելուչ թուլադաշնակեալ ի ստորև կորստեան քարշէ զաւրինակ մերս գոյութեան, կապիմք յուսով վերստին դարձեալ ընդ անձառ խորհրդոյ խաչի Քոյ» («Մատեան», Բան ՂԳ «Աղաւթք թարգմանարէն վասն սրբալոյս իւղոյն միւռոնի»):

Դիսի ավարտին այս նյութական գործիքներին հակադրվում է աննյութ-ոգեղեն երգեցողութունը, որ արտածվում է լեզվով, ձայնով, շուրթերով.

«Եւ քեզ միայնոյ՝ միայն աւծելոյ յամենեցունց արհնութիւնք երգոց, ալէլուք լե-զուաց, հնչմունք ձայնից, յաղթականութիւնք գովեստից, բարբաստութիւնք շրթանց, սրբաբանութիւնք սաղմոսաց՝ ըստ Հար և Հոգևոյ՞ Սրբոյ յաւիտեանս յաւիտենից»:

Ներքին նվագարանների ամենաներշնչված պատկերը հառնում է Գրիգոր Նարեկացու՝ Ապարանքի Սուրբ Խաչին նվիրված ներբողում: Շեշտվում են դարձյալ բերանը, շուրթերը, լեզուն, բարբառը, որոնցից պետք է բխեցվի օրհ-նութունը. այստեղ են խտանում նյութական երաժշտական գործիքները: Բերկ-րալիր բերանով, օրհնառաք բարբառով, ընտիր շուրթերով, մաքուր լեզվով փառաբանում են մարդիկ օրհնության տավղով, գոչումով, ցնծության ձայնով, որպես շնչավոր քնարներ, անձնավոր փողեր, մարմնեղեն ծնծղաներ՝ ծափ տալով ու ոտքերով պարելով:

«Եւ մատուցին ընծայեցին շուրջ զնովաւ ակումբ զբուրումն խնկոց ջահիւք վառե-լովք... և աղաղակեցին բերկրալիր բերանով արհնառաք բարբառով ի շրթունս ըն-տիրս, ի լեզուս մաքուրս, ի հնչումն երգոց, ի տաւիղ արհնութեանց, ի գոչումն ազղ-

⁸⁶ Այստեղ հեղինակը «միւռոն» բառն ածանցում է «մեռնել» բայից, որտեղից էլ ծնունդ է առնում այս մեկնությունը:

⁸⁷ «Որ ինչ կարէ ձայնատուր լինել, հնչողական, շառաչական» (ՆԲՀԼ):

⁸⁸ «Միզն՝ membrana. Պարուտակ, նուրբ պատիչ, թաղանթ, մաշկ բարակ», որից բարդված է «մզնարհեստ» բառը՝ որպես «մզնաձև արհեստագործեալ, որպէս մաշկն թմբկի ունկան. մզնաձև՝ որ ինչ է իբրև զմիզն՝ նուրբ և բարակ, նման թաղանթի կամ մաշկի» (ՆԲՀԼ):

ման, ի ձայն ցնծութեան, ի քնար շնչաւոր, ի փող անձնաւոր, ի խնճոյս հոգեւոր, ի ծնծղայս մարմնեղէն, ի ծափս ձեռին, ի տրոփումն կայթելոյ կաքաւման ոտին՝ ասելով զհոգեպարզէն և զաստուածաշունչն սաղմոս»⁸⁹ :

Այստեղ հեղինակը նկարագրում է սաղմոսասացութիւնը («ասելով... սաղմոս» «Ետուր երկիւղածաց քոց... [Սաղ. ԾԹ. 6]»), և հիշատակում է այն երաժշտական գործիքները, որոնք, ըստ Դավթի սաղմոսների, սովորաբար ուղեկցում էին նրա երգը: Նոր երգեցողութիւնն տիրույթում սրանք օժտվում են բոլորովին այլ նշանակութեամբ. նման մեկնութիւնները բազում են համաքրիստոնեական ավանդութիւնում⁹⁰ : Դավթի սաղմոսարանը՝ օրհնութիւնն գործիք տավիղն այստեղ կապվում է հենց օրհնեցողութիւնն ունիվերսալ գործառութի հետ, քնարը, ինչպէս սովորաբար միջնադարյան մեկնութիւններում հոգու, ողջ անձը՝ փողի, ծնծղան՝ մարմնի հետ: Այս ամենն էլ իրագործվում է հրեշտակային պարի շրջապատւածութեամբ. պարը ևս կենդանի ծիսական միջավայրում բացակայելու պայմաններում մեկնվում է «ոգեղենացած», գործիքների նման՝ որպէս տարածութիւն մեջ խայտացող, թեւաճող հոգու լուսեղեն տեսիլ:

Նույն գործառութիւններն ունեն տավիղն ու քնարը նաև Սուրբ Կոլոսին նվիրված ներբողում. Տավիղը խորհրդանշում է օրհնաբանութիւնը, քնարը՝ հոգու շարժումները. այս երգեցողութեամբ մարդը նորոգվում է շնչով ու մարմնով. «...աւրհնեալ դու ի կանայս ի շրթունս մարգարէաբեր քահանայուհուն... ի դասուց բնածնաց հասարակական համազարմն նմանացեղից ցանկալի երգովք ներբողեալ տաւղաւք⁹¹», «և արդ, արդարաբար և արժանապէս հոգեշարժ քնարաւ զքեզ համբաւեմք, սուրբ Աստուածածին, որ բազմամասնեայ երգով միշտ աւրհնաբանիւր մարմնով և շնչով շնորհապատում վերանորոգեալ...»⁹² :

Այս ներբողում երաժշտական նյութական գործիքները տեղադրվում են սրտի մեջ. Ա տարբերակում նշվում է ձայնը՝ շունչը շարժող զգայական սրտի տավիղը. «Գումարք խմբից դասու երջանկացն պատուասիրաբար բանակարգ և բիւրաբեղուն գովեստիւ զսկզբնալոյսն կենաց գոյից ի կիցս բանից ըղձաձայնութեանց, իբր զգայական շնչաշարժ սրտին, տաւղեաւք զգերազանցեալն ի յանմատոյցն ծագումն լուսոյ վերադրուատին...»⁹³ : Ներբողի Բ տարբերակում տավիղից բացի նշվում են փողերն ու քնարները, որ դարձյալ զետեղվում են սրտի մեջ. այս տարբերակով նրանք են նշվում, որպէս զգայական սրտով

⁸⁹ Գրիգոր Նարեկացի, «Պատմութիւն Ապարանից Ս. Խաչին», ՄՀ ԺԲ, էջ 927:

⁹⁰ Նմանատիպ մեկնություններ տե՛ս մեր աշխատության մեջ, «Մարդու կազմության տեսության վերախմաստավորումը հայ միջնադարյան մեկնողական ավանդոյթի մեջ», էջ 198-206, 216-217, 225-254:

⁹¹ Ճառի Բ տարբերակում օգտագործված է «ցանկալիք երգաւք ներբողականս տաւղաւք» արտանայտությունը (Գրիգոր Նարեկացի, «Ներբող ի Սուրբ Կոլոսն», ՄՀ ԺԲ, էջ 969)

⁹² Նույն տեղում, էջ 957-958. տե՛ս նաև ճառի երկրորդ տարբերակը՝ էջ 969-970:

⁹³ Նույն տեղում, էջ 953:

շարժվող գործիքներ. «Գումարք խմբից դասու երջանկացն պատուասիրեն բիրաբեղուն բանիւք գովեստի զսկզբնալոյսն կենաց գոյից ի կիցս բանից ըզ- ձաձայնութեանց, և որպէս փողովք տաւղաւք և քնարիւք զգայական սրտի շար- ժեալ զգործի՝ զգերազանցեալն ի լոյս անմատոյց ուրախութեամբ վերագրուա- տեն»⁹⁴ :

Սիրտն էլ ոգեղենանում է այս ձայներն առնելով:

Այսպես երաժշտական գործիքները՝ որպես հնչողության սկզբունքներ, հեղվում են, շնչավորվում արտաքին տարածություններում և ներքին հնչերանգ- ներում, «լցվում» մարմնի, սրտի ու նրանից բխող խոսքի պես-պես երանգների մեջ, ճառագում մարմին-գործիքներից, շուրթերի լարերից, լեզվից ու սփռվում ոգեղեն ձայներանգներում, հնչողության ամենանուրբ սահմաններին ձուլվում իրենց բնատրիպերին: Սրանք մարդու միջոցով օծվում են արտաքին-ներքին այս տիրույթների կենդանության բոլոր շնորհներով: Իր հերթին մարդն էլ՝ որ- պես երաժշտացած անոթ, շնչավորվում է այս լուսերգությունների հնչերանգ- ներում, արտածում իր ձայնի մաքուր ընծան:

Բնության, հոգևոր տարածություններում ոգեկոչվող ձայնը

Հին ծեսի երաժշտական գործիքների վերարթնացման հետաքրքիր օրի- նակ է ներկայացված Մատեանի՝ ժամհարի կոչնակին նվիրված գլխում («Ի փայտն երջանիկ բարեբաստութեան ժամահարին խորհրդածութեան, աղաչանս եղեալ ընդ կերպարանս թարգմանութեանն».) ՂԲ. Ը): Ամբողջ գլխի ետնախոր- քում, ելնելով սրա հիմքում ընկած այլաբանական օրինակից, ձայնապատկեր- ների, աղմկային շերտերի մեջ ոգեկոչվում է նոր, տիեզերածավալ կանչը՝ ներ- հյուսվելով գործիքների, հնչունի հետ կապված սուրբգրային տարբեր հարա- սույթուններին:

Այս գլուխը սկսվում է մարդու բնությունը թմբիրից արթնացնող աստվա- ծային զողանջով, որ մարդուն կանչում է օրհնաբանության⁹⁵ :

Երկրորդ ենթագլխում շարունակվում է արթնացնող ձայնի պատկերը (այն բնորոշում է «սաստիկ որոտում», «ուժգնություն ճայթման», երկու ծայրահե- ղությունների՝ մեղմական վանկով նիրհի մեջ ընկղմող ու ահավորությամբ հո- գին զարհուրեցնող բախումի միջև «ընդոստ զարկված», հարության օրվա ահեղ բարբառի նախօրինակ⁹⁶ ՂԲ. Բ, «աղաղակ բարձրության գոչման»՝ ՂԲ,

⁹⁴ Նույն տեղում, էջ 965:

⁹⁵ «...Ձարթուցեալ անձկութեամբ... ի լուսինն հնչման փայտիդ հրաւիրման, որով բա- իեալ զձայնարձակութեանցն զագողարան՝ սքափեցաք, կանգնեցաք՝ ի վեր յարուցեալ ի մեռեալ արհնակս թմբումնէ... բերեալ ձգեցաք ի ժամ պաշտամանն արհնաբանութեան՝ յանդիման լինել Քեզ ուրախութեամբ հանդէպ հատուցման բեմի» (ՂԲ. Ա):

⁹⁶ Կոչնակի միջոցով պատկերվում են Տիրոջ հատկանիշները, ըստ սրա այն համեմատվում է և իսաչափայտի հետ. այս այլաբանական մեկնությունը արտահայտված է և գլխի խորա- գրում:

Գ): Բերում է երիբովի դարպասների շուրջ հնչած շեփորների խորհրդապատկերը, որից փլուզվում են պարիսպները. սրանից առավել ուժգին է տապալում կոչնակը (ՂԲ. Գ), որի կանչը զարհուրեցնում է թշնամուն (ՂԲ. Զ): Յոթերորդ ենթագլխում հառնում է տիեզերածավալ ձայնը՝ Հին Կտակարանից հարասություններով (փողի, մարդկային ցնծության ձայների և նման օրինակներով): Կենդանի, «անարգել ճայթմամբ» բոլոր ծագերն ու խորքերը, ծովերը, կյանքի գեղուններն ու հորձանքները լեցնող զողանջն իր զորեղությամբ հակադրվում է հինկտակարանային ամենաուժգին՝ նյութական 77 եղջերափողերի կանչին (ՂԲ. Է), որից առավել զորեղ է կոչնակի համասփյուռ ձայնը: Սրանից անցնում է մարդու ոլորտին՝ խոսքին ու երաժշտական գործիքներին (ՂԲ. Ը):

Այս ենթագլխում նոր կանչը հառնում է հին ու նոր հնչողության համադրաշարերում, նվագածության, ծիսական ստվերների աղմուկի մեջ: Սկզբում ներկայանում է մարդուց բխող հոգեզուրկ ձայնը և սրա անցած ճանապարհը՝ մարմնի խորքերից օդի վիրավորությամբ⁹⁷ մինչ ունկնդրի ականջը:

Ասացողն Աստծուն «խիստ»՝ այսինքն կարծր, պինդ կամ ծանր, անհարթ խորքերից չի հղում իր անձի արձագանքը («Մշ արձագանք անձանաց ի խորոց ինչ գանչութենէ խիստս առաքեցեալ»), և ո՛չ դժնդակապէս օդը վիրավորելով, ինչպես ոմն իմաստակ, ո՛չ «անախորժ սրովթեամբ» ականջը մտնելով և ուղեղի ամանը շար անկամակությամբ⁹⁸ թնդացնելով, ո՛չ զանգակի պղնձէ նյութը «դանդաչեցնելով»՝ տարուբերելով, ո՛չ քարը սալի քարին առանց քաղցրության զարկելով, այլ այս նոր Սիոնի «անխորտակելի պարփակարանով»՝ Աստծո սպասավորների կողմից կազմված, որի մասին, զգուշորեն այն վերցնելով, քրիստոնյա եկեղեցականները ղևտացիների փոխարեն սիրով հոգ են տանում («մին սա ի սպասուց կազմուածոց արարչաւանդիցն գլխաւորաց, զոր եկեղեցականքս քրիստոնէից ընդ ղևտականացն զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն»): Այս նոր ձայնին խորին պլաններ են հաղորդում ժողովողի տեսիլքի աքլորականչի հետ համեմատությունը (ժող. ժԲ. 4), որ, ըստ ժողովողի գրքի, արթնացնում է առավոտյան, երբ մարդը գնում է իր հավիտենական տունը (ըստ Նարեկացու սա հրեշտակի ձայնն է), ինչպես նաև նոր՝ Ավետարանի շնորհի գործիքի պատկերը, որ ավելի է արթնացնում հոգին, քան Եղիսեեի քնարը (ըստ Թագավորաց գրքի՝ Եղիսեեի մարգարեանում է միայն քնարահարությունից հետո. Դ Թագ. Գ. 15): Այս կանխասացությունների խորապատկերում է ոգեկոչվում «նոր» հնչյունը:

⁹⁷ Հմմտ. «ասացին զձայն վիրատուրփին սարոյ», **Գրիգոր Մագիստրոս**, «Մեկնութիւն Բերականին», Մատենագիրք հայոց, հ. ժԶ, Երևան, 2012, էջ 391 (մեջբերում Դավիթ մեկնիչից. բնագիրը կազմեց՝ Գ. Մուրադյան), նաև. «Բերթողի ի սանմանելն զձայն վիրատուրփին օդոյ սասցին» (**Դավիթ Անյաղթ**, «Մանմանի իմաստասիրութեան», Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք ֆննական բնագրերը և առաջաբանը Ս. Արեշտայանի, Երևան, 1980, էջ 75):

⁹⁸ Աննոժարոյամբ, դժկամոյամբ (նԲՀԼ). «կամակ» բառն ունի նաև «նեշտալի, զվարնալի, փաղց» նշանակությունները (նԲՀԼ):

Սրանից հետո հեղինակն անցնում է կոնկրետ երաժշտական գործիքների միահյուսելով սրանք կոչնակի ձայնին: Նշված հատվածը գործիքների էություն ընկալման հետաքրքիր նմուշ է: Այստեղ ներկայացվում են առաջնորդ ջութակների ներդաշնակված լարերի նախերգը («սկզբնապար նախընթացութեան աղէյարմար ջութակաց»), բարեհունչ տավիղների ողբերգը («բարետաւիղ ողբերգարկութեանց»), «բարացուցական» բարքերը ցույց տվող, էթիկական ոլորտի հետ առնչվող⁹⁹ բամբինը՝ փանդիոը (որն առավել համարժեք է սաղմոսներում հիշատակվող քնարին). այն երգում է «բարառնաբար»՝ այսինքն ասես շնչավոր էակի պես («բարացուցական բամբուն բառացի բարառնութեանց»¹⁰⁰): Եվ վերջապես «վերաիմաստավորված» սրինգը խորհրդանշում է առհասարակ նոր հնչյունը՝ նորոգված մարդուն, որ վերցնում ենք հնի փոխարեն («սրինգ նորոգ այլ իմն տեսակա՛ն առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդութեամբ»): Այն ձայն չի արձակում հեթանոսական, ստվերական-կոպտաշտ ձևով («հեթանոսաւրէն ուրուաձայն հնչման») կամ հրեական տհասություններ, որ խոտանում է Տերը, ասելով՝ «հեռացրու ինձանից քո երգերի ձայնը» (Ամովս. Ե. 23), և սիրում այս մեկը («այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մաքրական տաժմամբ»): Այսպիսով սրինգը դիտվում է որպես ամենաընդհանուր խորհրդանիշ, տավիղը կապվում է դարձյալ ընդհանուր քերթության՝ բարձր ողբերգության (մյուս օրինակներում օրհներգության) հետ, «ջութակը»՝ խմբակային նախերգի, իսկ քնար-փանդիոը դարձյալ մարդու ոլորտի՝ այս դեպքում բարքերի մաքրագործման հետ: Այստեղ ևս Նարեկացին օգտագործում է ձայնանմանակման հնարանք (ինչպես տավղահարության պատկերում): Այս անգամ նաև բաղաձայնությամբ շեշտվում է ուժեղ բախյունը (կոչնակին ավելի մոտ)՝ ըստ այս հատվածի պաթետիկ, պատկերային խտության. «բարացուցական բամբուն բառացի բարառնութեանց»:

Հաջորդ ենթազվածում Նարեկացին պատկերում է աստվածային ձայնի թափանցումը մարդու հանգուցյուներ («Մտցէ՛ ձայնդ այդ աստուածարեալ ընդ պատուաստ յաւդիցս շաղկապութեան...». ՂԲ. Թ), համեմատում կոչնակը «չահավորական» քնարի հետ, նրա երջանիկ, բարեզեկույց ձայնարձակությունից հեռու են փախչում բոլոր խավարածին ուժերը: Վերջին՝ Աստծո խաղաղության

⁹⁹ «Յուցիչ կամ երևցուցիչ բարուց, յանդիման կացուցիչ կամ շարժից կրից» (ՆԲՀ):

¹⁰⁰ «Քարառնութիւն՝ առնելն՝ այսինքն ձևացուցանել և նմանեցուցանելն ստեղծաբանութեամբ զբարս մեռելոց կամ անշնչից, խօսք առ անկենդանս, կամ ի դիմաց անխօս կենդանեաց և տնկոց. «Քարառնութիւն է նմանութիւն բարուց ենթակայ դիմաց: Եւ բարառնութեան զանազանութիւնք են երեք» (Պիտոյից). լայնաբար՝ որպէս այլաբանութիւն, նմանաբանութիւն, իմաստ խորհրդավոր և ստեղծաբանութիւն» (ՆԲՀ): Դիմառնութիւն՝ «Որպէս թէ դիմառնելութիւն, ձևացուցանելն ըզդէմս այլոց. ձև խօսելոյ ի դիմաց անխօսից: «Լ բարառնութիւն է և ուրանօր դէմքն ծանօթք են, բայց զբարսն յատուկ ստեղծանեմք... և դիմառնութիւն, ուրանօր զբարսն միանգամայն և զդէմս ստեղծանեմք» (Գիրք պիտոյից, բնագիրը, առաջաբանն ու ծանոթագրությունները Գ. Մուրադյանի, Երևան, 1993, էջ 184):

տարածքներին միակցման տեսարանում ձայն-ահագանգի արձագանքները համապատասխան երանգ են ստանում. «Բացցին կամաւք Քո, հզար, ի յայս ձայն կենաց լսելիք սրտից յամառեցելոց: Կուիցեն յայս մեծի բարութեան ի քումդ ակնարկութեան ականջք խլից (Ես. Լե. 15)... Եղիցի՛ Քե սա մեզ լուր ցնծութեան, ձայն ուրախութեան, բարբառ բերկրութեան, նուազ հանգստեան... Թեթեւութիւն թառաշմանց...» (ՂԲ. Ժ):

Այսպես նարեկացին այս «խորհրդաձայնը» անցկացնում է տիեզերքի, ժամանակների միջով՝ աղաղակող բաբախող, ազդարարող ու տապալող իր ծավալումներից, երաժշտական գործիքների համանվագներից մինչև խաղաղարար դողանջները:

Ձայնային ճամփորդություններում հնչյունին ներհյուսվում են սուրբգրային խորհրդանիշներ, տեսիլներ ու վառ պատկերներ, և սրանց միջով մարդն անցնում է իրենից արտածվող բխումների տարակերպ հնարանքներով, ներքին պարունակների, բոլոր աշխարհների արթնություններում ու հեղումով ստեղծելով ձայնային «հայտնատեսություն» զարմանալի զորեղ համանվագներ: Աշխարհների արձագանքների ու ներքին խորհրդավոր ներդաշնակությունների շրջապատյտի մեջ նետված հոգին խառնում է իր մեջ տիեզերքի բոլոր ձայները և հնչեցնում սրանք ի լուր Արարչի: Այստեղ արտացոլված են միջնադարյան խոր ուսմունքի արձագանքներ, ըստ որի մարդ-փոքր տիեզերքը կրում է իր մեջ արարչություն բոլոր՝ բուսական, կենդանական և բանական շերտերը: Իր շուրջ փռված այս անբան աշխարհները հանձնված են իր խնամքին, որից գոյանում են և իր նյութական պարունակները, իր մեջ և իր միջոցով հաղորդվում խոսքին ու վերառաքվում Աստծուն¹⁰¹:

Այս խորհրդավոր պատկերը հայտնվում է Գրիգոր Նարեկացու «Հայեաց ի քեզ» մեկնության մեջ. վերջինս շեշտում է նյութական թաղանթների մանրակրկիտ, աստիճանական բաժանումն ու կազմաքանդումը, որոնցով ասացողը յուրացնում-ժողովում է սրանք իր մեջ ամբողջություններ, լեզու բաշխում ու ճաշակում գոհություն մատուցելով այս ամենը պարզևողին: Այսպես նկարագրում է ինչպես մարդը բոլոր գոյերն իր մեջ բաժանում է մասերի, սա էլ մասնատում տարրերի, կոտորակում մանանեխի հատիկի չափով (սա, ըստ էության, սուրբգրային խորհրդաբանություն չափման նվազագույն միավորն է) ու նրանց բոլորին խոսուն լեզու բաշխում, նրանցով փառաբանություն վերառաքում. «Յաղագս որոյ ընդ իս առեալ զբոլոր գոյսս ի մասունս բաժանելով և ի ստիքսս կոտորելով, քան զկիտուածս մանրութեան հատոյ մանանխոյ՝ տալով բնաւիցն խաւսուն լեզու՝ և ամենեքումբք գոհանամբ զնմանէ, որ ետ ինձ ի վայելս զայս

¹⁰¹ Հմմտ. Նեմեսիոսի, Գրիգոր Նյուսացու, Վարդան Արևելցու մեկնությունները. սրանք Հովհաննես Պրուզ Երզնկացին վերանեցնում է վառ ու ներշնչված պատկերների (տե՛ս Ա. Թամրազյան, «Մարդու կազմության տեսության վերաիմաստավորումը հայ միջնադարյան մեկնողական ավանդույթի մեջ», էջ 116-131, 278-292, 296-306):

ամենայն»¹⁰²: Եվ նյութական շերտերի այս բարբառներով ասացողը միահյուսվում է քրիստոսաժողով հայրերի աղեկիզյալ օրհնության ձայներին, իսկ ողջ ճառը, ինչպես ամենուր, պսակվում է երկնայինների մշտագվարճ բերկրանքի, անլուելի փառատրությունը պարերգության մեջ¹⁰³: Այս մեկնությունն առհասարակ՝ որ նվիրված է ինքն իրեն նայելու, հոգևոր աչքի բոլոր ներքին-արտաքին հայեցողությունների քննությանը, իր առանձին հատվածների և ամբողջի ավարտին դարձյալ շրջանակվում է ոգեղեն փառաբանության տեսարաններով: Իսկ հոգու ու մարմնի, բոլոր ապրողների ու մահացածների հայեցողության ոլորտում Աստծուն դիմելը փոխակերպվում է կանչի «բազմաբնակ հնարիք, ողբական սաստիկական բանիք, հրաժարական և մերձաւորիչ բանիք և խաւիք ի տուէ և ի գիշերի»¹⁰⁴:

Այսպես արտաքինից ներքին դաշտ անցնելով ձայնը տարակերպվում է զանազան հնարներով հյուսվող հեծեծանքների, ապաշխարանքի ու իթմական հոսքերի՝ իր մեծացող ծավալումներով նորից հեղվելով արտաքին տարածություններում ու իրեն միահյուսելով տիեզերական ահազանգերը: Ամենը տեղադրվում է մարդու մեջ, անցնում-խտանում, քավություն առնում նրա բառահոսքերում, ու մարդու ձայնն էլ վերաճում է տիեզերաղողանջ ծավալների: Սրա ամենավառ օրինակներն են մարմնավորված ողբերգության «Մատեանում»:

Չայնային տարածությունները «Մատեանում». Ռիթմ-ֆալոսոֆիան

Հնչյունային-պատկերային հոսանքների և ռիթմերի կերտման տեսակետից Մատեանն օժտված է ներգործության անհնարին ուժով տիեզերքի ամենախորունկ վայրերից՝ սրտի խորքից հառնող ու նրա ծագերին հասնող-աղաղակող, բախող, հոգու մեջ սուզվող, այնտեղ բանաձև ռիթմերով քավության ընթացք արարող ու հրեշտակային լուսեղեն պարերգության մեջ հեղվող, բռնկվող: Այս ճանապարհին, սրան զուգահեռ հյուսվող հարասությունների, կանխաձայնությունների տատանման ավելի ու ավելի մեծ լայնույթով այս ռիթմերը վերաճում են տիեզերական ասքի, բախում ասացողի քունքերում, դառնում տիեզերական գոնգ: Եվ այս ամենի բնակատեղին «ձայնարկուի» հոգին է:

Այսպես Մատեանի ԼԹ գլխում ձայնային միջավայրը պատկերանում է հրապարակային հեծություն-աղաղակով (ԼԹ. Ա. «Ողորմելի հեծութեամբ թախձեալ ի հոգի, անաշառ խայտառականաւք հրապարակաւ ի յեկեղեցիս բազմութեան ազգաց վերապատմեցից՝ բարձր ձայնիւ, բարբառով մեծաւ աղաղակելով»): Այն արտածվում է տիեզերական բոլոր հառաչանքներն ամփոփող մատյան դարձած մարմնով (ԼԹ. Բ): Սրան միահյուսվում են երկնային ահա-

¹⁰² «Ճառ սրբոյն Գրիգորի Նաբեկացոյ ասացեալ», ՄՇ Ժ, էջ 1042:

¹⁰³ Նույն տեղում, էջ 1072:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 1071:

զանգն ու ժամանակների խորքից արձագանքող, ի ներքուստ անդրադարձող Տյուրոսի դստեր 70-ամյա սպասման կանչը՝ ստեղծելով քառաշերտ հնչողությունը (ԼԹ. Գ, Դ)¹⁰⁵: Այս քնարահարությունը նարեկացին բնորոշում է որպես կատակերգություն, ջնարահարություն, կոծ, քաջ հնչող ողբ ողորմելի և կծեցուցիչ, որ բողոքում էր տեսակ-տեսակ՝ «դիմակս-դիմակս, կերպից-կերպից աւաղականաց («աւաղական»)՝ «ողբական, ցավագին») ըստ կոծողացն կաքաւելոյ»: Մյուս՝ մատյան մարմնի հարասությունը ներհյուսվում է եզեկիելի տեսիլի հիման վրա (եզ. Բ. 8-9, եզեկիելին հրահանգ է տրվում ուսել մագաղաթը, որի վրա ներքևում ու վերևում գրված են ողբեր, աղաղակներ ու վայեր): Նարեկացին պատկերում է ինչպես երգեցողը խոսուն, ողբասացությունների հնչույթները խտացրած մատյանը կլանում-շնչավորում է մարմնում բարդելով սրա բոլոր վայերն ու ձայները («Մատեանս շնչական, բարդեալ ի յինքեան ներքոյ և արտաքոյ ողբս և վայս և ձայնս»): ԼԹ. Բ):

Ողբն այսպես տարակերպվում է արտաքին աղեկոծության, ներքին հեծեծանքների, երկնային ահագանգների և երկրային ոգեկոչումների տիրույթների մեջ: Այսպիսի ծիսական-տարածական գունեղանգներով է վերարթնացվում սրտի խորքից հառնող ձայնը այս գլխում:

Հեծություն, լալյաց երգերը, լալական բանահյուս կանանց եղերական խումբը բազմիցս հիշատակվում են ողբամատյանում. սրանց հետ կապված ամենուր շեշտվում է նախ՝ ողբերը տարատեսակ հյուսելու կանանց հմտությունը, այնուհետև հատկապես՝ ռիթմի, հանգի դերը, տարատեսակ բանաստեղծական չափերի մեջ խոսքը հանդերձավորելու արվեստը, որ, և սա շատ կարևոր է, զորեղացնում է ապաշխարանքի ներգործության ուժը, բերում մաքրագործման: Խոսքի պեսպիսություններն ու հնարանքները ուղեկցում են ողբերի կանչերը, ինքնախարագանումները, «մեղաները», հակառակատիպ-նույնատիպ բառաշղթաներն ու խորհրդապատկերները՝ ստեղծելով խտացող բառազանգվածներ, պատկերային շիկացումներ, ազդեցության ուժը ավելի ու ավելի զորեղացնող հարակրկնություններ, որ դնում են հոգին որոշակի ուղու մեջ (սա միանգամայն գիտակցված օգտագործում է նարեկացին):

Այսպես, Մատեանի ԻԶ գլխում նարեկացին նշում է միանում է լալյաց բանաստեղծություն եղանակող խմբին, որ ըստ ձայնի կողկողանքի հանդերձում են և խոսքի ներդաշնակությունը՝ տների ավարտը նույն գրի բերելով, և սրանով առավել սաստիկ մորմոքելով ճմլեցնում են սրտի ցավակցության, տխրության կիրքը՝ արտասուք բխեցնելով («Ճմլեցուցանեն զաղեստ կարեացն սրտին ըղձից առ արտասուցան բղխմունս»): Նրանց հետ, նրանց հեծությունմբ,

¹⁰⁵ Ըստ Եսայու մարգարեության՝ Տյուրոս ֆաղափի դուստրն իր ֆաղափի կործանումից, 70-ամյա լիովից հետո պետք է քնար վերցնե, շրջե և կոծե՝ նորից ու նորից երգե, պահելու համար նրա հիշատակը, և յոթամասում տարի հետո Տեղը նորից պետք է այցելի Տյուրոսին, և այնտեղ պետք է կատարվի աշխարհի բոլոր թագավորների առևտուրը (Ես. ԻԳ, 15-17):

«աւաղական» ձայնարձակութեամբ տարածում էմ անձիս վշտակրութիւնը (ԻԶ. Ա), «փոխատրում»՝ փոխանակում կոծութիւնը ողբական եղանակների հնարանքների: Այսպես վշտակրութիւնն իր կիզակետում ոգեղենանում, փոխակերպվում է բարձր քերթութեան՝ ռիթմավորված-երգեցիկ խոսքի: Պաթոսի գերագույն լարման, ռիթմի ահագնացող բախումներում այն ստեղծում է քավութեան անկասելի ընթացք: Այստեղ Նարեկացին շեշտում է հանգերի «ի»՝ 20 «խորհրդական» թիվ նշանակող վերջավորութիւնը (ԻԶ. Բ, ԻԶ. Գ):

Ռիթմի ազդեցության և դերի մասին հստակ խոսվում է նաև հաջորդ գլխում, որտեղ, ինչպես Նարեկացին է նշում, ներդաշնակում է թվերի դրութիւնը վերընծայվող ողբաձայն բանաստեղծութիւններին (անվանում է «կական եւ հեծութիւն», «հառաչանք կողկողագինք», «դառնութեան լալումն եւ արտասուաց երգ») և նորից գաղտնածածուկը դարձնելով հայտնաբարբառ, սկսում է պաղատանքների ճառը, «խոստովանարէն, «զղջականաբար», սկզբի և բառերի վերջավորութեան անդրադարձութեամբ նույն համաձևութիւնը դնում հոգեկեցույց խոնարհութեան թախանձանքի մեջ:

Ահա այդ սկզբի և վերջի անդրադարձութիւնը. «Մեղա՛յ մեծիդ բարերարութեան, անարգս մեղայ, Մեղա՛յ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ, Մեղա՛յ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարեւ մեղայ...»: Այս ռիթմավորված դարձերով խոսքն օժտված է նախնական, մաքրագործող զորութեամբ. այսպես այս «մեղայ»-ների բանաձևը Նարեկացին կոչում է «անհերքելի խոսք» («անհերքելի բան»), «կենդանութեան կամուրջ», «անխզելի կապ», «հրաշալի բարբառ», «բաղձալի աղերս», «սրտաբեկ հնչումն», «ձայն բարեպատեհ հրաշալուրական» և այլն:

Առհասարակ Մատեանի բազմաթիվ հատվածներում ողբերգերի հետ են ամենաշատը կապված ձայնի, արտածման տարատեսակ բնորոշումները՝ կականման ձայնի աղիողորմ թշվառութիւն (ժԸ. Ը), ողբական ձայն, հառաչանքներ նվաղ ձայնի (ժԴ. Ա), ողբական «քքվական» (հեծող, փղձկացող) ձայն (ժԸ. Է), գոչում և հեծութիւն (Ի. Ա), ողորմելի ձայնով երգ, շնչափողի մեջ «խոշոր»՝ անհարթ, կոշտ հնչող «աւաղս ձայնից լքուցանողաց» (ԻԶ. Գ), «աղաղակ ձայնի հառաչման լալեաց» (ՀԴ. Բ), անմոռնչ ձայն (ԿԶ. Ա), «արգահատանքով» (աղեկեզ) եղանակում (ՀԳ. Գ), նվաղ հեծութիւն, հեծութեան գոչում (Ի. Ա), նրբական ձայն, ողորմելի ձայնով երգ (ԻԶ. Գ), պաղատանքի հառաչման երգի բարձունքներին աղաղակող հեծեձանքների եղանակներ (ժԲ. Գ) և այլն:

Հեծութեան վերակերտումը, վերացարկումը բարձր քերթութեան, աստվածայինի հետ երկխոսելու պաթոսի աստիճանի հասցված լարման Նարեկացին արտահայտում է տարբեր կերպ՝ որպես հեծութեան ձայնին զվարճախառը երկյուղի միախառնում («եկն եհաս ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուագ ձայնի հեծութեան զուարճախառն երկիւղի») (ՀԷ. Ա), «գոհութիւն խառնեալ ընդ աղերս» (ՂԳ. Թ) և այլն):

Այսպես ձայնը՝ որպես տիեզերական աղաղակում, կանչ, անհնարին կարոտ, ողբ, ահազանգ, ժամանակները ճեղքող մարգարեություն ու նորասացիկ երգ, ձայն՝ բարբառող անապատում, աստվածային ներկայության լուռ, պայծառ ազդարարում, ընդերքներից հառնող ու արարչին վերադարձող հոգևոր շուրթերի պտուղ, որով այն ճամփորդում է հավերժ աստվածաորոնման ուղիներով, հոգու ամենախորունկ լուսություններում արթնացվող նվազ, հեղեղում է նարեկացու քերթվածները: Սրանք ամբողջովին համակված են ձայնի տարատեսակ փոխակերպումների ամենանրբին ու զորեղ համանվագներով. ձայնն ամեն անգամ հառնում է սրտի խորքից ու լուսահեղվում վերին տիրույթներում՝ ամեն անգամ այս ճանապարհին նոր բազմաձայնություններ հավաքելով իր շուրջը: Այն նաև դառնում է կախարդանք քերթողի ձեռքերում՝ ներհոսելով ձայնաոճիմական տարերքի մեջ ու կերտելով քերթվածների հնչող մարմինը:

Եվ ասացողի ոգու բացառիկ ուժը այս լուսեղեն-կենդանի էությունների ստեղծման մեջ է՝ հավերժ կենդանի խոսքի, որ հորդել-ընդգրկել է տիեզերքի բոլոր մասնիկները ծայրեծայր՝ ասացողի ոգու ծավալները տարածելով իր նվագների ողջ լայնույթով: Ու հնչում-վերանկարվում է հարածամ վերին տիրույթներում՝ որպես նախշազարդ տիեզերական տարածություններում, որպես նրա խիղճ, որպես նրա ամենախորունկ պատկեր, որպես երբեք չկորսվող կյանքի կարոտ, որպես սիրո, ոգեկոչման անհնարին բռնկում:

АРУСЯК ТАМРАЗЯН ПРЕОБРАЖЕНИЕ ЗВУКА, МУЗЫКАЛЬНОГО ЗВУЧАНИЯ В ОБРАЗНОЙ СИСТЕМЕ ГРИГОРА НАРЕКАЦИ

Ключевые слова: звуковой образ, звукоподражание, символ-звук, звуковые пространства, Новое духовное песнопение, одушевленный инструмент, плод духовных уст, “душеарфическая” игра, духовные оттенки звуков, космическая мелодия, путешествие-преобразования звука, неиссякаемое песнопение, вечное звучание, катартическая сила ритма, архитектурно-ритмическое, звучащее “тело” стиха.

Христианская экзегетическая традиция проникнута глубочайшим чувством звука, слова, музыки как скрытого бестелесного смысла, звона, возгласа божественного в слоях материи, как вращения и расслоения Логоса. В исследовании представлены образы голоса, музыки, космической арфы и мелодии, красочные описания духовного песнопения в стихах (*tagax*) Григора Нарекаци. Эти яркие, “осязаемые” звукообразы и звукосимволы, живое “звучащее тело” стиха, постепенно раскрываются и воссоздаются в таинственных слоях ритмико-словесной ткани различными способами звуко-

подражания, звуковых сгущений, новых словообразований. В *тагах*, одах и толкованиях Григора Нарекаци отображаются все стороны средневековых представлений о музыке в контексте эстетического и духовного опыта ее освоения; ее онтологическое значение, образ человеческого музыкального инструмента (“перерождение” музыкальных инструментов в одушевленном инструменте Бога; в речепроизводительных органах человека, в голосе, сердце, теле) и т.п. Каждый раз, согласно особому замыслу, Григор Нарекаци пробуждает вселенскую полифонию, что рождается в человеке, переливается в космических пространствах, струится, обволакивает видения духовной средой, звучит в небесных песнопениях и голосах библейских музыкантов-пророков. Развертываясь в нарастающих ритмических, смысло-звуковых пульсациях, она достигает небывалого резонанса вселенной и самых потаенных глубин человеческого бытия.

AROUSSIAK THAMRAZIAN

LES MÉTAMORPHOSES DU SON ET DE LA SONORITÉ MUSICALE DANS LE SYSTÈME D'IMAGES DE GRÉGOIRE DE NAREK

Mots clés : images sonores ; imitations sonores ; symboles sonores ; univers sonores ; Nouveau chant spirituel ; instrument animé ; fruit de lèvres spirituelles ; nuances sonores spirituelles ; mélodie cosmique ; métamorphoses du son ; chant inépuisable ; résonance éternelle ; pouvoir cathartique, purificateur du rythme.

Les exégèses chrétiennes sont profondément imprégnées de la perception de la voix, de la parole et de la musique, en tant qu'émanation et éternel déploiement du Logos universel dans les strates de l'être, en tant que présence du sens immatériel, prolongement de la voix et de l'écho divin dans les sphères matérielles.

La présente étude interroge les images de la voix, de la musique, les métaphores de la harpe et de la mélodie universelles dans les chants de Grégoire de Narek, les caractéristiques vives et éclatantes du chant sacré qu'on relève dans ses écrits.

Ainsi, grâce aux imitations sonores, aux mots composés créés par le poète, grâce aux accumulations sonores naît, se tisse le corps sensible, sonore du poème, se déployant dans les plis mystérieux de la texture rythmique-verbale à travers des myriades d'images et de symboles sonores, dotées d'une présence vive, tangible.

Les chants, les exégèses, les odes de Grégoire de Narek reflètent tous les aspects de la représentation médiévale de la musique dans le contexte

de l'appropriation de l'expérience esthétique et spirituelle de celle-ci. On relève en particulier certains de ces aspects : la signification ontologique de la musique, la représentation de l'homme en tant qu'instrument musical (l'inscription et le réveil des instruments musicaux dans l'instrument animé de Dieu (l'homme), dans ses organes d'élocution, les cordes vocales, le cœur, le corps), etc.

Chaque fois Grégoire de Narek évoque, selon sa propre conception poétique, la polyphonie cosmique. Naissant dans l'homme, celle-ci se verse dans les espaces cosmiques, les emplissant en tant que fond et perspective sonores, s'y inscrivant en arrière-fond pour se mêler à ses

visions, pour s'en emparer, pour retentir en écho dans les chants célestes et les voix des musiciens-prophètes.

Se déployant à travers les structures croissantes rythmiques, sémantiques, sonores, elle atteint à une incroyable résonance de sonorités qui restent ensevelies dans les profondeurs de l'être et de la création divine.

ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՐԱԶՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ՆԱՐԵԿԱՑԻԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԳՐՔԵՐԸ

Հ. Թամրազյանի Գրիգոր Նարեկացիի և Նարեկացիական դպրոցը, գիրք Ա (Երևան, Նաիրի, 2013) և գիրք Բ (2016) հատորները նվիրված են Նարեկյան դպրոցի ներկայացուցիչներ խոսքով Անձևացու, որ Գրիգոր Նարեկացու հայրն էր, Գրիգորի ուսուցիչ ու ազգական Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու մասին կենսագրական տվյալներին ու մեծածավալ գրական ժառանգությունն առնչվող բազմաթիվ հարցերի: Ուրվագծված է նրանց կյանքի և համատեղ գործունեության պատկերը:

Ինչպես Թամրազյանն ինքն է նշում, մենագրությունը նոր փաստերով և վերլուծություններով համալրում է նարեկացիագիտության բնագավառում իր աշխատությունները՝ տասնյակ հետազոտություններ, մենագրություններ, մատենաշարային հատորներ: Դա Նարեկյան դպրոցի երևելի ներկայացուցիչներ խոսքով Անձևացու և Անանիա Նարեկացու կյանքի և ստեղծագործության պատմությունն է: Աշխատությունը կարելի է համարել ներածական ուսումնասիրություն Գրիգոր Նարեկացու ստեղծագործության ուսումնասիրման համար, որը լրացնում է այդ բնագավառում եղած խոշոր բացը:

Ցույց է տրված Նարեկա վանքում (այն կառուցվել է X դ. 30-ական թթ.) Անանիա Նարեկացու հիմնած դպրոցի դերը, որ դարձավ հետագա բարձրագույն դպրոցների և համալսարանների նախատիպը: Թամրազյանի ուսումնասիրությունն լույսի ներքո փոխվել է դպրոցի պատմության պատկերը: Այն ներկայանում է որպես բարձրագույն դպրոց, գիտակրթական մի համակարգ, որի ընդերքում ձևավորվել է բանաստեղծական արվեստի մի զորեղ ճյուղավորում:

Ա գիրքը հիմնականում բնագրագիտական ուղղվածություն ունի: Բանասիրական, հաճախ բառային մակարդակի վերլուծությամբ ճշտվում է նարեկյան դպրոցից ելած երկերի հեղինակային պատկանելիությունը: Հիշենք, որ դրանց թվում եղել են վիճելի ստեղծագործություններ: Օրինակ, որոշ երկեր ձեռագրերում կրում են սոսկ Անանիայի անունը, և դրանք տարբեր հետազոտողների կողմից վերագրվել են նաև մյուս Անանիաներին՝ Շիրակացուն և Սանահնեցուն: Թամրազյանին հաջողվել է բանասիրական նուրբ վերլուծությամբ հստակություն մտցնել այդ խրթին հարցերի մեջ: Նա վերջնականապես ապացուցել է, որ «Սակս բացայայտութեան թուոցն» Անանիա Նարեկացու գործն է, մինչդեռ հայագիտության մեջ այն վերագրվել էր Շիրակացուն:

Բ գիրքը նվիրված է բնագրերի իմաստային վերլուծությանը: Այն սկսվում է մի ուշագրավ պատմական ակնարկով՝ վերնագրված «Ժամանակաշրջանը և

դրա գրական արձագանքները Նարեկյան դպրոցի մատենագրության մեջ»: Այդ գլխից իմանում ենք, որ Խոսրով Անձևացին է այն հեղինակը, որից ամենից շատ ենք տեղեկանում X դարի Հայաստանի իրականության մասին: Մեջբերենք. «Խոսրով Անձևացու նկարագրություններից հառնում է միջնադարյան քաղաքն իր կենցաղով ու անցուդարձով վաճառաշահ փողոցներով, զվարճալիքներով ու շվայտություններ, տոնախմբություններով, փողոցային ներկայացումներով, դերասաններով ու ծաղրածուներով» (էջ 23):

Ինչպես գրականության մեջ տեքստը, բառը և դրանցով արտահայտված գաղափարները սերտորեն ու անբաժան միահյուսված են միմյանց, այնպես էլ Թամրազյանի գրքերում տեսքտաբանական վերլուծությունը հաճախ ուղեկցվում է այս կամ այն երկի գաղափարական քննությամբ, և ընդհակառակը՝ իմաստային վերլուծությունը կառուցվում է բառային հենքի վրա: Ուստի մեր նշած երկու մակարդակի քննությունները փոխներթափանցված են, և նարեկացիագիտական երկու հատորի վերը նշած բաժանումը ինչ-որ առումով պայմանական է:

Հրաչյա Թամրազյանի երկու հատորից առանձնացնենք մի քանի ուշագրավ բացահայտում.

1. Դարի այս նշանավոր գործիչների կյանքի որոշ շրջաններ անցել են եկեղեցական վերին իշխանությունների հետ հակամարտության, հաճախ նաև հալածանքի ու հետապնդման մթնոլորտում: Օրինակ՝ Անանիան ծեր տարիքում մեղադրվում էր թոնդրակեցիության մեջ, կաթողիկոսի հրամանով նրան հեռացրել են Նարեկա վանքից, սակայն հետագայում նա արդարացվել ու ներման է արժանացել և մահից հետո թաղվել Նարեկա Վանքում: Խոսրով Անձևացին, որ պայքարել է եկեղեցական իշխանությունների շարաշահումների դեմ, նաև իր արտահայտած վտանգավոր հայացքների համար բանադրվել է Անանիա Մոկացի կաթողիկոսից: Տեղեկություններ կան, որ աղանդավորության մեջ է մեղադրվել անգամ Գրիգոր Նարեկացին:

2. Նշված երեք հեղինակներից բացի՝ որոշակի առումով Նարեկյան դպրոցի ներկայացուցիչ է նաև Անանիայի աշակերտ պատմիչ Ուխտանեսը, ով իր պատմությունը գրել է նրա հորդորով, նաև հենց նա է Անանիայի մասին տեղեկությունների գլխավոր աղբյուրը: Նրանից նաև իմանում ենք, որ Անանիան նույնպես մի չպահպանված պատմական երկ է հեղինակել, որն Ուխտանեսի համար նմուշ է ծառայել:

3. Խոսրով Անձևացու Ժամակարգության և Պատարագի մեկնությունները մի ամբողջական երկի մասեր են:

4. Հրաչյա Թամրազյանը մատնացույց է արել Անանիա Նարեկացու նորահայտ վարք մի Հայսմավուրբում:

5. Անանիա Նարեկացին ազատորեն օգտվել է անտիկ շրջանի, ինչպես նաև V-VI դդ. ու հետագայի նորպլատոնական-հունաբան դպրոցի գիտական

ժառանգությունից՝ Դավիթ Անհաղթի և հայ քերականների գործերից, շրջանառության մեջ դնելով քերականական-տրամաբանական, փիլիսոփայական և մարդակազմական արժեքավոր գաղափարներ և տեղեկություններ: Նա կրել է նաև Փիլոն Ալեքսանդրացու մեծ ազդեցությունը, որին նա վերահայտնագործել է X դ. և հետագայի հայ մատենագրության համար:

6. Անանիա և Գրիգոր Նարեկացիները ծանոթ էին անտիկ բժշկագիտությանը և տեղեկություններ են հաղորդում, որոնք չկան մինչև X դ. թարգմանված քրիստոնյա հեղինակների մարդակազմական երկերում:

7. Մանրամասն վերլուծված են Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» դավանաբանական երկը և այն ներառող Անանիա Սանահնեցու կազմած «Հակաճառութիւն ընդդէմ Երկաբնակաց» ժողովածուն, ինչպես և այդ երկուսի բարդ հարաբերությունները: Ճշգրտված է Սանահնեցու դերը, որը սահմանափակվում է խմբագրումով, գլխակարգմամբ, համառոտումներով և փոքրիկ հավելումներով:

8. «Հաւատարմատ»-ում Անանիան տրամաբանական վերլուծության է ենթարկել աստվածաբանական դոգմաները, օգտվելով Դավիթ Անհաղթի տրամաբանական հասկացություններից ու եզրերից, նաև դիմելով նրա մշակած հակաճառության մեթոդներին:

9. Յույց է տրված Անանիա Նարեկացու «Ներբողեան ասացեալ ի սուրբն կաթողիկէ եկեղեցի» ճառի ազդեցությունը Գրիգոր Նարեկացու բառապաշարի և պատկերային համակարգի, մասնավորապես նրա երեք ներբողների, ձևավորման վրա: Այդ գործը նախորդել է Գրիգորի ստեղծագործությանը՝ աղբյուր և ազդակ ծառայելով նրա համար: Ներբողը գրվել է մինչև 977 թ., երբ Գրիգոր Նարեկացին գրեց «Երգ երգոց»-ի մեկնությունը:

10. «Անանիա վարդապետ»-ին վերագրված տասնվեց խրատներից իննի համար Թամրազյանը հաստատում է, թե Անանիա Նարեկացու գրչի գործ են, պարզելով նաև նրանց բոլորի պատվիրատուի անունը, որ Անանիայի աշակերտ Խաչիկ եպիսկոպոսն է՝ ապագա Խաչիկ Արշարունի կաթողիկոսը: Ուրեմն, խրատագիրքը կազմվել է մինչև 972 թ., երբ նա կաթողիկոս է ընտրվել: Խրատները նվիրված են միաստիկ կենցաղավարությանը և հոգևոր արվեստներին:

11. Մի խրատ՝ «Յաղագս զղջման և արտասուաց»՝ Անանիան գրել է երիտասարդ Գրիգոր Նարեկացու պատվերով, ինչն ապացուցվում է զանազան ձեռագրերում սփռված տեղեկությունների հմուտ համադրմամբ: Այդ խրատը մեծ դեր է կատարել Մատյանի ստեղծման գործում:

11. Ավելին, մեկ այլ վերլուծությամբ պարզված է, որ «Մատեան ողբերգութեան»-ը Գրիգորը գրել է իր ուսուցիչ Անանիայի հորդորներով և խրատներով:

12. Թամրազյանի կարծիքով Գրիգորն ամբողջացրել է Մաաթյանը 1001-1003 թթ., սակայն այն կառուցվել է հեղինակի ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում: Նրանում բանաստեղծական աղոթքներից զատ կան այլ ժանրի

նմուշներ՝ խրատ, քնարական մենախոսություն, առակ, մեկնություն, ստուգաբանություն, հարասություն, ներբող:

13. Մառյանի որոշ գլուխներ՝ հատկապես վանականներին նվիրված խրատա-քարոզատիպ հատվածները, ընթերցվել են եկեղեցում:

14. Գրիգոր Նարեկացու փիլիսոփայության հիմքում բանական հայեցողությունն է: Մարդն իր բանականությամբ, իմաստասիրությամբ և արարելու ձիրքով համացեղ է ասածուն:

15. Թամրազյանն անդրադարձել է Գրիգոր Նարեկացու «Գանձտետր»-ին, որ գանձերի և տաղերի ժողովածու է, շեշտելով, որ նա այդ ժանրերի ստեղծողն է հոգևոր բանաստեղծության և երաժշտության մեջ:

16. «Ճառ սրբոյն Գրիգոր Նարեկացոյն ասացեալ» երկի իմաստային, նաև բանասիրական, բնագրային մանրակրկիտ վերլուծությամբ ապացուցվել է, որ անցյալում վիճաբանության առիթ եղած այս ճառն իրոք Գրիգորինն է: Հատկապես ուշագրավ են Մառյանի հետ բերվող ինչպես իմաստային, այնպես էլ բառացի զուգահեռները:

17. Թամրազյանը հատուկ կանգ է առել Նարեկյան դպրոցի համար կենսական բառաստեղծական արվեստի վրա, ցույց տալով, որ աղոթքը, բանաստեղծությունն ընկալվել են իբրև անմիջնորդ աստվածաբանություն: Անանիայի ինքնատիպ բառաբարդումներն ու ասոցիատիվ անցումները միանալով շարժունակ տաղաչափությանն ու հնչողությանը, դարձել էին բնագրից բնագիր թափառող պատկերներ և լեզվաոճական կաղապարներ՝ իրար աղերսելով բնագրերը՝ հաճախ աննկատ թափանցելով նաև Գրիգոր Նարեկացու ինքնաբուխ պատկերաշարերի մեջ: Այս բառաշխարհը հետագայում թափանցել է կիլիկյան բանաստեղծական դպրոց:

18. Թամրազյանի ուսումնասիրությունն ընթերցելով սկսում ես հասկանալ, թե ինչ հիմքի վրա, ինչ աղբյուրներից սնվելով է հասունացել Գրիգոր Նարեկացու «Մտեան ողբերգութեան» պոեմի՝ «միջնադարյան գրականության մեջ նախօրինակը չունեցող քերթվածք»-ի (գիրք Բ, էջ 305) ստեղծագործական հղացքը: Օրինակ, Մառյանի երկարաշունչ վերնագիրը, որ ձեռագրից ձեռագիր է անցել, հիշեցնում է Անանիա Նարեկացու ԽՐԱՄԱԳՐԻ մաս կազմող «Յաղագս զղջման և արտասուաց» գրվածքը՝ բանաստեղծական արվեստի իր նորարարական տեսությունը:

19. Գիրքը եզրափակվում է Անանիա Նարեկացու բանաստեղծական արվեստի տեսության և հետագա հեղինակների վրա դրա ազդեցության վերլուծությամբ: Նրանց թվում են Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, Հովհաննես Երզնկացին, Վարդան Այգեկցին, Ֆրիլը և առաջին հերթին՝ մեծն Գրիգոր Նարեկացին:

20. Մասնավոր, բայց շատ ուշագրավ եզրահանգումներից նշենք, օրինակ հետևյալը՝ մինչև X դ. գոյություն է ունեցել էվկլիդեսի ԵՐԿՐԱՇԱՓՈՒՅԱՆ

հայերեն ամբողջական թարգմանություն, քանի որ Անանիա Նարեկացին անդրադարձել է նրանում արժարժված գաղափարներին:

Գրիգոր Նարեկացին և Նարեկացիական դպրոցը երկհատորյակում կան շատ ուրիշ հետաքրքրական փաստեր, ուշագրավ բացահայտումներ և խորաթափանց վերլուծություններ: Զուտ գիտական, փաստերի վրա հիմնված մոտեցումն այստեղ զուգորդված է բանաստեղծին հատուկ նուրբ դիտողականությամբ ու լեզվի զգացողությամբ, լեզվական խաղերի տակ թաքնված խոր իմաստները վերհանելու զարմանալի կարողությամբ: Ամփոփելով նշենք, որ Հրաչյա Թամրազյանը երբեմն վերանայել է նախկինում իր իսկ արտահայտած որոշ տեսակետներ, ինչը վկայում է ինչպես ուսումնասիրվող նյութի բարդության, այնպես էլ այն մասին, որ վերլուծական, բանասիրական աշխատանքը նրա բազմազբաղ ուղեղում մշտական և շարունակական է եղել:

**«ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՅՔ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ,
ԳԱՎԱՆԱՆՔ» (22-24 հունիսի, 2016)
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ**

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Մեծ Հայքի տասնչորսերորդ աշխարհը՝ Տայքը, պատմական երկարատև ուղի է անցել և մշակութային հարուստ ժառանգություն թողել: Սակայն վերջին մոտ մեկ դարի ընթացքում հայ գիտական միտքը գրեթե շրջանցել է այն: Որոշ ուսումնասիրություններ են արվել Տայքի պատմության ոլորտում, իսկ արվեստի և մշակույթի տեսակետից՝ հրատարակվել է միայն Տիրան Մարտիկյանի «Խորագույն Հայք» (1978) աշխատությունը: Հայտնի է, որ Տայքում դեռևս Մամիկոնյանների կառավարման շրջանից տարածված էր քաղկեդոնականությունը: Թերևս դա էր պատճառը, որ նահանգի պատմությունն ու մշակույթը համարվեց ուշադրության և գնահատման չեն արժանացել հայ պատմագիտության մեջ, ինչը խոչընդոտ է հանդիսանում մեր ժամանակներում նոր ուսումնասիրությունների համար: Միևնույն ժամանակ, Խորհրդային Միության և Թուրքիայի հարաբերություններով պայմանավորված՝ նախկինում հնարավոր չէր այցելել Տայք և հուշարձաններն ի մոտո ուսումնասիրել:

Վերջին շրջանում Տայքի հանդեպ մեծացել է վրաց ուսումնասիրողների ուշադրությունը, որոնք, Տայք և Կղարջք նահանգներին տալով Տառ-Կլարջեթի պայմանական անվանումը, Վրաստանում կազմակերպել են «Տառ-Կլարջեթի» խորագրով միջազգային շորս գիտաժողով (2010-2016)՝ հայ մասնակիցների խիստ սահմանափակ թվով:

Վաղուց հասունացել էր Հայաստանում ևս Տայքին նվիրված ծավալուն ուսումնասիրություններ իրականացնելու անհրաժեշտությունը: Այդ ուղղությամբ առաջին քայլը 2016 թվականի հունիսի 22-24-ին Մաշտոցյան Մատենադարանում կայացած «Պատմական Տայք. Պատմություն, մշակույթ, դավանաբանություն» միջազգային գիտաժողովն էր՝ կազմակերպված Մատենադարանի, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի և Բյուզանդագիտության հայկական ազգային կոմիտեի նախաձեռնությամբ: Հունիսի 22-ին Մատենադարանի տնօրեն, գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ Հրաչյա Թամրազյանը և կազմկոմիտեի անդամներ՝ Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Թեո Մաարտըն վան Լինտը, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանն ու Մատենադարանի Հին բնագրերի ուսումնասիրության բաժնի վարիչ Էննա Մանեա Շիրինյանն իրենց ողջունելույթներում անդրադարձան Տայքի պատմության ուսում-

նասիրման հիմնահարցերին, նշեցին վերջինիս դերն Այսրկովկասի, ինչպես նաև Բյուզանդիայի պատմության համար:

Գիտաժողովում շոշափվեցին Տալքի պատմությանը, մշակույթին և դավանաբանությանը առնչվող բազմաթիվ հարցեր, որոնք ուղեկցվեցին բուռն քննարկումներով:

Տալքի հնագույն շրջանի վերաբերյալ հնչեցին հետևյալ զեկուցումները՝ «Տալքը մ.թ.ա. II-I հազարակամյակներում» (Արմեն Պետրոսյան), «Ատրպետը և Տալքի վիշապաքարերի խնդիրը» (Արսեն Բոբոխյան):

Նահանգի պատմությանը նվիրված ելույթներն ընդգրկում էին միջնադարի բոլոր փուլերը՝ «Հայ-բյուզանդական Ռեկոնկիստային գործիչները Փոքր Ասիայում (X-XI դդ.): Տալքի ազնվականությունը» (Վիագա Հարությունովա-Ֆիդանյան, ՌԳ), «Թ. դարի «չկայացած» Հայոց կաթողիկոս Սահակ Մուստ Տալեցին և նրա կանոնախումբը «Կանոնագիրք Հայոց»-ի դասական խմբագրության մեջ» (Ալեքսան Հակոբյան), ««Իբենները» XI դարի բյուզանդական գավառական ազնվականության կազմում» (Վալերի Ստեպանենկո, ՌԳ), «Մամիկոնյանները և Բագրատունիները Տալքում» (Արման Եղիազարյան), «Բագրատունիների հաստատումը Տալքում» (Լիանա Նազարյան), «Տալքի և հարակից գավառների հայությունը Ղրիմում XIV-XV դդ.» (Տաթևիկ Սարգսյան, Ղրիմ), «Տալքի կենտրոնական և արևելյան գավառների ազգային կազմը XVI դարում (ըստ «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ հարկացուցակի»)» (Գեղամ Բագրյան), «Թորթումի գավառի վարչաժողովրդագրական պատկերը (XVI դար- XVII դարի առաջին կես)» (Արկադի Ակոպով):

Բազմազանությամբ առանձնացան ճարտարապետությանն ու արվեստին վերաբերող ելույթները՝ «Կաթողիկոս Ներսես Տալեցին որպես Աստծո տաճարի նոր տիպաբանական կերպարի հեղինակ» (Նազենի Ղարիբյան), «Երուսաղեմի Հարություն տաճարը և Տալքի ճարտարապետության նմանօրինակ կառույցները» (Ելենա Լավրենտևա, ՌԳ), «Բանակի տաճարի վարպետների նշանների հայտնաբերումը և նախնական հետազոտությունը» (Դավիթ Նահատակյան), «Տալք/Տաո. նոր էջ միջնադարյան ճարտարապետության մեջ» (Պատրիկ Տոնապետյան, Ֆրանսիա), «Տալքի միջնադարյան տաճարները և նրանց տեղը Հայաստանի և Վրաստանի ճարտարապետական ավանդույթներում» (Արմեն Ղազարյան, ՌԳ), «Միջնադարյան եկեղեցիները Տալքում (Տալք-Կղարջք) և դրանց աղերսները բյուզանդական ճարտարապետության հետ» (Իոաննա Ստուֆի-Պուլիմենու, Հունաստան), «Անիի, Բյուզանդիայի և Բալկանների IX-XI դարերի կենտրոնագմբեթ բազմախորան կառույցները. համեմատական վերլուծություն» (Սվետլանա Մայցևա, ՌԳ), «Տալքի X-XI դդ. եկեղեցական կառույցների արտաքին հարդարման առանձնահատկությունները» (Եկատերինա Սմիռնովա, ՌԳ), «Տալքի և Անիի եկեղեցիների քանդակային հարդարանքի տարրերը. զեղարվեստական ընդհանրությունները և առանձնահատկությունները» (Դիանա

Գրիգորյան), «Հյուսածո խաչաքանդակները Տայքի X-XI դդ. հուշարձանների հարդարանքում» (Արփինե Ասրյան), «Խախու վանքի գլխավոր եկեղեցու մուտքի քանդակային հարդարանքը» (Զարուհի Հակոբյան), «Կենդանուն ճանկող արծվի պատկերը Տայքի եկեղեցիների քանդակային հարդարանքում» (Եկատերինա Լոշկարեա, ՌԴ), «Էշխանի տաճարի որմնանկարները և X-XI դդ. բյուզանդական արվեստը» (Աննա Զախարովա, ՌԴ), «Տեսիլքների պատկերները Տայք նահանգում» (Մարիա Ռաֆայելա Մեննա, Իտալիա), «Եկեղեցաբանական թեմաները Տայք-Կղարջքի խորանի որմնանկարներում և նրանց զարգացումը Այսրկովկասի XI-XIII դարի սկզբի հուշարձաններում» (Աննա Մակարովա, ՌԴ), «Արգվինի և Արտանուշի հայերի ավանդական մշակույթը (ՌԱԹ-ում գտնվող Պ. Ֆլորենսկու հավաքածուի հիման վրա)» (Լուսինե Ղուլչյան, ՌԴ):

Հնչեցին բնագրագիտությանը նվիրված ելույթներ՝ «Արդյո՞ք Տայքում հայերենից է թարգմանվել Ղունկիանոսի վրացերեն վկայաբանությունը» (Բերնար Ուտիե, Ֆրանսիա), «Մաշտոցյան Մատենադարանի 6200 ձեռագրի բնագրային պատկանելությունը» (Ալբերտ տեն Կատե, Հոլանդիա), «Տայքի Մամրվան երկրում 1665 թվականին ստեղծված ժապավենաձև հմայիլը» (Դավիթ Ղազարյան):

Ներկայացվեցին ելույթներ նվիրված միջնադարյան երաժշտությանը՝ «Ներսես Տայքցի կաթողիկոսը և հայ հոգևոր երգարվեստը» (Աննա Արևշատյան), կրոնա-եկեղեցական խնդիրները՝ «Տայքը Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում» (Ազատ Բողոյան), «Հայերի ներկայությունը Ս. Աթոս լեռան վրա» (Գևորգ Ղազարյան, Հունաստան), «Ուղղափառության խնդիրը. Տայքի եպիսկոպոսությունները հայերի և իբերների միջև» (Բոաննիս Պանայոտոպուլոս, Հունաստան), «Ս. Նինոյի պաշտամունքը Տայք-Կղարջք տարածաշրջանի կնոջ դերի ուսումնասիրության համատեքստում» (Կոռնելիա Հոռն, Գերմանիա), դրամագիտությանը՝ «Դրամաշրջանառությունը Բագրատունիների դարաշրջանի հայկական իշխանապետություններում (750-1064): Մեկ անգամ ևս Դավիթ Կյուրապաղատի դրամի շուրջ» (Ալեքսանդր Հակոբյան, ՌԴ):

Զեկույցներ եղան նաև Տայքի պատմության ուսումնասիրության վերաբերյալ՝ «Դիտարկումներ Ն.Մառի՝ «Արքաուն. Քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ» հոդվածի վերաբերյալ» (Էռնա Մանես Շիրինյան), «Տայքի ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը և խորհրդային գրաքննությունը» (Հարություն Մարության), «Տայքի հուշարձանների այժմյան վիճակը» (Զավեն Սարգսյան՝ ճամփորդական լուսանկարների ցուցադրությամբ):

Գիտաժողովին մասնակցության հայտ էին ներկայացրել վրացի գիտնականներ Նինո Քավթարիան («Խորանների հարդարանքը XI դարի վրացական, հայկական և բյուզանդական ձեռագրերում (Մեստիայի Ավետարանի օրինա-

կով)» և էկա Դուղաշվիլին («Բյուզանդական շարականների հին վրացերեն թարգմանություններն ըստ Տալքի Շարակնոցի»), սակայն նրանք չներկայացան:

Գիտաժողովի առիթով հրատարակվել է ուղղափառ (քաղկեդոնադավան) հայերին նվիրված հիմնաքարային աշխատություններից մեկի՝ Նիկողայոս Մառի «Արքաուն», Քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ» (*Византийский временник, т.12, 660, 1-2, 1905, сс. 1-68*) ուսերեն մեծածավալ հոդվածի հայերեն և ֆրանսերեն թարգմանությունը (Երևան, 2016):

Ներկայումս հրատարակման է պատրաստվում գիտաժողովի նյութերի ժողովածուն: Հեռանկարում ծրագրվում են թեմային նվիրված նոր գիտաժողովներ, ինչը հնարավորություն կտա ավելի ամուր հիմքերի վրա դնել Տալքի և առհասարակ հայ քաղկեդոնականների պատմության և մշակույթի ուսումնասիրությունը:

Գիտաժողովի կազմակերպումը և իրականացումը անհնար կլիներ առանց աջակիցների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի, ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի, «Հայագիտական հետազոտությունների ազգային ընկերության»՝ «Վարդանանց ասպետներ»-ի հետ համակառավարվող կազմակերպության (*The National Association for Armenian Studies and Research-NAASR, the “Knights of Vartan” Fund for Armenian Studies, jointly administered with NAASR*), ինչի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Ստորև ներկայացվում է Տալքին նվիրված գիտաժողովի նյութերից մի փոքր ընտրանի:

Արփինե Ասրյան

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԱՅՔԻ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Տայք, Տայքի ճարտարապետական հուշարձաններ, հայ-վրացական ճարտարապետական առնչակցություններ, Կարսի մարզ, Արդահան, Թուրքիա, Ջանաշիա, Նիկոլայ Տոկարսկի, Տիրան Մարուլյան:

Համառոտ ամփոփում. Հոդվածում անդրադարձ է արված Մեծ Հայքի Տայք աշխարհի միջնադարյան պատմությանը, Հայաստանի առաջին Հանրապետության և Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներին Տայք աշխարհի մաս կազմող Կարսի մարզի պատկանելության հարցին, ինչպես նաև Տայքի ճարտարապետական ժառանգության ուսումնասիրության որոշ հարցերի: Նիկոլայ Տոկարսկու 1946 թ. լույս տեսած «Архитектура древней Армении», ապա և Տիրան Մարուլյանի 1972 թ. լույս տեսած ու անմիջապես ոչնչացված «Տայքի ճարտարապետական հուշարձանները» գրքի, ինչպես և Տայքին նվիրված գլուխներ պարունակող Մարուլյանի մյուս գրքերի ճակատագրերի քննության օրինակով, նաև Մարուլյանի անտիպ հուշերի հիմամբ, դիտարկվում են խորհրդային և խորհրդահայ գրաքննության, այդ գրքերի հետ առնչվող ճարտարապետների մոտեցումները:

Տայքի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությունն ունի շուրջ մեկուկես դարի պատմություն և մաս է կազմում հայ-վրացական ճարտարապետական առնչակցությունների պատմության: Գիտականից զատ այն ունի նաև քաղաքական նշանակություն, ինչը մասնագիտական հրապարակումներում ուղղակիորեն չի շոշափվում, սակայն հարկ եղած դեպքում մեջտեղ է բերվում թե՛ հետազոտողների, թե՛ քաղաքական ու հասարակական գործիչների կողմից: Բանն այն է, որ պաշտամունքային կառույցների (որոնք խորհրդային տարիներին դիտարկվում էին լոկ որպես հուշարձաններ) որոշակի մշակույթի մաս կազմելու գործոնը նշանակալի չափով անդրադարձն է այն իրողության, թե ինչպիսի էթնիկական կազմ ունենա այս կամ այն երկրամասի բնակչությունը քննության առարկա կառույցների ի հայտ գալու ժամանակ, որոշակի առումով նաև հետագա դարաշրջաններում:

Տայքի պարագայում խնդիրը բարդանում է նրանով, որ իր պատմության ինչ-որ հատվածում այդ երկրամասի իշխող վերնախավը, ժամանակ անց՝ նաև բնակչության մի որոշակի հատվածը, ինչ-ինչ պատճառներով գերապատվություն է տալիս քրիստոնեության քաղկեդոնական, կամ, ավելի ճիշտ ձևակերպ-

մամբ՝ ուղղափառ ճյուղին, որն այդ ժամանակներում գերիշխողն էր Բյուզանդական կայսրության մեջ, նաև հարևան վրացական իշխանություններում¹։

Տայոց աշխարհի համար ճակատագրական այդ ժամանակներից շուրջ ութինը դար անց՝ 1877-78 թթ. նրա տարածքի մոտ մեկ երրորդը ներառվում է քրիստոնեական հզոր կայսրության մեջ՝ դառնալով նորաստեղծ Կարսի մարզի (1881 թվականից՝ Արդահանի, Կաղզվանի, Կարսի և Օլթիի օկրուգներ (շրջաններ) վարչատարածքային բաժանումով) մի մասը² (տե՛ս ներդիր, նկ. 1)։ Չնայած Կարսի մարզը պաշտոնապես երևանի նահանգի մաս չէր կազմում, սակայն ընկալվում էր որպես այդպիսին։ Այդ իսկ պատճառով բնավ պատահական չէր, որ անգլիական զինվորական հրամանատարության մի շարք ձեռնարկումների հետևանքով 1919 թ. ապրիլի 23-24-ին Կարսի մարզի մի զգալի հատվածը միացվեց Հայաստանի Հանրապետությանը³ և մայիսից ստացավ Վանանդի նահանգ անվանումը։ Նախկին Կարսի մարզի մաս կազմող հյուսիսային Արդահանն անգլիական-հայկական-վրացական փոխադարձ համաձայնությանը, անցավ Վրաստանին, իսկ Օլթին գործնականում մնաց թուրքերի տիրապետության տակ, թեպետ անգլիացիները, մինչև Կարսի մարզից հեռանալը, մտադիր էին այն միացնել Բաթումի մարզին։ Սակայն Վրաստանի մենշևիկյան կառավարությունը, չբավարարվելով Հյուսիսային Արդահանով, շարունակ ոտնձգություններ էր կատարում Արդահանի շրջանի հարավային հատվածի նկատմամբ⁴։ Շիրակ Թորոսյանի համոզմամբ, դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ հավակնելով Արդահանին, ինչպես նաև նրանից դեպի հարավ-արևմուտք ընկած Օլթիի գավառին և վերջինիս հարող էրզրումի վիլայեթի Թորթում, Սպեր և Բաբերդ գավառներին, Վրաստանը լայն ճակատով դուրս էր գալիս դեպի

¹ Հարցի շուրջ մանրամասն տե՛ս **Н. Я. Март**, «Аркауи, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкидонитах», в кн.: *Н. Я. Март, Кавказский культурный мир и Армения*, составитель и редактор тома **П. М. Мурадян**, Ереван: «Гандзасар» богословский центр, 1995, с. 209-276, **Պ. Մ. Մուրադյան**, ««Պատմութիւն Պղնձէ Բաղաբի» գրույցի հայկական և վրացական պատումների և նրանց փոխհարաբերության շուրջ», *ԲՄ*, 6, 1962, էջ 249-262, **В. А. Арутюнова-Фиданян**, *Армяне-халкидониты на восточных границах Византийской империи (XI в.)*, Ереван, Айастан, 1980, **Տիրան Մարոսյան**, *Հայ դասական ճարտարապետության ակունքներում*, Երևան, «Մուլնի» հրատ., 2003, էջ 238-246: Հարցի ֆինանսումը տե՛ս նաև **Հարոսյան Մարոսյան**, «Տայի հուշարձանների շուրջ. հեռուստատեսային մի թողարկման հետևերով», *Ազգ-Մշակույթ*, 5 մարտի 2011 թ., թիվ 4:

² Տե՛ս «Կարսի մարզ», *ՀՄԷ*, հ. 5, Երևան, 1979, էջ 346, ֆարսեզը՝ էջ 368-ից հետո՝ ներդիրում:

³ **Ք. Հ. Պետրոսյան**, «Կարսի խնդիրը և նրա շուրջ ծավալված պայքարը (1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. ապրիլ)», *Բե՛շ*, 2004, թիվ 3, էջ 34:

⁴ Տե՛ս **Շիրակ Թորոսյան**, «Կարսի մարզի միացումը Հայաստանին և Արդահանի շուրջ հայ-վրացական տարակարծությունների սկզբնավորումը (1919 թ. հունվար-ապրիլ)», *21-րդ դար*, 2016, թիվ 3, էջ 109:

Լազիստան, որ լազ բնակչությանը համարում էր էթնիկ վրացի և ձեռք էր բերում փրկվող Օսմանյան կայսրության Սև ծովին առափնյա մի պատկառելի տարածք՝ Բաթումից գրեթե մինչև Տրապիզոն: Այդ կերպ Վրաստանը Հայաստանին զրկում էր սեփական ծովային ելքի հնարավորությունից, վերջինիս գցում հաղորդակցական (տարանցիկ) լիակատար կախվածության մեջ, ձեռք բերում հսկայական առևտրատնտեսական առավելություններ⁵: Այսպիսով, ինչպես նկատում է հետազոտողը, հայ-վրացական հարաբերություններում Արդահանի գավառի շուրջ ծայր առավ մի նոր հակասություն, որը շարունակվեց մինչև հանրապետությունների կործանումը⁶: 1920 թ. աշնանը Կարսի մարզը օկուպացվեց քեմալական Թուրքիայի կողմից:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ԽՍՀՄ ղեկավարությունը բարձրացրեց Թուրքիայի արևելյան որոշ տարածքներ Խորհրդային Հայաստանին և Խորհրդային Վրաստանին վերադարձնելու հարցը⁷: Ընդ որում, հիմնավորումները հետևյալ բնույթի էին. խնդրո առարկա տարածքները «անարդարացի ձևով էին խլվել Խորհրդային Միությունից»⁸, «Հայերը Խորհրդային Միությունում իրենց նեղված (վիրավորված) են զգում [տարածքային առումով]»⁹, տարածքները Հայաստանին վերադարձնելու պարագայում աշխարհի տարբեր երկրներում բնակվող շուրջ մեկ միլիոն հայերը կկարողանան վերադառնալ հայրենիք¹⁰: 1945 թ. օգոստոսին Պոտսդամի կոնֆերանսում Ստալինի հնչեցրած ձևակերպումում նշվում էր. «...Կարսի շրջանը, որը մինչև պատերազմը [Առաջին համաշխարհային] գտնվում էր Հայաստանի կազմում, և Արդահանի շրջանը, որը մինչև պատերազմը գտնվում էր Վրաստանի կազմում»¹¹:

Նախկին Կարսի մարզի ապագա պատկանելության հարցը տարբեր ձևակերպումներով արծարծվում էր դիվանագիտական տարամակարդակ շփումներ-

⁵ Ծիրակ Թորոսյան, «Արդահանի խնդիրը հայ-վրացական հարաբերություններում (1920 թ. հունվար-օգոստոս)», ԲեՀ. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2014, քիվ 2, էջ 3-4:

⁶ Ծիրակ Թորոսյան, «Կարսի մարզի միացումը Հայաստանին», էջ 109:

⁷ Հարցը հանգամանորեն դիտարկված է մի շարք հրատարակումներում, որոնցից վերջին տարիներին լույս տեսած առավել ամբողջականները հետևյալներն են. Джамилъ Гасанлы, СССР-Турция: от нейтралитета к холодной войне (1939-1953 гг.), Москва: изд-во «Центр Пропаганды», 2008: Գրիսախնե Մելոնյան, ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. Հայկական հարցը, սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947 թթ.), Երևան, Հեղինակային հրատ., 2013:

⁸ “Запись беседы Народного комиссара иностранных дел СССР с Министром иностранных дел Великобритании,” в кн.: Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг. Ред. А. Киракосян, Ереван: изд-во «Тигран Мец», 2010, с. 257.

⁹ Նույն տեղում, էջ 256-257:

¹⁰ Նույն տեղում, էջ 258:

¹¹ Նույն տեղում, էջ 262:

րում, սակայն մեկ-երկու կարևոր, ուղենշային հրապարակումներով այն տեղ է գտնում նաև Վրաստանի ու Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում: Բնութագրական է, որ սկզբից ևեթ այն տարբեր դրսևորումներ ունեցավ երկու հարևան երկրներում:

Հայաստանի և հայկական Սփյուռքի պարագայում, 1945-1947 թթ. գերակշռում էր հարցը խորհրդային ղեկավարությանն ու միջազգային կազմակերպություններին ուղղված դիմումներում (ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար, Ամենայն Հայոց կաթողիկոս)¹², հուշագրերում, խնդրագրերում, ուղերձներում, տեղեկանքներում¹³ և քաղաքական ելույթներում արծարծելու կերպը: Դրանցից միայն մեկի մասին հաղորդագրություն հրապարակվեց «Սովետական Հայաստան» օրաթերթում 1945 թ. հունիսի 13-ի համարի առաջին էջում¹⁴: Այդ հայտարարության մեջ նշվում էր, որ «հասել է ժամանակը, որ թյուրքական տիրապետության տակ տառապող Հայաստանի մասը միացվի Հայկական Սովետական Ռեսպուբլիկային, որը հնարավորություն կտար հայրենիք վերադառնալու մեկուկես միլիոն հայերի, որոնք արտասահմանում են գտնվում թուրքական տիրապետությունից փախչելու հետևանքով»: Պատմական Հայաստանը նկատի ունենալով, մեկ նախագասությունը միայն նշվում էր, որ այդտեղ իրենց հայրենիքում «ապրել են մեր նախահայրերը անհիշելի ժամանակներից ի վեր, և որտեղ մենք ինքներս ենք ապրել մինչև առաջին համաշխարհային պատերազմը»: Կարևոր ուղերձ-ակնարկ էր պարունակվում նաև հետևյալ տողերում. «Թյուրքական տիրապետության տակ այս կամ այն ժամանակ գտնված քրիստոնյա բոլոր ժողովուրդներից միայն հայերն են, որ իրենց հարազատ հողերը դեռ չեն ազատագրել Թյուրքիայից»:

¹² Յանկը (1946 թ. փետրվարի 23-ի դրությամբ) տե՛ս Բետկյալ փաստաթղթում. «Справка НКВД Армянской ССР «Обращения зарубежных армянских организаций к руководителям великих держав и конференций Объединенных Наций по вопросу присоединения армянских земель в Турции к Советской Армении»,» в кн.: *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.*, с. 90-94: Յանկի վերլուծությունը (1946 թ. մայիսի 13-ի դրությամբ) տե՛ս նույն տեղում, էջ 153-162: Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության առթիվ էջմիածնում 1945 թ. հունիսին հրավիրված Ազգային եկեղեցական ժողովի դիմումը Ստալինին տե՛ս **Գաբրիել Լազեան**, *Հայաստան եւ Հայ դատը հայ և ուրա յարաբերութիւններու լոյսին տակ*, Երևան, «Արամա» հրատ., 1991, էջ 349-353:

¹³ Տե՛ս «Докладная записка Министра иностранных дел Армянской ССР С. К. Карапетяна заместителю министра иностранных дел СССР С. И. Кавтарадзе «О бывших армянских территориях, отошедших к Турции и о возможностях возвращения на родину армян, проживающих за рубежом»,» в кн.: *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.*, с. 63-90: Տե՛ս նաև **Քրիստինե Մելոնյան**, *ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները*, էջ141-164:

¹⁴ ««Ամերիկայի հայ ազգային խորհրդի» դեկլարացիան», *Սովետական Հայաստան*, 13 հունիսի 1945 թ., թիվ 118:

Սպասվելիք հայրենադարձության գործոնով էր հիմնավորում հայկական տարածքների վերադարձի անհրաժեշտությունը նաև Հայաստանի կուսակցական ղեկավարը, ով բարձրաձայնեց (հանրայնացրեց) խնդիրը միայն մեկ անգամ, 1946 թ. փետրվարի 1-ին, երևանում, և այն էլ նախընտրական կամպանիայի շրջանակներում արտասանված ճառում, որը երկու օր անց հրատարակվեց «Սովետական Հայաստան» և «Коммунист» օրաթերթերում, այսինքն՝ տեղական, հանրապետական մամուլում¹⁵: Պահանջի ձևակերպումները հետևյալ բնույթի էին. «... Արտասահմանյան հայերի թիվը մոտ մեկ միլիոն է: Իհարկե, մենք բոլորին չենք կարողանա ընդունել Հայաստանի ներկայիս տերիտորիայում: Ամենաուշագիր հաշվարկումով... մենք առաջիկա տարիներում Հայաստանի ներկայիս տերիտորիայում կարող ենք ընդունել մաքսիմում 350-400 հազար մարդ: Այնինչ ցանկացողները շատ ավելի շատ են: Մենք ինչպես պետք է վարվենք մնացածների հետ: Մնացած 500-600 հազար հայերին ընդունելու համար, մենք հարց ենք դնում, որ Սովետական Հայաստանին վերադարձվեն Թյուրքիայի կողմից զավթված հայկական մարզերը [ընդգծումը մերն է – Հ. Մ.]», «Թյուրքիայի կողմից բռնի կերպով զավթված այդ [Ղարսի և Արգահանի օկրուգները] և մյուս հայկական մարզերը վերադարձնելու վերաբերյալ հայերի պահանջը արդարացի պահանջ է», «Եվ միայն դրանից [օրինական պահանջների բավարարումից] հետո մենք կարող կլինենք հայտարարել, որ պայմաններ ենք ստեղծել արտասահմանում գտնվող և իր ժամանակին իր հայրենի հարազատ հողերից Թյուրքիայի կողմից վտարված բոլոր հայերին վերադարձնելու համար»: Հայկոմկուսի ղեկավարն իր խոսքում անդրադառնում է նաև XX դարասկզբի իրադարձություններին, քննարկելով Թյուրքիայի վարչապետ Սարաջօղլուի հայտարարությունը մամուլի համար, ուր շոշափվում էր

¹⁵ «Պիոթյան Սովետի երևանի ընտրական օկրուգի ընտրողների ժողովը: Ընկ. Գր. Հարությունյանի հաղթից», *Սովետական Հայաստան*, 3 փետրվարի 1946 թ., թիվ 29: «Общее собрание избирателей Ереванского избирательного округа. Из речи тов. Арутюняна Гр. А.», *Коммунист*, 3 февраля 1946 г., № 29: ճառին անդրադարձ եղավ նաև «Պրավդայում», սակայն երկրորդ էջի ստորին ձախ անկյունում, այսինքն՝ ամենաչերևացող տեղերից մեկում, իսկ մեզ հետաքրքրող հարցը շոշափված էր ընդամենը մեկ նախադասությամբ. “Весь армянский народ ставит вопрос о возвращении Советской Армении армянских земель, насильственно захваченных Турцией” («Ողջ հայ ժողովուրդը հարց է բարձրացնում՝ Թուրքիայի բռնագրաված հայկական տարածքները հորհրդային Հայաստանին վերադարձնելու մասին», տե՛ս “В столице Армении,” *Правда*, 5 февраля 1946 г.: Քիչ ավելի շատ մակերես էր նվիրված, սակայն նույնպես չերևացող տեղում (երրորդ էջի ստորին ձախ անկյունում) Հայկ. ԽՍՀ ԳԱ. թղթակից-անդամ Ալեքսեյ Զիվեյեգովի Մոսկվայում, ԽՍՀՄ Ժողովուրդին կից գործող բարձրագույն դպրոցների կոմիտեի լեկցիոն դահլիճում կարդացած հրապարակային դասախոսությամբ, որը վերնագրված էր «Հայաստան և Թուրքիա»: Հրապարակման մեջ Հայաստանին իր պատմական հողերի վերադարձի անհրաժեշտությունը կրկին պայմանավորվում էր հայրենադարձության գործոնով: Տե՛ս “Армения и Турция,” *Правда*, 22 февраля 1946 г.:

1918 թ. իրադարձությունների գնահատականը (այդ թվում այսպես կոչված «հանրաքվեն» Կարսում և Արդահանում), նշում է Թյուրքահայաստանի մասին դեկրետը, նաև Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, հրեթացս «շնորհակալության խորին զգացմունքն» է հայտնում «հայ ժողովրդի փրկարար Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին», նշում է «ռուսները որպես հայ ժողովրդի իսկական բարեկամներ» հանգամանքը, և այլն: Իր խոսքի ավարտական մասում Գրիգոր Հարությունյանն ասում է. «Հայ ժողովուրդը, որն այնպես ակտիվորեն մասնակցել է Թյուրք կառավարության ագրեսիայի դեմ մղվող պատերազմներին, հայ ժողովուրդը, որն այնպես արիաբար մարտնչել է Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ, հավատացած է, որ նրա արդարացի պահանջները այս անգամ արդեն կբավարարվեն: Սովետական Միության ժողովուրդների պաշտպանությամբ, Միութենական կառավարության պաշտպանությամբ, մենք կհասնենք մեր օրինական պահանջների բավարարմանը»:

Վրաստանի պարագայում որդեգրվեց այլ մոտեցում: 1945 թ. ամռանը հանրապետության կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար Կանդիդ Չարկվիանին հարցը քննարկեց հանրապետության ղեկավարության հետ, ինչից հետո գիտական հաստատությունների առջև խնդիր դրվեց պատրաստել պատմաազգագրական ու աշխարհագրական տեղեկանք, որտեղ կհիմնավորվեր Բաթումի օկրուգի հարավային հատվածի, Արդվինի, Արդահանի և Օլթիի շրջանների բացարձակ պատկանելությունը վրաց ժողովրդին: Դրանից հետո Վրացական ԽՍՀ արտաքին գործերի նախարար Գեորգի Կիկնաձեն նամակով դիմում է ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմ Լավրենտի Բերիային, ապա և ինքն է մեկնում Մոսկվա: Վրացական կողմի նամակում նաև բողոք էր հայտնվում, որ Հայաստանի ներկայացրած տեղեկանքի հիման վրա ԽՍՀՄ փոխարտգործնախարարի կազմած տեղեկանքում Արդահանի և Օլթիի շրջանները նախատեսվում է միավորել Հայաստանին¹⁶: 1945 թ. սեպտեմբերի 4-ին Գ. Կիկնաձեն յոթ կետից բաղկացած մեկ այլ տեղեկանք (“К вопросу о грузинских территориях, включенных в состав Турция”) է ներկայացնում ԽՍՀՄ արտգործնախարար Վյաչեսլավ Մոլոտովին և երկու փոխարտգործնախարարներին՝ Անդրեյ Վիշինսկուն ու Վլադիմիր Գեկանոզովին: Դրանում առաջարկվում էր Վրաց. ԽՍՀ-ին միացնել նախկին Բաթումի օկրուգի հարավային մասը, Արդահանի, Արդվինի և Օլթիի օկրուգները¹⁷: Այդ տեղեկանքին կցվում էր 14-էջանոց մեկ այլ տեղեկանք (վերնագրված “Об отторгнутых Турцией грузинских провинциях”), կազմված ակադեմիկոս Սիմոն Զանաշիայի (որը Վրացական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի

¹⁶ Մանգամասն տե՛ս Джамиль Гасанлы, СССР-Турция: от нейтралитета к холодной войне, с. 267-268:

¹⁷ Նույն տեղում, էջ 269:

փոխնախագահն էր) կողմից: Սրա պատմական մասը, կարելի է ասել, նույնական էր ստորև դիտարկվող երկու վրաց ակադեմիկոսների նամակի հետ¹⁸:

Հայաստանի ու Վրաստանի հանրության համար փակ այս անցուդարձին հետևում է որակապես այլ քայլ՝ խնդրի հանրայնացում (սակայն միանգամայն տարբեր կերպ) թե՛ Վրաստանի, թե՛ ԽՍՀՄ մակարդակով: 1945 թ. դեկտեմբերի 14-ին, ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարների մոսկովյան հանդիպումից (դեկտ. 16-26) երկու օր առաջ Թբիլիսիի «Կոմունիստ» թերթում վրացերեն հրատարակվում է ակադեմիկոսներ Ս. Զանաշիայի և Ն. Բերձենիշվիլու նամակը «Թուրքիայի նկատմամբ ունեցած մեր օրինական պահանջների մասին» վերտառությամբ¹⁹, որը դեկտեմբերի 20-ին թարգմանվում ու հրատարակվում է ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի, ԽՍՀՄ աշխատավորների պատգամավորների խորհուրդների և Կարմիր բանակի բազմամիլիոն տպաքանակ ունեցող մամուլի պաշտոնական օրգաններում՝ «Պրավդա», «Իզվեստիա» և «Կրասնայա Զվեզդա»: «Պրավդայի» պարագայում այն գրավում էր երկրորդ էջի շուրջ երեք քառորդը²⁰: Հոդվածն ամբողջությամբ հեռարձակվում է Մոսկվայի ռադիոյով²¹: Ընդարձակ նամակ-հոդվածում հեղինակները հանգամանալի էքսկուրս են կատարում պատմության խորքերը (հասնելով մինչև մ.թ.ա. II հազարամյակ)²², և պատմականից զատ նաև ազգագրական, քաղաքական, մշա-

¹⁸ Նույն տեղում, էջ 270-273:

¹⁹ Այդ մասին ընթերցողներին տեղեկացվում է «Պրավդայում» տպագրված հոդվածի ներածական պարզաբանման մեջ. «В тбилисской грузинской республиканской газете «Коммунисти» 14 декабря опубликовано письмо в редакцию академиков Джанашиа и Бердзенишвили под заголовком «О наших законных претензиях к Турции». Ниже приводится перевод этого письма» («Թբիլիսիի հանրապետական վրացերեն Կոմունիստ թերթի դեկտեմբերի 14-ի համարում հրատարակվել է ակադեմիկոսներ Զանաշիայի և Բերձենիշվիլու «Թուրքիայից մեր օրինական պահանջների մասին» վերտառությամբ նամակը: Ստորև բերվում է այդ նամակի թարգմանությունը»), *Правда*, 20 декабря 1945 г., № 301: Բնութագրական է, որ արտգործնախարարների այդ հանդիպման առթիվ բացակայում է որևէ արձագանք Հայաստանից, փոխարենն առկա են երկու հեռագրեր ԱՄՆ-ից, որոնք, ի տարբերություն մամուլի հրատարակման՝ չեն ունեցել հանրային դրսևորում խորհրդային ֆալսֆալսիների համար: Տեխստերը տե՛ս «Телеграммы Армянского Национального Совета в Америке и Американского Комитета за справедливое отношение к Армении Советскому Министров Иностраных Дел в Москве», в кн.: *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.*, с. 183-184.

²⁰ **С. Джанашиа**, доктор исторических наук, действительный член Академии наук Грузинской ССР, **Н. Бердзенишвили**, действительный член Академии наук Грузинской ССР, «Письмо в редакцию газеты «Коммунисти» о наших законных требованиях к Турции», *Правда*, 20 декабря 1945 г., № 301.

²¹ Տե՛ս **Джамиль Гасанлы**, *СССР-Турция: от нейтралитета к холодной войне*, с. 315.

²² Հրնթացս (բայց ոչ ի միջի այլոց) նշվում էր, որ X դարում վրացական տիրապետության տակ են եղել Կարինը, Հարբը, Ապահունիքը, Դերշանը, Տարոնը, Մանազկետը, որ Վրաստանի հարավային սահմանը հասնում էր Վանա լիճ և այլն:

կուլթային ու այլ տվյալներով «հիմնավորում» են իրենց պահանջները Վրաստանի տարածքի մաս կազմող, Թուրքիայի կողմից «1920 թ. վերջին – 1921 թ. սկզբին բռնազավթված Արդահանի, Օլթիի, Արզվինի օկրուգների և Բաթումի օկրուգի հարավային մասի, ինչպես նաև ավելի վաղ գրավված բնիկ վրացական հողերի նկատմամբ»: Նամակում բազմիցս, որպես Հարավային Վրաստանի մաս, հիշատակվում է Տաօ-Կլարջեթին (Տալք-Կղարջքը): Բնութագրական է, որ «յուրահատուկ վրացական ճարտարապետության փայլուն հուշարձանների» շարքում հիշատակվում էին (վրացական տառադարձությամբ) 12 հոգևոր կառույցներ, որոնցից 5-ը Տալքում էին (Բանակ, Խախու, Օշկ, Իշխան²³, Փանասկերտ), Շատբերդն էլ հայկական եկեղեցիներ ունեցող ամրոց-բնակավայր էր Կղարջքում: Նամակ-հոդվածի վերջնամասում վրացի գիտնականները հայտարարում են, որ «Վրաց ժողովուրդը պետք է հետ ստանա իր հողերը, որոնցից նա երբեք չի հրաժարվել և չի էլ կարող հրաժարվել: Մենք նկատի ունենք Արդահանի, Արզվինի, Օլթիի, Թուրթումի, Իսպիրի [Սպերի], Բայբուրթի, Գյումուշ[խ]անեի, Արևելյան Լազիստանի (ներառյալ Տրապիզոնի և Կերասունի) շրջանները, այսինքն՝ [որոնք] Վրաստանից խլված հողերի մեկ մասն են միայն»²⁴: Այսպիսով, առանց Կարսի անունը տալու, այստեղ հիշատակվում են Կարսի մարզի մաս կազմող շրջանները՝ Արդահան և Օլթի:

Այս փաստաթուղթն իր գիտական «հիմնավորվածությամբ» և պաթոսով բնավ համադրելի չէ երկուսուկես ամիս անց հնչած կուսակցական-քաղաքական գործիչ Գրիգոր Հարությունյանի վերը հիշատակված ճառի առանձին դրվագների հետ: Սա շատ ավելի ուժեղ, ավելի հզոր և ազդեցիկ տեքստ է: Եվ

²³ Պետք է նկատել, որ Օշկվանք, Խախու և Իշխան տաճարները 1878 թ. Բեռլինի պայմանագրով մնացել են Օսմանյան Թուրքիայի կազմում, այսինքն՝ Կարսի մարզի մաս չէին կազմում: Տե՛ս Արկադի Ակոպով, «Օլթիի օկրուգի վարչաժողովրդագրական նկարագիրը 1878-1897 թթ.», Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու, քիվ 12, խմբ. խորհուրդ Ա. Մեթոնյան և ուրիշներ, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, էջ 208-209:

²⁴ Հասկանալի է, որ այս պահանջները ներկայացվել են Ստալինի գիտությամբ, քանի որ առանց նրա թույլտվության ոչ ոք չէր համարձակվի նման բովանդակությամբ հոդված տպագրել: Տե՛ս Քրիստինե Մեյֆոնյան, *ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները*, էջ 87: Անուղղակիորեն դա է հաստատում նաև 1945 թ. հոկտեմբերին նույն ակադեմիկոսների՝ Ստալինի հետ հանդիպման փաստը, որի ժամանակ կայացած զրույցները հանգամանալի ներկայացված են Նիկո Բերձենիշվիլու վերջերս ռուսերեն թարգմանված և հանրությանը մատչելի դարձած հուշերի մի դրվագում: Զրույցներում մեծ տեղ է հատկացվել Վրաստանի և տարածաշրջանի պատմության և, փաստորեն, Ստալինի ուղղակի ցուցումներով ձևավորվող պատմաշինարարության հարցերին: Մանրամասն տե՛ս «Сталин, безусловно, был грузинским патриотом...», <http://politforumi.com/rus/1044/niko-berdzenishvili-stumrad-stalintan.html> (22.12.2011); <http://www.kavkazoved.info/news/2012/11/28/berdzenishvili-stalin-bezuslovno-byil-gruzinskim-patriotom.html> (28.11.2012) □ Վերոնշյալ աղբյուրը հուշելու և ֆննարկումների համար շնորհակալություն եմ հայտնում Հարություն Խուրանյանին:

որ պակաս կարևոր չէ ստորագրված է գիտնական-ակադեմիկոսների կողմից: Հայաստանի ղեկավարի խոսքում պատմական հիմնավորման փորձ անգամ չկա՝ մի քանի բառերից ու կիսատ արտահայտություններից զատ²⁵ և շեշտը դրված է գերազանցապես հայրենագարձության գործոնի վրա, որը չի կարող կենսագործվել առանց լրացուցիչ հողերի, մինչդեռ վրաց պարագայում շեշտադրումը լրիվ այլ է՝ այս հողերը պետք է մե՛զ (վրացիներին) վերագարձվեն, քանի որ դրանք հազարամյակներ շարունակ մե՛րն են եղել: Եվ խոսք անգամ չկա ո՛չ ուուս, ո՛չ ԽՍՀՄ ժողովուրդների օժանդակության մասին, ո՛չ էլ հույսեր են կապվում ԽՍՀՄ կառավարության հետ: Հեղինակների վստահությունը՝ ըստ տեքստի, գալիս է միայն ու միայն իրենց խնդրի արդարացիության գիտակցումից: Սա իսկական պահանջատիրական տեքստ է, որին անմիջապես տեղյակ դարձավ ողջ աշխարհը²⁶:

Եթե մինչ այս հրապարակումները Տայքի և նրա ճարտարապետական ժառանգության խնդիրը քննարկվում էր մասնագիտական համեմատաբար նեղ շրջանակներում (Բաքրաձե-Միքելաձե, Թաղաջվիլի, Մառ, Չուբինաշվիլի)²⁷, ապա վրացալեզու և ռուսալեզու այս հոդվածների շնորհիվ այն դարձավ լայն զանգվածներին հուզող քաղաքական հարց²⁸: Ուզում եմ հատուկ շեշտել՝

²⁵ Ձի բացատրվում, որ պատմական հիմնավորման բացակայությունը պայմանավորված էր արդեն իսկ դրա առկայությամբ «Պրավդայում» և հակառակ, կամ, համեմայն դեպս, վիճարկվող թեզեր առաջ քաշելը կնշանակեր հակառակվել երկրի բարձրագույն ղեկավարին: Միաժամանակ պետք է նշել, որ խորհային պատմական հիմնավորումը գրեթե իսպառ բացակայում էր նաև թիվ 13 ծանոթագրության մեջ հիշված Հայկական ԽՍՀ արտաքին գործերի նախարար Սահակ Կարապետյանի ներկայացրած տեղեկանքում:

²⁶ «Նամակին» աշխարհի արձագանքների մասին տե՛ս Джамиль Гасанлы, СССР-Турция: от нейтралитета к холодной войне, с. 321, 328-336:

²⁷ Д. З. Бакрадзе, Статьи по истории и древностям Грузии, СПб., 1887. Приложение к LV-му тому Записок императорской Академии наук, № 1; Н. Я. Марр, “Аркаул, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкидонитах”; Его же, “Введение,” в кн.: Георгий Мерчул, Житие св. Григория Хандзтийского. Грузинский текст. Введение, издание, перевод Н. Марра. СПб., 1911; Его же, Батум, Ардаган, Карс: исторический узел межнациональных отношений Кавказа, Петроград, 1922; Е. Такайшвили, Источники грузинских летописей. Три хроники, Тифлис, 1900; Его же, “Бана,” в кн.: Материалы по археологии Кавказа, собранные экспедициями Императорского Московского Археологического Общества, вып. XII, под ред. графини Уваровой. Москва, 1909, с. 88-117; Его же, Альбом древнегрузинской архитектуры, Тбилиси, 1924 (на груз. яз.); Его же, Археологическая экспедиция в Кола-Олтиси и Чанглы в 1907 г., Париж, 1938 (на груз. яз.); Г. Н. Чубинашвили, История грузинского искусства, т. 1. Тбилиси, 1936 (на груз. яз.); Г. Н. Чубинашвили, Н. П. Северов, Пути грузинской архитектуры, Тбилиси, 1936.

²⁸ Հանում արդարության պետք է նկատել, որ Տայքի պատմությանն ու որոշ հուշարձաններին նվիրված ֆննարկումներում և ուսումնասիրություններում այդ երկրամասը որպես վրացական տարածք դիտարկելու փորձեր եղել են մինչև 1945 թ. «Պրավդայի» հրատար-

Խորհրդային Միությունում Տալքի հարցն առաջին անգամ հրապարակայնորեն քաղաքականացվեց Վրաստանի գիտական հանրության կողմից (պետական-կուսակցական ղեկավարության պատվերի պայմաններում)²⁹: Անկախ այն հանգամանքից, որ (մեր գնահատմամբ) «Պրավդայում» հրատարակված հոդվածը կառուցված էր կեղծ գիտական հիմքերի վրա, սակայն աստիճանաբար Տալքի (վրացական ձևակերպմամբ՝ Տաօ-Կլարջեթի) հարցը դարձավ նաև Վրաստանի ժողովրդի ազգային ինքնության մաս: Միևնույն ժամանակ «Պրավդայի» հրապարակմամբ նրա բազմամիլիոն ընթերցողների՝ այսինքն խորհրդային քաղաքացիների մեջ հնարավորություն ստեղծվեց ամրագրելու այն գաղափարը, որ Թուրքիան Վրաստանից է հողեր գրավել և պարտավոր է Վրաստանին հողեր վերադարձնել³⁰: Հայաստանի անունն այս համատեքստում չէր շոշափվում:

Եվ այս հետնախորքի վրա հանկարծ՝ 1946 թ. երևանում, Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահության և Ակադեմիայի պրեզիդենտ Հովսեփ Օրբելու որոշմամբ ու խմբագրությամբ հրատարակվում է Ն. Մ. Տոկարսկու «Архитектура древней Армении» ծավալուն՝ շուրջ 400 էջ ու 165 լուսանկարներով ու գծագրերով, 4.000 օրինակ տպաքանակով աշխատությունը: Հեղինակն անդրադառնում է նաև հայ-վրացական ճարտարապետա-

րակումը վերը հիշված Քաղայշվիլու և Չուբինաշվիլու աշխատություններում: Սակայն մի բան է դրա մասին պարզապես նշելը, մեկ այլ բան, երբ այն դառնում է ազգային հայեցակարգի բաղկացուցիչ մաս: Տե՛ս, մասնավորապես, Ս. Միքելանձեի/Գ. Բաբրանձեի երկյոր և Ե. Քաղայշվիլու աշխատությունը: Տե՛ս *Труды V Археологического съезда в Тифлисе*, под ред. граф. *Уваровой*, Москва, 1887, с. LXXXVIII-LXXXIX; *Е. Такайшвили, Археологическая экспедиция 1917-го года в южные провинции Грузии*, Тбилиси: изд-во АН Грузинской ССР, 1952 (գրքի խմբագիր Ա. Շանիձեն առաջին իսկ էջում նշում է, որ աշխատությունը շարադրվել է 1953 թ.-ից 35 տարի առաջ, այն է՝ 1918 թ.):

²⁹ Վրաց ակադեմիկոսների ներկայացրած տարածային պահանջները կրկնվեցին ուղիղ երկու ամիս անց (Գրիգոր Հարությունյանի խոսքից՝ երեք շաբաթ հետո) Վրացական ԽՍՀ կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության կենտկոմի առաջին ֆուրտուլար Կանդիդ Չարկվիանիի խոսքում. «Но остается неосуществленной одна вековая мечта грузинского народа: восстановление территориальной целостности Грузии. Вне ее границ все еще остаются исконные грузинские земли, районы Артаана (Ардагана), Артвини, Ольты, Тортума, Байбурга, Испира, Гюмюшханэ, Лазистан. Поэтому понятны настойчивые требования грузинской советской общественности о возвращении Грузии отторгнутых от нашей Родины территорий, являющихся колыбелью культуры и государственности грузинского народа,» տե՛ս Կ. Չարկուանի, «25-летие Советской Грузии,» *Правда*, 25 февраля 1946 г.: «Նամակի» պատվեր լինելու հանգամանքը շեշտվում է նաև Ջ. Հասանլիի աշխատությունում, տե՛ս *Джамиль Гасанлы, СССР-Турция: от нейтралитета к холодной войне*, с. 316-317:

³⁰ Արդեն իսկ 1949 թ. վրաց գրող Իլյա Մոսաշվիլին հեղինակում է «Ջրասույզ արված ֆուրեր» («Потопленные камни») վերնագրով պիես, նվիրված Թուրքիայի կողմից Վրաստանից խլված հողերում վրացիների մղած ազատագրական պայքարին: Այդ պիեսի համար հեղինակը 1951 թ. արժանացավ ստալինյան մրցանակի (երկրորդ աստիճան), իսկ գլխավոր դերակատար Ակակի Խոռավան արժանացավ նույն մրցանակի երրորդ աստիճանին:

կան առնչություններին ու դրանով չբավարարվելով, «համարձակվում է» 15 էջ նվիրել Տայքի X դարի ճարտարապետական դպրոցին՝ հոգևոր կառույցների մեջ հիմնականում տեսնելով հայ ճարտարապետության դրսևորումներ³¹ և առաջին իսկ պարբերության մեջ նշելով, որ բնակչության հիմնական զանգվածը կազմում էին քաղկեդոնականություն ընդունած հայերը³² :

Վրաց մասնագիտական (թերևս նաև քաղաքական) շրջանակներում Ն. Տոկարսկու գրքի Տայքին վերաբերող հատվածն առաջին հերթին ընկալվում է իբրև ոստնձգություն «իրենց» տարածքների նկատմամբ: Եվ պատասխանը չի ուշանում: Սակայն այն որակապես տարբերվում էր քննության ենթակա աշխատությունից արդեն իսկ իր վերնագրով. 1947 թ. առանձին գրքուկի (53 էջ, 5.000 տպաքանակով) ձևով Թբիլիսիում լույս է տեսնում ակադ. Ջանաշիայի «Պատմական ճշմարտության խեղաթյուրման մի օրինակի մասին: Ն. Տոկարսկու «Հին Հայաստանի ճարտարապետությունը» գրքի առթիվ» ռուսալեզու աշխատությունը³³: Ակադեմիկոսի՝ Ն. Տոկարսկու գրքին տրվող և անթաքույց կոպտություններ աչքի ընկնող որակումները («պատմության լիկվիդատոր» և այլն) խիստ բնութագրական էին ժամանակաշրջանին: Ընդ որում, գրքուկի էջերի ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 80%-ը (էջ 11-53), նվիրված էր Ն. Տոկարսկու աշխատության 15 էջանոց Տայքի հատվածի քննությանը, ավելի ճիշտ՝ մերժմանը³⁴ : Ինչու՞: Թերևս այն պատճառով, որ, ինչպես անթաքույց գրում է «քննադատության» հեղինակը, «[Տոկարսկու] Գրքի «մեխը» փորձ է ամբողջ հարավային Վրաստանը, իր բնակչությամբ և մշակույթով ներկայաց-

³¹ **Н. М. Токарский**, “Тайкская архитектурная школа X в.,” в кн.: **Н. М. Токарский**, *Архитектура древней Армении*, Ереван: изд-во АН Армянской ССР, 1946, с. 200-214: Ն. Տոկարսկու գիրքը՝ լրացված և վերախմբագրված, վերահրատարակվեց 15 տարի անց, սակայն առանց Տայքին նվիրված գլխի: Տե՛ս. **Н. М. Токарский**, *Архитектура Армении IV-XIV веков*, Ереван: Армгосиздат, 1961: Այդ մեկնագրության համար 1962 թ. նա ստացավ արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: Թերևս 1970-ական թթ. առաջին կեսին էր, որ նա շարադրեց Տայքի հարտարապետությանը նվիրված իր աշխատությունը (68 էջ տեխտ, 73 լուսանկար և գծագիր), որը լույս տեսավ նրա մահվանից հետո միայն: Տե՛ս **Н. М. Токарский**, *Из истории средневекового строительства в Тайкском княжестве*, отв. ред. **М. М. Асратян**, Ереван: изд-во «Айастан», 1988.

³² Դա հնչում էր հետևյալ կերպ. «Основную массу населения составляли армяне, бывшие здесь исконными приверженцами халкидонитства [...]», **Н. М. Токарский**, *Архитектура древней Армении*, с. 200.

³³ **Акад. С. Джанашиа**, *Об одном примере искажения исторической правды. По поводу книги Н. Токарского “Архитектура древней Армении”*, Тбилиси: изд-во «Заря Востока», 1947.

³⁴ Բնութագրական է, որ Սիմոն Ջանաշիայի գրքույկը չի կորցրել իր այժմեականությունն անգամ մեր օրերում, ինչի վկայությունն է աշխատության արտատպումը վերջերս լույս տեսած հետևյալ ժողովածուում. *Некоторые вопросы истории Грузии в армянской историографии*, научн. ред.: акад. **Давид Мухелишвили**. Тбилиси, 2009, с. 11-64:

նեկ իբրև այլ ազգային [իմա՝ հայկական] աշխարհ»³⁵, «այդ հանրահայտ փաստերի նկատմամբ գործադրվող բռնությունը, դրանց ներկայացնելը հրեշավոր աղավաղման տեսքով, Տոկարսկուն պետք է եղել այլ, ո՛չ գիտական նպատակների համար»³⁶:

1947-ի տարեվերջին Կարսի ու Արդահանի անունը կրկին շոշափվում է խորհրդային կենտրոնական մամուլի՝ «Պրավդայի» և «Իզվեստիայի» էջերում (հոկտեմբերի 28), այս անգամ ՄԱԿ-ում ԽՍՀՄ ներկայացուցիչ Վիշինսկու կողմից³⁷, ու կրկին հնչում է ձևակերպում, որ այդ հողերը վրացական են և պետք է վերադարձվեն վրացական հանրապետությանը, վրաց ժողովրդին: Հատկանշական է, որ խորհրդային քաղաքական գործիչն իր խոսքում որպես հիմնավորում նշում է վրացի երկու ակադեմիկոսների հրապարակումը «Պրավդայում»³⁸: Մինչդեռ հայերի ու Հայաստանի առնչությունն այդ հողերին հանրությանը մատչելի կենտրոնական, պաշտոնական մամուլում, ինչպես նաև պաշտոնական հոստոթաբանության մեջ, արդեն չի բարձրաձայնվում:

Փոխարենը, Տոկարսկու գիրքը մեկ տարի անց գրախոսվում է Հայաստանյան գիտնականների կողմից (Բ. Առաքելյան, Վ. Հարությունյան)³⁹ և որակվում

³⁵ С. Джанашиа, *Об одном примере искажения исторической правды*, с. 11.

³⁶ Նույն տեղում, էջ 31:

³⁷ “Речь А. Я. Вышинского на заседании политического комитета Генеральной Ассамблеи 24 октября 1947 г.,” *Правда*, 28 октября 1947 г., № 286.

³⁸ Հառում հղում էր արվում Գլխավոր ասամբլեայում թուրքիայի ներկայացուցչի [պրն Սարփեր] խոսքին, որը մեղադրում էր ԽՍՀՄ-ին թուրքիայից որոշ տարածքներ վերցնելուն ուղղված ֆարոզություն իրականացնելու մեջ, «նկատի ունենալով Կարսը, Արդահանը, և [թուրքիայի ներկայացուցիչը] հղում արեց մոսկովյան մամուլում երկու վրացի ակադեմիկոսների նամակին, որոնք ապացուցում էին, որ հենց այդ հողերը... բնիկ վրացական հողեր են: Դա այնքան համոզիչ է ապացուցված, որ ես խորհուրդ եմ տալիս պրն Սարփերին մեկ անգամ ևս ընթերցել վրացի ակադեմիկոսների (դա Ջանաշիան և Բերձենիշվիլին են, վրացական գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ) նամակը, որոնք միանգամայն ակադեմիական ոճով, աղբյուրներին ընդարձակ հղումներ կատարելով [ցույց են տալիս], որ նույնիսկ այն ժամանակ, երբ թուրքիան գրավել էր այդ շրջանները, այնուամենայնիվ անխաթար էր թողել իրենց իսկ վրացական անվանումները: 1595 թ. հրապարակվել էր «Վրացական [Գուրջիստանի] վիլայեթի ընդարձակ ռեեստր [դավթար]» փաստաթուղթը, որը ներկայումս պահվում է Վրացական գիտությունների ակադեմիայում, որը, ի թիվս այլ շրջանների, նկարագրում է և այնպիսի [շրջաններ], որպիսիք են Չիլդիրի, Պոցխովի, Փանյակի (Բանա), Արդահանի, որտեղ ապրում են միայն վրացիներ, որտեղ չնչին ֆանակոթյամբ թուրքեր կան, կամ բնավ չկան: Եվ, այդպիսով, այդ նամակի հեղինակները խաղաղ ձևով, ինչպես և վայել է ակադեմիկոսներին, որոնք, իհարկե, շատ ֆաղափաղական անձինք են, հանդես են գալիս այն բանի օգտին, որ այդ հողերը վերադարձվեն Վրացական հանրապետությանը, վրաց ժողովրդին պատմական, ազգագրական, ֆաղափաղական և այլ հիմքերով: Դա արդարացի է այն պատճառով, որ այդ հողերը վրացական են»: Տե՛ս նաև. **Քրիստինե Մելոնյան**, *ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները*, էջ 109-110:

³⁹ **Բ. Առաքելյան, Վ. Հարությունյան**, «Գրախոսություն. Н. М. Токарский, “Архитектура древней Армении,” Издательство Академии наук Армянской ССР, Ереван, 1946,

որպես «բուրժուական նացիոնալիզմին» տուրք տվող աշխատանք⁴⁰, իսկ Տայքի մասով նշվում է, որ «Միանգամայն արատավոր է Տոկարսկու գրքին՝ «Տայքի ճարտարապետական դպրոցը X դարում» խորագիրը կրող գլուխը: Նախ, պետք է ասել, որ հայ ճարտարապետության պատմությանը վերաբերող գրքում այս գլուխն անարդարացի և տենդենցիոզ կերպով է տեղ գտել, որովհետև X դարում Տայքի ճարտարապետությունը հայկական չէր, կամ ինչ-որ ինքնուրույն դպրոց չէր ներկայացնում, ինչպես պնդում է Տոկարսկին (էջ 202), այդ դարում Տայքում և Կղարջքում (Տառ-Կլարջեթ) կարող է խոսք լինել միայն վրացական ճարտարապետական դպրոցի և վրացական ճարտարապետության մասին: Իշխանի, Օշքի, Տբեթի, Խախուլի ճարտարապետական հուշարձանները վրաց ճարտարապետությանն են պատկանում»⁴¹: Գրախոսները եզրակացնում են. «Բերված փաստերը վկայում են, որ հեղինակը չի ցուցաբերել անհրաժեշտ լրջության և պատասխանատվության զգացմունք այսպիսի մի կարևոր բնագավառին նվիրված իր սիստեմատիկ շարադրությունը կազմելիս: Նա չի կարողացել հաղթահարել մեր ճարտարապետության պատմության մի շարք կարևոր պրոբլեմները և, ուր ավելի վատն է, իր գրքում թույլ է տվել հայկական և վրացական կոլտուրաների հակադրություն և պատմական փաստերի աղավաղում [ընդգծումն իմն է – Հ. Մ.]», «Այս ամենի համար, իհարկե, առաջին հերթին պետք է դատապարտել հեղինակին, սակայն կշտամբանքի են արժանի նաև հրատարակողները»⁴²: Չնայած ամենավերջին նախադասությանը «կշտամբանքի» սլաքներն ուղղվում էին Պատմության ինստիտուտին (որի աշխատակիցն էր Տոկարսկին)⁴³, սակայն պարզ էր, որ խոսքը վերաբերում էր Հովսեփ Օրբելուն, ով հրավիրել էր գրքի հեղինակին Հայաստան և ում անունն էր շեշտված գրքի վերնագրի հաջորդ իսկ էջում: Նկատենք, որ 1947 թ. հունվարին Հովսեփ Օրբելին արդեն ազատվել էր Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնից սեփական դիմումի համաձայն⁴⁴:

382 страницы, с 96 таблицами», *Տեղեկագիր Հայկական ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի, հասարակական գիտություններ*, 1948, թիվ 2, էջ 79-88:

⁴⁰ Նույն տեղում, էջ 80, 81:

⁴¹ Նույն տեղում, էջ 81:

⁴² Նույն տեղում, էջ 88:

⁴³ 1941 թ. ապրիլից մինչև 1945 թ. ապրիլը Ն. Մ. Տոկարսկին Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահի տեղակալն էր: Նույն թվականին «փոխադրվելով Հայկական ՍՍՀ նորաստեղծ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը, տարիների ընթացքում կատարած հետազոտությունների իր արդյունքները Տոկարսկին ամփոփեց «Հին Հայաստանի հարտարապետությունը» սովորաձավալ մեմագրության մեջ (1946)»: Տե՛ս Վ. Հարությունյան, «Ն. Մ. Տոկարսկի» [մանախոսական], *ՊԲՀ*, 1978, թիվ 1, էջ 293:

⁴⁴ Տիրան Մարությանի անձնական արխիվում պահվում է ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանի 2004 թ. նոյեմբերի 30-ով թվագրվող նամակը Մարությանին, ուր նամակագիրը, անդրադառնալով Տոկարսկու գրքի գրախոսականի հարցին, գրում է. «Հարկ եմ

Թերևս գրաքննության⁴⁵ արժեքի նման գրախոսականների շարժանանալու ցանկությունն էր պատճառն այն իրողության, որ հետագա երկու տասնամյակի ընթացքում հայաստանյան մասնագիտական հրատարակություններում Տալի հուշարձանները դիտարկվում էին լոկ համեմատությունների համատեքստում, խնդիր չէր դրվում հարցի նկատմամբ ավելի համալիր մոտեցում որդեգրելու⁴⁶։ Լայն առումով դա նաև խորհրդային «ժողովուրդների բարեկամության» և «սոցիալիստական ինտերնացիոնալիզմի» կեղծ գաղափարախոսությունների դրսևորում էր։ Ահա նման իրավիճակում, 1960-ականների սկզբին Տիրան Մարտիանը շարադրեց «Բանակ տաճարը» աշխատությունը, որը պետք է լույս տեսներ 1964 թ. և որի համար կարծիք էր գրել ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը⁴⁷։

համարում [նշել], որ այդ հոդվածում իմ բաժինը վերաբերում է միայն գրքի կառուցվածքին, նրա ընթացքի նշգրիտ շարադրման, նաև առանց ընդգրկելու ուշ միջնադարը։ Երբ վրացիները վայնասուն բարձրացրին գրքի դեմ Տալի կապակցությամբ, Հայաստանի կուսակցական վերին առյուծները պարտադրեցին ֆաղափական գնահատական տալ, ինչը ստիպված եղավ կատարել Բարկեն Առաքելյանը՝ հակառակ իր կամքի։ Այս է նշմարտությունը»։

⁴⁵ Այս իմաստով բնութագրական է պատմաբան Արման Կիրակոսյանի դիտարկումը. «Նորհրդային գաղափարախոսությունը և գրաֆնությունը խստորեն հետևում էին հայ ժողովրդի պատմական անցյալի և հայ-թուրքական հարաբերությունների լուսաբանման և ուսումնասիրության հարցերում «ինտերնացիոնալիզմի» և «դասակարգային» մոտեցման սկզբունքներին, գործող գաղափարախոսական շրջանակները խախտողներին պատժում էին, նրանց ներկայացվում էին մեղադրանքներ «նացիոնալիզմի և բուրժուական օրյեկտիվիզմի» մեջ»։ **Արման Կիրակոսյան**, «Предисловие,» в кн.: *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.*, с. 49:

⁴⁶ Անգամ հայ նարտարապետության պատմությանը նվիրված առաջին ակադեմիական ընդհանրացնող աշխատանքում ընդամենը նկատվում է, որ Իշխանը կառուցել է Ներսես կաթողիկոսը, և որ «X դարում Զվարթնոցի հորինվածքը իր դրսևորումն է գտնում վրացական նարտարապետության մեջ, Բանայում [խոսքը նույն Ներսեսի կառուցած Բանակ տաճարի մասին է]...»։ Տե՛ս. **Ս. Խ. Մնացականյան**, «Հայկական նարտարապետությունը VI դարի երկրորդ կեսից մինչև VII դարի վերջը», *Ակնարկներ հայ արվեստի պատմության. 2. Ակնարկ հայ ճարտարապետության պատմության*, խմբագիրներ **Ք. Ն. Առաքելյան, Մ. Գ. Մազմանյան**, Երևան, Հայկ. ՍՍԻ ԳԱ հրատ., 1964, էջ 163: Իրավիճակի դրական փոփոխություն է առճանաչվում լոկ 1960-ականների վերջին, մանրամասն տե՛ս **Բ. Ն. Արակեյան, Բ. Մ. Արությունյան, Ս. Մ. Մնացականյան**, *О некоторых вопросах истории армянской архитектуры (по поводу книги Г. Н. Чубинашвили «Разыскания по армянской архитектуре»)*, Ереван: изд-во АН Арм. ССР, 1969:

⁴⁷ Կարծիքում մասնավորապես գրված է. «Անձի պաշտամունքի տարիներին հայագետների համար վերացավ հնարավորությունը խոսելու Տալի երկրամասի պատմական հուշարձանների և նրա պատմության մասին։ Պատմական սկզբնաղբյուրները և հնագիտական ավյակները կարելի էր լուսաբանել միայն որոշ կանխամտածված տեսանկյունով։ Միայն վերջերս, երբ հնարավորություն տրվեց խոսելու պատմության և մշակույթի հարցերի մասին օրյեկտիվ դիրքերից, ստեղծվեցին պայմաններ ուսումնասիրելու այնպիսի հարցեր, ինչպիսին է առաջադրված աշխատությունը»։ **Տիրան Մարտիան**, *Հայ դասական ճարտարապետության ակունքներում*, էջ 181-182: Այսինքն՝ «Բանակ տաճարը» աշխատության

Մակայն դրան փոխարինելու եկավ «Տայքի ճարտարապետական հուշարձանները» ավելի ընդարձակ աշխատությունը (Բանակին նվիրված առանձին գլխով), որը պետք է լույս տեսներ 1970 թ., բայց լույս տեսավ 1972 թ. 5.000 օրինակ տպաքանակով, որից 4.000 օրինակը Վրաստանի կոմկուսի կենտկոմի գաղափարական գծով քարտուղար Ստուրուայի ղրղմամբ, Հայաստանում նույն պաշտոնը զբաղեցնող Ռ. Խաչատրյանի կարգադրությամբ ոչնչացվեց⁴⁸։ Մակայն կարճ ժամանակ անց, ընդառաջելով ստեղծագործական մի քանի միությունների առաջարկին, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանի կողմից կարգադրություն եղավ այդ գիրքը վերահրատարակել։ Այն լույս տեսավ միայն 1978 թ.⁴⁹, սակայն նոր վերնագրով առանց «Տայք» անվան։ Ժամանակ անց աշխատության փոքր-ինչ համառոտված տարբերակը տեղ գտավ Տիրան Մարությանի ռուսերեն մենագրության մեջ⁵⁰։ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հոգաձուլությամբ 2003 թ. լույս տեսած «Հայ դասական ճարտարապետության ակունքներում» շուրջ 500 էջանոց աշխատության ավելի քան կեսը նվիրված էր Տայքի, ինչպես նաև Վրաստանի մի շարք առանցքային հուշարձանների դիտարկմանը։

Տիրան Մարությանի արխիվում կա երկու տետրակ, վերնագրված «Տայք. 1974» և «Պատմություն Տայքի ճարտ[արապետական] հուշարձաններին» նվիրված գրքերի տպագրության», ընդհանուր առմամբ 50 և 17 էջ ծավալով։ Սրանցում մանրամասնորեն նկարագրվում են հեղինակի՝ 1963-64 թվականից ի վեր խնդրին անդրադառնալու պատճառները, գիտահետազոտական աշխատանքի ընթացքը, հիշատակվում են ընտրված թեմատիկայի շուրջ խոսքով և գործով աջակցողները և ոգևորողները (օրինակ, ճարտարապետներ Հովհաննես Մարգարյան, Միքայել Մազմանյան, Արծվին Գրիգորյան, Ռաֆո Իսրայելյան, Լևոն Բաբայան, Մուրադ Հասրաթյան, Լևոն Զորյան, գրողներ Հրաչյա Քոչար, Սերո Խանգաղյան, արվեստագետներ Մարտիրոս Սարյան, Ռուբեն Զարյան, պատմաբաններ Սուրեն Երեմյան, Ռաֆայել Թադևոսյան, կուսակցական և հասարակական գործիչներ Զոն Կիրակոսյան, Կարլեն Դալլաքյան, Հրաչիկ Սիմոնյան, Վարդգես Համազասպյան, Մխիթար Դավթյան, հրատարակչու-

ստեղծումը առաջին հերթին պայմանավորված էր խրուշչովյան «ձնհալի» տարիների գործումով։

⁴⁸ Տե՛ս Տիրան Մարության, *Հայ դասական ճարտարապետության ակունքներում*, էջ 182։

⁴⁹ Տիրան Մարության, *Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք, Երևան, «Սովետական գրող», 1978, 183 էջ (ռուսերեն և ֆրանսերեն ամփոփումներով)։* Նկատենք, որ Ա. Ե. Քոչինյանը հանրապետության կոմկուսի ղեկավարի պաշտոնում մնաց մինչև 1974 թ. նոյեմբերը։

⁵⁰ Тирани Марутян, *Архитектурные памятники: Звартноц, Аван, Собор Аниийской Богоматери...*, Ереван: изд-во “Хорурдаин грох”, 1989, 269 с. (с резюме на английском языке). Գրքի տեխնիկական 94 էջը, այսինքն՝ ավելի քան 1/3-ը, տեղադրված էր “Архитектурные памятники Глубинной Армении” վերնագրի ներքո։

թյան ղեկավարներ և բաժնի վարիչներ Մկրտիչ Սարգսյան, Գևորգ Արշակյան, Գրիգոր Զարեյան, Վիկտոր Բալայան, Վոլոդյա Վարդանյան), ինչպես նաև տարբեր կերպ խոչընդոտողները (Վարազդատ Հարությունյան, Ստեփան Մնացականյան, Կենտկոմի քարտուղար Ռոբերտ Խաչատրյան, «Հայաստան» հրատ. տնօրեն Վահագն Մկրտչյան, «Սովետական գրող» հրատ. տնօրեն Հարություն Ֆելեքյան և այլք): Տեսորակներում հանգամանալիորեն ներկայացվում են հեղինակի դեգերումները Տայքի, Խորագույն Հայքի և “Архитектуры бые памяти-НДУКА” գրքերի տպագրության խնդրի շուրջ: Խորհրդահայ գրաքննությունն աշխատում էր ուղղակի, բայց ավելի շատ՝ անուղղակի ձևերով: Մարությանի գրքերի հրատարակման ճակատագրի հենքին կարելի է ասել, որ դրա հիմնական դրսևորումներն էին.

- ամիսներով ու տարիներով գործը ձգձգելը (հատկապես դա «լավ» էր հաջողվում Հարություն Ֆելեքյանին, ով կարողացավ ոռուներեն գրքի հրատարակությունը 1982 թ.-ից ձգել մինչև 1989 թ.), այդ կերպ հեղինակին «կոտրելու» փորձերը,

- գրքի ձեռագիրը բազմիցս կարծիքի ուղարկելը և անգամ դրական արձագանքներից հետո, ժամանակ անց, կրկին նույն գիտահետազոտական և մշակութային հիմնարկությունները կարծիքի ուղարկելը,

- մասնագիտական հանրության ճանաչված ներկայացուցիչների կողմից գաղափարախոսական բնույթի պիտակավորումներով գրախոսականների հրապարակումը և այդպիսով որոշակի թեմայի ուղղությամբ հետազոտություններ իրականացնելու փաստացի արգելափակումը,

- մասնագիտական հանրության ճանաչված ներկայացուցիչների կողմից անորոշ, երկիմաստ կարծիքներ շարադրելը և այդ կերպ խնդիրը մասնագիտականից վարչարարական հարթություն տեղափոխելը: Այսինքն՝ այս պարագայում հենց այդ մասնագետներն (տվյալ դեպքում՝ ճարտարապետ-մասնագետներն) էին հանդես գալիս որպես գրաքննության իրականացման անուղղակի գործիքներից մեկը,

- վրացական գործոնի մասին հաճախ անուղղակի, երբեմն էլ պարզորոշ ակնարկներ անելը. «այդ վրացիներից պիտի հեռու մնալ», «գրքում վրացու անուն կա՞, չի՞ կարելի այդպիսիք հանել, ուրեմն չեմ հրատարակի» (Ֆելեքյան), «հեռու մնա այդ նյութից, շառոտ գործ է, գործ չունես, թեպետև դրանք մեր հուշարձաններն են» (Մազմանյան), կամ երբ հրատարակչության խմբագիր Մարգարիտ Թերզյանը «չնշում էր այն բոլոր էջերը, որտեղ հանդիպում էր Զուբինաշվիլուն և Մնացականյանին»,

- «սոցիալիստական ինտերնացիոնալիզմի» գաղափարախոսության միակողմանի կիրարկումը («մենք չպիտի լինենք վրացիների պես» և այլն), մասնավորապես վախը նացիոնալիզմի մեջ մեղադրվելուց: Այս վախը գալիս էր ստալինյան ժամանակներից, երբ նացիոնալիզմի մեջ մեղադրվելու արդյունքում տասնյակ հազարավոր խորհրդային քաղաքացիներ (այդ թվում և հազար

րավոր հայ մարդիկ) հայտարարվում էին խորհրդային իշխանության թշնամիներ, աքսորվում էին կամ պարզապես գնդակահարվում⁵¹: Ականատեսներից մեկի վկայությամբ, ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Անտոն Քոչինյանն իբր ասել է. «տես, այս գիրքը (իր սեղանի վրա դրված Մարությանի «Տալքի ճարտարապետական հուշարձանները») չենք կարողանում հրատարակել որոշ անառողջ մարդկանց պատճառով, որոնք մեզ մեղադրում են նացիոնալիզմի մեջ»:

● ՀԿԿ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի անհարկի միջամտությունները հրատարակչական գործերին, այս պարագայում՝ Տալքի ու Վրաստանի հուշարձաններին առնչվող խնդիրներին: Մեջբերում եմ «Հայաստան» հրատարակչության տնօրեն Վահագն Մկրտչյանի ձեռագրվածները. «բայց այնուամենայնիվ այս բոլորը չենք համաձայնեցրել [Կենտկոմի հետ]» կամ «եթե Կենտկոմը, որ իր որոշմամբ ենք արել [գրքի ոչնչացումը], այժմ էլ մեզ նորից կանչի և նոր կարգադրություն անի, կմտցնենք 1975 թ. ֆինանսական պլանի մեջ, պատահականորեն, եթե տեղ բացվի, կարող ենք [19] 74 թ. IV կվարտալ տեղավորենք»: Նա էր, ի մասնավորի, նաև ստիպել «Տալքի ճարտարապետական հուշարձանները» գրքից հանել ֆրանսերեն ամփոփումը, հրատարակչության որոշմամբ էր, որ գրքում տեղ չէր գտել անվանացանկը և անվանաթերթի ռուսերենը, վերջապես «վերևից» ստացված հրահանգի հիման վրա նրա անմիջական կարգադրությամբ էր սկսվել արդեն լույս տեսած «գրքի կտրատումը»:

Այսպիսով, Տալքի պատմության և մշակույթի ուսումնասիրության հարցն իր մեջ ունի նկատելի քաղաքական բաղադրիչ և խորհրդահայ գրաքննության հետ միասին եղել է այն հիմնական խոչընդոտը, որն էապես դժվարացրել, կարելի է ասել՝ արգելափակել է Տալքի հուշարձանների ուսումնասիրության գործը խորհրդային Հայաստանում: «Պատմական Տալք. պատմություն, մշակույթ, դավանանք» միջազգային գիտաժողովի հրավիրումն ու անցկացումը վկայում են, որ Հայաստանի երրորդ Հանրապետությունում այդ արգելքը հաղթահարված է:

АРУТЮН МАРУТЯН

ИССЛЕДОВАНИЕ ИСТОРИИ АРХИТЕКТУРЫ ТАЙКА И СОВЕТСКАЯ ЦЕНЗУРА

Ключевые слова: Тайк, архитектурные памятники Тайка, армяно-грузинские взаимоотношения в области архитектуры, Карсская область, Ардаган, Турция, Джанашия, Николай Токарский, Тиран Марутян.

⁵¹ Խնդրի շուրջ վերջին հրապարակումներից տե՛ս Հրանուշ Խառատյան, Գայանե Շագոյան, Հարություն Մարության, Առն Աբրահամյան, Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, արժեք (Հիշողության ազգագրություն, 5), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015:

Исследование архитектурных памятников Тайка имеет почти полуторавековую историю и является частью армяно-грузинских споров относительно архитектурного наследия. Помимо научного, оно имеет также политическое значение, что в специальных публикациях по архитектуре прямым образом не затрагивается, но в случае необходимости выдвигается на первый план как исследователями, так и политическими и общественными деятелями. Дело в том, что фактор принадлежности культовых зданий к той или иной культуре в значительной мере является признаком того, каковым был этнический состав населения того или иного региона в период возведения этих сооружений, в определенном смысле – и в последующие века.

В статье в общих чертах рассматривается вопрос изучения архитектурного наследия Тайка; советско-турецкие отношения после Второй мировой войны, связанные с претензиями на Карсскую область; а также некоторые вопросы формирования грузинских территориальных претензий. Сделан акцент на судьбу книг Николая Токарского “Архитектура древней Армении” (1946) и Тирана Марутяна “Архитектурные памятники Тайка” (1972). Стиль работы советской и, в частности, армянской-советской цензуры раскрывается на примере судьбы книг Т. Марутяна, в которых имеются разделы, посвященные архитектуре Тайка. При анализе явления используются также материалы из неопубликованных воспоминаний Т. Марутяна.

HARUTYUN MARUTYAN
THE STUDY OF THE HISTORY OF TAYK'S
ARCHITECTURE AND SOVIET CENSORSHIP

Keywords: Tayk, Tayk's architectural monuments, Armenian-Georgian controversies in regard to architectural heritage, Kars region, Ardahan, Turkey, Janashia, Nikolay Tokarsky, Tiran Marutyun.

The study of the architectural monuments of Tayk has begun one and a half centuries ago and is part of the history of the Armenian-Georgian controversies in regard to architectural heritage. It has both scientific and political significance, and remains a subject that is not directly touched upon in special publications on architecture and is only highlighted in case of necessity by researchers or political and public figures. Places of worship (which were merely regarded as monuments

during the Soviet period) are also indicators for the ethnic structure of the region they were built in.

The present article examines the history of the study of Tayk's architectural heritage during the Soviet period, the developments of the Soviet-Turkish relations after World War II in relation to the territory of the former Kars region, as well as some questions about the formation of Georgia's territorial "claims." Special attention is devoted to the fate of the books *The Architecture of Ancient Armenia* by Nikolay Tokarsky (1946) and *The Architectural Monuments of Tayk* by Tiran Marutyan (1972), which was immediately destroyed. The approach of the Soviet and Soviet-Armenian censorship is studied based on the example of the fate of Tiran Marutyan's books, which contained sections on the architecture of Tayk, and his unpublished memoirs.

ԼԻԱՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՎՐԱՑԱԿԱՆ ՃՅՈՒՂԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Բանալի բառեր՝ Տայք, Ատրնեքսեհ՝ Բագրատունի, Աշոտ Կուրապաղատ, Գուարամ Կուրապաղատ, հայկական, բյուզանդական և վրացական աղբյուրներ, «Վրաց Տարեգիրք»:

Մինչև VIII դ. երկրորդ կեսը Տայքը պատկանում էր հայ նախարարական տներից մեկին՝ Մամիկոնյաններին: Վերջիններիս քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո երկրամասն անցնում է հայկական մեկ այլ նախարարական տան՝ Բագրատունիների տնօրինությանը և դառնում նրանց սեփականությունը: Տայքում հաստատված Բագրատունիներից մեկն էլ հիմք է դնում այդ տոհմի վրացական ճյուղին: Ինչպես նշում է Ն. Ադոնցը, մեծ է Բագրատունիների դերը հայոց պատմության մեջ, սակայն անհամեմատ նշանավոր գործոն հանդիսացան նրանք վրաց պատմության մեջ: Բավական է նշել, որ վրաց Բագրատունիների տոհմաձառը հաշվում է երեք հարյուրից ավելի անձ, որոնցից վաթսուներեղև են թագավոր: «Ոստեր արձակելով ամեն կողմ Վրաց Բագրատունիք կարողացան իրենց հովանու տակ առնել վրական ցեղերի ամբողջությունը»¹, – գրում է Ն. Ադոնցը: Իսկապես, մեծ է Բագրատունիների դերը Վրաստանի թե՛ քաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական, ինչպես նաև մշակութային կյանքի պատմության մեջ: Նրանց շնորհիվ վրացական երկրամասերն ու իշխանություններն առաջին անգամ միավորվեցին մեկ միասնական պետության կազմում, և երկիրը թևակոխեց նոր ու փառավոր շրջան, որը տևեց մի քանի դար: Հետևաբար, չափազանց կարևորվում են Բագրատունիների վրացական ճյուղի սկզբնավորման հիմքերը, որտեղի՞ց, ե՞րբ և ինչպե՞ս են նրանք հայտնվել Վրաց իրականության մեջ:

Բագրատունիները հայտնվել են քաղաքական ասպարեզում առավել վաղ և տոհմի ծագման վերաբերյալ հորինվել են բազմաթիվ ավանդություններ: Հայ պատմագիտական միտքը թվագրում է այն I դ. Ք.ա.²: Իսկ վրաց պատմագիտական ավանդույթի համաձայն՝ Բագրատունիները VI դարից են հայտնվել վրաց քաղաքական կյանքում: Կան տեսակետներ, համաձայն որոնց նրանք սերում են վրաց Փառնավազյան դինաստիայից³, իսկ ըստ Կ. Թումանովի՝ Բագրատ-

¹ Ադոնց Ն., *երկեր*, հ. Ա, Երևան, 2006, էջ 478:

² Адоиц Н., *Армения в эпоху Юстиниана*, СПб., 1908, с. 413.

³ Ծնգորուցյա Յ., *ցորցո թըրխլուլը*, Թբիլիսի, 1954, թ. 77-79, *მამულია გ.*, “ზაგრატიონთა დინასტიის წარმოშობა და ქართლის (იბერიის) სამეფოს წარმოქმნა”, *სურნალი «მნათობი»*, 1971, № 2, გვ. 179-191.

տունիները հայ թագավորական տներից մեկի՝ Երվանդունիների շառավիղներն են⁴: Կարելի է հանդիպել բազմաթիվ այլ տեսակետների՝ հիմնականում հայ Բագրատունիներին վերաբերող, սակայն մենք անդրադառնալու ենք միայն այդ տոհմի վրացական ճյուղին:

Բագրատունիների վրացական ճյուղի հիմնադրման վերաբերյալ գոյություն ունի աղբյուրների երեք հիմնական խումբ՝ հայկական, բյուզանդական և վրացական: Դրանք չեն նշում Տայքում նրանց հաստատվելու ստույգ ժամանակը, սակայն հայտնի է, որ դա տեղի է ունեցել VIII դ. վերջերից մինչև IX դ. սկիզբն ընկած ժամանակահատվածում: Այդ մասին առավել մանրամասն տեղեկություններ կան հատկապես վրացական աղբյուրներում, որոնք պարունակում են ինչպես իրական, այնպես էլ հետագա հեղինակների՝ միտումնավոր կերպով ավելացրած մտացածին փաստեր: Ընդ որում, նրանք հաճախ միակարծիք չեն: Որքան էլ «Վրաց Տարեգրքի» հեղինակները փորձում են անտեսել Վրաց Բագրատունիների կապը նրանց հայական ճյուղի հետ, այնուամենայնիվ, աղբյուրներում կարելի է գտնել այն հաստատող փաստեր:

Հայկական աղբյուրներից հայտնի են XIII դ. պատմիչ Վարդան Արևելցու վկայությունները, համաձայն որի Հայոց իշխան Աշոտ Կույր Բագրատունու (732-748) սերունդներն են հաստատվել Տայքում և հիմնել Բագրատունիների վրացական ճյուղը: Պատմիչը նախ նշում է, որ Աշոտ Կույրի թոռը՝ սպանված Սմբատ Բագրատունու որդի Աշոտ Մսակերը (մահ. 826 թ.), կարողացավ արաբներից ազատագրել որոշ հողեր՝ տիրելով «գՇիրակ և գԱշոցք, և զգաւառն Տայոց»⁵: Ըստ պատմիչի՝ դա տեղի էր ունեցել «անկելոցն ի մեծ պատերազմին»⁶, այսինքն՝ Բագրևանդի 775 թ. ճակատամարտից հետո, որտեղ հայերը պարտություն կրեցին արաբներից⁷:

Ուսումնասիրողներից ոմանք կարծում են, որ Աշոտ Մսակերը 803-805 թթ. ժամանակահատվածում է տիրել Տայքին⁸: Նա Տայքում կառուցեց Կալմախ ամրոցը (ըստ Վարդան Արևելցու՝ Կամախ) այնտեղ տեղափոխելով իր ընտանիքը⁹: Շուտով Աշոտ Մսակերի աջակցությամբ Աղիովիտից Տայք է տեղափոխվում ու բնակություն հաստատում այնտեղ նաև Գնունիների տոհմը¹⁰:

Վարդանը ներկայացնում է նաև Բագրատունիների վրացական ճյուղի հիմքերը. «Բայց ասելի է աստ զսկիզբն թագաւորացն Հայոց և Վրաց որք ի

⁴ Toumanoff C., *Studies in Christian Caucasian History*, Georgetown University Press, 1963, p. 277-354.

⁵ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ ի Վենետիկ, 1862 (այսուհետև՝ Վարդան վարդապետ), էջ 76:

⁶ Նույն տեղում:

⁷ Արմեն Ն., *Երկեր*, հ. Ա, էջ 442:

⁸ Նույն տեղում, էջ 449:

⁹ Վարդան վարդապետ, էջ 76:

¹⁰ Նույն տեղում, էջ 77:

Բագրատունեաց անտի սերեցան... Սմբատ Բագրատունի զկնի նորա Աշոտ, որդի Վասակայ, զոր կուրացուցին Մամիկոնեանքն. սմա լինին երկու որդիք, Սմբատ՝ նախնի թագաւորացն Հայոց և Վասակ սկիզբն թագաւորացն Վրաց»¹¹: Պատմիչն այնուհետև շարունակում է Վասակի սերնդի թվարկումը. «Վասակ սկիզբն թագաւորացն Վրաց. որոյ որդին Ատրներսեհ, սորա՝ Աշոտ, սորա՝ Բագարատ, որոյ եղբայրն Գորամ, հետ սմա՝ Գաւթ որդի Բագարատայ՝ որ սպանաւ ի Գորամայ հօրեղբօրէ իւրմէ, որոյ որդին Ատրներսեհ, սորա որդի Գաւթ. սմա եղբօրորդի Գուրգէն, որոյ որդին Բագարատ, որ առ իւր կին զգուստր Սենքերիմայ թագաւորին Վասպուրականի: Այս է կարգն»¹² (տե՛ս ներդիր, աղյուսակ 1):

Վարդան Արևելցին մեկ անգամ ևս նշում է, որ Վրաց Բագրատունիների հիմքը դրել է Աշոտ Կույրի որդի Վասակ Բագրատունին. «Յայնմ ժամանակի աղմկեալ Իսմայելի ընդ միմեանս, հանգչէր երկիրն Հայոց, և սկսան զօրանալ իշխանքն մեր յիրաքանչիւր իւր տեղս: Եւ տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան. և կայսրն առաքէ նմա պատիւ կիրապաղատութեան»¹³: Այսինքն՝ կրկնվում է առաջինից չորրորդ սերունդը.

Աշոտ Կույր

Վասակ

Ատրներսեհ

Աշոտ Կուրապաղատ

Քաղվածքում նշված Հայոց իշխան Աշոտը նույն ինքն Աշոտ Կույրն է, Աշոտ Կուրապաղատը՝ վրաց աղբյուրներից հայտնի «ՃԹԾ I ԸԾԾԾ ԶՄԾՅՅԸԾԾ»-ն (Աշոտ I Մեծ Կուրապաղատը, մահ. 826 կամ 836 թ.), իսկ կայսրը՝ Ատոն V Հայկազնն է (813-820), որից էլ Աշոտը ստացել էր կուրապաղատի տիտղոս¹⁴՝ հիմք դնելով կուրապաղատների ժառանգական իշխանու-

¹¹ Նույն տեղում, էջ 81-82:

¹² Նույն տեղում, էջ 82:

¹³ **Վարդան վարդապետ**, էջ 77: Վարդանի երկի ուսերեն թարգմանությունում բացակայում է «և կայսրն առաքէ նմա պատիւ կիրապաղատութեան» միտքը (տե՛ս *Всеобщая история Вардана Великокого*, перевод и примечания *Н. Эмина*, Москва, 1861 с. 98), որը, սակայն, կա պատմիչի աշխատության հայերեն մոսկովյան հրատարակությունում (տե՛ս *Մեծի Վարդանայ Բարձրբերդեցոյ Պատմութիւն տիեզերական*, ի լոյս ընծայեաց *Մկրտիչ Հմին*, Մոսկվա, 1861, էջ 106): Այդ հատվածը առկա է Ռ. Քոմսոնի անգլերեն թարգմանությունում. “And the emperor sent him [Աշոտ Կուրապաղատ-Վ.Ն.] the honor of the title of Curopalates”, տե՛ս **R.W. Thomson**, “The Historical Compilation of Vardan Arewelc’i,” *Dumbarton Oaks Papers*, 43, 1989 (pp. 125-226), p. 182:

¹⁴ Վրաց ուսումնասիրողների համաձայն՝ Աշոտ Բագրատունուն կուրապաղատի տիտղոս է շնորհել Ատոն VI կայսրը (*Картлис Цховреба, История Грузии*, главный редактор **Р. Метревели**, Тбилиси, 2008, с. 166, прим. 22 (այսուհետև՝ *Картлис Цховреба*, 2008)), սակայն վերջինս իշխել է 886-912 թթ. (տե՛ս **Կոստանդին Միքանաձին**, *Օտար*

թյանը: Հայտնի չէ, թե Վարդանն այս կարևոր վկայություններն ինչ աղբյուրից է քաղել: Ն. Ադոնցը և Մարկվարտը հակված են կարծելու, որ այդ աղբյուրը IX-X դդ. պատմիչ Շապուհ Բագրատունու կորած երկն է¹⁵: Սակայն, ինչպես Ն. Ադոնցն է նշում, «դժվար է պնդել այս ենթադրության վրա»¹⁶, քանզի Վարդան պատմիչի թվարկած սերնդաբանության գիծը հասնում է մինչև Վասպուրականի Սենեքերիմ թագավորի փեսան, ով միացյալ Վրացական պետության թագավոր Գեորգի I-ն էր (1014-1027), այլ ոչ թե, ինչպես պատմիչն է նշում Բագրատը: Վարդան պատմիչի մոտ նկատվում են շփոթություններ, կապված այս վերջին երեք անձնավորությունների՝ Դավթի, Գուրգենի ու Բագրատի հետ: Նախ պատմիչը չի նշում Դավթի եղբոր անունը և վերջինիս եղբորորդի է կոչում Գուրգենին, իսկ սրա որդուն՝ Բագրատին, կոչում Սենեքերիմի փեսա: Ն. Ադոնցը նշում է, որ Վարդանի բնագիրը կամ խաթարված է կամ ինքն է սխալ ընդօրինակել իր աղբյուրը և գտնում է, որ պետք է կարդալ «սորա որդի Դաւիթ, սմա եղբորորդի ≤Բագրատ, որոյ որդի ≥ Գուրգէն, որոյ որդի Բագրատ, ≤որոյ որդի Գեորգի ≥ առ իւր կին զդուստր Սենեքերիմայ»¹⁷ [ընդգծումը մերն է – Լ. Ն.]: Այն, որ Սենեքերիմ Արծրունու փեսան եղել է Վրաց Գեորգի I թագավորը, հաստատվում է նաև այլ աղբյուրներով¹⁸: Վերջինս եղել է Վրաց թագավոր Բագրատ III-ի (1008-1014) որդին և Գուրգենի թոռը: Իսկ Գուրգենը եղել է Բագրատ Ռեզվինիի որդին և Սմբատի թոռը, հետևաբար Դավթի եղբայրը Սմբատն է, և Վարդան պատմիչի նշած եղբորորդին պետք է համարել Բագրատ Ռեզվինիին (տե՛ս ներդիր, աղյուսակ 1)*: Չի բացառվում, որ Վարդան պատմիչն այս տեղեկությունների մի մասը քաղել է Շապուհ Բագրատունուց, իսկ մնացած մասերն ավելացրել այլ աղբյուրներից:

Բյուզանդական աղբյուրներից X դ. պատմիչ և կայսր Կոստանդին Միրանաձինն է անդրադարձել Բագրատունիների վրացական ճյուղին, որոնց նա անվանում է «իբերներ»: Պատմիչ կայսրը «Կայսրության կառավարման մա-

աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, քարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970 (այսուհետև՝ **Կոստանդին Միրանաձին**), էջ 230, ծան. 7), այսինքն՝ Աշոտ Բագրատունու մահից (826) 60 տարի անց:

¹⁵ Ադոնց Ն., *երկեր*, հ. Ա, էջ 479, ծան. 2, հմմտ. Marquart J., *Osteuropäische und Ostasiatische Streifzüge*, Leipzig, 1903, p. 402-403:

¹⁶ Ադոնց Ն., *երկեր*, հ. Ա, էջ 479, ծան. 2:

¹⁷ Նույն տեղում, էջ 479-480, ծան. 2:

¹⁸ Մարմաշենի Կաթողիկե եկեղեցու հարավային պատին պահպանված արձանագրության մեջ կարդում ենք. «Նս Մարիամ ախագաց եւ հայոց թագունի, դուստր մեծին Սենեքերիմայ եւ թոռն Գագկայ Հայոց արեայի» (տե՛ս *Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոց արձանագրութեանց հայոց*, կազմեց Կ. Կոստանեանց, Ս.-Պետերբուրգ, 1913, էջ 18, հմմտ. Орбели И. А., *Избранные труды*, Ереван, 1963, с. 444.):

* Աղյուսակում վերջին երեք ընդգծված անունները Սմբատ, Բագրատ Ռեզվինի և Գեորգի I, ավելացված են մեր կողմից, սերնդաբանության գիծն ամբողջական ներկայացնելու համար:

ները ծագում են հրեաների թագավոր Դավիթի սերնդից, և, ինչպես վերը նշվեց, նույնն են վկայում նաև վրացական աղբյուրները²⁶ չնշելով նրանց ծագման կապը հայ Բագրատունիների հետ: Սակայն, ըստ պատմագիր կայսեր տեղեկությունների՝ վրացական աղբյուրից ծագման մասին կարելի է դատել նաև հենց Ծիրանածնի ուղղակի վկայությունից. «Իբերների կուրապաղատները, ցանկանալով իրենց վեհացնել, ասում են թե սերում են Դավիթ մարգարեի հարճից»²⁷ [ընդգծումը մերն է – Լ. Ն.]: Այսինքն՝ կայսրն ինքն է վկայում, որ իր տեղեկությունները հայտնել են վրաց, այսինքն՝ Բագրատունի կուրապաղատները, ընդ որում, շեշտելով, որ նրանք «իրենց վեհացնելու» համար են նախահայր ընտրել Դավիթին:

Բյուզանդացի պատմիչը հայտնում է նաև Դավիթ և Սպանդիատ եղբայրների՝ Երուսաղեմից գաղթելու ժամանակը. «Երուսաղեմից գաղթելու և իրենց այժմյան երկիրը գալուց և բնակվելուց մինչև օրս անցել է 400 կամ 500 տարի, այժմ աշխարհի արարչագործության 6460 թվականն է, ինդիկտիոնի 10-րդ տարին, քրիստոսասեր և ծիրանածին կայսրեր Կոստանդինի և Ռոմանոսի թագավորության ժամանակը»²⁸: Կոստանդին կայսրը նույն ինքը՝ Կոստանդին Ծիրանածինն է (913-959 թթ.), Ռոմանոսը՝ նրա որդի Ռոմանոս II-ը (959-963), իսկ աշխարհի արարչագործության 6460 թվականը և ինդիկտիոնի 10-րդ տարին համապատասխանում է 952 թ.²⁹, այսինքն, ըստ Ծիրանածնի, Բագրատունիները Երուսաղեմից գաղթել են մոտ 452 կամ 552 թթ.: Ն. Ադոնցը գտնում է, որ վերոհիշյալ Դավիթը ո՛չ 452 թ. և ո՛չ 552 թ. անձ չէր կարող լինել, այլ VIII դ. վերջի և IX դ. սկզբի, ընդ որում, նրա կարծիքով այդ քայլով փորձ է արվել հնացնել կուրապաղատների ծագումը³⁰: Այսինքն՝ ի տարբերություն Վարդան Արևելցու, Կոստանդին Ծիրանածինը Բագրատունիների վրացական ճյուղի հիմքերը հասցնում է V-VI դդ.:

Ինչպես վերը նշվեց, վրաց աղբյուրներն առավել մանրամասն են ներկայացնում Բագրատունիների վրացական ճյուղի առաջացման հիմքերը: Այդ աղ-

²⁶ Նյմբաժ Կազոտոս ժոն յԵրուսաղեմ, ՅՅ. 57–59, *Летопись Картли*, перевод, введение и примечания Г. В. Цулая, Памятники грузинской исторической литературы, IV, Тбилиси, 1982 (այսուհետև՝ *Летопись Картли*), с. 48, Вахушти Багратиони, *История царства грузинского*, перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Т. Накашидзе, Тбилиси, 1976 (այսուհետև՝ *Вахушти Багратиони*), с. 183.

²⁷ Կոստանդին Ծիրանածին, էջ 13:

²⁸ Նույն տեղում, էջ 14:

²⁹ «Կոստանդին Ծիրանածին» աշխատության 230 էջի թիվ 8 ծանոթագրությունում հավանաբար վրիպակ է սպրդել. նշված է «աշխարհի արարչագործության 6460 թ. համապատասխանում է մ. թ. 925 թ.», որը պետք է լինի 952 թ. (հմմտ. Ն. Ադոնց, *երկեր*, հ. Ա, էջ 480-481, Նյմբաժ Կազոտոս ժոն յԵրուսաղեմ, ՅՅ. 23):

³⁰ Ադոնց Ն., *երկեր*, հ. Ա, էջ 481-481:

բյուրներից են Դավթի որդի Սմբատի³¹, Ջուանշեր Ջուանշերիանի³², արքայազն Վախուշտի երկերը³³, ինչպես նաև տեղեկություններ են պահպանվել «Վրաց Տարեգրքում»³⁴ և «Վրաց դարձը»³⁵ աշխատություններում:

Բագրատունիների ծագումնաբանությունն առավել մանրամասն ներկայացնում է XI դ. վրաց պատմիչ Դավթի որդի Սմբատը՝ սկսելով Ադամից ու նրա սերնդից, հասցնելով մինչև Դավթի մարգարե և Սողոմոն, որոնք համապատասխանում են Հին և Նոր Կտակարանների անունների շարքին, ապա հեղինակը, նրանցից հետո ավելացնելով նոր անուններ, սերնդաբանության գիծը հասցնում է ոմն Սողոմոնի, որը 88-րդ սերունդն է Ադամից հետո³⁶: Համաձայն Սմբատի՝ այս Սողոմոնն ուներ յոթ որդի, որոնք էլ դարձան Բագրատունիների նախահայրերը: Բնագրում նշվում է, որ նրանք գալիս են «եկլեց Ռաքայել թագուհու մոտ և մկրտվում նրա կողմից: Նրանք մնացին Հայաստանում և մինչ օրս նրանց սերունդներն իշխում են Հայաստանում»³⁷: Մ. Բրոսսեն ավելացնում է, որ եղբայրները եկել են Պաղեստինից³⁸: «եկլեց»-ը (բնագրում ՅՅԼԿԾԾ), հավանաբար, «Աշխարհացոյց»-ից հայտնի Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի եկեղյաց գավառն է³⁹: Ըստ Ժ. Սենտ-Մարտենի՝ եկեղեց գավառը կամ եկեղեցը նույն Ակիրխսենեն է, որտեղից սկիզբ են առնում եփրատի ակունքները⁴⁰: Այդ հիմքով էլ, հավանաբար, Սմբատի երկի ռուսերեն թարգմանության հեղինակ Մ. Լորդկիրպանիձեն եկլեցի փոխարեն գրում է Ակիրխսենեն⁴¹: Մ. Բրոսսեն այդ գավառը համեմատում է նաև եղեգիբի կամ եղեգնաձորի հետ, որը գտնվում է Սյունիքում⁴²: Այնուամենայնիվ, կարծում ենք՝ խոսքը Բարձր Հայքի եկեղյաց գավառի մասին է, քանզի Սմբատ պատմիչի հետագա տեղեկություններից երևում է, որ յոթ եղբայրներից չորսն այդտեղից գնացել են Քարթլի

³¹ **Եղմծաթ զազոտոս ծոս յԵՐԵՅՅ**.

³² **Джуаншер Джуаншериян**, *Жизнь Вахтанга Горгасала*, *Картлис Цховреба*, Тбилиси, 2008 (այսուհետև՝ **Джуаншер Джуаншериян**).

³³ **Вахушти Багратиони**, *История царства грузинского*.

³⁴ **Матиане Картлиса**, перевод, введение и примечания **М. Д. Лордкипанидзе**, Тбилиси, 1976 (այսուհետև՝ **Матиане Картлиса**), *Летопись Картли*, *Картлис Цховреба*, 2008.

³⁵ **Такайшвили Е.**, *Источники Грузинских летописей, три хроники*, Тифлис, 1900.

³⁶ **Եղմծաթ զազոտոս ծոս յԵՐԵՅՅ**, թՅ. 57-58.

³⁷ նույն տեղում, էջ 58.

³⁸ **Brosset M.**, *Histoire de la Georgie*, S.-Petersbourg, 1849, p. 218.

³⁹ **Երեմյան Ս.**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երևան, 1963, էջ 106:

⁴⁰ **Saint-Martin J.**, *Mémoires historiques et géographiques sur L'Arménie*, tome I, Paris, 1818, p. 45.

⁴¹ **Сумбат Давитис-дзе**, *История и повествование о Багратионах*, перевод, введение и примечания **М. Д. Лордкипанидзе**, Памятники грузинской исторической литературы, III, Тбилиси, 1979 (այսուհետև՝ **Сумбат Давитис-дзе**), с. 28.

⁴² **Brosset M.**, *Histoire de la Georgie*, p. 218.

կամ Վիրք, իսկ եկեղյաց գավառն առավել մոտ է գտնվում Վիրքին, քան եղեգիրը կամ եղեգնաձորը: Իսկ պատմիչի նշած Ռաքայել թագուհին այլուր հայտնի չէ: Սմբատի «Պատմության» սույն հատվածը կարևորվում է նրանով, որ շեշտվում է յոթ եղբայրների գալը Հայաստան, որը վրացերեն բնագրում նշվում է *ՆՐԱԾԵՐԻՆ*⁴³ (Սոմխիթի) ձևով: Այսինքն, եթե նույնիսկ այդ պատմության իրական է, ապա հստակ երևում է, որ Բագրատունիները Հայաստանից են անցել Վրաստան:

Եղբայրներից երեքին Ռաքայել թագուհին անվանափոխում է կոչելով մեկին Մոշալե, մյուսին՝ Բագրատ, որն էլ Բագրատունիների նախահայրն է, իսկ երրորդին՝ Աբգավար⁴⁴: Դավթի որդի Սմբատը հաջորդիվ նշում է եղբայրներից մյուս չորսի անունները՝ Գուարամ, Սահակ, Ասամ և Վարազվարդ, ապա հավելում, որ նրանք գնացին Քարթլի, և որ նրանցից Գուարամը դարձավ էրիսթավ⁴⁵ ու Վրաց Բագրատունիներն այս Գուարամի սերունդները են⁴⁶: Բյուզանդական կայսր Հուստինիոս II (565-578)⁴⁷ նրան շնորհում է կուրապաղատի տիտղոս⁴⁸: Փաստորեն, Գուարամը պետք է լինի VI դարի անձ, այսինքն՝ ըստ Դավիթ պատմիչի՝ Վրաց Բագրատունիների հիմքը դրվել է VI դ., ինչը համընկնում է Կոստանդին Ծիրանաձնի նշած ժամանակահատվածին:

Այնուամենայնիվ, անհասկանալի է, թե ինչու է Վրաց Բագրատունիների նախահայրը կոչվում ոչ թե Բագրատ կամ Բագրատ, այլ Գուարամ: Վրացական մյուս աղբյուրներն ևս տեղեկություններ են պահպանել Գուարամ կուրապաղատի մասին: Ընդ որում, «Վրաց դարձ»-ում ևս խոսվում է վերջինիս մասին, սակայն չի նշվում, որ նա Բագրատունի էր կամ նրանց նախահայրը⁴⁹: Համաձայն Դավթի որդի Սմբատի՝ Գուարամ կուրապաղատին հաջորդում է որդին՝ Ստեփանոսը, որը եղբոր՝ Դեմետրեի հետ կառուցում է Մցխեթի Ջվարի

⁴³ Վրացական աղբյուրներում մինչև XVIII դ. «Հայաստան»-ը հանդիպում էր և՛ «ՆՐԱԾԵՐԻՆ» և՛ «ՆՐԱԾԵՐԵՏ» (Սոմխիթի և Սոմխեթի) ձևերով, բայց «ՆՐԱԾԵՐԻՆ» էր կոչվում նաև հայ-վրացական սահմանային տարածքը: XVIII դ. Աստիհանաբար «Հայաստան»-ը սկսեց կոչվել «ՆՐԱԾԵՐԵՏ», իսկ «ՆՐԱԾԵՐԻՆ»-ին՝ վերաբերվում էր հայ-վրացական սահմանային տարածքին (տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 44, ծան. 10): Սմբատի երկում ֆանիցս օգտագործվում է «ՆՐԱԾԵՐԻՆ» ձևը, որը բարգմանում են «Армения», և միայն մեկ դեպքում, նկատի ունենալով սահմանային տարածքը, է. Քաղախիշվիլին գրում է «Сомхити» (տե՛ս Такайшвили Е., *Источники Грузинских летописей, три хроники*, с. 122, հմմտ. Сумбат Давитис-дзе, էջ 28):

⁴⁴ *ՆՐԱԾԵՐԻՆ* ճառագող ձևը *Ջրոնոցա*, թ. 59.

⁴⁵ «Էրիսթավ» վրացական աղբյուրներում նշանակում է շրջանի կառավարիչ, որը հաստատվում էր թագավորի կողմից (մանրամասն տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 45, ծանոթ. 12):

⁴⁶ Նույն տեղում, էջ 58:

⁴⁷ *Նախորդող օստորոնի ճարտարագիտություն*, Երևան, 1973, թ. 271.

⁴⁸ *ՆՐԱԾԵՐԻՆ* ճառագող ձևը *Ջրոնոցա*, թ. 59.

⁴⁹ Такайшвили Е., *Источники Грузинских летописей, три хроники*, с. 42.

(Ս. Խաչ) եկեղեցին⁵⁰: Վերջինիս պատին պահպանված արձանագրությունը ևս վկայում է, որ այն կառուցել են Ստեփանոս և Դեմետրե եղբայրները⁵¹: Սմբատը Ստեփանոսին անվանում է «Մեծ», նա կրում էր «մթավար» տիտղոսը⁵², իսկ նրա կառավարման ժամանակ կաթողիկոսն Բարթլոմյան⁵³ էր (591-595): Ըստ վրացական աղբյուրների՝ Ստեփանոսից հետո մթավար է եղել Ադարնասեն, որին Սմբատ պատմիչը կոչում է Ստեփանոսի որդի⁵⁴ (տե՛ս ներդիր, աղյուսակ 4):

XI դ. Վրաց հեղինակ Զուանշերը հիշատակում է ոմն Գուարամի՝ Վախթանգ Գորգասալի հույն կնոջից ծնված որդուն՝ Միրզատի զարմիկին (տե՛ս ներդիր, աղյուսակ 5), որն իշխում էր Կղարջքում և Զավախքում, սակայն Բյուզանդիայի կայսրից կուրապաղատի տիտղոս ստանալով, ուղարկվեց Մցխեթ⁵⁵: Զուանշերի պատմության վրացերեն բնագրում, սակայն, չի նշվում, որ այս Գուարամը եղել է Վրաց Բագրատունիների նախահայրը⁵⁶: Ընդ որում, Ս. Կաուխիշվիլին «Վրաց Տարեգրքի» վրացերեն հրատարակությունում ավելացրել է հետևյալը. «*ხოლო ესე გუარამ იყო დედით ხოსროიანი და მამით ზავრატოანი. და ესე ზავრატოანი შვილისშვილნი და ნათესავნი არიან ამა გუარამისნი*»⁵⁷ («Այս Գուարամը մոր կողմից Խոսրովունի էր և հոր կողմից՝ Բագրատունի: Եվ նա Բագրատունիների թոռն էր, և կան այդ Գուարամի հարազատները»), որը բացակայում է հիմնական տեքստից: Այդ հատվածը նա ավելացրել է Դավթի որդի Սմբատի տեքստի ձեռագրերից: Բացի այդ, է. Քաղաիշվիլին նաև մանրամասն ներկայացնում է, որ «Վրաց Տարեգրքի» նախնական տեքստում, որտեղ բացակայում է Դավթի որդի Սմբատի տեքստը, ոչ մի խոսք չկա Գուարամի Բագրատունի ծագման մասին⁵⁸: Այսինքն՝ Գուարամին Բագրատունի ծագում վերագրելն սկսվել է Սմբատ պատմիչից, ինչն արդեն իսկ հիմք է տալիս ժխտելու այդ տեսակետը:

⁵⁰ *სუმბატ დავითის ძის ქრონიკა*, გვ. 59.

⁵¹ Чубинашвили Г. Н., *Памятники типа Джвари*, Тбилиси, 1948, с. 22-23.

⁵² «Մթավար» կամ «մթավարի» վրացերեն նշանակում է գլխավոր, կառավարիչ, գերիշխան: Աղբյուրներում այդպես են կոչվում տեղական իշխանները կամ կառավարիչները (մանրամասն տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 49, ծանոթ. 51):

⁵³ Նույն տեղում, էջ 60: Բարթլոմը կաթողիկոս է եղել երկու անգամ: Սմբատը մեկ անգամ նրան կոչում է Մցխեթի կաթողիկոս՝ Սամուելից հետո (խոսքը Սամուել IV (582-591) մասին է, տե՛ս *სუმბატ დავითის ძის ქრონიკა*, გვ. 59), իսկ երկրորդ անգամ նրան անվանում է «երկրորդ Բարթլոմ» (նույն տեղում, էջ 60), սակայն դա նույն անձն է, պարզապես նա երկու անգամ է դարձել կաթողիկոս (տե՛ս Такайшвили Е., *Источники Грузинских летописей, три хроники*, էջ 132, ծան. 5):

⁵⁴ *სუმბატ დავითის ძის ქრონიკა*, გვ. 60.

⁵⁵ Джуаншер Джуаншериян, с. 105.

⁵⁶ *ქართლის ცხოვრება*, ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით *ს. ყაუხჩიშვილის* მიერ, ტომი I, თბილისი, 1955, გვ. 218 (այսուհետև՝ *ქართლის ცხოვრება*, ტომი I, 1955), *Картлис Цховრება*, 2008, с. 105.

⁵⁷ *ქართლის ცხოვრება*, ტომი I, 1955, გვ. 218.

⁵⁸ Такайшвили Е., *Источники Грузинских летописей, три хроники*, с. 42-43, прим. 4.

Ջուանշեր պատմիչը ևս նշում է, որ Գուարամ Կուրապաղատին հաջորդում է որդին՝ Ստեփանոսը, որն իրեն թագավոր էր հռչակել, սակայն նրան ճանաչում են որպես մթավար⁵⁹ : Ջուանշերը նրան համարում է «անհավատ» և ասում, որ Ստեփանոսը չէր ծառայում Աստծուն⁶⁰ : Ջուանշերը ևս Ստեփանոսի եղբայր է համարում Գեմետրեին (տե՛ս ներդիր, աղյուսակ 5), որը կառուցել է Զվարիի եկեղեցին⁶¹ : Պատմիչն ավելացնում է, որ Ստեփանոսն իշխում էր ամբողջ Քարթլիի վրա և նստում էր Թբիլիսիում⁶² : «Վրաց դարձ»-ում ևս նշվում է, որ Գուարամին հաջորդում է որդին՝ Ստեփանոսը, որի եղբայրն էր Գեմետրեն⁶³ (տե՛ս ներդիր, աղյուսակ 6) : Այդ ժամանակահատվածը համապատասխանում է Բյուզանդական Մորիկ (582-602), Փոկաս (602-610) և Հերակլ I (610-641) կայսրերի գահակալմանը⁶⁴ :

«Վրաց դարձ»-ում և Ջուանշերի Պատմությունում նույնպես Ստեփանոսից հետո կառավարիչ է հիշվում Ադարնասեն կամ Ատրներսեհը⁶⁵ (տե՛ս ներդիր, աղյուսակ 5, 6) : Սակայն, ի տարբերություն Դավթի որդի Սմբատի՝ այնտեղ Ատրներսեհը չի համարվում Ստեփանոսի որդին⁶⁶, ավելին, Ջուանշերը նրան կոչում է Վախթանգ Գորգասալի որդի Դաչեի թոռը, այսինքն՝ Բակուրի որդին, որն իշխում էր Կախեթում (տե՛ս ներդիր, աղյուսակ 5) : Ատրներսեհին Բյուզանդական կայսր Հերակլ I-ը նշանակում է Քարթլիի կառավարիչ և Թբիլիսին հանձնում նրան⁶⁷ : Պատմիչը նաև ավելացնում է, որ Ստեփանոսի որդիները մնացին Կղարջքի լեռներում, սակայն չի նշում նրանց անունները⁶⁸ : Կասկածից վեր է, որ երեք աղբյուրներում նշված Ատրներսեհը միևնույն անձն է, քանի որ բոլորն էլ նրա կառավարման ժամանակի կաթողիկոսներ են անվանում Հովհաննես II-ին (610-619), Բաբելաին (619-629) և Թաբորին (629-634)⁶⁹ : Այսպիսով, հաշվի առնելով հատկապես Ջուանշերի և «Վրաց դարձ»-ի տեղեկությունները, կարելի է փաստել, որ Ատրներսեհը վերոհիշյալ Գուարամի սերնդակիցը չէր, և անգամ, եթե վերջինիս ընդունենք որպես Բագրատունիների նախահայր, ապա Ատրներսեհից սկսած այդ սերունդը փոխվում է : Ակն-

⁵⁹ ქართლის ცხოვრება, ტომი I, 1955, გვ. 222, Джуаншер Джуаншериян, с. 106.

⁶⁰ նույն տեղում :

⁶¹ Джуаншер Джуаншериян, с. 106.

⁶² նույն տեղում :

⁶³ Такайшвили Е., Источники Грузинских летописей, три хроники, с. 44.

⁶⁴ Такайшвили Е., Источники Грузинских летописей, три хроники, с. 44-45, Джуаншер Джуаншериян, с. 106.

⁶⁵ Такайшвили Е., Источники Грузинских летописей, три хроники, с. 45, Джуаншер Джуаншериян, с. 107.

⁶⁶ նույն տեղում :

⁶⁷ Джуаншер Джуаншериян, с. 107.

⁶⁸ նույն տեղում :

⁶⁹ სუმბატ დავითის ძის ქრონიკა, გვ. 60, Такайшвили Е., Источники Грузинских летописей, три хроники, с. 45, Джуаншер Джуаншериян, с. 107.

հայտ է, որ այստեղ կեղծված է Բագրատունիների ծագումն ու սերդաբանությունների գիծը:

Ատրնեբսեհի մահից հետո նրան փոխարինում է որդին՝ Ստեփանոսը⁷⁰ (պայմանական կոչենք Ստեփանոս II), որին Ջուանշերն անվանում է սուրբ և հավատացյալ, եկեղեցիներ կառուցող⁷¹: Ստեփանոսը հիշատակվում է նաև «Արչիլ թագավորի վկայաբանություն»-ում, որտեղ նա հանդես է գալիս որպես Ատրնեբսեհի որդի՝ «հուշակավոր Վախթանգի ցեղից»⁷²: Այս Ստեփանոս II-ից հետո «Բագրատունիների» ճյուղագրության վերաբերյալ աղբյուրների տեղեկությունները չեն համապատասխանում միմյանց:

Համաձայն Սմբատ պատմիչի՝ Ստեփանոսից հետո էրիսթավ է դառնում որդին՝ Գուարամ կուրապաղատը, նրանից հետո՝ վերջինիս որդին՝ Վարազ-Բակուր անթիպատոսը, որը գարդաբանցիներին դարձրեց քրիստոնյա, որից հետո ներսեն, ապա ներսեի որդիները՝ Փիլիպեն, Ստեփանոսը և Ատրնեբսեհը, ապա վերջինիս որդիները՝ Գուրգեն էրիսթավն ու Աշոտ կուրապաղատը⁷³ (տե՛ս ներդիր, աղյուսակ 4): Վերջինս նույն ինքը՝ Վարդանի և Կոստանդին Միրանաձնի հիշատակած Աշոտ I Մեծ կուրապաղատն է: Սմբատ պատմիչը Աշոտ կուրապաղատից հետո հիշում է նրա որդիներին՝ Ատրնեբսեհ, Բագարատ և Գուարամ⁷⁴ (տե՛ս ներդիր, աղյուսակ 4):

Ստեփանոսի սերունդն այլ ճյուղագրությամբ է տրված «Վրաց դարձ»-ում, համաձայն որի, Ստեփանոսից հետո էրիսթավներ են եղել. «Գուարամ կուրապաղատը, Գուարամ Կրտսերը (ռուս. տեքստում՝ “МОЛОДОЙ”), ապա՝ Արշուշակ կուրապաղատը, Վարազ-Բակուր ապայ-պատրիկոսը⁷⁵, որը գարդաբանցիներին դարձրեց քրիստոնյա, հետո՝ ներսեն և իր որդիները՝ Փիլիպյալ, Ստեփանոսը, Ադրնեսեն, Բաղդաղի որդի Գուարամ Բակուրիանը, և Ադրնեսեի որդիները՝ Ստեփանոսը, Աշոտ կուրապաղատը և Գուարամը»⁷⁶ (ընդձուլմը մերն է – Լ. Ն.) (տե՛ս ներդիր, աղյուսակ 6): Ընդգծված անձնավորությունները հայտնի չեն ո՛չ Սմբատին, ո՛չ «Վրաց Տարեգրքի» մյուս հեղինակներին: Չի բացառվում նրանց ոչ իրական պատմական անձեր լինելը:

Ստեփանոսի սերունդը բոլորովին այլ ճյուղագրությամբ է ներկայացնում Ջուանշերը: Ըստ նրա՝ Ստեփանոսն ուներ երկու որդի՝ Միհրն ու Արչիլը և

⁷⁰ სუმბატ დავითის ძის ქრონიკა, გვ. 61, Джуаншер Джуаншериян, с. 107, Такайшвили Е., Источники Грузинских летописей, три хроники, с. 45.

⁷¹ Джуаншер Джуаншериян, с. 107.

⁷² Летопись Картли, с. 42.

⁷³ სუმბატ დავითის ძის ქრონიკა, გვ. 61.

⁷⁴ նույն տեղում:

⁷⁵ Է. Թաղախչվիլին կառծում է, որ պետք է լինի «անտիպատրիկոս», որը ձեռագրերի աղավաղման հետևանք է (տե՛ս Такайшвили Е., Источники Грузинских летописей, три хроники, էջ 46, ծան. 7):

⁷⁶ Такайшвили Е., Источники Грузинских летописей, три хроники, с. 46-47.

նրանց միջև էլ բաժանեց իր իշխանությունն ու հարստությունը⁷⁷ (տե՛ս ներդիր, աղյուսակ 5): Այն մասին, որ Արչիլն է եղել Ստեփանոսի որդին, վկայում է նաև վրացական մեկ այլ Անանուն աղբյուր՝ «Սուրբ վկա Արչիլը Վրաց թագավոր»-ի հեղինակը, և հավելում, որ նա Վախթանգ Գորգասալի սերնդից էր և խոսրովունի էր⁷⁸: Մ. Բրոսսեն ևս նրան համարում է խոսրովունի⁷⁹: Համաձայն Զուանշերի՝ Արչիլն ուներ երկու որդի՝ Հովհանն ու Զուանշերը, և չորս դուստր՝ Գուրանդուխտը, Մարիամը, Միրանդուխտը և Շուշանը⁸⁰ (տե՛ս ներդիր, աղյուսակ 5): «Վրաց Տարեգրք»-ում էլ է նշվում, որ Արչիլն ուներ երկու որդի՝ Հովհանը և Զուանշերը⁸¹ (տե՛ս ներդիր, աղյուսակ 7): Միհրի, Արչիլի և վերջինիս որդիների մասին որևէ տեղեկություն չկա ո՛չ Սմբատ պատմիչի մոտ, ո՛չ էլ «Վրաց դարձ»-ում: Այս Արչիլը Վրաց թագավոր Արչիլ II-ն էր, որը նախ կառավարել է եղբոր հետ, ապա վերջինիս մահից հետո իշխել է միանձնյա⁸² (663-668, 668-718): «Վրաց Տարեգրքում» «Սուրբ վկա Արչիլի վկայաբանությունը»⁸³ վերնագրով մի փոքր հատված է գետեղված, որում ներկայացվում են նույն այդ Արչիլ թագավորի կյանքն ու գործունեությունը: Վրաց եկեղեցին սրբացրել է նրան և հունիսի 21 նշվում է որպես այդ սրբի օր⁸⁴:

Զուանշերի պատմության՝ Արչիլ թագավորին վերաբերվող հատվածում, պահպանվել է շատ կարևոր մի վկայություն, որից երևում են Բագրատունիների վրացական ճյուղի առաջացման իրական և հավաստի պատմության որոշ դրվագներ, նաև նշմարվում է նրանց կապը հայ Բագրատունիների հետ: «Այդ ժամանակ նրա [Արչիլի – Լ. Ն.] մոտ եկավ մի իշխան՝ Գավիթ մարգարեի սերնդից, Ադարնասե անունով Ադարնասե Կույրի եղբորորդին, որի հայրն ազգակից էր Բագրատունիներին, իսկ հույների կողմից կառավարիչ էր նշանակվել Հայաստանի կողմերում: Էմիր խուլի (Քարթլիի) գրավման ժամանակ նա գնացել էր Գուարամ կուրապաղատի որդիների մոտ՝ Կղարջք և մնացել էր այնտեղ»⁸⁵: Այդ Ադարնասեն կամ Ատրներսեհն Արչիլից տարածք է խնդրում, իսկ վերջինս նրան է տալիս Շուշավերն ու Արտահանը⁸⁶: Զուանշերի նշած Ատրներ-

⁷⁷ Джуаншер Джуаншериян, с. 108.

⁷⁸ *ქართლის ცხოვრება*, ტომი I, 1955, გვ. 246-247, *Картлис Цховреба*, 2008, с. 135-136.

⁷⁹ Brosset M., *Histoire de la Georgie*, p. 248.

⁸⁰ Джуаншер Джуаншериян, с. 112.

⁸¹ *Летопись Картли*, с. 47, *Картлис Цховреба*, 2008, с. 139, *Матиане Картлиса*, с. 27.

⁸² Джуаншер Джуаншериян, с. 111-112: Վրաց պատմագիրներից ոմանք Արչիլի կառավարման տարեթվերը հասցնում է մինչև 745 թ. (705-745) տե՛ս *Картлис Цховреба*, 2008, с. 137, прим. 1:

⁸³ *Картлис Цховреба*, 2008, с. 135-136.

⁸⁴ Նույն տեղում, էջ 137, ծան. 1:

⁸⁵ *ქართლის ცხოვრება*, ტომი I, 1955, გვ. 243, *Джуаншер Джуаншериян*, с. 112.

⁸⁶ Նույն տեղում:

սեհ Կուչրը Հայոց իշխան Աշոտ Կուչրն էր, իսկ նրա եղբորորդի Ադարնասեն (իրականում որդին էր)՝ Վասակը կամ վերջինիս որդի Ատրներսեհը: Հնարավոր է այս երկուսը նույնացվել են և կոչվել Ատրներսեհ: Այս Ատրներսեհի մասին տեղեկություններ են պահպանվել նաև «Վրաց Տարեգրք»-ում, ըստ որի, Արշիլի որդի Ջուանշերն ամուսնանում է հիշյալ Ատրներսեհի դստեր՝ Լատավրիայի հետ, Ատրներսեհն էլ հիշվում է Բագրատունիների տոհմից⁸⁷: Ընդ որում, «Տարեգրքի» հեղինակն ավելացնում է, որ Ջուանշերի մայրը դեմ էր այդ ամուսնությանը, «քանի որ չգիտեր, որ նրանք (Բագրատունիները) Դավիթ մարգարեի սերնդից են, իսկ երբ իմացավ, սիրեց որդու կնոջը»⁸⁸: Այսպիսով, նրանց ամուսնությունը իրականում առաջին անգամ միավորվում են Բագրատունիներն ու Վախթանգ Գորգասալի սերունդը: Թվում է Ջուանշերից ու Լատավրիայից հետո իշխանությունը պետք է ժառանգեր նրանց որդին, սակայն Ջուանշերի մահից հետո իշխանությունն անցնում է Ատրներսեհի սերնդին, առավել հստակ՝ Լատարիայի եղբորը: Այսինքն՝ Ջուանշերից հետո ընդհատվում է խոսքովյան դինաստիայի կառավարումը և սկսվում Բագրատունիների իշխանության ժամանակաշրջանը:

«Վրաց Տարեգիրքը» Ատրներսեհից հետո հիշում է ոմն Աշոտ կուրապաղատի, որն իշխում էր Քարթլիի վրա⁸⁹, սակայն չի նշում, որ վերջինս Ատրներսեհի որդին էր: Ավելին, «Քարթլիս Յիսովրեբայի» հին հայերեն թարգմանությունում Աշոտը հիշվում է ոչ թե Ատրներսեհից, այլ Ջուանշերից հետո. «Եւ մեռան որդիքն Արշիլն՝ Իւանէ և Ջուանբեր. և կալաւ զտեղի նոցա Կիւրապաղատն Աշոտ. և մեծարեաց զնա կայսրն»⁹⁰: Հիշյալ Աշոտն անկասկած, նույն ինքը՝ Աշոտ I Կուրապաղատն էր, որը նշվում է Սմբատի «Պատմություն»-ում, «Վրաց դարձ»-ում, հայկական ու բյուզանդական աղբյուրներում, ինչպես նաև Գեորգի Մերչուլի մոտ⁹¹, իսկ Աշոտի որդիներ էին Բագրատը, Ատրներսեհը և Գուարամը⁹² (տես՝ ներդիր, աղյուսակ 7, հմմտ. աղյուսակ 1, աղյուսակ 4): Սակայն, ի տարբերություն «Վրաց Տարեգիրքի», այս բոլոր աղբյուրներում Աշոտը համարվում է Ատրներսեհ Բագրատունու որդին: Այն, որ աղբյուրներում հիշատակվող Աշոտները միևնույն անձն է, կարելի է վստահ ասել, ելնելով դրանցում նրա սերնդի թվարկումից: Այդ շարքում բացառություն է «Վրաց դարձ»-ը,

⁸⁷ *Картлис Цховреба*, 2008, с. 140.

⁸⁸ Նույն տեղում:

⁸⁹ Նույն տեղում, *Летопись Картли*, с. 48.

⁹⁰ «Քարթլիս Յիսովրեբայի» կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությամբ և բաղադրով լույս բնծայեց *Իլիա Աբուլաձեն*, Թբիլիսի, 1953, էջ 213:

⁹¹ **Георгий Мерчул**, *Житие Григория Хандзтийского*, перевод **Н. Я. Марра** (Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. VII), СПб., 1911, с. 92, 95 и др.

⁹² *Картлис Цховреба*, 2008, с. 142.

որտեղ Բագրատունիների ճյուղագրությունն ավարտվում է հենց Աշոտ Կուրապաղատով⁹³ :

Այսպիսով, վրաց աղբյուրներում ստեղծվեց այն կապը, ըստ որի, Վրաց Բագրատունիները ծագում են հայ Բագրատունիներից: Ինչպես վերը նշվեց, Աշոտ Կուրապաղատից սկսած, աղբյուրների տեղեկությունները համապատասխանում են միմյանց: Աշոտ Կուրապաղատին փոխարինեց միջնեկ որդին՝ Բագրատը, ժառանգելով կուրապաղատի տիտղոսը, ապա՝ սրա որդի Դավիթը, իսկ վերջինից հետո՝ սրա որդի Ադարնասեն⁹⁴ (Ատրներսեհը), որը Հայոց թագավոր Սմբատ I կողմից 899 թ. հռչակվեց թագավոր, իսկ Բյուզանդական կայսրը նրան շնորհեց կուրապաղատի տիտղոս: Այսինքն՝ կրկնվում է Վարդան Արևելցու ներկայացրած ճյուղագրությունը (հմմտ. աղյուսակ 1, աղյուսակ 4 և աղյուսակ 7):

Աշոտ I կուրապաղատի հայր Ատրներսեհ Բագրատունու նախնիների ճյուղագրությունն այլ է կերպ է տրված «Վրաց Տարեգրքի» հայերեն թարգմանությունում. «նրա հայրը՝ [Ատրներսեհի – Լ. Ն.] ներսեհը, Վարագ-Բակուր անտիպատրիկի որդին և այս Վարագ-Բակուրի հայրը՝ Գվարամ անվամբ կուրապաղատը՝ Ստեփաննոս Առաջինի որդին և Դեմետրեի եղբայրը, սրանք վախճանվել էին, և այս Ատրներսեհի եղբայրները՝ Փիլիպե և Ստեփաննոս անվամբ, նույնպես մահացել էին»⁹⁵: Մ. Բրոսսեն ևս պահպանել է այդ ճյուղագրությունը⁹⁶, որը նշված է նաև Ս. Կաուխիշվիլիի հրատարակած վրացերեն տեքստում⁹⁷: Սմբատի տեքստի համեմատ այստեղ Վարագ-Բակուրի հայրը Ստեփանոս I-ի որդի Գվարամ կուրապաղատն է, իսկ Սմբատի մոտ Գուարամ կուրապաղատի հայրը Ստեփանոս II էր⁹⁸:

Այս ճյուղագրությունը նույնությամբ կրկնվում է վրաց մեկ այլ աղբյուրում XVIII դ. հեղինակ արքայազն Վախուշտի մոտ⁹⁹ (տե՛ս ներդիր, աղյուսակ 8): Վերջինս նույնպես ներկայացնում է Վրաց Բագրատունիների ճյուղագրությունը՝ գրեթե նույնությամբ կրկնելով Դավիթի որդի Սմբատի տարբերակը: Սակայն Վախուշտը նկատել է աղբյուրների տեղեկությունների անհամապատասխանությունը, ուստի փորձել է հարթել և ամբողջական ձևով ներկայացնել Բագրատունիների ճյուղագրությունը՝ ավելացնելով նոր անուններ: Ի տարբերություն Սմբատի՝ Վախուշտը նկատել է նաև այն կարևոր հանգամանքը, որ Վրաց Բագրատունիների նախահայրը կոչվում է Գուարամ և փորձել է շտկել այդ բաց-

⁹³ Такайшвили Е., *Источники Грузинских летописей, три хроники*, с. 47.

⁹⁴ *Картлис Цховреба*, 2008, с. 141-144, **ՆՄՁՁԾ** **ՎԱՅՎՈՒՍ ԺՆՄԵՆՅԱՆ**, 33. 63-64, **Геооргий Мерчул**, *Житие Григория Хандзтийского*, с. 105.

⁹⁵ «Քարթլիի մատյան», բարգմանությունը Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, մաս Ա, ԼՂԳ, 1989, թիվ 9, էջ 62:

⁹⁶ Brosset M., *Histoire de la Georgie*, p. 259.

⁹⁷ *ქართლის ცხოვრება*, ტომი I, 1955, 33. 252.

⁹⁸ **ՆՄՁՁԾ** **ՎԱՅՎՈՒՍ ԺՆՄԵՆՅԱՆ**, 33. 61.

⁹⁹ Вахушти Багратиони, с. 186.

թողումը: Համաձայն Վախուշտի՝ Սողոմոնի որդի Գուրամը կամ Գուարամն ունեցել է երկու որդի՝ Բագրատ, իսկ երկրորդի անունը չի նշվում: Գուրամը մահացել է 532 թ. կամ ըստ վրացական տոմարի՝ 284 թ.: Նրան հաջորդում է որդին՝ Բագրատը, որը մահացել է 568 թ. (ըստ վրացական տոմարի՝ 320 թ.)¹⁰⁰: Վրաց աղբյուրներից և ոչ մեկը չի հիշատակում Գուրամի որդի Բագրատին, հետևաբար կարելի է ենթադրել, որ վերջինս հորինվել է Վախուշտի կողմից, և ոչ առանց պատճառի: Արքայազն Վախուշտը նկատել է, որ եթե Բագրատունիների տոհմը սերում է Գուարամից, ինչպես վկայում են այլ աղբյուրները, հետևաբար նրանք պետք է կոչվեին Գուրամյաններ (կամ Գուարամյաններ), ոչ թե Բագրատունիներ, ուստի նա ավելացնում է նոր անուններ, այսինքն՝ Գուրամ կուրապաղատից հետո իշխում է որդին՝ Բագրատը, որից հետո՝ սրա որդի Գուրամ կուրապաղատը: Այս Գուրամը, ինչպես վկայում է Վախուշտը, Միհրդատյան տոհմից էր, սակայն, փոխելով տոհմի անունը, հոր անունով կոչեց Բագրատունի¹⁰¹: Այդ պատճառով էլ նրանց տոհմը կոչվեց Բագրատունի: Վախուշտը մեկ ամգամ ևս հաստատում է այդ ամենը¹⁰²: Բացի այդ, հեղինակը նաև ավելացնում է նրանց մահվան թվականները: Ըստ արքայազն Վախուշտի՝ այս Գուրամ կուրապաղատը մահացել է 600 թ. (ըստ վրացական տոմարի՝ 352), որից հետո հիշվում են նրա երկու որդիները՝ Ստեփանոսը և Դեմետրեն¹⁰³ (տե՛ս ներդիր, աղյուսակ 8): Համաձայն պատմիչի՝ Դեմետրեն վաղ էր մահացել, իսկ Ստեփանոսը՝ 619 թ. (ըստ վրացական տոմարի՝ 371)¹⁰⁴: Վերջինիս սերունդը, ի տարբերություն Սմբատի ու Ջուանշերի «Պատմության» և «Վրաց դարձ»-ի, այլ ճյուղագրություն մե և ներկայացված Վախուշտի աշխատությունում, ինչպես վերը նշեցինք (տե՛ս ներդիր, աղյուսակ 8, հմմտ. աղյուսակ 4, 5, 6): Այսինքն՝ կարելի է ընդգծել աղբյուրների հերթական անհամապատասխանությունը:

Այսպիսով, համեմատելով աղբյուրների տեղեկությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ մինչև Ատրներսեհ և Աշոտ Կուրապաղատ բոլոր հիշյալ անձերը կապ չունեն Բագրատունիների հետ: Ուստի Բագրատունիների վրացական ճյուղի հիմնադիր պետք է համարել Ատրներսեհին: Հետևաբար, Բագրատունիների վրացական ճյուղի առաջացման միակ և հավաստի վկայությունները պահպանվել են Վարդան Արևելցու և Ջուանշերի «Պատմություններում», իսկ մնացածները մասամբ իրական պատմական անձնավորություններ են, բայց ոչ Բագրատունիներ: Ընդ որում, Գուարամ Կուրապաղատը և նրա սերունդը՝ մինչև Ատրներսեհ և Աշոտ կուրապաղատը, համարվել են նաև հնարածո¹⁰⁵:

Այն, որ նրանք Բագրատունի չեն և կապ չունեն վերջիններիս հետ, հաս-

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 185:

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² Նույն տեղում, էջ 192-193:

¹⁰³ Նույն տեղում, էջ 186:

¹⁰⁴ Նույն տեղում:

¹⁰⁵ Արմեն Ն., Երկեր, Բ. Ա., էջ 488:

տատվեց հենց վրացական աղբյուրների համեմատությամբ, սակայն համամիտ չենք այն կարծիքին, որ Գուարամը և նրա սերդի ներկայացուցիչները պատմական իրական դեմքեր չեն եղել, քանի որ դժվար է պատկերացնել, որ աղբյուրներն անհիմն հորինված այդքան շատ անձեր են պարունակում: Ավելի հեշտ կլինեք գոյություն ունեցած անձերին որևէ կերպ կապել Բագրատունիների հետ և նրանց վերագրել Բագրատունի ծագում, քան ստեղծել նոր դեմքեր: Բացի այդ, պատահական չէ, որ Գուարամն ու նրա հաջորդներն արյունակցական կապ են ունեցել Վրաց թագավոր Վախթանգ Գորգասալի և Խոսրովյան դինաստիայի հետ: Այդ իշխանները չեն հորինվել, այլ նրանց փորձել են վերագրել Բագրատունի ծագում, ինչը երբեմն արվել է աղաղակող անհամապատասխանություններով: Եվ, ի վերջո, նրանց գոյությունը փաստվել է վիճաբար արձանագրություններով և նրանց հատած դրամներով. հայտնաբերվել են բազմաթիվ դրամներ, որոնց վրա կարելի է կարդալ Ստեփանոս I-ի և Ստեփանոս II-ի անունները¹⁰⁶:

Այսպիսով, չնայած վրացական աղբյուրների վկայություններին, հաստատապես կարելի է շեշտել Վրաց Բագրատունիների ծագումը հայ Բագրատունիներից: Սակայն սխալ կլինեք ենթադրել, որ Բագրատունիների հայկական ճյուղի հետ կապ չունենալու մասին այդ վկայությունները ստեղծվել են զուտ Վրաց Բագրատունիներին հրեական ծագում վերագրելու, առավել հստակ՝ Դավիթ մարգարեից սերելն ապացուցելու համար: Բազմաթիվ ուսումնասիրողներ են անդրադարձել Վրաց Բագրատունիների հրեական ծագման լեգենդի ստեղծման ժամանակին և դրդապատճառներին: Մարկվարտի կարծիքով լեգենդը ստեղծվել է IX-X դդ. սկզբներին¹⁰⁷, համաձայն Կ. Կեկելիձեի և Պ. Ինգոուկվայի՝ IX դ. սկզբներին, Աշոտ կուրապաղատի կառավարման շրջանում¹⁰⁸: Լեգենդի ստեղծումը IX դարի հետ է կապում նաև Ս. Ջանաշիան¹⁰⁹: է. Թաղախչվիլին լեգենդի ստեղծման հիմքերը տեսնում է VIII դ. երկրորդ կեսին, և ըստ նրա՝ այն փոփոխությունների է ենթարկվել և XI դ. ընդունել է այն տեսքը, որը տրված է Մմբատ պատմիչի երկում¹¹⁰: Լեգենդի ձևավորումն Աշոտ Բագրատունու կառավարման ժամանակաշրջանի հետ են կապում նաև Մ. Լորդկիպանիձեն¹¹¹ և այլք: Այսինքն՝ ուսումնասիրողները Բագրատունիների ծագման հրեական վարկածի հիմքում մեծ մասամբ դնում են քաղաքական դրդապատճառ-

¹⁰⁶ Пахомов Е. М., *Монеты Грузии*, Тбилиси, 1970, с. 28-36.

¹⁰⁷ Marquart J., p. 403.

¹⁰⁸ კეკელიძე კ., *ქართული ლიტერატურის ისტორია*, ტომი I, თბილისი, 1960, გვ. 154, ინგოროყვა პ., *გიორგი მერჩულე*, გვ. 76-77.

¹⁰⁹ *История Грузии*, под. ред. С. Джанашиа, I, Тбилиси, 1946, с. 190-191.

¹¹⁰ სუმბატ დავითის ძის *ქრონიკა*, გვ. 25-26.

¹¹¹ ლორთქიფანიძე მ., “ლეგენდა ზაგრატიონთა წარმოშობის შესახებ”, კრებული «კავკასიის ხალხთა ისტორიის საკითხები», თბილისი, 1966, გვ.144-149.

ներ՝ ելնելով Տայքի և Կղարչքի Բագրատունիների հզորացման հանգամանքից: Սակայն այդ լեգենդի ստեղծմանը նպաստել են նաև այլ հանգամանքներ:

Վրացական աղբյուրների մեծ մասը պատկանում է XI դ., երբ Տայքում և Կղարչքում լայնորեն տարածված էր քաղկեդոնական դավանանքը: Ուստի չի բացառվում, որ վրաց պատմիչները, ելնելով հայ-վրացական դավանական տարբերություններից, ձգտում էին առաձնացնել նաև այդ ժամանակահատվածում Վրաց իշխող խավի՛ Բագրատունիների կապը հայկականի հետ և հորինել են նրանց համար նոր ծագում ու ճյուղագրություն: Թե որքան կարևոր էր կրոնական գործոնը, կարելի է դատել նաև Վրաց Բագրատունիների ծագման վերաբերյալ Թովմա Մեծոփեցու վկայությունից. «[Բագրատունիները - Լ. Ն.] թագաւորք եղեն յետ ցեղին Արշակունեաց...և ի նեղութենէ անօրինաց փախուցեալ ի տունն Վրաց՝ եղեն ուրացօղք ճշմարտութեանն և հաւատովքն քաղկեդոնիկ»¹¹² (ընդգծումը մերն է – Լ.Ն.):

LIANA NAZARYAN

THE ORIGINS OF THE GEORGIAN BRANCH OF THE BAGRATIDS

Keywords: Tayk, Atrnerseh Bagratid, Ashot kurapalat, Guaram kurapalat, Armenian, Byzantine and Georgian sources, “Georgian Annals”.

Until the second half of the 8th century, Tayk was the fiefdom of the Armenian princely Mamikonean family. The Mamikoneans were succeeded by another Armenian noble house, the Bagratids. A member of the Bagratid family from Tayk founded the Georgian branch of the dynasty. Under their command the Georgian princedoms for the first time united in a single state, and the country entered a new and glorious era that lasted for several centuries. So it is of great importance to find out whence, when and how the Bagratids appeared on the Georgian political arena.

There are three groups of sources that shed light on the formation of the Georgian branch of the Bagratids: Armenian, Byzantine and Georgian. Although they do not mention the exact date of its formation, it is known to have occurred between the late 8th and early 9th centuries. More detailed information can be found in Georgian sources. The authors of the *Georgian Annals* keep silent on the relations between the Georgian Bagratids and their Armenian branch, but other sources corroborate this relationship.

¹¹² Թովմաս Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 19-20:

ЛИАНА НАЗАРЯН ПРОИСХОЖДЕНИЕ ГРУЗИНСКОЙ ВЕТВИ БАГРАТИДОВ

Ключевые слова: Тайк, Атрнерсех Багратид, Ашот курапалат, Гуарам курапалат, армянские, византийские и грузинские источники, “Грузинская летопись”.

До второй половины VIII в. Тайк принадлежал одному из армянских княжеских родов, Мамиконянам. После их ухода с политической арены, регионом завладели Багратиды – другой армянский княжеский род. Именно один из них основал грузинскую ветвь той же династии. Под их началом грузинские княжества впервые объединились в единое государство, и страна вступила в новый и славный период, длившийся несколько столетий. Поэтому крайне важно узнать откуда, как и когда Багратиды появились на грузинской политической сцене.

Формирование грузинской ветви Багратидов освещается в трех группах источников: армянских, византийских и грузинских. Хотя они не указывают точную дату ее возникновения, однако известно, что это произошло в период с конца VIII по начало IX века. Более подробные сведения об этом можно найти именно в грузинских источниках. Несмотря на то что, авторы “Грузинской летописи” тщательно обходят молчанием факт родства грузинских Багратидов с их армянской ветвью, источники содержат сведения, подтверждающие эту связь.

ԱՐԿԱԴԻ ԱԿՈՊՈՎ

ԹՈՐԹՈՒՄԻ ԳԱՎԱՌԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ (XVI դ. -XVII դ. առաջին կես)

Բանալի բառեր՝ Թորթում, ժողովրդագրություն, վերաբնակեցում, մահմեդականացում, կեսկեսներ, Օսմանյան կայսրություն, Տայք, բնակչություն:

XIV դ. Փոքր Ասիայի ծովափնյա շրջաններում և Բալկանյան թերակղզում կատարելով մի շարք նվաճումներ՝ նորաստեղծ Օսմանյան պետությունն իր զավթողական քաղաքականությունն ակտիվացրեց նաև Արևելքում: 1473 թ. հաղթանակ տանելով ակ-կոյունլու Ուզուն-Հասանի նկատմամբ՝ թուրքերը ներխուժեցին Հայաստանի արևմտյան Դերջան և Եկեղյաց գավառներ, իսկ 1545-1549 թթ. գրավեցին Սամցխեի աթաբեկության մաս կազմող պատմական Մեծ Հայքի Տայք նահանգը¹:

1555 թ. Ամասիայում կնքված պայմանագրով, ի թիվս այլոց, Օսմանյան տիրապետության տակ անցավ նաև վերջին տարիների մեր ուսումնասիրության առարկա Թորթումի գավառը:

Հաստատվելով Արևմտյան Հայաստանում՝ թուրքերը ձեռնամուխ եղան տարածաշրջանի յուրացմանը՝ երկրամասը պարբերաբար տրոհելով վարչատարածքային մեծ ու փոքր միավորների²: Այս առումով, թերևս բացառություն է կազմում Թորթումի գավառը, որը մշտապես մնաց Արևմտյան Հայաստանի տարածքում ձևավորված ամենախոշոր վարչատարածքային միավորի՝ էրզրումի էյալեթի մաս³:

¹ Տե՛ս **Տաշեան Յ.**, «Տայք, դրացիք և խոտորչուր», *Հանդէս Ամսօրեայ*, 1971, թիւ 1-3, էջ 36, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Կ. Ս., Երևան, 1961, էջ 31:

² Խոշորագույն միավորները կոչվում էին էյալեթներ (նահանգներ), որոնց գլխավորում էին սուլթանի նշանակած կառավարիչները՝ բեյլերբեյիները կամ միրմիրանները: էյալեթները բաժանվում էին լիվաների կամ սանջակների (գավառ), որոնց կառավարիչները կոչվում էին սանջակբեյեր կամ միրլիվաներ: Մրանֆ ևս նշանակվում էին սուլթանի կողմից, սակայն նրա հետ հարաբերությունները իրականացնում էին նահանգապետերի միջոցով: Սանջակները բաժանվում էին նահիեների (գյուղախմբերի), որոնց գլխին կանգնած էին կայմակամները կամ մյուլիբները (գեղջավազ): Տե՛ս **Սաֆրաստյան Ա. Խ.**, «Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դ.», *Արևելագիտական ժողովածու*, Կ. 1, Երևան, 1960, էջ 285:

³ Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Կ. Բ, քարգանություն թուրքականբնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով, կազմեց **Ա. Խ. Սաֆրաստյան**, Երևան, 1964, էջ 219-220, Կ. Գ, **Էյլիա Չեղեթի**, Երևան, 1967, էջ 27:

Թորթումի գավառը տեղագրվում է «Աշխարհացոյց»-յան Տայք նահանգի Ոքաղե և Ագորդացիոր գավառներում Թորթում գետի և նրա վտակների ավազանում: Կլիմայական և աշխարհագրական պայմաններով գավառն առանձնահատուկ մի շրջան է պատված ձորերով ու լեռներով⁴:

Որպես էրզրումի նահանգի հյուսիսային գավառ՝ Թորթումի լիվան ձևավորվել է XVI դ. երկրորդ կեսին: Հարավ-արևելքից այն սահմանակից էր էրզրումի նահանգի Մամրվանի, հարավից՝ էրզրումի և Վերին Բասենի, արևմուտքից՝ Սպեռի գավառներին, հյուսիս-արևմուտքից՝ Ախալցխայի (Չլդըր) նահանգի Բերդագրակի (Կիսկիմի), հյուսիսից՝ Թավուսարի և հյուսիս-արևելքից Օլթիի գավառներին: Գավառակենտրոն Թորթում ավանը գտնվում էր էրզրում քաղաքից մոտ 55 կմ հեռավորության վրա՝ Թորթում գետի վերին հոսանքի շրջանում՝ Հարկևոր լեռան ձորահովտում: Ավանից ոչ հեռու՝ մի բարձր ժայռի վրա էր գտնվում նույնանուն բերդը. «Մեծատարած է բերդս այս քան զայլս և ահեղ, հիմնացեալ յեզր քարափանն, որ առ գետոյն արկեալ պարսպացն ըստ խոտորնակ ձևոյ քարաժայռին»⁵:

Սկսած XVI դ. երկրորդ կեսից Թորթումի գավառը բաժանվում էր 4 գյուղախմբերի՝ Թորթումի, Լսկավի, Աղջրիկի և Խախուի, որոնց կենտրոնները նույնանուն բնակավայրերն էին⁶: Թորթումի նահիեն զբաղեցնում էր գավառի հարավային և կենտրոնական, Լսկավի նահիեն՝ արևելյան, Աղջրիկի նահիեն՝ արևմտյան, իսկ Խախուի նահիեն՝ հյուսիսային շրջանները:

Ինչ վերաբերում է XVI-XVII դդ. Թորթումի գավառի ժողովրդագրական պատկերի վերհանմանը, ապա դժվարին այս խնդիրն էլ ավելի է բարդանում, քանի որ ժամանակահատվածը լուսաբանող սկզբնաղբյուրները խիստ սակավ են ու թերի: Պաշտոնական տվյալներում գրեթե միշտ պակասեցված էր հայերի թիվը: Սրան ավելացրած՝ պաշտոնյաները բավականանում էին մահմեդական բնակչության մասին տանուտերերի հաղորդած չափազանցված տվյալներով: Դրանք ոչ միայն անաչառ չէին, այլ ավելին՝ ներկայացնում էին Արևմտյան Հայաստանի բնակչության իրական ազգային կազմից բավականին հեռու մի պատկեր:

Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ ակադեմիկոս Ա. Մելքոնյանը հանգել է այն եզրակացության, որ գյուղական հայ ընտանիքների անդամների թիվը բաղդատելիս՝ միջինը

⁴ Տե՛ս Ա. Դո, Վանի, Բիթլիսի եւ էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 200:

⁵ Սարգիսեան Ն., Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 85:

⁶ *ոսմալուրիցըցելուդամոզլուդազտրեբուտու-զլարչլետիսմեսաչեբ (XVI-XVIII սալսլոնեբու)*, *ոսմալուրիտլեյստիլարտուլուտարգմանուտ, Մեսազլուտ, մցուրեմլեմիշնեբուտադադալսուիմուլեբուտադամոսալցեմադմոսալադալրուդ. Երզրաթլեյնեյլուամ, տծ., 2013, թթ. 237-293.*

պետք է ընդունել 8-ը, թուրքերինը՝ 6-7, քրդերինը՝ ավելի պակաս⁷: Տայքում, մասնավորապես Թորթումի գավառում, ևս կիրառելի էր բնակչության բաղադրամասն այն բանաձևը, որը բնորոշ է Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններին⁸: Այդ տարբերակով կատարված հաշվարկը համադրելով Տայքի մեկ այլ գավառի՝ Բանակի վերաբերյալ ունեցած փոքրիշատե վստահելի տվյալների հետ, հանգեցինք այն եզրակացության, որ XVI դ. վերջին գյուղական բնակավայրերի միջին խտությունը կազմում էր 30 ծուխ, ուստի Թորթումի գավառի 53 բնակավայրերում պիտի լինե՞ր շուրջ 1590 ընտանիք՝ մոտ 12700 բնակչություն⁹:

Այս հաշվարկներում հստակություն մտցնելու մեջ մեզ ակամայից օգնության հասան մեր վրացի գործընկերները, որոնք, ի տարբերություն հայ հետազոտողների, ազատված են արհեստական խոչընդոտներից և հնարավորություն ունեն այցելել Թուրքիա՝ տեղում ծանոթանալու օսմանյան արխիվներին: Այդ գործում աչքի ընկած հետազոտողներից է Թբիլիսիի պետական համալսարանի պրոֆեսոր Ն. Շենգելիան, ով 2013 թ. հրատարակեց Թուրքիայի արխիվներում պահպանվող մի քանի հարկացուցակներ (դավթարներ)՝ բնագրի լեզվով և վրացերեն թարգմանությամբ՝ «Օսմանյան ծավալուն և հակիրճ դավթարները Տաո-Կլարջեթիի վերաբերյալ» վերնագրով: «Դավթարներում» ներկայացված են Տայքի Թորթում և Մամրվան գավառները, ինչպես նաև հարակից շրջանները, որոնց ուսումնասիրությունը վրացագիտության մեջ հասկանալի պատճառներով գիտական մեծ հետաքրքրություն է առաջացնում: «Դավթարներում» ներկայացված են բոլոր բնակեցված և անմարդաբնակ բնակավայրերի անվանումներն ըստ գյուղախմբերի, դրամական և բնամթերքային հարկի տեսակները և չափը, բնակավայրերի ծխերի քանակը, նրանց նահապետների անվանացանկերը, որոնք բացառիկ նյութ են տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը վերհանելու համար:

Ժամանակի հայկական, վրացական ու թուրքական աղբյուրների համադրությունից հստակ երևում է, որ շնայած IX-X դդ. Տայքի և մասնավորապես Թորթումի հայության քաղկեդոնականացմանը, ինչպես նաև հետագա դարերի ընթացքում երկրամասում տեղի ունեցած ոչ հայանպաստ էթնիկ տեղաշարժերին, Թորթումի գավառում գոնե մինչև XVI դ. երկրորդ կեսը մեծամասնություն էր կազմում տեղաբնիկ հայ տարրը (առաքելական և քաղկեդոնիկ ուղղափառ), որի կողքին օրըստօրե հայտնվում էին եկվոր էթնիկական այլ

⁷ Տե՛ս Մեֆոնյան Ա., էրզրում. էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դ. առաջին երեսնամյակին, Երևան, 1994, էջ 111–112:

⁸ Տե՛ս Երանյան Գ., Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակն ըստ XV դարի ձեռագրերի հիշատակարանների (Վասպուրականի օրինակով), Երևան, 2015:

⁹ Տե՛ս Աղապով Ա., Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից մինչև XIX դարի I երեսնամյակը, Երևան, 2013, էջ 133:

խմբեր: «Դավթարների» համակողմանի ուսումնասիրությունից երևում է, որ Թորթումի գավառի բնակավայրերի մեծ մասում բնակիչները քրիստոնյա էին և կրում էին հայկական ու վրացական կամ հայերի և վրացիների մեջ մեծ տարածում գտած անուններ: Հայերի շրջանում լայնորեն գործածվող անուններ հանդիպում ենք Թորթումի գավառի գրեթե բոլոր բնակավայրերում: Ստորև ներկայացվում է Թորթումի գավառն իր հարկման ենթակա բնակավայրերով:

N	Բնակավայրի անվանումը	Հարկի չափը (ակչե)	Ծխերի թիվը	Հիշատակվող հայկական կամ հայերի շրջանում մեծ տարածում ունեցող անձնանունները	Էջն ըստ հարկացուցակի
1	2	3	4	5	
ԹՈՐԹՈՒՄԻ ՆԱՀԻԵ					
1	Թորթում (ոսբաթ)	18000	54	<p>Խելջվարա Հակոբի, նրա եղբայր Ավանես, Կիրակոս Բաինդուրի, նրա որդի Ամիր բեկ, Սարգիս, Խոջա Հայկի, Ավաք, Անդրիաս, նրա եղբայր Փիրազիզ, Կուբադ Ավադի, Ավադ Վարպետի, Խաչատուր, նրա որդի Կիրակոս, Խաչատուր Քալկալուրի, նրա որդի Բիլլրադ, Խաչատուր Սարքիսի, նրա որդի Սիմոն, նրա եղբայր Առաքել, Կիրակոս, Աթաբեկ Օվլեթ, նրա եղբայր Մանուկ, Թեոդոր Մանուկ, նրա որդի Վարբարթո, Խաչատուր Գիրգորի, Խաչազադ, Ջիհան Խաչատուրի, Ամիր Խոտբեքարի</p>	237-238
2	Պոչենց	8000	38	<p>Իստեփանոս Հովհանի, Պետրոս Իսմիխանի, նրա եղբայրներ Ալթուն, Քիբրոս, Ավադալեթ, Իսմիխան, Գաբրիել Օվլթեի, նրա եղբայրներ Գելաբեր ու Գելբադ, Արմենաք Խոզբեքարի, Սաադեթ Վարոսի, Ամիշիհան Պողոսի, Վարթազիզ Մակբիլի, նրա եղբայր Կիրակոս, Վարթազադ Փիրու-</p>	238-240

				մի, նրա որդիներ Փիրանիսե, Նուրանլի, Սուլթան, Բաբա, Գալուստ Ռաստակի, նրա որդի Վարթաշ, Սիմավիլ Ամիրզադեի, նրա եղբայրներ Խաչատուր և Բարթիլոս, Սիմոն Չոբանի, Ավանիք Փիրումի, Օդալեթ Փիրումի, Իստեփան Փիրումի, Վարսիարյա Փիրումի	
3	Սխտորուտ	7000	39	Թորոս, նրա եղբայր Սիմոն, Վարթուվան, Ջանոս, Դավիթ, Խոշար Նազար Մխիթարի, Սադակ Մարտիրոս, Թորոս Մուրադ, Ասատուր Լոսբարիլուսի, Վարթաբեթ Ջիրաբեգ, Ղազարոս, Գիրքոր Բազ Ազիզի, նրա եղբայր Թիուզոր, Շահնազար Մխիթար, Սարքիս Մուրադ, Ռամանիլ Մարտիրոս, Գասպար Կոջա Գիրգոր, Կիրակոս Մարտիրոս, Գեյբեգ Ավանի	240-241
4	Վանք	6000	16	Ասատուր, նրա եղբայր Ուրբան, նրա որդի Աբրահնուս, Կիրակոս Տիրատուրի, նրա եղբայր Դադուր, Գաբրիել, նրա եղբայր Ավանես, Վարթան Ասփազուր, Թորոս	241
5	Տանքար	5000	7	Գիրգուլ Դավիթ, Մարտիրոս Չոբան, Ջաքար Փիրումի, Կիրակոզ Դավիթ	242
6	Չերբիլ	5000	29	Սուլեյման Ավանիսի, նրա եղբայր Գրիգոր, Ասվազուր Միքիլի, նրա եղբայր Կարապետ, Կիրակոս Սիմաուլ, Միրիման Վարթան, նրա եղբայրներ Ամրաք, Ամուր, Օսկար	242-243
7	Մասրաքուլ	4000	6	—	243
8	Սուքուրեք	5000	12	Կիրակոս Ջիրալ, նրա որդի Բահնդուր, Ղալթմազ Փիրումի, նրա որդի Գիրքոր, Ջաքար Փիրումի	243-244
9	Քարնաղուս	2000	9	Ակոփ Փիրուզի, Ակոփ Բուզգիրի, Վարթ Արնուս, նրա եղբայր Ամիրզադե	244

10	Գիրքունիք	2000	6	–	244
11	Ավիչ	2000	–	–	245
Այլ հարկեր		58000	–	–	245
Ընդամենը		122000	216	–	
Լ Ս Կ Ա Վ Ի Ն Ա Հ Ի Ե					
1	Վերին կսկավ	13000	87	Ամիր Ասվադուր, նրա եղբայր Մախարաբի, Հովսեփ Մուրադ, նրա եղբայրներ Մկրտիչ, Շեհրիման ու Անուբ, Գիրքոր, Մարտիրոս, Մկրտիչ Փիրումի, Ասվադուր, Կիրակոս Թոփինիք, նրա Շահամիր, նրա եղբայր Սարքիս, Վարթագիգ Վասսամեք, նրա եղբայր Ամիրասուլան, Գիրքոր Անբիլ, Շահկուբադ Վաբիլ, նրա որդիներ Ավանիք և Կաբրիլ, Գիրքոր Փիրագիգ, Պետրոս Գելագիգ, Վարթաբիք, Գաբրիել, նրա եղբայր Ասատուր, Դիլաշի Ակոփ, նրա եղբայր Զոչիկ, Մինաս Փիրուլի, Սիքքանոս Փիրումի, Վարագիգ, Կարաբեդ, Սարքիս, նրա եղբայր Թովմաս	245-247
2	Վարին կսկավ	12000	52	Կիրակոս Ասրավ, Վարթաբեգ Սիմոն, նրա Ակոփ, Սարքիս Թորոս, նրա եղբայր Օմբիք, Մկրտիչ Սարքիս, Բադբեքար Խաչատուր, նրա որդի Խաչատուր, Վարթագ Ասփադուր, նրա Մկրտիչ, Թաթար Մինաս, նրա եղբայր Թորոս, Շմավոն Շահպարոն, Արտուշ Բազագիգ, Մարքար Մուրադ, Մկրտիչ Աթանասի, Վարթագիգ Մուսա	247-248
3	Նիխաղ	15000	60	Սարքիս Գուրչի, Գելամիր Ավաք, Ակոփ Օնգափիր, Զարո, նրա եղբայրներ Մկրտիչ ու Շեյխամիր, Մկրտիչ Դեմիր, նրա որդի Ավագիս,	248-249

				Ավանես Ասրաթ, նրա եղբայրներ Դիմիտրի ու Մուրջա, Ջուլուսի Միքայել, նրա եղբայր Ջարթմանիկ, Ակոփ Ամրո, նրա եղբայրներ Ամիրբեգ ու Նիկադոր, Վարթագիր Խոսրով, Խաչատուր Փիրուլ, Մարտիրոս Ջոջիկ, Գիրգոր Գուլում, Վարթագիր Փիրունի	
4	Բեթղար	3000	15	Գիրգոր Արբո, Սամվել Ազամի, Գիրգի Խաչատուրի, Կիրակոս Ռուսնանի, Գիրգոր Վարփարիսի, Շահրիբար Վարփարիսի, Օվանես Սաղակի, նրա եղբայր Կուլգեթ, Մարտիրոս Փիրուլի, նրա եղբայրներ Սարքիս, Ավլալեթ ու Սիմավիլ	249-250
5	Բշնկոց	3000	13	Գիրգոր Գաբրիելի, Գիրգոր Փիրունի, Մկրտիչ Փիրվելի, Աթաբեկ Մամիկ, Սարքիս Կուբադ	250
6	Օսքիքավ	5000	30	Վարթան քեթխուդա, նրա եղբայրներ Ալիբադ ու Շեյխազիզ, Վարթան Խոջեղի, Ջարադլեթ Մուրադ, նրա եղբայրներ Գիրգոր ու Ջոջիկ, Ավանիս Ասատուրի, նրա եղբայր Առաքել, Գելբեգ Ավանիսի, Գելազիզ Փիրուլի, Մարտիրոս Փիրունի, Դավիթ Թովմաս, Ավանես, նրա եղբայր Գաբրիել, Թորոս Շահմուրադ, Ավանիս Մարքիել, Ազիզ Գիրգոր, Ավադլեթ, նրա եղբայրներ Մարտիրոս ու Սիմաուլ	250-251
7	Ջարուք (Կարաբազ)	3000	—	—	251
8	Աղասեր	1600	—	—	251
9	Սինաք	8000	12	Մարկոզ Գաբրիել, նրա որդի Ալահվերմիշ, Գելաբիր, Բիլաք Խաչատուր, նրա	251-252

				եղբայր Միրուսումադ, Վարազա Մանուկ, Կիրակոս Մաքի, նրա եղբայր Օվլեթ	
10	Ղազարենց	5000	15	Սարքիս հաշատուրի, Փիրազիզ Ակոփի, Վարթագիզ Փիրուլի, Կիրակոզ Նուրբեգի, Կիրակոզ Առաքելի, Վարթան Ամիրզարի	252
11	Մինաջուր	4000	—	—	252
12	Աղիջուր	3000	—	—	253
13	Բարիլիս	5000	12	Թորոս Կաբուլ, Միրիխան Մարքար, Սիմոն բեկ, նրա եղբայր Թորոս, Ամիրազիզ Թորոս, Մարքար Կոջա, Ակոփ Աբրահամ	253
14	Կաթնաջուր	7000	—	—	253
15	Խիթազ վերուք	10000	30	Դանիել քեթիսուզա Սիմավելի, նրա որդի Սիմավել, Ամիրվարթ Մանուկի, նրա որդի Օվլեթ, Մարկոզ Վասաբեգի, Քադատուզ հաշատուրի, Ասվադուր Շահբուզաքի, Զանկուլի հաշատուրի, Վարազ	235-254
16	Պար	9000	16	Փիրուսի որդիներ՝ Սիմավուն, Դուքի, Թիուզոր, Ակիլբեգ, հաշատուր, Ռեվփիրլեթ, Զանազիզ, Մուրադշահ Սիմաուն, նրա եղբայր Միտիչ	254-255
17	Քեջնեթ	22000	77	Ասվադուր Դադուր, նրա եղբայր հաշատուր, Մաթեոս Գիրքոր, Ավանիք հաշատուր, նրա եղբայր Մկրտիչ, Բունջուր Գիրքոր, նրա եղբայրներ Նուրալի, Միրվելեթ, Կիզարլեթ, Մաթեոս Ավաքի, Շահդուլի Սարքիս, Բողդի Մաթեոս, նրա եղբայրներ Վարազիզ ու Մկրտիչ, Փեիզուլահ Մկրտիչ, նրա եղբայրներ Սուլթանալի, Նուրալի ու Ակոփ, Ավանես Քիզոզ, նրա	255-256

				եղբայրներ Գիրքոր ու Վասիլ, Գելամիր Փիրուճի, Մելքիք Օվան, Միրիման Օվան, Կիրակոս Սիսիե, նրա Կրաբել, նրա եղբայրներ Աբել Ամիրա, Ջաքար ու Անիք, Օվան Սիսիե, Գիրգի Օվան	
Հնդամենը		128600	419		
Ա Ղ Ջ Ր Ի Կ Ի Ն Ա Հ Ի Ե					
1	Մեծ Աղջրիկ	9000	32	Իստեթանոս Կարաբիթի, Մարքար Սիմաունի, նրա եղբայրներ Ջադիբեգ, Նուհան, Սեիդուր, Մարքիս Նուհանի, Դաուդ Մարքարի, Միրլեթ Սահաբի, Ասադուր Մելիքի, Ակոփ Ամիրազադի, Բարոս Ակոփի, Ասադուր Մանուկի, Բադուրբեգ Ջաքարի, Սարիբեգ Ջաքարի, Կիրակոս Բարբուլեթի, Մկրտիչ Ջարուբի, նրա եղբայր Խոջա Ազիզ	256-257
2	Պոչենց	16000	29	Ասատուր Արուշի, էմիր-վարան Մկրտչի, Մարկոզ Աթաբազի, Ակոփ Ազարակի, նրա եղբայր Գուրգիք, Խոջա Ազիզ Գելամիրի, նրա որդի Մարտիրոս, Ավանիս Մինասի, նրա եղբայր Ասվազուր	257-258
3	Քցխա	20000	102	Ասրաթ Օվան, նրա որդի Անվալվարան, նրա եղբայրներ Օսքի ու Ասրաթ, Գելազիզ Խաչմանի, Իբրահիմ Իվանե, նրա որդի Ակոփ, Մարքար, նրա եղբայր Ամիր-մելիք, Խաչատուր Դաուդ, նրա եղբայր Բարթլոս, Ասփադուր Ասրաթ, Վելիխան Միրաք, նրա եղբայր Անդոբեգ, Ավաքի Մախար, Դաբան Օսքի, Սահակ Դադուր,	258-261

				<p>նրա որդիներ Սադանո, Դադուր, Կիրակոս ու Ղազարոս, Վարազիզ Խաչմաքի, Մկրտիչ, Ղազարոս Իստեփան, նրա եղբայր Կիրակոս, Ակոփ Գիրգու, նրա եղբայրներ Դիբան, Նուրադնո ու Գիրքոր, Հակոբիլա Սարքիս, նրա եղբայր Պետրոս, Գիրքոր Սիմաուն, նրա եղբայր Շահազիզ, Նիկոլա Վարթան, Թորոս Կարապետ, Օվան, Կիրակոս, Կիրակոս Ջադի, նրա որդիներ Ավանես ու Մարտիրոս</p>	
4	Աղջրիկ	10000	25	<p>Ավանես Դանիել, Խաչատուր Փիրում, նրա եղբայր Շեքեր, Ամիրազիզ Կիրակոզ, նրա եղբայր Գիրգոր, Վահան, Թորոս, Ջուլի Ազիզ Մարտիրոս, Սարոզ Կիրակոս, Փիրումի Կիրակոս, Ամիրջիհան Սիմաուն, նրա եղբայր Խաչատուր</p>	261-262
5	Քիսմաս	7000	14	<p>Դադուր Խաչիք, Վարթազիզ Խոջա, նրա եղբայր Թորոս, Շահսուվար Մամիք, Գուրջի Մարկոզ</p>	262
6	Չանկրես	7000	44	<p>Թեոդոր Կարագոզ, Մարքար, Ասվադուր, նրա եղբայրներ Կուզան, Ամիրան, Վիրանիսե, Բուրլեթ ու Վարթևան, Ազադ, նրա եղբայրներ Վարթազադ, Աբաս ու Վարթևան, Գալուստ, նրա եղբայրներ Մելիքսադ ու Օդլահ, Սարքիս Ջաքար, Գիրգոր, նրա եղբայր Բարբադ, Վարթարոս Դավիթ, նրա եղբայր Ակոփ, Իվան Փիրումի, նրա եղբայր Գիրգոր, Գարրիել Սարգիս</p>	262-264

7	Արջուս	4000	7	—	264
8	Այգեկ	7000	33	Վարթեան, Ասաթուր Նազար, նրա եղբորորդի Զաքար, Սիմոն Ասդուր, նրա եղբայր Զիրիբեգ, Բագրատ Ավան, Նուրբիհան Գիրգոր, նրա եղբայր Բուրղալ, Ակոփ, նրա եղբայր Հախի, Մարքար Հայկի, նրա եղբայր Կիրակոս, Ազիզբեգ Միլիզարի, նրա եղբայրներ Ակոփ ու Կիրակոս, Վասակ, նրա եղբայր Կիրակոս, Դակիդար Ավանի, նրա եղբայր Մելիք, Թորոս Սարքիս, Ակոփ Գիրքոր (մահմեդական է), նրա եղբայր Գաբրիել, Ամիրվան Դավիթ, նրա եղբայր Ասքվան, Իստեթանոս, Մանուկ, Բահագուր Գաբրիել	64-264
9	Քոսաքիլիսա	—	—	—	265
10	Զինակեր	7000	24	Ամիրվան Ավան, նրա որդի Պարոն Վարան, Վարթագես Ակոփ, նրա որդի Ուլուբիր, Ավալ Վարթագես, Դագուր Կիրակոս, նրա եղբայր Բաբիլ, Պետրոս, Ամիրզա Ավանիս, Խաչատուր Փիրումի, նրա որդի Գելասլան, Գիրգոր Փիրումի, նրա որդի Ալեքս, Զամլիք Միրան, նրա եղբայր Գիրգոր, Մամիր Ավան, Խաչատուր շոբան, Գիրգոր Ասվադուր, Մարքար, նրա եղբայր Զաքար	266
11	Վախթիկանց	8000	16	Սիմոն Սամիկ, Զուլփիկար Անտոն, Ազադ, Փիրում, Անդրիաս Թեոդոր, Օվան Սուլթանշահ, Թեոդոր Փիրումի, նրա որդի Վարթագիգ, Մկրտիչ Փիրումի	266-267

12	Խաշուտ	7000	15	չամուսնացածներ	267
13	Գեղիկ	2000	18	Թորոս, նրա եղբայր Զանոս, Անտոն Թորոս, Գիրգուլ Փիրումի, Գիրգի Կիրակոս, նրա եղբայր Բարա, Վարթազիկ Ասփադուր, Ակոփ Թորոսի, Էլիա Մարտիրոսի, նրա եղբայր Սարքիս	268
14	Նորշեն ¹⁰	8000	27	Կիրակոս Թեոդոր, Հուգավերդի Առաքել, Մարտիրոս Կարբել, Վարթազիկ, Խաշատուր Փիրվելի, Էլիսա Բուդարնո, նրա եղբայրներ Նորգբեգ ու Կիրակոս, Մարկոզ Փիրումի, նրա եղբայր Նազար, Մկրտիչ, նրա որդիներ Սադակ ու Զիհան, Գալուստ Միքաիլ, Վարթազիր Խուգավերդի, Ամիր Ազադի, նրա որդի Սարքիս, Խուգավերդի Առաքել, նրա որդիներ Վարթազիկ ու Շեհիրման	268- 269
15	Վարդիշեն	4000	16	Ամիրմելիք քեթիսուզա, Միքել Փիրումի, Գիրքոր, Ղազարոս, Վարթազիս, Վարթան, նրա որդի Խուգավերդի	269- 270
16	Վերին Քուքվանիք	3500	—	—	270
17	Վարին Քուքվանիք	2000	—	—	270
18	Նիխանանս	1500	—	—	270
19	Արջունիս	2000	8	—	270
Ընդամենը		125000	410		
Խ Ա Խ ՈՒ Ի Ն Ա Հ Ի Ե					
1	Խախու	24751	43	Գիրքոր քեթիսուզա Կիրակոսի, Իստեփանոս Ակոփի, Սիմոն Ամիրազիզի, Կիրա-	270- 272

¹⁰ Նորշենցիների մի մասը 1830 թ. հաստատվեց Ախալցխայի գավառում:

				կոս, նրա որդի Վարթուկեթ, Ավաք, Խուդավերդի Ավանիքի, նրա որդի Գաբրիել, Կիրակոս Բաքի, Ասվադուր, Միքաիլ Ալեքսանի, նրա եղբայր Ավաք, Զարուր, նրա եղբայրներ Զաքար ու Շահնազար, Վարլին Կիրակոսի	
2	Վսիկ	12000	55	Մուսեգ Մկրտիչ, նրա եղբայր Բաղիրբեգ, Մարքար, նրա որդի Բարթոս, Գիրգոր Փիրունի, նրա որդի Թեոգոր, Բալիք Ազրիան, նրա որդի Մանուկ, Վարթան Մարկոզ, Շադրո Առաքել, Ամիրկուր Վիրշիմ, նրա եղբայր Գիրքոր, Զուլփիկար Փիրուլի, նրա եղբայր Մինաս, Թորոս, նրա եղբայրներ Փերամուշ ու Օրդալեթ, Ավկարուս Ակոփի, նրա որդի Ակոփ, Մարկոզ Գելազիզ, նրա եղբայր Վարսիմ, Խաչատուր Սիմոն, Կիրակոս Սելիմ, նրա եղբայր Բուզալեթ, նրա որդի Վասիլ, Շահալի Ավանեսի, նրա եղբայր Միրզալի, Գալուստ Վարդապետ, Խաչատուր Կանիկի, նրա եղբայրներ Փիրղուլի ու Բուզակ, Ավանես, նրա եղբայր Միհրաբ, Թորոս Շահալիի որդի	272-274
3	Ընկուզեք	8000	26	Զազուր Առաքիլի, Խաչատուր Ավադուքի, Վարթազիզ, Իստեփան Առաքիլի, Դանիել	274-275
4	Ապրնես	8000	31	Գիրքոր, Վարթաբիլ, նրա եղբայրներ Ակոփ ու Քաքուս, Ավաք Սեիդ, Մարկոս Փիրբուզադի, Վարթազիր Գիրքոր	275-276

5	Գեղուտ	3000	19	Պողոս Սարգսի, Ազարի Գանիել, նրա որդիներ Գիրգոր ու Ագաբիք, Գիրգոր հաշագուր, Պետրոս Արսլան, հաշատուր Սիմոն, Ալեքսան, Մարտիրոս Աբասի, նրա եղբայր Քաթուս	276
6	Անի	3000	8	Առաքել, նրա որդիներ Վարթագիր, Շեհիրբան ու Օվլեթ, Վարթուլեթ Գիրքոր, նրա եղբայր Գաուգ, Ասատուր, նրա եղբայր Գիրգոլ	277
7	Բարդուսանց	10000	21	Ավան Բուզակի, նրա եղբայր Ջիրբան, Ավլալեթ Վարթագիդ, Մխիթար Ավակի, նրա եղբայր Փիլո, Գաբրիել Թեոդոր, նրա որդի Ավանիս, Բագրատ Զաքարի, Նիկանոս Զաքարի	277-278
8	Կաղնուտ	5000	26	Թորոս, Կիրակոս Փիրուլի, հաշատուր Փիրուլի	278-279
9	Օդեք	29000	50	Մուրադբեգ Ամիրսարգսի, նրա եղբայր Դիար, Գանիել, հաշատուր Թաթևոսի, նրա եղբայր Ասվադուր, հաշատուր Կիրակոսի, նրա եղբայր Գավլեթխան, նրա որդի Կիրակոս, Գելագիդ Քաթուսի, Ավանես Սիմոնի, նրա որդի Անդիմ, Սիմոն Թորոսի, նրա որդի Զանիք, Բանիք Ասվադուրի, նրա որդիներ Ալբանիք ու Դուկարբել, Նուրագիդ հաշատուրի, նրա եղբայր Շադանո, Կիրակոս Նուրանո, Շահ Կիրակոսի, նրա որդի Ափիրդալ, Մարքարնիս Արսլանի, Մարաք Կիրակոսի, նրա եղբայրներ Աբրահամ ու Փիրուլի, Թաթևուս Ափրանոսի, նրա որդիներ Զաքար ու Նուվադաբեգ	279-280

10	Սուրբօհան	8000	14	Շահունվար քեթխուզա, նրա եղբայր Դավիթ, Կիրակոս Փիրունի, Գաբրիել, Վարթաբեթ, Ավանիս, նրա եղբայր Ամիրազիզ, Գաբրիել Բահարի, նրա որդի Ամիր	280-281
11	Վերինգեղ ¹¹	8000	16	Սարքիս Վահանի, նրա եղբայր Խաչատուր, Կիրակոս Թիուզոր	281
12	Վաղավեր	6000	15	Տեղեկույթուն չկա	281
13	Կուկուշիբե	3000	10	Տեղեկույթուն չկա	281
14	Ազորդ	15000	27	Ամիրվալեթ Օվլեթի, նրա եղբայրներ Վարթազիր ու Անդրիաս, Սիմոն Մարբեթի, նրա եղբայրներ Ամիրազադ ու Բալիք, Շեխազիզ Սիմոն, նրա եղբայրներ Բագրատ ու Էլիաս	281-282
15	Օնթեթ ¹²	2500	13	Գելիթբար Դաուդի, նրա եղբայր Ասվադուր, Փիրքես Մարքարի, նրա եղբայր Խաչատուր	283
16	Օթղա	5000	23	Աբաս Գիրքորի, նրա եղբայր Բուգակ, Մկրտիչ Գիդեն, նրա եղբայր Բախնդուր, Գաբրիել Վարազի, Գաբրիել Գելազիզի, նրա եղբայր Կարբել, Վարսիմ Գաբրիելի, Ակոսի Թաթարասի, Օսիպ Թորոսի, նրա եղբայր Նուրանո	283-284
17	Իս	2500	20	Դուլիք Խաչիկի, Գաբրիել Զահիլի, Գաբրիել Սահիլի, Սուրազլեթ Սամիբի, նրա եղբայրներ Վարթազիր ու Մախրույեթ	284-285
18	Օշբվանք ¹³	7000	30	Գիրգի Կիրակոսի, նրա	285-

¹¹ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերից մեկը, գրված 1663 թ. Վերին գյուղում Աբրահամ Բահանյանի ձեռով, վկայում է այնտեղ Կաթողիկե եկեղեցու սովորության մասին: Տե՛ս ՄՄ 8624, էջ 96բ:

¹² Հնարավոր է՝ Օձուտ:

				որդի Օվլեթ, Ակոփ, Կիրակոս Մաքսիմեի, նրա որդի Մեսքուր, Գաբրիել Օսիպ, Իբրահիմ Հոբի, նրա որդի Զաքար, Անդրանիկ	286
19	Օշք	18930	43	Կարապետ, նրա եղբայր Զաքար, Աթաբեգ Խաչատուր, նրա եղբայր Անդրիաս, Օվլեթ Մեսրոպի, նրա եղբայր Անդրիաս, Թորոս Մխիթարի, Թորոս Աճառի, նրա որդի Միրանսա	286-287
20	Զխիկ (Մխիկ)	12000	30	Հոման Գիրքորի, նրա եղբայրներ Ալեքսի ու Վարձել, Աիլարուկ Բագրատի, նրա որդիներ Ամիրազիզ ու Գիրգոր, Օսիպ Ավանիք, նրա եղբայրներ Մախորոբել ու Մուրադ, Ամիրառնո Աբրամի, նրա որդիներ Կիրակոս ու Քեթուկ, Մարկոզ	287-288
21	Էշկիձոր	12000	20	Շերմազան, նրա եղբայր Կիրակոս, Ավանիք Թեոդորի	289
22	Խարս	6000	30	Անդիրբեգ Ակոփի, նրա եղբայրներ Զաքար ու Փիրլեթ, Մուրադ Դանիելի	290
23	Լեք	7000	20	Կիրակոս, նրա եղբայր Աբրամ, Անտոն քահանա, նրա որդիներ Գիրգոր ու Այթազար	291
24	ԹԼ	5000	25	Սուլթան Ամիրի, նրա եղբայրներ Ակոփ ու Մխիթար, Ավաք, Սիմոն Ավանիքի, նրա եղբայր Ալիա	291-292
25	Խարթիխա	8000	20	Բադիրբեգ Ակոփ, Ակոփ Զուլփիկյար, նրա որդի Վարնիքբեք, Պողոս Օսրանիք,	292-293

¹³ Հակոբ Կարնեցին խոսելով Օշի և Խախուի վանքերի, ինչպես նաև Տայֆի մյուս հրաշակերտ կառույցների մասին՝ գրում է. «...յար և նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբ Սոփի ի Կոստանդինուպոլիս»: Տե՛ս **Յակովբ Կարնեցի**, *Տեղագիր Վերին Հայոց, չիշատակարան ժէ դարու*, Վաղարշապատ, 1903, էջ 17:

				նրա եղբայր Ազրի, Ավաք, Աթաբեգ Ազիզի, նրա որդի Ավաք, Բազազիզ, նրա որդիներ Քաթուս ու Մանուկ	
Ընդամենը	228681	635			
Ընդամենը Թորթումի լիվայում	604281	1680		13440	

Փաստորեն, XVI դ. վերջին Թորթումի գավառն ուներ 10 լքված ու 62 բնակելի գյուղ՝ 1680 ծուխ կամ շուրջ 13440 մարդ ազգաբնակչությամբ: Եթե այդ գյուղերում առկա 1680 ծուխը բաժանենք գավառի գյուղերի թվին, կստացվի, որ Թորթումի գյուղերում բնակչության միջին թիվը կազմում էր 27 ծուխ¹⁴: Ինչ վերաբերում գավառի հայությունը, ապա այն հավասարաչափ չէր տեղաբաշխված: Եթե Թորթումի, Լսկավի և Աղջրիկի գյուղախմբերում հայերը կազմում էին ճնշող մեծամասնություն (ավելի քան երկու երրորդը), ապա հյուսիսում հախուսի գյուղախմբում, այդ թիվն ավելի քիչ էր:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Թորթումի գավառի բնակավայրերում հանդիպում ենք նաև վրացական անձնանունների: Հաճախ կարելի է հանդիպել դեպքերի, երբ հայրն ունեցել է վրացու, որդին՝ հայի, կամ եղբայրներից մեկը հայի, մյուսը՝ վրացու անուն: Օրինակ Քցխա գյուղի բնակիչ Իբրահիմ Իվանեի որդու անունը Հակոբ էր, Օշքվանք գյուղի բնակիչ Կիրակոսի որդի Գիորգիի որդիներից մեկի անունը՝ Օվլեթ, մյուսինը՝ Ակոփ, Բինհատ գյուղի բնակիչ Գիորգիի հոր անունը՝ Խաչատուր: Նման փաստերը վկայում են խառը բնակչություն ունեցող գյուղերի գոյության, նրանցում երկու ազգությունների միջև ոչ միայն հանդուրժողական, այլ նաև բարյացակամ վերաբերմունքի մասին: Այսպիսի իրավիճակը ձևավորվել էր նախորդ՝ Սամցխեի աթաբեկության շրջանում և կարող էր լինել նաև հայության շրջանում քաղկեդոնականության տարածման հետևանք: Վրացիների ներկայությունը գավառում բացատրվում է նաև այն հանգամանքով, որ Տայքի գլխավոր հոգևոր կենտրոններից Օշքվանքը և հախուս, որոնք գտնվում էին հախուսի գյուղախմբի տարածքում, քաղկեդոնական նշանավոր վանական համալիրներ էին և, բնականաբար, դեպի իրենց պիտի ձգեին վրացի վերաբնակիչների: Չնայած այդ հանգամանքը չէր խանգարում, որ նույն հախուսի գյուղապետը լինեի հայազգի Գիրքորը:

Ի դեպ, «Խավթարների» թարգմանիչ և հրատարակող պրոֆեսոր Ն. Շենգելիան շատ էր ցանկանում Թորթումի գավառի տարածքում հնարավորինս մեծ թվով վրացիների տեսնել: Այս կարևոր հանգամանքով է բացատրվում

¹⁴ Համեմատության համար նշեմք, որ Տայքի մեկ այլ՝ Բանակի գավառում այդ թիվը 30 էր:

գավառի տարածքում բազմաթիվ «Գիրգոլներ» և «Գիրքոլներ» առկայությունը: Այս անվանաձևերը վրացիների շրջանում տարածված չեն՝ ի տարբերություն «Գրիգոլի»: Այստեղ ուղղակի փորձ է կատարված վրացականացնել հայերին՝ ցույց տալու համար, որ վրացական տարրը տարածաշրջանում եթե ոչ գերակշռող, ապա գոնե լայնորեն ներկայացված է եղել:

Թորթումի գավառը գերծ չի մնում թուրք-պարսկական պատերազմների պատճառած արհավիրքներից՝ քանիցս դառնալով պատերազմի թատերաբեմ: Մասնավորապես «Թուին Ռևթ (1590) էր Արզում քաղաք այլազգի որդիքն ի պատիւ կոչեցին զքրիստոնեայ... և մեծ սուզ եղեւ քաղաքին, քանզի զԹորդումու ձորերն տիրեցին»¹⁵: Հաճախ պատերազմներն ուղեկցվում էին նաև բռնագաղթով: Մասնավորապես 1629 թ., երբ «եկեալ խալիլ փաշան վազիր ի վերայ Ապազին, չկարաց առնուլ, ապա աշխարհս աւերեաց ի թալան, ի սուր սուսերի, ի գերութիւն վարեց՝ զՆրզնկան, Առզում, Բասեն, Թորթում և այլ գաւառք, և գնաց ի Թաւխատ»¹⁶:

XVII դ. առաջին կեսին Թորթումի գավառի էթնոսոցիոլոգիական պատկերի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ժամանակաշրջանի հեղինակ Հակոբ Կարնեցին, համաձայն որի՝ «Եւ էին բնակիչք երկրիս կէս Հայ ազգաւ և կէսն կրօնիւք Վրացի, բայց Հայի լեզուաւ խօսէին»¹⁷: Այս առիթով Հ. Տաշյանը գրում է. «Հայ ազգաւ և կրօնիւք Վրացի՝ հակադրութիւն են կրօնական տեսակէտով, ոչ թէ ազգային, ինչպէս արդէն «հայի լեզուաւ» կը ցուցնէ: Ասոնք «վրացի» էին այնպէս՝ ինչպէս այսօր «Firengi» կամ «Փրանկ» Հայեր: Ինչպէս Բիւզանդեանց իշխանութեան ներքեւ ունեցած ենք նաև շատ բազմաթիւ «հոռոմ» Հայեր, որոնցմէ այսօր ալ կան յունածէս, բայց տակաւին հայախօս Հայ-Հոռոմներ, նոյնպէս պատմութեան բերմամբ ունեցած ենք «կրօնիւք վրացի» Հայեր – չհաշուելով լիովին վրացած՝ ինչպէս նաև յունացած ու կորսուած Հայերու բազմութիւն մը»¹⁸:

1639 թ. Կասրե-Շիրիսի հաշտության պայմանագրի կնքումից հետո թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ նվաճված ժողովուրդների մահմեդականացման գործընթացին: Հակոբ Կարնեցին գրում է. «Ի բազմանալն Հագարացոցն ի ժամանակս մեր ի թուականիս ՌՂԲ. (1643 թ.) ամին եղև հրաման մեծ կայսերէն Ստամպոլայ ի վերայ մօլլայի միոջ, որ էր յոյժ անուանի և առաջակայ էր քաղաքիս Արզումայ և փաշաներաց՝ Ջաֆար անուն ժանտաբարոյ և քրիստոնեից թասիպ, յաշխարհագիր առնել զբոլոր շրջակայ երկիրս Արզ-

¹⁵ Գիվան Հայոց պատմութեան, կազմեց Գիւտ քահանայ Աղանեանց, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 102:

¹⁶ Հայերեն ձեռագրերի Ժէ դ. հիշատակարաններ, հ. Բ (1621–1640), կազմեցին Վ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը, Երևան, 1978, էջ 327:

¹⁷ Յակովբ Կարնեցի, նշվ. աշխ., էջ 18:

¹⁸ Տե՛ս Տաշեան Յ., Հայ բնակչութիւնը Աւ ծովէն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 68–69:

րումայ: Եվ ելեալ արար դաւտար և կապեաց ծանր խարաճ, և ելին մեծ և փոքր ի թագաւորական դաւտարն. և երկրիս Վրացիքն ամենայն յերկուցեալք ի յահէ խարաճին յօրէնս Մահմեթի. ապա ազգս Հայոց մնացին ի վերայ հաւատոցն ողորմութեամբն Քրիստոսի և աղօթիւք սուրբ Լուսաւորչին»¹⁹: Մեկ այլ զանգվածային մահմեդականացման մասին է վկայում Ղ. Ինճիճյանը: Ըստ նրա՝ «...զնախկին հայկազուն բնակչաց Թորթումայ, թե ձանձրացեալք ի բռնութենէ և ի զրկանաց, դարձան առ հասարակ ի կրօնս տաճկաց», շնայած գյուղերը շարունակում էին մնալ «ըստ մասին բնակեալ ի հայոց և ըստ մասին ի տաճկաց»²⁰:

Բռնի մահմեդականացումը թուրք կառավարող շրջանակների կողմից այնպիսի փութով առաջ տարվեց, որ շատ քիչ ժամանակ անց ամբողջ Տայքում քաղկեդոնիկ եկեղեցին դադարեց գոյութիւն ունենալուց: Խոսելով Տայոց աշխարհի նշանավոր հոգևոր կենտրոնների մասին (Իշխան, Բանակ, Օշք, Խախու և այլն) Վախուշտի արքայազն Բագրատիոնը շեշտում էր դրանց թափուր լինելը²¹: Բնականաբար, դա կործանարար ազդեցութիւն թողեց ինչպես մեսիսերի ու վրացացած հայերի, այնպես էլ հայութեան այն մի ստվար հատվածի վրա, որն արդեն մի քանի դար է, ինչ ընդունել էր քաղկեդոնականութիւն: Հ. Տաշյանն այս առիթով գրում է, որ կղզիացած, առանց զլխավոր կենտրոնի նվիրապետութեան մնալով, հայախոս-վրացացած այս հայութեանը մի առիթ էր ընդամենը պակասում, որպեսզի զանգվածաբար մահմեդականանային: Եվ այդպիսի առիթ նրանց համար դարձավ 1643 թ. «ծանր խարաճը»²²:

Իշխանութիւնների սպառնալիքի տակ մահմեդականացած հայութեան մի զգալի մասն առերես էր ընդունել իսլամը: Նրանք ցերեկով էին միայն մահմեդական, իսկ գիշերը դառնում էին քրիստոնյաներ՝ գաղտնի հաճախելով եկեղեցիներ, կատարելով քրիստոնեական զանազան ծեսեր: Այդօրինակ բնակչութիւնը հայտնի էր «կեսկեսներ» անունով այսինքն՝ կես հայ-քրիստոնյա և կես թուրք-մահմեդական: Թորթումի գավառի կեսկեսների զգալի մասը գրեթե ոչնչով չէր տարբերվում մնացած հայ բնակչութիւնից: Նրանցից շատերն անգամ անվարժ էին խոսում թուրքերեն, իսկ նրանց թուրքերենի մեջ հսկայական թիվ էին կազմում հայերեն բառերը, հատկապես հայկական անձնանունները, որոնց ավելացված էր թուրքական «օղլի» վերջավորութիւնը՝ Կոստան-օղլի, Կիրակոս-օղլի, Գասպար-օղլի և այլն: Հայկականը և քրիստոնեականը հատկա-

¹⁹ **Յակովբ Կարնեցի**, նշվ. աշխ., էջ 18:

²⁰ **Ինճիճյան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Մաս Ա, հ. Ա, Ասիա, Վենետիկ, 1806, էջ 93-94:

²¹ Տե՛ս Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, կազմեց Լ. Մելիքսեթ-Քեկը, հ. Գ, Երևան, 1955, էջ 84-85:

²² **Տաշեան Յ.**, «Տայք, դրացիք և խոտորչուր», ՀԱ, 1970, 7-9, էջ 292:

պես լավ էր պահպանված կեսկես կանանց շրջանում²³: Կարևոր է նշել նաև, որ Թորթումի գավառի հայ բնակչության մի մասը լազերի բռնություններից ազատվելու համար հաճախ իրեն ներկայացնում էր ոչ միայն մահմեդական, այլև լազ, ուստի և նրանց հաճախ անվանում էին ոչ թե կեսկեսներ, այլ հայ-լազեր²⁴:

Այսպիսով, Թորթումի գավառի բնակավայրերը մեծապես տուժում էին Օսմանյան կայսրության վարած հայակործան քաղաքականությունից: XVII դարի կեսերին սկսված և հետագայում շարունակված հայության մահմեդականացման գործընթացը, ինչպես նաև 1830 թ. արևմտահայության վերաբնակեցումը Հայկական մարզում և Ախալքալաքում ու Ախալցխայում, անդառնալի կերպով փոխեցին գավառի էթնոկրոնական և ժողովրդագրական պատկերը: Այսուհանդերձ, մինչև Հայոց Մեծ եղեռնը Թորթումի մի շարք բնակավայրեր շարունակում էին մնալ հայաբնակ:

АРКАДИЙ АКОПОВ

АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКАЯ КАРТИНА ОБЛАСТИ ТОРТУМ (XVI век – I половина XVII века)

Ключевые слова: Тортум, демография, переселение, исламизация, “кескесы”, Османская империя, Тайк, население.

Один из “ашхаров” исторической Великой Армении – Тайк, в XVI веке был захвачен Османской империей и был включен в состав новообразованных *эялетов*. Тортумская область (*лива*) Тайка вошла в состав Эрзурумского эялета. Во второй половине XVI века Тортумская *лива* была разделена на 4 *нахие*: Тортум, Лскав, Ахджрик и Хаху. Население области, подавляющее большинство которого были армяне (последователи Армянской апостольской церкви, а также православные), было распределено по 62 селам и составляло 1680 семей (13440 человек).

Османское иго тяжелейшим образом отразилось на демографической картине Тортума. Для армян настоящим ужасом стали войны между Турцией и Персией, которым сопутствовали погромы и насильственные переселения. В 1643 г. Османское правительство ужесточило налоговую политику по отношению к немусульманскому населению, в результате чего православная часть армян Тортумской области предпочла принять ислам, хотя многие продол-

²³ Տե՛ս Տաշեան Յ., Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչեւ Կարին, էջ 80-82, Լինչ Խ. Փ. Բ., Արմենիա. Գրքային օրագրի և էտյուժի, Թիֆլիս, 1910, ս. 537:

²⁴ Տե՛ս Մելիքյան Ա., նշվ. աշխ., էջ 80:

жали придерживаться христианских традиций. Такие мусульмане были известны под именем “кескесы” (наполовину армяне-христиане, наполовину турки-мусульмане).

ARKADI AKOPOV

THE ADMINISTRATIVE AND DEMOGRAPHIC PICTURE OF THE TORTUM REGION (16th – early 17th centuries)

Keywords: Tortum, demography, relocation, Islamization, *keskeses*, Ottoman Empire, Tayk, population.

In the 16th century, the territory of historical Tayk was conquered by the Ottoman Empire. Settling in the region, the Turks started to rule over it, regularly dividing it into large and small administrative units. In this respect, the *sanjak* of Tortum was an exception, since it remained as the northern part of the largest eastern administrative unit of the Ottoman Empire – the Erzurum Eyalet. In the 2nd half of the 16th century, the *sanjak* of Tortum was divided into the following *nahies* (districts) – Tortum, Lskav, Aghjrik, Khakhu and 62 villages with 1360 families (13440 people). The majority of them were Orthodox and Apostolic Armenians.

In 1643, the Ottoman government toughened its tax policy, targeting the non-Muslim population. The Apostolic Armenians preserved their faith, but the Orthodox Armenians and the Georgians of Tortum preferred to adopt Islam. A significant part of the Muslim Armenians secretly observed the Christian rites and attended churches. They are known as “*keskes*”-es (half Armenian Christians, half-Turkish Muslims). *Keskes* women in particular preserved their Christian and Armenian identity.

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՈՐԳԻ ՄԻՐՋԱԲԵԿՅԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ 1728 Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՑՈՒՅԱԿԸ

Բանալի բառեր՝ Արևելյան Հայաստան, Կաթողիկոսական դիվան, հարկամատյան, թղթապանակ, հարկեր, մահալ, դուրուշ, ակչե:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ Մատենադարան) Կաթողիկոսական դիվանում Վաղարշապատի մասին պահպանվել է օսմանյան 4 հարկացուցակ, որոնք կարևոր նշանակություն ունեն գյուղի պատմության լուսաբանման համար: Դեռևս 1960 թ. Հակոբ Փափազյանը թարգմանել է Վաղարշապատ գյուղի 1725 թ. օսմանյան հարկացուցակը¹, որտեղ կարևոր նկատառումներ է հայտնել նաև Օսմանյան կայսրության կողմից 1728 թ. կազմված նոր հարկացուցակի և իրականացրած հարկային քաղաքականության վերաբերյալ: Սակայն մինչև հիմա չունենք Վաղարշապատի 1728 թ. օսմանյան հարկացուցակի ամբողջական հայերեն թարգմանությունը, որը կօգնի օսմանյան իշխանությունների հարկային քաղաքականության առավել ամբողջական ուսումնասիրությանը:

1728 թ. հարկացանկը² իր բովանդակությամբ բավականին տարբերվում է 1725 թ. վավերագրից: Ինչպես արդեն ցույց է տվել Հակոբ Փափազյանն իր աշխատանքում, Վաղարշապատ գյուղի վերաբերյալ մեզ հասած 4 հարկացուցակի հիմքում համապատասխանաբար ընկած են հիշրայի 1137 (1725) և 1140 (1728) թթ. ցուցակագրումները³, որոնք շատ կարևոր աղբյուր են Արևելյան Հայաստանի ընկերային-տնտեսական պատմության վերաբերյալ: Կաթողիկոսական դիվանի մյուս երկու թղթապանակները (1գ, 293, 332), որոնք նույնպես հարկացուցակ են, առաջինը՝ 1725 թ. հարկացուցակի պարսկերեն պատճենն է, իսկ երկրորդը՝ չնչին փոփոխություններով արտացոլում է 1728 թ. հարկացուցակի բովանդակությունը:

Վաղարշապատ գյուղի բնակչությունը 1728 թ. օսմանյան հարկացուցակում, ի տարբերություն նախորդի, ներկայացված չէ ըստ մահալների (որոնք 1725 թ. փաստաթղթում թվով 4 էին), այլ՝ հաշորդականությամբ շարադրված

¹ Հ. Փափազյան, «Վաղարշապատ գյուղի 1725 և 1728թթ. բուրժական հարկացուցակները», *ԲՄՆ* 5, Երևան, 1960, էջ 431-464:

² Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 320 (այսուհետև՝ Մատենադարան, Կ/դ):

³ Նույն տեղում, էջ 439:

են հարկատուների անուն-հայրանունները: Հստ մահալների գյուղերի բաժանումն Արևելյան Հայաստանում դեռևս հայտնի է Սեֆյան Իրանի վարչական համակարգից, երբ գյուղը ներկայացվել է մահալային բաժանումներով և ամեն գյուղից ստացվող հարկերի քանակով⁴: Շատ հավանական է, որ 1725 թ. օսմանյան իշխանությունների կողմից կիրառվել է տվյալ երկրամասի գրանցման կարգը, սակայն 3 տարի անց, ավելի ամրապնդվելով Արևելյան Հայաստանում, վարվել են այլ կերպ:

Հարկացուցակի առաջին մասում թվարկվում են Վաղարշապատ գյուղում ապրող 516 հարկատուների անունները, որոնք, դատելով անձնանուններից, միայն հայազգի էին⁵: Այդ հատվածից հետո անցում է կատարվում գյուղի այն սեփականություններ, որը պատկանում էր բնակչությանը: Այդ տվյալների համաձայն՝ ընդհանուր առմամբ, գյուղացիների այգիները նվազագույնը 81-ն էին⁶, ջրաղացները՝ 11 և կար ընդամենը մեկ հողատարածք⁷:

Հարկացուցակում այնուհետև թվարկվում է այն սեփականությունը, որը պատկանել է էջմիածնի Մայր Աթոռին: Թվարկվածների մեջ տեղ են գտել 1 քարավանատուն, 3 վարելահող, այգի, երկու առանձին վարելահող, ջրաղաց, ձիթհան, սակայն բացառությամբ առաջին երկուսի, փաստաթղթի այդ հատվածում մյուս սեփականության տեսակների քանակի շուրջ որևէ հիշատակություն չկա: Ավելին՝ ընթացիկ և 1գ, 332 վավերագրի (1731 թ.) համեմատությունից պարզվում է, որ վերոնշյալ 2 առանձին վարելահողերից մեկը վերջին փաստաթղթում անվանված է դինգ բառով: Հարկերին վերաբերող հատվածում մենք տեսնում ենք եկեղեցուն պատկանող 1 դինգի և 2 ձիթհանի մասին տեղեկություն, որը կարող է նշանակել, որ նախորդ հատվածում օսմանյան իշխանությունները դինգի փոխարեն էին վարելահող արձանագրել, իսկ ձիթհանները 2 հատ էին:

Սեփականության քանակի շուրջ ստեղծված անորոշությունը, որն առկա է նաև էջմիածնապատկան ինչքի պարագայում, նշում է նաև Սիմեոն Երևանցին իր «Ձամբո» աշխատության մեջ, որտեղ ընդհանուր անդրադարձ կատարելով խնդրո առարկա փաստաթղթի տվյալներին, հպանցիկ կերպով փաստում է, որ

⁴ Հ. Փափազյան, «Պետական և արժույթական հողերն ու նրանց եկամուտների տնօրինման կարգը Արևելյան Հայաստանում 16-17-րդ դդ.», Բեձ, հ.1, Երևան, 1967, էջ 98:

⁵ Թեպետ հարկացուցակում առկա են ոչ հայկական անուններ և հայրանուններ, սակայն նման դեպքերում դրանցից մեկի վերծանությամբ պարզել ենք նրանց հայ լինելը. մուսուլմանական հայրանուն կրողների անունները հայկական են և հակառակը:

⁶ Կարևոր է մատնանաշել այն իրողությունը, որ որևէ սեփականություն թվարկելիս, թեպետ դրա ներքին մասում տրված էր قطعه -«ժամակ» բառը, սակայն տեղ-տեղ որոշակի թիվ արձանագրված չէ: Այդ իսկ պատճառով պետք է համարել, որ տվյալ անհատի սեփականությունը նվազագույնը 1 հատ էր:

⁷ Հակոբ Փափազյանը վրիպմամբ մատնանաշել էր 87 այգի, 10 ջրաղաց, ուստի այդ թվերը վերանայելի են:

հստակ չի նշվում եկեղեցու այն այգիների, ջրաղացների և այլ սեփականության ճշգրիտ թիվը, որոնք ազատված են եղել հարկերից⁸: Իսկապես, եթե հաշվի չառնենք միայն 1 քարավանատան, 3 վարելահողի, 1 դինգի և երկու ձիթհանի վերաբերյալ տվյալները, ապա ունեցվածքի մյուս տեսակների դեպքում հստակ քանակ նշված չէ:

Հաջորդ հատվածը վերաբերում է հարկերի տվյալներին: Հակոբ Փափագյանը ճիշտ նկատել է, որ գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարը 1725-1728 թթ. ընթացքում 91.515 ալչեից հասել է 211.322 ալչեի, այդպիսով, հարկի չափը երեք տարվա ընթացքում բարձրացել է 2.3 անգամ⁹: Ի տարբերություն 1725 թ. հաշվառման, այս անգամ գանձվել են 9 անուն նոր հարկեր՝ ռասմի դյոնումի (դարձի հարկ), ռսպի, սիսեռի, մրգի տասանորդի, անասունների հարկի, առվույտի տասանորդի, խոտի գնի, շարչիների տուրքի և աչքալուսանքի համար, որոնց ընդհանուր թիվը հավասար է 15.165 ալչեի: Դրան պետք է գումարել այն տարբերությունը, որը բացի վերոնշյալ հարկերից, առաջացել է 3 տարի հետո, ինչը կազմում է 104642 ալչե: Հետևապես 1725 թ. և 1728 թ. տարբերության գումարը հավասար է 119807 ալչեի՝ ամբողջը կազմելով 221322 ալչե¹⁰:

Թեպետ Հակոբ Փափագյանը հարկաչափի ավելացման համար թվարկում է մի շարք հավանական պատճառներ, ինչպիսիք են՝ բնակչության աճ, ոռոգման ցանցի ընդարձակում, նոր հողերի յուրացում, այնուամենայնիվ, գտնում է նաև, որ դրանց ավելացումը պայմանավորված է օսմանյան իշխանությունների կողմից կիրառվող նոր հարկային քաղաքականությամբ¹¹: Ամենևին չմերժելով այդ տեսակետը՝ պետք է նշել, որ հարկադրույքների ավելացումը զգալի չափով կարող էր պայմանավորված լինել նոր հաշվառված մարդկանցով, որոնք գրանցված չեն եղել 3 տարի առաջ, իսկ 1728 թ. արդեն տեղ են գտել քննության առարկա հարկացանկում: Դա նշանակում է, որ այդ մարդկանցից ևս հարկեր գանձվելու էին, հետևաբար՝ որոշ աճ սպասելի էր: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ համեմատական կարգով հարկերն առավել նվազ էին 1725 թ. այն պատճառով, որ օսմանյան իշխանությունները, որոնք մոտավորապես մեկ տարի առաջ էին հաստատվել երկրում, հարկերի գանձման գործում սկզբնապես բավական զգուշավոր էին և վարում էին սիրաշահելու քա-

⁸ Ջամբո. գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի և պարունակող բնափց որպիսութեանց Սբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ Ի Սիմէօնէ ցաւահար եւ ի վշտակոծ կաթուղիկոսէ երեւանցիոյ: Վաղարշապատ 1873, էջ 134 (այսուհետև՝ Ջամբո):

⁹ Հակոբ Փափագյան, «Վաղարշապատ գյուղի 1725 և 1728թթ. բուրժական հարկացուցակները», էջ 442:

¹⁰ Նույն տեղում, էջ 443:

¹¹ Նույն տեղում:

ղաքականություն¹²: Սակայն, պայմանավորված առաջխաղացման պայմաններով և Այսրկովկասում ռուս-թուրքական սահմանազատման գործընթացի ավարտով, նրանք 1727-1728 թթ. սկսեցին իրենց ավելի վստահ զգալ Արևելյան Հայաստանում, ինչը, օրինակ, կարող ենք նկատել պահանջվելիք հարկերից:

Վերջապես, վավերագրի վերջին հատվածը վերաբերում է էջմիածնի վանքին տրված իրավունքներին, որտեղ նշված են կենտրոնական իշխանությունների կողմից եկեղեցուն շնորհված արտոնություններն ու նրա վրա դրված պարտականությունները: Հարկացուցակի այդ մասը թույլ է տալիս որոշ հարցերի վերաբերյալ կարևոր եզրահանգումներ անել, որոնց մասին, ցավով, որևէ հիշատակություն չկա Սիմեոն Երևանցու «Ջամբո» աշխատությունում: Ավելին՝ սույն վավերագրի և «Ջամբո»-ի համապատասխան հատվածի համեմատությունից պարզվում է, որ դրանց միջև առկա են նշանակալի տարբերություններ: Սա հաստատում է այն տեսակետը, որ Սիմեոն Երևանցին հավանաբար մանրամասն ծանոթ չի եղել վավերագրերի բովանդակությանը, այլ՝ միայն դրանց համառոտ նկարագրությունները: Վավերագրի թարգմանությունը մեզ թույլ է տալիս ավելի հանգամանորեն տեղեկանալ օսմանյան իշխանավորների Մայր Աթոռի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը:

Հայոց եկեղեցուն վերաբերող վավերագրի առաջին մասում շարադրված են եկեղեցուն շնորհված արտոնությունները, որոնց շնորհիվ Մայր Աթոռին պատկանող մի շարք սեփականության տեսակներ մաղաֆ¹³ էին հայտարարվում: Նշվում է 2 գուլթանի, 1500 սոմար կազմող հողի, 500 գլուխ անասունի, 2 ձիթհանի, 2 դինգ ջրաղացի, սեփականություն հանդիսացող այգիների¹⁴, եկեղեցուն պատկանող 4 վանքերի մասին: Եկեղեցին ազատվում էր իսփենջից, խարաջից և իրավունք ուներ տիրելու հայազգի բնակչության այն սեփականություններ, որն անժառանգության պատճառով դատարկ էր մնացել: Բացի այդ, հիշատակվում են նաև Վաղարշապատ, Օշական, Մաստարա գյուղերը, որոնք հարկատու էին էջմիածնին: Այդ ամենից հետո իշխանությունները եկեղեցուց պահանջում են Երևանի կառավարիչներին վճարել տարեկան 350 դուրուշ, իսկ օսմանյան զինվորներին՝ 1 ալչե¹⁵ և որոշ քանակությամբ ցորեն¹⁶: Այս ամենը ծանուցվում էր բաշղեֆթերդար Իբրահիմ փաշային:

¹² Հակոբ Փափազյան, «Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային ֆաղափականության վերաբերյալ», *ԲՄ* N 16, Երևան, 1994, էջ 198:

¹³ Հարկերից ազատված: Օսմաներենում այդ բառը գործածվում է «معاف»- «մու'աֆ» ձևով, սակայն այն հայկական աղբյուրներում հայտնի է «մաղաֆ» տարբերակով:

¹⁴ Այստեղ նույնպես դրանց ֆանակը նշված չէ:

¹⁵ Ալչե՛ փոքր արծաթյա դրամ, դուրուշի 1/120 մասը:

¹⁶ Գինգի 1/6 մասը:

Միմեոն Երևանցին, հիշրայի 1140 թ. (1728 թ.) հարկացուցակը նկարագրելիս¹⁷ հիշատակում է 3 վանք, 600 գլուխ անասուն, այնինչ բնագրի ճշգրիտ վերծանության շնորհիվ, ինչպես արդեն վերևում նշվեց, մաղաֆ հայտարարված վանքերը 4 էին, իսկ անասունների թիվը՝ 500: Ի դեպ, նույն աղբյուրում որևէ տեղեկություն չկա նաև վերը նշված 1 ակչեի և ցորենի մասին:

1728 թ. Մայր Աթոռին տրված իրավունքները բավական ուշագրավ են: Բանն այն է, որ նախորդ հարկամատյանի համեմատությամբ սահմանվում էին գրեթե տարբեր իրավունքներ: Սակայն շնորհիվ Միմեոն Երևանցու տեղեկությունների և Մատենադարանում պահվող համապատասխան վավերագրերի՝ կարող ենք փաստել, որ 1725 թ. հարկամատյանով սահմանված իրավունքները փոփոխության են ենթարկվել ոչ թե 1728 թ., այլ 1726 թ., որից հետո սեփականությանը վերաբերող դրույթները նույնությամբ շարադրվել են նաև 1727 թ.¹⁸:

Հաջորդ ուշագրավ իրողությունը վերաբերում է էջմիածնապատկան գյուղերին, որոնք 1725 թ. հարկամատյանում 5-ն էին՝ Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Քիրաշլու, և եկեղեցին դրանցից կարող էր հարկեր գանձել: Միմեոն Երևանցու տեղեկություններով, այդ թվականին բոլոր մուլքային գյուղերը (մեր կարծիքով խոսքը այդ հինգի մասին է), համարվում էին մաղաֆ¹⁹: Սակայն, այդ դեպքում ինչու՞ 1728 թ. վավերագրում բացակայում են Քիրաշլու, Ֆրանկանոց գյուղերը (1726 թ. ի վեր), և չկան դրան հաջորդող մյուս վավերագրերում նույնպես: Մենք հակված ենք կարծելու, որ Ֆրանկանոցն ու Քիրաշլուն, անհայտ պատճառներով, այլևս վանքապատկան գյուղեր չէին:

Միմեոն Երևանցին, խոսելով Ֆրանկանոց գյուղի մասին, մատնանշում է, որ Աբրահամ Մշեցու օրոք (1730-1734 թթ.) այդ գյուղը չքավորության մակարդակի էր հասել, և հնարավոր պատճառներից մեկը համարում է օտար տիրապետողների (օսմանցիների) հարկային հարստահարիչ քաղաքականությունը²⁰: Նման պայմաններում գյուղացիներն Աբրահամ Մշեցուց խնդրում են 600 ղուրուշ, պարտավորվելով վճարել՝ 1 տասանորդից բացի, ևս մեկը, ընդհանուր առմամբ՝ բերքի 1/5-ը²¹: Այդ տեղեկությամբ ստացվում է, որ Ֆրանկանոցը խնդրանք-դիմումի ժամանակ համարվում էր եկեղեցապատկան կալվածք, հակառակ դեպքում, դրանից առաջ տասանորդ չէր վճարի: Այդ գործարքի վերաբերյալ հստակ տարեթիվ չի նշվում, ուստի հնարավոր էր կարծել, որ այն կարող էր տեղի ունենալ միայն հիշրայի՝ 1144 (1732 թ.) հրովարտա-

¹⁷ Զամբո, էջ 243:

¹⁸ Մատենադարան, Կ/դ, թղթ. 1գ, վավ. 306, 314:

¹⁹ Զամբո, էջ 249:

²⁰ Զամբո, էջ 113:

²¹ Նույն տեղում:

կից հետո²², քանի որ մեր ձեռքի տակ եղած նախորդ վավերագրերում գյուղը չի հիշատակվում: Սակայն Միմեոն Երևանցին հիշատակելով հիշրայի 1147 թ. (1734 թ.) Հուսեյն փաշայի հրովարտակը²³, նշում է նորից Վաղարշապատ, Օշական, Մաստարա գյուղերի հարկատու լինելը, և ոչ մի խոսք հիշյալ երկու գյուղերի մասին:

Եթե չլիներ վերջին տեղեկությունը, ապա կենթադրեինք, որ Ֆրանկանոցը վերադարձվել է Աբրահամ Մշեցու կյանքի վերջին տարիներին, սակայն վերջին վավերագիրը հակասության տեղիք տվեց, որի պատասխանն առայժմ չունենք:

1728 թ. հարկացուցակի աղբյուրագիտական արժեքներից մեկն այն է, որ փաստաթղթով եկեղեցուն շնորհված արտոնություններն ամենայն հավանությունամբ ուժի մեջ են եղել մինչև Արևելյան Հայաստանում Օսմանյան իշխանությունների ներկայության ավարտը (1736 թ.): Դրա փաստացի վկայությունն են վերոհիշյալ 332, 338 վավերագրերը:

Հիմնվելով 1728 թ. հարկացուցակի տեղեկությունների վրա, հնարավոր է պատկերացում կազմել բնակչությանից գանձվող հարկաչափի, Այսրկովկասի մասնավորապես Արևելյան Հայաստանի ընկերային-տնտեսական վիճակի մասին: Հաշվի առնելով ելից և մտից մի քանի հանգամանակից ցուցակների (դեֆթեր-ի մուկաթիաթ) և հարկերի հատուցմանը վերաբերող պաշտոնական ավյալները²⁴ կարող ենք եզրակացնել, որ հարկերը հետզհետե ավելանում էին:

Այն նաև անչափ կարևոր փաստաթուղթ է ժողովրդագրական տեսանկյունից, որի շնորհիվ տեղեկանում ենք, թե քանի հարկատու և ինչ սեփականություն է եղել Վաղարշապատ գյուղում: Այս փաստաթուղթն իր բովանդակությամբ՝ մանրամասն տեղեկություններով շատ ավելի ընդգրկուն և ընդարձակ է նախորդից:

1728 թ. վավերագրի օսմաներեն բնագրի ուսումնասիրությունը ու նրա հայերեն թարգմանությունը կնպաստեն Արևելյան Հայաստանի ընկերային-տնտեսական պատմության ավելի լայն հետազոտությունների իրականացմանը:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ 1728 Թ. ՀԱՐԿԱՅՈՒՑԱԿԸ²⁵

Երևանի լիվայում գտնվող Կարբիի նահիա
Ուչքիլիսե գյուղը, որը ենթակա է Կարբիին

²² Մատենադարան, Կ/դ, թղթ. 1գ, վավ. 338:

²³ Զամբու, էջ 252:

²⁴ Հակոբ Փափազյան, «Սոֆիայի Կիրիլ և Մեթոդիի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը», ՊԲՀ, 1984 (3), էջ 199-205:

²⁵ Մատենադարան, Կ/դ, թղթ. 1գ., վավ. 320, 11 էջ, (38x13 սմ), բնագիր, գրված օսմանյան «սայաղլամ» գրությանը. առաջին էջը Սուլթան Անվեդ 3-րդի թուրան է, 9-11 էջերը մահուր:

1. Ալեքսան՝ որդի Մելքումի
2. Մկրտում՝ որդի Մելքումի
3. Մարքաս (՞)՝ որդի Մարկոսի
4. Սարուխան՝ որդի Ավագի
5. Խաչում՝ որդի Հարությունի
6. Թարխան՝ որդի Գրիգորի
7. Գրիգոր՝ որդի Թարխանի
8. Սիմոն՝ որդի Խաչիկի
9. Հարություն՝ որդի Խաչումի
10. Սիփան՝ որդի Խաչումի
11. Սարգիս՝ որդի Օհանի
12. Վարդան՝ որդի Օհանի
13. Ասամ՝ որդի Աղաբեկի
14. Կարաբեկ՝ որդի Մաթոսի
15. Սիմոն՝ որդի Ղուկասի
16. Խողապետր՝ որդի Գալուստի*²⁶
17. Նավասարդ՝ որդի Խաչատուրի
18. Հովհաննես՝ որդի Նավասարդի*
19. Ղուրբան՝ որդի Խաչատուրի
20. Մկրտում՝ որդի Խաչատուրի
21. Սահակ՝ որդի Թաբուրի
22. Վարդևան՝ որդի Թաբուրի*
23. Գալուստ՝ որդի Ասուբի
24. Մնացական՝ որդի Ա(յ)վագի*
25. Վարդան՝ որդի Քուրբահի
26. Առաքել՝ որդի Վարդանի*
27. Դոլում՝ որդի Հովսեփի (՞)
28. Ոսկան՝ որդի Աղաբեկի
29. Ջհան՝ որդի Մադրոսի (՞)
30. Ոսկան՝ որդի Ջհանի
31. Միրաբ՝ որդի Ջհանի
32. Մկրտիչ՝ որդի Սարգսի
33. Ոսկան՝ որդի Ալեքսանի
34. Մելքում՝ որդի Սիհրանի
35. Թողիք՝ որդի Մելքումի
36. Բուղդա (՞)՝ որդի Թողիքի*
37. Սարգիս՝ որդի Թահմասպի
38. Ա(յ)վագ՝ որդի Ամիրխանի
39. Սուլթան՝ որդի Գուրուբի
40. Ղամար (՞)՝ որդի Մովսեսի
41. Հովհաննես՝ որդի Խաչատուրի
42. Գալուստ՝ որդի Ավետիսի
43. Աղամալ՝ որդի Պետրոսի
44. Հարություն՝ որդի Ֆեշաջանի
45. Մարկոս՝ որդի Ալեքսանի
46. Նանում՝ որդի Հարությունի*
47. Հակոբ՝ որդի Նանումի*
48. Նավասարդ՝ որդի Ամիրխանի*
49. Մարուք՝ որդի Ամիրխանի
50. Բուղդա (՞)՝ որդի Ամիրխանի*
51. Պողոս՝ որդի Ամիրխանի
52. Քուբի՝ որդի Աղաբեկի
53. Սիփան՝ որդի Բուղդայի
54. Գրիգոր՝ որդի Առաքելի
55. Դիլան՝ որդի Թորոսի
56. Աղաբաբ՝ որդի Թորոսի
57. Ավետիս՝ որդի Խաչատուրի
58. Խաչում՝ որդի Ա(յ)վագի
59. Հովհաննես՝ որդի Ա(յ)վագի
60. Ալեքսան՝ որդի Ա(յ)վագի
61. Հովհաննես՝ որդի Խաչերի (՞)
62. Իսրայել՝ որդի Խաչերի (՞)*
63. Ղևոնդ՝ որդի Խաչումի
64. Մնացական՝ որդի Ղևոնդի
65. Գուրուք՝ որդի Ղևոնդի*
66. Դիլան՝ որդի Գրիգորի
67. Ա(յ)վագ՝ որդի Դիլանի
68. Աստվածատուր՝ որդի Սաղեքի
69. Նավասարդ՝ որդի Սաղեքի
70. Գուրուք՝ որդի Հակոբի
71. Մնացական՝ որդի Առաքելի

²⁶ Աստղանիշով փոխարինում ենք որոշ անուններից հետո գրված արաբատառ «թ»՝ «միմ» տառը, որի նշանակությունն անայժմ պարզ չէ:

72. Մակար՝ որդի Առաքելի
 73. Միրաբ՝ որդի Առաքելի
 74. Ահարոն՝ որդի Մակարի
 75. Ղազարոս՝ որդի Միրաբի
 76. Դավիթ՝ որդի Մելիքի
 77. Սահակ՝ որդի Խաչումի
 78. Գրիգոր՝ որդի Խաչումի
 79. Ալեքսան՝ որդի Խաչումի
 80. Մկրտում՝ որդի Խաչումի
 81. Գևորգ՝ որդի Ա(յ)վազի
 82. Հովհաննես՝ որդի Ա(յ)վազի*
 83. Դավիթ՝ որդի Մկրտումի
 84. Ավետիք՝ որդի Պապի
 85. Վարդազար՝ որդի Մկրտումի*
 86. Սարգիս՝ որդի Պողոսի
 87. Միրաբ՝ որդի Օհանի
 88. Բուզաղ՝ որդի Սարուխանի
 89. Գալուստ՝ որդի Ղազարի
 90. Պետրոս՝ որդի Օհանի
 91. Քասեր՝ որդի Սևանի
 92. Քահանա Կարապետ՝ որդի Մովսեսի
 93. Հովհաննես՝ որդի Մովսեսի
 94. Հարություն՝ որդի Սարգսի
 95. Մկրտում՝ որդի Սարգսի
 96. Կարապետ՝ որդի Սևանի
 97. Մելիք՝ որդի Կարապետի
 98. Բեքիբար՝ որդի Պողոսի
 99. Գրիգոր՝ որդի Խաչատուրի
 100. Սահակ՝ որդի Հարությունի
 101. Սիմոն՝ որդի Կարապետի
 102. Աղաջան՝ որդի Կարապետի
 103. Գալուստ՝ որդի Կարապետի
 104. Թարխան՝ որդի Սիմոնի
 105. Գրիգոր՝ որդի Մամվելի
 106. Սաղամ՝ որդի Գրիգորի*
 107. Սարգիս՝ որդի Հովսեփի (°)
 108. Պետրոս՝ որդի Սարգսի*
 109. Հովսեփի (°) որդի Սարգսի*
 110. Աստվածատուր՝ որդի Հարությունի
 111. Հովհաննես՝ որդի Հարությունի*
 112. Խիրքասա (°) որդի Հարությունի*
 113. Մնացական՝ որդի Պետրոսի
 114. Կիրակոս՝ որդի Գրիգորի
 115. Հովհաննես՝ որդի Թադևոսի
 116. Մուրադ՝ որդի Փիլիպոսի
 117. Գալուստ՝ որդի Փիլիպոսի
 118. Պողոս՝ որդի Փիլիպոսի
 119. Մաթոս՝ որդի Ղազարի (°)
 120. Ղևոնդ՝ որդի Հարությունի*
 121. Բուզդա (°) որդի Ավետիսի
 122. Թոթոլ՝ որդի Սաբուլի (°)
 123. Սարգիս՝ որդի Ալիխանի
 124. Գալուստ՝ որդի Սարգսի*
 125. Սաքուն՝ որդի Ա(յ)վազի
 126. Հովհաննես՝ որդի Ա(յ)վազի
 127. Սահակ՝ որդի Դանիելի
 128. Կարապետ՝ որդի Դանիելի*
 129. Մուրադ՝ որդի Ղազարի (°)
 130. Կարապետ՝ որդի Մուրադի
 131. Իսրայել՝ որդի Մուրադի
 132. Սարգիս՝ որդի Մուրադի
 133. Դիլան՝ որդի Ղազարի (°)
 134. Գրիգոր՝ որդի Դիլանի
 135. Կարապետ՝ որդի Դիլանի*
 136. Խաչիկ՝ որդի Հովսեփի (°)
 137. Քոչար՝ որդի Աբրահամի
 138. Քահանա Սարգիս՝ որդի Նավասարդի
 139. Թողիք՝ որդի Նավասարդի
 140. Դավիթ՝ որդի Վաթանի
 141. Ղազար (°) որդի Հաբեթի (°)
 142. Անտոն՝ որդի Թադևոսի

143. Մարտիրոս՝ որդի Թադևոսի*
144. Իսաչան՝ որդի Նազարի
145. Հովհաննես՝ որդի Նազարի
146. Հովհաննես՝ որդի Մկրտչի
147. Սողոմոն՝ որդի Մարկոսի
148. Սուքիաս՝ որդի Սողոմոնի
149. Հակոբ՝ որդի Ամիրայի
150. Ամիրա՝ որդի Ամիրայի*
151. Սարգիս՝ որդի Արսլանի
152. Մարկոս՝ որդի Արսլանի
153. Յաղուբ՝ որդի Արսլանի
154. Մկրտիչ՝ որդի Թորոսի
155. Աստվածատուր՝ որդի Մկրտչի
156. Խաչիկ՝ որդի Թորոսի
157. Մելքում՝ որդի Միրաբի*
158. Մնացական՝ որդի Խաթերի
159. Հարություն՝ որդի Մինասի
160. Սարգիս՝ որդի Մինասի
161. Անտոն՝ որդի Ղազարոսի
162. Հակոբ՝ որդի Գրիգորի
163. Ավետիս՝ որդի Գրիգորի
164. Սահակ՝ որդի Պետրոսի
165. Մնացական՝ որդի Ավետիսի
166. Օհան՝ որդի Ավետիսի*
167. Խաչատուր՝ որդի Ավետիսի*
168. Կարապետ՝ որդի Ավետիսի*
169. Բուզղա (՞) որդի Սարգսի
170. Գալուստ՝ որդի Սարգսի
171. Աստվածատուր՝ որդի Մկրտչի
172. Հակոբ՝ որդի Աստվածատուրի
173. Ավագ՝ որդի Վազգենի
174. Խաչում՝ որդի Մաթոսի
175. Գրիգոր՝ որդի Կիրակոսի
176. Ուլում՝ որդի Թովմասի
177. Սարգիս՝ որդի Խորիքի
178. Մալխաս՝ որդի Կիրակոսի*
179. Թողիք՝ որդի Բալասանի
180. Թողիք՝ որդի Զաքարեի
181. Հարություն՝ որդի Զաքարեի
182. Մանգուլ՝ որդի Վարդանի*
183. Սահակ՝ որդի Ավետիսի*
184. Խոսրով՝ որդի Ավետիսի*
185. Բուզղա՝ որդի Նանամի
186. Պետրոս՝ որդի Բուզղաի
187. Քաքոս՝ որդի Բուզղաի*
188. Մարտիրոս՝ որդի Վազգենի
189. Պետրոս՝ որդի Գրիգորի
190. Սիմոն՝ որդի Մկրտչի
191. Ղազար (՞) որդի Սահակի*
192.՝ որդի Սարգսի
193. Գրիգոր՝ որդի Վասակի
194. Նավասարդ՝ որդի Գրիգորի*
195. Ա(յ)վագ՝ որդի Գրիգորի
196. Մարուք՝ որդի Ղուկասի
197. Աղաբաբ՝ որդի Հարությունի*
198. Գրիգոր՝ որդի Մուրադի
199. Ամիրխան՝ որդի Մկրտչի
200. Բալասան՝ որդի Մկրտչի*
201. Գրիգոր՝ որդի Բալասանի
202. Միրզա՝ որդի Խաչատուրի
203. Հակոբ՝ որդի Միրզայի*
204. Իսրայել՝ որդի Խաչուկի (՞)*
205. Ալավերդի՝ որդի Թողիքի
206. Սաֆար՝ որդի Աստվածատու-
րի*
207. Մկրտում՝ որդի Արսլանի*
208. Սարգիս՝ որդի Արսլանի*
209. Մկրտում՝ որդի Բաղասայի (՞)
210. Պետրոս՝ որդի Հովհաննեսի
211. Բաբադ՝ որդի Աստվածատու-
րի*
212. Հովհաննես՝ որդի Թովմասի*
213. Մնացական՝ որդի Սահակի*
214. Արսլան՝ որդի Մարկոսի
215. Սահակ՝ որդի Արսլանի
216. Բարսեղ՝ որդի Թորոսի
217. Գուրուբ՝ որդի Թորոսի
218. Փիլիպոս՝ որդի Մասրաֆի

- | | |
|-----------------------------------|---------------------------------|
| 219. Մկրտիչ՝ որդի Սարգսի | 256. Գրիգոր՝ որդի Աղաջանի |
| 220. Առաքել՝ որդի Սարգսի | 257. Սողոմոն՝ որդի Փիլիպոսի |
| 221. Գրիգոր՝ որդի Սարգսի | 258. Բուղդա (Շ) որդի Ղազարի (Շ) |
| 222. Արուճ որդի Սարգսի* | 259. Ա(յ)վազ՝ որդի Գրիգորի |
| 223. Յաղուբ՝ որդի Նանուճի* | 260. Արուճ որդի Ղուկասի |
| 224. Սարգիս՝ որդի Յաղուբի* | 261. Սիփան՝ որդի Գրիգորի |
| 225. Աղամ որդի Սարգսի | 262. Իսրայել՝ որդի Ներսեսի |
| 226. Դավիթ որդի Մացակի (Շ) | 263. Ավազ՝ որդի Անանիայի* |
| 227. Գրիգոր՝ որդի Մացակի (Շ) | 264. Կարապետ՝ որդի Հակոբի |
| 228. Ներսես՝ որդի Դավթի* | 265. Մաթոս՝ որդի Կարապետի |
| 229. Սահակ՝ որդի Մկրտչի | 266. Ուլուբեկ՝ որդի Պետրոսի |
| 230. Հարություն՝ որդի Սահակի* | 267. Ավան՝ որդի Ուլուբեկի |
| 231. Ներսես՝ որդի Հարությունի | 268. Նանուճ որդի Վարդանի |
| 232. Գրիգոր՝ որդի Կարապետի | 269. Գրիգոր՝ որդի Կարապետի |
| 233. Կիրակոս՝ որդի Գալուստի | 270. Բաղդասար՝ որդի Հակոբի |
| 234. Գրիգոր՝ որդի Կիրակոսի | 271. Հալիբեկ՝ որդի Մնացականի |
| 235. Հովսեփ (Շ) որդի Միրզախանի | 272. Մնացական՝ որդի Ադամի* |
| 236. Բուղդա (Շ) որդի Աստվածատուրի | 273. Աղամալ՝ որդի Մինասի |
| 237. Միրզա՝ որդի Պետրոսի | 274. Մալխաս՝ որդի Մինասի* |
| 238. Դավիթ որդի Անանիայի | 275. Հովհաննես՝ որդի Մինասի |
| 239. Ալիխան՝ որդի Կարապետի | 276. Պետրոս՝ որդի Մինասի |
| 240. Հովհաննես՝ որդի Կարապետի* | 277. Աղիբան՝ որդի Իսաջան |
| 241. Նահապետ՝ որդի Անտոնի | 278. Մնացական՝ որդի Գևորգի |
| 242. Բուղդանի՝ որդի Գալուստի | 279. Ա(յ)վազ՝ որդի Յաղուբի |
| 243. Գալուստ՝ որդի Բուղդանի* | 280. Արտաշես՝ որդի Մնացականի |
| 244. Ղասեմ որդի Ուլուխանի | 281. Բաղդասար՝ որդի Հակոբի |
| 245. Պողոս՝ որդի Ուլուխանի | 282. Մարկոս՝ որդի Հարությունի |
| 246. Ֆրանգուլ՝ որդի Ուլուխանի | 283. Բուղդա (Շ) որդի Նանուճի |
| 247. Աղիբար՝ որդի Մարտիրոսի | 284. Բեքիբար՝ որդի Մկրտչի |
| 248. Թարխան՝ որդի Միրաբի | 285. Կարապետ՝ որդի Մկրտչի* |
| 249. Պետրոս՝ որդի Խաչատուրի | 286. Կարապետ՝ որդի Մկրտչի* |
| 250. Սարգիս՝ որդի Պետրոսի | 287. Խաչում որդի Աղուճի |
| 251. Մկրտում որդի Պետրոսի | 288. Հարություն՝ որդի Սիփանի |
| 252. Զհան՝ որդի Գյուլնազարի | 289. Արամայիս՝ որդի Սիփանի* |
| 253. Հակոբ՝ որդի Զհանի* | 290. Բարսեղ՝ որդի Սիփանի* |
| 254. Մալխաս՝ որդի Զհանի* | 291. Մկրտիչ՝ որդի Զաքարեի |
| 255. Մաղաքիա՝ որդի Գրիգորի | 292. Զաքարե՝ որդի |
| | 293. Հովհաննես՝ որդի Զաքարեի |

294. Դեսիմ (°) որդի Զաքարեի
 295. Աստվածատուր՝ որդի Սարգսի
 296. Ղազար (°) որդի Սարգսի*
 297. Ալագյազ՝ որդի Բուզաղի
 298. Դավիթ որդի Բուզաղի
 299. Մինաս՝ որդի Փիլիպոսի
 300. Թադևոս՝ որդի Մարկոսի
 301. Իսրայել՝ որդի Մարկոսի
 302. Դավիթ որդի Գրիգորի
 303. Հարություն՝ որդի Դավթի*
 304. Ալեքսան՝ որդի Ներսեսի
 305. Բարսեղ՝ որդի Գալուստի
 306. Սիփան՝ որդի Գալուստի
 307. Պետրոս՝ որդի Գալուստի*
 308. Սողոմոն՝ որդի Սիփանի*
 309. Սահակ՝ որդի Սիփանի*
 310. Հարություն՝ որդի Սիփանի*
 311. Ներսես՝ որդի Վազգենի
 312. Բարսեղ՝ որդի Ներսեսի
 313. Աղամ՝ որդի Առաքելի
 314. Ա(յ)վազ՝ որդի Աղամի*
 315. Դոնոմ՝ որդի Վարդանի
 316. Մնացական՝ որդի Դոնոմի*
 317. Մկրտիչ՝ որդի Փիրումի
 318. Գալուստ՝ որդի Վարդանի
 319. Թարխան՝ որդի Գալուստի
 320. Մկրտիչ՝ որդի Գալուստի
 321. Խամսա՝ որդի Բաղդասարի
 322. Առաքել՝ որդի
 323. Սիփան՝ որդի Առաքելի*
 324. Զաքարե՝ որդի Վազգենի*
 325. Թորոս՝ որդի Պետրոսի
 326. Ալեքսան՝ որդի Ա(յ)վազի
 327. Մարգարե՝ որդի Սիփանի
 328. Բուզաղ՝ որդի Ներսեսի
 329. Աբրահամ՝ որդի Բուզաղի*
 330. Ահարոն՝ որդի Բուզաղի*
 331. Մաթոս՝ որդի Ներսեսի
 332. Սարգիս՝ որդի Մաթոսի
 333. Հովհաննես՝ որդի Աբանի (°)
 334. Հովհաննես՝ որդի Ստեփանի
 335. Աղամալ՝ որդի Օհանի
 336. Մկրտիչ՝ որդի Հովհաննեսի
 337. Պետրոս՝ որդի Նազարի
 338. Սիմոն՝ որդի Գրիգորի
 339. Հարություն՝ որդի
 340. Պետրոս՝ որդի Փիլիպոսի
 341. Փիլիպոս՝ որդի Պետրոսի
 342. Հովհաննես՝ որդի Ուլուբեկի
 343. Գրիգոր՝ որդի Ուլուբեկի*
 344. Գրիգոր՝ որդի Սիմոնի*
 345. Աղամ (°) որդի Գալուստի*
 346. Աբրահամ՝ որդի Միրզայի
 347. Կարապետ՝ որդի Միրզայի
 348. Գուրուք՝ որդի Միրզայի
 349. Ավետիս՝ որդի Գուրուքի
 350. Ներսես՝ որդի Կարապետի
 351. Բեքիբար՝ որդի Վաթանի
 352. Գալուստ՝ որդի Վարդանի
 353. Միրաքի՝ որդի Սիփանի
 354. Ա(յ)վազ՝ որդի Սիփանի
 355. Խաս (°) որդի Ա(յ)վազի*
 356. Ա(յ)վազ՝ որդի Ավամի
 357. Թորոս՝ որդի Հակոբի
 358. Պողոս՝ որդի Հարությունի
 359. Վարդան՝ որդի Հարությունի
 360. Մկրտիչ՝ որդի Հարությունի
 361. Փիլիպոս՝ որդի Պողոսի
 362. Խաչում՝ որդի Մովսեսի
 363. Մկրտում՝ որդի Փիլիպոսի
 364. Հակոբ՝ որդի Հովհաննեսի*
 365. Գալուստ՝ որդի Թողիքի
 366. Գրիգոր՝ որդի Թողիքի*
 367. Թողիք՝ որդի Գրիգորի
 368. Ավետիս՝ որդի Մարգարեի
 369. Գրիգորի՝ որդի Մարգարեի
 370.՝ որդի Մարգարեի
 371. Միրաք՝ որդի Մարգարեի

- | | |
|---------------------------------|--------------------------------------|
| 372. Միմոն՝ որդի Միրաբի* | 409. Սողոմոն՝ որդի Սողոմոն քահանայի* |
| 373. Սաֆար՝ որդի Անանիայի | 410. Վարդազար՝ որդի Ղազարոսի |
| 374. Ներսես՝ որդի Փիլիպոսի | 411. Վարդազար՝ որդի Սաֆարի |
| 375. Դուքեր՝ որդի Աղաջանի | 412. Հարություն՝ որդի Սաֆարի* |
| 376. Գալուստ՝ որդի Աղաջանի | 413. Դավիթ՝ որդի Դանիելի |
| 377. Ասուբ՝ որդի Աղաջանի | 414. Աղամալ՝ որդի Հակոբի |
| 378. Հուսիկ՝ որդի Թուսիկի | 415. Մնացական՝ որդի Փանոսի |
| 379. Գևորգ՝ որդի Թուսիկի | 416. Յաղուբ՝ որդի Մնացականի |
| 380. Բեքիբար՝ որդի Թուսիկի | 417. Սիփան՝ որդի Մնացականի |
| 381. Ավագ՝ որդի Թորոսի | 418. Ղևոնդ՝ որդի Գրիգորի |
| 382. Արսլան՝ որդի Թորոսի | 419. Բուղդա՝ որդի Գրիգորի |
| 383. Մելիք՝ որդի Թորոսի | 420. Պողոս՝ որդի Մուրադի* |
| 384. Նահապետ՝ որդի Հովհաննեսի | 421. Մնացական՝ որդի Առաքելի* |
| 385.՝ որդի Սարգսի | 422. Ա(յ)վագ՝ որդի Յաղուբի |
| 386. Վարոս՝ որդի Սարգսի* | 423. Դիլանչի՝ որդի Ղազարի |
| 387. Վարդան՝ որդի Գրիգորի | 424. Կարապետ՝ որդի Փիլիպոսի |
| 388. Գրիգոր՝ որդի Վաթանի | 425. Մարութ՝ որդի Փիլիպոսի |
| 389. Մկրտում՝ որդի Ավետի (՞) | 426. Վարդան՝ որդի Ավետիսի |
| 390. Գալուստ՝ որդի Պետրոսի | 427. Ղազար (՞)՝ որդի Ավետիսի |
| 391. Աղազադ՝ որդի Գալուստի* | 428. Գրիգոր՝ որդի Ավետիսի* |
| 392. Նանու՝ որդի Գալուստի | 429. Ատիկ՝ որդի Գրիգորի |
| 393. Փիլում՝ որդի Պետրոսի | 430. Դավիթ՝ որդի Գրիգորի |
| 394. Հակոբ՝ որդի Վարդանի | 431. Բեկնազար՝ որդի Դավթի |
| 395. Բեքիբար՝ որդի Վաթանի | 432. Աբգար՝ որդի Դավթի |
| 396. Գրիգոր՝ որդի Օհանի | 433. Գալուստ՝ որդի |
| 397. Վիրաբ՝ որդի Սարգսի | 434. Հարություն՝ որդի |
| 398. Նանու՝ որդի Բաքոսի | 435. Արտեմ՝ որդի |
| 399.՝ որդի Մանուկի | 436. Ա(յ)վագ՝ որդի Մնացականի* |
| 400. Փիլում՝ որդի Ղազարի | 437. Ղազար (՞)՝ որդի Գևորգի* |
| 401. Մովսես՝ որդի Փիլումի* | 438. Գևորգ՝ որդի Սարգսի |
| 402. Հակոբ՝ որդի Սարումի | 439. Փիլում՝ որդի Գևորգի |
| 403. Մնացական՝ որդի Սարումի | 440. Ավետ՝ որդի Քևադի* |
| 404. Ալեքսան՝ որդի Մարգարեի | 441. Միրաբ՝ որդի Գևորգի |
| 405. Գրիգոր՝ որդի Ալեքսանի* | 442. Գրիգոր՝ որդի Սարգսի |
| 406. Սարգիս՝ որդի Փանոսի | 443. Մադրոս (՞)՝ որդի Սարգսի |
| 407. Թողիք՝ որդի Անտոնի | 444. Գրիգոր՝ որդի Վիրաբի |
| 408. Բեքիբար՝ որդի Աստվածատուրի | 445. Գևորգ՝ որդի Վազգենի |

446. Սուլթան՝ որդի Գևորգի
 447. Ավետիս՝ որդի Թարխանի
 448. Ահարոն՝ որդի
 449.՝ որդի Գանիելի
 450. Մանուկ՝ որդի Մովսեսի
 451. Հարություն՝ որդի Սարգսի
 452. Պետրոս՝ որդի Սարգսի
 453. Ներսես՝ որդի Սարգսի
 454. Մասրաֆ՝ որդի Մելիքսեթի
 455. Մկրտում՝ որդի Ղազարի (°)*
 456. Մկրտում՝ որդի Առաքելի
 457. Ավետիս՝ որդի Մազրոսի (°)
 458. Հովհաննես՝ որդի Հովսեփի
 459. Հարություն՝ որդի Հովհաննեսի
 460. Մալխաս՝ որդի Հովհաննեսի*
 461. Հովասափ՝ որդի Սիմոնի
 462. Շիրվան՝ որդի Սիմոնի*
 463. Ղազար (°)՝ որդի Սիմոնի*
 464. Վաթան՝ որդի Գրիգորի
 465. Հովհաննես՝ որդի Վարդանի*
 466. Գրիգոր՝ որդի Վաթանի
 467. Ոսկան՝ որդի Թևանի
 468. Բուզղա (°)՝ որդի Թևանի
 469. Աբգար՝ որդի Թևանի
 470. Իսրայել՝ որդի Զաքարեի
 471. Ալեքսան՝ որդի Զաքարեի
 472. Հովսեփ (°)՝ որդի Թևոսի
 473. Մարտիրոս՝ որդի Արսլանի
 474. Բաղրամ՝ որդի Կարապետի
 475. Հարություն՝ որդի Հովհաննեսի*
 476. Բաղսա՝ որդի Գրիգորի
 477. Աղաջան՝ որդի Բաղսայի
 478. Սարգիս՝ որդի Վարդանի
 479. Ա(յ)վազ՝ որդի Սարգսի
 480. Ալեքսան՝ որդի Սարգսի*
 481. Մազրոս (°)՝ որդի Գրիգորի
 482. Գալուստ՝ որդի Գրիգորի*
 483. Վարդևան՝ որդի Նավասարդի
 484. Նազար՝ որդի Սիմոնի
 485. Պողոս՝ որդի Խաչումի
 486. Ղևոնդ՝ որդի Դավթի*
 487. Սահակ՝ որդի Նանումի
 488. Մկրտում՝ որդի Նանումի
 489. Թևոս՝ որդի Նանումի
 490. Սիփան՝ որդի Փիլիպոսի
 491. Հովհաննես՝ որդի Մելիքսեթի
 492. Արում՝ որդի Թովմասի
 493. Բուզղա(°)՝ որդի Արտեմի
 494. Դավիթ՝ որդի Մովսեսի
 495. Մկրտում՝ որդի Մովսեսի
 496. Ասամ(°)՝ որդի Փիրունի
 497. Իսրայել՝ որդի Սահակի
 498. Գալուստ՝ որդի Աղաջանի
 499. Ներսես՝ որդի Սարուխանի
 500. Սահակ՝ որդի Սարուխանի*
 501. Մնացական՝ որդի Յազուբի
 502. Պետրոս՝ որդի Միրզայի
 503. Պապ՝ որդի Գրիգորի
 504. Հովհաննես՝ որդի Գրիգորի
 505. Ոսկան՝ որդի Մարկոսի
 506. Մարկոս՝ որդի Ոսկանի
 507. Մաթոս՝ որդի Նավասարդի
 508. Հարություն՝ որդի Մկրտչի
 509. Հովհաննես՝ որդի Մկրտչի
 510. Հովհաննես՝ որդի Խաչատուրի
 511. Խաչում՝ որդի Հովհաննեսի*
 512. Քոչար՝ որդի Հովհաննեսի
 513. Իսրայել՝ որդի
 514. Աղաբեկ՝ որդի Փանոսի
 515. Աստվածատուր՝ որդի Սարգսի
 516. Կարապետ՝ որդի Խաչիկի

Այգիներ, հողատարածք և շրաղացներ:

1. 1 այգի, որը գտնվում է Սարգսի որդի՝ Մկրտչի տրամադրության տակ:

2. 1 այգի, որը գտնվում է Ալեքսանի որդի՝ Ոսկանի տրամադրության տակ:

3. 1 այգի, որը գտնվում է Կարապետի որդի՝ Դեսիմի (Շ) տրամադրության տակ:

4. 1 այգի, որը գտնվում է Սևանի որդի՝ Կարապետի տրամադրության տակ:

5. 1 այգի, որը գտնվում է Առաքելի որդի՝ Գրիգորի տրամադրության տակ:

6. 1 այգի, որը գտնվում է Թորոսի որդի՝ Դիլանի տրամադրության տակ:

7. 1 այգի, որը գտնվում է Խաչատուրի որդի՝ Ավետիսի տրամադրության տակ:

8. 1 այգի, որը գտնվում է Ա(յ)վազի որդի՝ Հովհաննեսի տրամադրության տակ:

9. 1 այգի, որը գտնվում է Խաչումի որդի՝ Ատիկի տրամադրության տակ:

10. 2 այգի, որոնք գտնվում են Խաչումի որդի՝ Սահակի տրամադրության տակ:

11. 1 այգի, որը գտնվում է Սարգսի որդի՝ Հարությունի տրամադրության տակ:

12. 1 այգի, որը գտնվում է Կարապետի որդի՝ Սիմոնի տրամադրության տակ:

13. 1 այգի, որը գտնվում է Դանիելի որդի՝ Սահակի տրամադրության տակ:

14. 1 այգի, որը գտնվում է Ղազարի (Շ) որդի՝ Դիլանի տրամադրության տակ:

15. 1 այգի, որը գտնվում է Թորոսի որդի՝ Մկրտիչ քահանայի տրամադրության տակ:

16. 1 այգի, որը գտնվում է Սարգսի որդի՝ Գալուստի տրամադրության տակ:

17. 1 այգի, որը գտնվում է Հովսեփի (Շ) որդի՝ Խաչիկի տրամադրության տակ:

18. 1 այգի, որը գտնվում է Աբրահամի որդի՝ Քոչարի տրամադրության տակ:

19. 1 այգի, որը գտնվում է Նավասարդի որդի՝ Սարգիս քահանայի տրամադրության տակ:

20. 1 այգի, որը գտնվում է Նանամի որդի՝ Բուդաղի տրամադրության տակ:

21. 1 այգի, որը գտնվում է Ղուկասի որդի՝ Սիմոնի տրամադրության տակ:

22. 1 այգի, որը գտնվում է Հարությունի որդի՝ Աղաբաբի տրամադրության տակ:

23. 1 այգի, որը գտնվում է Մուրադի որդի՝ Գրիգորի տրամադրության տակ:

24. 1 այգի, որը գտնվում է Մկրտչի որդի՝ Ամիրխանի տրամադրության տակ:

25. 1 այգի, որը գտնվում է Խաչատուրի որդի՝ Միրզայի տրամադրության տակ:

26. 1 այգի, որը գտնվում է Մահակի որդի՝ Մնացականի տրամադրության տակ:
27. 1 այգի, որը գտնվում է Մասրաֆի որդի՝ Փիլիպոս քահանայի տրամադրության տակ:
28. 1 այգի, որը գտնվում է Յաղուբի որդի՝ Սարգսի տրամադրության տակ:
29. 1 այգի, որը գտնվում է Մացակի (Շ) որդի՝ Գավթի տրամադրության տակ:
30. 1 այգի, որը գտնվում է Գալուստի որդի՝ Գրիգորի տրամադրության տակ:
31. 1 այգի, որը գտնվում է Կարապետի որդի՝ Ալիխանի տրամադրության տակ:
32. 1 այգի, որը գտնվում է Անտոնի որդի՝ Նահապետի տրամադրության տակ:
33. 1 այգի, որը գտնվում է Ուլուխանի որդի՝ Ղասեմի տրամադրության տակ:
34. 1 այգի, որը գտնվում է Մարտիրոսի որդի՝ Աղաբաբի տրամադրության տակ:
35. 1 այգի, որը գտնվում է Խաչատուրի որդի՝ Պետրոսի տրամադրության տակ:
36. 1 այգի, որը գտնվում է Փիլիպոսի որդի՝ Սողոմոնի տրամադրության տակ:
37. 1 այգի, որը գտնվում է Ներսեսի որդի՝ Իսրայելի տրամադրության տակ:
38. 1 այգի, որը գտնվում է Հակոբի որդի՝ Կարապետի տրամադրության տակ:
39. 1 այգի, որը գտնվում է Պետրոսի որդի՝ Ուլուբեկի տրամադրության տակ:
40. 1 այգի, որը գտնվում է Կարապետի որդի՝ Գրիգորի տրամադրության տակ:
41. 1 այգի, որը գտնվում է Մնացականի որդի՝ Հալիբեկի տրամադրության տակ:
42. 1 այգի, որը գտնվում է Մինասի որդի՝ Աղամալի տրամադրության տակ:
43. 1 այգի, որը գտնվում է Մնացականի որդի՝ Արտաշեսի տրամադրության տակ:
44. 1 այգի, որը գտնվում է Սիփանի որդի՝ Առաքելի տրամադրության տակ:
45. 1 այգի, որը գտնվում է Զաքարեի որդի՝ Մկրտումի տրամադրության տակ:
46. 1 այգի, որը գտնվում է Առաքելի որդի՝ Աղամի տրամադրության տակ:
47. 1 այգի, որը գտնվում է Վարդանի որդի՝ Դոլումի տրամադրության տակ:
48. 1 այգի, որը գտնվում է Վարդևանի որդի՝ Գալուստի տրամադրության տակ:
49. 1 այգի, որը գտնվում է Մասրաֆի որդի՝ Մարկոսի տրամադրության տակ:
50. 1 այգի, որը գտնվում է Փիլիպոսի որդի՝ Պետրոսի տրամադրության տակ:

51. 1 այգի, որը գտնվում է Ուլուբեկի որդի՝ Հովհաննեսի տրամադրության տակ:
52. 1 այգի, որը գտնվում է Գալուստի որդի՝ Ադամի տրամադրության տակ:
53. 1 այգի, որը գտնվում է Միրզայի որդի՝ Աբրահամի տրամադրության տակ:
54. 1 այգի, որը գտնվում է Միրզայի որդի՝ Կարապետի տրամադրության տակ:
55. 1 այգի, որը գտնվում է Հարությունի որդի՝ Պողոսի տրամադրության տակ:
56. 1 այգի, որը գտնվում է Մովսեսի որդի՝ Խաչումի տրամադրության տակ:
57. 1 այգի, որը գտնվում է Անանիայի որդի՝ Սաֆարի տրամադրության տակ:
58. 1 այգի, որը գտնվում է Աղաջանի որդի՝ Ղուկասի տրամադրության տակ:
59. 1 այգի, որը գտնվում է Հովհաննեսի որդի՝ Նահապետի տրամադրության տակ:
60. 1 այգի, որը գտնվում է Ավետի որդի՝ Մկրտումի տրամադրության տակ:
61. 1 այգի, որը գտնվում է Վարդանի որդի՝ Հակոբի տրամադրության տակ:
62. 1 այգի, որը գտնվում է Փանոսի որդի՝ Մնացականի տրամադրության տակ:
63. 1 այգի, որը գտնվում է Առաքել որդի՝ Մնացականի տրամադրության տակ:
64. 1 այգի, որը գտնվում է Ավետիսի որդի՝ Բուղդայի (°) տրամադրության տակ:
65. 1 այգի, որը գտնվում է Սարգսի որդի՝ Գևորգի տրամադրության տակ:
66. 1 այգի, որը գտնվում է Մելիքսեթի որդի՝ Մասրաֆի տրամադրության տակ:
67. 1 այգի, որը գտնվում է Պետրոսի որդի՝ Ավետիսի տրամադրության տակ:
68. 1 այգի, որը գտնվում է Ղազարի (°) որդի՝ Մկրտչի տրամադրության տակ:
69. 1 այգի, որը գտնվում է որդի՝ Ահարոնի տրամադրության տակ:
70. 1 այգի, որը գտնվում է Գրիգորի որդի՝ Վաթանի տրամադրության տակ:
71. 1 այգի, որը գտնվում է Թևանի որդի՝ Ոսկանի տրամադրության տակ:
72. 1 այգի, որը գտնվում է Վարդևանի որդի՝ Սարգսի տրամադրության տակ:
73. 1 այգի, որը գտնվում է Նավասարդի որդի՝ Վարդևանի տրամադրության տակ:
74. 1 այգի, որը գտնվում է Խաչումի որդի՝ Պողոսի տրամադրության տակ:
75. 1 այգի, որը գտնվում է Թորգիկի որդի՝ Միրզասեմի տրամադրության տակ, Ալահաջի գյուղից:

76. 1 այգի, որը գտնվում է Մեղքումի որդի՝ Ալեքսանի տրամադրության տակ:

77. 1 այգի, որը գտնվում է Փիլիպոսի որդի՝ Մկրտչի տրամադրության տակ:

78. 1 այգի, որը գտնվում է Հովհաննես քահանայի որդի՝ Հակոբի տրամադրության տակ:

79. 1 այգի, որը գտնվում է Թողիքի որդի՝ Գալուստի տրամադրության տակ:

80. 1 այգի, որը գտնվում է Թողիքի որդի՝ Գրիգորի տրամադրության տակ:

81. 1 վարելահող, որը գտնվում է Մեղքումի որդի՝ Ալեքսանի տրամադրության տակ:

82. 2 ջրաղաց, որոնք գտնվում են Մեղքումի որդի՝ Ալեքսանի տրամադրության տակ:

83. 1 ջրաղաց, որը գտնվում է Նավասարդի որդի՝ Սարգսի տրամադրության տակ:

84. 1 ջրաղաց, որը գտնվում է Թորոսի որդի՝ Բարսեղի տրամադրության տակ:

85. 1 ջրաղաց, որը գտնվում է Խաչատուրի որդի՝ Պետրոսի տրամադրության տակ:

86. 1 ջրաղաց, որը գտնվում է Փիլիպոսի որդի՝ Սողոմոնի տրամադրության տակ:

87. 1 ջրաղաց, որը գտնվում է Մնացականի որդի՝ Հալիբեկի տրամադրության տակ:

88. 1 ջրաղաց, որը գտնվում է Միրզախանի որդի Կարապետի տրամադրության տակ:

89. 1 ջրաղաց, որը գտնվում է Մարգարեի որդի՝ Միրաբի տրամադրության տակ:

90. 1 ջրաղաց, որը գտնվում է Թորոսի որդի՝ Ավագի տրամադրության տակ:

91. 1 ջրաղաց, որը գտնվում է Գյուլնազարի որդի՝ Ջհանի տրամադրության տակ:

Վերոհիշյալ գյուղի էջմիածնի վանքը, որը հայտնի է Ուչքիլիսա անունով:

էջմիածնի վանքին պատկանող 1 քարավանատուն, որը գտնվում է հիշյալ գյուղի Աստվածատուրի տրամադրության տակ:

էջմիածնի վանքին պատկանող այգի, որը գտնվում է հիշյալ գյուղի Աստվածատուրի տրամադրության տակ:

էջմիածնի վանքին պատկանող 3 վարելահող, որոնք գտնվում են հիշյալ գյուղի Աստվածատուրի տրամադրության տակ:

էջմիածնի վանքին պատկանող 1 դինգ, որը գտնվում է հիշյալ գյուղի Աստվածատուրի տրամադրության տակ:

էջմիածնի վանքին պատկանող ջրաղաց, որը գտնվում է հիշյալ գյուղի Աստվածատուրի տրամադրության տակ:

էջմիածնի վանքին պատկանող վարելահող, որը գտնվում է հիշյալ գյուղի Աստվածատուրի տրամադրության տակ:

Էջմիածնի վանքին պատկանող ձիթհան, որը գտնվում է հիշյալ գյուղի Աստվածատուրի տրամադրության տակ:

Հասույթ՝

Իսփենջ - 390 տնից, գինը՝ 9900

126 ամուրի, գինը՝ 3150

6 այրի, գինը՝ 36

Ռասմ-ի դյոնում՝ 1200

Յորեն - 2000 քիլե²⁷, գինը՝ 60000

Գարի - 1800 քիլե, գինը՝ 36000

Կորեկ՝ 200 քիլե, գինը՝ 4000

Ոսպ՝ 100 քիլե, գինը՝ 6000

Սիսեո՝ 59 քիլե, գինը՝ 6540

Բանջարանոցների տասանորդ՝ 1000

Այգիների տասանորդ՝ 10000

Մրգի տասանորդ՝ 500

Ոչխարների (սովորութային) հարկ՝ 3000

Անասունների հարկ՝ 300

Հիշյալ գյուղի 2 գործող ներկատները՝ 2400

Գյուղի բնակիչների տրամադրության տակ գտվող 11 գործող ջրաղաց՝ 660

Էջմիածնի վանքի 2 ձիթհանը

Էջմիածնի վանքի ջրաղացը

Էջմիածնի վանքի 1 դինգը

Առվույտի տասանորդը՝ 120

Խոտի գինը՝ 174

Կույս աղջիկների և այրիների հարսնության հարկը՝ 90

Հողի թափուի հարկը՝ 100

Չարչիների տուրքը՝ 20

Աչքալուսանքի տոնը՝ 211

Հանցանքի և ոճիրի, բաղհավայի²⁸ աղաթի, ընդհանուրի և խասսի բեյթ-
ուլ մալի, բացակայող և կորած ապրանքների, դաշտապահության, փախած
ծառանների և աղախիների գնի, անասունների՝ ձիու և կովի, ծխի, բաղնիքի (°)
և այլնի համար՝ 12321, ընդհանուր՝ 211322²⁹:

²⁷ Ընդդեմի (ցորեն, գարի և այլն) չափման միավոր, որը տարբեր է եղել ըստ ժամանակաշրջանի:

²⁸ Զրի, առանց դրամի:

²⁹ Տե՛ս նաև Հ. Փափազյան, «Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները», էջ 441:

Վերոհիշյալ գյուղում, էջմիածնի վանքի տրամադրության տակ, որը հայտնի է Ուչքիլիսե անվամբ, 2 գութան է գտնվում իր գույգ [եզերով]: Հիշյալ գյուղի տարածքում վանքերին հարկատու սահմանները և մի մասը, որը բնակչության կողմում է [ձեռքում է], 1500 սոմար ցորեն կազմող արտերը մշակվում են: Կինեղով վակֆային հողեր՝ արտերից և այգիներից տասանորդն ու ռասմն ամբողջությամբ բնամթերքի տեսքով վերոհիշյալ Ուչքիլիսե, հարակից գտնվող Օշական և Մաստարա գյուղերից պետք է [գանձվի]: Այն բանից հետո, երբ հիշյալ վանքին հարկատու բնակիչները ստացված հացահատիկից շարիաթական տասանորդներն ու անուղղակի հարկերը պետությանը տրամադրեն, Ուչքիլիսե և Օշական գյուղերի բնակիչները պետք է հոժարությանբ եկեղեցուն վճարեն բնամթերքի 1/10-ը, իսկ Մաստարա գյուղի բնակիչները՝ 2/10-ը: Հիշյալ եկեղեցուն պատկանող թվով չորս վանքերում նմանապես, վակֆային սեփականության իրավունքով, երկրագործական հողերից և ամբողջ հասույթից պետք է վճարվի վանքերում գտնվող հոգևորականներին: Սեփականության իրավունքով եկեղեցուն է պատկանում 500 զլուխ անասուն: Վերոնշյալ գրանցված բնակիչների շրջանում, գործելու հնարավորություն ունեցողներից զատ, աշխատունակ հոգևորականները ազատվում են ջիզյե, իսփենջ և այլ պահանջվելիք հարկերից: 1/10-ի չափով հարկեր պետք է գանձվեն 2 ձիթհանից, 2 դինգ ջրաղացից և սեփական այգիներից: Բացի այդ, իրավունք է տրվում այն գույքի նկատմամբ, որը [դատարկ է մնացել] անժառանգության հետևանքով:

[Եկեղեցին] պետք է վճարի Երևանի հաղթական կառավարիչներին տարեկան 350 դուրուշ և դրանից բացի՝ 1 ակչե ցորեն, այս անգամ Երևանի բերդը գրաված հաղթական զինվորներին, որոնք իրենց ծառայությունն են իրականացնում ամենայն անձնուրացությամբ և պարկեշտությամբ: Հակառակ շարիաթական օրենքներին չգործելու, ինչպես նաև Երևանի խաներին տարեկան 350 դուրուշի չափով վճարման և տրված արտոնություններին հետևելու համար Երևանի քաղաքի կողմից ներկայացված խնդրագիրը Կայսերական դիվանի կողմից լիազորված բաշդեֆթերդարին՝ Իբրահիմ փաշային (թող որ նրա փառքը հարատև լինի) ծանուցվեց, և արտոնությունները նոր մատչանում արձանագրվեցին:

Արքայական նոր ընդարձակ դավթարի պատճենն այս է, որ հիշվեց: Գրվեց հազար հարյուր քառասուն – 1140 թվականի շեվվալ ամսվա սկզբներին (1728 թ. մայիսի 11-20-րդ օրերը):

Handwritten Armenian text on a page, likely a tax record. The text is organized into several columns, with entries written in a cursive script. The page contains approximately 15 columns of text, with some entries appearing to be grouped or numbered. The handwriting is dense and characteristic of 18th-century Armenian manuscripts.

Handwritten Armenian text on a page, likely a tax record. The text is organized into several columns, with entries written in a cursive script. The page contains approximately 15 columns of text, with some entries appearing to be grouped or numbered. The handwriting is dense and characteristic of 18th-century Armenian manuscripts.

Handwritten musical score on a single page. The notation is written in a cursive style on a single staff with a treble clef and a key signature of one sharp (F#). The score consists of several lines of music, with some measures containing complex rhythmic patterns. The page is numbered 190 and signed 'Գ. Միրզաբեկյան'.

Handwritten musical score on a single page. The notation is written in a cursive style on a single staff with a treble clef and a key signature of one sharp (F#). The score consists of several lines of music, with some measures containing complex rhythmic patterns. The page is numbered 190 and signed 'Գ. Միրզաբեկյան'.

политики османских властей по отношению к Св. Престолу, который, по всей вероятности стал взимать налоги только с трех сел – Вагаршапат, Ошакан, Мастара.

Османский текст и армянский перевод реестра 1728 г. может способствовать более широкому исследованию социально-экономической истории Восточной Армении.

GEORGI MIRZABEKYAN
VAGHARSHAPAT'S OTTOMAN TAX REGISTER OF 1728

Keywords: Eastern Armenia, Divan of the Catholicosate, tax register, folder, taxes, mahal, guruş, akçe.

Four tax registers from the village of Vagharshapat are kept in the “Divan” of the Armenian Catholicosate (Department For Preservation and Research of Archival Documents, Matenadaran). Two of the tax registers (from 1725 and 1728) describe the general census of the village’s population. Unlike the tax register of 1725, the village was not divided into 4 quarters in 1728. The document from Vagharshapat contains a list of 516 Armenian taxpayers. There is also a list of people who owned mills, gardens, land (the amount of possessions is not always indicated in numbers). The local residents paid more taxes to the Ottoman government in 1728 than in 1725. In addition to other privileges, the Ottoman government renewed its policy towards the Holy See, which most likely began to collect taxes only from 3 villages: Vagharshapat, Oshakan and Mastara.

The Ottoman text and the Armenian translation of the 1728 tax register may serve as a basis for more comprehensive research on the socio-economic history of Eastern Armenia.

ՎԵՆԵՐԱ ՄԱԿԱՐՅԱՆ, ՄՈՎՍԵՍ ԽԵՉՈ

ՇԱՐԻԱ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԼԵՊԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (XVII-XIX դդ.)

(ըստ Մաշտոցյան Մատենադարանի արաբերեն վավերագրերի տվյալների)

Քանալի բռներ՝ իսլամական իրավունք, վավերագիր, ամուսնական պայմանագիր, դատարան, Հալեպ, Սիրիա, Օսմանյան կայսրություն, Հայկական միլլեթ, Շարիա, իսլամ, քրիստոնյաներ:

2015 թ. սեպտեմբերին Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժինը հարստացավ 13 նոր արաբատառ վավերագրերով, որոնցից 11-ը արաբերեն են, իսկ 2-ը՝ օսմաներեն (№ 5, 13)¹: Դրանք այժմ մաս են կազմում այդ արխիվի «XVII-XIX դդ. արաբերեն և օսմաներեն վավերագրերի անմշակ ֆոնդի»²: Նշված վավերագրերը XVII-XIX դարերի Հալեպի Շարիա դատարանների արձանագրություններն են (siğil)³ հալեպահայության վերաբերյալ: Դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել առհասարակ օսմանահայատակ քրիստոնյաների և մասնավորապես՝ տվյալ ժամանակաշրջանում հալեպահայ համայնքի կարգավիճակի, կրոնական խտրականությունների, ներհամայնքային կյանքի, միջհամայնքային հարաբերությունների, խնդիրների, դրանց լուծման ձևերի վերաբերյալ:

Մենք չգիտենք, թե երբ է ձևավորվել այդ գրանցամատյանները պահպանելու սովորությունը, սակայն կարծիք կա, որ այդ երևույթը բնորոշ էր իսլամական նախկին պետություններին ևս: Օրինակ, Ջոն Մանդավիլը նշում է. «Լուրջ հիմք ունենք ենթադրելու, որ գրավոր արձանագրությունների պահպանումը ստանդարտ իրավական ընթացակարգ էր յուրաքանչյուր իսլամական կառավարության դատարանների համար, որոնք ունեին որոշակի հաստատ-

¹ Օսմաներեն երկու վավերագրերը դուրս են սույն հոդվածի ուսումնասիրության շրջանակներից:

Նշված ֆոնդի վավերագրերը Մատենադարանին է նվիրաբերվել Միհրան Մինասյանը: ՄՄ արխիվային ֆոնդի Արաբատառ հավաքածուն այժմ ընդգրկում է 38 արաբերեն (արանց մեծ մասը պարսկերեն վավերագրերի արաբերեն թարգմանություն են), մոտ 350 օսմաներեն և 2000 պարսկերեն վավերագիր:

² Քանի որ տվյալ ֆոնդը դեռևս անմշակ է, հետևաբար նրա վավերագրերի համարները դեռևս պայմանական են և հետագայում կարող են փոփոխվել:

³ «Սիջիլ» տերմինը բառացիորեն նշանակում է մատյան, ցուցակ:

ված վարչական ձև կամ գուցե նաև մի քանիսի համար, որոնք չունեին»⁴: Իսկ ահա Ռ. էբիեդն ու Ջ. Յոնգը, հիմք ընդունելով պատմական տեղեկությունները՝ համոզված են, որ դատարանների արձանագրությունները կարևոր դեր էին խաղում իսլամական օրենքում դեռ շատ վաղ ժամանակներից, չնայած դրանք ընդհանուր առմամբ անտեսված էին Շարիայի օրինական տեսության մեջ⁵: Որպես փաստարկ նրանք ներկայացնում են իրենց ուսումնասիրած արձանագրություններից մեկը, որտեղ նշվում է, որ մի քաղի(դատավոր) ազատվել է պաշտոնից իր գրանցամատյանների մասին պատշաճ ձևով հոգ չտանելու պատճառով⁶:

Նախասումանյան շրջանում Շարիա դատարաններին համարժեք էին և տարածված մաշլիս ալ-հուքմ-ը (*mağlis al hukm*) և ավելի քիչ գործածական մաշլիս ալ-քադան (*mağlis al qadā'*)⁷: Իսկ ահա օսմանյան շրջանում շարիա դատարանները կոչվում էին մահքամա (*mahkama*):

Մինչև XIX դարը օսմանյան շարիա դատարաններում մեծամասնություն էին կազմում Հանաֆի քաղիները, որոնց մայրենի լեզուն թուրքերենն էր⁸: Արաբական երկրներում դատերը միջնորդավորվում էին մեկնաբան-թարգմանիչներով, որոնք թուրքերեն էին թարգմանում հայցերը և հակահայցերը, իսկ քաղիի հարցերը թարգմանում էին հայցորդի մայրենի լեզվով: Ջոն Մանդավիլը նշում է, որ Սիրիայում և Պաղեստինում հայտնաբերված սիջիլների մեծամասնությունն արաբերեն է: Բացառություն են կազմում դատարանի պաշտոնյաների, զինվորականների և ժառանգության գործերի որոշումները, ֆինանսական զեկույցներն ու փաստաթղթերը, որոնք բոլորը գրված են օսմաներեն⁹: Սակայն ըստ երևույթին այդ օրինաչափությունը միշտ չէ որ պահպանվել է, քանի որ սույն հոդվածի շրջանակներում ներկայացված Մատենադարանում պահվող Հալեպի Շարիա դատարանների արձանագիր վավերագրերի շարքում կան արաբերենով գրված և՛ ժառանգության վճիռ (№ 1) և՛ ֆինանսական

⁴ J. Mandaville, “The Ottoman court records of Syria and Jordan”, *Journal of the American Oriental Society* 86, 1966, 311-19, at 311.

⁵ R. Ebied, J. Young, *Some Arabic legal documents of the Ottoman period*, Leiden: E.J. Brill, 1976, p. 1.

⁶ Նույն տեղում:

⁷ W. Hallaq, “The qadl 's diwan (sigill) before the Ottomans”, *Bulletin of the School of Oriental and African Studies, Vol. 61, No. 3*, University of London, 1998 (pp. 415-436), p. 418.

⁸ D. Ze'evi, “The Use of Ottoman Sharī'a Court Records as a Source for Middle Eastern Social History. A Reappraisal,” *Islamic Law and Society*, Vol. 5, No. 1, 1998, Brill, pp. 35-56, at 51.

⁹ J. Mandaville, նշվ. աշխ. էջ 313:

հաշվետվություն (№ 3), ինչպես նաև՝ օսմաներենով գրված կենցաղային բնույթի արձանագիր վավերագիր (13), որոնք բոլորն էլ բնօրինակներ են¹⁰:

Քաղի կամ դատավոր դառնալու համար թեկնածուն անցնում էր ուսման երկարատև շրջան՝ նախ, ուսումնառություն մադրասայում, որից հետո դառնում էր սկսնակ (*mulazim*): Եվս 7 տարի՝ իրավագիտության ուսուցիչ դառնալու համար (*mudarris*): Շրջաններում դա ավարտվում էր տեղական մուֆթիի կամ շրջանային մուդարրիսի աստիճանով, սակայն մայրաքաղաքում նրանք իրավունք ունեին անցնելու մուդարրիսների ամբողջ տաս աստիճանները, վերջում լինելով Սուլեյմանիե մզկիթում, այնուհետև, ավարտելով և գիտական աստիճան ստանալով, հավակնելու պաշտոնի կայսրության դատական համակարգի բարձրագույն խմբերում¹¹: Այդ համակարգի ստորին խումբը ներառում էր Գալաթայի, Սկյուտարի, էյուպի, Երուսաղեմի, Զմյուռնիայի (Իզմիր), Ենիշեհիրի, Հալեպի և Սալոնիկի քաղիների գրասենյակները, որոնք սահմանվում էին հավաքականորեն որպես մուխրաջ դատավորներ (*mukhraj mullalari*)¹²: Երկրորդ խումբը ներկայացնում էին «չորսի դատավորներ»-ը (*ārba ‘a mullalari*) Ադրիանապոլսի (Էդիրնե), Բուրսայի, Կահիրեի և Գամասկոսի դատավորները: Հաջորդ խումբը կազմված էր Մեքքայի և Մադինայի դատավորներից (*haramaīn mullalari*), այնուհետև, ըստ դատական աստիճանակարգի, Ստամբուլի քաղին էր, ապա՝ Անատոլիայի քաղի-աւքերը, Ռումելիի (Բալկաններ) քաղի-աւքերը և վերջապես Շեյխ ուլ-Իսլամը՝ Ստամբուլի մեծ մուֆթին, Օսմանյան կայսրության ամբողջ ուլեմայի գլխավորը¹³:

Օսմանյան շրջանում կայսրության բոլոր մեծ և կարևորագույն քաղաքներն ունեցել են նույնիսկ մի քանի շարիա դատարաններ: Հալեպում գործել է 5 շարիա դատարան, որտեղ նստում էին քաղիի նշանակած նայիբները¹⁴:

¹⁰ Այս ֆոնդի բոլոր 12 վավերագրերն էլ բնօրինակներ են, բացառությամբ է կազմում միայն օսմաներեն N 5 վավերագիրը, որը նամակ-հաշվետվության օրինակ է:

¹¹ L. Herbert, Jr. Bodman, *Political Factions in Aleppo, 1760-1826*, The University of North California Press, 1963, 46-47.

¹² Mukhraj (արաբերեն «եթ») իսլամական կրոնավորների աստիճան: Օսմանյան վաղ շրջանում «մոլլա» եզրույթը երբեմն փոխարինում էր «ֆադի» տերմինին: Տե՛ս L. Herbert, Jr. Bodman, նշվ. աշխ., էջ 47:

¹³ Նույն տեղում: Տե՛ս նաև *The Cambridge History of Turkey*, Vol. 3, 1603- 1839, ed. by S. Faroqhi, Cambridge University Press, 2006, p. 216:

¹⁴ L. Herbert, Jr. Bodman, նշվ. աշխ., էջ 48, տե՛ս նաև՝ է. Սեմերեան, «Հայկական կեանքը արդի Հալեպի վաղ օսմանեան ժամանակաշրջանին, Ուսումնասիրական փորձ մը՝ հայ ընկերային կեանքի պատմութեան կառուցման համար՝ իսլամական աղբիւրներու օգտագործման առնչութեամբ», *Տաթև հայագիտական տարեգիրք*, ք.1, Հալեպ, 2008, էջ 258:

أ.وب. راسل، تاريخ حلب الطبيعي، ترجمة خالد الجبيلي، المجلد الأول، 1997، ص191.

Հալեպի քաղին, որը, ինչպես վերը նշվեց, մուխրաջ դասից էր, նշանակվում էր Շեյխ ուլ-խալամի կողմից ամեն տարի: Նրա աստիճանը հայտնի էր նաև որպես [400 արծաթի մոլլա]¹⁵:

Քաղին միևնույն վայրում միայն մեկ անգամ էր նշանակվում: Վալիի (*walī*) նման, նա իր պաշտոնին անցնում էր միայն Բարձր Դռանը սահմանված շափով գումար վճարելուց հետո¹⁶: Հասկանալի է, որ եթե Օսմանյան կայսրությունում պաշտոնները գնվում էին, հետևաբար ծառայություններն ավելի բարձր գին ունեին: Այս փոխհամաձայնության հիման վրա կաշառքը և անարդար հարկահավաքությունը ընդունելի էին կառավարության բոլոր բաժիններում, և առաջադրումները պայմանավորված էին դրանց շափին համապատասխան: Դրա վերաբերյալ անգամ թուրքական մի ասացվածք է շրջանառվել. «Երբ կաշառք ներս է մտնում դռնով, արդարությունը փախչում է պատուհանից»¹⁷:

Դատարանում կային որոշ թվով գրագիրներ (*kātib*), որոնք արձանագրում էին որոշումները և նոտարներ էին այն առումով, որ կազմում էին օրինական ակտեր, պայմանագրեր, նամակներ և այլն, որոնց համար վճարվում էին¹⁸:

Պետք է նշել նաև, որ ոչ մի դիմող կամ պատասխանող կողմ իրավապաշտպան չունեն. յուրաքանչյուր մասնակից ինքն էր իրեն պաշտպանում: Դիմող և պատասխանող կողմերն ունեին իրենց լիազորված անձիք՝ վեքիլներ (*wakīl*)՝ իրենց ազգի ներկայացուցիչներից, սակայն կային նաև դատարանի վկաներ՝ շահիդ, հոգն. շուհուդ (*Šuhūd*), որոնք իրենց աշխատանքն էին կատարում: Շահիդների մասնակցությունը ապահովում էր նաև դատի ընթացքում և վճիռների կայացման ժամանակ պարտադիր համարվող մուսուլմանների վկայությունը: Դատարանն ուներ նաև հարկահավաք (*subaşı*), ով դիմողներից գումար էր հավաքում¹⁹: Ինչ վերաբերում է վկաներին, ապա պետք է նշել, որ նրանք շատ կարևոր դեր էին կատարում դատավարության ընթացքում և վճիռների կայացման ժամանակ: Նրանց, ինչպես նաև թարգմանչի անունները պարտադիր նշվում էին արձանագրությունների վերջում:

Շարիա դատարանների վավերագիր արձանագրություններին անդրադառնալիս՝ հարց է առաջանում, թե ինչու՞ են քրիստոնյաները, այդ թվում նաև հայերը, դիմել Շարիա դատարաններ, այն դեպքում, երբ գործում էին Միլլեթ դատարաններ:

¹⁵ L. Herbert, Jr. Bodman, նշվ. աշխ., էջ 48:

¹⁶ أ. و. ب. رسائل، تاريخ حلب الطبيعي، ص 191.

¹⁷ S. Bey, *Turkey, and Armenia and How They Happened*, 1898, p. 134.

¹⁸ L. Herbert, Jr. Bodman, նշվ. աշխ., 49:

¹⁹ նույն տեղում:

Ինչպես գիտենք, օսմանյան տիրապետության շրջանում, սկսած 1461 թ. օսմանահպատակ ամբողջ հայությունը մտնում էր Հայկական միլլեթի կազմի մեջ՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքի գլխավորությամբ²⁰: Միլլեթի շրջանակներում գործում էին նաև միլլեթ դատարաններ, որոնք իրավասու էին լուծելու ներհամայնքային և քրիստոնյա այլ համայնքների միջև առաջացած գրեթե բոլոր հարցերը: Ճիշտ է, հիմնականում ընտանեկան հարաբերությունների պարզեցման համար ոչ մուսուլմաններն իրավունք ունեին կամավոր կերպով ընտրելու կամ իրենց սեփական կրոնական համայնքի կամ Շարիա դատարանը, որի դեպքում, մուսուլման դատավորի՝ քաղիի, վճիռները հիմնվում էին Իսլամական իրավունքի վրա: Որոշ դեպքերում էր միայն Շարիա դատարանի դիմելն անխուսափելի, օրինակ, եթե կողմերից մեկը մուսուլման էր, կամ ներգրավված էր քրեական գործում, կամ հայցը վերաբերում էր հասարակական կարգի խախտմանը: Նշենք նաև, որ դատարանները գենդերային հիմունքներով չէին գործում: Հարկ եղած դեպքում տղամարդ թե կին հավասարապես պարտավոր էին ներկայանալ դատարան: Եթե նրանք ի վիճակի չէին ներկայանալ, կարող էին իրենց փոխարեն ուղարկել որևէ մեկին²¹:

Որոշ գիտնականներ շրջանառում են այն կարծիքը, որ կայսրության տարբեր շրջաններում ոչ մուսուլմանների՝ Շարիա դատարաններ դիմելու երևույթը կապված էր տվյալ շրջանում իրենց կազմած թվից: Այնտեղ, որտեղ ոչ մուսուլմանները փոքր թիվ էին կազմում, ավելի շատ կարիք ունեին հովանավորություն ստանալու դատարաններից իրենց իրավունքները պաշտպանելու համար: Ռ. Ջեննինգը նշում է, որ Կեսարիայի մուսուլման և ոչ մուսուլման կանանց՝ Շարիա դատարաններում ներգրավվածությունը համապատասխանաբար 73% և 27% հարաբերակցությամբ էր²²: Իսկ ահա, 1582-88թթ. արձանագրությունների տվյալներով Անկարայի ոչ մուսուլման բնակչության միայն 9%, Ամասիայում 4% և Կարամանում 0% է դիմել Շարիա դատարան²³:

Կայսրության տարբեր քաղաքների Շարիա դատարանների վավերագրերն ուսումնասիրելիս, գիտնականները կազմել են ոչ մուսուլմանների՝ դատարան-

²⁰ Այս մասին մանրամասն տե՛ս՝ Վ. Մակարյան, «Հայկական միլլեթի կազմավորումը և Կ. Պոլսի հայոց պատրիարքների իրավասությունները», *էջմիածին*, Օգոստոս, 2016, էջ 111-132:

²¹ A. Sonbol, "Women in Shari'ah Courts: A Historical and Methodological Discussion", *Fordham International Law Journal*, Volume 27, Issue 1, 2003, p. 246. Այս մասին մանրամասն տե՛ս նաև՝ R. Jennings, "Women in Early 17th Century Ottoman Judicial Records: The Sharia Court of Anatolian Kayseri", *Journal of the Economic and Social History of the Orient*, Vol. 18, No. 1, Jan., 1975, Brill, pp. 53-114, at 61:

²² R. Jennings, նշվ. աշխ., էջ 59:

²³ P. Kayaalp, "The Use of Islamic Court Records in the Study of the Status of Women in Ottoman Society", *American International Journal of Contemporary Research*, Vol. 2 No. 1, January, 2012, p. 159.

ներ դիմելու հիմնական պատճառների վիճակագրությունը ևս: Օրինակ՝ Նաջուա ալ-Քաթանը, ուսումնասիրելով Դամասկոսի մահաբանների (օսմանյան շրջանի շարիա դատարանների) վավերագրերը, նշում է, որ Դամասկոսի զիմմիները (իսլամական պետության քրիստոնյա և հրեա հպատակները) գնում էին Շարիա դատարաններ՝ հիմնականում գրանցելու և նոտարով հաստատելու իրենց ֆինանսական գործարքները²⁴: Նշվում է նաև, որ ոչ մուսուլման դիմողները, դիմելով դատարան, ցուցաբերում էին իսլամական իրավական պրակտիկայի, տարածված իրավական նորմերի տպավորիչ գիտելիքներ:

Ռ. Օզգեմիրը, որն ուսումնասիրել է XVIII դարի վերջի Թոկատի սիջիլները, նկատում է, թե ինչպես Կոնիայում, ոչ մուսուլմաններն օգտագործում էին դատարանը պաշտոնապես իրենց ամուսնական պայմանագիրը կնքելու համար, չնայած այն բանին, որ դա հսկվում և չէր խրախուսվում նրանց կրոնական իշխանությունների՝ եպիսկոպոսի և րաբիի կողմից²⁵:

Թուրք պատմաբան Հ. Ինալչիքը գրում է, որ առհասարակ կայսրության արևելյան շրջաններում Շարիա դատարան ոչ մուսուլմանները դիմում էին հիմնականում մահաբանի գույքի բաժանման և ամուսնության հետ կապված վեճերի ժամանակ. փեսայի և հարսի մայրերը դիմում էին նշանագրության (*namzedlik*) հետ կապված նվերների կտորեղենը և ոսկեղենը հետ վերադարձնելու կամ նշանագրությունը չեղյալ հայտարարելու համար²⁶:

Ամբողջ կայսրության Շարիա դատարանների՝ ոչ մուսուլմաններին վերաբերող սիջիլների մեծ մասը կազմում են կանանց հայցերը՝ հիմնականում ամուսնուլթյունը կամ ամուսնալուծուլթյունը գրանցելու համար. նրանք ակնկա-

²⁴ N. Al-Qattan, “Dhimmi in the Muslim Court: Legal Autonomy and Religious Discrimination”, *International Journal of Middle East Studies*, Vol. 31, No. 3, Aug., 1999, pp. 429-444, at 433: «Զիմմի» դատարանների ուսումնասիրությունը երևան հանեց 1775-ից 1860թթ. վերաբերող հարյուր սիջիլ, որոնցում Դամասկոսի քրիստոնյա և հրեա համայնքների անդամներ դիմել էին իրենց հայցերով մանկամա: Դրանք ի հայտ են գալիս որպես դիմողներ, վկաներ, խնամակալներ, գործակալներ, գնորդներ, վաճառականներ և հարևաններ: Եվ դա բացառիկ չէր Դամասկոսի համար, քանի որ այդ երկույթը բնորոշ էր օսմանյան բոլոր հաղափներին, տե՛ս նույն տեղում, էջ 429:

²⁵ R. Özdemir, “Tokat’ta Ailenin Sosyo-Ekonomik Yapısı (1771-1810)”, B211, C. LIV (1990): 993-1052, at 1016.

²⁶ H. Inalcik, D. Quataert, *An Economic and Social History of the Ottoman Empire, 1300-1600*, vol. 1, Cambridge University Press, 1994, p. 602: Վաղ XVII դարի դատական գրառումները վկայում են նաև, որ փեսան կարող էր վերադարձնել նշանի նվերները այն դեպքում, երբ նշանագրությունը վերջ է դրվում հարսի նախաձեռնությամբ: Իսկ ըստ XVIII դարակեսի փաստաթղթերի՝ հիմնականում նշանագրության չեղարկումից հետո հարսը և նրա ընտանիքը պարտավոր չէին վերադարձնել նվերները: Եվ եթե անգամ փեսան պահանջում էր, դատարանը դա թողնում էր հարսի հայեցողությանը: Այս մասին առավել մանրամասն տե՛ս L. Elbirlilik, *Negotiating Matrimony: Marriage, Divorce, and Property Allocation Practices in Istanbul, 1755-1840*. Doctoral dissertation, Harvard University, 2013, p. 45-47:

լում էին իսլամական օրենքով սահմանված ֆինանսական փոխհատուցում ամուսնալուծությունից կամ ամուսնու մահից հետո²⁷: Թուրք պատմաբան Ա. Քարատաշը, ուսումնասիրելով Բուրսայի Շարիա դատարաններում պահվող հայերին վերաբերող արձանագրությունները, որպես հայերի՝ ամուսնուծությունները Շարիա դատարաններում գրանցման պատճառ նշում է Շարիա դատարանին վճարվող համեմատաբար ցածր հարկը՝ ի տարբերություն հայկական եկեղեցիներում ամուսնուծության գրանցման համար սահմանված հարկաշափի²⁸: Ընդ որում, կային ամուսնալուծության տարբեր տեսակներ, որոնք նախատեսում էին կնոջը հասանելիք ապրուստադրամ (ալիմենտ) տարբեր չափեր²⁹: Իսկ դրանք կատարելու համար դատարանին պետք է վճարվեր օրենքով սահմանված հստակ գումարի չափ, օրինակ՝ եթե ոչ մուսուլման կինը որոշել էր ամուսնալուծվել, քանի որ նա ատում է իր ամուսնուն, նա միայն պետք է հարկահավաքին վճարեր 5 ղուրուշ՝ հրաժարում ստանալու համար³⁰:

Ա. Սալգամը, որն ուսումնասիրել է XIX դարի Տրապիզոնի «ոչ պաշտոնական» ամուսնուծությունները, մասնավորապես 1830 և 1844 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, եկել է այն եզրահանգման, որ սուլթան Մահ-

²⁷ R. Gradeva, “Orthodox Christians in the Kadi Courts: The Practice of Sofia Sheriat Court, Seventeenth Century”, *ILS 4, no. 1, 1997, 55-56, L. K. Elbirlik*, նշվ. աշխ., էջ 42, N. Al-Qattan, նշվ. աշխ., էջ 433:

²⁸ Տե՛ս՝ A. Karataş, “Fethinden XIX Yüzyılın Sonlarına Kadar Bursa’da Ermeniler”, *T. C. Uludağ Üniversitesi İlahiyat Fakültesi Dergisi Cilt: 14, Sayı: 2, 2005, s. 81-106, s. 87.*

²⁹ Այս մասին Կեսարիայի օրինակով, տե՛ս նաև R. Jennings, նշվ. աշխ., էջ 82-97: Ամուսնալուծության (արաբերեն՝ ʿalāq) առաջին ձևը, զուտ բանավոր գործողություն է, երբ “doş ol” (հրաժարվում եմ) բառերն արտասանելով՝ հայտնում եմ ամուսնալուծության մասին: Այն պաշտոնականություն և վկաների ներկայություն չի պահանջում: Այս դեպքում ամուսինը պարտավոր էր վհարել կնոջը օժիտի մնացած մասը (mahir mü’āğal) և պիմենտ (nafaga), ինչպես նաև ապրուստ՝ կնոջ երեք ամսվա սպասման շրջանում (‘idda), օրենքն արգելում էր կնոջ ամուսնությունը մինչև երեք դաշտանային շրջանի անցում, որպեսզի կանխի հավանական հղիությունը և երեխայի ծագման վերաբերյալ շփոթությունը: Երկրորդ ձևը (muḥāla‘ā կամ huḥ)՝ պաշտոնական ամուսնալուծման կնոջ պահանջն է: Իրավական տեղիանալով հսկվում էր նշանակում է՝ ամուսնական պայմանագրով, ամուսնու համաձայնությամբ կնոջը՝ ամուսնալուծություն նախաձեռնելու տրված իրավունք, ինչի փոխարեն կինը պարտավոր էր հրաժարվել իր օժիտից և տրամադրվող ապրուստից: Դիմումը հաճախ լուծվում է առանց դատավորի ներգրավման՝ պայմանով, որ կինը նախապես ձեռք բերի ամուսնու համաձայնությունը: Ամուսնալուծության վերջին ձևը (tafiq) պահանջում էր իրավական միջամտություն, և այս դեպքում ամուսնու համաձայնությունն ամենևին էլ պարտադիր չէր: Կինն ամուսնալուծվում էր հետևյալ պատճառների համար՝ կրոնափոխություն, ակոհոլի շարաշահում, վատ կամ դաժան վերաբերմունք, լիում, ինպոտենցիա և սեռական ցանկության բացակայություն: Ահա այս դեպքերում կինն իրավունք ուներ թեֆրիկ խնդրելու, և բավարար ապացույցների դեպքում տղամարդը պարտավոր էր ամուսնալուծվել: Ավելի մանրամասն տե՛ս L. K. Elbirlik, նշվ. աշխ., էջ 129-130, 160, 173:

³⁰ L. K. Elbirlik, նշվ. աշխ., էջ 98:

մուդ 2-րդի օրոք (1808-1839թթ.) Շարիա դատարաններում ամուսնական պայմանագրերի գրանցումը պարտադրվել է պետության կողմից³¹:

Մատենադարանում պահվող Հալեպի Շարիա դատարանների վավերագրերից (ամուսնության № 6, ժառանգության № 1, տան հետ կապված հարևանների վեճեր՝ № 2, 8, 11, 12, տան առք ու վաճառք՝ № 9, 10, ազգականների միջև ծագած վեճ № 7, հայ համայնքին վերաբերող արձանագրություններ՝ № 3, 4) միայն մեկն է ամուսնական պայմանագիր՝ № 6-ը: Այն հայի և ասորու միջև ամուսնության արձանագրություն է, Հիջրայի 1168 (1754 թ.): Աջամջան բինթ Սիմոնը ասորի (*sirīānī*) համայնքից (*ṭā'ifa*) ամուսնանում է ազգությամբ հայ Ստեփան ուլադ Նիկողոսի հետ: Ըստ իսլամական ընդունված օրենքի՝ տղան տալիս է 10 ղուրուշ դրամ օժիտ (*mahr*)³²: Որպես կանխավճար (*muqaddam*) աղջիկն առձեռն ստացել էր 5 ղուրուշ, բաժանվելուց հետո, որպես ավարտ (*mu'ahhar*), ստանալու էր ևս 5 ղուրուշ: Այդ ամենը տեղի է ունենում երկու կողմերի ամուսնական վեքիլների ներկայությամբ: Վավերագրի վերջում նշված են նաև դատարանի երեք վկաների անունները³³:

Հարկ է նշել, որ, ըստ Շարիայի, եթե ամուսնացող կողմերը չեն ներկայացել կամ ամուսնանալու համար իրավական տարիքից փոքր են, ամուսնական պայմանագիրը կարող էր կնքվել օրինական խնամակալների (*wālī*) կամ վստահված անձանց (*wakīl*) ներկայությամբ³⁴: Շարիայի համաձայն՝ աղջիկը համարվում է ամուսնության ենթակա (*bālīga*) 9 տարեկանից, իսկ տղամարդը (*bālīg*)՝ 12 տարեկանից³⁵:

Ինչ վերաբերում է օժիտին, ապա նշենք, որ այն, ըստ հանաֆիական ավանդույթի՝ ամուսնական պայմանագրի հիմքն է համարվում: Որպեսզի ամուսնությունը համարվի վավերական և պարտադիր, ապագա ամուսինն ու կինը պետք է համաձայնության գային օժիտի գումարի շուրջ, որը տրվում էր անմիջապես հարսին կամ, եթե անչափահաս էր՝ նրա հորը: Սակայն դա պետք չէ շփոթել հարսանեկան գումարի (*başlık*) կամ փեսայի տանը հարսին տրվող

³¹ Նույն տեղում, էջ 43: **A. Saydam**, “Trabzon’da ‘Gayri Resmi Nikah’ın Doğurduğu Problemler ve Boşanma Davaları (1830-44)”, *OAXX*, 2000 ss. 329-353, s. 331.

³² Հենց սկզբից ամուսնությունը դիտվում է որպես պայմանագրային գործողություն, որը տեղի է ունենում փեսայի տանը, երբ հարսի ընտանիքի հետ համաձայնության էին գալիս օժիտի (*mahr*) դրամական չափի վերաբերյալ: Այն տրվում էր անմիջապես հարսին կամ, եթե հարսն անչափահաս էր՝ նրա հորը: Տե՛ս **L. K. Elbirlık**, նշվ. աշխ., էջ 37:

³³ Օսմանյան Հանաֆի պրակտիկայում ամուսնությունը (*akd-i nikāh*) պահանջում էր մուսուլման արական սեռի երկու վկաների ներկայություն, որոնք պետք է լինեին ազատ և մտավոր ունակ մեծահասակներ կամ երկու կին և մեկ տղամարդ վկաների ներկայություն: Տե՛ս **L. K. Elbirlık**, նշվ. աշխ., էջ 48:

³⁴ **A. Sonbol**, նշվ. աշխ., էջ 246:

³⁵ **L. K. Elbirlık**, նշվ. աշխ., էջ 49:

նվերների հետ (*kalin*)³⁶, որոնք տարածաշրջանի ժողովուրդների մոտ տարածված ավանդույթ են և ճանաչված կամ պարտադրված չեն Շարիայով³⁷: Ընդ որում, տարբեր ժամանակաշրջաններում գումարի չափը տատանվում էր և կախված էր փեսայի տնտեսական վիճակից և եկամուտներից³⁸:

Օսմանյան շրջանի Շարիա դատարանների արձանագրություններն ուսումնասիրող մասնագետները փաստում են, որ քրիստոնյա երկու տարբեր համայնքների միջև ամուսնության գրանցումը Շարիա դատարանում տարածված երևույթ էր: Շատ հազվադեպ, սակայն հանդիպում էին նաև հայերի միջև ամուսնության օրինակներ՝ արձանագրված Շարիա դատարաններում: Օրինակ՝ է. Սեմերձյանը, նշում է, որ Շարիա դատարանի՝ հայերի ամուսնության վերաբերյալ իր ուսումնասիրած 204 վավերագրերից (XVI-XVIII դդ.) երկու հայի միջև ամուսնության արձանագրության միայն 13 վավերագիր է հանդիպել, իսկ մնացածը հայի և քրիստոնյա այլ համայնքի ներկայացուցիչների միջև արձանագրված ամուսնության պայմանագրեր են³⁹:

Եթե ոչ մուսուլմանները դիմում էին Շարիա դատարաններ իրենց բողոքների համար արդար պատասխան ստանալու համար, ապա պետք է նշել, որ հենց այդ դատարանների արձանագրություններում համատարած տեսնում ենք ազգային և դավանական խտրականության երևույթներ ոչ մուսուլմանների անունների գրառման դեպքերում: Իսկ ազգային կամ համայնքային պատկանելության նշումը ինքնին խտրականության դրսևորում էր, քանի, որ ոչ մի մուսուլմանի դեպքում վերջինիս ազգային պատկանելությունը չէր նշվում⁴⁰:

Արձանագրությունների մեջ քրիստոնյաների ու հրեաների պատկանելությունն անմիջապես պարզ էր դառնում, և դա ամենևին էլ նրանց ազգին բնորոշ անուններից չէր: Ի տարբերություն մուսուլման հայցորդների՝ ոչ մուսուլմանների անունների վերջում պարտադիր ավելացվում է քրիստոնյա (*al-nasranī*) կամ հրեա (*al-yhūdī*) բառը, ապա ազգային պատկանելությունը (օրինակ՝ ասորի *al-sirīānī*, ինչպես տեսանք վերը նշված № 6 վավերագրում):

³⁶ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 194:

³⁷ Նույն տեղում, էջ 193-194:

³⁸ Մերիվեթերը նկատում է, որ XVIII դարի վերջին տասնամյակներում օժիտի հետաձգված մասի սահմանված անվանական արժեքը 150-500 դուրուշ էր, միջինը՝ 200 դուրուշ: Իսկ ահա XIX դարի 2-րդ և 3-րդ տասնամյակներում այդ չափը տարբեր էր՝ 25 դուրուշից մինչև 3,000 դուրուշ, միջինը 500 դուրուշ, ինչը նա կապում է այդ շրջանում գների ընդհանուր բարձացման հետ: Տե՛ս M. Meriwether, *The Kin Who Count: Family And Society in Ottoman Aleppo, 1770-1840*. Austin: University of Texas Press, 1999, p. 118.

³⁹ E. Semerdjian, "Armenian Women, Legal Bargaining, and Gendered Politics of Conversion in Seventeenth- and Eighteenth Century Aleppo", *Journal of Middle East Women's Studies*, March, 2016, pp. 2-30, at 20.

⁴⁰ B. Masters, *Christians and Jews in the Ottoman Arab World*, Cambridge University Press, 2001, pp. 32.

Սակայն մուսուլման – ոչ մուսուլման զանազանումն այսքանով չէր սահմանափակվում: Նույն վավերագրի (№ 6) օրինակով անդրադառնանք նաև ոչ մուսուլման տղամարդկանց անունների արձանագրությանը: Օրինակ՝ նույն Ստեփան ուալադ Նիկողոսի (Նիկողոսի տղա Ստեփան) անվան առիթով պետք է ուշադրություն դարձնել «ուալադ»՝ «տղա» բառին: Մուսուլմանների դեպքում տղամարդկանց անունները գրվում են հետևյալ ձևով՝ օրինակ՝ Մուսա իբն Իբրահիմ, այսինքն «ուալադ» բառի փոխարեն գրվում են «իբն», «բն», «բնու» բառերը, որոնք սակայն նույն իմաստն են արտահայտում⁴¹: Ռ. Ջեննինգսը, նշում է, որ այս երևույթը Շարիա դատարանի արձանագրություններում նկատվում է արդեն XVII դարասկզբից⁴²:

Արական սեռի այն անունների գրանցման դեպքում, որոնք կիրառելի էին և՛ մուսուլմանների և՛ ոչ մուսուլմանների կողմից, մուսուլման – ոչ մուսուլման տարբերությունը հստակեցնելու համար քաթիբները ոչ մուսուլմանների դեպքում դրանք գրում էին սխալ ուղղագրությամբ: Այդ երևույթը ստացել է «բնագրային խտրականություն» անվանումը: Օրինակ Մատենադարանի նշված հավաքածուի № 8 վավերագիրը (Հիշրայի 1129 թ. Ռաջաբ ամսի 23/1717թ. հուլիսի 3), որը Հալեպի ալ-Սալիբե⁴³ թաղամասում ապրող երկու քրիստոնյա հարևանների՝ Իլյաս ուալադ Քերաիլի (Գաբրիել) և Սաֆրիե բինթ Քարքուրի (Գրիգոր) տների միջև պատենշ բարձրացնելու վերաբերյալ հայց է: «Գաբրիել» անունն այստեղ գրված է սխալ ուղղագրությամբ՝ Քերաիլ, մինչդեռ մուսուլման անձի դեպքում (ներկայումս նաև ոչ մուսուլմանների դեպքում) այն գրվում է ճիշտ ուղղագրությամբ՝ Գ տառով Ջերաիլ:

Ինչպես որ մուսուլմանների դեպքում Գաբրիել անունը գրվում է ճիշտ ուղղագրությամբ, իսկ ոչ մուսուլմանների դեպքում՝ սխալ, այնպես էլ Ղուրանում հանդիպող մյուս անունները, որոնք կիրառելի են երեք (քրիստոնյա, մուսուլման, հրեա) կրոնները դավանող ազգերի համար, օրինակ՝ Մուսա (Մովսես), Իսա (Հիսուս), Յուսուֆ (Հովսեփ) և այլն, մուսուլմանների դեպքում գրվում են ճիշտ ուղղագրությամբ՝ S-ով, իսկ ոչ մուսուլմանների դեպքում՝ S: Օրինակ՝ նշված ֆոնդի № 11 վավերագրում (Հիշրայի 1071թ., 16 Ջումադա ալ-աուալ/ 18 հունվարի, 1661թ.), որը քրիստոնյաների միջև տան վեճի լուծման հայց է, Մակսուդ ուալադ Կարապետ ալ-նասրանին, Նաամա ուալադ Քալամիրը և Իսա ուալադ Յուսուֆը բողոքում են ոմն Գոհար բինթ Վանես ալ-նաս-

⁴¹ Այս մասին տե՛ս նաև S. Bey, նշվ. աշխ., էջ 35, N. Al-Qattan, “Textual Differentiation in the Damascus Sijil, Religious Discrimination or Politics of Gender,” in *Women the Family and Divorce Laws in Islamic History*, New York: Syracuse, Syracuse University Press, 1996, pp. 191-201, at 194:

⁴² R. Jennings, նշվ. աշխ., էջ 53:

⁴³ Կամ Սալիբիե:

րանիյեի դեմ, որի տունը մտնում է առևարիդի սուլթանիյեի մեջ⁴⁴: Իսա և Յուսուֆ անուններն այս վավերագրում գրված են սխալ ուղղագրությամբ՝ Տառով: Իսկ ահա նույն ֆոնդի № 9 վավերագրում (Հիշրայի 1084 թ., Ռաբի ալ-Առալ 22/7 հունիսի, 1673 թ.), որը տան առք ու վաճառքի որոշում է, որպես վկայություն ներկայացված փաստաթղթում նշվում է երկու վկայի անուն՝ Յուսուֆ Բաշիր իբն Բալի և Արսլան Բաշիր իբն Յուսուֆ, ընդ որում Յուսուֆ անունը գրված է ճիշտ ուղղագրությամբ: Ըստ սույն վավերագրի՝ քահանա (*qasīs*) Պողոս ուլայդ Մուրադը իր մահացած՝ հալիք ալ-զիմմա Վանես եղբոր կնոջից՝ Խաթուն բինթ Կարապետ ալ-զիմմիյա և նրա որդուց՝ Մուրադ ուլայդ Վանեսից գնում է Բաբ ալ-Նասր թաղամասի հարևանությամբ գտնվող իրենց համատեղ տան նրանց բաժինը՝ 114 ասադիյե⁴⁵ ղուրուշով: Ակնհայտ է այս և վերը նշված երկու անունների դեպքում «իբն» և «ուլայդ» բառերի օգտագործման փաստը:

Հարկ է նշել նաև «հալիք ալ-զիմմա» եզրույթը: *Hālik* (*hālika*-իգ., արաբ.՝ «մեռած, ոչնչացված, վերացված») օգտագործվում է միայն ոչ մուսուլմանների պարագայում, իսկ մուսուլմանների դեպքում՝ *muta'iffa* (արաբ. «հանգուցյալ»)⁴⁶: Այս երևույթը հանդիպում է նաև ներկայացված ֆոնդի № 1 վավերագրում (Հիշրայի 1042թ./1632թ.): Այն Հալեպի հայ համայնքի ներկայացուցիչ *hālika* Կամար բինթ Սարգիսի մահից հետո նրա երեխաների՝ Ֆադլալահ ուլայդ Մանսուրի (տղան), Սիքքարահ բինթ Մանսուրի (աղջիկը) և նրա ամուսնու՝ Ղազալ ուլայդ Ջիրջոսի, Յասմին բինթ Մանսուրի (մյուս աղջիկը) և նրա ամուսնու՝ Յակոբ ուլայդ Աթալահի միջև տան վեճի լուծման արձանագրություն է: Ի վերջո նրանք բոլորն էլ ընդունել են դատարանի վճիռն առ այն, որ Հալեպի Ջիդայդա թաղամասի խնդրո առարկա հանդիսացող տունը մուլքն է (սեփականություն) Նիկոլա ուլայդ Սարգիսի:

Շարիա դատարանի արձանագրություններն ուսումնասիրող գիտնականները նշում են, որ վաղ շրջանի օսմանյան սիջիլներում (մինչև XVII դար), օրինակ, յուրաքանչյուր զիմմի տղամարդ նշվում էր որպես *āl-zmmī āl-mad'ū*, *walad āl-mad'ū* և որպես *hālik*, երբ մահացած էր: Այսինքն, այս շրջանում ավելանում էին միայն այդ մակդիրները, իսկ *āl-nasranī*, *āl-rumī* տերմինները

⁴⁴ Այս ֆոնդի մեկ այլ վավերագրից՝ № 12, պարզ է դառնում, որ նույն այդ Գոհար բինթ Վանեսի տան հետ կապված մի քանի դատեր են եղել: Ի վերջո № 12 վավերագիրը վերջնական վճիռն է հօգուտ Գոհար բինթ Վանեսի, քանի որ այս վավերագրում որպես բողոքարկող Պետրոս ուլայդ Ջորջոսի անունը առարկի սուլթանիյեի մեջ չի նշվում:

⁴⁵ Մեկ ասադիյե ղուրուշը (*Esedî guruş*) հավասար է 3 ֆրանսիական ֆրանկի կամ 20 արծաթի: Գործածության մեջ է մտել XVII դարից: Տե՛ս՝ <http://www.islamansiklopedisi.info/dia/ayrmetin.php?idno=260458>

⁴⁶ Տե՛ս նաև S. Bey, նշվ. աշխ., էջ 35, N. Al-Qattan, “Textual Differentiation in the Damascus Sijil, Religious Discrimination or Politics of Gender”, էջ 194:

չէին կիրառվում⁴⁷: Այնուհետև զիմմի տղամարդը նշվում էր որպես *āl-hūāğā*, *ibn āl-hūāğā* կամ *wlad*⁴⁸:

Իգական սեռի անունների նշման ժամանակ դատարանի քաթիբները և՛ մուսուլման և՛ ոչ մուսուլման կանանց դեպքում օգտագործում էին «բինթ» («աղջիկ») բառը, օրինակ՝ Ֆաթիմա բինթ Մուհամմադ կամ Մարիամ բինթ Պողոս: Սակայն տարբեր էին մուսուլման և ոչ մուսուլման կանանց անուններին կցված մակդիրները. *āl-kāmila āl-mar'a*, *āl-kāmila āl-'īsaūīa*, *āl-hurma*⁴⁹ («անթերի կին, քրիստոնյա կին, կին») տերմինները տվել են միայն քրիստոնյա կանանց, իսկ *qadin*, *āl-sa'īda*, *āl-mašūna* («պարկեշտ կին») մուսուլման կանանց⁵⁰:

Ինչպես վերը նշվեց, այս վավերագրերի ուսումնասիրությունը լույս է սփռում նաև տվյալ ժամանակաշրջանում հալեպահայություն ներհամայնքային կյանքի տարբեր բնագավառների վրա: Օրինակ № 9 վավերագրում հիշատակված քահանա Պողոս ուալադ Մուրադի անձի հետ կապված մեկ այլ № 4 վավերագրից (Հիջրայի 1087թ. Ջուլ-հաջ ամսի 13-ին/16 փետրվարի, 1677 թ.) պարզ է դառնում, որ վերջինս հայ համայնքից Հալեպի եպիսկոպոսությանը հասանելիք եկամուտները հավաքողն է: Շատ կարևոր է վավերագրի բովանդակությունը. դա Շարիա դատարանի հաստատումն է առ այն, որ այդ թվականին Հալեպի հայ քրիստոնյա համայնքի եպիսկոպոս Պողոս ուալադ Ազարը հայ համայնքի պատրիարք Ազարիա ալ-Նասրանիի վեքիլն է ներկայացուցիչը, իսկ որպես Հալեպի հիշատակված եպիսկոպոսի վեքիլ և եպիսկոպոսությանը հասանելիք եկամուտների հավաքող, հաստատվում է նույն № 9 վավերագրում հիշատակված Պողոս ուալադ Մուրադը: Ուշադրության արժանի է, որ նախ վերը նշված պատրիարք բառի փոխարեն օգտագործված է արաբերեն *baṭrīk* «կաթողիկոս», ինչն անտեղյակության հետևանք է: 1677 թ. Ազարիա անուն չի հանդիպում ո՛չ Կ. Պոլսի և ո՛չ էլ Երուսաղեմի հայոց պատրիարքների ցանկում: Ուսումնասիրությունը արդյունքում պարզեցինք, որ խոսքն այստեղ վստահաբար Սսի Սահակ Ա. Մեյխանեջիի հակաթոռ Ազարիա Կարկառեցու մասին է, որոնց պաշտոնավարման թվականների հետ կապված շփոթություն կա: Ըստ Չամչյանի՝ Սահակ Ա. Մեյխանեջիի պաշտոնավարման թվականներն են 1679-1684 թթ., իսկ Ազարիան հակաթոռ է դարձել 1683 թ. և պաշտոնավարել հինգ

⁴⁷ Նույն տեղում, էջ 159:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Արաբերեն *haram* արմատից՝ արգելք, բնորոշում է անամուսնացած կնոջը, որը, ըստ Շարիայի, ամուսու «սրբություն»-ն է և համարվում է «անհասանելի», «պիղծ» մյուս տղամարդկանց համար:

⁵⁰ Համեմատություն է արվել միևնույն ժամանակի երկու՝ մուսուլմաններին և ոչ մուսուլմաններին վերաբերող սիջիլների միջև, տես N. Al-Qattan, “Textual Differentiation in the Damascus Sijil, Religious Discrimination or Politics of Gender”, էջ 197:

տարի⁵¹: Միայն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանի ուսումնասիրությունն արդյունքում է որպես նրա հակաթոռության սկիզբ հաստատվել 1677թ.⁵²:

Այսպիսով Բաբկեն կաթողիկոսի լայնածավալ ուսումնասիրության արդյունքները հաստատվում են նաև մեր աղբյուրով Մատենադարանի վերոնշյալ արաբերեն վավերագրով: Վերջինիս տեղեկությունները կարևոր են նաև այն առումով, որ լինելով դատարանի արձանագրություն՝ այն պաշտոնական փաստաթուղթ է:

Նշված վավերագրից պարզ է դառնում մի շատ կարևոր հանգամանք ևս: Թեև Օսմանյան կայսրության հայերին ներհամայնքային և կրոնական հարցերը լուծելու համար միլլեթ համակարգի շրջանակում որոշակի ազատություն էր տրված, սակայն անգամ հայոց ներեկեղեցական կյանքում կատարվող ցանկացած փոփոխություն վերահսկվում և հաստատվում էր օսմանյան իշխանությունների կողմից: Այս մասին է վկայում նաև նշված ֆոնդի № 3 վավերագիրը (Հիշրայի 1240-41թթ./1825թ.): Այն Հալեպի հայ եպիսկոպոս Աֆրամ ալ-Արմանիի (Եփրեմ Հայի) տարեկան հաշվետվությունն է հայ համայնքի վակֆերի եկամտի և ծախսերի վերաբերյալ՝ 1240 թ. Ռաջաբ ամսվա սկզբից մինչև 1241 թ. Ջումադա ալ-Սանի ամիսը (1825 թ. փետրվարից մինչև 1826 թ. հունվար):

Փաստորեն վերը նշված փաստաթղթերը նույնպես կարելի է դիտարկել որպես միլլեթ դատարանների բացակայության կամ դրանց մասնակի գործունեության վկայություն: Ոչ մոտավորաների՝ Շարիա դատարաններ դիմելու հաճախականության, միլլեթ դատարանների՝ սիջիլներում հիշատակության բացակայությունը պատմաբաններին թույլ է տալիս ենթադրել, որ զիմմիները չունեին իրենց ներքին դատական ապարատը կամ, համենայն դեպս, այն շատ թույլ էր⁵³:

Այս հարցի լուսաբանման համար պետք է հաշվի առնել մի քանի նրբություն. Օսմանյան շրջանում դատարանները կարևոր սկիզբ դրեցին պետության և կրոնի միջև կապի⁵⁴: Թեև, համաձայն իսլամի՝ բացի կրոնական օրենքից (շարիա) ոչ մի այլ օրենք չէր կարող լինել, այնուամենայնիվ օսմանյան իշխանությունները ճանապարհ բացեցին նաև սուլթանի օրենսդրական իշխանության համար՝ հրապարակելով աշխարհիկ օրենքներ⁵⁵:

⁵¹ Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, ժամանակագրություն, Երևան, 1984, էջ 111:

⁵² Բ. Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո Կյուլեսերեան, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 415: Այս մասին տե՛ս նաև՝ Վ. Մակարյան, «Կիլիկիոյ Ազարիայ Կարկառեցու հակաթոռութեան թուականի շուրջ (XVII-XVIII)», տպագրության մեջ:

⁵³ N. Al-Qattan, “Dhimmi in the Muslim Court: Legal Autonomy and Religious Discrimination,” p. 431- 432, A. Cohen, *Jewish Life Under Islam; Jerusalem in the Sixteenth Century*, Cambridge, Mass.; Harvard University Press, 1984, pp. 116, 126, 131.

⁵⁴ K. Barkey, *Islam and Toleration: Studying the Ottoman Imperial Model*, Published online, Springer Science + Business Media, LLC 2007, p. 12.

⁵⁵ K. Barkey, նշվ. աշխ., էջ 13:

Այսպիսով, օսմանյան արդարադատությունը հիմնված էր երկու՝ դինաստիական օրենքի (*qānūn*) և իսլամական օրենքի (շարիա) վրա, որոնց կարևորությունը հստակորեն չի տրված⁵⁶: Համաձայն կայսերական իրավական հրովարտականների (*adaletnamele*) տեղային քաղիները գլխավորապես պատասխանատու էին «սուլթանի արդարադատությունը» ամրապնդելու համար, ինչն ընդհանուր առմամբ նշանակում էր հպատակների անվտանգության և բարօրության պահպանում⁵⁷: Տեղական դատարանները նաև «զսպող ուժ» էին տեղական իշխանությունների դեմ⁵⁸:

Ուստի, մի կողմ դնելով միլլեթ համակարգի սահմաններում զիմմիներին տրված ներհամայնքային ինքնավարությունը, անհնարին ենք համարում «սուլթանի արդարադատության» հաստատումը միլլեթ դատարաններին վստահելու հանգամանքը: Թեև կարելի է պնդել, որ պատրիարքի ենթակայության ներքո գործող մի մարմին իրավունք է ունեցել կայացնել նեղ ներհամայնքային կյանքին վերաբերող որոշումներ (ամուսնության, ծնունդի, կնունքի, թաղման վկայականներ տալը, ընտանեկան կամ ներհամայնքային մանր վեճերի լուծում և այլն), սակայն օսմանյան հասարակական, վարչական և կրոնական համակարգերի որևէ մարմնի վերաբերող անգամ չնչին հայցերը դրվել են Շարիա դատարանների իրավասության ներքո: Հասկանալի է, որ այդ թերի կամ մասնակի ինքնավարությունն էլ՝ ի դեմս միլլեթ համակարգի, նույնպես մաս էր կազմում օսմանյան վարչահամակարգի, որի միջոցով վերահսկվում էին անգամ նեղ ներհամայնքային հայցերն ու վճիռները:

Թանգիմաթի ռեֆորմներով (1839, 1856 թթ.) տարբերակման, խտրականությունից և մուսուլմանի օրինական գերազանցության համակարգը վերացավ: Թեև կրոնական դատարանները մնացին, սակայն դրանց գործառույթները սահմանափակվեցին: Երևան եկան նոր՝ հառը դատարաններ, որոնք ընդունում էին կրոնական տարբեր համայնքների ներկայացուցիչների առևտրային, քրեական և քաղաքացիական այլ դեպքերին առնչվող հայցեր: Այնուհետև, սկսած 1869թ., աշխարհիկ դատարաններն (*nizamiye*) ընդունում էին մուսուլմաններին և ոչ մուսուլմաններին վերաբերող և՛ քաղաքացիական և՛ քրեական հայցեր⁵⁹:

⁵⁶ Նույն տեղում, էջ 14:

⁵⁷ B. Ergene, “Local Court, Provincial Society and Justice in The Ottoman Empire”, *Studies in Islamic Law and Society; Vol. 17*, Leiden – Boston: Brill, 2003, p. 104.

⁵⁸ Նույն տեղում: Սակայն որքան էլ հզոր լինեին սուլթանական «կանոնները», միևնույն է օսմանյան ծայրամասերի իշխանությունները համեմատական առումով դրանք հեռուդակամորեն չէին կիրառում, և երբեմն անհնար էր նրանց պարտադրել, տե՛ս B. Masters, նշվ. աշխ., էջ 36:

⁵⁹ D. Quataert, *The Ottoman Empire, 1700-1922*, Second Edition, Cambridge University Press, 2005, p. 201.

ВЕНЕРА МАКАРЯН, МОВСЕС ХЕЧО
ДОКУМЕНТЫ ШАРИАТСКИХ СУДОВ О СТАТУСЕ АРМЯН
АЛЕППО (XVII-XIX вв.)

(По арабским документам Матенадарана)

Ключевые слова: исламский закон, судебные документы, брачный договор, Армянский миллет, Алеппо, Сирия, Османская империя, Шариат, ислам, христиане.

Под османским владычеством все армяне, в том числе армянская община Сирии, являлись частью Армянского миллета и пользовались определенной автономией в общественной жизни. Вопросы армянской общины решались в судебном порядке Армянского миллета. Однако зафиксированы случаи, когда армяне Сирии, помимо судов миллета, обращались также к местным шариатским судам не только в обязательных случаях, установленных властями, но и добровольно. Об этом свидетельствуют документы шариатских судов Алеппо, 13 из которых хранятся в Матенадаране.

Эти материалы содержат сведения как об армянской общине, так и о христианах Османской империи в целом, в частности, об их статусе, общественной жизни, религиозной дискриминации, конфликтах и путях их решения.

VENERA MAKARYAN, MOVSES KHECHO
THE STATUS OF ARMENIANS IN ALEPPO ACCORDING TO THE
RECORDS OF SHARIA COURTS (XVII-XIX cc.)

(Based on Matenadaran's Arabic documents)

Keywords: Sharia courts, court records, Armenian Millet, Aleppo, Syria, Ottoman Empire, Sharia, Islam, Christians.

Under the Ottoman rule, Armenian citizens, including the Armenian community of Syria, were part of the Millet System. They enjoyed certain autonomy in their community, and issues of concern were resolved in the Millet courts. In addition to the Millet courts, Syrian Armenians sometimes took their cases to the local Sharia courts not only in mandatory cases but also voluntarily. Many records of Sharia courts in Aleppo, 13 of which are kept in Matenadaran, refer to this fact.

The documents contain information about the Christian citizens of the Ottoman Empire, particularly the status of Armenians in Aleppo, and touch upon issues such as community life, inter-communal relations, religious discrimination, conflicts and their resolution.

RAÏSSA AMIRBEKYAN

**UN PORTRAIT EN MINIATURE DU XV^E SIECLE:
SULTAN BAYSUNKUR BAHADOR KHAN, PRINCE
TIMURIDE (COLLECTION DU MATENADARAN)**

Mots-clés: dynastie des Timurides en Inde, art timuride, illumination des manuscrits timurides, Sultan Baysunkur Khan Prince Timurid., peinture miniature Portrait en Perse, les collections de Matenadaran, Shahrokh Mirza, Dawlat Shah Samarkandy, kitabkhaneh, Herat école artistique.

La présente communication est une tentative de présenter un exemplaire rare de portrait en miniature du XV^e siècle du Fonds en graphie arabe des manuscrits du Maténadaran. Le milieu culturel de la création de cette œuvre est la ville de Herat à la limite des XIV^e–XV^e siècles (voir feuille encartée, fig. N 1). Le phénomène culturel de cette époque de Herat est largement connu : il se caractérise par le changement d'orientation de la conscience de l'élite de la société, tant dans le contexte social que culturel. Ce processus a trouvé son écho formel dans les œuvres de tendance timuride, parvenues à nos jours. Toutefois, plus important encore est le processus de la perception repensée de la forme artistique qui est, de tout temps, l'équivalent visuel de telle ou telle réalité. Par ailleurs, toute la conception du monde de l'artiste de Herat n'est pas fixée dans le cadre du même complexe téléologique traditionnel, basé sur une conventionalité extrême des personnages et d'un symbolisme concret et établi. Ce qui est nouveau, c'est la tentative de se rapprocher d'une représentation plus réelle des situations de la vie quotidienne et de leurs parties intégrantes, sans sortir toutefois des limites du phénomène traditionnel connu et organisé en complexe depuis des siècles. On remarque aussi la progressivité du processus, le passage du style conventionnellement graphique à celui de la représentation plastique dans la mentalité artistique.

L'on sait que dans la tradition islamique tout métier était considéré comme un don divin. La conscience esthétique des formes artistiques ne le cédait en rien aux postulats rhétoriques de l'islam. Quant à la maîtrise artistique, elle était considérée comme un avantage considérable par

rapport aux autres. C'est pourquoi, même les personnes royales appréciaient l'art, le protégeaient et tâchaient de s'y initier.

Dès lors, le mécénat exercé par Shahrokh¹, et surtout par son fils Baysunkur², alors qu'il était gouverneur civil (vizir) de Herat de 1417-1418 à 1433, en est un brillant exemple.

Baysonkur était une personnalité fort remarquable. L'on peut dire sans exagérer qu'il était le phénomène de son époque. D'après Davlat Chah Samarkandi, auteur de la fin du XV^e siècle, d'éminents calligraphes, peintres, doreurs et relieurs, venus des différentes régions et villes d'Iran, travaillaient dans sa *kitabkhaneh* (scriptorium et bibliothèque). On peut citer parmi eux Seyd Ahmad Naghach, Hodja 'Ali Moussavir, le relieur Kavyl ad-Din Tabrizi et le calligraphe Djafar Tabrizi.

Nous ne connaissons pas d'œuvres signées de maîtres ayant œuvré dans cette *kitabkhaneh*. Toutefois, les œuvres des historiens de l'époque de Shahrokh mentionnent des noms d'artistes, tels Ghiyas ed-Dīn Naghach, Mavlana Khalīl Moussavir, Seyd Ahmad Naghach, Hodja 'Ali Moussavir, Ghiyas ed-Din Pir-Ahmad Zarkuba Tabrizi, Amir Khalil, favori de Baysunkur et d'autres.

¹ Chahrokh Mirza (1377-1447), fils cadet de Tamerlan. A partir de 1397, il règne au Khorassan. Les plus grands poètes de son époque vivent à sa cour : Alicher Navoī et Abdorahman Djami. Pour plus de détails, voir : **S. Lane-Pool**, "Les dynasties musulmanes", tr. de l'anglais en russe et notes **de V.V. Bartold**, Moscou, 2004; *Mou'iz al-ansab (Généalogie glorieuse)*, Introduction, traduction du persan, notes, préparation du fac-simile à l'édition de **C.K. Vahidov**. *Histoire du Kazakhstan dans les sources iraniennes*, T.Z. Almati, Dayk Press, 2006, p. 116, 119; **Ismaïl Aka**, *Mirza Şahruh zamanında Timurlu imparatorluğu (1411-1447)*, Habilitation thesis, Ankara, 1978; **Stchoukine I.**, *Les peintures des manuscrits timurides*, Paris, 1954; **Jackson, Peter** (ed.); *The Cambridge History of Iran*, vol. 6: *The Timurid and Sefavid Periods* (London, 1968 et seq.); **Stchoukine I.**, *Les peintures des manuscrits timurides*, Paris, 1954; *An Oriental Biographical Dictionary*, **Thomas William Beale**, London 1894, (repr. N.-Y., 1965), p. 367 et passim.

² Baysunkur Mirza, troisième fils de Mirza Shahrokh et petit-fils de Tamerlan. Il est né en 1399 et décédé en 1434, avant son père. Voir **S. Lane-Pool**, "Les dynasties musulmanes"..., p. 227; *An Oriental Biographical Dictionary*, p.100; **BĀYSONĠOR, ĠĪĀT-AL-DIN B. ŞĀHROK B. TĪMŪR** (799 H.-837 H. / 1397-1433; **J. Aubin**, « Le mécénat timouride à Chiraz », *Stud Isl*, 8, 1957, p. 71-88; *The Cambridge History of Iran*, vol. 6, *The Timurid and Safavid Periods*, ed. by **Jackson P.**, Cambridge, 1986, pp.101-105; *The Islamic Dynasties. A Chronological and Genealogical Handbook*. Edinburgh, 1967, p. 210; **Bosworth C.O.**, *An Oriental Biographical Dictionary*. London, 1894 (repr. N.-Y., 1969), p. 367; **Z. Safa**, *Persian Literature in the Timurid and Türkmen Periods (782-907 H./1380-1501)* »; *Ibid.*, p. 913-928; **Robinson B.W.**, "Prince Baysunghur and the Fables of Bidpai", in *Oriental Art*, N.S. 16, 1970, p. 143-154;

De l'avis unanime des chercheurs, le style de la présentation artistique des manuscrits sortis des ateliers de Baysunkur est basé sur les canons de l'école de Chiraz d'avant la période des Timurides³. Nous présentons à l'attention des lecteurs une miniature de la collection du Maténadaran, le portrait du prince Timuride Bāhador khan Bāykārā, ce qui est attesté par l'inscription du fond de la miniature : « Sultan Bāhador »⁴.

La miniature a été remise au Maténadaran en 1980, au nombre d'une collection de miniatures iraniennes, conformément au testament de Louise Aslanian (Paris, France), propriétaire de la collection.

Les dimensions de la composition sont de 13,5 x 15,5 cm. La miniature est exécutée sur du papier épais non lustré, de couleur crème et de production orientale. Le portrait est sans fond. Il se distingue par le raffinement du dessin, la richesse et l'harmonie de la gamme chromatique, caractéristique de l'école de Herat du XV^e siècle⁵. La miniature comporte deux sceaux, à gauche et à droite du portrait, ainsi qu'un sceau près du bord gauche, qui porte des traces d'endommagement conscient.

En même temps, cette miniature sort du standard de la tendance de Herat du fait qu'on constate le désir évident du peintre de rendre la ressemblance de portrait, les caractéristiques relatives à l'âge et à la

³ L'époque des Timurides, surtout celle de Chahrokh et de Baysunkur, est devenue l'âge d'or de la création de livres manuscrits raffinés. - **Aïni S.**, *Alicher Navoi*, Stalinabad, 1948 (en russe); **Akimouchkine O.F., Ivanov, A.A.**, *Les miniatures iraniennes des XIV^e-XVII^e siècles*, Moscou, 1968 (en russe); **Bartold V.V.**, *L'Iran, aperçu historique*, Tachkent, 1926, p. 39 (en russe); Idem, *Iran*, Tachkent, (en russe).

⁴ **Aïni L.**, « La miniature timuride et sa spécificité » dans *Peuples d'Asie et d'Afrique*, 1971, N° 3 (en russe); Idem, « L'évolution du milieu spatial dans la miniature de la haute époque (d'après certaines œuvres des XII^e – XIV^e siècles) » dans *Peuples d'Asie et d'Afrique*, 1976, N° 1, p.145-152 (en russe); **Akimouchkine O.F., Ivanov A.A.**, Moscou, 1968 (en russe); Idem, La « Bibliothèque » de Baysunkur Mirza à Herat (1397-1433) : fonctions, organisation, composition, production dans *Interaction et inter-influence des civilisations et des cultures d'Orient*. III^e Conférence soviétique d'orientalistes, Moscou, 1988 (en russe).

⁵ **Bartold V.**, *Histoire de la littérature et de la culture d'Iran*, Moscou, 1988 (en russe); Idem, *L'Islam et la culture du monde musulman*, Moscou, 1992 (en russe); Idem, *Histoire de l'Etat iranien et de sa culture*, Moscou, 1971; **Gray B.**, « Les problèmes de l'histoire de l'école timuride de l'enluminure », Exposé au Symposium *L'art d'Asie Centrale à l'époque des Timurides*, Samarkand, 1969 (en russe); **Déniké B.P.**, *L'art de l'Orient*, Kazan, 1923 (en russe); Idem, *La peinture de l'Iran*, Moscou, 1938 (en russe); **Dust Mohammad**, « Traité sur les calligraphes et les peintres », traduction de **G.I. Kostygova** dans *Les maîtres des arts parlent des arts*, t. 1. Moscou, 1965 (en russe); **Qāzī Ahmad**, *Traité sur les calligraphes et les peintres*, Leningrad, 1947 (en russe).

situation sociale du modèle, ainsi que son état émotionnel⁶. Toutefois, selon nous, la précision absolue du rendu de la caractéristique individuelle est exclue. Cette tendance n'était pas caractéristique pour la période examinée de l'art de Herat. D'autre part, ne disposant pas d'autres portraits de Baysunkur Bāhador Khan, il est difficile d'en juger avec conviction.

Le costume du modèle est dans le style du XV^e siècle⁷. La situation d'élite du modèle est mise en relief évidence par les accessoires : carquois et flèches d'or, richement sertis de pierres précieuses, un plumage majestueux, etc.

Le coloris de la miniature fait écho à la gamme chromatique des compositions connues qui illustrent les manuscrits de l'école de Herat du XV^e siècle. La composition du portrait se distingue par un assemblage audacieux de riches nuances du bleu, du rouge, du vert et de l'argenté, dont les racines remontent à la radieuse palette multicolore des chefs-d'œuvre de Sultani et des autres maîtres des écoles du XIV^e siècle de Bagdad et de Chiraz⁸. Comme dit, le fond du portrait en question est le papier qui lui sert de support. L'absence de fond architectural, de paysage ou d'objets d'intérieur est apparemment appelé à rendre plus actif l'action du principal objet visuel sur le spectateur. La figure du modèle, assortie de l'inscription, en l'absence de tout élément de perspective aérienne, représente justement le phénomène, formé sur la base des

⁶ Rice D.T., *Islamic Art*. London, 1996; Robinson, B.W., *Islamic Painting and the Art of the Book*. London, 1976; Schimmel, A., *Calligraphy and Islamic Culture*. New York, 1984; Stchoukine I., *Les peintures des manuscrits Timurides*, Paris, 1954; Titley, N.M., *Persian Miniature Painting and its Influence on the Art of Turkey and India*. London, 1983; Welsh, S.C., *The Art of Mughal India*. London, 1963; Wilkinson, J.V.C., *Mughal Painting*, 1949.

⁷ Binyon, L. et al., *Persian Miniature Painting*, London, 1933. W. Hinz, "Quellenstudien zur Geschichte der Timuriden." *ZDMG* 90, 1936. pp. 357-98; E. Kühnel, "History of Miniature Painting and Drawing". in *Survey of Persian Art* V, pp. 1829-97. esp. pp. 1829-58; Qāzi Aḥmad, tr Minorsky. H. R. Roemer. *Staatsschreiben der Timuridenzeit*, Wiesbaden, 1952; T. W. Arnold, *Painting of Islam*, Oxford, 1928.

⁸ Robinson B.W., *Persian Paintings in the John Rylands Library: a Descriptive Catalogue*. London, AMAZONE, 1980; idem, *Fifteenth-Century Persian Painting: Problems and Issues* (Hagop Kevorkian Series on Near Eastern Art and Civilization). NYU Press, 1991; idem, *Persian Miniature Painting from Collections in the British Isles*, H. M. S. O., 1967; idem, *Persian Painting: From the Mongols to the Qajars*, ed. R. Hillenbrand, *Pembroke Persian Papers*, vol. 3 of *Pembroke papers*, Pembroke College, Cambridge, I. B. Tauris, 2001; Stchoukine I., *Les peintures des Manuscrits Timurides*.

principes traditionnels de la conception islamique, et appréciant la projection de l'espace figuré, uniquement basé sur un vaste spectre de connaissances compréhensibles seulement aux spectateurs initiés.

Tous les détails de la miniature étudiée témoignent en faveur de ce que l'auteur en est sans doute possible un excellent artiste. Toutefois, notre intention n'est ni sa localisation, ni son identification. La logique de l'originalité culturelle, comme manifestation concrète de l'état objectif de la culture elle-même, – en l'occurrence de la culture islamique – est indéniable et, dès lors, l'action libre d'une individualité concrète d'artiste ne peut être à la base de son argumentation.

La question de la personne du peintre ne se discute pas non plus à cause de l'originalité de l'axe central et fondamental des auteurs d'œuvres d'art dans la tradition religieuse islamique, basée sur le modèle intemporel de la conscience. C'est pourquoi l'absence de caractéristiques individuelles des portraits dans l'art islamique est compensée par la présence d'inscriptions, en particulier du nom du propriétaire du portrait.

La miniature en question, comme nous l'avons noté ci-dessus, est dotée de trois sceaux, contenant une information tant sur le modèle du portrait que sur ses deux propriétaires suivants. Si l'un de ceux-ci n'est pas un personnage historique (l'on sait seulement qu'il a acquis cette miniature « Le 2 du mois de Cha'aban 1112 de l'Hégire / 1700/ dans la belle ville d'Aurangabad », le deuxième n'est autre que Chah 'Alamguir. Ainsi, il s'ensuit que la miniature du Maténadaran, représentant le petit-fils de Tamerlan et le fils de Shahrokh, a appartenu à une certaine époque à Aurangzeb, successeur de Chah Djahan, ayant reçu, selon la tradition, un titre analogue à celui de son grand-père : 'Alamguir (conquérant de l'Univers). Il est le sixième et le dernier des Grands Mogols. L'on sait qu'à sa mort en 1707, il régnait pratiquement sur tout le territoire de l'Inde, y compris le sud et la partie la plus élevée du Deccan⁹.

⁹ Nom officiel d'Aurangzeb Muhiy ad-Din Abu-l-Mozaffar Aurangzeb Bāhador 'Alamguir, voir : **Wright H.N.**, *Catalogue of the Coins in the Indian Museum*. Calcutta, vol. II-III. Delhi, 1972, p.131; *The Islamic Dynasties*, p. 210 (1699-1759); Empereur de l'Etat des Grands Mogols en Inde, 1754-1759. Son grand-père Aurangzeb 'Alamguir Muhiy ad-Din Padichah d'Inde, de la dynastie des Grands Mogols, a régné en 1658-1707. Fils de Chah Djahan I^{er}, il est né le 3 novembre 1618 et décédé le 3 mars 1707. Aurangzeb (1618-1707), nom complet : Muhiy ad-Din Abu-l-Mozaffar Sultan Mohammad Aurangzeb, titre 'Alamguir, « conquérant de l'Univers »; pers. محى الدين ابو مظفر محمد اورنگزيب عالمگير, empereur (padichah) de l'Etat des Grands Mogols (1658-1707), sous le règne duquel l'Etat a acquis son plus grand territoire et sa plus grande puissance. **Ryjkov K.V.**, « Tous les monarques du monde », dans *Orient Musulman*.

La personnalité de Chah 'Alamguir est décrite de façon très contradictoire par ses contemporains. Il est toutefois indiscutable que c'était un homme remarquable que distinguaient une énergie incroyable, un esprit ferme, de l'astuce et de bonnes qualités de chef. Il avait le don de se soumettre même ses ennemis potentiels.

Le fait de l'appartenance de cette miniature de la collection du Maténadaran à une personnalité aussi remarquable de son époque lui confère, à notre avis, une valeur et un charme particuliers.

Dans le portrait en question, nous remarquons l'assemblage, dans le cadre d'une seule miniature, de deux axes communicatifs : plastique et épigraphique, caractéristique de la tradition culturelle islamique où l'inconstance de l'extérieur humain et la constance de son essence sont liées à son nom qui était toujours considéré comme la caractéristique la plus stable de la personnalité, tant dans la littérature que dans les arts plastique de cette culture. Le « nom-âme », gravé au-dessus de l'image de tel ou tel personnage dans une œuvre d'art orientale, servait en règle générale à la remplir de sens, l'emportant bien au-delà des limites du sujet concret¹⁰. Dès lors, le rôle des inscriptions se limite à conférer à la composition plastique un caractère associatif et rempli de sens, ainsi qu'à compenser l'absence de plénitude et d'exactitude de caractéristiques individuelles du portrait. Ainsi, le caractère profane constitue dans ce portrait une dichotomie avec le principe culturel de l'épigraphe qui l'accompagne.

Toute dichotomie, à son tour, est porteuse d'un certain code informatif, rempli de signification sacrale, suivant le genre des principes qui la composent, et grâce à la graphie arabe qui oriente l'initié vers l'Univers. D'autant plus que l'existence des schémas compositionnels plastiques et épigraphiques associés peut être suivie et fixée dans l'art des

XV^e-XX^e siècles, Livre de référence, Moscou, Vetche, 2004 (en russe).

¹⁰ **Ghafourov A.**, *Le nom et l'histoire* (Sur les noms des Arabes, des Persans, des Tadjiks et des Turcs). Dictionnaire, Moscou, 1987, p. 10 (en russe); **Gorbovski**, « La Magie des noms » dans *Culture soviétique*, 27.01.1990 (en russe) ; **Braginski V.I.**, « La doctrine de l'incarnation de l'image dans le mot dans la littérature classique malaysienne » dans *La poésie de l'Orient. La spécificité de l'image artistique*, Moscou, 1983, p.61, 67, 75, 81 (en russe); *L'art traditionnel de l'Orient*, Dictionnaire terminologique. Auteurs et compilateurs : **Vinogradova N.A.**, **Kaptereva T.P.**, **Starodoub T.K.**, Moscou, 1997 (en russe) ; **Choukourov C.**, *L'art et le mystère*, Moscou, 1999 (en russe) ; Idem, *Le personnage humain dans l'art de l'islam*, Moscou, 2004 (en russe) ; **Burckhardt T.**, *Art of Islam. Language and Meaning*. World of Islam Festival Trust, 1969; **Grabar O.**, *Mostly Miniatures. An Introduction to Persian Painting*, Princeton, 2000; **Nasr S.**, *Islamic Art and Spirituality*, New York, 1987.

peuples unis par la même religion, à partir de ses périodes les plus reculées¹¹.

Les arts plastiques dans leur ensemble et la miniature en particulier reflètent avec évidence bien des positions très importantes pour la pensée théorique de l'islam. Une place importante y est faite à la recherche de la réponse à la question de l'interprétation plastique de postulats aussi fondamentaux que l'anthropomorphisation d'Allah et la définition de la place de l'être humain dans le monde des formes et des idées. Il est parfaitement naturel que, dès lors, les postulats rhétoriques de l'islam soient fondamentaux pour la prise de conscience esthétique et le choix des formes plastiques par le peintre. C'est pourquoi, outre le choix de communications visuelles de la composition, visibles aux non initiés, un contenu plus profond et sous-entendu est proposé aux initiés à travers un système de signes, comme notions explicatives.

Comme conclusion, nous voudrions noter ce qui suit :

La miniature du XV^e siècle de l'école de Herat, représentant le portrait du prince timuride Baysunkur Bāhador Khan, de la collection du Maténadaran, est l'une de ces œuvres de la miniature orientale qui présentent un intérêt certain, d'une part, comme exemplaire typique de la production d'une *ketabkhaneh* royale et, d'autre part, comme un document rare de son époque par ses paramètres visuels.

Examinée du premier point de vue, la miniature reflète tout le complexe des formes et des procédés artistiques caractéristiques de l'école du XV^e siècle de Herat ; alors que vue du deuxième, elle présente des traits qui lui confèrent de l'originalité et, dans une certaine mesure, de la rareté. Le premier s'explique apparemment par la stabilité générale des schémas iconographiques et des autres parties intégrantes de la composition des miniatures, caractéristiques pour la tradition culturelle islamique.

Quant à la logique de l'originalité culturelle du portrait en question, elle est, à notre avis, plutôt le résultat du potentiel créatif objectif que possédait son auteur, assorti du fond culturel de l'époque.

¹¹ **Dokhudoeva L.A.**, *Catalogue des manuscrits orientaux illustrés de l'Académie des sciences de la RSS du Tadjikistan*, Douchanbé, 1986 ; *Les manuscrits islamiques dans les collections de Moscou*. Musée National d'Histoire, Catalogue de l'exposition, Moscou, 2004, auteurs et compilateurs **Zaitsev I.V.**, **Kaziev A.Y.** (en russe). *Les matériaux artistiques et techniques et la terminologie de l'enluminure, de la calligraphie et de la reliure médiévales*, Bakou, 1966 ; *Les miniatures du Khamsé de Nizami*, compilateur et auteur de la Préface **F. Suleymanova**, Tachkent, 1985 (en russe).

Le modèle de la conscience hors-temps, sur lequel se base toute œuvre d'art dans la tradition islamique, est accompagné dans l'essence de cette composition en miniature d'éléments du phénomène chronologique et spatial concret, y compris l'épigraphie.

Il nous semble que la présentation aux milieux scientifiques de la miniature étudiée ci-dessus, conservée dans le Fonds en graphie arabe du dépôt universellement connu du Maténadaran Machtots d'Erevan, attirera l'attention des chercheurs et permettra d'enrichir les notions existant sur l'école du XV^e siècle de Herat, en complétant par là-même l'histoire de l'art des peuples d'Orient.

ՌԱԻՍԱ ԱՄԻՐԲԵԿՅԱՆ

ԹԵՄՈՒՐՅԱՆ ԻՇԵԱՆ ՍՈՒԼԹԱՆ ԲԱՅՍՈՆՂՈՒՐ ԲԱՀԱԳՈՒՐ ԽԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐ ԳԻՄԱՆԿԱՐԸ (ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ)

Բանալի բառեր՝ Հնդկաստանի Թեմուրյան հարստություն, Թեմուրյանների արվեստը, Թեմուրյան թագաժառանգ Բայսոնղուր Բահագուր խան, պարսկական մանրանկար դիմանկար, Շահ Բուհ միրզա, Դավլաթ շահ Սամարղանդի, քիթաբխանա, շահ Ջահան, Հերաթի արվեստի դպրոց:

Հոդվածը ներկայացնում է Մատենագարանի արաբատառ ձեռագրերի մի նմուշ՝ Թեմուրյան իշխան Բահագուր խան Բայքարի, որը հայտնի էր որպես Բայսոնղուր Միրզա Ահյաս էդ-Դին Բայսոնղուր իբն Շահրուհ (1397-1433 թթ.), XV դ. հազվագյուտ մանրանկար դիմանկարը:

Բայսոնղուրը եղել է թագաժառանգ, սակայն 1433 թ. վրա հասած անժամանակ մահը (36 տարեկանում) զրկել է նրան Թեմուրյան գահը զբաղեցնելու հնարավորությունից: Նա շատ բան է արել Հերաթը Թեմուրյան կայսրության մշակութային կենտրոնը դարձնելու համար, կյանքի կոչելով թյուրքական և պարսկական մշակույթների մի սինթեզ, որի աչքի ընկնող դերն ընդունում է պարսկական ժառանգության այսօրվա հետազոտողների մեծամասնությունը: Բայսոնղուրը գեղագրության արվեստի սիրահար էր: Մեհշեդի մզկիթում (Գոհարշադ) պահպանվել է նրա կատարած գեղագրության մեկ նմուշ: Ըստ շրջանառվող մի տեսակետի՝ հանրահայտ Բայսոնղուրի Դուրանը ընդօրինակվել է նրա ձեռքով (1433 թ., միայն մի քանի թերթ է պահպանվել):

Բայսոնղուրի քիթաբխանան հիշատակվում է որոշ պատմիչների աշխատություններում: Այդ հիասքանչ գրատան մասին ճշգրիտ տեղեկություններ են պահպանվել Ստամբուլի Թոփխանե Սարայ թանգարանում 1948 թ. հայտնաբերված մի փաստաթղթում, որը կազմել է Բայսոնղուրի գրատան կառավարիչը (հավանաբար՝ Քեմալեդդին Ջաֆար Ալի Բայսոնղուրի Թեբրիզին): Բայսոնղուրի հարուստ գրադարանից մեզ է հասել ընդամենը 19 ձեռագիր, որոնք

մինչև օրս էլ չեն կորցրել Արևելքի գրքարվեստի բացառիկ նմուշների իրենց նշանակությունը: Դրանց շարքում է Բայսոնդուրի հռչակավոր Շահնամեն, որը սոսկ շատ արժեքավոր արվեստի գործ չէ. այդ նրբագեղ և շքեղ ձեռագիրը վկայում է, թե որքան էին թեմուրյան թյուրքերը ձգտում ներգրավվել պարսկական մշակութային համատեքստի մեջ:

Մատենադարանի մանրանկար դիմանկարն այդ ժանրի հազվագյուտ նմուշ է XV դ. Հերաթի արվեստի համար: Այն ներառում է թանգարանային հազվագյուտ նմուշի բոլոր հատկանիշները. բարձր գեղարվեստական մակարդակ, պատկերվող անձի մասին տեղեկություններ պարունակող մակագրություն, դիմանկարի սեփականատերերի կնիքներ (գրանցից երկուսը պատկանում են Զահան շահի հաջորդ՝ Մոգոլ փառիշահ Ավրանգզեբին (1618-1707), որի լրիվ անունն է Մուհյի ուղ - Դին Աբու - լ — Մուզաֆար Ավրանգզեբ, տիտղոսը՝ Ալամգիր՝ «Աշխարհակալ»): պարսկերեն նշանակում է Մեծ Մոգոլների տերության կայսր (փառիշահ) (1658-1707), որն ըստ ավանդության՝ իր պապից է վերցրել Ալամգիր տիտղոսը:

Մանրանկարը պահվում է Մատենադարանի Լուիզ Ասլանյանի (Փարիզ) ֆոնդի ձեռագրերի խմբում, թիվ 1999 թղթապանակում, №12:

РАИСА АМИРБЕКЯН

ПОРТРЕТНАЯ МИНИАТЮРА XV ВЕКА: ТИМУРИДСКИЙ ПРИНЦ СУЛТАН БАЙСУНКУР БАХАДУР ХАН (КОЛЛЕКЦИЯ МАТЕНАДАРАНА)

Ключевые слова: Тимуридская династия в Индии, искусство Тимуридов, иллюминация тимуридских рукописей, Султан Байсункур хан принц Тимуридский, портретная миниатюра Персии, Шахрух Мирза, Давлат шах Самарканди, *китабхане*, Гератская художественная школа.

Статья является опытом презентации редкого экземпляра портретной миниатюры XV века тимуридского принца Бахадур хана Байкара, известного как Байсункур Мирза (Гияс ад-Дин Байсункур ибн Шахрух (1397-1433), из коллекции арабографических рукописей Матенадарана (коллекционная группа Луизы Асланян (Париж), папка № 1999, № 12).

Фактически Байсункур был крон-принцем, и только ранняя смерть в 1433 году (прожил 36 лет) не дала ему возможности занять тимуридский трон. Байсункур много сделал для превращения Герата в культурный центр Тимуридской империи, осуществляя синтез тюркской и персидской культур. Его выдающаяся роль признана

большинством сегодняшних исследователей персидского культурного наследия. Байсункур был большим поклонником искусства каллиграфии. Сохранился созданный им образец на стене мечети в Мешхеде (Мечеть Гохаршад). Существует также мнение, что знаменитый Коран Байсункура (завершен в 1433 г.), от которого сохранилось лишь несколько листов, был переписан им самим.

Китабхане Байсункура упоминают в своих трудах несколько историков. Точные сведения об этом феноменальном скрипториуме содержатся в документе, обнаруженном в 1948 г. в Музее Топкапы Сарай в Стамбуле и составленным управляющим *китабхане* (возможно, Камаладдином Джафаром Али Байсункури Табризи). Из всей богатой библиотеки Байсункура до наших дней дошло всего 19 манускриптов, однако и по сей день они не утратили своего значения как раритеты книжного дела Востока.

“Шахнаме” Байсункура является не просто ценнейшим культурным артефактом. Богатство и изысканность этого манускрипта – демонстрация того, в какой мере и с каким желанием тюрки-Тимуриды стремились вписаться в традиционный персидский культурный контекст.

Портретная миниатюра Матенадарана представляет собой редкий для Герата начала XV века образец этого жанра, она содержит в себе все необходимые параметры музейного раритета: высокий художественный уровень, надпись, содержащую сведения о портретируемом, владельческие печати (две из них принадлежат могольскому падишаху Аурангзебу (1618-1707), полное имя *Мухйи уд-Дин Абу-л-Музаффар Султан Мухаммад Аурангзеб*, титул **Аламгир**, “владыка мира”; перс. *ابو مظفر محی الدین محمد اورنگزیب عالمگیر*) — императору (падишаху) державы Великих Моголов (1658-1707), преемнику шаха Джохана, принявшему по традиции титул, созвучный титулу своего деда – Аламгир.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՕԼԿԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԻՆՉՊԵՄ ՄԱՇՏՈՅԸ ԴԱՐՉԱՎ «ԱԿԻՄԻՏ»

Բանալի բառեր՝ Կորյուն, բնագրագիտություն, Կոստանդնուպոլիս, Թեոդոս Փոքր, Ատտիկոս պատրիարք, Ակիմիտ կամ Անհանգստից վանք, եկեղեցու պաշտպան (էկլեսիեկոնոս), «Տասնինը բազմոցների սրահ», բյուզանդական արքունիքի արարողակարգ, ակումբ, ստուգաբանություն:

Սույն հոդվածով կրկին փորձ ենք անում անդրադառնալ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի ընդարձակ խմբագրության առեղծվածներից մեկին¹:

Մաշտոցն իր լուսավորչական առաքելությունը շարունակելու նպատակով աշակերտների հետ անցնում է Փոքր Հայքի սահմանը և այսպիսով հայտնվում Բյուզանդական կայսրության տարածքում: Այստեղ նրան մեծ ոգևորությամբ ընդունում են տեղի հոգևորականությունն ու ժողովուրդը, իսկ «աշխարհի սպայապետ» Անատոլիսը², զեկուցելով մայրաքաղաք, Թեոդոս Փոքրի արքունիքից մի տարօրինակ պատասխան է ստանում Մաշտոցի վերաբերյալ.

«...հրաման ելանէ՛ր՝ վայելուչ մեծարանամ զՍուրբն՝ Ակումիտ անուն կոչելոյ»³:

«Վարքի» ընդարձակ խմբագրության հարազատ բնագիրն առաջին անգամ տպագրվել է Վենետիկում 1833 թ.⁴, իսկ մի կարճ ժամանակ անց, 1836-37 թթ., լույս ընծայվեց «Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի» երկհատորյակը, որտեղ անհասկանալի «ակումիտ»-ը նույնացվում է «ակիմիտ» բառին: Այս նույնացումը, անշուշտ, պատկանում էր հ. Մկրտիչ Ավգերյանին⁵: Հայոց եկեղե-

¹ Նախորդ փորձը տե՛ս Օ. Վարդապարտյան, «Ակումիտ» և «սպուլիք» բառերը Մեսրոպ Մաշտոցին վերաբերող աղբյուրներում», *Միջազգային գիտաժողով նվիրված հայոց գրերի գյուտի 1600-ամյակին (Երևան, 12-17 սեպտեմբերի, 2005 թ.)*, Զեկուցումների ժողովածու, Երևան, 2006, էջ 457-468:

² Ընդարձակ խմբագրության գրչագրերի ընթերցումն է «Անտիոխ/Անտիոք/Անտեսիս/Անտիսի». միայն երկուսում (bc) կարդում ենք «Անատոլի»: Անատոլիսի խնդրի տեսությունը տե՛ս **G. Winkler**, *Koriwns Biographie des Mesrop Maštoc. Übersetzung und Kommentar* (Orientalia Christiana Analecta, 245), Roma: Pontificio Instituto Orientale, 1994, S. 322-323:

³ **Կորյուն**, *Վարք Մաշտոցի*, ԺԶ, Երևան, 1941, էջ 65 = Կորյուն, *Վարք Մաշտոցի*, ԺԷ.4 (ՄՀ, Ա հատոր, Ե դար, Անթիլիաս – Լիբանան, 2003, էջ 244):

⁴ **Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերձանողի և Դապի Անյաղթի Մատենագրութիւնք**, Վենետիկ, 1833 (ակումիտին վերաբերող հատվածը՝ էջ 16):

⁵ Տե՛ս Մ. Ավգերյանի վերապատմած «Վարք Մրբոյն Մեսրոպայ վարդապետի». «և էլ հրաման ի կայսերէ վայելուչ մեծարանամ կոչել զսուրբն Մեսրոպ ակումիտ, այն է ըստ յունաց

ցու սրբերի վարքեր հավաքողն ու մշակողը չէր կարող չնկատել Հովհաննես Կալիվիտեսի (Խրճիթակյաց) հայ ավանդույթյանն ավելի հայտնի է «Խղակեաց», «հիւղաբնակ» ձևով) վարքում հանդիպող Ակիմիտ կամ Անհանգստից վանքի հիշատակումը⁶: Վարքի ծանոթագրություններում, վիճարկելով Ժան Բոլլանդի թվագրումը (Ճիզվիտ գիտնականը վարքի իրադարձությունները վերագրում էր Թեոդոս Փոքր կայսեր վերջին տարիներին, կամ նույնիսկ Մարկիանոսի գահակալության սկզբին, որպես *terminus post quem* ընդունելով վանքի հիմնադրման մասին Նիկեիորոս Կալլիստոսի հաղորդած տվյալը՝ ոչ շուտ քան 425 թ.), Մ.Ավգերյանը գրում է.

«... և սակայն ըստ մեզ յայն ամս արդեն հանդիսացեալ էր կարգն կամ վանքն այն, մինչև զանուն պատույ սրբոյն Մեսրոպայ՝ նովին կոչմամբ մեծաբեցին յոյնք. ապա գոնէ քան ամօք յառաջ գոյր այն ուխտ, և այնպէս անկանի յաւուրս Արկադեայ հօր փոքուն Թեոդոսի»⁷:

Վանքի պատմության վերաբերյալ Մ. Ավգերյանը սխալվել է: XX դարի հետազոտությունները՝ արված աղբյուրների շատ ավելի լայն հենքի վրա, քան եղել էր Մխիթարյան հոր տրամադրության տակ, ցույց տվեցին, որ «տքնող սաղմոսերգությունամբ» պարապող մենակյացների շարժման առաջնորդ Ալեքսանդրոսը մայրաքաղաքում որևէ վանք չի հիմնել, այլ իր աշակերտներով հանդերձ բնակվում էր սբ. Մենասի եկեղեցու շուրջ, իսկ վտարվելուց հետո ի վերջո ապաստան է գտել Սև ծովի ափին՝ Գոմոն վանքում (որը, թերևս, ինքն էլ հիմնել է, սակայն աղբյուրներն անստույգ են), որտեղ և վախճանվել է մոտավորապես 430 թ.: Նրա աշակերտ Հովհաննեսի⁸ հիմնած հաստատությունն ըստ հիմնադրման վայրի՝ կոչվում էր Իրինիոն, և միայն շատ ավելի ուշ, կամ Հովհաննեսի վերջին տարիներին, կամ էլ վանքի երկրորդ առաջնորդ Մարկելլոսի օրոք, այն սկսել են անվանել μονὴ τῶν Ἀκοιμήτων («աննինջնե-

ագիմիդիս. որ թարգմանի աննինջ կամ տքնող կամ անհանգիստ. զի զայս անուն տային երևելի վարդապետաց անձանձիր պարապեցոց ի քաղաքս յայն քանի, որպէս և հսկող մի անձանց, որպիսի էին բնակեալքն ի վանս անհանգստից, յորոց էլին արք երևելիք իմաստութեամբ և սրբութեամբ», *Կիակատար վարք և վկայաբանությունք սրբոց, որ կան ի հին Տօնացոյցի եկեղեցու Հայաստանեայց, յօրինեալ վաւերական բանիմ հաղորդուրաց մեռոց և այլոց ազգաց, հանդերձ ծանօթութեամբք ի հ. Մկրտիչ վարդապետէ Ազգերեան, հ. Ե, Վենետիկ, 1813, էջ 300*:

⁶ «Հանդիպեցաւ նմա միայնակեաց մի յանհանգստից վանացն՝ որ և ագիմիդոս կամ ակիմիտ կոչի» (Վարք երանելոյն Յովհաննու որդոյ Եստրոպիոսի կամաւոր աղբատելոյն վասն Քրիստոսի), *Կիակատար վարք, հ. Թ, Վենետիկ, 1813, էջ 371, տե՛ս նաև «Հանդիպեցաւ նմա միայնակեաց մի յանհանգստից վանացն՝ որ կոչի ակիմիտ»*, Վարք Սրբոց Հարանց և քաղաքավարությունք նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց, հ. Ա, Վենետիկ, 1855, էջ 127:

⁷ *Կիակատար վարք, հ. Թ, էջ 387*:

⁸ Որին չի կարելի նույնացնել վերոհիշյալ սրբի հետ, ինչը ժամանակին սխալմամբ արել է տողերիս հեղինակը (տե՛ս Օ. Վարդագարյան, «Ակումիտ», էջ 460):

րի մենաստան»)⁹: Ընդ որում բնավ պարզ չէ, թե ում է վերաբերում այդ անվանումը՝ վանականների՞ն, երկնային զորությունների՞ն՝ հրեշտակներին, որոնց փորձում էին նմանվել «աննինջ սաղմոսասացները», թե՞ երկուսինն էլ միասին¹⁰: Խնդիրն այն է, որ ճգնակյացների այդ տեսակին վերաբերող աղբյուրներում նրանք՝ շարժման հիմնադիրն ներառյալ, երբեք բացահայտ *ἀκοίμητος* մակդիրով չեն բնորոշվում: Ավելին, այդ մակդիրը պատկանում էր բարձր ոճին և շեշտված պոետիկ երանգ ուներ (այսինքն՝ առօրյա և, առավել ևս՝ պաշտոնական խոսքում քիչ սպասելի էր) և առանձին իրական անձանց պարագայում առհասարակ չի կիրառվել¹¹:

⁹ Գրականության տեսությունը տե՛ս **G. Dagron**, “La vie ancienne de saint Marcel l’Acémète,” *Analecta Bollandiana*, t. 86 (1968), fasc. 1-2, p. 271, n.1: Մարկելլուսին նվիրված տաղում այդ անվանումը ամփիչապես կապվում է նրա գործունեության հետ. «...Ամեն մի երկրից և լեզվից և ծովից / Հոս հավաքելով, / Որի հետ հոգևոր գովասանքներ / Կատարելով աննինջորեն, / Անուն ես տվել / Հոսիդոսին և Աննինջ» (Ἐκ πάσης γῆς καὶ γλώσσης καὶ θαλάσσης / συνήθροισας τὸ ποίμνιον / μεθ’ ὧν αἰνέσεις πνευματικὰς / ἐκτελέσας ἀκοιμήτως, / ἐπὺνυμίαν δέδωκας / τῇ ποιμνῇ σου Ἀκοιμήτον, “*Canones Decembris*” 29, canon 53, oda 3, in: **A. Kominis, G. Schirò**, *Analecta hymnica graeca e codicibus eruta Italiae inferioris*, vol. 4, Rome: Istituto di Studi Bizantini e Neoellenici, Università di Roma, 1976):

¹⁰ Տե՛ս Մարկելլուսի վարձում Ալեքսանդրոսի մասին. ծց... *πρῶτος ἔθηκεν τύπον ἀπαύστως ὑμνεῖν τὸν θεὸν διαδοχῆ τῶν λειτουργούντων, ἀγγελικὴν πολιτείαν ἐπὶ γῆς τοῖς ἀνθρώποις παραδούς* [«որն ... առաջինն էր, ով տվեց Աստծուն անդադար օրհնեղբուն օրհնակը, ծիսակատարների հերթափոխությանը, երկրի վրա շնորհելով մարդկանց հրեշտակային վարքի [օրհնակը]»], **G. Dagron**, *La vie ancienne...*, p. 290: Տե՛ս նաև Պետրոսոս Կիտացու նամակի սկիզբը. «Մարկելլուսին՝ Աննանգուստից վանահորը. Փայլում է Աստվածպաշտությանը Ձեր գովարժան կյանքը, երկրի վրա ցուցադրելով հրեշտակային վարքի տիպարը» Մարկելլոս արքիմանդրիտի տ՛ն Ակոյմիտոն. *Λαμπρύνει μὲν ὑμῶν τὴν θεοσεβείαν ὁ ἀξιώτατος βίος, τῆς τῶν ἀγγέλων πολιτείας ἐν τῇ γῆ τὴν εἰκόνα δεικνύς* (Theodoretus Cyrenensis Epistula 142 (Collectio Symondiana), in: **Théodoret de Cyr**, *Correspondance*, III, éd., **Y. Azéma**, Sources chrétiennes, 111, Paris: Éditions du Cerf, 1965): «Հրեշտակային վարք» արտահայտությունը չափազանց տարածված է հզանվորական և վանական գրականության մեջ, և դրան կարելի է հատուկ ուղե նշանակություն շվերագրել, եթե կարևոր աղբյուրներից մեկը չվկայեր, որ Ալեքսանդրոսի կարգած աննինջ սաղմոսագրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ երկնային զորությունների անդադար Աստվածօրհնության *գիտակցված* նմանակումը. «...իմ Փրկչին նաև երկրի վրա փառաբանեցին հրեշտակները. մենք էլ հրեշտակների հետ միասին փառաբանեմք Նրան: Եվ կարգեց ... նաև սուրբ հրեշտակների օրհնեղբունները՝ գիշեր և ցերեկ յոթանասուն յոթ անգամ, այն է՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» » (Ղկ. Բ 14) «τὸν σωτήρᾶ μου οἱ ἄγγελοι καὶ ἐπὶ γῆς ἐδόξασαν· καὶ ἡμεῖς οὖν σὺν τοῖς ἀγγέλοις δοξάσωμεν. καὶ ἐποίει... καὶ τὴν ὑμολογίαν τῶν ἁγίων ἀγγέλων νυκτὸς καὶ ἡμέρας ἐβδομηκοντάκις ἐπτά ἥτις ἐστίν· “Δόξα ἐν ὑψίστοις θεῶ καὶ ἐπὶ γῆς εἰρήνη, ἐν ἀνθρώποις εὐδοκία” (Septuaginta, Odae, 14:1-3, cf. Lc 2:14), “Vita Alexandri,” 30, in **E. de Stoop**, *Vie d’Alexandre l’Acémète* (Patrologia Orientalis 6, fasc. 5), Paris: Firmin-Didot et Compagnie, 1911 (repr. 1971):

¹¹ **Օ. Վարդապարտյան**, «Ակիմիտ», էջ 457-460. այս եզրակացությունը հաստատվում է նաև «Հունարեն Լեզվի Գանձարան» քվային շտեմարանի (Thesaurus Linguae Graecae© Digi-

«Վարք Մաշտոցի»-ի քննական ուսումնասիրության մեջ զբաղվող բանասերները քաջ գիտակցել են Մ.Ավգերյանի առաջարկած նույնացումից բխող դժվարությունները¹²: Փորձեր են արվել պարզապես վերացնել խնդիրը, ենթադրելով մեզ հասած գրչագրերի նախօրինակի պակասավոր լինելը: Հստ այդ ենթադրության՝ ինչ-որ պահի գրիչը իրար է կցել մինչ այդ անմիջական կապ չունեցող հատվածներ, ինչի հետևանքով խախտվել է շարադրանքի ընթացքը¹³: Բնագրագիտական տեսակետից սա թույլ լուծում է, քանի որ մեզ հասած գրչագրերում սույն տեղիի վնասված լինելու որևէ այլ նշան չկա. բացի այդ՝ պետք է հիշել, որ ակումբա-ակի(ւ)միա նույնացումն ինքնին սոսկ ենթադրություն է:

Կարելի էր նաև փորձել գտնել որևէ պատշաճ սրբագրություն: Տողերիս հեղինակի երբեմնի ենթադրության մեջ, Կորյունը փորձել է վերարտադրել հունարեն հրովարտակի բնագիրը, որտեղ «ակումբա անուն» հատվածի փոխարեն սկզբից եղել էր հունարեն ասկումբոն՝ ἄσκούμενον բառը: Դրանով արքունիքը և Ատտիկոս պատրիարքը ճանաչում էին Մաշտոցին իբրև «ճգնողի», ինչն իր ազդեցությունը արձագանքն է գտնել նաև Կեղծ Կորյունի¹⁴ և Մովսես Խորենացու (Գ, 57) բնագրերի այն հատվածներում, որտեղ Ատտիկոսը Մաշտոցին ձեռնադրում է «եկղեսիաստիկոս»¹⁵: Այս ճանաչումը Մաշտոցին տալիս էր *persona grata*-ի կարգավիճակ և ազատում ազանդավոր կամ լրտես լինելու կասկածանքներից: Բայց խնդիրն այն է, որ կայսերական հրովարտակը կամ ուղերձը պաշտոնական վավերագիր է, իրավական ակտ, որում ամեն ինչ պիտի ձևակերպվեր պարզ ու հստակ, և այդպիսի լայնիմաստ բնորոշում դժվար թե կիրառված լիներ: Բացի այդ, ինչո՞ւ Կորյունն անթարգման պիտի թողներ մի բառ, որի համարժեքը՝ «ճգնաւոր», «կրօնաւոր», առկա էր հայերենում:

tal Library. *Ed. Maria C. Pantelia*. University of California, Irvine. <http://stephanus.tlg.uci.edu> (accessed Mar. 4, 2017), այսուհետ TLG) վերջին տարբերակով կատարված վիճակագրությամբ: Միակ բացառությունը Հովհաննես Ալիլիցեսի պատմության մեջ մեջբերված էպիգրամն է, որում խնդրվում է «պահպանել տրոսի թագավորի (իմա՝ Հուստինիանոս Ա-ի) իշխանությունը» *κοιρανίην βασιλῆος ἀκοιμήτοιο φυλάξοι* (Vita Basilii, 41, 34: *Ioannis Scylitzae Synopsis historiarum*, ed. J. Thurn, (Corpus Fontium Historiae Byzantinae. Series Berolinensis 5), Berlin: De Gruyter, 1973): Սակայն դժվար չէ նկատել, որ մակրոի այսպիսի գործածությունը թելադրված է տաղաչափությամբ՝ արձակի պարագայում այն կվերաբերեր «իշխանությանը»:

¹² Գրականության տեսությունը տե՛ս G.Winkler, S. 331-332:

¹³ Հ.Պետրեան, Հայկական. «Ակումբա անուն կոչելոյ», ՀՄ, 1968, էջ 176: Այս իր ենթադրությունը Հ. Պետրեյանը միահյուսում է Հ. Թորոսյանի վարկածին (տե՛ս ստորև):

¹⁴ Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի, մերոյ թարգմանչի, Վենետիկ, 1894, էջ 27:

¹⁵ Օ. Վարդապարյան, «Ակումբա», էջ 464-465. ἄσκούμενος դերբայի հայցական հոլովը, «կոչել» բայի ուղիղ խնդիրն է:

Համատեքստին մի շատ ավելի հարմար լուծում ժամանակին առաջարկել է հ. Հովհաննես Թորոսյանը: Նախ և առաջ նա ձեռքագատվել է Մ.Ավգերյանի հուշած «եկեղեսիաստիկոս» (Ἐκκλησιαστικός) և «ակումիտ» բառերի ենթադրյալ նույնիմաստությունից¹⁶. հիմնվելով Կեղծ-Կորյունի՝ առաջին հայացքից աղավաղված եկեղեսիկոսի ընթերցվածի վրա, Հ.Թորոսյանը մեկնաբանում է այն իբրև «եկեղեսիկոս» (Ἐκκλησιέκδικος)՝ «եկեղեցական պաշտպան»¹⁷: Այս դեպքում ինչ-որ չափով իմաստավորվում է նաև մինչ այդ անհասկանալի մնացող ձեռնագրությունը, քանի որ ձեռնագրում են ոչ թե պարզապես «եկեղեցական», այլ որոշակի եկեղեցական պաշտոնի՝ սարկավագի, քահանայի, ևն¹⁸: Ապա և «ակումիտ»-ը համարելով բնագրի աղավաղում, Թորոսյանը, հետագա դեպքերի ընթացքից ելնելով, ցանկանում է հատվածին վերագրել «յարքունի դուռն առաքել (յղել, յուղարկել)» կամ նման մի իմաստ¹⁹: Սակայն եթե նույնիսկ ընդունենք, որ սկզբնական ընթերցվածը բնագրի վնասված լինելու պատճառով անճանաչելի է դարձել, տարօրինակ է թվում, որ հետագա գրիչը, փորձելով վերականգնել տեղի իմաստը, այն լրացրել է ևս մի անհասկանալի բառով: Հիշենք կրկին, որ ակումիտ և ակիւմիտ բառերի նույնությունը կարող է նաև թվացյալ լինել, մանավանդ որ վերջինը հայ հեղինակներին առհասարակ ծանոթ չէր՝ Հովհաննես Խրճիթակյացի վարքը դրա գործածման միակ վկայությունն է: Այնուամենայնիվ կարծում ենք՝ լուծում կարելի է գտնել՝ շարժվելով հենց Թորոսյանի ցույց տված ուղղությամբ:

Արքունական կարգադրությամբ Մաշտոցն ուղևորվում է Կոնստանդնուպոլիս՝ կայսերն ու պատրիարքին ներկայանալու: Մայրաքաղաքում նա հայտնվում է Ջատկի տոնին՝ երբ արքունիքում մեծ ընդունելություններ խնջույքներ էին կազմակերպվում: Այդպիսի ընդունելությունը կոչվում էր

¹⁶ ՆԲՀԼ, ակումիտ, եկեղեսիաստիկոս բառաձուլվածները:

¹⁷ **Յ. Թորոսյան**, «Քանի մը խնդրական կետեր Կորեան գրքին մէջ», *Բազմավէպ*, 1932, էջ 8-9, հղում է **J. Pargoire**, *L'église Byzantine de 527 à 847*, éd. **J. Gabalda**, Paris: Librairie Victor Lecoffre, 1923, p. 65: Պաշտոնի էությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Պաշտպան եկեղեցական իրաւանց և կրօնի վարդապետութեան, հսկող եկեղեցական գանձուց և վանքերու կարգապահութեան», ինչպես նաև «Դատաւոր խաղաղութեան կամ պաշտութեան կրօնական վեներու և խնդիրներու մէջ», **Յ. Թորոսյան**, նոյն տեղում, էջ 9:

¹⁸ Թեպետ ձեռնագրությունն այս դեպքում ևս պարտադիր չէր. նման իրավապաշտպաններ կարող էին վարձվել կամ նշանակվել եկեղեցու կողմից ինչպես հոգևորական դասից, այնպես էլ աշխարհականներից (տե՛ս *Late Antiquity: A Guide to the Postclassical World*, eds. **G.W. Bowersock, P.R.L. Brown, O. Grabar**, Harvard UP, 2000, pp. 405-406, s.v. “Defensor ecclesiae”): Ձեռնագրության մասին պատկերացումը, թերևս, սկզբնական բնագրի վերաիմաստավորման արդյունք է. քանի որ որևէ այլ տեղ Մաշտոցի հոգևորական լինելու մասին չի խոսվում: Այն պահից, երբ *եկեղեսիկոսիկոս*-ն ընկալվել է իբրև *եկեղեսիաստիկոս*, նշանակումը (*կարգող*) կարող էր վերածվել ձեռնագրության:

¹⁹ **Յ. Թորոսյան**, «Քանի մը խնդրական կետեր Կորեան գրքին մէջ», *Բազմավէպ*, 1931, էջ 471-473:

κλιτόριον (var. κλητόριον) կամ κλήσις: եթե Անատոլիսի ստացած ուղերձը նման տոնախմբության ինչ-որ մի հրավեր էր, ապա կարելի է փորձել ճշտել, թե այդ հրավերը ինչպես կարող էր ձևակերպված լիներ:

Պատասխանը կարելի է գտնել կայսերական արարողակարգի ձեռնարկներում, հատկապես, IX դարի պաշտոնյա Ֆիլոթեոսի «Կլետորոլոգիոն» կոչվող ուղեցույցում²⁰, որը հետագայում մաս է կազմել Կոստանդինոս Ծիրանածնի «Արքունիքի արարողակարգի մասին»²¹ աշխատության: Պարզվում է, որ նման ընդունելություններ կազմակերպվում էին մի սրահում²², որը կոչվել է τρικλινον τῶν δεκαεννέα (10') ἀκ(κ)ουβίτων²³ «Տասնինը բազմոցների սրահ», որտեղ հյուրերը, անտիկ սովորույթի համաձայն, ընկողմանում էին, այլ ոչ նստում, յուրաքանչյուր սեղանի մոտ՝ տասներկու հոգի²⁴: Ընդ որում ներս հրավիրելու, ներկայացնելու, հյուրերին այս կամ այն սեղանի շուրջ տեղավորելու (հաշվի առնելով կայսերական սեղանին ավելի մոտ կամ հեռու գտնվելը, սեղանի շուրջ զբաղեցրած տեղն իսկ) և, ի վերջո՝ ընդունելության ավարտին սեղանից հետ կանչվելու կարգը, ինչպես նաև մնացած գործողությունները (զգեստափոխությունը, ընծաների հանձնումն ու ընդունումը և այլն) թելադրված էին հրավիրվածների պատիվների, պաշտոնների և կոչումների բարդագույն համակարգով: Այստեղից պետք է բխեցնել «վայելուչ մեծարանօք» բանաձևը՝ Մաշտոցի այցելությունը, հավանաբար, պետք է կազմակերպված լիներ արքունական ծիսակարգի որոշակի կետին համապատասխան: Ֆիլոթեոսի ուղեցույցում գտնում ենք նման մի արտահայտություն, որը կարծես թե հաստատում է մեր այս ենթադրությունը՝ այսպես, վանահայրերին ներս են հրավիրում և տեղավորում κατὰ τὴν οἰκείαν τάξιν καὶ ἀρμόζουσας δόξας («ընդունված կարգով և պատշաճ պատվով»)՝ Ֆիլոթեոսի ժամանակ Զատկական ընդուն-

²⁰ Հեղինակի և ձեռնարկի մասին տե՛ս N. Oikonomides, *Les listes de préséance byzantines des IXe et Xe siècles*, Paris, 1972, pp. 65-81:

²¹ Հղումների համար օգտագործում ենք Ի. Ռայսկեի հրատարակած ամբողջական բնագիրը. *Constantini Porphyrogeniti De cerimoniis aulae byzantinae*, ed. **I.I.Reiske**, Bonn, 1829 (այսուհետ՝ Reiske):

²² Մեծ Պալատի շինություններից մեկն էր, որն, ըստ Գեորգիոս Կողիմոսի՝ պահպանվել էր դեռևս Կոստանդինոս Մեծի ժամանակներից, տե՛ս Codin., 18B, **Georgii Codini Excerpta de antiquitatibus Constantinopolitanis**, ex recognitione **I.Bekkeri** (Corpus Scriptorum Historiae Byzantinae, v.15), Bonn, 1843: Դրա քերևս ամենավաղ հիշատակումն աղբյուրներում թվագրվում է 491 թ. (*The Cambridge Ancient History*, ed. **A.Cameron, B.Ward-Perkins, M.Whitby**, vol. XIV, Cambridge UP, 2000, p.140):

²³ Զեռագրերում ուղղագրությունն անկայուն է. Reiske-ն բերում է մերթ մեկ, մեկ երկու և երեք Oikonomides-ը միշտ երկուսով:

²⁴ Մրահի նշանակության մասին նախահուստինիանոսյան դարերում և Հուստինիանոս Ա-ի ժամանակ տե՛ս **Ch. Diehl**, *Justinien et la civilisation byzantine au VIe siècle*, Paris, 1901, p. 83: Մրահի նկարագրությունը տե՛ս **N. Oikonomides**, p. 164-165, n. 136:

²⁵ Reiske, 747; Oikonomides, 175, 22: Ն. Իկոնոմիդիսն այս տեղին հասկանում է իբրև «ըստ յուրաֆանյութի աստիճանի և յուրաֆանյութին հասնող պատվի» «selon le rang de

նելությունը, ի տարբերություն Սուրբ Ծննդյան օրերի՝ անցնում էր Քրիստոսրիկ-լինոսում (Ոսկե սրահում), սակայն վերջինս կառուցվել է VI դարից ոչ շուտ՝²⁶, այնպես որ Մաշտոցին պետք է ընդունեին հենց «Ճասնինը բազմոցների սրահում»:

Ֆրիոթեոսի մի քանի կիրառություններից կարելի է եզրակացնել, որ գոյություն է ունեցել հավաքական տձ ակուբիտա («բազմոցներ») արտահայտությունը, որը գործածվում էր վերոհիշյալ սրահում կազմակերպվող ընդունելություն-խնջույքների իմաստով. «և այս օրվանից (այսինքն՝ Սուրբ Ծնունդից) պետք է սկսել ակուբիտաների ընդունելությունը»՝ ավտոտայտի օրը՝ կլիսիս տելեթոս տօն ակուբիտօն²⁷, «նույն ակուբիտաների երրորդ օրը»՝ օբի դե տիս տրիտիս օմեթօս տօն ակուբիտօն²⁸, «նույն ակուբիտաների յոթերորդ օրը»՝ օբի դե տիս օթթօմիս օմեթօս տօն ակուբիտօն²⁹, «նույն ակուբիտաների ութերորդ օրը»՝ օբի դե տիս օղթօմիս օմեթօս տօն ակուբիտօն³⁰, ևն: Այսինքն, հոշակավոր սրահում կազմակերպվող տոնախմբություններին կանչելու համար բավական էր հրավիրել «ակուբիտաների» օբի տօն ակուբիտօն³¹ կամ օբի տօն ակուբիտօն:

Այժմ փորձենք տեսնել, թե խնդրո առարկա տողը հոշակարեն ինչպես կհնչեր: «Տրափան էլանիտ», ունենք նման «ել հրաման» կապակցությունը Ղուկասի աղետարանում (Ղկ. Բ 1), որին հոշակարեն բնագրում համապատասխանում է էջիլթոն թօլգա: Սակայն թօլգա-ի փոխարեն, որը նշանակում է «պաշտոնական որոշում, ցուցում», այստեղ աղելի հարմար կլիներ կելեսուսի՝ «հրաման» բառը, որը արարողակարգով պահանջվող կայսերական հրովարտակի կանոնավոր սկիզբն էր (հմթ. կելեսուսի օկ տօն փիլօղրիստօն թեթօթօն փրօթ օ թեթնա՝ «Քրիստոսասեր տիրակալներին՝ այսինչ անձին [ուղղված] հրաման»³²):

«վայելուչ մեծարանալի»՝ կատձ արթօջօսսան թօթօն,

chacun et l'honneur qui lui convient" (Oikonomides, 174): Սակայն ինչպիսի՞ր աստիճաններով պետք է իրարից տարբերվեին վանահայրերը:

²⁶ Տե՛ս **M. Featherstone**, "The Chrysotriklinos as Seen through *De Cerimoniis*", in: *Zwischen Polis, Provinz und Peripherie. Beiträge zur byzantinischen Kulturgeschichte* [= *Mainzer Veröffentlichungen zur Byzantinistik* 7], ed. **L.Hoffmann**, Wiesbaden, 2005, p. 845, n.1:

²⁷ Reiske, 749; Oikonomides, 177, 21.

²⁸ Reiske, 745; Oikonomides, 173, 5.

²⁹ Reiske, 749; Oikonomides, 179, 5.

³⁰ Reiske, 750; Oikonomides, 179, 20.

³¹ Հմթմ. օբի դե տօն օլթօմիս ակուբիտօն թեթ օմաթ օկաթեթ փրօթ օ թեթնա թրեթնեթրի...՝ «հոկ [աղատ] մնացած բազմոցներին պիտի հրավիրենք Մեծ Պալատի երեցներին...», Reiske, 755; Oikonomides, 185, 26:

³² Reiske, 687, 688, 690, 691.

«Պտուրն»։ այս մակդիրը ևս կասկածելի է թվացել որոշ ուսումնասիրողների³³։ Կասկածը թերևս արդարացված կլիներ, եթե այս բառը համապատասխաններ միայն հունարեն ἄγιος բառին։ Բայց դա միակ հնարավոր համարժեքը չէ. բազմիցս հայերեն բառը համապատասխանում է ὁσιος մակդրին³⁴, որը նշանակում է պարզապես «աստվածապաշտ» և միանգամայն հարիր է հնչում աշակերտի և մտերիմ աշխատակցի շուրթերում³⁵։

«Ակումիա [անուն]»։ ակումիա-ը ակումիա-ի հետ վստահորեն նույնացնելու համար պետք է դիտել վերջինիս պատմությունը։ Բառի սկզբնաձևը ἄκκουβιτον (բազմոց) առաջացել է լատիներեն accubitum նույնիմաստ գոյականից, որն իր հերթին ածանցված է accumbo («պռուկել ինչ-որ մեկի կողքին (խնջուքի ժամանակ), ընկողմանել») բայից։ Փոխառվելով, հունարենում այն ստացավ ἄκουμβω/ ἄκουμβίζω/ ἔπακουμβίζω ձևեր³⁶։ դրա ազդեցությամբ գոյականը նույնպես երբեմն գրվում էր նաև ἄκουμβιτον (ակումբիտոն)³⁷։ Բնագրերում այդ ձևը շատ տարածված չէ՝ «Հունարեն լեզվի գանձարան»-ը (TLG) ցույց է տալիս ընդամենը 6 գործածություն³⁸, բայց պատկառելի ժամանակային ընդգրկումով մ.թ. III-ից մինչև XIV դար։ Սա հենց այն

³³ G.Winkler, S. 330-331.

³⁴ Միայն Սաղմունների քարգանձության մեջ՝ 20 անգամ։

³⁵ ὁσιος և ἄγιος բառերի գործածության մասին տե՛ս **Хр.М.Лопарев**, *Греческие жития святых VIII и IX веков. Опыт научной классификации памятников агиографии с обзором их с точки зрения исторической и историко-литературной*. Часть I: Современные жития, Петроград, 1914, с. 16-17:

³⁶ Ավանդված է ավելի քան 400 գործածություն, հիմնականում վանական վավերագրերում։

³⁷ XIII դարի Կեղծ-Ջոնարասի բառարանը անմիջապես բխեցնում է մեկը մյուսից. Ἄκουμβω. τὸ ἀναπίπτω παρὰ Ῥωμαίους· ὅθεν καὶ ἄκουμβιτα («Ակումբոն»։ հոռոտացիների մոտ «պռուկել», որտեղից և «ակումբիտա») բազմոցներ) (**Iohannis Zonarae Lexicon ex tribus codicibus manuscriptis**, ed. **J.A.H. Tittmann**, vol.1., Leipzig: Crusius, 1808 (repr. Amsterdam: Hakkert, 1967), p. 114, l. 28)։ Հետաքրքիր է, որ բանասերն էլ է ածանցյալ բառը բերում հոգնակի թվով։ Այս նույն բացատրությունը XIV դարում կրկնում է աստվածաբան Մատթեոս Վլաստարիսը (*Collectio alphabetica*, 3.19: **Γ.Α. Ράλλης, Μ. Πότλῆς**, *Σύνταγμα τῶν θεῶν καὶ ἱερῶν κανόνων τῶν τε ἀγίων καὶ πανευφύμων ἀποστόλων, καὶ τῶν ἱερῶν οἰκουμενικῶν καὶ τοπικῶν συνόδων, καὶ τῶν κατὰ μέρος ἀγίων πατέρων*, Ἀθήνα: Αὐγή, 1859)։ Իրականում, սակայն, լատիներենում գոյականը կազմված է բայի ոչ թե ներկայի accumb-, այլ հարակատար դերբայի accub- հիմքից, և ճիշտ ձևը կլիներ ἄκκουβιτον, և ոչ ἄκουμβιτον։ Բայց վերջինիս տարածմանը նպաստեցին, հավանաբար, հունարենի զարգացման ներքին գործոնները։ Արդեն վաղ միջնադարում հունարենի պայթյալանները վերածվեցին շիականների, ուստի և ἄκκουβιτον-ի բառամիջի «բ»-ն կարդացվում էր «վ»։ Բացառություն էին կազմում միայն այն դեպքեր, երբ պայթյալանին նախորդում էր որևէ ուղղակի, այսինքն՝ ἄκουμβιτον բառաձևում շարունակում էին կարդալ «մբ» կապակցությունը, որն, իր հերթին, սովորական «բ»-ի անհետացման պայմաններում հետզհետե՛ սկսեց փոխարինել նրան, այսինքն՝ ἄκουμβιτον գրությամբ բառը պահպանեց իր սկզբնական acubiton հնչողությունը։ Պարզ է, որ բառը հայերեն է փոխառվել մինչև այս վերջին փոփոխությունը։

³⁸ Թեև ձեռագրային վկայություններ կարող են և ավելի շատ լինել։

ձևն է, որը դասական հայերենում տվեց ակումբ բառը³⁹: Հետաքրքիր է, որ V դարի հայ հեղինակների բնագրերում այս բառը ևս հազվագեղ է, այն ունի մեկական գործածություն Բուզանդի և Եղիշեի պատմական երկերում «սեղան», «ճաշկերույթ» իմաստով⁴⁰: Իսկ հետագա հեղինակների մոտ, ինչպես և բարբառներում («ագում/ ագամ/ ագան (օր, ժողովուրդ ևն)» ձևով⁴¹) այս բառն ունի փոխաբերական իմաստ՝ «հանդես, տոնախմբություն»⁴²: Հավանաբար այստեղ է, որ պահպանվել է բյուզանդական արքունիքի շքեղ ընդունելությունների հիշատակը: Եթե այդպես է, «...հրաման ելանէր՝ վայելույ մեծարանամ զՍուրբն՝ Ակումբա անուն կոչելոյ» հատվածի Ակումբա ընթերցումը կարելի էր պարզապես սրբագրել յԱկումբսն: Բառի վնասված լինելու պատճառով սկզբի յ-ն ընկել է, իսկ բսն խումբը՝ կարդացվել իբրև իա: Կոչել («կանչել» իմաստով) բայը ևս վերաիմաստավորվել է և ընկալվել «անվանել» նշանակությամբ: Այս իմաստն ավելի հստակ արտահայտելու համար ավելացվել է անուն բառը՝ թերևս նախընթաց տողերի ազդեցությամբ. «որ անուանեալ կոչէր Անատողիս», «որում անուն Թէոդոս կոչէին»: Կարելի է նաև ենթադրել, որ վարքագիրը փորձել է վերարտադրել տառադարձել հենց հունարեն բառն իր հոգնակի սեռականի ձևով ἐπὶ τῶν ἀκουμ(β)ίτων, արդեն անկայուն β հնչյունով յԱկումբաան⁴³. այն հետագայում նույնպես կորցրել է յ նախդիրը, իսկ ան խումբն անշատվելով վերածվել ա(ն)ուն-ի:

Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա Վարժի սույն տեղիում (սրբագրված *«...հրաման ելանէր՝ վայելույ մեծարանամ զՍուրբն՝ յԱկումբսն / յԱկումբաան կոչելոյ») կրկին հանդիպում ենք հունարեն ինչ-որ մի բնագրի հետքի⁴⁴, որն ամբողջությամբ հնչել է մոտավորապես այսպես.

³⁹ Հր. Աճառյանը (Հայերէն արմատական բառարան, «ակումբ» բառահոդվածը) հիմնվում է Խ. Ուղուրիկյանի մի գեղեցիկ ակնարկի վրա, որում հեղինակը բացատրում է *ակումբ* բառի ստուգաբանությունը՝ ելնելով լատիներեն գոյականի և բայի ձևից և նշանակությունից (Խ. Ուղուրիկյան, «Նոակմբանոց թէ՛ եռակմբանոց», *Ամենուն տարեցոյցը*, Կ.Պոլիս, 1909, էջ 226-228): Սակայն հայերենում վաղմիջնադարյան փոխառությունն անմիջականորեն լատիներենից ֆիչ հավանական է, և այն չպետք է նշանակել «հանդիսավոր ժողով»:

⁴⁰ Հայկական Համաբարբառ (այսուհետ՝ Համաբարբառ), հ. 3Ա. (Փավստոս Բուզանդ), Երևան, 1974, էջ 12. «ի նորա ակումբի դարմանէին բազմեալք»: Համաբարբառ, հ. 5Ա. (Եղիշէ), Երևան, 1974, էջ 8. «բոլորեցաւ ակումբ բազմականին և հաղորդեցան ամենայնն ի կերակուրն»:

⁴¹ Տե՛ս նԲՁԼ և Հր. Աճառյան, Հայերէնի արմատական բառարան, Երևան, 1926, «ակումբ» բառահոդվածները:

⁴² Տե՛ս Համաբարբառ, հ. 8 (Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան), Երևան, 1975, էջ 11. «բազմեալ իմ ի գլուխ ակմբից դասու այնք երախանաց», նԲՁԼ, ակումբ (էջ 27):

⁴³ Հետաքրքիր է, որ հայ բարբառային ձևերի մեծամասնությունը, հին վրացերենի յշտո (ակումբ) «բազմոց, նստարան», տե՛ս Հր. Աճառյան, *Նույն տեղում*) բառը նույնպես կորցրել է «բ» բաղաձայնը: Թերևս Կորյունի բնագրի «ակումբա»-ն էլ, առանց «բ»-ի, բարբառային տարբերակ է:

⁴⁴ Տե՛ս Օ.Վարդապարտյան, «Վարժ Մաշտոցի» երկու սրբագրումները և Ղազար Փարպեցու վկայությունը», *ԲՄ*, 8, Երևան, 2008, էջ 41-57:

*ή κέλευσις ἐξῆλθεν κατὰ τὴν ἀρμόζουσαν δόξαν τὸν ὄσιον ἐπὶ τῶν ἀκουμβίτων/ εἰς τὰ ἀκούβιτα καλέσσα⁴⁵/καλέσαι:

Սա Ի՞նչ բնագիր էր և Ի՞նչ դեր է խաղացել Վարդի կազմավորման ընթացքում, առայժմ անհայտ է: Սակայն ևս մեկ անգամ հունարեն հիմքի վերահանգնումը թույլ է տալիս, համարյա զերծ մնալով սրբագրումներից, վերահանգնել նաև բնագրի ավելի ընդունելի իմաստը:

ОЛЬГА ВАРДАЗАРЯН КАК МАШТОЦ СТАЛ АКМИТОМ

Ключевые слова: Корюн, текстология, Константинополь, Феодосий Младший, патриарх Аттик, монастырь акимитов (“неусыпающих”), церковный защитник (экклесиэдик, *defensor ecclesiae*), “Триклиний 19-и лож”, византийский придворный церемониал, “аккумб”, этимология.

Согласно пространной редакции “Жития Маштоца”, деятельность Маштоца в армянских землях, принадлежавших Византии, началась со странного распоряжения имперской канцелярии “с подобающими почестями именовать святого *акумитом*” (Корюн, гл. 16). Существует давняя филологическая традиция, отождествляющая последнее слово с названием монастыря Акимитов (“неусыпающих”); между тем Маштоц не мог так именоваться, во-первых, потому что монастыря с таким названием в его время не существовало, а во-вторых, потому что данный эпитет, принадлежащий к высокому стилю (следовательно, неуместный в повседневной или канцелярской речи), никогда не прилагался к конкретным людям, – даже к тем, кто имел отношение к упомянутому монастырю.

Вследствие загадочного распоряжения Маштоц отправляется в столицу и оказывается там в дни празднования Пасхи, когда при дворе было принято устраивать торжественные приемы-пиры. В V веке они должны были проходить в одной из древнейших построек Большого дворца, в так называемом “Триклинии 19 лож”, в котором гости, по античному обыкновению, возлежали, а не сидели. Анализ упоминаний этого триклиния в руководстве по дворцовому церемониалу IX века, “Клеторологии” Филофея, показывает, что собирательное “ложи” (*аккубита*) использовалось для обозначения самих

⁴⁵ Անցյալ կառարյալի ներգործական դերբայ (participium aoristi activi) համաձայնեցված կέλευσις («հրավան») գոյականի հետ:

приемов; следовательно, приглашение на подобный прием могло звучать как приглашение “на *аккубиты*”. Среди вариантов написания слова “ложе” имеется форма “акумбитон”, которая в армянском языке дало слово “акумб” в значении “стола, трапезы”, а также (в постклассическую эпоху) “торжественного собрания, хора, сонма”. Можно думать, что в тексте жития было употреблено либо это слово, впоследствии поврежденное, либо же прямая транслитерация греческого слова, с возможно диалектальным выпадением “б” после “м”. Иными словами, Маштоца было велено не “прозывать (именовать) акумитом”, а “позвать (пригласить) на акумиты”. Реконструкция греческого источника, использованного в “Житии” (природа этого текста пока неясна), уже не в первый раз позволяет, не прибегая к сложным конъектурам, восстановить смысл непонятого пассажа.

OLGA VARDAZARYAN
HOW MASHTOTS BECAME *ACOIMETOS*

Keywords: Koryun, text criticism, Constantinople, Theodosius the Younger, Patriarch Atticus, Monastery of the *Acoimetoï* (“sleepless ones”), church defender (*ecclesiecdicos, defensor ecclesiae*), “*Triclinium* of 19 couches,” Byzantine court ceremonial, “*akumb*,” etymology.

According to the longer recension of *The Life of Mashtots*, Mashtots’ activities in the Armenian lands which belonged to Byzantium began with the strange order from the Imperial Chancellery “to call the saint *akumit* with proper honors” (Koryun, Chapter 16). There is an old philological tradition according to which the word *akumit* is identified with the name of the Monastery of the *Acoimetoï* (“sleepless ones”); however, Mashtots could not have been named so. Firstly, there was no monastery bearing this name when he visited Byzantium. Secondly, this epithet belongs to elevated style (hence, it is inappropriate in everyday or formal language), and, besides, it was never attributed to specific people, even to those related to the monastery.

Following the mysterious order, Mashtots went to the capital just in time for Easter celebrations, when it was customary to organize solemn reception-feasts at the court. In the 5th century, they were typically held in one of the oldest buildings of the Grand Palace, the so-called “*Triclinium* of nineteen couches,” where guests, according to an ancient custom, reclined instead of sitting. An analysis of the references to this *Triclinium* in the 9th century guide to the palace ceremonial, the

Cletorology of Philotheus, shows that the collective noun “couches” (*accubita*) was used to designate the receptions themselves. Therefore, an invitation to such a reception could sound like an invitation to the *accubita*. One of the orthographic variants of the Greek word for “couch” is ἀκούμβιτον, which in Armenian was transformed into *akumb*, meaning “meal, banquet,” or “solemn assembly, choir” in the Post-Classical period. One might suppose that either this word was used in the *Life of Mashtots* and subsequently corrupted, or the Greek word was transliterated, with a possible dialectal loss of the letter *b* after *m*. In other words, it was not ordered to “call (name)” Mashtots “*Akumit*” but “to invite” him “to the *acumita* (*acumbita* / *accubita*).” Thanks to the reconstruction of the excerpt from a hypothetical Greek source of the *Life of Mashtots* (the nature of which is still unclear) once again the meaning of an incomprehensible passage is restored, without resorting to complex conjectures.

ՄԱՐԻ ՄԱՄՅԱՆ

«ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱԻԵՏԱՐԱՆ»-Ի ԵՒ ՀԱԿՈՒՑՈՒՄԻ ՆԱԽԱԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)

Բանալի բառեր՝ Հիսուս, Հակոբոս Տեառնեղբայր, հայկական Մանկության ավետարան, Նախաավետարան, պարականոն գրքեր, քրիստոնեական գրականություն:

Հայաստանը, ինչպես յուրաքանչյուր քրիստոնյա երկիր, անմասն չի մնացել այն իրադարձություններից, որոնք հատուկ են վաղքրիստոնեական պատմությանը: Իսկ քրիստոնյա աշխարհի առաջին դարերի էության մասին հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել առանց ժամանակի գրականության համակողմանի ուսումնասիրման, քանի որ այն մեծ դեր է խաղացել նոր կրոնի ձևավորման գործում:

Այս գրականության կարևոր մասն են կազմել պարականոն գրվածքները, և առաջին հերթին այն ավետարանները, որոնք պարունակում են Հիսուսի մանկության տարիների, թեև երբեմն մտացածին, սակայն մեծ հետաքրքրություն ներկայացնող պատմությունները: Իրանք մի կողմից լրացնում են Հիսուսի ծննդյան մասին նորկտակարանյան հայտնի տեղեկությունները, մյուս կողմից արտահայտում են քրիստոնեական այս կամ այն ուղղության դավանաբանական (հաճախ նաև՝ հերձվածողական) գաղափարներ:

Հիսուսի մանկության պատմությունը ներկայացնող այս պարականոն գրվածքները համաշխարհային գրականության մեջ հայտնի են «մանկության» ավետարաններ անվանումով: Սրանցից հայերենով պահպանվել են երկուսը՝ Հակոբոսի նախաավետարանը¹, որ քրիստոնեական հնագույն (II դ.)² ու ամե-

¹ Պարականոնն այսպիսի անվանում է ստացել Գ. Պոստելից, ով հունարեն բնագիրը լատիներեն թարգմանությամբ հրատարակել է 1552 թ., տե՛ս Postel G., *Protevangeliion sive de natalibus Iesu Christi et ipsius matris Virginis Mariae. Sermo historicus divi Iacobi Minoris*, Basilea, 1552. pp. 24-70: Նախաավետարան անվանումը պարականոնին է տրվել ելնելով այն հանգամանքից, որ այստեղ ներկայացված պատմությունները նախորդում են կանոնական ավետարաններում տեղ գտած իրադարձություններին: Մագաղաբյա հնագույն գրչագրերում, ինչպես օրինակ՝ Մ. Բոդմերի հավաքածուի (Ժնև) մի ձեռագրում (Papyrus, Bodmer V, III դ., տե՛ս Testuz M., *Papyrus Bodmer V. Nativité de Marie*, Geneva, 1958) պարականոնը վերնագրված է «Մարիամի ծնունդը: Հակոբոսի Հայտնությունը» (Γένεσις Μαρίας. Αποκάλυψις Ἰακώβ):

² Պարականոնը թվագրվել է II դ. հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրքից մեջբերումներ են արել արդեն II-III դդ. քրիստոնյա այնպիսի հեղինակներ, ինչպես օրինակ՝ Որոգի-

նրից հայտնի գրվածքներից մեկն է, և հետագայում սրա հիման վրա գրված ևս մեկ «մանկության» ավետարան³, որը, սակայն, իր բովանդակությամբ էականորեն տարբերվում է Նախաավետարանից⁴:

Հակոբոսի նախաավետարանն, ըստ ընդունված տեսակետի, գրվել է եգիպտոսում, քրիստոնյա դարձած մի հեթանոսի ձեռքով⁵: Թեև մենք հստակ տեղեկություններ չունենք այն մասին, թե քրիստոնեական ինչպիսի համայնքում և ինչ նկատառումներով է ստեղծվել երկը⁶, այնուամենայնիվ, ուղղադավանության տեսանկյունից այն ամենից անվնաս պարականոններից մեկն է համարվում: Նրանում տեղ են գտել այնպիսի դրույթներ, որոնք լիովին համահունչ են քրիստոնեական ուղղադավան հավատին: Պարականոնում հստակորեն ուրվագծվում է Սուրբ Կույս Մարիամի՝ արդեն այդ դարաշրջանում ձևա-

նետը (“τῆς βίβλου Ἰακώβου” – «Հակոբոսի գրքի», տե՛ս **Origène**, *Commentaire sur l’Evangile selon Matthieu*, Vol. 1, ed. **Girod R.**, Paris, 1970, p. 216), Կղեմես Ալեքսանդրացիին (տե՛ս **Clement of Alexandria**, *Miscellanies (Stromata)*, book VII; the Greek text with introduction, translation, notes, dissertations and indices, by **Hort F. J.** and **Mayor J. B.**, London, 1902, p. 165) և Հուստինոս Վկայն (տե՛ս *Justin Martyr’s Dialogue with Trypho the Jew*, trans. and notes by **Brown H.**, vol. II, Oxford, ch. LXXVIII, p. 20):

³ Հայերեն բազմաթիվ ձեռագիր մատյաններում պահպանված այս պարականոնին շատ հաճախ հանդիպում ենք «Աւետարան Մանկութեան Տեանն», «Մանկական Աւետարան», «Տղայաւետարան», «Գիր տղայութեան Քրիստոսի», «Մանկութիւն Յիսուսի» և երբեմն էլ՝ «Աւետարան մանկութեան» խորագրով, ինչպես օրինակ՝ Եղմ. 3062 ձեռագրում պահպանված երկը, տե՛ս *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, կազմ. **Ն. արք. Պողոսյան**, հ. 9, Երուսաղեմ, 1979, էջ 282: Տե՛ս նաև՝ **Ս. վրդ. Մխչեան**, «Մանկութեան ւետարաններ», *Սրոն*, 1972, ք. 46, էջ 235: Այս պարականոնի մասին մանրամասն տե՛ս մեր նախորդ հոդվածում՝ **Մամյան Մ.**, «Գիր Տղայութեան ավետարանը», *ԲՄ*, հ. 22, 2015, էջ 334-349:

⁴ Մեզ հայտնի բոլոր, այսպես կոչված «մանկության» ավետարանները գրվել են *Նախաավետարանի* հիման վրա: Բացառություն է II դարով թվագրվող «Թովմա Իսրայելացի փիլիսոփայի պատմությունը Քրիստոսի մանկության մասին» պարականոնը, որ պարունակում է Հիսուսի 5-12 տարեկանն ընկած ժամանակաշրջանը և նրա՝ այդ տարիների ընթացքում կատարած բազմաթիվ հրաշագործությունները, տե՛ս **Свенцицкая И. С.**, *Тайные писания первых христиан*, Москва, 1980, с. 172: Այս պարականոնի արդի և ամբողջական ուսումնասիրությունը տե՛ս **Burke T.**, *The Infancy Gospel of Thomas: The Text, Its Origins, and Its Transmission*, Toronto, 2001:

⁵ **Findlay A.**, *Byways in Early Christian Literature. Studied in the Non Canonical Gospels and Acts*, Edinburgh, 1923, p. 150-151.

⁶ Որոշ ժամանակ շրջանավել է ավետարանի՝ շատագուրվական գրություն լինելու վարկածը, որն ուղղված է եղել Յելսուսի «Ճշմարիտ Խոսք» հակաքրիստոնեական աշխատության դեմ (**Celsus**, *On the true Doctrine, a Discourse against the Christians*, trans. by **J. Hoffmann**, Oxford, 1987): Յելսուսի այս երկը մեզ չի հասել, այն հաջողվել է մասամբ վերականգնել շնորհիվ *Որոգիների երկի*, տե՛ս **Origen**, *Contra Celsum*, ed. and tr. **Chadwick H.**, Cambridge, 1953: Որոշ գիտնականներ էլ *Նախաավետարանը* դիտարկել են որպես ներբողական երկ, տե՛ս օրինակ՝ **Hock R.**, *The Infancy Gospels of James and Thomas: With Introduction, Notes, and Original Text Featuring the New Scholars Version Translation (Scholars Bible)*, Santa Rosa, 1995, p. 15-20:

վորվող պաշտամունքը, որտեղ առաջնային էր դառնում նաև նրա հավիտենական կուսուծյան մասին գաղափարը: Իր այս հատկանիշների, ինչպես նաև Մարիամի ու Հիսուսի ծննդյան մասին հետաքրքրաշարժ պատմությունների շնորհիվ է, որ պարականոնը մեծ տարածում է գտել հատկապես քրիստոնյա Արևելքում: Արևմուտքում, սակայն, Հերոնիմոս Երանելու ճնշման տակ (ու՜մ համար ընդունելի չէր նախաավետարանում արծարծված այն գաղափարը, ըստ որի՝ Հովսեփը, մինչ Մարիամի խնամակալությունն ստանձնելը, որդիներ է ունեցել նախկին ամուսունուծյունից) գիրքն ի սկզբանէ չի ընդունվել և արգելքի տակ է դրվել⁷: Նախաավետարանը, սակայն, հայտնի է եղել նաև լատինական աշխարհում, որտեղ այն շրջանառվել է այլ անվանումներով և, իհարկե, առանց Հովսեփի նախկին կնոջ մասին որևէ հիշատակության⁸:

Հակոբոսի նախաավետարանն այն հազվագյուտ գրվածքներից է, որ հայերեն է թարգմանվել երկու անգամ⁹, ինչը բացառիկ երևույթ է հայ թարգմանական գրականության մեջ¹⁰: Վենետիկի Մխիթարյան Միաբանության մատենադարանի ձեռագրերի հիման վրա պարականոնի երեք տարբերակները հրատարակել է Ե. Տայեցին 1898 թ.՝ «Հատակոսորք ի գրոց տղայութեան Քրիստո-

⁷ Նախաավետարանը տեղ է գտել Գելասիոս I պապին (492-496 թթ.) վերագրվող «Արգելված գրքերի դեկրետ»-ում (“*Decretum Pseudo-Gelasianum*”), տե՛ս **Hennicke E.**, *New Testament Apocrypha, Gospels and Related Writings*, ed. By **Sehncemelckher W.**, Eng. trans. By **Wilson McL. R.**, London, 1991, p. 38-39:

⁸ Տե՛ս **Скогорев А.**, *Апокрифические деяния апостолов. Арабское Евангелие детства Спасителя. Исследования. Переводы. Комментарии*, СПб, 2000, с. 52:

⁹ Ըստ ռուս նշանավոր ստորագետ Ե. Մեշչերսկայայի՝ ստորական գրավոր ավանդությունը ևս պահպանել է նախաավետարանի՝ հունարենից արված երկու տարբեր թարգմանություններ, որոնք ներկայացնում են պարականոնի նախնական և խմբագրված տարբերակները, տե՛ս **Мещерская Е. Н.**, “Протоэвангелие Иакова’ в составе сирийской компиляции ‘История Девы Марии’,” *Вестник Санкт-Петербургского университета* (9), СПб., 2015, с. 43:

¹⁰ Տե՛ս **Calzolari V.**, “Les récits apocryphes de l'enfance dans la tradition arménienne”, *Infancy Gospels, Stories and Identities*, ed. by **Clivaz C., Dettwiler A., Devillers L.**, and **Norelli E.**, Mohr Siebeck, 2011, p. 564: Հայ իրականության մեջ կրկնակի թարգմանության օրինակներ են Գիոնիսիոս Արեոպագոսը և Իգնատիոս Աստվածագյացի երկերը: Գիոնիսիոս Արեոպագոսը երկերն առաջին անգամ հայերեն է թարգմանել Ստեփանոս Սյունեցին VIII դ., իսկ երկրորդ անգամ երկերը թարգմանել է Ստեփանոս Լեհացին XVII դ.: Իգնատիոսի թղթերը նախ թարգմանվել են ստորերենից V դ., ապա XVIII դ. Մելքիսեդեկ Կ. Պոլսեցին այն թարգմանել է հունարենից, տե՛ս **Տեր-Ստեփանյան Ա.**, «Մելքիսեդեկ Կոստանդնուպոլսեցու թարգմանական գործունեությունը», *Բե՛շ*, 3 (57), Երևան, 1985, էջ 166-172: Հայտնի են նաև Հովհաննես Դամասկոսյան *Աղբիւր գիտութեան* երկի կրկնակի՝ հունարեն համառոտ (Բագարատ Մամիկոնյան, X դ.) և վրացերեն ընդարձակ (Սիմեոն Պղնձահանեցի, XIII դ.) թարգմանությունները, տե՛ս **Ալիբեյան Ա.**, *Սիմեոն Պղնձահանեցի և իր թարգմանութիւնները վրացերէնէ, Վիեննա*, 1951, էջ 57-101:

սի»¹¹ ընդհանուր խորագրի տակ: Նրա հրատարակած Ա և Բ տարբերակները պահպանել են Նախաավետարանի նախնական տեսքը, իսկ Գ տարբերակը ներկայացնում է պարականոնի նոր և համառոտ ձևը¹²:

Ե. Տայեցին հրատարակել է նաև վերոնշյալ «Մանկութեան աւետարան»-ը՝ «Գիրք Տղայութեան Քրիստոսի» խորագրով (ներկայացնում է պարականոնի Ա և Բ տարբերակները¹³): Երկի առաջին հատվածը, այն է՝ I-XIV գլուխները (Մարիամի ծննդյան և մանկության, Հովսեփի մոտ նրա խնամակալության, ավետման և Հիսուսի ծննդյան պատմությունները) պարունակում են Հակոբոսի նախաավետարանի ընդարձակ ու ճոխացված տարբերակը: Հայկական գրավոր ավանդության մեջ և՛ Նախաավետարանը, որը որպես առանձին գրվածք հայերեն է թարգմանվել հունարենից¹⁴, և՛ «Մանկութեան Աւետարան»-ը վերագրվում են Հակոբոս Տեառնեղբորը¹⁵, այդ իսկ պատճառով հաճախ շփոթություն է առաջանում այս երկու պարականոններն իրարից տարանջատելու հարցում¹⁶: Այսպես օրինակ՝ նշանավոր հայագետ Ֆ. Կոնիբերը, իրականում ձեռքի տակ ունենալով «Մանկութեան աւետարան»-ը, ենթադրել է, որ դա Նախաավետարանն է: Նա, սակայն, իրավացիորեն նշել է, որ իր ձեռքի տակ եղած գրվածքը թարգմանվել է ասորական հնագույն տեքստից, որին ծանոթ է եղել

¹¹ Անկանոն գիրք նոր Կտակարանաց, կազմ. Տայեցի Ե., Թանգարան հայկական հին և նոր գրությունների, Բ, Վենետիկ, 1898, էջ 237-267 (այսուհետ՝ Անկանոն գիրք նոր Կտակարանաց):

¹² Stricker de E., *La forme la plus ancienne du Protévangile de Jacques. Recherches sur le papyrus Bodmer 5*, Bruxelles, 1961, p. 357.

¹³ Անկանոն գիրք նոր Կտակարանաց, էջ 1-235:

¹⁴ Հումարեն ու ասորերեն Նախաավետարանները համեմատական վերլուծության է ենթարկել Մեջլերսկայան, տե՛ս Мещерская Е. Н., «Протоэвангелие Иакова в сирийской традиции. Тексты. Издания. Версии». *Вспомогательные исторические дисциплины*, т. XXX. СПб., 2007, с. 13-27: Այս համեմատությունները ևս մեկ անգամ փաստում են հայերեն բնագրի՝ հումարենից թարգմանված լինելու իրողությունը: Ասորերեն տեքստն անգլերեն թարգմանությամբ տե՛ս Wright W., *Contribution to the Apocryphal Literature of the New Testament*, London, 1865, նաև՝ Lewis S., *Apocrypha Syriaca: The Protevangelium Jacobi and Transitus Mariae*, Cambridge, 1902:

¹⁵ Ընդհանրապես, Հակոբոս Տեառնեղբոր կերպարը նշանակալից դեր է խաղացել առաջին դարերում գրված հուդա-քրիստոնեական և, որ առավել հետաքրքրական է՝ գնոստիկյան պարականոն գրվածքներում, տե՛ս Painter J., *Just James: The Brother of Jesus in History and Tradition*, South Carolina, 2004, pp.159-200: Տեառնեղբայրն էական դեր ունի նաև հայկական քրիստոնեական ավանդության մեջ, նրան է վերագրվել նաև միջնադարում մեծ ժողովրդականություն վայելող «Յիշատակարանի Պիղատոսի» պարականոն երկը:

¹⁶ Այս շփոթումն է առկա է նաև հայերեն ձեռագրերում, այսպես օրինակ՝ ՄՄ 717 ձեռագրի գրիչը երկն անվանում է «Աւետարանն առաջին» (թ. 125 բ), ինչից կարելի է ենթադրել, որ խոսքը Նախաավետարանի մասին է, մինչդեռ երկի բովանդակությունը համապատասխանում է «Մանկութեան աւետարան»-ին: Նկատենք նաև, որ «մանկության» մեջ երկու ավետարանները հայերեն ձեռագրերում շատ հաճախ հանդես են գալիս միևնույն խորագրով, սակայն «Մանկութեան աւետարան»-ը պարունակող ձեռագրերի թիվը զգալիորեն գերազանցում է Նախաավետարանի ձեռագրերին:

դեռևս սբ. Եփրեմ Ասորին (307-373)¹⁷: Հատկանշական է, որ միայն հայկական ավանդությունն է «Մանկութեան աւետարան»-ը վերագրել է Հակոբոս Տեառնեղբորը, ինչը միայն վերջինիս՝ Հիսուսի եղբայր լինելու պարագայով բացատրելը բավարար չէ, եթե նույնիսկ հաշվի առնենք այն, որ երկը գրվել է Նախաավետարանի հիման վրա: Այս իրողությունը թերևս կարելի է բացատրել այլ հանգամանքով. ի տարբերություն Արևելյան քրիստոնեական եկեղեցիներում երբևէ արգելքի տակ չդրված Հակոբոսի նախաավետարանի՝ մեր մյուս «մանկության» ավետարանն ընդգրկվել է միջնադարյան արգելված գրքերի բոլոր հայտնի ցանկերում (հնագույնը թվագրվում է VI դարով)¹⁸, որոնց թվում առանձնակի կարևորություն ունի Մխիթար Այրիվանեցու կազմած և ընդօրինակած ցուցակը (XIII դ.)¹⁹: Ուստի լիովին հավանական է թվում այն, որ պարականոնի վերագրումը Հակոբոս Տեառնեղբորը արվել է գիրքն արգելքից հանելու և այն շրջանառության մեջ դնելու մղումով:

Հայկական «Մանկութեան աւետարան»-ը, ինչպես արդեն նշեցինք, Նախաավետարանից տարբերվում է մի շարք էական առանձնահատկություններով: Այս տարբերությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ պարականոնում արտացոլված Նախաավետարանի համապատասխան հատվածները որևէ առնչություն չունեն հունարեն բնագրի հետ և կրում են ասորական ավանդության հետքեր²⁰: Ըստ այդմ՝ որոշ գիտնականներ եզրակացրել են, որ «Մանկութեան աւետարան»-ի առաջին 14 գլուխները փոխառվել են հունարենից ասորերեն թարգմանված Նախաավետարանի վերախմբագրություններից որևէ մեկից, և որպես հավանական աղբյուր դիտարկվել է նախ և առաջ արևելա-ասորական (նեստորական) ծագում ունեցող «Պատմություն երանելոյն Մարիամու»²¹ պարականոն գրվածքը²²: Մեր անցկացրած զուգահեռ-

¹⁷ Տե՛ս Conybeare F., “Protevangeliem Iacobi, From an Armenian Manuscript in the Library of the Mkhitarists in Venice,” *American Journal of Theology* (1), 1897, pp. 424-442:

¹⁸ Տե՛ս Անայան Հ., *Հայկական մատենագիտություն, Ե-ժԸ դդ.*, հ. Ա, Երևան, 1959, էջ XI, XXXVIX-XL: Արգելված գրքերի այս ցուցակը մեզ է հասել ՄՄ 1869 ձեռագրում (1584-1589 թթ.), 391բ:

¹⁹ Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն ժամանակագրական*, հրտ. Ք. Պատկանյանի, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 33:

²⁰ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Terian A., *The Armenian Gospel of the Infancy, with Three Early Versions of the Protevangeliem of James*, Oxford, 2008, pp. XXII-XXIV, Peeters P., *Evangiles apocryphes, vol. II. L'évangile de l'enfance, rédactions syriaques, arabe et arméniennes*, Paris, 1914, p. XXIX: Հակառակ կարծիքն է արտահայտել միայն բելգիացի նշանավոր գիտնական Ստրիկեն, ով հայկական «Մանկութեան աւետարան»-ի համար հիմք է ընդունել հունարենից թարգմանված Նախաավետարանը, տե՛ս Stricker de E., *La forme la plus ancienne du Protévangile de Jacques...*, p. 372:

²¹ XII դարի ասորական այս երկի անգլերեն թարգմանությունը տե՛ս Budge W., *The History of the Blessed Virgin Mary and the History of the Likeness of Christ, which the Jews of Tiberias made a mock at*, London, 1899:

ները, սակայն, ցույց են տալիս, որ այս երկու պարականոնները բավական քիչ ընդհանրություններ ունեն, ինչն էլ նվազեցնում է այս տեսության ճշմարտացիության հավանականությունը: Ըստ իրողության, մենք գործ ունենք ասորական ծագման, սակայն մեզ չհասած մի ինչ-որ այլ պարականոն գրվածքի հետ²³:

Եվ Նախաավետարանը, և՛ «Մանկութեան ավետարան»-ն սկսվում և աննշան տարբերությամբ ներկայացնում են Մարիամի ծնողներին՝ Հովակիմի և Աննայի²⁴ պատմությունը, որոնք զրկված են զավակ ունենալու կարողությունից («Մանկութեան ավետարան»-ում ընդգրկված չէ միայն Աննայի և նրա աղախին Յովինի երկխոսությունը): Սուրբգրային ավանդության հետևություններ, երկար աղոթքներից հետո Աստված ամուսիններին զավակ է խոստանում, և ծնվում է Մարիամը: Հատկանշական է, որ հայկական մանկության այս երկու ավետարաններում ներկայացված Մարիամի յոթամսյա («Եւ իբրեւ յղութիւն Աննայի յաւուրս երկերիւր և տաս, որ է ամիս եօթն և նոյն ժամայն յօթներորդ ժամու ծնանէր Աննայ զմանուկն իւր սուրբ, ի լինոյ ամսոյ քսան և մի, որ է սեպտեմբերի ութ»²⁵) և երբեմն էլ՝ ութամսյա («և յամսեանն ութերորդի ծնանէր...»²⁶) ծննդյան պատմությունը հանդիպում ենք միայն Բողմերյան վերոնշյալ ձեռագրում. Մարիամը իննամսյա է ծնվում և՛ ըստ «Պատմութիւն երանելոյն Մարիամու» ասորական երկի, և՛ հունարեն Նախաավետարանի հետագա խմբագրությունների, և թե՛ համեմատաբար ուշ ժամանակաշրջանում գրված լատիներեն կեղծ-Մատթեոսի մանկության ավետարանի²⁷: Ըստ հինկտակարանյան և վաղբրիստոնեական ավանդության՝ յոթ ամսական ծնված մարդիկ առանձնանում էին արտասովոր ճակատագրով²⁸, և այս գաղափարը, որ արտահայտված

²² **Burke T.**, *The Infancy Gospel of Thomas: Syriac*, <http://www.tonyburke.ca/infancy-gospel-of-thomas/the-infancy-gospel-of-thomas-syriac/>.

²³ **Terian A.**, *The Armenian Gospel of the Infancy...*, p. XXIV.

²⁴ Հովակիմի և Աննայի հիշատակության տոնը Հայ Եկեղեցին կատարում է Յուդաբեր կանանց հետ, Վերփոխման իննօրեին հաջորդող երեշաբթի օրը:

²⁵ ՄՄ7574, p. 13ա: «Մանկութեան ավետարան»-ի հնագույն ու ամբողջական տարբերակը պահպանվել է ՄՄ 7574 ձեռագրում, որը և անգլերեն թարգմանությամբ հրատարակել է անվանի գիտնական Ա. Տերյանը, տե՛ս **Terian A.**, *The Armenian Gospel of the Infancy...*: Մեր հետագա մեջբերումները պարականոնից կարվեն ըստ այս ձեռագրի:

²⁶ *Անկանոն գիրք նոր Կտակարանաց*, էջ 239:

²⁷ Տե՛ս **Tischendorf C.**, *Evangelia Apocrypha, adhibitis plurimis codicibus graecis et latinis maximam partem nunc primum consultis atque ineditorum copia insignibus*, Lipsiae, 1874, pp. 51-112: Ավետարանն այս անվանումով շրջանառության մեջ է դրվել շուրջ 150 տարի առաջ, երբ գերմանացի գիտնական Կ. Թիշենդորֆը հրատարակեց ավետարանի լատիներեն ձեռագրերը՝ այդ թվում նաև կեղծ Հիերոնիմոսի ու երկու եպիսկոպոսների մի նամակագրություն, որ որպես նախաբան կցված էր պարականոնին: Այս կեղծ թղթակցությունից տեղեկանում ենք, թե իբր Հիերոնիմոսը լատիներենի է թարգմանել Հիսուսի մանկության մասին պատմող Մատթեոսի երայերեն ավետարանը:

²⁸ **Horst van der P.**, “Sex, Birth, Purity and Asceticism in the Protevangelium Jacobi”, *A Feminist Companion to Mariology*, ed. by **A.-J. Levine**, Cleveland, 2005, p. 56-65,

է նաև հայկական պարականոն ավետարանների մեջ, խորհրդանշում է Մարիամի գերբնական էությունը²⁹ :

Մարիամի ծննդյանը հաջորդող իրադարձությունները (նրա նվիրաբերումը տաճարին և հանձնումը Հովսեփի խնամակալությանը) թե՛ Նախաավետարանը, և թե՛ «Մանկութեան աւետարան»-ը ներկայացնում են գրեթե նույնությամբ: Վերջինիս բովանդակությունը, սակայն, շեշտակիորեն փոխվում է Հիսուսի ծննդյան ավետման դրվագում: Ընդ որում այս և ստորև ներկայացված առանձնահատկությունները «Մանկութեան աւետարան»-ն ինքնատիպ են դարձնում ո՛չ միայն Նախաավետարանի, այլ նաև մյուս «մանկության» ավետարանների համեմատությամբ:

Նախաավետարանի անանուն հրեշտակը «Մանկութեան աւետարան»-ում Ղուկասի ավետարանի (Ա, 26) նմանողությամբ, ստանում է Գաբրիել անվանումը: Այս պատմությունը ներկայացնելիս Նախաավետարանն ընդհանուր առմամբ կրկնում է նորկտակարանյան ավանդությունը, ըստ որի, Մարիամը հնազանդությամբ է ընդունում իր հղիությունն ու Հիսուսի մայրը դառնալու իր առաքելությունը: Մինչդեռ «Մանկութեան աւետարան»-ի հեղինակը, ընդարձակելով Ղուկասի ավետարանում Մարիամի հարցումը հրեշտակին. «Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի գայր ոչ գիտեմ» (Ղուկ. Ա 34)՝ բազմաթիվ հավելումներ է անում տեքստում և հետաքրքիր դրվագներով ներկայացնում Մարիամի արձագանքն իր հրաշալի կերպով հղիանալու մասին լուրը լսելիս³⁰ : Հրեշտակի խոսքերի նկատմամբ Մարիամի կասկածամտությունը կազմում է այս երկխոսության կորիզը, ընդ որում, նրա հիմնական մտավախությունը ոչ այնքան «առանց այրն» հղիանալու հանգամանքն է, այլ այն, որ միգուցե իրեն հայտնված հրեշտակը կերպարանափոխված սատանան է, ով փորձում է խաբել իրեն. «Երկնչիմ ի քէն, զի քաղցրութեամբ բանս բարբառեալ խօսիս ընդ իս, և կարի յոյժ զարմացուցանես զիս յասելդ քո ընդ իս. մի՞թէ խաբեութեամբ բանիւք կամիս պատրել զիս՝ որպէս զնախամայրն Եւայ, որ ընդ ասել բանին՝ քաղցր և ողորական խօսիւք հաւանեցոյց զնա, և յետոյ զմահ ժառանգեաց»³¹ : Ըստ

տե՛ս նաև նույնի՝ “Seven Months’ Children in Jewish and Christian Literature from Antiquity”, *Ephemerides Theologicae Lovanienses* 54, 1978, pp. 346-360:

²⁹ Մարիամի վաղաժամ ծննդյանն այլ բացատրություն է տալիս ՄՄ 6980 ձեռագրի համառոտ «Մանկութեան աւետարան»-ի գրիչը. «Իբրև է ամիս եղև ծնաւ զՄարիամ վասն փափագանաց սրտից նոցա փութապէս եղև ծնունդ նորա. է ամսոյ այլ ոչ էր եղեալ այնպէս...» (թ. 25ա):

³⁰ ՄՄ 7574-ում Մարիամի և հրեշտակի երկխոսությունը զբաղեցում է շուրջ 5 թերթ (25բ-30բ):

³¹ ՄՄ 7574, թ. 28ա-բ: Սատանայից խաբվելու Մարիամի մտավախությունը տեղ է գտել նաև «Երանելոյն Յոհաննոս Ոսկեբերանի ասացեալ յաւետիս կուսին Մարիամու» նառում. «Ճւ ասէ ցԳաբրիէլ. Ի բաց ե՛րթ, ի բաց ե՛րթ յինէն, ո՛վ այրդ խաբողական, որ եկեալ առ իս, եւ համարիս կողոպտել զիս որպէս զմայրն հասարակաց զԵւայ: Ոչ յաղթեացէ պատիր բան քո զխորախաւատ միտս իմ, այլ երթ, զնա դու յինէն նախ քան զգալ ծերոյն՝ պահպանողին իմոյ, փախիր, զնա ի տեղուցէս, զի այր նախանձոտ եւ բարկասիրտ է... Առդ, եթէ գայցէ աստ եւ տեսանիցէ զԷդ ընդ իս խաւսելով՝ հարցէ ուրագով եւ հատցէ զգլուխ քո, եւ լինիցի ինձ արամութիւն եւ անդադար սուգ եւ արտասուտ», տե՛ս *Եկեղեցական մատենագրություն Ա, Ս. Յովհան Ոսկեբերան, Ճառք*, էջմիածին, 2008, էջ 72:

երևույթին, պարականոնի հեղինակը քաջատեղյակ է ոչ միայն հինկտակարանյան կանոնական, այլ նաև պարականոն գրականությանը, որտեղ առաջին մեղսագործության պատմությունը ներկայացված է հետաքրքիր մանրամասներով:

«Մանկութեան աւետարան»-ն առանձնահատուկ է դարձնում նաև հրեշտակի ու Մարիամի գրուցին հաջորդող դրվագում արժարժված «ընդ ունկն հղացման» (*conceptio per aurem*) գաղափարը. «Նոյն ժամայն ընդ ասել բանին և սրբոյ կուսին Բանն Աստուած եմուտ ընդ ունկն լսելեացն ի ներքս, և սրբեցաւ խորհուրդ բնութեան մարմնոյն արտաշնչական՝ հանդերձ ամենայն զգայութեամբ երկոտասան անդամօքն, և մաքրեցաւ որպէս զոսկի ի հուր. և եղև տաճար, սուրբ անարատ և բնակարան աստուածութեան նորա»³²:

Այս հասկացությունը, որ ընդունված է եղել նաև սուրբ ավանդության մեջ, ըստ իսպանացի գիտնական Սանտոս Օտերոյի՝ չի ունեցել այն իմաստը, ինչպես որ ներկայացված է մեր պարականոնում: Այն ավելի շատ համապատասխանում է Պողոս առաքյալի «Ապա ուրեմն հաւատքի լսելոյ են, եւ լուր ի բանէն Քրիստոսի» (Հռոմ. Ժ, 17) խոսքերին, որոնք մատնանշում են այն, որ Մարիամի գերբնական հղիությունը առաջին հերթին հավատի արգասիք է (հղացում ըստ հավատի) և ապա միայն՝ ֆիզիկական երևույթ: Ավետման ժամանակ Մարիամի մաքրագործումը վկայված է եկեղեցու հայրերի երկերում, սակայն այսպիսի մաքրագործումը Սուրբ Հոգու հատուկ շնորհի արտազեղում է, որ չի ենթադրում նախամեղքից ազատում, քանի որ Մարիամը դրանից զուրկ էր՝ շնորհիվ իրեն տրված այն առաքելության, որով նա պիտի դառնար Տիրոջ մայրը³³:

Պետք է նշել, սակայն, որ «Մանկութեան աւետարան»-ում տեղ գտած «ընդ ունկն հղացման» գաղափարը հայկական նորամուծություն չէ, այն հանդիպում ենք նախ և առաջասորական գրականության մեջ և հատկապես՝ սբ. եփրեմի երկերում, որոնք մեծ ազդեցություն են ունեցել Մ. հայ մատենագրության վրա³⁴: Քրիստոսին նվիրված իր ճառում նա գրում է. «Ելեալ հրամանն ի մեծ թագաւորէն, և զկնի նորա եմուտ Որդի թագաւորին ընդ դրունս լսելեացն»³⁵: «Ընդ ունկն հղացման» գաղափարը սերտորեն առնչվում է նաև Եվա-Մարիամ հարաբերակցության և փրկագործության գաղափարին, քանի որ տիպաբանորեն Մարիամի կերպարը կապվում է Եվայի հետ: Միայն հայերենով պահպանված սբ. եփրեմ Ասորու «Դիատեսասրոն»-ի մեկնության հեղինակը գրում է. «Եւ զի ընդ ունկնն Եւայի եմուտ մահ, ընդ ունկն Մարիամու մտին կեանք»³⁶:

³² Անդ. ք. 30բ:

³³ De Santos Otero A., *Los Evangelios apócrifos : colección de textos griegos y latinos, versión crítica, estudios introductorios, comentarios e ilustraciones*, Madrid, 1956, p. 380.

³⁴ Calzolari V., «Les récits apocryphes de l'enfance dans la tradition arménienne», p. 568.

³⁵ Սրբոյն եփրեմի Մատենագրութիւնք, ճառք և աղօթք, Բ. 4, Վեներտիկ, 1836, էջ 19՝ «ճառ ի ծնունդն Քրիստոսի»:

³⁶ Նույնի՝ Մեկնութիւն Համաբարբառ, որ ըստ չորից Աւետարանչաց եւ թարգմանութիւն առաւոր բանից եւ աւետարանական ճառք, Բ. 2, Վեներտիկ, 1836, էջ 227:

«Հնդ ունկն հղացման» հասկացութիւնը շրջանառուվել է նաև լատին և հույն եկեղեցու հայրերի գործերում³⁷, ընդ որում, այս հասկացութիւնն Արևմուտքում զարգացրել է Պրոկղոս Կոստանդնուպոլսեցի պատրիարքը³⁸, ում երկերը հայերի համար էական նշանակութիւն են ունեցել նեստորականութեան դեմ պայքարում: Իր թղթերում³⁹ նա հայերին զգուշացրել էր նեստորականների աղանդի ու նրանց կասկածելի գրութիւնների մասին, որոնք շրջանառուվում էին Միջագետքում և որտեղ հայերը հաճախ էին ճամփորդում Սուրբ Գրքի և ասորական մեկնողական գրականութեան թարգմանութեան շրջանում⁴⁰: Պրոկղոս պատրիարքի հականեստորական այս քարոզչութիւնը մի կողմից և մյուս կողմից նրա որդեգրած «ընդ ունկն հղացման» գաղափարի արծարծումը «Մանկութեան աւետարան»-ում է՛լ ավելի են նվազեցնում պարականոնի նեստորական ծագման հավանականութիւնը⁴¹:

«Մանկութեան աւետարան»-ի առանձնահատկութիւնների մասին խոսելիս անհնար է շրջանցել Հիսուսի ծննդյան պատմութիւնը, որը ներկայացնելիս այս ավետարանն առանձնանում է իր ինքնատիպ մոտեցմամբ: Այս յուրահատկութիւնն արտահայտվում է նախ և առաջ պարականոնի՝ Արարչագործութեան և Փրկագործութեան միջև կամուրջ հանդիսանալու իրողութեան մեջ⁴²: Փրկագործութեան գաղափարն ընդգծվում է նախ և առաջ նախամայր Եվայի ներկայութեամբ⁴³, ով հանդես է գալիս մանկաբարձուհու դերում. «Ես եմ նախա-

³⁷ Արևմուտքում «ընդ ունկն հղացման» թեման դարձել է Ավետման տեսարանի պատկերագրության մի մասը, այս մասին տե՛ս **Salvador González J. M.**, “‘Per aurem intrat Christu sin Mariam’. An iconographic approach to the conceptio per aurem in Italian Trecento painting from patristic and theological sources”, *De Medio Aevo*, vol. 5 (1), 2016, pp. 96-105:

³⁸ Տե՛ս **Constas N.**, “The Ear of the Virginal Body”: The Poetics of Sound in the school of of Proclus” *Proclus of Constantinople and the Cult of the Virgin in Late Antiquity*, Leiden, 2003, 273-309:

³⁹ «Թուրք Պրոկղեայ եպիսկոպոսի առ սուրբն Սահակ Հայրապետ Հայոց եւ առ սուրբն Մաժդոց», *Գիրք Քղթոց*, Երուսաղեմ, 1994, էջ 30-40:

⁴⁰ **Calzolari V.**, “Lés recits apocryphes de l'enfance dans la tradition arménienne”, p. 570.

⁴¹ Հայկական «Մանկութեան աւետարան»-ի ծագմանն անդրադարձել ենք մեր դեռևս անտիպ հոդվածում «Հայերեն «Աւետարան Մանկութեան Տեառն»-ը. արգելված պարականոնի փոխակերպումն՝ ընդունելի՞ գրքի», որ առաջիկայում լույս կտեսնի *Էջմիածին հանդեսում*:

⁴² **Дорфман-Лазарев И.**, “Возвращение в рождественскую пещеру: Память первоизданного человечества в армянском Писании о детстве Господнем и в родственных источниках”, *Miscellanea Orientalia Christiana, Восточнохристианское разнобразие*, ред. **Селезнев Н., Аржанов Ю.**, Москва, 2014, с. 152.

⁴³ Ըստ պարականոն մեկ այլ ավանդության՝ Հիսուսը ծնվել է այնտեղ, որտեղ թաղված է եղել Եվան, տե՛ս **Stone M.**, “The Bones of Adam and Eve”, *For a Later Generation: the Transformation of Tradition in Israel, Early Judaism and Early Christianity*, ed. by **R. A. Argall, B. A. Bow** and **R. A. Werline**, Harrisburg, 2000, pp. 241-244: Հայ պատկերագրության մեջ Եվայի կերպարը դարձել է Հիսուսի ծննդյան տեսարանի անբաժանելի մասը:

ստեղծ կին Ադամայ կին, նախամայրն եւայ, ձեռագործ պատկեր արարչին Աստուծոյ, քանզի խոստացաւ Աստուած մեզ, զի հինգ հազար շորս հարիւր քսան եւ երկու տարի է, որ ցանկայի տեսանել այս ծնունդ մանկանս, զի ի դժոխոց ելեալ ըստ հրամանի Տեառն եկի տեսանել աչօք իմով փրկութիւն իմ, որ գործեցաւ ինձ»⁴⁴: Եվա-Մարիամ խորհրդավոր հարաբերակցութեանն անդրադարձել են դեռևս առաջին դարերի եկեղեցու հայրերը⁴⁵, սակայն մեր պարականոնում արտահայտված այս գաղափարը հիմնականաբար ազդված է սբ. Եփրեմ Ասորու աստվածաբանութեանից. «Որպէս եղև ծնեալ ի սկզբանէ Եւայ յԱդամայ առանց ամուսնութեան, սոյնպէս Յովսէփ և Մարիամ կոյսն իւր և կին: Եւայ ծնաւ սպանօղ, վասն այսորիկ Մարիամ ծնաւ զկենարարն, նա ծնաւ զայն՝ որ եհեղ զարիւն եղբօրն իւրոյ, այլ սա ծնաւ զայն՝ որ արիւնն իւր հեղաւ յեղբարց անդի իւրոց. նա ետես զայն՝ որ երերէրն և տատանէրն անիծիւք երկրի, և սա զայն՝ որ եբարձ զանէծսն, և բւեռեաց զնա ընդ խաչափայտն: Յղութեամբ կուսին ուսիր դու եթէ այն՝ որ առանց ամուսնութեան ծնաւ զԱդամ ի կոյս երկրէն, նա նկարեաց առանց ամուսնութեան զԱդամ երկրորդ ի մէջ կուսին: Եւ քանզի առաջինն յորովայն մօր իւրոյ դարձաւ, դարձեալ այսու երկրորդաւ՝ որ դարձեալ յորովայն մօր իւրոյ ոչ դարձաւ, դարձաւ այն՝ որ յորովայն մօր իւրոյ թաղեցաւ»⁴⁶: Եվա-Մարիամ հարաբերակցութեան հետաքրքիր զուգահեռներ է անցկացնում նաև սբ. Հովհանն Ոսկեբերանն իր «Յաւետիս ամէնաւրհնեալ կուսին Մարիամու» ներբողում. «Զի ի նմանէ մահ տնկեցաւ, ի քէն՝ կեանք բուսանին, ի նմանէ պտուղ մահու, ի քէն՝ ծաղիկ անթառամ, ի նմանէ ատելութիւն, ի քէն՝ սէր և խաղաղութիւն, ի նման՝ խաւարային քուն, ի քէն՝ անշիջանելի լոյս, ի նմանէ անէծք, ի քէն՝ արհնութիւն, ի նմանէ՛ վճիռ մահու, ի քէն՝ խոստումն կենաց, ի նմանէ՛ յիմարութիւն, ի քէն՝ իմաստութիւն, ի նմանէ՛ անհաւատութիւն, ի քէն՝ հաւատք, ի նմանէ՛ յուսահատութիւն, ի քէն՝ յուսադրութիւն»⁴⁷:

Եվ վերջապէս՝ «Մանկութեան աւետարան»-ի և նախաավետարանի տարբերութիւնների մասին խոսելիս անհնար է շանդրադառնալ Հիսուսի ծննդյան տեսարանի մաս կազմող մոգերի երկրպագութեան դրվագին: Այն դեպքում, երբ նախաավետարանը գրեթե նույնութեամբ կրկնում է Արևելքից եկած ինչ-որ մոգերի մասին նորկտակարանյան անորոշ տեղեկությունը (Մտթ. Բ, 1-12), հայկական «Մանկութեան աւետարան»-ում մոգերի երկրպագությունը և դրանում արձարժված Քրիստոս-Ադամ յուրահատուկ հարաբերակցութեան միջոցով

⁴⁴ Այս հատվածը մեջբերել ենք ՄՄ 9705 ձեռագրից (թ. 44ա), որտեղ բացատրվում է նաև Եվայի բերած կտավի գործառույթը. «Ահաասիկ, խամձառուր կտաւս վկայէ, զի սովաւ պատեալ զմերկութիւն մանկանս ծածկելոյ»:

⁴⁵ **Ross Mackenzie J. A.**, “The Patristic Witness to the Virgin Mary as the New Eve”, *Marian Studies*, vol. 29, Dayton, Ohio, 1978, pp. 70-78.

⁴⁶ Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք, Մեկնութիւն Համաբարբառ..., էջ 22:

⁴⁷ Տե՛ս Ս. Յովհանն Ոսկեբերան, “Ճառք”, էջ 74.

արտահայտվող փրկագործական գաղափարները կազմում են այս պարականոնի կարևորագույն մասը⁴⁸ :

Ավետարանական խորհրդավոր այս կերպարները դարեր շարունակ շարժել են քրիստոնյաների հետաքրքրասիրությունը՝ ստեղծելով տարալեզու հարուստ պարականոն ավանդություններ: Նշված պարականոնների շարքում ամենավաղ թվագրումն ունի ասորական «Մոգերի հայտնություն»-ը գրվածքը, որը մոգերի մասին պատմող ամենաերկար և ամենաբովանդակ ավանդությունն է: Այս պարականոնի ազդեցությամբ է գրվել Մատթեոսի ավետարանի թերի մեկնությունը (*Opus Imperfectum in Matthaëum, V դ.*)⁴⁹: Այս մեկնության հեղինակն անհայտ է, թեև դարեր շարունակ այն սխալմամբ վերագրվել է սբ. Հովհան Ոսկեբերանին:

Հիմնվելով այլալեզու ավանդությունների վրա՝ հայկական պարականոնն ստեղծել է իր պատմությունը: «Մանկութեան աւետարան»-ում Ավետուհից անմիջապես հետո Գաբրիել հրեշտակն ուղևորվում է Պարսկաստան՝ Հիսուսի ծննդյան մասին տեղեկացնելու և Բեթղեհեմ առաջնորդելու Պարսկաստանի (Մելքոն), Հնդկաստանի (Գասպար) և Արաբիայի (Բաղդասար) մոգ-թագավորներին, որոնք, ըստ հայկական ավանդության՝ հարազատ եղբայրներ էին⁵⁰: «Մանկութեան ավետարան»-ում հատուկ դեր ունի պարսից մոգ-թագավոր Մելքոնը, ում վիճակված է բերելու Ադամի և Աստծո միջև կնքված «Ուխտ»-ը, որն ազդարարում էր Միածին Որդու միջոցով իրականացվող մարդկության փրկությունը. «Ետ Աստուած զուխտն և զերդումն ընդ նախահայրն միջնորդութեամբ գրեալ և կնքեալ մատամբն իւրով, եթէ զվեց հազար ամի օր վեցերորդի առաքեմ զմիածին որդին իմ զբանն Աստուած, որ եկեալ մարմնանա ի զաւակէ քումմէ, և լինի որդին իմ որդի մարդոյ, և զքեզ դարձեալ վերստին յառաջին փառս հաստատեցից»⁵¹:

«Մանկութեան աւետարան»-ում մոգերի առնչությունը Պարսկաստանի ու

⁴⁸ Ընդհանրապես, Ադամ-Հիսուս կապը, որ խորհրդանշում է մարդկության փրկությունը, շեշտված է հատկապես հինկտակարանյան պարականոն գրվածքներում, որոնց զգալի մասը ստեղծվել է հայ ինֆնուրույն հողի վրա: Ադամին և Եվային առնչվող պարականոնների հայերեն բնագրերի մի մասը տե՛ս **Սթոուն Մ.**, *Պարականոն բնագրեր և ավանդություններ*, Երևան, 2014, էջ 9-37:

⁴⁹ St' u **Landau B. Ch.**, "One Drop of Salvation from the House of Majesty": Universal Revelation, Human Mission and Mythical Geography in the Syriac *Revelation of the Magi*, " *The Levant: Crossroads of Late Antiquity*, ed. **E. B. Aitken** and **J. M. Fossey**; Leiden, 2014, 83-103:

⁵⁰ Այն գաղափարը, ըստ որի մոգերը հարազատ եղբայրներ էին, հատուկ է հայկական ավանդությանն ընդհանրապես, տե՛ս **Սարգիսեան Բ.**, *Երեք թագաւոր մոգերու գրոյցն հայկական մատենագրութեան մեջ և անոր կարևորութիւնը*, Վենետիկ, 1910:

⁵¹ ՄՄ7574, ք. 62ա: Աստծո և Ադամի միջև կնքված Կապի մասին մանրամասն տե՛ս **Stone M. E.**, *Adam's Contract with Satan, the Legend of the Cheirograph of Adam*, Bloomington, 2002, pp. 63-92:

պարսիկների հետ կապվում է պարականոն այլ ավանդությունների հետ⁵²: Արարչությունը սկսվող ու Պենտեկոստեով ավարտվող մեկ այլ անվավեր գրվածքի («Քարայրի գանձերը», VI-VII դդ.) հեղինակը քաջատեղյակ է պարսկական մշակույթին և իր երկի XLV-XLVI գլուխները նվիրում է պարսիկ մոգերին, որոնց հայտնված աստղի մեջ պատկերվում է «թագակիր Կույսը՝ մանուկը գրկին»⁵³: Ավանդության համաձայն՝ մոգերը դրախտից ոչ հեռու գտնվող լեռան քարայրից վերցնում են Ադամի՝ դրախտից բերված գանձերը՝ ոսկին, կնդրուկն ու մյուռոնը, և ուղևորվում Իսրայել:

Մոգերի առնչությունը պարսիկներին բացատրվում է նաև սուրբգրային և եկեղեցական ավանդությամբ: Եկեղեցու հայր սբ. Եպիփան Կիպրացուն (315-403 թթ.) վերագրվող ճառերում հեղինակը խոսում է նաև Աբրահամի Քետուրա աղախնից ծնված վեց որդիների մասին, որոնց «ետ Աբրահամ պարզես, եւ արձակեաց զնոսա յԻսահակայ որդւոյ իւրոյ, մինչդեռ ինքն կենդանի էր, ընդ արեւելս՝ յերկիրն յարեւելից» (Մնն. 25: 1-6)⁵⁴: Անդրադառնալով Կիպրացու ճառերում տեղ գտած Աբրահամի քետուրածին որդիների ազգաբանությունը՝ Բ. Սարգսյանը, ըստ Հ. Քյոսեյանի՝ իր աշխատության մեջ⁵⁵ արտահայտում է այն միտքը, որ, ըստ էության, նրանցից են սերել Աքեմենյան հարստության հիմնադիր Կյուրոս արքան (Ք. ա. 550-529 թթ.) ու նրա ժառանգները՝ հայ և պարսիկ Արշակունիները: Սրա վկայությունն են Կյուրոսին հասցեագրված մարգարեների գովասանական խոսքերը (Բ Մնաց. ԺԱ, 1-10, Եզրի Բ, 4, Դանիելի Թ, 6, Եսայու ԺԳ, ԺԴ, ԻԱ, ԽԵ, 1-4), որոնք մատնանշում են նրա մեսիական բնույթը և Քրիստոսի նախորինակը լինելու հանգամանքը: Հետևաբար, Մեսիայի գաղափարը հատուկ է եղել ոչ միայն Աբրահամի օրինավոր հաջորդներին ու Իսրայելի 12 ցեղերին, այլ նաև «պարթևազն կամ քետուրածին» սերունդներին, որոնք պահպանել են Աբրահամից ստացած գիտելիքները⁵⁶:

⁵² St'eu օրինակ՝ **Heyden K.**, “The Legend of Aphroditianus. A new translation and introduction”, *New Testament Apocrypha. More Noncanonical Scriptures*, vol. 1, ed. by **Burke T. and Landau B.**, Michigan, 2016, pp. 1-16, նաև՝ **Порфирьев И. Я.**, “Сказание Афродитиана Персянина о чуде, бывшем в персидской земли, и Слово о рождении Христовом и о пришествии волхвов”, *Апокрифические сказания о новозаветных лицах и событиях по рукописям Соловецкой библиотеки*, Москва, 1890, стр. 13-20: «Պատմութիւն Երանելոյն Մարիամոս»-ում Հիսուսին երկրպագելու եկած երեք մոգերը ազգությամբ պարսիկ են, տե՛ս **Budge W.**, *The History of the Blessed Virgin Mary...*, pp. 35-38:

⁵³ **Минов С.**, “Иранские мотивы в «Пещере сокровищ» и проблемы аккультурации сирийских христиан в Сасанидской империи”, *Символ, журнал христианской культуры* (61), СПб.-Москва, 2012, с. 12-29.

⁵⁴ **Սուրբ Եպիփան Կիպրացի**, ճառք, աշխ. Հ. Քյոսեյանի, էջմիածին, 2013, էջ 8:

⁵⁵ **Սարգիսեան Բ.**, «Երեք թագաւոր մոգերու զրոյցն հայկական մատենագրութեան մէջ և անոր կարևորութիւնը», *Բազմավէպ, Վենետիկ*, 1910, էջ 68-69:

⁵⁶ **Սուրբ Եպիփան Կիպրացի**, ճառք, էջ 9: Պարսիկների ու հայերի՝ որպես Աբրահամի ու Քետուրայի սերունդներ ներկայացնելու ավանդույթի մասին տե՛ս նաև **Terian A.**,

Հատկանշական է նաև մոզերի երկրպագութեան դրվագում ևս մեկ նորամուծութիւն, որ ամենայն հավանականութեամբ՝ պատկանում է հայ հեղինակին: Պարականոն ավետարանում Հիսուսը մոզերից յուրաքանչյուրին ներկայանում է երեք տարբեր կերպարանքներով⁵⁷, որոնք հաստատում են քրիստոսաբանական կարևոր դրույթներ, ըստ որոնց՝ ա) նորածինը իրական Աստված է, որին խոնարհվում են երկնային ուժերը. «Ասէ Փասպար թագաւորն. Յորժամ զկնդրուկն տարայ մատուցի առաջի նորա, տեսի զնա մարմնով որդի Աստուծոյ բազմեալ յաթոռ փառաց, և զօրք անմարմինք սպասաւորէին նմա»⁵⁸, բ) նա Դավթի թագավորական սերունդից է, որ ծնվել է նրա իսկ քաղաքում. «Ասէ Պաղտասար. Եւ ի մտանելն իմոյ՝ տեսի զնա նստեալ ի բարձրութեան գահոյից, տեսի զնա մարմնով որդի մարդոյ և զօրք բազմութեան առաջի նորա՝ որք անկեալ երկիր պագանէին նմա»⁵⁹, գ) նա օժտված է մարդկային կատարյալ բնույթով, ում խորթ չէ տառապանքը, միևնույն բնութեամբ նա մահանում և հարուստն է առնում. «Ասէ Մելքոն. Ես մարմնով տեսի զնա ի շարշարանս մեռեալ, դարձեալ յարուցեալ իսկ և կենդանի»⁶⁰: Եվային ու մոզերին հայտնված նորածինը մարդեղացած Աստված է, որ զորութիւն ունի փոխելու իր կերպարանքը՝ բացահայտելով իր անձերի բազմազանութիւնը⁶¹:

Ամփոփելով ասվածը, կարող ենք հավելել, որ հայկական «Մանկութեան աւետարան»-ը, սերելով Հակոբոսի նախաավետարանից և վերջինի նման ներկայացնելով Մարիամի ու Հիսուսի ծննդյան մասին պատմութիւնները, բովանդակային առումով երբեմն այնքան է հեռանում իր աղբյուրից, որ թվում է, թե մենք գործ ունենք երկու տարբեր ստեղծագործութիւնների հետ: Ընդ որում, այս տարբերութիւնները, որոնց հիմքում ընկած են հիմնականում ասորական ավանդութիւնները, արտահայտվում են այնպիսի հատվածներում, որոնք էական նշանակութիւն ունեն ինչպես «Մանկութեան աւետարան»-ի ծագման, այնպես էլ երկում արծարծված գաղափարական հարցերը պարզաբանելու համար: Իրանք հիմնականում վերաբերում են քրիստոնեական դավանաբանութեան կարևորագույն դրույթներին, որոնց հիման վրա ձևավորվել է քրիստոնեութիւնը որպէս համակարգված կրոն:

Patriotism and Piety in Armenian Christianity: the Early Panegyrics on Saint Gregory, New York, 2005, pp. 104-105:

⁵⁷ Ասորական պարականոն ավանդություններում Հիսուսը մոզերին է հայտնվում է բազմակերպ լույսի, նորածնի, երեխայի, հնազանդ ու տառապյալ մարդու, խաչյալի և հարուցյալի կերպարներով:

⁵⁸ ՄՄ7574, ք. 60ա-բ:

⁵⁹ Ա.նդ, ք. 60բ:

⁶⁰ Ա.նդ, ք. 60բ:

⁶¹ Дорфман-Лазарев И., “Возвращение в рождественскую пещеру ...,” с. 170-172.

**МАРИ МАМЯН
АРМЯНСКИЙ ПЕРЕВОД “ЕВАНГЕЛИЯ ДЕТСТВА” И
“ПРОТОЕВАНГЕЛИЯ ИАКОВА”: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ**

Ключевые слова: Иисус, Иаков, армянское Евангелие Детства, Протоевангелие, апокрифы, христианская литература.

“Протоевангелие Иакова”, также как созданное на основе этого апокрифа армянское “Евангелие Детства”, представляют в основном рождение и детство Марии и Иисуса. Однако, армянское “Евангелие Детства” отличается от “Протоевангелия” несколькими существенными особенностями. Эти особенности проявляются в сценах Благовещения (необычный диалог с ангелом), Рождения Христа (появление праматери Евы) и Поклонения волхвов (имена магов). Этим армянское “Евангелия Детства” отличается не только от “Протоевангелия”, но и от других аналогичных апокрифов. Благодаря им не только решаются вопросы, связанные с происхождением армянского “Евангелия Детства”, но и выявляются отраженные в нем догматические идеи, относящиеся к наиболее важным аспектам христианского вероучения (идея о вечном девстве Марии, идея спасения, идея воплощения Христа).

**MARI MAMYAN
THE ARMENIAN TRANSLATION OF THE *GOSPEL OF THE
INFANCY* AND THE *PROTOEVANGELIUM OF JAMES*: A
COMPARATIVE ANALYSIS**

Keywords: Jesus, James, Armenian Gospel of the Infancy, Protoevangelium, apocrypha, Christian literature.

The *Protoevangelium of James*, as well as the *Armenian Gospel of the Infancy* created on the basis of this apocryphon, present the birth and childhood of Jesus and Mary. Yet, the *Armenian Gospel of the Infancy* contains a number of essential differences from the *Protoevangelium*. The differences between these two apocryphal writings, which are of ideological nature, appear in the episodes of the Annunciation (unordinary dialogue with the angel), the Nativity of Christ (the appearance of the foremother Eve), and the Adoration of the Magi (the names of the Magi). The aforementioned differences emphasize the uniqueness of the *Armenian Gospel of the Infancy* in comparison not only to the *Protoevangelium*, but also to other analogous gospels. Thanks to them, we can not only clarify the essential questions related to the origins of the *Armenian Gospel of the Infancy*, but also reveal the dogmatic ideas reflected in this apocryphon, which mainly belong to the more important aspects (the idea of the Perpetual Virginity of Mary, the idea of Salvation, the idea of the Incarnation of Christ) of the Christian doctrine.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՌԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ, ՄԵՀԳԻ ԲԱՂԻ

ԻՐԱՆԻ ՆԱԽԱԻՍԼԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԸ ԲՈՎԱՆԳԱԿՈՂ ՁԵՌԱԳՐԵՐԸ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ Զրադաշտականություն, Ավեստա, պահլավերեն, Հարություն Թիրյաքյան, բառարան, թարգմանություն:

Իրանի նախաիսլամական շրջանի գրականությունից հազվագյուտ նմուշներ են պահպանվել միջին պարսկերեն (պահլավերեն) ու Ավեստայի լեզուներով: Այդ նմուշները գրի առնված լինելով սկսած IX-X դարերից՝ շրջանառության մեջ են գտնվել Իրանի ու Հնդկաստանի զրադաշտական համայնքներում¹: Աշխարհում շատ չեն ձեռագրական հավաքածուները, որոնցում կան Իրանի զրադաշտական շրջանի գրականության նմուշներ: Մատենադարանի «Այլալեզու ձեռագրերի» ֆոնդում պահվում են պահլավերեն ու Ավեստայի լեզուներով երեք ձեռագրեր (ձեռ. 125, 129, 130), որոնք 1970 թ. որպես նվիրատվություն ստացվել են ԱՄՆ-ում բնակվող բանաստեղծ Միհրդատ Թիրյաքյանից, որը հայտնի էր նաև Ֆրիդուսու «Շահնամեից» կատարված թարգմանությամբ: Նշված ձեռագրերը իրենց բովանդակությամբ կապվում են նրա հոր՝ բժիշկ, բանասեր-արևելագետ և հասարակական գործիչ Հարություն Թիրյաքյանի (1845-1919 թթ.) գիտական հետաքրքրությունների հետ և ամենայն հավանականությամբ նախապես պատկանել են նրան: Վերջինս, ծնված լինելով Օսմանյան կայսրության տարածքում գտվող Կեսարիայի Թալաս բնակավայրում՝ իր կյանքի տասը տարիները (1896-1906 թթ.) անց է կացրել Իրանում: Փարիզում կրթություն ստացած անվանի բժիշկը, որը Օսմանյան կայսրությունից հեռացել էր քաղաքական հետապնդումներից խուսափելու համար², Իրանում դառնում է շահի արքունի բժիշկը, որին վստահված էր շահի հարեմի կանանց ու արքայազների առողջությունը՝ միաժամանակ փորձում էր բավարարել իր բանասիրական հետաքրքրությունները:

¹ Carlo G. Cereti, “Middle Persian Literature,” *Encyclopædia Iranica*, available online at <http://www.iranicaonline.org/articles/middle-persian-literature-1-pahlavi> (accessed online at 1 March 2017).

² Հ. Թիրյաքյանի մասին կենսագրական մանրամասները տե՛ս Ա. Ալպոյաճյան, *Պատմություն հայ Կեսարիոյ*, հ. Բ, Գանիթ, 1937, էջ 2046-8:

Մեծանուն բժշկի հետաքրքրությունների լայն շրջանակն իր մեջ ընդգրկում էր թե՛ պարսկական պոեզիայի գոհարները, թե՛ հայ-իրանական պատմա-համեմատական լեզվաբանության խորին ծալքերը և թե՛ զրադաշտական կրոնի գաղափարախոսությունն ու աստվածաբանությունը: Նրա այս բազմակողմանի հետաքրքրություններն իրենց արտացոլումն են գտել նրա տպագիր ու անտիպ գործերում: Հ. Թիրյաքյանը թարգմանություններ է կատարել պարսից պոեզիայից, որոնցից XX դարի սկզբին հրատարակվել են Սա'ադու «Փոլեսթանը», հատվածներ Ֆիրդուսու «Շահնամից»³: Այն, որ թարգմանությունները կատարված են չափածո ժանրի նրբություններին լավատեղյակ մի անձնավորության կողմից, փաստում են նրա հրատարակած ուսումնասիրությունը՝ նվիրված հայկական տաղաչափությանը, ինչպես նաև, ֆրանսերենից թարգմանված Նիկոլա Բուալոյի աշխատությունը տաղաչափության մասին⁴:

Հ. Թիրյաքյանը ծանոթ լինելով հնդեվրոպական պատմահամեմատական լեզվաբանության իր ժամանակի կարկառուն ներկայացուցիչների՝ Հյուբշմանի, Մեյերի և այլոց գործերին⁵, նաև գիտակցելով իրանագիտության կարևորությունը հայ բանասիրության համար՝ խորանում է պարսկերենի ու հայերենի պատմահամեմատական լեզվաբանության մեջ: Այս բնագավառում նրա կատարած ուսումնասիրությունների արդյունքն են դառնում «Արիահայ բառարանը»⁶, «Հայերենի գեղծումներ» (տպ. Նյու Յորք, 1917թ.), «Հայ-իրանական ուսումնասիրությունը» (տպ. Վիեննա, 1922 թ.) աշխատությունները:

Իրանում գտնվելու ընթացքում Հ. Թիրյաքյանը հասցնում է տիրապետել պահլավերենին և անգամ թարգմանություններ կատարել այդ լեզվից հայերենի՝ հայ ընթերցողին ներկայացնելով պահլավերեն գրականությունից մեզ հասած մի քանի նմուշների հայերեն տարբերակները: Թիրյաքյանը պահլավերենից թարգմանում է պատմական ու բարոյախրատական բովանդակություն ունեցող 6 աշխատություն. «Արտաշիր Բաբական, Կարնամակը» (տպ. Փարիզ, 1906), «Ատրպատ Մարասպանտա, Անդարձը» (տպ. Նյու Յորք, 1909), «Գանձ Շայեկանը», «Փարոխ Պերոզը», «Խոսրով Կուստանը» և «Մատիկան ճատրակին»⁷: Այդ թարգմանությունները կատարվել են Հնդկաստանի զրադաշտականներ Դաստուր Խոդայար Շահրիարի և Դաստուր Փեշոթանի աշ-

³ Սաաթի, Կոլեստան, քարգվ. Յ. Թիրեաֆեանի, Նիւ Եորֆ, 1920; Ֆիրդուսի, Շահնամակ, քարգվ. Յ. Թիրեաֆեանի, Նիւ Եորֆ, 1909:

⁴ Յ. Թիրեաֆեան, Հայկական տաղաչափություն, Նիւ Եորֆ, 1919, Պուալոյ, Արուեստ քերթոցական, քարգվանեց գաղղ. բնագրէն Յ. Թիրեաֆեան, Նիւ Եորֆ, 1919:

⁵ Յ. Թիրեաֆեան, Արիահայ բառարան, Վիեննա, 1914, էջ 4:

⁶ Այս աշխատության մասին տե՛ս Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, էջ 356-358:

⁷ Վերջին չորս բնագրերը հրատարակվել են նրա մահից հետո Վիեննայում լատինատառ տառադարձմամբ ու հայերեն քարգվանությամբ (Յ. Թիրեաֆեան, Չորս պահլավի բնագիրներ, քարգվ. պահլա բնագրէն, Վիեննա, 1957):

խատասիրությունը հրատարակված պահլավերեն բնագրերի ու նրանց պարսկերեն թարգմանությունների հիման վրա⁸ : Ինչպես հեղինակն ինքն է նշում «Կարնամակի» առաջաբանում՝ այդ երկի ըմբռնման ու թարգմանության հարցում նրան օգնել է Հնդկաստանի զրադաշտական խոդայար Շահրիարը: Վերջինիս, որին Թիրյաքյանը համարում է «Պարսկաստանի միակ զենդ ու պահլաագետ գիտնականը», բախտ է վիճակվում հանդիպել Շիրազում, որտեղ նրանք երկար զրույցներ են ունենում⁹ : Հ. Թիրյաքյանի այս թարգմանությունների կարևորության ու գիտականության մասին է խոսում նաև այն իրողությունը, որ նա չբավարարվելով վերը նշված զրադաշտականի առաջնորդությունից՝ համեմատում է «Քարնամակի» իր թարգմանությունը Թ. Նյուդեքեի գերմաներեն թարգմանության հետ և գոհունակությամբ նկատում, որ «ըստ ամենայնի համաձայն ենք, բացի մի քանի մանր տարբերություններէ յընթերցուածը եւ յիմաստ, որոց համար երբեմն ինձ հարկ եղաւ անոր մօտենալ, երբեմն ալ զնա առ իս հրաւիրել»¹⁰ :

Գրականության և արվեստի թանգարանի Հ. Թիրյաքյանի ֆոնդում պահպանվել են Հ. Թիրյաքյանին հասցեագրված երեք նամակներ, որոնք փաստում են հայ բժիշկ-բանասերի և Իրանի զրադաշտականների միջև սերտ հարաբերությունների ու անգամ զրադաշտականների որոշ խնդիրների լուծման հարցում նրա հանդես բերած օժանդակության մասին¹¹ : Նամակներից երկուսը վերը նշված զրադաշտական խոդայար Շահրիարից են, դրանցից մեկը՝ թվագրված 1905 թ. Ջրադաշտականների Նասերի միությունից, որով շնորհակալություն է հայտնվում Հ. Թիրյաքյանին իրենց հանդես նրա կատարած «բարի արարքների համար», որոնց մեջ հատկապես շեշտվում է վերջինիս միջնորդությունը արքայորդի Շո'ա ալ-Սոլթանեի¹² առաջ, որպեսզի միջոցներ ձեռք առնվեն նրան ենթակա ճանապարհային պահակակետերում երթևեկող զրա-

⁸ **Յ. Թիրեաֆեան**, *Չորս պահլավիկ բնագիրներ*, էջ 7: **Khudayar Dastur Shahariyar Irani**, *The Pahlavi texts: Containing Andarz-i Adarbad Maraspandan, Andarz-i Vehzad Farkho Firuz, Andarz-i Khusru-i Kavadan, Madigan-i Chatrang, And Karnamak-i Artakshatar-i Papakan, Bombay, 1899*. Այս պահլավերեն աշխատության 1899թ. Բումբեյ վիմատիպ հրատարակության մեկ օրինակը, որը հանդիսացել է Հ. Թիրյաքյանի սեփականությունը, այժմ պահվում է Ջարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի Հ. Թիրյաքյանի ֆոնդում, ֆ. 137:

⁹ **Արտաշիր Բաբական**, *Կարնամակ*, Թարգմ. պահլավերեն բնագրեն Յ. Թիրեաֆեան, Փարիզ, 1906, էջ ԺԱ.:

¹⁰ **Արտաշիր Բաբական**, *Կարնամակ*, էջ Ի:

¹¹ Գրակ. Թանգարան, Հ. Թիրյաքյանի ֆոնդ, թիվ 345, 1, 2, 354:

¹² Շո'ա ալ-սոլթանե — شعاع السلطانة Իրանի Ղաջարական շրջանի տիտղոսներից է, որ կրել է Մոզաֆարեդդին շահի որդի Մելիք Մանսուր Միրզան: Վերջինս իր հոր գահակալության շրջանում 1900/1 և 1904/5 թթ. նշանակվում է Իրանի Ֆարս նահանգի կառավարիչ (ک. 89. سليمانى، القاب رجال دوره قاجاريه، تهران 1379، ص. 89):

դաշտականներից հավելյալ գումարներ գանձելու դեմ¹³: Հ. Թիրյաքյանը որպես բժիշկ հիշյալ արքայորդու մոտ՝ Շիրազում էր գտնվում¹⁴ և բնականաբար կարող էր որոշ ազդեցություն ունենալ Ֆարս նահանգի կառավարիչ արքայազնի վրա: Հայ բժիշկ-բանասերի սերտ կապերը Իրանի զրադաշտականների հետ ակներև են նաև զրադաշտական կրոնական գաղափարախոսությունները և արարողակարգերին վերաբերող մի քանի ձեռագրերից ու արխիվային նյութերից, որոնք տեղ են գտել Չարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարանի Հ. Թիրյաքյանի ֆոնդում¹⁵:

Հ. Թիրյաքյանի բազմակողմանի հետաքրքրություններն ու պատմաբանասիրական գործունեությունն արտացոլող նմուշները մասամբ հրատարակվել են նրա որդու՝ Միհրդատ Թիրյաքյանի ջանքերով: Հիշյալ ձեռագրական նյութերից շատերն էլ վերջինիս կողմից նվիրաբերվել են Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանին և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանին:

Մատենադարանի արաբատառ ձեռագրական հավաքածուի երկու պարսկերեն ձեռագրեր (հ. 1018, 1611) պատկանել են Հ. Թիրյաքյանին, ունեն նրա կողմից կատարված հայերեն ու պարսկերեն գրառումներ, նաև 1804 թ. հիշատակարան՝ նրան նվիրված լինելու մասին: Այս երկու ձեռագրերը Մատենադարանին է նվիրել նրա որդին՝ Միհրդատ Թիրյաքյանը 1963 և 1972 թվականներին:

Պարսկերեն ձեռագրերից մեկը (Արաբատառ ֆոնդ, ձեռ. 1611) իրանցի XVIII դարի նշանավոր բժիշկ և բանաստեղծ Սեիդ Մուհամմադ Նասիր ալ-Դին Իսֆահանիի (մահ. 1769/70 թ.) «Բահարիե-ե փիր վա շավան» (Մերունու և երիտասարդ գարնանային քասիդ) պոեմի XIX դարի ընդօրինակությունն է՝ նուրբ «նասթա՛ լիդ» գրչությամբ՝ գեղեցիկ ճակատագրողով(10բ), լուսանցազարդերով և տողամիջյան ոսկե ատամնազարդերով (10բ-11ա): Թ. Յ1աբ-ին Հարություն Թիրյաքյանի կողմից արտագրված է պոեմի սկզբի հատվածը և ստորագրված նրա կողմից՝ «Յ. Թիրիաքեան»:

Ձեռագրերից մյուսը (Արաբատառ ֆոնդ, ձեռ. 1018) պարսկերենի միջնադարյան բացատրական բառարաններից մեկի՝ Մուհամմադ Հուսեյն բ. Խալաֆ Թաբրիզիի (XVII դար) «Բորհան-ե դաթե՛ի» (Անվիճելի ապացույց) 1836 թ. ընդօրինակությունն է Մուհամմադ Մահդի Խորասանիի կողմից: Այս ձեռագիրն ունի հետագայի հիշատակարան (461բ) Ալի բ. Մուհամմադ Նասեր բ. Մուհամմադ Իբրահիմի կողմից 1804 թ. ապրիլի 7-ին այն բժիշկ Թիրյաքյանին նվիրելու մասին՝

بیادگار دستانه خدمت جناب ایوب باب دکتر تریاکیان تقدیم نمود 21 محرم 1322

¹³ Գրակ. Թանգարան, (Հ.Թ.Ֆ.), թիվ 354:


¹⁴ Արաաշիր Բաբական, Կարնամակ, էջ ԺԱ:

¹⁵ Գրակ. Թանգ., Հ. Թիրյաքյանի ֆոնդ, թիվ 129-136:

Այս ձեռագիրը թերևս մեկն էր այն բառարաններից, որոնցից Հ. Թիրյաքյանն օգտվել էր իր Արիահայ բառարանը գրելիս¹⁶ :

Մատենադարանի «Ալլալեզու ձեռագրերի» հավաքածուի մեջ տեղ գտած նախկինում Հ. Թիրյաքյանին պատկանող երեք ձեռագրերը բովանդակում են պահլավերեն ու Ավեստայի լեզվով տեքստեր: Մասնավորապես, ձեռագրերից մեկը բովանդակում է Ավեստայից հատվածներ՝ տողատակում պահլավերեն (կամ միջին պարսկերեն) թարգմանություններ (ձեռ. 125), զրադաշտականների աղոթքներ ու հատվածներ պահլավերեն ու Ավեստայի լեզվով բառարաններից (ձեռ. 129, 130):

Մատենադարանի պահլավերեն ու Ավեստայի լեզվով ձեռագրերի նկարագրությունը կատարվել է իրանցի հետազոտող Մեհրի Բաղիի կողմից: Հայերեն թարգմանության մեջ հնարավոր տերմինաբանական թյուրըմբռնումից խուսափելու համար նկարագրության անգլերեն տարբերակը ևս ընդգրկել ենք հոդվածում:



Ձեռ. 125

Անթվակիր: Թերթ՝ 148. չգրված 125բ-127ա, 146ա-148բ: Նյութ՝ ուսական թուղթ՝ ննչադրոշմով թ. 113: Մեծուրյուն՝ 17,5x22,5: Տող՝ 14: Թանափ՝ սև, ենթավերնագրերը՝ կարմիր: Անկազմ: Սեփականատիրոջ կնիադրոշմ՝ ՄԻՀՐԴԱՏ ԹԻՐԵԱՔԵԱՆ թթ. 3բ, 96բ:

¹⁶ 3. Թիրեաֆեան, Արիահայ բառարան, էջ 4:

Թթ. 1ա-145բ. Ավեստա, աղոթքներ: Ավեստայի բնագիրը Ավեստայի լեզվով՝ տողատակում պահլավերեն թարգմանությամբ: Հատուկ բացատրված են *nērang*, *wāj*, *āfrīn*, *barašnom* (թ. 129) բառերը:

1.2 Տեխստում *nīrang* (*nērang*) տերմինն է կիրառվում որպես զրադաշտական արարողության կամ ծեսերի ցուցումներ հետևյալ իմաստներով՝ 1) կարճ արարողություն, 2) ծիսական ցուցումներ պահլավերեն (Ավեստայի լեզվով լիտուրգիական տեխստերով), 3) Փագենդ *dibāčā*-ի տեխստը (*nīrangpīrozgarbād*, «թող արարողությունը հաջող լինի»), 4) սուրբ ցլի մեզը, 5) կարճ ազդեցություն ունեցող սուրբ կախարհանք¹⁷:

1.3 *Bāj/wāj*-ը մեծ նշանակություն ունեցող ձևակերպում էր, որ նախորդում կամ ուղեկցում էր որոշակի գործողության¹⁸:

1.4 *Āfrīn*-ը որպես տեխնիկական տերմին նշանակում է օրհնություն և օգտագործվում է օրհնաբանող աղոթքներում՝ օրհնության արարողությունը եզրափակելու և բարի ու պահապան ոգիներին կանչելու համար¹⁹:

1.5 *Barašnom*-ը ամենաբարդ ու ամենանշանակալի մաքրագործման արարողությունն է, որի ժամանակ աղոտոված անձը մաքրվում է ցլի մեզով, ջրով, փոշով ու 9 մեկուսի գիշեր անցկացնելու միջոցով²⁰:

Ձեռ. 129

Անթվակիր: Թերթ՝ 29: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 16,5x21: Տող՝ 14: Թանաֆ՝ սև, տողատակում՝ պարսկերեն համարժեք բառերը և ենթավերնագրերը՝ կարմիր: Սեփականատիրոջ կնիքադրոշմ՝ ՄԻՀԻԳԱՏ ԹԻՐԵԱՔԵԱՆ թթ. 24բ, 29բ: Նորոգված ու նորակազմ:

1. Թթ. 1բ-21ա. Ֆրահանգ-ի Փահլավիզ:

2. Թթ. 21բ-22ա. Աղոթքներ:

3. Թ. 22ա. Ֆրահանգ-ի Օիմ-էվաֆ, անավարտ:

4. Թթ. 22բ-28բ. Ֆրահանգ-ի Փահլավիզ, թվեր:

2.1 Նախախլամական Իրանի բառագիտություն: Երկու հակիրճ բառարանների՝ Ֆրահանգ-ի Փահլավիզի, Ֆրահանգ-ի Օիմ-էվաֆի ձեռագրերը միջին պարսկերենով (պահլավերեն) պահպանված գրականության մեջ մեծ թիվ են կազմում²¹:

¹⁷ Boyce J. W. & Kotwal F., “Zoroastrian baj and dron,” *Bulletin of the School of Oriental and African Studies*, 34, 1971, p. 140.

¹⁸ Ibid., 1, 57; Modi J. J., *Religious Ceremonies and Customs of the Parsis*, Bombay. 2nded. 1937, p. 15.

¹⁹ Modi, *op. cit.*, pp. 364-368.

²⁰ Modi, pp. 102-141; Hartmann S. S., *Parsism: the Religion of Zoroaster*, Leiden, 1980, pl. xix-xx.

²¹ Սողդերեն-միջին պարսկերեն-պարթևերեն բառարանի պատասխիկները խմբագրել ու հրատարակել է Հեննինգը, սակայն դրանք մինչ օրս համարվում են բառագիտական հե-

2.2 Ֆրահանգ-ի Փահլավիդ: Աշխատանքը ընդգրկում է բառեր, որոնք կազմողը իրենց գրությամբ «գրիչների» համար խնդրահարույց է համարել, այսպես կոչված (կեղծ)հետերոգրամները²² և (կեղծ)պատմական ուղղագրական ձևերը: Այսպիսի բառերը գրանցվել են իրենց պահլավերեն համարժեքների հետ: Մյուս բառերը ևս ունեն խնդրահարույց կամ երկակի ուղղագրություն: Պահլավերեն գրի ոչ հստակ բնույթը դժվարություններ է հարուցում, քանի որ այբուբենի մեկ տառը կամ նշանը կարող էր գործածվել մեկից ավելի հնչյունների համար: Բացի այդ, կապակցման ժամանակ որոշ տառեր ուրիշ կերպ են գրվում և նմանվում են այլ տառերի: Այս պատճառով շատ բառերի գրավոր ձևերը տարբերվում են իրենց արտասանության ձևերից: Ֆրահանգի կազմողը նշում է այս բառերից մի քանիսը և նրանց մի քանի երկիրաստ ձևեր, ինչպես, օրինակ, Օհրմագրի գրավոր ու հնչյունային ձևերը: Ժամանակի ընթացքում գրիչները այսպիսի ձևերը սկսում են տառադարձել Ավեստայի ու պարսկերենի տառերով, որպեսզի հետագա գրիչներին փոխանցեն ավելի հեշտ հիշվող ձևերով: Օրինակ՝ գրում էին ‘nhwm’ Օհրմագրի համար: Պետք է նշել, որ նրանք անտեղյակ չէին բառի արտասանությանը կամ բանավոր ձևին, բայց կողմնորման այդ տարբերակը պարզապես մնեմոնիկ ձև էր²³ դրանք մտապահելու համար: Բառարանում ընդգրկված բառերի երրորդ դասի մեջ այն բառերն են, որոնք անծանոթ են որոշ պահլավերեն ընթերցողներին, և դրանց համար հումանիչներ են տրվում. օրինակ՝ mezog (mezho սիսետ) – wenog (bino)²⁴:

տագրության չգերազանցված ձեռքերում (Henning W. B., *Sogdica*, London, 1940): Հեննինգը չէր կարող ընդգրկել սողդերենի մեծ ցանկը (T III T = SO 16201), որը հետագայում 2002 թ. տպագրեց Սունդերմանը (տե՛ս Sundermann W., “A Sogdian Word List,” In *Huyse* 2002): Հավանաբար Բրիտանյա իրանցիների ձեռնով գրված յոթ միջին պարսկերեն բայի օրինակներով (գրված հետերոգրամներով, բայց պահլավական գրով, որի վրա համարժեքներ են նշվում միայն դերբայների համար) մի թերթ հայտնաբերվեց թուրքա-նում, որը խմբագրեց և տպագրեց Բարը (Barr K., “Remarks on the Pahlavi Ligatures,” *Bulletin of the School of Oriental Studies*, 8, London, 1936, pp. 391-403; Герценберг, Л.Г., “Лингвистическая мысль и языковедческая практика в Иране в домонгольское время,” *История лингвистических учений*, Ленинград, 1981, сс. 96-114; Saymiddinov D., *Farhangnomahoi Forsii miyona [Middle Persian dictionaries]*, Dushanbe, 1994, apud Baevskii S.I., *Early Persian Lexicography: Farhangs of the Eleventh to the Fifteenth Centuries*. Revised and updated by John Perry, Folkestone, 2007, p. 46): Այս բառարանները ցույց են տալիս պարսկական բառագիրության վաղ զարգացումները:

²² Հետերոգրամները հաճախ օգտագործվող արամեական ծագում ունեցող բառերն են, որոնք գրվում են արամեերեն, բայց արտասանվում պահլավերեն, օրինակ գրվում է ‘LHM’ (արամեերեն - հաց), բայց արտասանվում ‘nōn’:

²³ Կանոնների համակարգ, որը հեշտացնում է անհրաժեշտ տվյալներ, փաստեր հիշելը՝ արհեստական ասոցիացիաներ ստեղծելու միջոցով:

²⁴ Nyberg H.S., *A Manual of Pahlavi. Part I: Texts*, Wiesbaden, 1964, pp. 130-136; Mackenzie D.N., *A Concise Pahlavi Dictionary*. London, 1971, pp. xi-xiv;

Բառարանը հետևում է Աֆհադականից եկող բառագիտական ավանդույթներին, ըստ որի բառերը դասակարգվում են բովանդակությանը համապատասխան 30 խմբով, որոնցից մի քանիսը վերնագիր չունեն. 1. գերբնական աշխարհ, 2. աշխարհիկ իրեր, 3. ջրեր, 4. մրգեր, 5. ուտելիք, 6. բույսեր, 7. չորփոսանիներ, 8. թռչուններ, 9. կենդանիներ, 10. մարմնի մասեր, 11. ժողովուրդ, 12. վերադասներ, 13. սառադրյալներ, 14. հեծելավարություն, 15. գրչություն, 16. մետաղներ, 17. դատավճիռ, 18-23. բայեր, 24. դերանուններ, 25. ածականներ, 26. մակբայներ, 27 ժամանակային բաժանումներ, 28. օրվա անուններ, 29. թվականներ, 30. բառերի արտասանության միավորներ և (արխայիկ, ժամանակակից) տարբերակներ²⁵:

Ձեռ. 130

Անթվակիր: **Թերթ՝ 8: Նյութ՝** եվրոպական թուղթ: **Մեծություն՝ 17,5x22: Տող՝ 14: Թանաֆ՝** սև, ենթավերնագրերը՝ կարմիր: Թերթերը եզրերից նորոգված, վերակազմած: Սեփականատիրոջ կնիադրոջ՝ ՄԻՀՐԳԱՏ ԹԻՐԵԱՔԵԱՆ թ. 7բ:

Թթ. 2-8 բովանդակում է Ֆրահանգ-ե Օիմ-էվաֆը, որին հաջորդում են աղոթքներ (Յասնա՛):

Ֆրահանգ-ե Օիմ-էվաֆը Ավեստայի լեզվով բառերի Ձենդ համարժեքների ու մեկնությունների հակիրճ բառարան է (տե՛ս վերը տերմիններ ու մեկնություններ): Աշխատությունը սկսվում է Ավեստայի լեզվով *oim* «մեկ» բառով և ավարտվում նրա *ewak* համարժեքով²⁶, որտեղից էլ բառարանի անվանումն է: Առաջաբանը ներառում է լրիվ վերնագիրը՝ «Ավեստայի լեզվով բառերի ու խոսքի ըմբռնման մասին, այսինքն թե ինչ են և ինչպես են նրանք Ձենդերենում»: Այն բաղկացած է 27 գլխից, որոնցից մի մասի

Sundermann, “Mittelpersisch” in: *Schmitt R.* (ed.), *Compendium Linguarum Iranicarum*, 1989, pp. 142-143.

²⁵ Պահպանված չորս առավել վաղ և արժանահավատ ձեռագրերն ընդօրինակվել են Իրանում. K25, S1, M, TD2 (**Barr K.**, *Selections from Codices K 7 and K 25 (Vispered and Frahangi Pahlavik) and tracings of the Avesta Codex K 1*, Copenhagen: Levin and Munksgaard, 1944): Մեկ այլ ուղղված տարբերակ կա, որում բառերը այբբենական կարգով են՝ ոչ շրջանի ավանդույթի հետևությամբ: Նրա երկու ձեռագրից (S2 և P) առաջինը ընդօրինակվել է Իրանում, մյուսը՝ Դասթուր Դարաբի ձեռքով Հնդկաստանում 1756 թ. Անկետիլ դյու Պերրոնի համար: Ուղղումները ներառում են կետեր, որոնք չկան հին տարբերակում: Պահպանված գրով բառարանի 7 պահպանված բայ բովանդակող մի թերթ հայտնաբերվել է Թուրքիայում գտնված մանիքեական ձեռագրերում: Հավանաբար թերթը իրանցի ֆրիստոնյաների՝ III-IV դդ. գրած մի բառարանից է: Թերթի վրա դերբայների պահպանված համարժեքներն են և բայական ձևերը հետերոգրամով (**Tafazzoli A.**, *Vāzānāma-ye minū-ye karad*, Tehran, 1348/1969, p.b):

²⁶ Սա բառի գրությունն է և ավանդական արտասանությունը, թեև այն իրականում արտասանվում է որպես *ek* (տե՛ս **Tafazzoli A.**, *Tārīkh-i Adabiyāt-i Irān Pīsh az Islām [History of Pre-Islamic Iranian Literature]*, Tehran: Nashr-i Naw & Muʿīn 1387/2008, pp. 323-4; **Barr K.**, *Selections from Codices K 7 and K 25*:

նյութը դասավորված է թեմատիկ խմբերում՝ թվականներ և որոշ մակբայներ (գլուխ 1), դերանունների, բայերի, գոյականների, ածականների սեռն ու թիվը և նրանց վերաբերող որոշ նյութեր (գլուխ 2), մարմնի մասեր և նրանց բնութագրիչներ (գլուխ 3), հարաբերական դերանուններ և որոշ մակբայներ (գլուխ 4), հանցանքներ և վիրավորանքներ, նրանց պատիժներն ու տուգանքները (գլուխ 25), ժամանակի չափումներ (գլուխ 27): Որոշ գլուխներում Ավեստայի բառերը դասավորված են ըստ նրանց սկզբնատառերի (գլուխ 4-5 մի մասը և գլուխներ 5-24): Գլուխ 26-ը բաղկացած է տարաբնույթ նյութից:

Քառասանը կարևոր է համարվել, քանի որ այն բովանդակում է որոշ բառեր, որոնք գոյություն են ունեցել Սասանյան ժամանակաշրջանի Ավեստայի բնագրերում և դրանից հետո: Նրանցում առկա որոշ լեզվաբանական եզրեր (որոնք օգտագործվում են գոյականների, ածականների ու դերանունների հոլովման համար) ևս մեծ կարևորություն ունեն: Ակներև է, որ Նրա կազմողները ծանոթ էին Գաթերին և Ավեստային, սակայն հեռու էին այդ լեզվի ըմբռնումից կամ նրա տերմինոլոգիայի մասին պատկերացումից: Բնագրի հեղինակը և գրության ժամանակն անհայտ են, սակայն ամենայն հավանականությամբ այն գրվել է IX-X դդ.²⁷:

Քանի որ Ավեստայի բառերի և արտահայտությունների շատ մեջբերումներ չեն համապատասխանում Ավեստայի պահպանված ոչ ամբողջական բնագրին և, հաշվի առնելով այն փաստը, որ այն դեպքերում, երբ բառային միավորների Ավեստայի ու Զենդ համարժեքները եզակի երևույթ չեն, կարելի է ենթադրել, որ եթե ոչ բոլորը, ապա գոնե պահպանված բառային միավորների ու արտահայտությունների մեծ մասը ծագում են Զենդից: Բացի այդ շատ բաժիններում մենք գտնում ենք Ավեստայի լեզվով մեջբերումներ ու մեկնաբանություններ, նույնի մանրամասն ցուցադրումներ պահպանվել ենով, ինչպես նաև շեղումներ, որոնց մեծ մասը վերաբերում են իրավագիտությանը²⁸:

²⁷ Tafazzoli A., *Tārīkh-i Adabiyāt-i Īrān*, p. 324.

²⁸ Malandra W., «Frahangi Oim,» *Encyclopaedia Iranica*, vol. 10, 123: Կա աշխատության երկու ձեռագիր՝ K20 (ժամանակակից) և MH6 (ընդօրինակված 1397 թ.), որոնք ծագում են նույն աղբյուրից: Այդ ձեռագրերը կազմել են Գասթուր Հոշանգի և Հաուգի (Haug M. & Jamaspji H., *An Old Zand-Pahlavi Glossary*, Bombay & London, 1867) աշխատության հիմքը, դրանք K20-ից սերող (երբեմն՝ MH6-ի հետ համեմատությամբ) մեկ դարից պակաս հնությամբ ընդօրինակություններ են: Վերջը նշում է, որ եթե Հաուգը ամբողջովին հենվեր K20-ին շատ մոտ MH6-ի վրա և կատարեր որոշ ուղղումներ, շատ ավելի երիտ բնագիր կկազմեր: Հաուգը Գասթուր Հոշանգի ձեռագրերը «անկախ աղբյուրներ» է համարում: Այս բնագրի հետ կապված մեկ այլ խնդիրն էլ այն է, որ Ավեստայի լեզվով Z-ի և Ծ-ի գրության ձևերը շատ նման են այս ձեռագրերում, և երբեմն դրանց միջև շփոթությունը հանգեցրել է «սխալ ընթերցման»: Վերջը հետագայում ավելացնում է, որ Ավեստայի

1. Ms. 125

Undated; 148 folios, ff. 125b-127a, 146a-148b are blank; Russian paper, papermaker's seal on f. 113; 17,5x22,5 cm; 14 lines to the page; black ink with subtitles in red; unbound; possession seal bearing the name of Mihrdat Tiryakian (ՄԻՀՐԴԱՏ ԹԻՐԵԱՔԵԱՆ) on ff. 3b, 96b.

ff. 1a-145b, codex, prayers, Avestan with interlinear Pahlavi translation, *nērang*, *wāj*, *āfrīn*, *barašnom* (f. 129).

1.2. In this text the term *nīrang* (*nērang*), as a Zoroastrian ritual or a series of ritual directions, is applied to the following: 1. A short rite; 2. Ritual directions in Pahlavi (in Avestan liturgical texts); 3. The text of the Pazand *dibāča* (*nīrang pīrozgar bād*, 'may the ritual be successful'); 4. Consecrated bull's urine (*gomēz*); 5. A short efficacious holy spell.²⁹

1.3. *Bāj/wāj* is a particular formula of great significance preceding, accompanying or following some action.³⁰

1.4. *Āfrīn*, as a technical term, denotes blessing and it is applied to benedictory prayers that close blessing ceremonies (*āfrīnagan*) held for invoking good and guardian spirits.³¹

1.5. *Barašnom* is the most complicated and the most significant purification rite in which the polluted person is cleansed with bull's urine, water, dust, and nine nights of seclusion.³²

2. Ms. 129

Undated; 29 folios; paper; 16,5x21 cm; interlinear Persian words and subtitles are in red; 14 lines to the page; possession seal bearing the name of Mihirdat Tiryakian on ff. 24b, 29b; repaired and rebound.

Frahang-i Pahlawīg, f. 1v – f. 21r

f. 21.v -22 prayers (daily)

f. 22r *Frahang-i Oim-Evak*, incomplete

f. 22v-28v *Frahang-i Pahlawīg*, numbers

possession seal bearing the name of Mihrdat Tiryakyan.

1000 և պահպակերեն 2250 բառ է ընդգրկված աշխատության մեջ: Ավետալի մոտ 880 բառ բացատրվում է պահպակերենով: Տրվում են նաև որոշ իրավական տերմինների համարժեքներ ու բացատրություններ, որոնց մի մասը կարելի է գտնել Արևելյի Սուրբ Գրքերում (*Sacred Books of the East*, vol.37, pp. 40, 44, 51, 56, 64, 79, 104, apud West):

²⁹ Boyce J. W. & Kotwal F., "Zoroastrian baj and dron, " p. 140; Haug M. & Jamaspji H., *An Old Zand-Pahlavi Glossary*, Bombay & London, 1867.

³⁰ Ibid., 1, 57; Modi J. J., *Religious Ceremonies and Customs of the Parsis*. Bombay. 1937, p. 15.

³¹ Modi, pp. 364-368.

³² Modi, pp. 102-141; Hartmann S. S., *Parsism: the religion of Zoroaster*. Leiden, 1980, pl. xix-xx.

2.1. Lexicography is Pre-Islamic Iran. Manuscripts of two concise dictionaries are extant among Middle Persian (Pahlavi) literature: *Frahang-i Pahlawīg* and *Frahang-i Oīm Ēwāk*.³³

2.2. *Frahang-i Pahlawīg*. The work includes words which were apparently considered by the compiler to be problematic, in terms of spelling, to debīrs “scribes,” i.e. (pseudo-)heterograms³⁴ and (pseudo-) historical orthographic forms. Such words were compiled together with their Pahlavi equivalents. Other entries include words which were problematic and/or ambiguous in terms of orthography. The ambiguous nature of the Pahlavi script involves difficulties, e.g. one letter of the alphabet or one ligature may be employed to indicate more than one phoneme. It may also be the case that in combination, some characters (i.e. letters) are written differently from their original forms and resemble other letters, therefore, the written forms of many words are different from their corresponding pronunciation. The compiler of the *Frahang* quotes some of these words and their unambiguous forms (such as the written and phonetic forms of Ohrmazd). In the course of time, scribes would transcribe such words in the Avestan and Persian letters to provide themselves and also other scribes with forms which could be conveniently committed to memory. For instance, they would write ‘nhwm’ for Ohrmazd. It is to be noted that they were not unaware of the pronunciation or the oral form of the word, but this technique of encoding was merely mnemonic. The third class of words included in this dictionary constitute those unknown to some Pahlavi readers, for which synonyms were provided, e.g. *mezog* (*mezho*, “chickpea, garbanzo”) – *wenog* (*binog*).³⁵

³³ Fragments of a Sogdian-Middle Persian-Parthian dictionary were edited and published by Henning in his *Sogdica* which are still recognized as an unsurpassable achievement of lexicographical research (**Henning W. B.**, *Sogdica*). Henning was not able to include the great Sogdian word list T III T = SO 16201, which was later printed by Sundermann in 2002 (see **Sundermann W.**, “A Sogdian Word List”). A folio with seven Middle Persian verbal paradigms (in heterograms, but in Pahlavi script, on which equivalents are mentioned merely for infinitives), written apparently by Christian Iranians was uncovered in Turfan and was edited and published by Bar (**Barr K.**, “Remarks on the Pahlavi Ligatures”; **Герценберг, Л.Г.**, “Лингвистическая мысль и языковедческая практика в Иране в домонгольское время”; **Saymiddinov D.**, *Farhangnomahoi Forsii miyona [Middle Persian Dictionaries]*). These dictionaries reveal the early development of Persian lexicography.

³⁴ Heterograms were frequently used words of Aramaic origin, written in Aramaic but pronounced in Pahlavi, e.g. LHM “bread” was pronounced *nān*.

³⁵ **Nyberg H.S.**, *A Manual of Pahlavi. Part I: Texts*. Wiesbaden, 1964, pp. 130-136; **Mackenzie D.N.**, *A Concise Pahlavi Dictionary*. London, 1971, pp. xi-xiv;

The dictionary follows the lexicographic conventions tracing back to Akkadian, hence the categorization of the entries on the basis of subject matter in 30 chapters (some without heading): 1. supernatural world 2. mundane things 3. waters 4. fruits 5. edible things 6. plants 7. quadrupeds 8. birds 9. animals 10. members of body 11. people 12. superior people 13. inferior people 14. horsemanship 15. writing 16. metals 17. judgment 18-23. verbs 24. pronouns 25. adjectives 26. adverbs 27. temporal divisions 28. names of days 29. numerals 30. units and variant (archaic and modern) spellings of words.³⁶

Ms. 130

Undated; 8 folios; European paper without watermark; 17, 5 x 22cm; 14 lines to the page; black ink with subtitles in red; there are restored edges on some folios; repaired and rebound; the possession seal bearing the name of Mihirdat Tiryakian is on f. 7b.

Folios 2-8 contain *Frahang-i Oim-Ēvak* to be followed by Prayers (Yasna?).

3.1. *Frahang-i Oim-Evak*. A concise glossary of Zand equivalent(s) and gloss(es) for Avestan words and passages (See above, Terms and definitions). The work opens with the Avestan word *oim* “one” and its equivalent *ewak*,³⁷ hence the title of the glossary. The opening section includes the full title: “On the understanding of the Avestan words and speech, i.e. what and how their Zand are.” It consists of 27 chapters, some of whose material are arranged according to the subject-matter, e.g. numerals and some adverbs (chapter 1); gender and number for pronouns, verbs, nouns, adjectives and some materials related to them (chapter 2); body members and their characteristics (chapter 3);

Sundermann, “Mittelpersisch” in: **Schmitt R.** (ed.), *Compendium Linguarum Iranicarum*, 1989, pp. 142-143.

³⁶ Four of the earlier extant manuscripts of the work were copied in Iran and they are more reliable: K25, S1, M, TD2 (**Barr K.**, *Selections from Codices K 7 and K 25*). Another recension exists which is arranged alphabetically on the basis of a later tradition. The two manuscripts: S2 and P, the former was copied in Iran and the latter was copied by Dastur Darab in India in 1756 for Anquetil du Perron. This recension includes entries, none of which may be found in the older recension. A folio of a dictionary in Pahlavi script, including seven Pahlavi verbs, was uncovered amongst Manichaean manuscripts discovered in Turfan. Apparently, the folio belonged to a dictionary copied by Iranian Christians writing their works in Middle Persian and in the Pahlavi script in the third or fourth centuries. Pahlavi equivalents of infinitives and verbal paradigms in heterogram are to be found on the folio (**Tafazzoli A.**, *Vāza-nama-ye minu-ye karad*, Tehran, 1348/1969, p.).

³⁷ This is the written form and the traditional pronunciation of the word, though the word was pronounced as *ek*, see **Tafazzoli A.**, *Tārīkh-i Adabiyāt-i Īrān Pīsh az Islām [History of Pre-Islamic Iranian Literature]*, pp. 323-4.

relative pronouns and some adverbs (chapter 4); crimes and offenses and their punishments and penalties (chapter 25); time measurement (chapter 27). In some chapters, Avestan words are arranged according to their initial letters (a part of chapter 4 and chapters 5-24). Chapter 26 consists of miscellaneous materials.

The dictionary is considered to be of importance since it contains some words which used to be extant in the Avestan texts in the Sassanid era and thereafter. Some linguistic terms contained herein (e.g. used for the inflection of nouns, adjectives and pronouns) are also of great importance. The compilers were apparently aware of Gathic and later Avestan, but scientific and linguistic understanding of the language or a terminology for linguistic concepts is not evident from the extant text. The authorship and the date of the text are unknown, but it was apparently compiled in the ninth or tenth centuries.³⁸ As many citations of Avestan words and phrases lack any correspondence in the extant incomplete text of the Avesta and also considering the fact that in cases, where the Avestan and Zand equivalents of lexical units or phrases happen to not be *hapax legomena*, it may be conjectured that if not all, at least a great number of the Pahlavi lexical units and phrases derive from the Zand. Besides, in a great number of sections, we find Avestan citations and glosses, detailed expositions of the same in Pahlavi, as well as digressions, the majority of which deal with jurisprudence.³⁹

³⁸ **Tafazzoli A.**, *Tārīkh-i Adabiyāt-i Īrān Pīsh az Islām*, p. 324.

³⁹ **Malandra W.**, “Frahangi Oim,” *Encyclopaedia Iranica*, vol. 10, 123. There exist two mss of the text, i.e. K20 (contemporary) and MH6 (copied in 1397), which share a common origin. The mss which formed the basis of Dastur Hoshang and Haug’s work appear to have been copies less than a century old and descended from K20; but at times, he consulted MH6. West maintains that in case Haug had put all his trust in MH6, which bears an intimate resemblance with K20, and had made few corrections, he would have been able to edit the text far more correctly. Haug regarded Dastur Hoshang’s mss as “independent authorities.” Another problem concerned with the edition of this work is that the orthographic forms of the Avestan z and δ bear a close resemblance in such mss and, at times, the confusion between the two has caused “misreadings.” West further adds that approximately 1000 Avestan and 2250 Pahlavi words are contained in the work. About 880 Avestan words (independently or co-occurring with other words in phrases, some of which are from the lost chapters of the Avesta) are explained in Pahlavi. Equivalents and explanations have also been provided for some legal terms, some of which may be found in *Sacred Books of the East* (vol.37, pp. 40, 44, 51, 56, 64, 79, 104, apud **West**).

KRISTINE KOSTIKYAN, MEHDI BAGHI
MANUSCRIPTS IN MATENADARAN THAT CONTAIN WORKS OF
PRE-ISLAMIC IRANIAN LITERATURE

Keywords: Zoroastrianism, Avesta, Pahlavi, Harutyun Tiryakyan, dictionary, translation.

Mihrdat Tiryakyan, a poet who translated parts of Firdausi's *Shahnameh*, generously donated two Persian manuscripts (Arabic Script Collection, ms. 1018, 1611) to Matenadaran in 1963 and 1972, as well as three manuscripts containing parts in Pahlavi and Avestan (Non-Armenian Manuscript Collection, ms. 125, 129, 130) in 1970. The manuscripts used to belong to the donor's father Harutyun Tiryakyan, an outstanding physician and philologist, who was interested in the comparative linguistics of Persian and Armenian, and published works on the subject. In addition to translating Firdausi and Saadi, H. Tiryakyan also translated historical and didactic works in Pahlavi. While most of his translations and research were published during his lifetime, his son Mihrdat continued the efforts after his death. A considerable part of H. Tiryakyan's personal archive currently residing in the Charentz Museum of Literature and Art, as well as the aforementioned manuscripts, refer to his time in Persia (from 1896 to 1906), during which he served as the chief physician of the Shah's harem, his scientific research in comparative linguistics, his translations from Middle and New Persian, as well as his close ties with the high officials of the Qajar government and the Zoroastrian community of Iran. The article describes the manuscripts donated to Matenadaran by M. Tiryakyan that contain works in New Persian, Middle Persian and Avestan.

КРИСТИНЕ КОСТИКЯН, МЕХДИ БАГИ
РУКОПИСИ МАТЕНАДАРАНА, СОДЕРЖАЩИЕ ПРОИЗВЕДЕНИЯ
ДОИСЛАМСКОЙ ЛИТЕРАТУРЫ

Ключевые слова: Зороастризм, Авеста, пехлеви, Арутюн Тирякян, словарь, перевод.

Михрдат Тирякян, поэт и переводчик отрывков из “Шахнаме” Фирдоуси на армянский, великодушно даровал Матенадарану две персидские рукописи (Арабографический фонд, рук. 1018, 1611) в 1963 и 1972 году, и три рукописи, содержащие тексты на пехлевийском и авестийском языках (Иноязычный фонд, рук. 125, 129, 130) в

1970 г. Эти рукописи ранее принадлежали отцу дарителя, выдающемуся врачу и филологу Арутюну Тирякяну. В сферу интересов А. Тирякяна входили вопросы сравнительно-исторической лингвистики армянского и иранских языков. Он перевел на армянский “Голестан” Саади и отрывок из “Шахнаме” Фирдоуси с персидского, а также некоторые сочинения доисламской историко-дидактической литературы Ирана с пехлеви. Основная часть его переводов и языковедческих изысканий была опубликована еще при жизни автора, часть же была напечатана позднее усилиями его сына Михрдата Тирякана. Значительная часть личного архива А. Тирякяна, хранящегося в Музее литературы и искусства имени Чаренца, а также рукописи, принадлежавшие ему, отражают десятилетний период его жизни в Иране (с 1896 по 1906 г.) в качестве главного врача шахского гарема, его научные изыскания в области сравнительно-исторического языкознания, его отношения с высокопоставленными чиновниками каджарского правительства, а также с зороастрийской общиной Ирана. В статье дано описание рукописей, содержащих произведения доисламской литературы, подаренных Матенадарану М. Тирякяном.

ԲՆԱԳՐԵՐ, ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՋՈՒԿԻԵՏԱ ԷՅՆԱԹՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ «ՅԱՂԱԳՍ ԱՆԿԻՒՆԱՎՈՐ ԹՈՒՈՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ մաթեմատիկա, եռանկյուն թվեր, քառանկյուն թվեր, տասնհինգնակյուն թվեր, Պյութագորաս, Հին Հունաստան, վանական տիպի բարձրագույն դպրոց:

Միջնադարյան Հայաստանի վանական տիպի բարձրագույն դպրոցներում հատուկ ուշադրություն էին դարձնում ճշգրիտ գիտությունների՝ մաթեմատիկական, տիեզերագիտական, տոմարագիտական հարցերի քննարկումներին:

Մաթեմատիկական հնագույն գիտություններից մեկն է: Անհիշելի ժամանակներից նրա զարգացման վրա մեծ ազդեցություն է գործել այսպես կոչված «մաթեմատիկական բնագիտությունը»¹: Բնությունը հասկանալու և բացատրելու փորձերը ճշգրիտ չէին կարող լինել առանց մաթեմատիկական հաշվարկներ կատարելու հմտության: Երկար տարիների, դարերի ճանապարհ է անցել գիտության այս ճյուղը:

Եթե սկզբում հաշվումները կատարում էին մատների, քարերի միջոցով, ապա հետագայում ստեղծվեցին թվերի որոշակի նշանակումներ: Երկար ժամանակ օգտագործվել են տառային համակարգեր, ինչպիսին էր (հունարենի հետևությունք) նաև հայկականը: Պատմական զարգացումը բերում էր թվային համակարգերի կատարելագործմանը: Այժմ ամբողջ աշխարհում գործածվող տասնորդական, այսպես կոչված «արաբական» առաջին համակարգը ստեղծվել է մ.թ. վեցերորդ դարում Հնդկաստանում, որտեղ տվյալ թվի դիրքի փոփոխությունից կախված է նրա արժեքը. այսպես, 62 և 627 թվերում 2-ը մի դեպքում միավոր է, մյուսում՝ տասնավոր:

Թվերի ու տարածական մարմինների ուսումնասիրումը և նրանց զարգացման հետազոտությունը հսկայական նշանակություն ունի ոչ միայն մաթեմատիկայի, այլև առհասարակ մարդկային գիտակցության համար:

Այդ գիտության զարգացման ճանապարհները և ձևերը տարբեր ժողովուրդների մոտ տարբեր են եղել: Հին եգիպտոսի մաթեմատիկան, անկասկած, ունեցել է նշանակալի ազդեցություն գիտության զարգացման հետագա գործ-

¹ К. А. Рыбников, *История математики*, Москва, 1960, с. 8.

ընթացի վրա: Ընդունված է, որ երկրաչափությունը սկզբնավորվել է եգիպտոսում հողատարածքների չափագրման համար²:

Նույնպիսի տեղեկություն պահպանվել է հայկական ձեռագրերում. «Իմա գերկրաչափականն, որ եղաք ականատես յերկրին եգիպտացոց, քանզի... չափ է կանգունաւ գաւազանին... երկրիս զչափ արտորէից անդաստանացն»³:

Պարզագույն մաթեմատիկական հասկացությունները՝ տարածական և քանակական հաշվարկները, ստեղծվել են մարդկային պատմության արշալույսին: Երկրաչափական մարմնի և թվերի առնչությունները, որոնք այսօր մեզ համար պարզ և սովորական են, իրականում արստրակտ հասկացություններ են, որոնք կարող էին ստեղծվել երկարատև մտավոր աշխատանքի արդյունքում: Մարդկության գիտակցական կյանքի փորձին համապատասխան կատարվում է նաև մաթեմատիկայի պատմության ուսումնասիրությունը:

Արդեն մ.թ.ա. առաջին հազարամյակի կեսերին եգիպտոսում և Բաբելոնում կուտակված մաթեմատիկական գիտելիքների շնորհիվ հնարավոր է դառնում լուծել ոչ միայն կոնկրետ խնդիրներ, այլև կատարել ընդհանուր, արստրակտ, տրամաբանական ապացույցներ: Մաթեմատիկական համակարգերի ստեղծումն ու զարգացումը խթանում էր նաև երկրաչափական մարմինների ճանաչումն ու չափագրումը: Պարզագույն մաթեմատիկական հասկացություններով պայմանավորված գիտության ծնունդը, որը հենված է խիստ ապացույցների վրա, կատարվեց Հին Հունաստանում մ.թ.ա. VI-V դդ. Պյութագորասի և նրա աշակերտների կողմից: Տեսեսական կազմակերպված գործունեության համար պահանջվում էր օգտագործվող առարկաների և նրանց քանակի մասին ունենալ կոնկրետ, թեկուզ կոպիտ գնահատականներ. «Եթե սկզբում հին հունական մաթեմատիկան չէր տարբերվում եգիպտական և բաբելոնյան հաշվարկների սկզբունքներից, ապա... սկսած մ.թ.ա. VI դարից հույների մաթեմատիկական մտածողության մեջ ավելի ու ավելի էր ուժեղանում տեսական կողմը... որը ի վերջո բերեց տեսական մաթեմատիկայի անշատմանը գործնականից»⁴:

Ըստ պյութագորականների՝ թվերը հանդիսանում են բոլոր առարկաների մասնիկները, և աշխարհն ամբողջությամբ թվերի և երաժշտության ներդաշնակություն է: Այդ դպրոցում մաթեմատիկայի կոնկրետ ճյուղի՝ թվերի տեսության շնորհիվ հնարավոր դարձավ բնական թվերի հետ տարբեր գործողություններ

² *История математики с древнейших времен до начала нового времени*, том 1, Москва, 1970, с. 33.

³ ՄՄ 1114, ք. 35բ, տե՛ս նաև **Դավիթ Անյաղթ**, *Սահմանք իմաստասիրութեան*, համահավաք ֆինական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները **Ս. Ս. Արևաշատյանի**, Երևան, 1960, պրակ ԺԷ, էջ 132:

⁴ **Չ. Кольман**, *История математики в древности*, Москва, 1961, с. 71.

կատարել: Քննարկվում էին թվերի բաժանելիությունը՝ թվաբանական, երկրաչափական, հարմոնիկ խնդիրներում:

Դպրոցի առանձնահատկությունը այն էր, որ առանձին թվերին և թվային արտահայտություններին վերագրվում էին գաղտնի, կախարդական հատկություններ, իսկ թվերի տեսությամբ զբաղվելը համարվում էր ընտրյալների գործը:

Միաժամանակ կատարվում էին երկրաչափական հասկացությունների համակարգում և բացարձակեցում, ուղիղ և կոր գծերով սահմանափակված երկրաչափական մարմինների մակերեսների և ծավալների հաշվարկներ:

IX դարի հայտնի արաբ գիտնական ալ-Ֆարաբին գրում է. «Թվերի գիտություն մեջ պետք է հասկանալ երկու գիտություն՝ գործնական և տեսական: Գործնականը ուսումնասիրում է թվերը, քանի որ խոսքը գնում է հաշվելի առարկաների մասին. օրինակ՝ մարդկանց քանակը, ձիերի քանակը, փողի քանակը... և այլ իրերի քանակը... Այդ գիտությունը մարդիկ օգտագործում են շուկայական և քաղաքացիական գործերում: Թվերի տեսական գիտությունն ուսումնասիրում է թվերը բացարձակ իմաստով, անկախ մարմինների կամ առարկաների հաշվարկից: Այն քննարկում է դրանք՝ ոչ թե իբրև զգացմունքներով ընկալվող առարկաներ, այլ թվերն այս դեպքում հանդես են գալիս որպես ընդհանուր արեստակցիաներ՝ ինչպես ընկալելի, այնպես էլ զգացմունքներից անկախ եղած իրերի համար: Այս վերջինը մաս է կազմում մյուս գիտությունների»⁵:

Միշտ չէ, որ երկու հատվածների երկարությունների հարաբերությունը կարելի է արտահայտել ամբողջ թվով: Պետք էր ստեղծել տեսություն ընդհանուր դեպքի համար. այն կարելի էր անել երկրաչափության օրինաչափություններով: Օրինակ, a և b հատվածների արտադրյալը բերում էր երկկողմ մարմնի կառուցմանը՝ a և b կողմերով ուղղանկյանը:

Իբրև թվերի տեսության հնագույն օրինակ կարող է ծառայել Պյութագորասի թեորեմը, ըստ որի՝ ուղղանկյուն եռանկյան ներքնաձիգի քառակուսին հավասար է երկու էջերի քառակուսիների գումարին: Այսինքն, եթե այս երեք մեծություններից երկուսը տրված են, երրորդը կարելի է ճշգրիտ հաշվել, առանց այն չափելու: Ենթադրություններ կան, որ Պյութագորասից շատ ավելի վաղ, Բաբելոնում և Եգիպտոսում հողատարածքները չափում էին երեք ձողերի վրա ամրացված երկար պարանների օգնությամբ, որոնք շարժելով և ուղիղ անկյուն կազմելով հնարավոր էր լինում հաշվել երկարությունները⁶:

Թվերը ներկայացվում էին կետերի տեսքով, որոնք հավաքված են երկրաչափական պատկերների՝ եռանկյան, քառանկյան և այլ բազմանկյունների մեջ: Մեզ հայտնի «պարզ» թվերը, որոնք չեն բաժանվում արտադրիչների, անվա-

⁵ Аль-Фараби, Математические трактаты, Алма Ата, 1972, сс. 17-18 .

⁶ О. Оре, Приглашение в теорию чисел, Москва, 1980, сс. 9-10.

նույն էին «գծային» թվեր, երկու արտադրիչներով ներկայացվածները՝ «հարթ» թվեր, համապատասխանաբար՝ երեք արտադրիչի դեպքում՝ «մարմնական» թվեր և, վերջապես, «բազմանկյուն» թվեր: Փաստորեն երկրաչափությունը երկրորդային էր, թվաբանությունը առաջնային⁷:

Կարելի էր կազմել տասնանկյուն, քսանանկյուն թվեր՝ դասավորված կենտրոնական կետի շուրջ, որը ընդհանուր դեպքում շրջապատված է հավասար կողմերով բազմանկյուններով:

Հին Հունաստանում «գործնական և տեսական մաթեմատիկայի միջև տարբերությունը... վերաճեց նրանց հակադրմանը... Պյութագորական իդեալիստները թվերի և նրանց օգնությունները հաշվվող իրերի միջև անանցանելի անդունդ էին տեսնում: Թվերը նրանց համար «մաքուր իդեաներ» էին... նրանցով պետք է զբաղվեր մաթեմատիկան, իսկ հաշվել կարելի էր միայն զգացմունքներով ընկալվող առարկաները... որոնցով զբաղվում էր լոգիստիկան, որտեղ թվերը «մարմին» ունեին»⁸:

Մաթեմատիկայի զարգացման վրա հսկայական ազդեցություն գործեցին տրամաբանության հաջողությունները: Բնագիտական գիտելիքների տրամաբանական հաջորդականության հիմքերի իրական շարադրանքը տրվել է մ.թ.ա. IV դարում Արիստոտելի փիլիսոփայական աշխատություններում, ուր մտածողության հիմնական ձևերն արդեն ուսումնասիրված և կարգավորված էին: Արիստոտելն այսպես է ներկայացնում պյութագորականների կողմից թվերի չափազանցված երկրպագության գործընթացը. «Այսպես կոչված պյութագորականները, զբաղվելով մաթեմատիկական գիտություններով, առաջին անգամ խոնարհվեցին նրանց առաջ և դաստիարակվելով նրանցով սկսեցին համարել թվերի սկիզբը բոլոր առարկաների սկիզբը»⁹:

Ըստ պյութագորականների՝ մեկ թիվը ներկայացնող կետը այլևս չէր կարող բաժանվել, այն մաթեմատիկական «ատոմ էր, միավոր» էր իր վերջնական դիրքով¹⁰: Իսկ երկուսը ներկայացվում էր որպես դեպի անորոշություն գնացող գիծ, երեքը՝ որպես անսահմանության մարմնավորում՝ մակերևույթի ձևով, չորսն էլ նույնացվում էր մարմնի հետ: Մատենադարանի ձեռագրերից մեկում պահպանվել է պյութագորականների այդ պատկերացումների հետևյալ տարբերակը. «Ձգիրք առ օրինակ. գրերն՝ կէտ և տողերն՝ գիծ, և մի թուխթի՛ մակերևույթ, և ամեն գիրքս՝ մարմին: Բայց չէ ամենևին նման, զի կէտերն ի գիծն, և գծերն ի մակերևույթին, և մակերևույթին ի մարմին չերևայ աչաց, ապա մտօք իմանին»¹¹:

⁷ Э. Кольман, էջ 86:

⁸ Э. Кольман, նշվ. աշխ., էջ 73:

⁹ Аристотель, *Метафизика*, Москва-Ленинград, 1934, сс. 26-27.

¹⁰ Э. Кольман, նշվ. աշխ., էջ 86:

¹¹ ՄՄ 1716, ք. 210:

Մեկ և երկու թվերի հետ կապված տեսակետներ գտնում ենք Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տաթևացու և Հակոբ Արիմեցու աշխատություններում: Եթե Գր. Տաթևացին միայն մեկը չի համարում թիվ, ապա ըստ Դավիթ Անհաղթի և Հակոբ Արիմեցու նույնը վերաբերում է նաև երկուսին:

Անհաղթի մոտ կարգում ենք. «Թուականութեան երկու տեսակք են՝ դար և կոճատ... Արդ, ընդհանուր սկիզբն դարիցն և կոճատացն միակն է, իսկ դարին՝ երկեակն: Եւ տարակուսեն ոմանք, թէ երկեակն թիւ գոլով, զիարդ է սկիզբն: Առ որս ասեմք, եթէ ոչ գոյ թիւ երկեակն, վասն զի ոչ ունի զյատկութիւն թուոյ յինքեան, վասն զի ամենայն թիւ բազմապատկելով մեծ թիւ բացակատարէ, քան շարադրելով, իսկ երկեակդ ոչ այդպէս, քանզի բազմապատկելով և շարադրելով զնոյն թիւ բացակատարէ՝ զշորսն... Ուստի յայտ է, թէ երկեակդ ոչ է թիւ, այլ լոկ սկիզբն թուոց»¹²:

Գրիգոր Տաթևացին համաձայն չէ դրան. «Երկեակն ոչ կարէ սկիզբն լինել, զի թիւս երկեակն ի միակէն բաղկանայ: Արդ՝ նախ է որ բաղկացոյցն, քան զոր բաղկացան: Երկորդ՝ երկեակն բարդ է, իսկ միակը պարզ, այլ ամենայն բաղադրեալ ի պարզէ է: Այսպիսով, ոչ է երկեակն սկիզբն, որ է բաղադրեալ, այլ միակն է, որ պարզ»¹³:

Հակոբ Արիմեցին համամիտ է Դավիթ Անհաղթի հետ. «Իմաստասէրն ... ցուցանէ զդարսն և զկոճատսն... նաև զթիւսն և սկիզբն թուոց, զմիակն ցուցանէ սկիզբն ընդհանուր թուոց՝ դարից և կոճատաց և զերկեակն՝ դարիցն... Եւ ցուցանէ զերկեակն օրինակաւ՝ ոչ գոլ թիւ, այլ սկիզբն թուոց, վասն զի ամենայն թիւ բազմապատկեալ մեծ թիւ բացակատարէ, քան զշարադրեալն... բայց երկեակն ոչ այսպէս... ուստի յայտ արար, թէ երկեակն ոչ է թիւ, այլ սկիզբն թուոց, վասն որոյ չունի յատկութիւն թուոց»¹⁴:

Նույնպիսի տեսակետ պահպանվել է նաև «Անանիայի Հայոց վարդապետի Սակս բացայայտութեան թուոց» աշխատության մեջ, որի հեղինակի շուրջ եղել են տարաձայնություններ. «... Սկիզբն թուոցդ միակն է... զսա ասացին Պիլթագորեանքն՝ ոչ թիւ, այլ սկիզբն թուոցն...»¹⁵: Նշենք, որ մինչև XVI դարի վերջերը մատթմատիկոսները պայքարում էին մեկը թվերի շարքը դասելու համար¹⁶:

¹² Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրության, էջ 112:

¹³ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 20:

¹⁴ ՄՄ 1114, ք. 32ա, ՄՄ 6089, ք. 94ա, 95ա:

¹⁵ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, էջ 239, որտեղ քննարկվում է հեղինակի խնդիրը և ընդունվում, որ դա Անանիա Նարեկացին է (տե՛ս էջ 72-75, 240): Հմմտ. նաև ՄՀ, Ժ դար, Ժ հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 440-455:

¹⁶ Д. Я. Стройк, Краткий очерк истории математики, Москва, 1978, с. 82.

Մաթեմատիկայի կիրառումը գործնական գիտությունների մեջ՝ ինչպիսիք են աստղագիտությունը, մեխանիկան, օպտիկան... ընդհատվեց անտիկ աշխարհի փլուզումով¹⁷ :

Ընդ որում, ուսումնասիրություններ էին գրվում տարբեր երկրներում և տարբեր լեզուներով. «Տեղական լեզուներով, օրինակ, հայերեն, պարսկերեն կամ իտալերեն գրվում էին միայն տարրական դասագրքեր, բայց տեսական աշխատությունները... գրվում էին հունարեն, արաբերեն... լատիներեն»¹⁸ :

VI դարում Բյուզանդիայում հայտնվում են քրիստոնյա գիտնականներ, սակայն մաթեմատիկայի զարգացման մասին չափազանց քիչ են տեղեկությունները¹⁹ :

Մաթեմատիկայի պատմության դասագրքերում հատուկ հիշատակվում են Անանիա Շիրակացու, Գրիգոր Մագիստրոսի և Հովհաննես Սարկավազի անունները²⁰ :

Առաջին մաթեմատիկական տեսությունները, որոնք կտրված էին գործնական կյանքի խնդիրներից, հիմք ստեղծեցին մաթեմատիկայի իբրև անկախ գիտության՝ ստեղծման համար: Հին հույների մաթեմատիկական տեսություններից են սերում ժամանակակից մաթեմատիկայի հիմունքները: XX դարի մաթեմատիկական անալիզի հիմնադիրներից մեկը գրում է, որ ուսումնասիրելով հույն մաթեմատիկոսների աշխատանքները, «դադարում ես զարմանալ ժամանակակից մաթեմատիկոսների հաջողությունների վրա»²¹ :

Ժամանակակից դպրոցական դասագրքերում ներկայացված է տարրական մաթեմատիկայի շրջանը, որը շարունակվել է մ.թ.ա. V-VI դարերից մինչև XVI դարը:

Պյութագորասի դպրոցում, ինչպես ասվեց, մաթեմատիկայից առանձնացվեց առանձին առարկա՝ թվերի տեսությունը, այսինքն մաթեմատիկական գիտելիքները, որոնք վերաբերում էին ոչ թե կոնկրետ թվին, այլ բնական թվերի հետ կատարվող գործողությունների ընդհանուր հատկություններին²² :

Հայկական ձեռագրերում պահպանված՝ Հովհաննես Սարկավազի եռանկյուն թվերի շարքն այսպիսին է.

1 2 3 4 5 6 7 8 9 10,

1 3 6 10 15 21 28 36 45 55:

Ինչպես տեսնում ենք, առաջին շարքում տրված են բնական թվերը, իսկ երկրորդ շարքի յուրաքանչյուր անդամը ստացվում է իր վերևի թվին գումար

¹⁷ *История математики с древнейших времен до начала нового времени*, т. 1, с. 154.

¹⁸ Նույն տեղում, էջ 155:

¹⁹ Նույն տեղում, էջ 249:

²⁰ Նույն տեղում:

²¹ **К. А. Рыбников**, *История математики*, с. 61.

²² Նույն տեղում, էջ 26:

րելով իր ձախ կողմում գրված թիվը, ուստի այդ թվերը մտովի իրար միացնող գծերով եռանկյունի էր կազմվում: Այստեղից էլ «եռանկյունի թիվ» արտահայտությունը: Նույն սկզբունքով հաշված է «քառանկյունի թվերի» շարքը:

1 3 5 7 9 11 13 15 17 19,

1 4 9 16 25 36 49 64 81 100:

Այս նույն ձևով է ներկայացված «տասնհինգանկյունի» թվերի շարքը.

1 14 27 40 53 66 79 92 105 118

1 15 42 82 135 201 280 372 477 695:

Սարկավագը գրում է, որ այդ շարքը կարելի է անվերջ շարունակել. «Յեռանկյունեաց մինչ ի շորեքտասանն գրեցաւ, ոչ թէ զի այդքան որոշմունք անկեանց անկինաւորաց թուոցդ պետք ինչ էին, այլ վասն կրթութեան մանկանց միայն, որչափ զարթուցանել զմիտս խնդրողաց և ոչ որքան խնդրէ բնութիւն թուոց: Վասն որոյ բաւական համարեցայ կացուցանել զքանակութիւն դորա մինչև ցքսաներորդ վեցերորդ համար: Իսկ եթէ ախորժեսցէ ոք շարժել ևս յառաջ՝ դիւրին է ի տուեցելոցդ որքան և կամեսցի»²³:

Հովհաննեսը բացատրում է նաև, որ ուսումնասեր մանուկների համար է պատրաստել աղյուսակները, որպեսզի «ըստ բնութեան թուոց անաշխատք եղիցին յայնոսիկ և դիւրաւ հասցեն ըստ տուեցելոյ առաջին եղելոյ կանոնացդ, որում ախորժենն»²⁴: Այս ամենը իմանալով ուսանողները կարող էին նաև ինքնուրույն կազմել ցանկացած թվերի շարքեր: Ուղղակի պետք էր ունենալ տարրական գիտելիքներ՝ «կոճատք» (կենտ) թվերի՝ 1, 3, 5, 7..., «դարք» (գույգ) թվերի՝ 2, 4, 6, 8, «քուայք» շարքի (որ ութով սկսվում է և ութական ավելանում), «կրկնակք»-ի (երկուսի աստիճաններ են)՝ 2, 4, 8, ..., 4096, 8192, ..., 131072, «երեքկինք»-ի՝ 9, 27, 81, ..., 2187, ...59049 մասին:

Հայտնի է, որ մ.թ. առաջին դարի վերջին ապրած հույն գիտնական Նիկոմաքոսը թվերի տեսությունը նվիրված առաջին ավարտուն դասագրքի հեղինակն է: Գրքում մեծ տեղ է հատկացված ձևավոր-անկյունավոր թվերին: Հետագայում այդ թվերից հատկապես «եռանկյունիները» հանրամատչելի էին և մեծ համբավ էին վայելում թվերի ուսումնասիրման գործում Վերածննդի շրջանում, երբ Արևմտյան Եվրոպա թափանցեց թվերի հունական տեսությունը²⁵: Հայտնի «մոզական» կամ «կախարդական» քառակուսիները, որոնցում սյունակների, տողերի և անկյունագծերի թվերի գումարը նույնն է, միջնադարում օգտագործվում էին իբրև կախարդագիր՝ տարբեր դժբախտություններից փրկելու համար: XVII-XVIII դարերում և նույնիսկ ավելի ուշ, «մոզական քառակուսիների» պատրաստումը ծաղկում էր:

²³ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 148: Աղյուսակներից մեկում շարունակված է մինչև 26 շարքը:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Օ. Օրե, Приглашение в теорию чисел, Москва, 1980, стр. 11.

Հոռոմեացիների համաշխարհային կայսրությունը հաճախ ընթացող պատերազմների ընթացքում ոչնչացնում էր գիտական կենտրոնները, շատեղծելով դրանք վերականգնելու և զարգացնելու պայմաններ: Գիտական հիմնական կենտրոնի՝ Ալեքսանդրիայի նշանակությունը խամբում էր: Գիտնականները զրկվում էին պետական հովանավորչությունից: 412 թ. Ալեքսանդրյան գիտնականների խումբը ցրվեց: Մնացած գիտնականները հավաքվեցին Աթենքում, որտեղ աշխատեցին մինչև 529 թ., երբ նրանց գործունեությունը արգելվեց պաշտոնական որոշումով:

Հին Հունաստանի գիտության նվաճումները ժառանգեց Բյուզանդիան: Անտիկ շրջանից ժառանգած բնագիտական գիտելիքները VII-XII դարերում շարունակում էին լրջորեն վերականգնվել և խորը ուսումնասիրվել բյուզանդական հասարակության մեջ²⁶:

VII դարում Բյուզանդիան ծանր ժամանակներ էր ապրում, տարածքներ կորցնում, դպրոցներ էին փակվում: Անտիկ գիտության գիտակները պակասում էին: Ուսումն ու գրագիտությունը, զրկվելով պետական ուշադրությունից, քաշվում էին վանքերը: Տեղեկություններ կան այն մասին, որ Կ.Պոլսի դպրոցի աշակերտները փիլիսոփայության դասընթացն ավարտելու համար դիմում էին Տրապիզոնի մինչ այդ անհայտ մի հոգևորականի, «որը սովորել էր Աթենքում, և որի մասին հետաքրքիր տեղեկություն է հայտնում հայ մատենագիր Անանիա Շիրակացին»²⁷:

Մաթեմատիկայի պատմության համար մեծ նշանակություն ունեցան դասական աշխատությունների մեկնությունները: Թարգմանություններն ու մեկնությունները միջնադարյան մտքի ձևավորման կարևորագույն աղբյուր են և իրենց ուրույն տեղն ունեն ճշգրիտ գիտությունների պատմության մեջ:

Ինչպես գրում են ուսումնասիրողները. «Միջնադարը հին աշխարհից արմատապես տարբերվող մի դարաշրջան է, բայց և այնպես այն հին աշխարհի ժառանգորդն էր»²⁸:

Մեկնողական գրականության շնորհիվ Հայաստանում նույնպես զարգանում էր ինքնուրույն գիտական միտքը, իրականանում էր մի խնդիր, որը մինչև XII դար ծանոթ չէր արևմտաեվրոպական փիլիսոփաներին, որոնք սկսեցին նրանց ուսումնասիրել վաղ արաբական թարգմանություններից²⁹:

²⁶ **Е. Самодурова**, “Школы и образование”, в кн. *Культура Византии*, 7-12 вв., Москва, 1979, с. 296.

²⁷ **Б.Э. Липшиц**, *Очерки истории Византийского общества и культуры (8-первая половина 9-го века)*, Москва- Ленинград, 1961, с. 362.

²⁸ **Конрад Н. И.**, “Средние века в исторической науке”, в кн: *Из истории социально – политических идей*, Москва, 1955, с. 84.

²⁹ **С. С. Аревшатян**, *Формирование философской науки в древней Армении (5-6 вв.)*, Ереван, 1973, с. 212.

Մեկնությունների մասին այսպես է գրել *LX* դարի նշանավոր մաթեմատիկոս-գիտնական Մ. Ալ-Խորեզմին. «Անցած ժամանակների և ժողովուրդների գիտնականները չեն դադարել իրենցից հետո եկողների համար գրքեր գրել գիտության և փիլիսոփայության տարբեր բաժինների մասին: Ընդ որում հույս են ունեցել, որ կարժանանան փառքի, անմահության... այն աշխատանքի և դժվարությունների համար, որոնք ուղղված են եղել գիտության հրաշալի գաղտնիքները բացահայտելուն: Նրանցից մեկը լրացնում է այն, ինչը չէր արվել նախորդների կողմից, մյուսը մեկնում է իր նախորդների աշխատանքները, դրանով իսկ դյուրին դարձնելով դժվարությունները, բացահայտում է թաքնվածը, լուսավորում ճանապարհը՝ գաղտնիքները դարձնելով հասանելի: Կամ որոշ գրքերում գտնում է բացթողումներ և միացնում միմյանցից անջատված մասերը, միաժամանակ հարգանքով մտածում իր նախորդի մասին, երբեք չըննադատելով ուրիշներին և չպարծենալով իր կատարածով»³⁰:

Մաթեմատիկան ոչ միայն զարգանում է մյուս գիտությունների ազդեցությամբ, այլև իր նորագույն մեթոդներով օգնում է այդ գիտությունների առավել արագ առաջընթացին: Թվի, մարմնի, ձևի, մակերեսի, բնական թվերի շարքերը առաջացել են գործնական կյանքում, այնուհետև կատարելագործվել:

Հայտնի է, որ մաթեմատիկայի առաջին քայլերը ներկայացնող աշխատությունները կոչվում էին «Տարրեր» կամ «Հիմունքներ»: Այսպես էր կոչվում նաև արևբասնդրյան մաթեմատիկայի դպրոցի ականավոր դեմքերից մեկին՝ Էվկլիդեսի «Տարրեր» վերնագիրը կրող աշխատությունը, որը մինչ օրս ընկած է միջնակարգ դպրոցներում դասավանդվող ծրագրի հիմքում: Այդ աշխատության մի հատվածի հայերեն թարգմանության մասին առաջին վկայությունը տալիս է ինքը՝ Գրիգոր Մագիստրոսը. «Զերկրաչափականն զեկլիդոսին սկսայ թարգմանել»³¹:

Հասկանալի է, որ Հայաստանում բնական գիտությունների պատմության շրջանակներում Հովհաննես Սարկավազից առաջ Անանիա Շիրակացին (տարրական մաթեմատիկա), Գրիգոր Մագիստրոսը (հատված էվկլիդեսից) ծանոթ են եղել հունական մաթեմատիկայի նվաճումներին և աշխատել դրանք ներդնել վանական տիպի դպրոցների ծրագրերում:

Ի զարմանս ուսումնասիրողների՝ չնայած «Աթենքում... յոթամյա հասակից... դպրոցներում կարգալ-գրել սովորեցնելուց բացի սովորեցնում էին նաև հաշվելու արվեստը, սակայն գործնական թվաբանության որևէ ձեռնարկի

³⁰ Мухаммед ибн Муса ал-Хорезми, *Математические трактаты*, Ташкент, 1983, сс. 20-21.

³¹ Գրիգոր Մագիստրոս, *Թուղթք և չափաբերականք*, ՄՀ, ԺԱ դար, ԺԶ հատոր, Երևան, 2012, էջ 330: Հատվածը հրատարակված է Գ.Բ. Պետրոսյան, *Մաթեմատիկան Հայաստանում Հին և Միջին դարերում*, Երևան, 1959, էջ 106-114:

մասին տեղեկություն չի պահպանվել»³²: Այս ֆոնի վրա ավելի է արժևորվում հայերենով պահպանված Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը, որը մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայ իրականության մեջ VII դարում դպրոցահասակ երեխաներին տրվող գիտելիքնորի մասին:

Մաթեմատիկական գիտելիքների տեսական բարձր մակարդակի մասին է վկայում հայերեն ձեռագրերում պահպանված եռանկյուն թվերի մասին XI դարի աշխատությունը, որի հեղինակն է Հովհաննես Սարկավազը:

Հավանական է համարվում այն վարկածը, որ «Հովհաննեսը իր ձեռքի տակ ունեցել է մ.թ. սկզբի երկու նշանավոր մտածողների՝ Նիկոմաքոսի, Փիլոնի և հետագա այլ հեղինակների աշխատանքները»³³:

Նիկոմաքոսը առաջինն էր, որ ստեղծեց թվաբանության իբրև ինքնուրույն առարկայի տեսություն, առանց երկրաչափական բացատրությունների: Նոր պոլիթագորական Նիկոմաքոսը հայտնի է իր «Մաթեմատիկայի ներածություն» աշխատանքով, որը հասել է մինչև մեր օրերը և հարուստ է աղյուսակներով: «Այն պետք է դիտարկել ոչ այնքան իբրև գիտական աշխատություն, որքան պոլիթագորական թվերի տեսության հանրամատչելի ներածություն», գրում են նրա մասին³⁴:

Հայերեն ձեռագրերում պահպանված «Անկյունավոր թվերը» սկզբում վերագրվել են Անանիա Շիրակացուն³⁵: Հետագայում այդ վարկածը չի ընդունվել. «Կասկածից դուրս է, որ Հովհաննես Սարկավազը, ապրելով XI դարի վերջին և XII դարի սկզբներին, օգտվել է Շիրակացու մեզ հայտնի տոմարական, աստղաբաշխական ու թվաբանական աշխատություններից, սակայն անկյունավոր թվերի մասին հավաստի տվյալներ չունենալու պատճառով ոչինչ չենք կարող ասել», գրում է Գ. Պետրոսյանը³⁶:

Ձեռագրերում պահպանված այդ աշխատությունը հանդիպում է միայն Սարկավազի անունով: Ա.Աբրահամյանը գծագրում է, որ «դժբախտաբար... ոչ մի ընդօրինակության մեջ չհայտնաբերվեցին երկրաչափական գծումներ»³⁷:

Պետք է ասել, որ աղյուսակները ներկայացնելիս երկրաչափական գծագրեր գծելն անհրաժեշտ չէ: Այսօր էլ, ասելով «երկուսի քառակուսին հավասար է չորսի», կամ «երկուսի խորանարդը հավասար է ութի», մենք դրանցից յուրաքանչյուրի համար առանձին գծագիր՝ քառակուսի կամ խորանարդ, չենք ներկայացնում: Աշխատության աղբյուր է համարվել նաև Փիլոն Ալեքսանդ-

³² Кольман, նշվ. աշխ., էջ 73:

³³ Գ.Ք. Պետրոսյան, Մաթեմատիկական Հայաստանում հին և միջին դարերում, էջ. 148:

³⁴ Кольман, նշվ. աշխ., էջ 189:

³⁵ Туманян Т. Г., “О таблице полигональных чисел А. Ширакаци”, Գիտական նյութերի ժողովածու, № 1, էջ 53-59:

³⁶ Գ. Պետրոսյան, նշվ. աշխ. էջ 148:

³⁷ Հովհաննես Սարկավազի մատենագրությունը, էջ 49-52:

րացին, որը մ.թ. սկզբներին «Ալեքսանդրյան դպրոցի այն նշանավոր ներկայացուցիչներից մեկն է, որը մեծ դեր է կատարել քրիստոնեական գաղափարախոսության ձևավորման գործում: Նրա ուսմունքում միաձուլվում են հրեական կրոնը և միստիֆիկացիայի ենթարկված հունական փիլիսոփայությունը... Փիլոնի աշխատությունները հայերեն են թարգմանվել V դարում, իսկ XII-XIV դարերում դարձան հայ իմաստասերների ակտիվ մեկնողական գործունեության առարկա», գրում է Փիլոնի ուսումնասիրող Օ. Վարդապարյանը³⁸:

Փիլոնն իր աշխատանքներում, իրոք, անդրադարձել է թվերի տեսությանը: Օրինակ, կոնկրետ դեպքի համար նա այսպիսի հաշվարկ է անում. «Երեքանկիւնիք են չորք այսոքիկ՝ ա, գ, գ, ժ, որ լինին Ի: Չորեքանկիւնիք չորք՝ ա, դ, թ, ժգ, լինին Լ և գանկիւնիք չորք՝ ա, ե, ժբ, իբ, լինին քառասուն: Վեցանկիւնիք չորք՝ ա, գ, ժե, իը, լինին Մ, և եօթնանկիւնիք չորք՝ ա, է, ժը, Լդ, լինին վաթսուն: Մոքա շարադրեալք ծնանին գերկերիւրն»³⁹:

Ըստ ուսումնասիրողների՝ «Հայ շատ մատենագիրների մոտ, սկսած վաղ շրջանից, մենք հանդիպում ենք Փիլոնի աշխատություններում արծարծված գաղափարների հաճախ գրեթե բառացի շարադրանքին, օրինակ՝ Մովսես Խորենացու, Եղիշեի... Անանիա Շիրակացու... Գրիգոր Մագիստրոսի... Հովհաննես Իմաստասերի... և այլոց մոտ»⁴⁰:

Սարկավագը, իրոք, երբեմն հիշատակում ու վկայակոչում է Փիլոնին: Այսպես, Չատկի հետ կապված դատողություններում նա մյուս նշանավոր անունների հետ մեկտեղ հիշատակում է նաև Փիլոնին⁴¹:

Փիլոնի մի աշխատություն մեկնվել է հայ հեղինակի կողմից «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի իմաստասիրի եբրայեցոյ» վերնագրով: Մեկնիչի անձը հայտնի չէ, բայց քանի որ մեկնությունը նախորդել է Սարկավագի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությանը, ապա մեկնիչը ենթադրել է, որ այդ աշխատության հեղինակը Հովհաննեսը պիտի լինի. «Արարեալ ի մերոց վարդապետաց, որպէս ցուցանէ կերպն շարադրութեան, այլ յումմէ գոլն անյայտ, զի չկայր յօրինակին համանման անուն լուծողին, բայց զի անկիւնաւոր թուոց խրատն, որ ի վերդ է, Սարկաւագ Յովհաննես վարդապետն է արարեալ, եւ ես զայն ընդ սոյն գրոցս եւ սոյն դասութեամբ ի միում ափոջ գտի, վասն որոյ

³⁸ Օ. Վարդապարյան, «Մեկնողական ընթերցանությունները և Փիլոն Ալեքսանդրացու երկերի հայերեն մեկնությունները», *ԲեՇ*, № 3, 2000, էջ 118:

³⁹ Փիլոնի եբրայեցոյ մնացորդք ի Հայս, աշխատութեամբ Հ. Մ. Ալգերեանց, Վենետիկ, 1826, էջ 58: Այս բացատրությունը տրված է. «Ընդ էր գղջացան Ենոֆ՝ յառաջ քան զապաշխարութեան ասէ կեալ ամս հարիւր վաթսուն և հինգ, իսկ յետ ապաշխարութեանն երկերիւր՝ գլխում»:

⁴⁰ Գ. Գրիգորյան, «Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները», *ԲՄ*, № 5, 1960, էջ 96:

⁴¹ Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 241:

թուեցաւ ինձ թէ եւ զայս լուծմունքս նա իցէ արարեալ, քանզի եւ բանն համանման երեւի նորին շարագրութեանն, այլ թէ ի նմանի իցէ եւ թէ ոչ, սակայն մերոց վարդապետաց երեւի արարեալ»⁴² :

Այստեղից էլ եզրակացութիւն. «Հովհաննէսը իր Յաղագս անկրկնավոր թուոց աշխատութեան մեջ Փիլոնի «Յաղագս տասն բանից» աշխատութիւնից օգտվել է տառացի, ուղղակի պատճենահանել է այն»⁴³ :

Հովհաննէս Սարկավազի բնագիտական, տիեզերագիտական հայացքները քննարկելիս ուսումնասիրողները հիմնվում են «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի» բնագրի վրա, որի հեղինակը ըստ նրանց՝ հենց Հովհաննէս Սարկավազն է⁴⁴ :

Սակայն կա նաև այլ տեսակետ. «Հիշյալ բնագիրը... Հովհաննէս Սարկավազի գրչին պատկանել չէր կարող... Եթէ Հովհաննէս Սարկավազին ազատենք այս բնագրի հիման վրա արված բոլոր վերագրումներից, նա դարձյալ ամուր բազմած կմնա իր պատվավոր պատվանդանին»⁴⁵ :

Անկասկած, Հովհաննէս Սարկավազը մեր մյուս մատենագիրների նման ծանոթ է եղել Փիլոնի աշխատանքների հետ, բայց բազմակյուն թվերի աղյուսակները մանրամասն թարգմանելու, բացատրական տեքստ գրելու համար պետք էր մոտիկից ուսումնասիրել հունական դպրոցների թվերի տեսութիւնը, որից հետո միայն հայերեն այն ներկայացնել վանական տիպի բարձրագույն դպրոցներում:

Հովհաննէս Սարկավազը բարձր է գնահատվել ոչ միայն Հայաստանում հետագա սերունդների կողմից⁴⁶, այլև հարևան Վրաստանում. «Այլ ինքն (Վրաստանի թագավոր Գալիթ Շինարարը – Ջ.է.) սիրէր ազգն Հայոց և զեկեղեցիսն և զոմն հոռտոր վարդապետ ի Հաղպատ Սարկաւազ անուն. խոստովանէր նմա զյանցանս իւր և կորացուցեալ զպատուական գլուխն՝ օրհնէր ի նմանէ... Եւ թագաւորն համբուրէր և ասէր՝ անպակաս լիցի հոտս այս յինէն, հայր պատուական»⁴⁷ :

Հովհաննէս Սարկավազի աշխատութիւնը պահպանվել է Մատենադարանի մեկ տասնյակից ավելի ձեռագրերում: Գ. Պետրոսյանը նշում է դրանցից երեքը՝ ՄՄ 1770, 4150, 8973, որովհետև մյուսները էական ոչինչ չեն ավելացնում դրանց բովանդակութեան վրա»⁴⁸ :

⁴² ՄՄ 2595, ք. 241բ:

⁴³ Հովհաննէս Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 58, Գ. Բ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 152:

⁴⁴ Կ. Միրումյան, Հովհաննէս Սարկավազի աշխարհայացքը, Երևան, 1984, էջ 63, Գ. Գրիգորյան, «Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները», էջ 95-110:

⁴⁵ Փ. Փ. Անթապյան, «Հովհաննէս Սարկավազին վերագրված, Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի բնագրի առնչությամբ», ՊԲՀ, 1983, № 1, էջ 177:

⁴⁶ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Ե., 1969, էջ 320

⁴⁷ Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1934, էջ 219:

⁴⁸ Գ. Բ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 138:

Մենք աղյուսակները ներկայացնում ենք ըստ ՄՄ 1770, ՄՄ 2595, ՄՄ 4150 և ՄՄ 8973 ձեռագրերի: Բարեբախտաբար, դրանցից ՄՄ 4150-ի երկու աղյուսակների (թ. 23ա, 26ա) վերևում առկա է. «Յովհաննու քահանայի զանկինաւոր թուոցն ի փոխաբերութենէ երկրաշափութեան ձեւոց» բացատրությունը:

Պարզ է դառնում, որ աղյուսակները ոչ թե մեխանիկական արտագրություններ են հունարենից, այլ կազմված են ըստ Պյութագորասի մաթեմատիկական տեսության, ինչի մասին վկայում է նաև կից տեքստը:

Բնագիրը պատրաստել ենք երեք աղբյուրներից՝

Ա – Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը գրքից,

Բ – ՄՄ 2595 (թթ. 237ա-240ա),

Գ – ՄՄ 1770, (թթ. 354բ-358ա):

ՄՄ 4150-ում աղյուսակները կան, բայց տեքստը չկա, իսկ ՄՄ 8973-ում աղյուսակների հետ մեկտեղ կա փոքրիկ տեքստ, որը նման չէ մյուսներին: Այն բերված է վերջում:

Յոհաննէս Բահանայի¹ Յաղագս անկիւնատր² թուոց³

Զի ի յուսումնասէր մանկանց որք կամիցին⁴ և ախորժեն զվարժումն⁵, որ ըստ բնութեան թուոց⁶ անաշխատ Էղիցին յայնոսիկ⁷ և դիւրաւ հասցեն ըստ տուեցելոյ⁸ առաջին⁹ Էղեղոյ¹⁰ կանոնացոյ, որում ախորժենն¹¹:

Արդ՝ առաջի¹² կարգ խորանոյդ¹³ յեռանկիւնեացն¹⁴ սկսեալ մինչ ի չորեքտասան անկիւնիսն¹⁵ թիւ ունի՝ ընդ բողբոջսն և զարմատսն¹⁶ կարգ ըստ կարգի դասեալ, զի անաշխատ Էղիցիս:

Իսկ այլ երկու կարգքն ոչ այսպէս, այլ մին՝ արմատն¹⁷ և միւսն¹⁸ ծնունդքն¹⁹ զանազանեալք ըստ խորհրդոց: Եւ որ այլ ի²⁰ դոսա բերի խորհուրդ՝ գրեալ է ահա: Յեռանկիւնեաց մինչ ի չորեքտասանն²¹ գրեցաւ: Ոչ թէ զի այդքան²² որոշմունք անկեանց²³ անկիւնատրաց թուոցդ²⁴ պէտք ինչ էին, այլ վասն կրթութեան մանկանց միայն, որչափ զարթուցանել զմիտս խնդրողաց²⁵ և ոչ որքան²⁶ խնդրէ²⁷ բնութիւն թուոց²⁸:

Վասն որոյ բաական համարեցայ կացուցանել զԲանակութիւն դորա մինչև

¹ Գ Բահանային

² Գ անգիւնատր

³ Գ թուոց

⁴ Գ կամեցին

⁵ Գ զվարժումըն

⁶ Գ թուոց

⁷ Գ այնոսիկ

⁸ Գ տըւեցելոյ

⁹ Բ Գ առաջի

¹⁰ Գ Էղեալ

¹¹ Գ ախորժէնն

¹² Բ Գ առաջին

¹³ Բ Գ խորանացոյ

¹⁴ Գ յեռանկիւնեացըն

¹⁵ Գ անկիւնիս

¹⁶ Գ զարմատըն

¹⁷ Գ արմատըն

¹⁸ Գ միոսըն

¹⁹ Գ ծնունդքըն

²⁰ Բ մինչ *ի/ս* ի

²¹ Գ չորեքտասանըն

²² Գ այտքան

²³ Գ անկեաց

²⁴ Գ թուոցդ

²⁵ Գ խընդրողաց

²⁶ Բ որք

²⁷ Գ խընդրէ

²⁸ Գ թուոց

ցֆսաներորդ վեցերորդ²⁹ համար: Իսկ եթէ ախորժեսցէ ոք շարժել ևս յառաջ՝ դիւրին է ի տուեցելոցդ՝ որքան և կամեսցի³⁰:

Յորժամ բազմապատկել սկսանի զե թիւ, ասելով եիցս ե՛ լինի Իե, որ է բոլոր և³¹ ֆառանկիւնի, զի եէն սկսաւ և ի ե ասարտեսցաւ: Դարձեալ նոյն³² թիւս է և ֆառանկիւնի:

Բայց պարտ է գիտել զարուեստ ֆառանկիւնի թուոցն³³: Ջի սկիզբն ամենայն ֆառանկիւնից և հինգանկիւնից, և վեցանկիւնից և եռանկիւնից և ամենայն թուոց՝ միական է, և յորժամ կամիս ֆառանկիւնի թիւ առնել³⁴, այսպես է: Նախ դնել զմիական և թողույ ընդ մէջն Բ և առնույ զԴն և թողույ ընդ մէջն Դ³⁵, և առնույ Թ և թողույ Ջ և առնույ ժՋ և թողույ Ը, առնույ Իե³⁶: Եւ այսպէս ֆասնունինգ ֆառանկիւնի է և բոլոր:

Այսպէս է բոլոր և ֆառանկիւնի ԼՋ, զի սկսեալ է Ջէ, ի Ջ ասարտեսցաւ, և ֆառանկիւնի՝ յորժամ ի Իեէն ժ թողուս և առնուս զԼՋն՝ Ջն, ըստ առաջին թողուածուն, որ ի մէկէն մինչև ի Դ թողեր:

Քանի կամենաս երկարել զֆառանկիւնի թիւն Բ, Բ անկցու ի թողույն, որ թողուի³⁷: Ի միական մինչև ի չորս՝ Բ, և ի Դէն մինչև ի յինն՝ Դ, և յննէն³⁸ մինչև ի ժՋ՝ Ջ և ժՋէն մինչև Իե՝ Ը, և Իեէն մինչև ԼՋ՝ ժ: Այսպէս յորժամ ԲԲ անկցնես ի թողույն ըստ առաջին թողլոյն, որ ի մէկէն մինչև ի չորս, որքան կամիս երկարես զֆառանկիւնիդ: Դարձեալ և եռանկիւնին այսպէս՝ որ դնես առաջին զմիական, որ թողուս մէկ մի, և առնուս զԴ և յետ Դին կրկնեայպատկեայ զթողլոյն և առ Ջն և թող Գն և առ զԺն և այսպէս մի մի յանկլով³⁹ ի թողույն ըստ առաջին միոյն, և ի մէկէն մինչև Գ:

Այսպէս հինգանկիւնին դրնէ զմէկն և թողու Գ, և առնու զե և թողու Ջ, և առնու ժԲ: Եւ այսպէս՝ ի կարգին՝ Գ, Գ անկցնէ ի թողույն: Այս արուեստ է ի վեցանկիւնիքն, և ի կարգն բերէ: Եւ այս արագաւ⁴⁰ պատուական համարեցաւ⁴¹ զտարրոշ ֆանական, ֆան զշարունական, որպէսզի ի միում ժամու զանագան կերպարանդ⁴², որպէս Իե, որ եղև բոլոր և ֆառանկիւնի:

²⁹ Բ չորրորդ և վեցերորդ

³⁰ Գ կամեսցիս

³¹ Գ ի և

³² Գ նոյնդ

³³ Գ թլուոցն

³⁴ Գ չիք Ջի...առնել

³⁵ Գ Գ և

³⁶ Գ ժե

³⁷ Գ թողուի

³⁸ Գ յիննէն

³⁹ Գ յօելլով

⁴⁰ Գ արագո

⁴¹ Գ համարեցո

⁴² Գ կերպարանս

Խրատ փութից⁴³

Տես զի ի միակէ հինգերորդն ցանգ բերէ, զհինգն՝ յամենայն անկրեմալորս: Նոյնպէս և վեշտասաներորդն ի միակէ՝ զվեցերեակն, և քսաներորդ առաջներորդն ի միակէ՝ զմիակն, և⁴⁴ քսան և հինգերորդն ի միակէ զքսան և հինգն: Եւ թէ⁴⁵ շարադրեսցես զսոսա մի ըստ միոջէ, քսանկրեմալորս ծնանին. երկիցս՝ Բ, երիցս՝ Գ, չորիցս Դ, հնգիցս Ե, վեցիցս՝ Զ, կրօնիցս՝ Է:

Եւ որք միանգամայն⁴⁶ այսպիսաբար իսաղացուցես յառաջ զփանակութիւնս թուոց, ամենեւեան չորեքանկրեմալորս ծնանիլ առհասարակ բնատրեցան, որպէս և այլքն՝ այլազգ զայլսն անկրեմալորս՝ ըստ յարածգութեան շարժման թուական արուեստատրութեանն⁴⁷:

Եւ է այսպէս. երկիցս Բ՝ չորք, երիցս Գ՝ Թ, չորիցս Դ՝ ԺԶ, հնգիցս Ե՝ ԻԵ, վեցիցս Զ՝ ԼԶ, կրօնիցս Է՝ ԽԹ, ուրիցս Ը՝ ԿԴ, իննիցս Թ՝ ԶԱ, տասնիցս⁴⁸ Ժ՝ Զ, մետասանիցս ԺԱ՝ ԶԻԱ, երկուսասանիցս ԺԲ՝ ԶԽԲ, երեքասանիցս⁴⁹ ԺԳ՝ ԶԿԹ, չորեքասանիցս ԺԴ՝ ԶՂԶ, հնգեքսասանիցս ԺԵ՝ ՄԻԵ:

Եւ որքան այսպիսի արիւնակաւ, ըստ սմին ձևոյ, անեցուցանես զհամար կարգիդ՝ գտցես զփառանկրեմալորս⁵⁰ շարս ըստ յարադրութեան յաւելուածոցն, որպէս անհա ցուցանի ի յատակիցդ⁵¹ և ի բարդեցելոց: Եւ սկսեալ յուղանկրեմալորս, որք ի միակէ մի ըստ միոջէ զմիով ծնանին, յաւելցելով զամենայն տեսցես ի կարգի զանկրեմալորսդ, քան զնախադասեալն յանձնիրս⁵² գիրս միով յաւելցեալս⁵³:

Եւ զի պարզաբար ասացից: Եռանկրեմալորս միով ըստ ամենայնի, իսկ քսանկրեմալորսն՝ երկուստ, և հինգանկրեմալորսն՝ երիւք, իսկ վեցանկրեմալորսն՝ չորիւք և կրօնկրեմալորսն՝ հնգիւք: Եւ այսպէս յոն անկեալ զանաւարտն ասարտեն: Բնութիւն յԱրարչին ամենայնի գովեստ:

⁴³ Գ չիւք Խրատ փութից

⁴⁴ Գ եթէ

⁴⁵ Բ եթէ չիւք եւ թէ

⁴⁶ Բ մի անգամ չիւք միանգամայն

⁴⁷ Բ Գ արուեստատրութեան

⁴⁸ Բ տասանց

⁴⁹ Բ Գ տասններիցս

⁵⁰ Գ զփառանկրեմալորս

⁵¹ Բ յատակիցդ Գ յայտ կիցս

⁵² Բ յանձնիրս

⁵³ Գ յաւելցեալս

Վասն ֆուեից⁵⁴

Քուեայֆ⁵⁵ կրկնակֆ Դ, Ը, ԺՁ, ԼԲ, ԿԴ, ՃԻԸ, ՄԾՁ, ՇԺԲ, ՌԻԴ, ՍԽԸ, ՏՂՁ, ՓՃՂԲ⁵⁶, ԱՅՅՁԴ, ԳՍՁԿԸ⁵⁷, ՁԲՇԸՁ, ԺԳՌՃԲ⁵⁸, ԻՁՍՃԽԴ⁵⁹:

Քուեայֆ երեկիինֆ⁶⁰ Գ, Թ, Իէ, ՁԱ, ՄԽԳ, ՁԻԹ, ՍՃՁէ, ՅՇԿԱ, ԱՔՈՁԳ⁶¹, ԵՔԽԹ, ԺէՌԻՃԽէ⁶², ԾԳՌՆԽԱ, ՃԾԹՏՅԻԳ⁶³, ՆՃԸՍՁԿԹ⁶⁴: Երկիցս՝ Գ, Ձորիցս՝ ԻԴ, երիցս՝ Դ, հնգիցս՝ Կ, չորիցս՝ Ե, վեցիցս՝ ՃԻ, հնգիցս՝⁶⁵ Ձ, կթնիցս՝⁶⁶ ՄԺ, վեցիցս՝ է, ութիցս՝⁶⁷ ՅԼՁ:

Յաղագս ֆառակին և տասներեկին⁶⁸: է զարուրեամբ⁶⁹ ժ չորրեակն, ֆանգի իւրով նախակայիւք քարդեալ ծնանի զԺ, և այսպէս⁷⁰ ոչ միայն ի միակս, այլ և ի տասներեակս, և ի հարիւրեակս, և ի⁷¹ հազարեակս: Վասն զի որպէս տասներեակն ի չորից, այսպէս հարիւրն ի ֆառասնէ, և հազարն ի չորս հարիւրոց ծնանիլ⁷² է բնատրեալ, և բիրն՝ ի հազարաց չորից:

Եւ կատարումն թոց ամենայնի գլխատրեալ բովանդակի տասամբ, վասն որոյ կոչի սուրբ և ամենակատար: Միակամ⁷³ տասամբ⁷⁴ ինքն գոյացեալ և տասանց տասամբֆ՝ հարիւրեակն, իսկ հարիւրեկամ⁷⁵ տասամբֆ՝ հազարեակն, և բիրն՝ ի հազարաց տասանց: Եւ կացեալ դադարէ յանգականաւ չորեկին⁷⁶, զի որպէս ծնանի, սոյնպէս և աւարտեալ եզերէ չորրեակն, ֆանգի բնութիւն ունի⁷⁷ ծննդական, հաստատուն և կենդանասէր: Եւ է ֆաշայարմար առ գոյացութիւն էիցս:

⁵⁴ Գ չԻք Վասն ֆուեից

⁵⁵ Գ ուեայֆ

⁵⁶ Բ ԳՃՂԲ

⁵⁷ Բ ԳՍՃԿԸ

⁵⁸ Բ Ժ ԳՌՃԲ

⁵⁹ Գ ԻՁՍՃԽԴ

⁶⁰ Գ չԻք ֆուեայֆ երեկիինֆ

⁶¹ Գ ԱՔՈՁԳ

⁶² Բ ԺէՌԻՃԽէ: Գ ԾէՌՆԽէ

⁶³ Բ ՃԺԹՏՅԻ Գ

⁶⁴ Բ ՆՃԸՍՁԿԹ

⁶⁵ Գ հնկիցս

⁶⁶ Բ եթնիցս

⁶⁷ Բ Ը/Ց/ից

⁶⁸ Գ չԻք Յաղագս ֆառակին և տասներեկին

⁶⁹ Բ Գ զարուրեամբ

⁷⁰ Բ Գ այս

⁷¹ Գ չԻք ի

⁷² Գ ծնանի

⁷³ Բ միակոք

⁷⁴ Գ տասեամբֆ

⁷⁵ Բ Ճ եկոք

⁷⁶ Բ չորրեկին

⁷⁷ Գ չԻք ունի

Եւ չափ ամենաբարութեան թուոց, որոյ շարադրութիւն ծնանի զԾնն, որ է եռանկիւնի, և տասներորդ ի միակէ եռանկիւնեացն, միանգամայն և երփանկիւնի: Հինգերորդ⁷⁸ ի միակէ, յորում դարից⁷⁹ և կոճատաց⁸⁰ սկզբնատրագոյն⁸¹ են, դարից երկուց, և կոճատաց երից և դարեկոճատաց հնգից: Նաև՝ քուէից կրկնապատկաց և երեկնաց, ըստ որում՝ չորհն, և ութն, և երեքն, և ինն: Իսկ որ ի նմանէ, որպէս յարմատոյ բուսեալ՝ հինգն և հիսունն, յորովս առ ասացելովք ունի առաքինութիւնս:

Առաջին⁸² զի գոյացաւ ի քուէից, և ի կրկնակէ, և յերեկնէ յայնոցիկ, որ մի ըստ միոջէ շարադրեցան: Ի կրկնակէ այսպէս՝ Ա, Բ, Գ, Ը, լինին սոքա ժե: Երեկնիւն, և յերեկնէն՝ Ա, Գ, Թ, Իէ շարադրեալ սոքա լինին Ծն:

Երկրորդ՝ Ծն թիւն տասնեկին շարադրութիւն, իսկ յԶնն զարութեամբ⁸³ տասնեկին է, քանզի թէ զիւրաքանչիւր ոք⁸⁴ ի սոցանէ⁸⁵, ի միակէն մինչ ի տասնեակն, բազմապատիկ արարեալ շարադրեցես զերեհարիւրոցն զԶ և հնգին⁸⁶ իսկ յԶնն Ծնին ևթնապատիկ է:

Երրորդ՝ եթէ թուեցես զմինն⁸⁷ գոցես Զ⁸⁸ ըստ բաղադրութեանն⁸⁹ տասնեակ զԾնն:

Չորրորդ՝ սեռականագոյն վեցեակ՝ ինքն յինքեան բազմապատիկ⁹⁰ եղեալ զարութիւն⁹¹ է, որ ծնանի զԸ, որոյ երկիցս չորհ մասունքն⁹² ծնեալ այսպէս: Երկիցս՝ Ը և Ժ, երիցս՝ երկուսսան, չորիցս՝ ինն, վեցիցս՝ վեց, իննիցս՝ չորհ, երկուսասանիցս՝ երեք, տասնուերկիցս՝ երկու, երեսուն և վեցիցս՝ մի: Միանգամայն մասունք ութ թիւ՝ Ծն:

Հինգերորդ՝ զի ի մակեռանկիւնեաց հնգից մի ըստ միոջէ, ծնանի⁹³ Ծն, այսպէս՝ Գ, Զ, Ժ, Ժե, ԻԱ, լինի⁹⁴ Ծն:

⁷⁸ Բ ի հինգերորդ

⁷⁹ Գ տարից

⁸⁰ Գ ի կոճատաց

⁸¹ Բ սկզբնատրագոյնն

⁸² Գ առաջինն

⁸³ Բ զօրութեամբ

⁸⁴ Գ թիւ *ի/ս* թէ

⁸⁵ Բ Գ սոցանէ

⁸⁶ Գ հնկին

⁸⁷ Բ զմինն

⁸⁸ Գ *չ/ք* Զ

⁸⁹ Բ բաղադրութեան

⁹⁰ Գ բզազապատիկ

⁹¹ Բ զօրութիւն

⁹² Բ Գ մասունք

⁹³ Գ ծնանի

⁹⁴ Բ լինի

Վեցերորդն՝ զի և ի ֆառանկիւնեաց դարձեալ հնգից ծնանի Ծեն, իբրու թէ որպէս՝ Ա, Դ, Թ, ԺԶ, ԻԵ⁹⁵, լինի Ծե:

Եւթներորդ⁹⁶ ֆանգի ունի յինֆեան տասնեակ⁹⁷ և յերկրաչափութենէ զանագատն⁹⁸ բնութիւն և զգատական: անագատն կարգեալ դասի ըստ նշանի միայն, իսկ գատականն ըստ երից տեսակաց մակերևական գծոյ, երևման և հաստատունոյ, ֆագի որ երկու մնանաւ յանկացեալ⁹⁹ է՝ գիծ է, իսկ որ¹⁰⁰ երկուցն գատեալ է, մակերևութի¹⁰¹ է՝ ծորեալ ի լայնութիւն գծին, իսկ որ երիս՝ հաստատուն, երկայնութիւն¹⁰² և լայնութիւն¹⁰³, խորութիւն արեալ¹⁰⁴ որով¹⁰⁵ գոյանայ բնութիւնս¹⁰⁶, ֆանգի ավելի ֆան գերից գատութիւնս ոչ ծնա:

Եւ սկզբնատիպօ սոցա թիւ էն, անգատ նշանին՝ մին, և գծին՝ երկուն: Եւ վեր ի վերոյ երևման¹⁰⁷ երեքն և հաստատունոյն¹⁰⁸ չորքն, որոց¹⁰⁹ շարադրութիւնն՝ միոյ և երկուց, և երից, և չորից կատարեն տասնեակն: Այս ամենայնի աղագաւ և սոցուն յանկակցաց¹¹⁰ և նմանից՝ յառաջնոց¹¹¹ իմաստնոց, որք սովորեցին դնել զանուանս ոչ վայրապար, այլ ըստ իրացն անուանեցաւ տասնեակ վայելչապէս, ֆանգի առ ի տանելոյ զամենայն ազգս թոսոց և բաւելոյ առ ամենեսեան, թէ թիւ իցեն, և թէ բանք, որ ըստ թոսոց են, կամ համեմատութիւնք և յարմարութիւնք, և շարածայնութիւնք, անուանեցաւ տասնեակ:

Որպէս տարի, զի գատուս և զշարքս և զամիսս և զեղանակս յինֆեան բերելոյ¹¹² աղագաւ և ինֆեամք: Նաև զծնունդս¹¹³ ամենայն ազգաց, շնչատուաց և անշնչից և պատճառաց սոցա կոչեցաւ տարի: Բաական տուաւ քեզ վասն այսոցիկ:

⁹⁵ Գ չիք

⁹⁶ Բ եօթներորդ

⁹⁷ Բ Գ տասնեակդ

⁹⁸ Բ Գ զանգատն

⁹⁹ Բ յանկեցեալ

¹⁰⁰ Գ չիք

¹⁰¹ Բ մակերևութիւն

¹⁰² Բ երկայնութեան

¹⁰³ Բ լայնութեան

¹⁰⁴ Բ առեալ

¹⁰⁵ Գ որոյ

¹⁰⁶ Բ բնութիւն

¹⁰⁷ Բ երևմանն

¹⁰⁸ Գ հաստատուն

¹⁰⁹ Գ որ ոչ

¹¹⁰ Բ յանգակցաց

¹¹¹ Բ յառաջնոցն Գ առաջնոցն

¹¹² Գ բերելով

¹¹³ Գ զծնունդ

ԵՌԱՆԿԻՒՆ		ՔԱՌԱՆԿԻՒՆ		ՀԻՆԳԱՆԿԻՒՆ		ՎԵՅԱՆԿԻՒՆ		ԵԹՆԱՆԿԻՒՆ		ՈՒԹԱՆԿԻՒՆ	
Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰
բ	գ	գ	դ	դ	ե	ե	զ	զ	է	է	ը
գ	զ	ե	թ	է	ժբ	թ	ժե	ժԱ.	ժԸ	ժԳ.	ԻԱ.
դ	ժ	է	ժզ	ժ	Իբ	ժԳ.	ԻԸ	ժզ	ԼԳ.	ժԹ	Խ
ե	ժե	թ	Իե	ժԳ.	Լե	ժէ	Խե	ԻԱ.	Ծե	Իե	Կե
զ	ԻԱ.	ժԱ.	Լզ	ժզ	ԾԱ.	ԻԱ.	Կզ	Իզ	զԱ.	ԼԱ.	զզ
է	ԻԸ	ժԳ.	ԽԹ	ժԹ	Հ	Իե	ՂԱ.	ԼԱ.	ճժբ	Լէ	ճԼԳ.
ը	Լզ	ժե	ԿԳ.	Իբ	Ղբ	ԻԹ	ճԻ	Լզ	ճԽԸ	ԽԳ.	ճՀզ
թ	Խե	ժէ	զԱ.	Իե	ճժէ	ԼԳ.	ճԾԳ.	ԽԱ.	ճջԹ	ԽԹ	ՄԻե
ժ	Ծե	ժԹ	ճ	ԻԸ	ճԽե	Լէ	ճՂ.	Խզ	ՄԼե	Ծե	Մջ
ժԱ.	Կզ	ԻԱ.	ճԻԱ.	ԼԱ.	ճՀզ	ԽԱ.	ՄԼԱ.	ԾԱ.	Մջզ	ԿԱ.	ՅԽԱ.
ժբ	Հզ	ԻԳ.	ճԽԳ.	ԼԳ.	Մժ	Խե	ՄՀզ	Ծզ	ՅԽբ	Կէ	ՆԸ
ժԳ.	ՂԱ.	Իե	ճԿԹ	Լէ	ՄԽէ	ԽԹ	ՅԻէ	ԿԱ.	ՆԳ.	ՀԳ.	ՆջԱ.
ժԴ.	ճե	Իէ	ճՂզ	Խ	Մջէ	ԾԳ.	ՅՀԸ	Հզ	ՆԿԹ	ՀԹ	ՆԿ
ժե	ճԻ	ԻԹ	ՄԻե	ԽԳ.	ՅԼ	Ծէ	ՆԼե	ՀԱ.	ՇԽ	ջե	ՈԽե
ժզ	ճԼզ	ԼԱ.	ՄԾզ	Խզ	ՅՀզ	ԿԱ.	ՆՂզ	Հզ	Ռժզ	ՂԱ.	ջԼզ
ժէ	ճԾԳ.	ԼԳ.	ՄջԹ	ԽԹ	ՆԻե	Կե	ՇԿԱ.	զԱ.	ՌՂէ	Ղէ	ՊԼԳ.
ժԸ	ճՀԱ.	Լե	ՅԻԳ.	Ծբ	ՆՀէ	ԿԹ	ՈԼ	զզ	զզԳ.	ճԳ.	ջԼզ
ժԹ	ճՂ.	Լէ	ՅԿԱ.	Ծե	ՇԼբ	ՀԳ.	զԳ.	ՂԱ.	ՊՀԳ.	ճԹ	ՌԽե
Ի	ՄԾ	ԼԹ	Ն	ԾԸ	ՇՂ.	Հէ	զջ	էզ	ջՀ	ճժե	ՌճԿ
ԻԱ.	ՄԼԱ.	ԽԱ.	ՆԽԱ.	ԿԱ.	ՈԾԱ.	զԱ.	ՇՀԱ.	ճԱ.	ՌՀԱ.	ճԻԱ.	ՌՄջԱ.
Իբ	ՄԾԳ.	ԽԳ.	ՆջԳ.	ԿԳ.	զժե	զե	ճԽզ	ճզ	ՌճՀէ	ճԻէ	ՌՆԸ
Իգ	ՄՀՂ.	Խե	ՇԻԹ	Կէ	զջբ	զԹ	ՌԼե	ճժԱ.	ՌՄԾԸ	ճԼԳ.	ՌՇԽԱ.
Իդ	Յ	Խէ	ՇՀզ	Հ	Պջբ	ՂԳ.	ՌճԻԸ	ճժզ	ՌՆԳ.	ճԼԹ	ՌՈջ
Իե	Յեէ	ԽԹ	ՈԻ	ՀԳ.	ջեե	Ղէ	ՌՄԼե	ճԻԱ.	ՌՇԻե	ճԽե	ՌՊԻե
Իզ	ՅԾԱ.	ԾԱ.	ՈՀզ	Հզ	ՌԱ.	ճԱ.	ՌՅԻզ	ճԻզ	ՌՈԾԱ.	ճԾԱ.	Ռջ

Ձեռ. ՄՄ 2595, ք. 237ա

ԻՆՆԱՆԿԻՒՆ		ՏԱՍՆԱՆԿԻՒՆ				ԱԺ.ԱՆԿԻՒՆ				ԲԺ.ԱՆԿԻՒՆ		ԳԺ.ԱՆԿԻՒՆ	
Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰	Ա.	Ա ⁰
Ը	Թ	Թ	ժ	ժ	ժԱ.	ժԱ.	ժբ	ժբ	ժԳ.	ժԳ.	ժԳ.		
ժե	ԻԳ.	ժէ	ժԹ	Լ	ԻԱ.	ԼԳ.	ԻԳ.	Լզ	Իե	Իէ	ԼԹ		
Իբ	Խզ	Իե	Ծբ	ԻԸ	ԾԸ	ԼԱ.	ԿԳ.	ԼԳ.	Հ	Լե	Հզ		
ԻԹ	Հե	ԼԳ.	ջե	Լէ	Ղէ	ԽԱ.	ճե	Խե	ճժե	ԽԹ	ճԻէ		
Լզ	ճժԱ.	ԽԱ.	ճԽզ	Խզ	ճԽԱ.	ԾԱ.	ճԾզ	Ծզ	ճՀԱ.	ԿԱ.	ճջզ		
ԽԳ.	ճԾԳ.	ԽԹ	ճՀե	Ծե	ճՂզ	ԿԱ.	Մժէ	Կէ	ՄԼԸ	ՀԳ.	ՄԾԹ		
Ծ	ՄԳ.	Ծէ	ՄԼբ	ԿԳ.	ՄԿ	ՀԱ.	ՄջԸ	ՀԸ	Յժզ	ջե	ՅԽԳ.		
Ծէ	ՄԿԱ.	Կե	ՄՂէ	ՀԳ.	ՅԼԳ.	զԱ.	ՅԿԹ	ջԹ	Նե	Ղէ	ՆԽԱ.		
ԿԳ.	ՅԻե	ՀԳ.	ՅՀ	ջբ	Նժե	ՂԱ.	ՆՀ	ճ	Շե	ճբ	ՇԾ		
ՀԱ.	ՅՂզ	ջԱ.	ՆԾԱ.	ՂԱ.	Շզ	ճԱ.	ՇԿԱ.	ճժԱ.	Ոժզ	ճԽԱ.	ՈՀԱ.		

ՀԸ	ՆՀԴ	ՋԹ	ՇԵ	Ճ	ՈԶ	ՃԺԱ	ՈՀԲ	ՃԻԲ	ՉԼԸ	ՃԼԳ	ՊԴ
ՋԵ	ՇԾԹ	ՂԷ	ՈԼԷ	ՃԹ	ՋԺԷ	ՃԻԱ	ՋՂԳ	ՃԼԳ	ՊՀԱ	ՃԽԵ	ՋԽԹ
ՂԲ	ՈԾԱ	ՃԵ	ՋԽԲ	ՃԺԸ	ՊԼԳ	ՃԼԱ	ՋԵԴ	ՃԽԴ	ՌԺԵ	ՃԾԷ	ՌՃԶ
ՂԹ	ՋԾ	ՃԺԳ	ՊԹԵ	ՃԵԷ	ՋԿ	ՃԽԱ	ՌՀԷ	ՃԾԵ	ՌՃՀ	ՃԿՀ	ՌՄՀԵ
ՃԶ	ՊԾՋ	ՃԻԱ	ՋՀԶ	ՃԼՋ	ՌԴՋ	ՃԾԱ	ՌՄԺՋ	ՃԿՋ	ՌՅԼՋ	ՃՁԱ	ՌՆԾՋ
ՃԺԳ	ՋԿԹ	ՃԻԹ	ՌՃԵ	ՃԵԵ	ՌՄԽԱ	ՃԿԱ	ՌՅՀԷ	ՃԿԷ	ՌՇԾԳ	ՃՂԳ	ՌՈԽԹ
ՃԻ	ՌՋԹ	ՃԼԷ	ՌՄԽԲ	ՃԾԴ	ՌՅՂԵ	ՃՀԱ	ՌՇԽԸ	ՃՁԸ	ՌՋԱ	ՄԵ	ՌՊԾԴ
ՃԻԷ	ՌՄԺՋ	ՃԽԵ	ՌՅՁԷ	ՃԿԳ	ՌՇԾԸ	ՃՁԱ	ՌՋԻԹ	ՃՂԹ	ՌՋՄԾԷ	ՍՀԱ	
ՃԼԴ	ՌՅԾ	ՃԾԳ	ՌՇԽ	ՃՀԲ	ՌՉԼ	ՃՂԱ	ՌՋԻ	ՄԺ	ՍՃԺ	ՄԻԹ	ՍՅ
ՃԽԱ	ՌՆԴԱ	ՃԿԱ	ՌՋԱ	ՃՁԱ	ՌՋԺԱ	ՄԱ	ՍՃԻԱ	ՄԴԱ	ՍՅԼԱ	ՄԽԱ	ՍՇԽԱ
ՃԽԸ	ՌՈԼԹ	ՃԿԸ	ՌՊՀ	ՃՂ	ՍՃԱ	ՄԺԱ	ՍՅԼԲ	ՄԼԲ	ՍՇԿԳ	ՄԾԳ	ՍՉՂԴ
ՃԾԵ	ՌՈԼԹ	ՃԿԷ	ՃՂԹ	ՍՅ	ՄԴԱ	ՍՂԾԳ	ՄԽԳ	ԱՊՋ	ՄԿԵ	ՎԾԹ	ՍՃԷ
ՃԿԲ	ՌՋՅՋ	ՃՁԵ	ՍՄԼԲ	ՄԸ	ՄՂԸ	ՄԼԱ	ՍՁՁԴ	ՄԾԴ	ՎԿ	ՄՀԷ	ՎՅԼՋ
ՃԿԹ	ՍՃԻԵ	ՃՂԳ	ՍՆԻԷ	ՄԺԷ	ՍՁԻԵ	ՄԽԱ	ՎԻԵ	ՄԿԵ	ՅՎԻԵ	ՄՁԹ	ՎՈԻԵ
ՃՀԶ	ՍՅԱ	ՄԱ	ՍՈԻՋ	ՄԻՋ	ՍՋԾԱ	ՄԾԱ	ՎՄՀՋ	ՄՀՋ	ՎՈԱ	ՅԱ	ՎՋԻՋ

Ձեռ. ՄՄ 2595, ք. 237բ

Նարարեալ տախ Է.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Բ.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Դ.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Զ.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Ը.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Թ.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Պ.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Բ.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Լ.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Կ.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Կ.անկիւնիս ձնամին	Նարարեալ տախ Կ.անկիւնիս ձնամին
Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ	ԺԱ	ՃԲ	ՃԳ
Գ	Ե	Է	Թ	ՃԱ	ՃԳ	ՃԵ	ՃԷ	ՃԹ	ԻԱ	ԻԳ	ԻԵ
Դ	Է	Ճ	ՃԳ	ՃԶ	ՃԹ	ԻԲ	ԻԵ	ԻԸ	ԼԱ	ԼԳ	ԼԷ
Ե	Թ	ՃԳ	ՃԷ	ԻԱ	ԻԵ	ԻԹ	ԼԳ	ԼԷ	ԽԱ	ԽԵ	ԽԹ
Զ	ՃԱ	ՃԶ	ԻԱ	ԻՋ	ԼԱ	ԼՋ	ԽԱ	ԽՋ	ԾԱ	ԾՋ	ԿԱ
Է	ՃԵ	ՃԹ	ԻԵ	ԼԱ	ԼԷ	ԽԳ	ԽԹ	ԾԵ	ԿԱ	ԿԷ	ՀԳ
Ը	ՃԵ	ԻԲ	ԻԹ	ԼՋ	ԽԳ	Ծ	Է	ԿԳ	ՀԼԱ	ՀԸ	ՋԵ
Թ	ՃԷ	ԻԵ	ԼԳ	ԽԱ	ԽԹ	ԾԷ	ԿԵ	ՀԳ	ՋԱ	ՋԹ	ՂԷ
Ճ	ՃԹ	ԻԸ	ԼԷ	ԽՋ	ԾԵ	ԿԳ	ՀԳ	ՋԲ	ՂԱ	Ճ	ՃԹ
ՃԱ	ԻԱ	ԼԱ	ԽԱ	ԾԱ	ԿԱ	ՀԱ	ՋԱ	ՂԱ	ՃԱ	ՃԺԱ	ՃԻԱ
ՃԲ	ԻԳ	ԼԳ	ԽԵ	ԾՋ	ՀԷ	ՀԸ	ՋԹ	Ճ	ՃԺԱ	ՃԻԲ	ՃԼԳ
ՃԳ	ԻԵ	ԼԷ	ԽԹ	ԿԱ	ՀԳ	ՋԵ	ՂԷ	ՃԹ	ՃԻԱ	ՃԼԳ	ՃԽԵ
ՃԴ	ԻԷ	Խ	ԾԳ	ԿՋ	ՀԹ	ՂԲ	ՃԵ	ՃԺԷ	ՃԼԱ	ՃԽԴ	ՃԾԵ
ՃԵ	ԻԹ	ԽԳ	ԾԷ	ՀԱ	ՋԵ	ՂԹ	ՃԺԳ	ՃԻԷ	ՃԽԱ	ՃԾԵ	ՃԿԹ
ՃԶ	ԼԱ	ԽՋ	ԿԱ	ՀՋ	ՂԱ	ՃՋ	ՃԻԱ	ՃԼՋ	ՃԾԱ	ՃԿՋ	ՃՁԱ
ՃԷ	ԼԳ	ԽԹ	ԿԵ	ՋԱ	ՂԷ	ՃԺԳ	ՃԻԹ	ՃԽԵ	ՃԿԱ	ՃՀԷ	ՃՂԳ
ՃԸ	ԼԵ	ԾԲ	ԿԹ	ՋՋ	ՃԳ	ՃԵ	ՃԼԷ	ՃԾԴ	ՃՀԱ	ՃՁԸ	ՄԷ
ՃԹ	ԼԷ	ԾԵ	ՀԳ	ՂԱ	Բ	ՃԻԷ	ՃԽԵ	ՃԿԳ	ՃՁԱ	ՃՂԹ	ՄԺԷ

Ի	ԼԹ	ԾԸ	ՀԷ	ՂԶ	ձԺԵ	ձԼԳ	ձԾԳ	ձՀԲ	ձՂԱ	ՄԺ	ՄԻԹ
ԻԱ	ԽԱ	ԿԱ	ՁԱ	ձԱ	ձԻԱ	ձԽԱ	ձԿԱ	ձՁԱ	ՄԱ	ՄԵԱ	ՄԽԱ
ԻԲ	ԽԳ	ԿԳ	ՁԵ	ձՂ	ձԵԷ	ձԽԸ	ձԿԸ	ձՂ	ՄԺԱ	ՄԼԲ	ՄԾԳ
ԻԳ	ԽԷ	ԿԷ	ՁԹ	ձԺԱ	ձԼԳ	ձԾԵ	ձՀԷ	ձՂԹ	ձՄԻԱ	ՄԽԳ	ՄՀԵ
ԻԴ	ԽԷ	Հ	ՂԳ	ձԺԳ	ԼԹ	ձԿԲ	ձՁԵ	ՄԸ	ՄԼԱ	ՄԾԳ	ՄՀԵ
ԻԵ	ԽԹ	ՀԳ	ԾԷ	ձԱ	ձԽԵ	ձԿԹ	ձՂԳ	ՄԺԷ	ՄԽԱ	ՄԿԵ	ՄՁԹ
ԻԶ	ԾԱ	ՀԶ	ձԱ	ձԻԶ	ձԾԱ	ձՀԶ	ՄԱ	ՄԻԶ	ՄԾԱ	ՄՀԶ	ՅԱ

Ձեռ. ՄՄ 2595, ք. 238ա

Ձեռ. ՄՄ 1770, ք. 363բ

եռանկրանի	Քառանկրանի	Հինգանկրանի	Վեցանկրանի	Եփեռանկրանի	Ութանկրանի	Իննանկրանի	Տասնանկրանի	Աճանկրանի	ԲՃանկրանի	ԳՃանկրանի	ՊՃանկրանի
Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ	ԺԳ
Զ	Թ	ԺԲ	ԺԵ	ԺԸ	ԻԱ	ԻԷ	Լ	ԼԳ	ԼՂ	ԼՁ	ԼԹ
Ժ	ԺԶ	ԻԲ	ԻԸ	ԼԳ	Խ	ԽԶ	ԾԲ	ԾԸ	ԿԳ	Հ	ՀԶ
ԺԵ	ԻԷ	ԼԵ	ԽԷ	ԾԵ	ԿԷ	ՀԵ	ՁԷ	ՂԵ	ձԷ	ձԺԷ	ձԻԷ
ԻԱ	ԼԶ	ԾԱ	ԿԶ	ՁԱ	ՂԶ	ձԺԱ	ձԻԶ	ձԽ	ձԾԶ	ձՀԱ	ձՂ
ԻԸ	ԽԹ	Հ	ՂԱ	ձԺԲ	ձԼԳ	ձԾԳ	ձՀԳ	ձՂԶ	ՄԺԷ	ՄԼԸ	ՄԾԹ
ԼԶ	ԿԳ	ՊԲ	ձԻ	ձԽԸ	ձՀԶ	ՄԳ	ՄԼԲ	ՄԿ	ՄՁԸ	ՅԺԶ	ՅԽԳ
ԽԵ	ԾԱ	ձԺԷ	ձԺԳ	ձՁԹ	ՄԵԷ	ՄԿԱ	ՄՂԷ	ՅԼԳ	ՅԿԹ	ԵԷ	ԵԽԱ
ԾԷ	Հ	ձԽԵ	ձՂ	ՄԼԷ	ՄՁ	ՅԷ	ՅՀ	ԵԺԵ	ԵԿ	ԵԷ	ԵԾ
ԿԶ	ձԻԱ	ձՀԶ	ձԼԱ	ՄՁԶ	ՅԽԱ	ՅՂԶ	ԵԾԱ	ԵԶ	ԵԿԱ	ՌԺԶ	ՌՀԱ
ՀԸ	ձԽԳ	ՄԺ	ՄՀԶ	ՅԽԲ	ԵԸ	ԵՀԳ	ԵԽ	ՌԶ	ՌՀԲ	ՁԸԸ	ՊԳ
ՂԱ	ձԿԹ	ՄԽԷ	ՅԻԷ	ԵԳ	ԵՁԱ	ՂԾԲ	ՌԷ	ՁԺԷ	ՁՂԳ	ՊՀԱ	ՁԽԹ
ձԷ	ձՂԶ	ՄՁԷ	ՅՀԸ	ԵԿԹ	ԵԿ	ՌԾԱ	ՁԽԲ	ՊԼԳ	ՁԻԳ	ԺԷ	ՌԶ
ձԻ	ՄԻԷ	ՅԼ	ԵԼԵ	ԵԽ	ՌԽԵ	ՁԾ	ՊԾԵ	ՁԿ	ՌԿԵ	ՌՀՀ	ՌՄՀԵ
ձԼԶ	ՄԾԶ	ՅՀԶ	ԵՂԶ	ՁԼԶ	ՊԾՂ	ՁՀԶ	ՌՂԶ	ՌՄԺԶ	ՌՅԼԶ	ՌԵԾԶ	ՌԵԾԶ
ձԾԳ	ՄՁԹ	ԵԻԱ	ՂԿԱ	ՌՂԷ	ՊԼԳ	ՁԿԹ	ՌՀԵ	ՌՄԱ	ՌՄՀԵ	ՌԵԾԳ	ՌՌԽԹ
ձՀԱ	ՅԻԳ	ԵՀԵ	ՌԼ	ՁՁԳ	ՁԼԶ	ՌՁԹ	ՌՄԽԲ	ՌՅՂԷ	ՌԵԽԸ	ՌՁԱ	ՌՊԾԳ
ձՂ	ՅԿԱ	ՂԼԲ	ՁԳ	ՊՀԳ	ՌԽԵ	ՌՄԺԶ	ՌՅՁԷ	ՌԵԸ	ՌՁԵԹ	ՌՁ	ՍՀԱ
ՄԺ	Ե	ՂԶ	ՁՁ	ՁՀ	ՌՀԿ	ՌՅԾ	ՌԵԽ	ՌՁԼ	ՌՁԵ	ՍՀԺ	ՍՅ
ՄԼԱ	ԵԽԱ	ՌԾԱ	ՊՀԱ	ՌՀԱ	ՌՄՁԱ	ՌԵՂԱ	ՌՁԱ	ՌՁԺԱ	ՍՀԻԱ	ՍՅԼԱ	ՍԵԽԱ
ՄԾԳ	ԵՁԳ	ՁԵ	ՁԽԶ	ՌՀՀԵ	ՌԵԸ	ՌՌԹ	ՌՊՀ	ՍՀԱ	ՍՅԼԲ	ՍՂԿԳ	ՍՁՂԳ
ՄՀԶ	ԵԻԹ	ՂՁԲ	ՌԷ	ՌՄՁԸ	ՌՂԽԱ	ՌՁՂԳ	ՍԽԷ	ՍՅ	ՍՂԾԳ	ՍՊՂ	ՎԾԹ
Յ	ԵՀԶ	ՊԾԲ	ՌՀԸԸ	ՌԵԳ	ՌՌՁ	ՌՁԾԶ	ՍՄԼԲ	ՍԵԸ	ՍՁՄԳ	ՎԿ	ՎՅԼԶ
ՅԵԷ	ՌԻԷ	ՁԵԷ	ՌՄԻԷ	ՌԵԻԷ	ՌՊԵԷ	ՍՀԵԷ	ՍԵԻԷ	ՍՁԻԷ	ՎԵԷ	ՎՅԻԷ	ՎՌԵԷ
ՅԾԱ	ՌՀՂ	ՌԱ	ՌՅԻԶ	ՌՌԾԱ	ՌՁՀԶ	ՍՅԱ	ՍՌԻԶ	ՍՁԾԱ	ՎՄՀԶ	ՎՌԱ	ՎՁԻԵ

Տես 'ի միակն է. երոպն ցանկ բերկ գինկն ամ անկրանաոր: Եղբայն և վեչտասաներոպն 'ի միակն գճ. եռեակն 'ի Ե. երոպ 'ի միակն գճ. և Ե.:

Ձեռ. ՄՄ 2595, ք. 238բ

Ձեռ. ՄՄ 1770, ք. 364ա

ՅՈՂԱՆՆՈՒ ՔԱՆԱՆԱՅԻ ԶԱՆԿԻՆԱԻՈՐ ԹՈՒՅՆ Ի ՓՈԽԱԲԵՐՈՒԹԵՆԷ ԵՐԿԱԶԱՓՈՒԹԵԱՆ ՁԵՒՈՅ

Եռանկյունի	Ա	Բ	Գ	Գ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ							
	Ա	Գ	Զ	Ժ	ԺԵ	ԻԱ	ԼԶ	ԼԶ	ԽԵ	ԾԵ							
	Ա	Գ	Ե	Է	Թ	ԺԱ	ԺԳ	ԺԵ	ԺԷ	ԺԹ							
Քառ անկյունի	Ա	Գ	Թ	ԺԶ	ԻԵ	ԼԶ	ԽԹ	ԿԳ	ԶԱ	Ճ							
	Ա	Գ	Է	Ժ	ԺԳ	ԺԶ	ԺԹ	ԻԲ	ԻԵ	ԻԸ							
Հինգ անկյունի	Ա	Ե	ԺԲ	ԻԲ	ԼԵ	ԾԱ	Հ	ՂԲ	ՃԾԷ	ՃԱԵ							
	Ա	Ե	Թ	ԺԳ	ԺԷ	ԻԱ	ԻԵ	ԻԹ	ԼԳ	ԼԵ							
Վեց անկյունի	Ա	Զ	ԺԵ	ԻԸ	ԽԵ	ԿԶ	ՂԱ	ՃԻ	ՃԾԳ	ՃՂ							
	Ա	Զ	ԺԱ	ԺԶ	ԻԱ	ԻԶ	ԼԱ	ԼԶ	ԽԱ	ԽԶ							
Եյք անկյունի	Ա	Է	ԺԸ	ԼԳ	ԾԵ	ԶԱ	ՃԾԲ	ՃԽԸ	ՃԶԹ	ՄԼԵ							
	Ա	Է	ԺԳ	ԺԹ	ԻԵ	ՀԱ	ԼԵ	ԽԳ	ԽԹ	ԾԵ							
Ութ անկյունի	Ա	Ը	ԻԱ	Խ	ԻԵ	ՂԶ	ՃԼԳ	ՃՀԶ	ՄԻԵ	ՄԶ							
	Ա	Ը	ԺԵ	ԻԲ	ԻԹ	ԼԶ	ԽԳ	Ծ	ԾԵ	ԿԳ							
Ինն անկյունի	Ա	Թ	ԻԳ	ԽԶ	ՀԵ	ՃԺԱ	ՃԾԳ	ՄԳ	ՄԿԱ	ՅԻԵ							
	Ա	Թ	ԺԷ	ՀԵ	ԼԳ	ԽԱ	ԽԹ	ԾԷ	ԿԵ	ՀԳ							
Տասն անկյունի	Ա	Ժ	ԻԷ	ԾԲ	ԶԵ	ՃԻԶ	ՃՀԵ	ՄԼԲ	ՄՂԷ	ՅՀ							
	Ա	Ժ	ԺԹ	ԻԸ	ԼԷ	ԽԶ	ԾԵ	ԿԳ	ՀԳ	ԶԲ							
Մետասան անկյունի	Ա	ԺԱ	Լ	ԾԸ	ՂԵ	ՃԽԱ	ՃՂԶ	ՄԿ	ՅԼԳ	ՆԺԵ							
	Ա	ԺԱ	ՀԱ	ԼԱ	ԽԱ	ԾԱ	ԿԱ	ՀԱ	ԶԱ	ՂԱ							
Երկուտասան անկյունի	Ա	ԺԲ	ԼԳ	ԿԳ	ՃԵ	ՃԾԶ	ՄԺԷ	ՄԶԸ	ՅԿԹ	ՆԿ							
	Ա	ԺԲ	ՀԳ	ԼԳ	ԽԵ	ԺԶ	ԿԵ	ՀԸ	ԶԹ	Ճ							
Երեքուտասան անկյունի	Ա	ԺԳ	ԼԶ	Հ	ՃԺԵ	ՃՀԱ	ՄԼԸ	ՅԺԶ	ՆԵ	ՇԵ							
	Ա	ԺԳ	ԻԵ	ԼԷ	ԽԹ	ԿԱ	ՀԳ	ԶԵ	ՂԷ	ՃԹ							
Չորեքուտասան անկյունի	Ա	ԺԴ	ԼԹ	ՀԶ	ՃԻԵ	ՃԶԶ	ՄԾԹ	ՅԽԳ	ՆԽԱ	ՇԾ							
	Ա	ԺԴ	ԻԷ	Խ	ԾԳ	ԿԶ	ՀԹ	ՂԲ	ՃԵ	ՃԺԸ							
Հինգեքուտասան անկյունի	Ա	ԺԵ	ԽԲ	ԶԲ	ՃԼԵ	ՄԱ	ՄԶ	ՅՀԲ	ՆՀԷ	ՇՂԵ							
Կոճառ	Ա	Գ	Ե	Է	Թ	ԺԱ	ԺԳ	ԺԵ	Ժ	Լ	Ծ	Կ	Ղ	Ճ	Յ	Շ	Զ
Դարժ	Բ	Գ	Զ	Ը	Ժ	ԺԲ	ԺԳ	ԺԶ	Ի	Խ	Կ	Զ	Ճ	Մ	ՆՈ	ՊՈ	ՍՏ
Քուեայժ	Գ	ԺԶ	ԻԳ	ԼԲ	Խ	ԽԸ	ԿԳ	Ը	ԺԶ	ԼԲ	ԿԳ	ՃԻԸ	ՄԺԶ	ՌԺԲ	ՌԻԳ	ՍԽԸ	

Ձեռ. ՄՄ 4150, 23ա-24ա

Եռանկյունի	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ	ԺԵ	ԺԶ	ԺԷ	ԺԸ	ԺԹ	Ի	ԻԱ
	ԿԶ	ՀԸ	ՂԱ	ՃԵ	ՃՈ	ՃԼԶ	ՃԾԳ	ՃՀ	ՃՂ	ՄԺ	ՄԼԱ
	ԻԱ	ԻԳ	ԻԵ	ԻԷ	ԻԹ	ԼԱ	ԼԳ	ԼԵ	ԼԷ	ԼԹ	ԽԱ
Քառանկյունի	ՃԻԱ	ՃԽԳ	ՃԿԹ	ՃՂԶ	ՄԻԵ	ՄԾԶ	ՄԶԹ	ՅԻԳ	ՅԿԱ	Ն	ՆԽԱ
	ԼԱ	ԼԳ	ԼԷ	Խ	ԽԳ	ԽԶ	ԽԹ	ԾԲ	ԾԵ	ԾԸ	ԿԱ
Հինգանկյունի	ՃՀԶ	ՄԺ	ՄԽԷ	ՄԶԷ	ՅԼ	ՅՀԶ	ՆՀԷ	ՆՀԷ	ՇԼԲ	ՇՂ	ՈԾԱ
	ԽԱ	ԽԵ	ԽԹ	ԾԳ	ԾԷ	ԿԱ	ԿԵ	ԿԹ	ՀԳ	ՀԷ	ԶԱ
Վեցանկյունի	ՄԼԱ	ՄՀԶ	ՀԻԵ	ՅՀԸ	ՆԼԵ	ՆՂԶ	ՇԿԱ	ՈԼ	ԶԳ	ԶԶ	ՊԿԱ
	ԾԱ	ԾԶ	ԿԱ	ԿԶ	ՀԱ	ՀԶ	ԶԱ	ԶԶ	ՂԱ	ՂԶ	ՃԱ

Երանկիւնի	ՄԶԶ	ՅԽԲ	ՆԿ	ՆԿԹ	ՇԽ	ՈԺԶ	ՈՂԶ	ԶԶԳ	ՊԷԳ	ՋԷ	ՌԷԱ
	ԿԱ	ԿԷ	ՀԳ	ՀԹ	ՋԵ	ՂԱ	ՂԷ	ՃԳ	ՃԹ	ՃԺԵ	ՃԻԱ
Ուրանկիւնի	ՅԽԱ	ՆԸ	ՆՋԱ	ՇԿ	ՈԽԵ	ՋԼԶ	ՊԼԳ	ՋԼԶ	ՌԽԵ	ՌԷԿ	ՌՄՋԱ
	ՀԱ	ՀԸ	ՋԵ	ՂԲ	ՂԹ	ՃԶ	ՃԺԳ	ՃԻ	ՃԻԷ	ՃԼԳ	ՃԽԱ
Իննանկիւնի	ՅՂԶ	ՆՀԳ	ՇԺԹ	ՈՇԱ	ՋԾ	ՊԾԶ	ՃԿԹ	ՌՋԹ	ՌՄԺԶ	ՌՅԺ	ՌՆՂԱ
	ՋԱ	ՋԹ	ՂԵ	ՃԵ	ՃԺԳ	ՃԻԱ	ՃԻԹ	ՃԼԷ	ՃԽԵ	ՃԾԳ	ՃՆԱ
Տասնանկիւնի	ՆԾԱ	ՇԽ	ՈԼԷ	ՋԽԲ	ՊԾԵ	ՋՀԶ	ՌԷԵ	ՌՄԽԲ	ՌՅՋԷ	ՌՇԽ	ՌՋԱ
	ՂԱ	Ճ	ՃԹ	ՃԺԸ	ՃԻԷ	ՃԼԶ	ՃԽԵ	ՃԾԳ	ՃԿԳ	ՃՀԲ	ՃՋԱ
Մետասան անկիւնի	ՇԶ	ՈՋ	ՋԺԵ	ՊԼԳ	ՃԿ	ՌՂԶ	ՌՄԽԱ	ՌՅՂԵ	ՌՇԾԸ	ՌՋԼ	ՌՋԺԱ
	ՃԱ	ՃԺԱ	ՃԻԱ	ՃԼԱ	ՃԽԱ	ՃԾԱ	ՃԿԱ	ՃՀԱ	ՃՋԱ	ՃՂԱ	ՄԱ
Երկոտասան անկիւնի	ՇԿԱ	ՈՀԲ	ՋՂԳ	ՃԻԳ	ՌԿԵ	ՌՄԶ	ՌՅՀԷ	ՌՋԽԸ	ՌՋԻԹ	ՌՋԻ	ՍՃԻԱ
	ՃԺԱ	ՃԻԲ	ՃԼԳ	ՃԽԳ	ՃԾԵ	ՃԿԶ	ՃՀԷ	ՃՋԸ	ՃՂԹ	ՃՄԺ	ՄԻԱ
Երեքտասան անկիւնի	ՈԺԶ	ՋՀԸ	ՊՀԱ	ՌԺԵ	ՌՃՀ	ՌՅԼԶ	ՌՇԺԳ	ՌՋԱ	ՌՋ	ՍՃԺ	ՍՅՇԱ
	ՃԻԱ	ՃԼԳ	ՃԽԵ	ՃԾԷ	ՃԿԹ	ՃՋԱ	ՃՂ	ՄԵ	ՄԺԷ	ԻԹ	ՄԽԱ
Չորեքտասան անկիւնի	ՌՀԱ	ՊԳ	ՃԽԹ	ՌԺԶ	ՌՄՀԵ	ՌՆԾԶ	ՌՌԽԹ	ՌՊԾԳ	ՍՀԱ	ՍՅ	ՍՇԽԱ
	ՃԼ	ՃԽԳ	ՃԾԷ	ՃՀ	ՃՋԳ	ՃՂԶ	ՄԹ	ՄԻԲ	ՄԼԵ	ՄԽԸ	ՄԿԱ
Հինգետասան անկիւնի	ՋԻԶ	ՊՀ	ՌԻԷ	ՌՃՂԷ	ՌՅՋ	ՌՇՀԶ	ՌՋՋԵ	ՍԷ	ՍՄԽԲ	ՍՆՂ	ՍՋԾԱ
	Թ	ԻԷ	ՋԱ	ՄՇԳ	ՋԻԹ	ՍՃՋԷ	ՅՋԿԱ	ԻՌՅՋԳ	ԿԱՌՋԹ		

Երիցս չորհ հնգիցս: Կ չորիցս հինգեիցս ՃԻ: Հինգուիցս. ՄԺ: Վեցիցս եսնուիցս. ՋԽ. ՄՄ 4150, քք. 23ք-24ք

Եռանկիւնի	Ա	Գ	Ջ	Ժ	ԺԵ	ԻԱ	ԻԸ	ԼՋ	ԽԵ	ԾԵ	ԿՋ	ՀԸ
	ՂԱ	ՃԵ	ՃԻ	ՃԼԶ	ՃԾԳ	ՃՀԱ	ՃՂ	ՄԺ	ՄԼԱ	ՄԾԳ	ՄՀՋ	Յ
Քստանկիւնի	Ա	Գ	Թ	ԺՋ	ԻԵ	ԼՋ	ԽԹ	ԿԳ	ՋԱ	Ճ	ՃԻԱ	ՃԽԳ
	ՃԿԹ	ՃՂԶ	ՄԻԵ	ՄԾՋ	ՄՋԹ	ՅԻԳ	ՅԿԱ	Ն	ՆԽԱ	ՆՋԳ	ՇԻԹ	ՇՀՋ
Հինգանկիւնի	Ա	Ե	ԺԲ	ԻԲ	ԼԵ	ԾԱ	Հ	ՂԲ	ՃԺԷ	ՃԽԵ	ՃՀՋ	ՄԺ
	ՄԽԷ	ՄՋԷ	ՅԼ	ՅՀՋ	ՆԻԵ	ՆՀԷ	ՇԲԼ	ՇԷ	ՈՇԱ	ՋԺԵ	ՋՋԲ	ՊԾԲ
Վեցանկիւնի	Ա	Ջ	ԺԵ	ԻԸ	ԽԵ	ԿՋ	ՂԱ	ՃԻ	ՃԾԳ	ՃՂ	ՄԼԱ	ՄՀՋ
	ՅԻԳ	ՅՀԸ	ՆԼԵ	ՆՂԶ	ՇԿԱ	Պ	ՋԳ	ՋՋ	ՊԿԱ	ՋԽՋ	ՌԼԵ	ՌՃԻԸ
Երանկիւնի	Ա	Է	ԺԸ	ԼԳ	ԾԵ	ՋԱ	ՃԺԲ	ՃԽԸ	ՃՋԹ	ՄԼԵ	ՄՋՋ	ՅԽԲ
	ՆԳ	ՆԿԹ	ՇԽ	ՈԺՋ	ՈՂԷ	ՋՋԳ	ՊՀԳ	ՋՀ	ՌՀԱ	ՌՃՀԷ	ՌՄՋԸ	ՌՆԳ
Ուրանկիւնի	Ա	Ը	ԻԱ	Խ	ԿԵ	ՂՋ	ՃԼԳ	ՃՀՋ	ՄԻԵ	ՄՋ	ՅԽԱ	ՆԸ
	ՆՋԱ	ՇԿ	ՈԽԵ	ՋԼԶ	ՊԼԳ	ՋԼԶ	ՌԽԵ	ՌԷԿ	ՌՄՋԱ	ՌՆԸ	ՌՇԽԱ	ՌՌՋ
Իննանկիւնի	Ա	Թ	ԻԳ	ԽՋ	ՀԵ	ՃԺԱ	ՃԾԳ	ՄԳ	ՄԿԱ	ՅԻԵ	ՅՂՋ	ՆՀԳ
	ՇԾԹ	ՈՇԱ	ՋԾ	ՊԾՋ	ՋԿԹ	ՌՋԹ	ՌՄԺՋ	ՌՅԾ	ՌՆՂԱ	ՌՌԹ	ՌՋՂԳ	ՌՋԾՋ
Տասնանկիւնի	Ա	Ժ	ԻԷ	ԾԲ	ՋԵ	ՃԻՋ	ՃՀԵ	ՄՂԲ	ՄՂԷ	ՅՀ	ՆԾԱ	ՇԽ
	ՈԼԷ	ՋԽԲ	ՊԾԷ	ՋՀՋ	ՌՃԵ	ՌՄԽԲ	ՌՅՋԷ	ՌՇԽ	ՌՋԱ	ՌՏՀ	ՍԽԷ	ՍՄԼԲ
Մետասան անկիւնի	Ա	ԺԱ	Լ	ԾԸ	ՂԵ	ՃԽԱ	ՃՂԶ	ՄԿ	ՅԼԳ	ՆԺԵ	ՇՋ	ՈՋ
	ՋԺԵ	ՊԼԳ	ՋԿ	ՌՂԶ	ՌՄԽԱ	ՌՅՂԵ	ՌՇԾԸ	ՌՋԼ	ՌՋԺԱ	ՍՀԱ	ՍՅ	ՍՇԸ
Երկոտասան անկիւնի	Ա	ԺԲ	ԼԳ	ԿԳ	ՃԵ	ՃԾՋ	ՄԺԷ	ՃՋԸ	ՅԿԹ	ՆԿ	ՇԿԱ	ՌՀԲ
	ՋՂԳ	ՋԻԳ	ՌԿԵ	ՌՄԺՋ	ՌՅՀԵ	ՌՇԽԸ	ՌՋԻԹ	ՌՋԻ	ՍՀԻԱ	ՍՅԼԲ	ՍՇԾԳ	ՍՋՋԳ

Երեւոսասան Անկիւնի	Ա.	ԺԳ	ԼԶ	Հ	ՀԺԵ	ՀՀԱ	ՄԼԸ	ՅԺԶ	ՆԵ	ՇԵ	ՈԺԶ	ՋԼԸ
	ՊՀԱ	ՌԺԵ	ՌՀՀ	ՌՅԼԶ	ՌՇԺԳ	ՌԶԱ	ՌՂ	ՍՀԺ	ՍՅԱ	ՍՇԿԳ	ՍՊԶ	ՋԿ
Զորեւոսասան Անկիւնի	Ա.	ԺԳ	ԼԹ	ՀԶ	ՀԻԵ	ՀԶԶ	ՄԾԹ	ՅԻԳ	ՆԻԱ	ՇԾ	ՈՀԱ	ՊԳ
	ՀԱԹ	ՌՀԶ	ՌՄՀԵ	ՌՆԾԶ	ՌՈԻԹ	ՌՏԾԳ	ՍՀԱ	ՍՅ	ՍՇԻԱ	ՍԶԳԳ	ՎԾԹ	ՎՅԼԶ
Հինգեւոսասան Անկիւնի	Ա.	ԺԵ	ԽԲ	ՋԲ	ՀԼԵ	ՄԱ	ՄԶ	ՅՀԲ	ՆՀԵ	ՀԳԵ	ՋԻԶ	ՊՀ
	ՌԻԷ	ՌՀԳԷ	ՌՅԶ	ՌՇՀԶ	ՌԶԶԵ	ՄԵ	ՍՄԽԲ	ՄՆԳ	ՍԶԾԱ	ՎԻԵ	ՎՅԺԲ	ՎՈԺԲ
Կոճաս	Ա.	Գ	Ե	Է	Թ	ԺԱ	ԺԳ	ԺԵ	ԺԷ	ԺԹ	ԻԱ	ԻԳ
	ԻԵ	ԻԷ	ԻԹ	ԼԱ	ԼԱԳ	ԼԵ	ԼԷ	ԼԹ	ԽԱ	ԽԳ	ԽԵ	ԽԷ
Գարբ	Բ	Գ	Զ	Ը	Ժ	ԺԲ	ԺԳ	ԺԶ	ԺԸ	Ի	ԻԲ	ԻԳ
Քոճայբ	ԻԶ	ԻԸ	Լ	ԼԲ	ԼԳ	ԼԸ	ԼԸ	Խ	ԽԲ	ԽԳ	ԽԶ	ԽԸ
	Ը	ԺԶ	ԻԳ	ԼԲ	Խ	ԽԸ	ԾԶ	ԿԳ	ՀԲ	Ջ	ՋԸ	ԳԶ
	Ը	ԺԶ	ԼԲ	ԿԳ	ՀԻԸ	ՄԾԶ	ՇԺԲ	ՌԻԳ	ՍԽԸ	ՏԳԶ	ՓՀԳԲ	ԺԶՌՅԶԳ

ԼԻՌԶԿԸ: ԿԵՌՇԼԶ:ՀԼԱՌՀԲ:ՄԿԲՌՀԽԳ:
ՋԵՆ. ՄՄ 4150, ք. 25ա-25բ

ՅՈՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ ԶԱՆԿԻՆԱՒՈՐ ԹՈՒՅՆ Ի ՓՈԽԱԲԵՐՈՒԹԵՆԷ ԵՐԿԱԶԱՓՈՒԹԵԱՆ ՁԵՒՈՅ

Եռանկիւնի	Ա.	Բ	Գ	Գ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ
	Ա.	Գ	Զ	Ժ	ԺԵ	ԻԱ	ԻԸ	ԼԶ	ԽԵ	ԾԵ	ԿԶ	ՀԸ
	ԺԳ	ԺԳ	ԺԵ	ԺԶ	ԺԷ	ԺԸ	ԺԹ	Ի	ԻԱ	ԻԲ	ԻԳ	ԻԳ
	ԳԱ	Ե	ՀԻ	ՀԼԶ	ՀԾԳ	ՀՀԱ	ՀԳ	ՄԺ	ՄԼԱ	ՄԾԳ	ՄՀԶ	Յ
Քառանկիւնի	Ա.	Գ	Ե	Է	Թ	ԺԱ	ԺԳ	ԺԵ	ԺԷ	ԺԹ	ԻԱ	ԻԳ
	ԻԵ	ԻԷ	ԻԹ	ԼԱ	ԼԳ	ԼԵ	ԼԷ	ԼԹ	ԽՆ	ԽԳ	ԽԵ	ԽԷ
	ՀԿԹ	ՀԳԶ	ՄԻԵ	ՄԾԶ	ՄՋԹ	ՅԻԳ	ՅԿԱ	Ն	ՆԽԱ	ՆՋԳ	ՇԻԹ	ՇՀԶ
	Ա.	Գ	Ե	Ժ	ԺԳ	ԺԶ	ԺԹ	ԻԲ	ԻԵ	ԻԸ	ԼԵ	ԼԳ
Հինգանկիւնի	Ա.	Ե	ԺԲ	ԻԲ	ԼԵ	ՅԱ	Հ	ԳԲ	ՀԺԵ	ՀԽԵ	ՀՀԶ	ՄԺ
	ԼԷ	Խ	ԽԳ	ԽԶ	ԽԸ	ԽԹ	ԾԲ	ԾԸ	ԿԱ	ԿԳ	ԿԵ	Հ
	ՄԽԷ	ՄՋԷ	ՅԼ	ՅՀԶ	ՆԻԵ	ՆՀԷ	ՇԼԲ	ՇԳ	ՈԾԱ	ՋԺԵ	ՋՋԲ	ՊԾԲ
	Ա.	Ե	Թ	ԺԳ	ԺԷ	ԻԱ	ԻԵ	ԻԹ	ԼԳ	ԼԷ	ԽԱ	ԽԵ
Վեցանկիւնի	Ա.	Զ	ԺԵ	ԻԸ	ԽԵ	ԿԶ	ԳԱ	ՀԻ	ՀԾԳ	ՀԳ	ՄԼԱ	ՄՀԶ
	ԽԹ	ԾԳ	ԾԷ	ԿԱ	ԿԵ	ԿԹ	ՀԳ	ՀԷ	ՋԱ	ՋԵ	ՋԹ	ԳԳ
	ՅԻԵ	ՅՀԷ	ՆԼԵ	ՆԳԶ	ՇԿԱ	ՈԼ	ՋԳ	ՋՋ	ՊԿԱ	ՋԽԶ	ՌԼԵ	ՌՀԻԸ
	Ա.	Զ	ԺԱ	ԺԶ	ԻԱ	ԻԶ	ԼԱ	ԼԶ	ԽԱ	ԽԶ	ԾԱ	ԾԶ
Եւթանկիւնի	Ա.	Է	ԺԸ	ԼԳ	ԾԵ	ՋԱ	ՀԺԲ	ՀԽԸ	ՀՋԹ	ՄԼԵ	ՄՋԶ	ՅԽԲ
	ԿԱ	ԿԶ	ՀԱ	ՀԶ	ՋԱ	ՋԶ	ԳԱ	ԳԶ	ՀԱ	ՀԶ	ՀԺԱ	ՀԺԶ
	ՆԳ	ՆԿԹ	ՇԽ	ՈԺԶ	ՈԳԷ	ՋՋԳ	ՊՀԳ	ՋՀ	ՌՀԱ	ՌՀՀԷ	ՌՄՋԸ	ՌՆԳ
	Ա.	Է	ԺԳ	ԺԹ	ԻԵ	ԼԱ	ԼԷ	ԽԳ	ԽԹ	ԹԵ	ԿԱ	ԿԷ
Ութանկիւնի	Ա.	Ը	ԻԱ	Խ	ԿԵ	ԳԶ	ՀԼԳ	ՀՀԶ	ՄԻԵ	ՄՋ	ՅԽԱ	ՆԸ
	ՀԳ	ՀԹ	ՋԵ	ԳԱ	ԳԷ	ՀԳ	ՀԹ	ՀԺԵ	ՀԻԱ	ՀԻԷ	ՀԼԳ	ՀԼԹ
	ՆՋԱ	ՇԿ	ՈԽԵ	ՋԼԶ	ՊԼԳ	ՋԼԶ	ՌԽԵ	ՌՀԿ	ՌՄՋԱ	ՌՆԸ	ՇԽԱ	ՌՈՋ
Ա.	Ը	ԺԵ	ԻԲ	ԻԹ	ԼԶ	ԽԳ	Ծ	ԾԷ	ԿԳ	ՀԱ	ՀԸ	

Իննանկիւնի	Ա	Թ	ԻԿ	ԽԶ	ՀԵ	ՃԺԱ	ՃԾԴ	ՄԴ	ՄԿԱ	ՅԻԵ	ՂԶ	ՆՀԿ
	ՁԵ	ՂԲ	ՂԹ	ՃԶ	ՃԺԳ	ՃԻ	ՃԻԷ	ՃԼԴ	ՃԽԱ	ՃԽԸ	ՃԾԵ	ՃԿԲ
	ՇԾԹ	ՈՇԱ	ՉԾ	ՊԾԶ	ՋԿԹ	ՌԶԹ	ՌՄԺԶ	ՌՅԾ	ՌՆՂԱ	ՌՈԹ	ՌԶՂԻ	ՌՋԾԶ
	Ա	Թ	ԺԷ	ԻԵ	ԼԳ	ԽԱ	ԽԹ	ԾԷ	ԿԵ	ՀԳ	ՁԱ	ՁԹ
Տասնանկիւնի	Ա	Ժ	ԻԷ	ԾԲ	ՁԵ	ՃԻԶ	ՃՀԵ	ՄԼԲ	ՄԼԷ	ՅՀ	ՆԾԱ	ՇԽ
	ՂԷ	ՃԵ	ՃԺԳ	ՃԻԱ	ՃԻԹ	ՃԼԷ	ՃԽԵ	ՃԾԳ	ՃԿԱ	ՃԿԹ	ՃՀԷ	ՃՁԵ
	ՈԼԷ	ՁԽԲ	ՊԾԵ	ՋՀԶ	ՌՃԵ	ՌՄԽԲ	ՌՅՁԵ	ՌՇԽ	ՌՁԱ	ՌՊՀ	ՍԽԷ	ՍՄԼԲ
	Ա	Ժ	ԺԹ	ԻԸ	ԼԵ	ԽԶ	ԾԵ	ԿԴ	ՀԳ	ՁԲ	ՂԱ	Ճ
Մետասանանկիւնի	Ա	ԺԱ	Լ	ԾԸ	ՂԵ	ՃԻԱ	ՃՂԶ	ՄԿ	ՅԼԳ	ՆԺԵ	ՇԺ	ՈԶ
	ՃԹ	ՃԺԸ	ՃԻԷ	ՃԼԶ	ՃԽԵ	ՃԾԴ	ՃԿԳ	ՃՀԲ	ՃՁԱ	ՃՂ	ՃՂԹ	ՄԸ
	ՁԺԵ	ՊԸԳ	ՋԿ	ՌՂԶ	ՌՄԽԱ	ՌՅՂԵ	ՌՇԾԸ	ՌՁԸ	ՌՋԺԱ	ՄՃԱ	ՍՅ	ՍՇԸ
	Ա	ԺԱ	ԻԱ	ԼԱ	ԽԱ	ԾԱ	ԿԱ	ՀԱ	ՁԱ	ՂԱ	ՃԱ	ՃԺԱ
Երկոտասանանկիւնի	Ա	ԺԲ	ԼԳ	ԿԴ	ՃԵ	ՃԾԶ	ՄԺԷ	ՄՁԸ	ՅԿԹ	ՆԿ	ՇԿԱ	ՈՀԲ
	ՃԻԱ	ՃԼԱ	ՃԽԱ	ՃԾԱ	ՃԿԱ	ՃՀԱ	ՃՁԱ	ՃՂԱ	ՄԱ	ՄԺԱ	ՄԻԱ	ՄԼԱ
	ՉՂԳ	ՋԻԴ	ՌԿԵ	ՌՄԺԶ	ՌՅՀԵ	ՌՇԽԸ	ՌՇԻԹ	ՌՋԻ	ՍՃԻԱ	ՍՅԼԲ	ՍՇԾԳ	ՍՁԶԴ
	Ա	ԺԲ	ԻԳ	ԼԴ	ԽԵ	ԾԶ	ԿԵ	ՀԸ	ՁԹ	Ճ	ՃԺԱ	ՃԻԲ
Երեքասանանկիւնի	Ա	ԺԳ	ԼԶ	Հ	ՃԺԵ	ՃՀԱ	ՄԸ	ՅԺԶ	ՆԵ	ՇԵ	ՌԺԶ	ՁԸ
	ՃԼԳ	ՃԽԴ	ՃԾԵ	ՃԿԶ	ՃՀԵ	ՃՁԸ	ՃՂԹ	ՄԺ	ՄԻԱ	ՄԼԲ	ՄԽԳ	ՄԾԴ
	ՊՀԱ	ՌԺԵ	ՌԺՀ	ՌՅԼԶ	ՌՇԺԳ	ՌՁԱ	ՌՋՍՃԺ	ՍՅԼԱ	ՍԼԿԳ	ՍՏԶ	ՎԻ	
	Ա	ԺԳ	ԻԵ	ԼԵ	ԽԹ	ԿԱ	ՀԳ	ՁԵ	ՂԷ	ՃԹ	ՃԻԱ	ՃԼԳ
Չորեքասանանկիւնի	Ա	ԺԴ	ԼԳ	ՀԶ	ՃԻԵ	ՃՁԶ	ՄԾԹ	ՄԽԴ	ՄԽԱ	ՇԾ	ՈՀԱ	ՊԴ
	ՃԽԵ	ՃԾԷ	ՃԿԹ	ՃՁԱ	ՃՂԳ	ՄԵ	ՄԺԷ	ՄԻԹ	ՄԽԱ	ՄԾԳ	ՄԻԵ	ՄՀԷ
	ՋԽԹ	ՌՃԶ	ՌՄՀԵ	ՌՆԾԶ	ՌՈԽԹ	ՌՊԾԴ	ՍՀԱ	ՍՅ	ՍՇԽԱ	ՍՁՂԴ	ՎԾԹ	ՎՅԼԶ
	Ա	ԺԴ	ԻԷ	ԾԳ	ԿԶ	ՀԹ	ՂԲ	ՃԵ	ՃԺԸ	ՃԼ	ՃԽԴ	
Հինգեքասանանկիւնի	Ա	ԺԵ	ԽԲ	ՁԲ	ՃԼԵ	ՄԱ	ՄՁ	ՁՀԲ	ՆՀԷ	ՇՂԵ	ՁԻԶ	ՊՀ
	ՃԾԷ	ՃԺՀ	ՃՁԳ	ՃՂԶ	ՄԹ	ՄՀԲ	ՄԼԵ	ՄԽԸ	ՄԿԱ	ՄՀԴ	ՄՁԷ	Յ
	ՌԻԷ	ՌՃՂԷ	ՌՅՁ	ՌՇՀԶ	ՌՁՁԵ	ՍԷ	ՍՄԽԲ	ՄՆՂ	ՍՁԾԱ	ՎԻԵ	ՎՅԾԲ	ՎՈԾԲ
	ԱԳ	ԵԷԹ	ԺԱ	ԺԳ	ԺԵ	ԺԷ	ԺԹ	ԻԱ	ԻԳ	ԻԵ	ԻԷ	ԼԱ
Կոճառ	ԲԳ	ՁԸԺ	ԺԲ	ԺԳ	ԺԶԺԸ	ԻԻԲ	ԻԴԻ	ՁԻԸ	ԼԼԲ	ԼԿԼԶ	ԼԸ	Խ
	ԻԽ	ԿՁ	ՃՄ	Ն	Ո	Պ	Ռ	Ս	Տ	Յ	Փ	
	Ը	ԺԶ	ԻԴ	ԼԲ	Խ	ԽԸ	ԾԶ	ԿԴ	ՀԲ	Ձ	ՁԸ	ՂԶ ՃԴ
Դարբ	Ը	ՃԶ	ՃԼԵ	ԿԴԵ	ՃԻԸ	ՄԾԶ	ՇԺԲԵ	ՌԻԴ	:	ՍԽԸ	Տ	
	ՓՀ	ՂԲԵ	ԺԶ	ՈՅ	ՁԴԵ	ԼԲ	ՌԶ	ԿԸ	ԿԵՌ	ՇԼԶ	ՃԼԱ	ՌՀԲԵ
	ԹԵ	ԻԷ	ՁԱ	ՄԽԳ	Ձ	ԻԹ	Ս	ՃՁ	ԷՅ	ՁԿԱ	ՃԻ	ՅՁԳԵ
Երեքանկիւնի	ԱՆԿ	ԻԻՆ	ԱԽՈՐ	ԹՈԻ	ՈՅԴ	ՎԱԽ	ՃԱՆ	ԵԻ	ԹԿԵ	ԸԵԱ	ԿԵԵՀ	ԱՄԱՐ
	ԻՍԿԱ	ՅԼԲ	ԱԽԵԼ	ՈՐԴՔ	ԳԸԵ	ՅԱՆ	ՅԱՂ	ԱԳԱ	ԿԸԹ	ՌԻԹԵ	ՄԱՆ	ԿԱՆՅ
	ԵԻՎԱՐ	ԺՄԱՆ	ՅԱՐ	ԵՍՏ	ՈՐՊ	ԵՍՁԻ	ԱՃԵ	ՅՈԻ	ՍՅԵՆ	ՅՈՐԺ	ԱՍԵ	ԻԿԱՄ
	ԵՍՅԻՆ	ԸՍՏ	ԱՐ	ՈԻ	ԵՍՏ	ԻՆԽ	ՆԴԸ	ՈՅՓՈՔ	ՔԻ	ԱՅ	ՄԵՐ	ՈՅԱ
												ՄԷՆ

Երանգիւնի	Ա	Զ	ԺԱ	ԺԶ	ԻԱ	ԻԶ	ԼԱ	ԼԶ	ԽԱ	ԽԶ	ՅԱ	ՅԶ
	Ա	Է	ԺԸ	ԼԴ	ԾԵ	ՋԱ	ՃԺԲ	ՃԽԸ	ՃՅԹ	ՄԼԵ	ՄՋԶ	ՅԽԲ
	ԿԱ	ԿԶ	ՀԱ	ՀԶ	ՋԱ	ՋԶ	ՂԱ	ՂԶ	ՃԱ	ՃԶ	ՃԺԱ	ՃԺԶ
	ՆԳ	ՆԿԹ	ՇԽ	ՌԺԶ	ՌՂԷ	ՋԶԳ	ՊԶԴ	ՋԶ	ՌԶԱ	ՌՃԶԷ	ՌՄՋԸ	ՌՆԴ
Ուրանգիւնի	Ա	Է	ԺԳ	ԺԹ	ԻԵ	ԼԱ	ԼԷ	ԽԳ	ԽԹ	ԾԵ	ԿԱ	ԿԷ
	Ա	Ը	ԻԱ	ԽԱ	ԿԵ	ՂԶ	ՃԼԶ	ՃՀԶ	ՄԻԵ	ՄՋ	ՅԽԱ	ՆԸ
	ՀԳ	ՀԹ	ՋԵ	ՂԱ	ՂԷ	ՃԳ	ՃԹ	ՃԺԵ	ՃԻԱ	ՃԻԷ	ՃԼԳ	ՃԼԹ
	ՆՋԱ	ՇԿ	ՌԽԵ	ՋԼԶ	ՊԼԳ	ՋԼԶ	ՌԽԵ	ՌՃԿ	ՌՄՋԱ	ՌՆԸ	ՌՇԽԱ	ՌՌՋՌՌՋ
Իննանգիւնի	Ա	Ը	ԺԵ	ԻԲ	ԻԹ	ԼԶ	ԽԳ	Ծ	ԾԷ	ԿԴ	ՀԱ	ՀԸ
	Ա	Թ	ԻԳ	ԽԶ	ՀԵ	ՃԺԱ	ՃԾԳ	ՄԳ	ՄԿԱ	ՅԻԵ	ՅՂԶ	ՆՀԴ

Ձեռ. ՄՄ 8973, ք. 40բ

ՋԵ	ՂԲ	ՂԹ	ՃԶ	ՃԺԳ	ՃԻ	ՃԻԷ	ՃԼԳ	ՃԽԱ	ՃԽԸ	ՃԾԵ	ՃԿԲ	գիւնի
ՇԾԹ	ՌԾԱ	ՋԾ	ՊԾԶ	ՋԿԹ	ՌԶԹ	ՌՄԺԶ	ՌՅԾ	ՌՆՂԱ	ՌՌԼԹ	ՌԶՂԴ	ՌՋԾԶ	
Ա	Թ	ԻԵ	ԼԳ	ԽԱ	ԽԹ	ԾԷ	ԿԵ	ՀԳ	ՋԱ	ՋԹ	ՋԹ	ժ. անգիւնի
Ա	Ժ	ԻԷ	ԾԲ	ՋԵ	ՃԻԶ	ՃՀԵ	ՄԼԲ	ՄՂԷ	ՅՀ	ՆԾԱ	ՇԽ	
ՂԷ	ՃԵ	ՃԺԳ	ՃԻԱ	ՃԻԹ	ԼԷ	ՃԽԵ	ՃԾԳ	ՃԿԱ	ՃԿԹ	ՃՀԷ	ՃՋԵ	
ՌԼԷ	ՋԽԲ	ՊԾԵ	ՋՀԶ	ՌՃԵ	ՌՄԽԲ	ՌՅՋԷ	ՌՇԽ	ՌՋԱ	ՌՊՀ	ՄԽԷ	ՄՄԼԲ	
Ա	Ժ	ԺԹ	ԻԸ	ԼԷ	ԽԶ	ԾԵ	ԿԳ	ՀԳ	ՋԲ	ՂԱ	Ճ	Ա.ժ. անգիւնի
Ա	ժԱ	Լ	ԾԸ	ՂԵ	ՃԽԱ	ՃՂԶ	ՄԿ	ՅԼԳ	ՆԺԵ	ՇԶ	ՌԶ	
ՃԹ	ՃԺԸ	ՃԻԷ	ՃԼԶ	ՃԽԵ	ՃԾԳ	ՃԿԳ	ՃՀԲ	ՃՋԱ	ՃՂ	ՃՂԹ	ՄԸ	
ՋԺԵ	ՊԼԳ	ՋԿ	ՌՂԶ	ՄԽԱ	ՌՅՂԵ	ՌՇԾԵ	ՌՋՀ	ՌՋԺԱ	ՍՃԱ	ՍՅ	ՍՇԸ	
Ա	ժԱ	ԻԱ	ԼԱ	ԽԱ	ԾԱ	ԿԱ	ՀԱ	ՋԱ	ՂԱ	ՃԱ	ՃԺԱ	Բ.ժ. անգիւնի
Ա	ժԲ	ԼԳ	ԿԴ	ՃԵ	ՃԾԶ	ՄԺԷ	ՄՋԸ	ՅԿԹ	ՆԿ	ՇԿԱ	ՌՀԲ	
ՃԻԱ	ՃԼԱ	ՃԽԱ	ՃԾԱ	ՃԿԱ	ՃՀԱ	ՃՋԱ	ՃՂԱ	ՄԱ	ՄԺԱ	ՄԻԱ	ՄԼԱ	
ՋՂԳ	ՋԻԳ	ՌԿԵ	ՌՄԺԶ	ՌՅՀԷ	ՌՇԽԸ	ՌՋԻԹ	ՌՋԻ	ՍՃԻԱ	ՍՅԼԲ	ՍՇԾԳ	ՍՋՋԳ	
Ա	ժԲ	ԻԳ	ԼԳ	ԽԵ	ԾԶ	ԿԷ	ՀԸ	ՋԹ	Ճ	ՌԺԶ	ՃԻԲ	Գ.ժ. անգիւնի
Ա	ժԳ	ԼԶ	Հ	ՃԺԵ	ՃՀԱ	ՄԼԸ	ՅԺԶ	ՆԵ	ՇԵ	ՌԺԶ	ՋԼԸ	
ՃԼԺ	ՃԽԴ	ՃԾԵ	ՃԿԶ	ՃՀԷ	ՃՋԸ	ՃՂԹ	ՄԺ	ՄԻԱ	ՄԼԲ	ՄԽԳ	ՄԾԳ	
ՊՀԱ	ՌԺԵ	ՌՃՀ	ՌՅՋԶ	ՌՇԺԳ	ՌՋԱ	ՌՋ	ՍՃԺ	ՍՅԼԱ	ՍՇԿԳ	ՍՊԶ	ՎԿ	
Ա	ժԳ	ԻԵ	ԼԷ	ԽԹ	ԿԱ	ՀԳ	ՋԵ	ՂԷ	ՃԹ	ՃԻԱ	ՃԼԳ	Դ.ժ. անգիւնի
Ա	ժԳ	ԼԹ	ՀԶ	ՃԻԵ	ՃՋԼ	ՄԾԹ	ՅՇԳ	ՆԽԱ	ՇԾ	ՋՀԱ	ՊԴ	
ՃԽԵ	ՃԾԷ	ՃԿԹ	ՃՋԱ	ՃՂԳ	ՄԵ	ՄԺԷ	ՄԻԹ	ՄԽԱ	ՄԾԳ	ՄԿԵ	ՄՀԷ	
ՋԽԹ	ՌՃԶ	ՌՄՀԵ	ՌՆԾԶ	ՌՌԽԹ	ՌՊԾԳ	ՍՀԱ	ՍՅ	ՍՇԽԱ	ՍՋՂԴ	ՎԾԹ	ՎՅԼԶ	
Ա	ժԳ	ԻԷ	Խ	ԾԳ	ԿԶ	ՀԹ	ՂԲ	ՃԵ	ՃԺԸ	ՃԼԱ	ՃԽԳ	Է.ժ. անգիւնի
Ա	ժԵ	ԽԲ	ՋԲ	ՃԼԵ	ՄԱ	ՄՋ	ՅՀԲ	ՆՀԷ	ՇՂԵ	ՋԻԶ	ՊՀ	
ՃԾԷ	ՃՀ	ՃՋԳ	ՃՂԶ	ՄԹ	ՄԻԲ	ՄԼԵ	ՄԽԸ	ՄԿԱ	ՄՀԴ	ՄՋԷ	Յ	
ՌԻԷ	ՌՃՂԷ	ՌՅՋ	ՌՇՀԶ	ՌՋՋԵ	ՍԷ	ՍՄԽԲ	ՍՆՂ	ՍՋԾԱ	ՎԻԵ	ՎՅԺԲ	ՎՌԺԲ	

Ձեռ. ՄՄ 8973, ք. 41ա

եռանգիւնի՝	Ա	Գ	Ջ	Ժ	ԺԷ	ԻԱ	ԻԸ	ԼՋ	ԽԵ	ՄԵ	ԿՋ	ՀԸ
	ՂԱ	ՃԵ	ՃԻ	ՃԼՋ	ՃԾԳ	ՃՀԱ	ՃՂ	ՄԺ	ՄԼԱ	ՄԾԳ	ՄՀՋ	Յ
Քառանգիւնի՝	Ա	Գ	Թ	ԺՋ	ԻԵ	ԼՋ	ԽԹ	ԿԳ	ՋԱ	Ճ	ՃԻԱ	Յ
	ՃԿԹ	ՃՂՋ	ՄԻԵ	ՄԾՋ	ՄՋԹ	ՅԻԳ	ՅԿԱ	Ն	ՆԽԱ	ՆՋԳ	ՇԻԹ	ՇՀՋ
Ե.անգիւնի	Ա	Ե	ԺԲ	ԻԲ	ԼԵ	ՄԱ	Հ	ՂԲ	ՃԺԷ	ՃԽԵ	ՃՀՋ	ՄԺ
	ՄԽԷ	ՄՋԷ	ՅԼ	ՅՀՋ	ՆԻԵ	ՆՀԻ	ՇԼԲ	ՇՂ	ՈՄԱ	ՋԺԵ	ՋՋԲ	ՊԾԲ
Ջ.անգիւնի	Ա	Ջ	ԺԵ	ԻԸ	ԽԵ	ԿՋ	ՂԱ	ՃԻ	ՃԾԳ	ՃՂ	ՄԼԱ	ՄՀՋ
	ՅԻԵ	ՅՀԸ	ՆԼԵ	ՆՂՋ	ՇԿԱ	ՈԼ	ՋԳ	ՋՋ	ՊԿԱ	ՃԽՋ	ՈԼԷ	ՌՃԻԸ
Է.անգիւնի	Ա	Է	ԴԸ	ԼԳ	ՄԵ	ՋԱ	ՃԺԲ	ՃԽԸ	ՃՋԹ	ՄԼԷ	ՄՋՋ	ՅԽԲ
	ՆԳ	ՆԿԹ	ՇԽ	ՈԺՋ	ՈՂԷ	ՋՋԳ	ՊՀԳ	ՋՀ	ՌՀԱ	ՌՃՀԷ	ՌՄՋԸ	ՌՆԳ
Ը.անգիւնի	Ա	Ը	ԻԱ	Խ	ԿԵ	ՂՋ	ՃԼԳ	ՃՀՋ	ՄԻԵ	ՄՋ	ՅԽԱ	ՆԸ
	ՆՋԱ	ՇԿ	ՈԽԵ	ՋԼՋ	ՊԼԳ	ՋԼՋ	ՌԽԵ	ՌՃԿ	ՌՄՋԱ	ՌՆԸ	ՌՇԽԱ	ՌՈՋ
Թ.անգիւնի	Ա	Թ	ԻԳ	ԽՋ	ՀԵ	ՃԺԱ	ՃԾԳ	ՄԴ	ՄԿԱ	ՅԻԵ	ՅՂՋ	ՆՀԳ
	ՇԾԹ	ՈՄԱ	ՋԾ	ՊԾՋ	ՋԿԹ	ՌՋԹ	ՌՄԺՋ	ՌՅԾ	ՌՆՂԱ	ՌՈԼԹ	ՌՋՂԳ	ՌՋԾՋ
Ժ.անգիւնի	Ա	Ժ	ԻԷ	ՄԲ	ՋԵ	ՃԻՋ	ՃՀԵ	ՄԼԲ	ՄՂԷ	ՅՀ	ՆՄԱ	ՇԽ
	ՈԼԷ	ՋԽԲ	ՊՄԵ	ՋՀՋ	ՌՃԵ	ՌՄԽԲ	ՌՅՋԷ	ՌՇԽ	ՌՋԱ	ՌՊՀ	ՄԽԷ	ՄՄԼԲ
Ա.ժ.անգիւնի	Ա	ԺԱ	Լ	ՄԸ	ՂԵ	ՃԽԱ	ՃՂՋ	ՄԿ	ՅԼԳ	ՆԺԵ	ՇՋ	ՈՋ
	ՋԺԵ	ՊԼԳ	ՋԿ	ՌՂՋ	ՌՄԽԱ	ՌՅՂԵ	ՌՇՄԸ	ՌՋԼ	ՌՋԺԱ	ՄՃԱ	ՄՅ	ՄՇԸ
Բ.ժ.անգիւնի	Ա	ԺԲ	ԼԳ	ԿԳ	ՃԵ	ՃԾՋ	ՄԺԷ	ՄՋԸ	ՅԿԹ	ՆԿ	ՇԿԱ	ՈՀԲ
	ՋՂԳ	ՋԻԳ	ՌԿԵ	ՇՄԺՋ	ՌՅՀԷ	ՌՇԽԸ	ՌՋԻԹ	ՌՋԻ	ՄՃԻԱ	ՄՅԼԲ	ՄՇԾԳ	ՄՋՋԳ
Գ.ժ.անգիւնի	Ա	ԺԳ	ԼՋ	Հ	ՃԺԵ	ՃՀԱ	ՄԼԸ	ՄԼԸ	ՅԺՋ	ՆԵ	ՇԵ	ՈԺՋ
	ՊՀԱ	ՌժԵ	ՌՃՀ	ՌՅԼՋ	ՌՇԺԳ	ՌՋԱ	ՌՋ	ՄՃԺ	ՄՅԼԱ	ՄՇԿԳ	ՄՊՂ	ՎԿ
Դ.ժ.անգիւնի	Ա	ԺԴ	ԼԹ	ՀՋ	ՃԻԵ	ՃՋՋ	ՄԾԹ	ՅԽԳ	ՆԽԱ	ՇԾ	ՋՀԱ	ՊԴ
	ՋԽԹ	ՌՃՋ	ՌՄՀԵ	ՌՆՄՋ	ՌՈԽԹ	ՌԱՄԴ	ՄՀԱ	ՄՅ	ՄՇԽԱ	ՄՋՂԳ	ՎԾԹ	ՎՅԼՋ
Ե.ժ.անգիւնի՝	Ա	ԺԵ	ԽԲ	ՋԲ	ՃԼԵ	ՄԱ	ՄՋ	ՅՀԲ	ՆՀԷ	ՇՂԵ	ՋԻՋ	ՊՀ
	ՌԻԷ	ՌՃՂԷ	ՌՅՋ	ՌՇՀՋ	ՌՋՋԵ	ՄԷ	ՄՄԽԲ	ՄՆՋ	ՄՋՄԱ	ՎԻԵ	ՎՅԺԲ	ՎՈԺԲ

Ձեռ. ՄՄ 8973, ք. 41բ

Ձեռագիր ՄՄ 8973-ի 42ա-բ թերթերում պահպանված բնագիրը. «Ախոթքիկ թուական արհեստս վասն այն գրեցան յաղագս կրթութեան մտաց մանկանց եկեղեցոյ և վարժելոյ զարուեստս տարորոշ թուականին ճարտարութեան մտաց և բանականութեան:

Առաջին բազմապատիկն զթիւն ասէ, միահամուռն ոչ ասէ:

Երկրորդ բազմապատիկն զթիւն ոչ ասէ, այլ զմիահամուռն ասէ: Այսպէս, երկրցս Գ և չորիցս, որ է ԻԴ:

Երիցս Դ և հնգիցս, որ է Կ: Չորիցս Ե ի վեցիցս, որ է ՃԻ: Հնգիցս Ջ և եւթնիցս ՄԺ: Վեցիցս է և ութիցս՝ ՅԼՋ, եւթնիցս Ը և իննիցս ՇԴ: Ութիցս Թ և տասնիցս՝ ՋԻ:

Անգիւնաւոր թուոցդ վախշանն է-երեակն է համար, իսկ այլքն աւելորդ գրեցան վասն կրթութեան մանկանց և վարժելոյ յարուեստս, որպեսզի աճեցուցեն յորժամ և կամեսցին ըստ արուեստիս խնդրոյ: Եւ վասն անգիւնաւոր

րացդ է այս ինչ: Որպէս թիւքն, զի ի միում ժամանակի ցուցանէ բոլոր և քառանգիւնի որպէս բազմապատկելով զՆ ասես Ի և Ն բոլոր, զի ի հնգէ սկսեալ աւարտեցաւ ի Ն: Դարձեալ նոյն թիւս է և քառանգիւնի:

Բայց պարտ է գիտել, զի արհեստս քառանգիւնի թուոցդ է այսպէս, զի սկիզբն ամենայն անգիւնաւորաց թուոցդ միակն է: Եւ քառանգիւնի թիւ այսպէս արասցես. նախ դնելով ըզմիակն թողեալ ի մէջն երկու, կալ ցիս զչորքն: Դարձեալ թողլով զչորսն, առնելով Թ և թողլով Զ, առցես ժԶ: Եւ թողլով Ը, առցես ԻՆ և այսպէս Ի և Ն, քառանգիւնի է և բոլոր: Այսպէս ԼԶ բոլոր է և քառանգիւնի, զի ի վեցէ սկսեալ ի Զ գլխեցաւ: Եւ է քառանգիւնի, յորժամ ի ԻՆ էն ժ թողուս և առնուս զԼԶ ն, զի ըստ առաջին թողուածոյն, որ ի մէկէն մինչև ի Դ թողեր, քանի կամենաս յերկարել զքառանգիւնի թիւն, Բ, Բ յաւելցու ի թողուլն, որ թողուի ի մէկէն մինչ ի չորսն երկու, ի չորիցն մինչև ի յինն Դ յինուցն ց ժԶ, զի ի ժԶ էն ց ԻՆ Ը և ի ԻՆ էն ց ԼԶ ժ»:

ДЖУЛЬЕТТА ЭЙНАТЯН СОЧИНЕНИЕ ОВАННЕСА САРКАВАГА “О ТРЕУГОЛЬНЫХ ЧИСЛАХ”

Ключевые слова: математика, треугольные числа, квадратные числа, пятиугольные числа, Пифагор, Древняя Греция, высшие школы монастырского типа.

“Фигурные или полигональные числа” – общее название чисел, связанных с той или иной геометрической фигурой. Это историческое понятие восходит к древнегреческому мыслителю Пифагору (VI в. до.н.э.).

Различают несколько видов фигурных чисел: треугольные, квадратные, пятиугольные, ... пятиугольные и т.д. Каждое из этих чисел сформировано вокруг центральной точки, окруженной слоями многоугольников с постоянным числом сторон.

Фигурные числа, по мнению пифагорейцев, играют важную роль в структуре мироздания. Их изучением занимались многие математики как античности, так и Нового времени.

В армянских рукописях Матенадарана сохранились таблицы “треугольных чисел” и краткое пояснение к ним, автором которых является выдающийся мыслитель XI века Ованнес Саркаваг. Он известен как философ, математик, космограф и календаровед.

В настоящей статье приводятся таблицы из рукописей □1770 (1589 г.), 2595 (1786 г.), 4150 (XIII в.), 8973 (1445 г.). Критический текст пояснения к этим таблицам составлен на основе сопоставления трех текстов.

1. Книга *Труды Ованнеса Саркавага*, составил А. Абрамян, Ереван, 1956.
2. Таблицы и текст по рукописи 2595.
3. Таблицы и текст по рукописи 1770.

JULIETTA EINATYAN
HOVHANNES SARKAVAG'S WORK ON TRIANGULAR NUMBERS

Keywords: mathematics, triangular numbers, square numbers, pentadecagonal numbers, Pythagoras, Ancient Greece, high schools of monastic type.

“Figural or polygonal numbers” is the common name for numbers related to a certain geometrical figure. This historical idea dates back to the ancient Greek scholar Pythagoras (6th century BC).

There are many kinds of figural numbers: triangular, square, pentagonal, ... pentadecagonal and so on. Each of these numbers is formed around a central point surrounded by layers of polygons with a constant number of sides.

According to Pythagoreans, figural numbers play an important role in the structure of the Universe. Nearly all mathematicians of Classical Antiquity and modern times studied them.

Tables of ‘triangular numbers’ with an accompanying brief text by Hovhannes Sarkavag, a famous 11th century scholar, philosopher, mathematician, cosmographer and calendar expert, can be found in Matenadaran’s Armenian manuscripts.

The present article contains tables from the following manuscripts: M1770 (1589), M2592 (1786), M4150 (13th c.), and M8973 (1445). The critical text of these tables is based on a collation of the following three texts:

1. *Works by Hovhannes Sarkavag*, compiled by A. Abrahamian, Erevan, 1956.
2. Tables and texts according to Ms M2595.
3. Tables and texts according to Ms M1770.

ԳՈՀԱՐ ՄՈՒԲԱԴՅԱՆ

ԲԱՐՈՅԱԽՕՍ (PHYSIOLOGUS). ՀԱՅԵՐԵՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹

Քանալի բառեր՝ առակ, կենդանիներ, բարք, մեկնաբանություն, թարգմանություն, խմբագրություն, հունարեն, վրացերեն, Բեստիարիում:

1. PHYSIOLOGUS-ը վաղ քրիստոնեական երկ է՝ գրված հունարեն մոտավորապես II դարում, հավանաբար Ալեքսանդրիայում²: Միջնադարում այն զանազան խմբագրություններով տարածվել է Մերձավոր Արևելքում և թարգմանվել բազմաթիվ լեզուների՝ եթովպերեն³, հայերեն, վրացերեն, ասորերեն, ղպտերեն, արաբերեն, ռումիներեն, հին սլավոներեն⁴ և լատիներեն (*Bestiarium*-ներ): Լատիներենից են սերում թարգմանությունները արևմտաեվրոպական լեզուների՝ անգլո-սաքսոներեն, հին-բարձր-գերմաներեն, ֆլամանդերեն, ֆրանսերեն, վալդենսերեն, պրովանսալերեն, իսպաներեն և իտալերեն: Այն բաղկացած է համառոտ պատմություններից՝ թվով 48, իրական կամ առասպելական կենդանիների, բույսերի և քարերի բարքերի (բառացի «բնություն»)՝ *φύσις* մասին՝ նրանց առանձինհատկությունների կրոնական մեկնաբանությամբ: Դրանք հանդես են գալիս որպես Քրիստոսի, սատանայի, եկեղեցու կամ մարդկանց այլաբանություն:

Զուգահեռ նյութեր կան մի շարք հեղինակների գրվածքներում՝ Հերմես Եռամեծ (*Cyranides*), Տատրիանոս, Տիմոթեոս Գազացի (Կենդանիների մասին), Օպպիանոս (*Cynegetica*), Հերոդոտոս, Արիստոտել (*Historia Animalium*), Պլուտարքոս և Էլիանոս (*De natura animalium*)⁵:

¹ Հոդվածը *Բարոյախօս*-ի մեր հրատարակության անգլերեն առաջաբանի համառոտված տարբերակն է, տե՛ս **G. Muradyan**, *Physiologus, the Greek and Armenian Versions with a Study of Translation Technique* (Hebrew University Armenian Studies 6, series editor **M.E. Stone**), Leuven – Paris – Dudley, MA, 2005: Գիրքը գրախոսել են Սերջիո Լա Պորտան (*ԲՄ* 17, 2006, էջ 339-342), Օլգա Վարդապարյանը (*ՀԱ* 2006, էջ 481-486), Ալեսանդրո Օրենգոն (*ՊԲՀ*, 2007, № 1, էջ 307-312), Կատալինա Վելկուլեսկուն (*Cătălina Velculescu, Revue des études sud-européennes*, 2007, pp. 583-585) և Հուբերտ Կաուֆմոլլը (*IZBG, International Review of Biblical Studies* 52, 2006, և *Oriens Christianus* 92, 2008, 280-281):

² **Pauly-Wissowa**, *RE*, Bd XXI, 1941, s.v. “Physiologus” (**B.E. Perry**), (Col. 1074-1129), 1104-1005.

³ Եթովպերենը համարվում է վաղ (V դ. կեսերի) և սկզբնագրին մոտ թարգմանություն, տե՛ս **F. Lauchert**, *Geschichte des Physiologus*, Strassburg, 1889, p. 79:

⁴ Հին սլավոներենը տե՛ս *Физиолог*, издание подготовила **Е.И. Ванеева**, СПб, 1996: նշվում է, որ այդ թարգմանությունը սերում է հունարեն առաջին խմբագրությունից, էջ 6:

⁵ **F. McCulloch**, *Medieval Latin and French Bestiaries*, Chapel Hill: The University of North Carolina Press, 1962 pp. 18-19.

Ամենավաղ ձեռագրերում երկն անանուն է, իսկ հետագայում վերագրվել է գանազան քրիստոնյա հեղինակություններին՝ Եպիփան Կիպրացուն (հայերեն ձեռագրերից՝ ՄՄ2174, ՄՄ5631, ՄՄ9303, ՄՄ5809, ՄՄ4287, Վնտկ. 1213, Վնտկ. 1542, Վնտկ. 902, Վիեն. 1130, հունարեն *E*, *E'*, *I*, *I'*, *S*, *W*, *A* ձեռագրերը՝ ըստ Սթորդոնի հրատարակության, տե՛ս ծան. 6), Բարսեղ Կեսարացուն (*Syrus Leidensis*, որոշ հունարեն ձեռագրեր, վրացերեն տարբերակը), Հիերոնիմոսին, Պետրոս Ալեքսանդրացուն (հունարեն Ս ձեռագիրը⁶), Հովհան Ոսկեբերանին, Աթանասին, Ամբրոսիոսին, Փիլոն Կարպացուն (Պիտրայի հրատարակած հայերեն տարբերակը⁷) և ուրիշների⁸ :

Հունարեն *Physiologus*-ը պահպանվել է 77 ձեռագրով: Քննական հրատարակությունն իրականացրած Սթորդոնեն առանձնացրել է երեք հիմնական խմբագրություն: Առաջինը գրվել է Ավետարաններից քիչ անց, երկրորդը՝ «բյուզանդական Ֆիզիոլոգոսը» թվագրվում է V-VI դդ., երրորդը, որ սխալմամբ վերագրվել է Բարսեղ Մեծին՝ X-XI դդ.: Գոյություն ունեն նաև առաջին և երրորդ խմբագրությունների շափածո տարբերակներ՝ գրված բյուզանդական շրջանում խոսակցական հունարենով: Ըստ Սթորդոնի՝ խմբագրությունները տարբեր հեղինակների գրվածքներ են, որոնք միմյանցից տարբերվում են ոճով և մեկնաբանության եղանակներով, այս կամ այն կենդանու ընդգրկմամբ, այս կամ այն կենդանու տարբեր սովորությունների ներկայացումով: Նա դրանք ավելի շուտ երեք տարբեր գրվածք է համարում՝ միևնույն վերնագրով և նույն ժանրին պատկանող, քան նույնի երեք խմբագրություն:

⁶ Կարմեկի օգտագործած այս տառը խորհրդանշում է Պետրոսի անունը (տե՛ս ծան. 11): Վերնագիրն է Πέτρον ἐπισκόπου Ἀλεξανδρείας φυσιολόγος, տե՛ս նաև *Physiologi Graeci singulae variarum aetatum recensiones*, in lucem protulit **F. Sbordone**, Roma, 1936, p. xliii:

⁷ **J. Pitra**, *Spicilegium Solemnense*, vol. 3, Paris, 1855, pp. 374-390.

⁸ **Perry**, “Physiologus,” col. 1077; **McCulloch**, op. cit., p. 19: Միֆայել Ասորու *Ժամանակագրության* «Փիլոտոն երևեցաւ բարոյախաւսան անասնոց և թռչնոց» (Երուսաղեմ, 1870, էջ 53, և «Փիլոտոնոս» տարբերակով երկրորդ խմբագրության մէջ, Երուսաղեմ, 1871, էջ 34) արտահայտությունն՝ ըստ Անասյանի, աղավաղման հետևանք է (**Հ. Անասյան**, *Հայկական մատենագիտություն*, հ. 2, Երևան, 1976, էջ 1330): Միայն կրկնվել է Վարդան Արևելցու *Հաւաքումն պատմութեան* (Վենետիկ, 1862, էջ 20՝ «Փիլոտոս» տարբերակով) և Մխիթար Այրիվանեցու *Պատմութիւն հայոց* (Մոսկովա, 1861, էջ 35՝ «Փիլարոնոս» տարբերակով) մէջ: Իսկ Մառի կարծիքով (**Н. Март**, *Сборники притч Вардана. Материалы для истории средневековой армянской литературы*, часть I, СПб, 1899, с. 409) այդ պատմիչների հետ մի գրչի ծանոթությամբ է բացատրվում այն փաստը, որ «Փիլոտոն» ձևով անունը թափանցել է նրա ընդօրինակած ձեռագրի (Հալեպում Ա. Էսմերյանի ձ., էջ 399. «Փիլոտոն է անուն Բարուխիոսի», տե՛ս **Հ. Անասյան**, *Հայկական մատենագիտություն*, հ. 1, Երևան, 1959, էջ 1073-74) և «Փիլոտոն» ձևով՝ իր օգտագործած P ձեռագրի և «Փիլատոն» ձևով՝ Պիտրայի հրատարակած տարբերակի մէջ, **Н. Март**, *ук. соч.*, часть III, СПб, 1894, с. 132, տողատակի տարբերակումներ:

Առաջին խմբագրությունը պահպանվել է չորս ձեռագրախմբի կամ ենթախմբագրության տեսքով: Մոսկովյան Ս ձեռագրի (Սինոդի գրադարան ձեռ. 432⁹, XI դ., թթ. 192-203) բնագիրը մոտ է առաջին խմբագրության չորրորդ խմբին, սակայն չի նույնանում նրա հետ՝ փոխված է գլուխների հերթականությունը, մեկնություններն ավելի ծավալուն են, ունի այլ ձեռագրախմբերի հետ ընդհանուր ընթերցումներ¹⁰: Այդ ձեռագրի բնագիրն առանձին հրատարակել է Կարնեկեր, ով նաև նկատել է, որ հայերեն թարգմանությունն արվել է մի տարբերակից, որը թեև նույնական չէ, սակայն շատ մոտ է նրան¹¹: Այդ բնագրին մոտ է նաև լատիներեն Y խմբագրությունը¹²:

Հունարեն Ս ձեռագիրը 35 գլուխ է պարունակում, սակայն նրանում բացատ կա. գլուխ 24-ի «Բորենու մասին») մի փոքր սկզբնական հատվածին հետևում է «Պերիդեքսիոն ծառի մասին» գլխի եզրափակիչ հատվածը, ուստի բացակայում են նաև նրանց միջև ընկած գլուխները՝ «Շնջրի մասին» և «Ինքնիմոնի մասին»: Հայերեն թարգմանության 23 («Մրջնառյուծի մասին»), 24 («Աքիսի մասին») և 25 («Միեղջյուրի մասին») գլուխները Ս ձեռագրում տեղափոխված են բնագրի վերջ: Ըստ Մառի և Սերոբոյանի՝ հայերեն գլուխների հերթականությունը նախնական է, քանի որ այն հաստատվում է վրացերեն թարգմանությամբ (տե՛ս ստորև)¹³ և հունարեն հնագույն խմբագրությամբ¹⁴, իսկ Ս ձեռագրինը՝ փոփոխության արդյունք: Հունարեն Ս ձեռագրում կա երեք լրացուցիչ գլուխ, որ բացակա են հայերեն և վրացերեն թարգմանություններից. 30-32 (Կարնեկի համարակալմամբ) «Գորտի մասին», «Սալամանդրի մասին», «Ադամանդ քարի մասին», որոնք կամ ձեռագրի մեջ են թափանցել հունարեն մյուս խմբագրություններից¹⁵, կամ հեռացվել են հայ թարգմանչի ձեռքով¹⁶:

⁹ Բարոյախօսի հունարեն խմբագրություններն ուսումնասիրող Կարոլին Մասեն պարզել է, որ Կարնեկեր սխալ համար է նշել և որ իրական համարն է 467 (ըստ Սավայի ցուցակի՝ **Архимандрит Савва**, *Указатель для обозрения Московской Патриаршей Ризницы и библиотеки*, Москва, 1858², с. 76, կամ 318՝ ըստ ավելի հին Վլադիմիրի ձեռագրացուցակի՝ **Архимандрит Владимир**, *Систематическое описание рукописей Московской Синодальной библиотеки. I: Рукописи греческие*, Москва, 1894, сс. 444-449), **С. Массé**, "The Manuscript II of the Greek Physiologus," *Scriptorium* (forthcoming): Ի վերջո, ըստ Մասեի՝ ձեռագիրն է MS Moskva, GIM, Sin. gr. 467 (Vladimir 318):

¹⁰ *Sbordone*, p. xliii:

¹¹ **A. Karnejev**, "Der Physiologus der Moskauer Synodalbibliothek," *Byzantinische Zeitschrift*, 3, 1894, pp. 26-63; հմմտ. նաև *Sbordone*, pp. lxiii-lxiv:

¹² *Physiologus latinus, Versio Y*, edited by **Fr. J. Carmody**, University of California Press, Berkeley and Los Angeles, 1941.

¹³ **Н. Марр**, *Физиолог. Армяно-грузинский извод* (Тексты и разыскания по армяно-грузинской филологии IV), 1904, с. 104-105.

¹⁴ *Sbordone*, p. lxv.

¹⁵ **Н. Марр**, *Физиолог. Армяно-грузинский извод*, с. xxviii.

¹⁶ *Sbordone*, p. lxvi.

Հայերեն երկի վերնագիրն է «Բարոյախօս»: Հունարեն ΦΥΣΙΟΛΟΓΟΣ բառի տառացի համարժեքը կլիներ «բնախօս»¹⁷: Սակայն այդ բառը նշանակում է ոչ միայն «բնության երևույթներ ուսումնասիրող», այլև մեկը, «ով տալիս է բնական աշխարհի անդրանցիկ նշանակութայն մետաֆիզիկական, բարոյական և ի վերջո՝ միատիկ մեկնաբանությունը»¹⁸: Ուստի հայերեն համարժեքը շեշտը դնում է նրա բարոյական կողմի վրա:

«Բարոյախօս»-ի մի տարբերակ առաջին անգամ հրատարակել է Պիտրան¹⁹: Դրա՝ Կայեի ֆրանսերեն թարգմանությունը²⁰ թույլ է տվել Կարնեկին, Լաուխերտին և Սթորդոններին պատկերացում կազմել հայերեն բնագրի մասին: Պիտրայի հրատարակության հիմքում երեք ձեռագիր կա՝ երկուսը Վենետիկից²¹, մեկը՝ Փարիզից (Փրզ. 126, ԺԴ դ., թթ. 33-41բ): Նրա հրատարակած բնագիրը որոշ տարբերություններ ունի մեր գրքում հրատարակված վաղագույն խմբագրությունից՝ բուն թարգմանությունից, մասնավորապես, նրանում չկա առաջին՝ մողեսին նվիրված գլուխը:

Հունարեն Π ձեռագրի մեր համեմատությունը հայերեն վերոհիշյալ ամենավաղ խմբագրության հետ, որ պահպանվել է ՄՄ2101, եղմ.2531 և մի շարք այլ ձեռագրերում, բացահայտել է շատ ավելի մեծ համապատասխանություն, քան երբ համեմատության եզրը Պիտրայի հրատարակած բնագիրն էր:

Հայերեն «Բարոյախօս»-ը պահպանվել է բազմաթիվ ձեռագրերով: Հայերեն ձեռագրերում առակների բարդ պատկերն ուսումնասիրել է Մառը: Վարդանի առակներին նվիրված եռահատորյակում նա լույս է սփռել թարգմանական և ինքնուրույն առակների հարաբերությունների վրա: Նա խմբավորել է դրանք հետյալ կերպ՝ եզովպոսի առակներ, որոնց հիմնական կորիզը կրում է «Առակք Ողոմպիանայ» խորագիրը²², Physiologus-ի թարգմանություն «Բարոյախօս»-ն իր հետագա խմբագրություններով հանդերձ, Վարդան Այգեկցու առակները (13-րդ դ.)²³ և հետագայի ծավալուն նյութ մի շարք ժողովածու-

¹⁷ Հմմտ., օրինակ, Փիլոնի թարգմանության մեջ. «բնախօսութիւն» (Փիլ. տես. 31-32) – φυσιολογία (Philo LA I.60):

¹⁸ *Physiologus*, translated (from Latin) by **M. J. Curley**, University of Texas Press, Austin & London, 1979, p. xv.

¹⁹ **J. Pitra**, *Spicilegium Solemnense*, vol. 3, Paris, 1855, pp. 374-390.

²⁰ **C. Cahier**, *Nouveaux mélanges d'archéologie, d'histoire et de littérature sur le Moyen-Age*, Paris, 1874, pp. 106-164: “Du bestiaire.”

²¹ Նա չի նշել համարները: Վնտկ. 1542, Վնտկ. 1213 և Վնտկ. 902 ձեռագրերը պարունակում են «Բարոյախօս»-ը, իսկ Վնտկ. 1226-ը՝ մի փոքր հատված (1414 բ., թթ. 133բ-134ա): Ձեռագրացուցակում եղած նկարագրությունից (**Ս. Ճեմեմեան**, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. է, 1996, սիւն. 84, հ. Ը, սիւն. 226) կարելի է ենթադրել, որ Պիտրան օգտագործել է Վնտկ. 1542 և Վնտկ. 1213 ձեռագրերը:

²² **H. Mapp**, *Сборнику притч Вардана*, ч. I, cc. 429-510.

²³ **H. Mapp**, նույն տեղում, ч. III, cc. 65-93.

ներ, որոնցից շատերը վերագրված են Վարդանին²⁴։ Առաջին Ուսումնասիրությունն հատորի (1899) զգալի մասը և հատկապես գլուխ 8-ը (էջ 394-428) նվիրված է «Բարոյախօս»-ին, նրա բնագիրն էլ տպված է որպես 3-րդ հատորի (1894) հավելված (էջ 129-175)։ Մառի հրատարակած «հիմնական բնագիրը»²⁵ (ձ. B) 55 գլուխ է պարունակում, որոնցից 23-ը՝ սկսած 34-ից, թարգմանությունն չեն, այլ հետագա հավելում։ Զուգահեռաբար Մառը ներկայացրել է նաև այլ խմբագրություններ (ձձ. P, S, C և C²)։

Մեկ այլ գրքում Մառը հրատարակել է «Բարոյախօս»-ն ըստ էջմիածնի 2093 (ներկայիս ՄՄ2101) ձեռագրի՝ ընդօրինակված 1223 թ. Խորանաշատում։ Մառը համեմատել է այն նախորդ հրատարակության մեջ օգտագործած ձեռագրերի հետ։ Հայերեն բնագրին զուգահեռ նա զետեղել է վրացերեն թարգմանությունը, որ պահպանվել է Շատբերգի X դարի մի ձեռագրում²⁶։ Մանրակրկիտ համեմատությունը Մառին հանգեցրել է այն եզրակացության, որ վրացերենը ճշգրիտ թարգմանություն է հայերենից՝ Խորանաշատի ձեռագրի տարբերակից։ Նա քննել է վրացերեն բնագրի հայկաբանությունները, ընդհանուր հայերեն ու վրացերեն ընթերցումները²⁷, նաև կցել ռուսերեն թարգմանություն։ Վրացերեն թարգմանությունն ըստ Մառի VIII-IX դդ. է²⁸։ Հետևաբար հունարենից հայերեն թարգմանությունը պետք է որ VI դարավերջին կամ VII դարասկզբին իրագործված լինի²⁹։ Նա անվանում է այն հունաբան դպրոցի գործ³⁰։ Մառի մեկ այլ ուշագրավ եզրահանգումն այն է, որ հայերենում կարող են լինել հունարեն և անգամ լատիներեն Physiologus-ի հետ երկրորդային կապեր, ինչի վկայությունն է որոշ ձեռագրերում սալամանդրին նվիրված գլխի

²⁴ **Н. Мэпп**, նույն տեղում, ч. II, СПб, 1894.

²⁵ Նրա ձեռագիր B-ն՝ էջմիածնի 453, ներկայիս ՄՄ 466 (1628 թ.), նկարագրված է *Сборники притч Вардана*, ч. III, էջ 17-19:

²⁶ Վրաստանի ԳԱ Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի S1141 ձեռագիրը զանազան նյութերի ժողովածու է, որ հետագայում յույս է բնծայվել առանձին գրքով՝ *Шатбердский сборник X в.*, Изд. **Б. Гигинеишвили, Е. Гунашвили**, Тбилиси, 1979 (գիրքը վրացերեն է, ունի ռուսերեն առաջաբան)։ Գրքում հիշատակված է Մառի իրականացրած վրացերեն «Ֆիզիոլոգոս»-ի առաջին հրատարակությունը (էջ 15), սակայն ոչ մի խոսք չկա նրա՝ հայերենից թարգմանված լինելու մասին։ Տպավորություն է ստեղծվում, որ այն թարգմանված է հունարենից։

²⁷ **Н. Мэпп**, *Физиолог. Армяно-грузинский извод*, § 11-14, сс. xxxii-xxxix.

²⁸ նույն տեղում, էջ xlviii: Մ. Տարչնիշվիլին վիճարկել է Մառի այդ թվագրումը, ենթադրելով, որ թարգմանությունն ավելի վաղ է, տե՛ս **Michael Tarchnišvili**, *Geschichte der kirchlichen georgischen Literatur auf Grund des ertsen Bandes der georgischen Literaturgeschichte von K. Kekelidze*, Vatican, 1955, p. 359:

²⁹ **Н. Мэпп**, *Физиолог. Армяно-грузинский извод*, с. xlv.

³⁰ Մառի պատկերացումը հունաբան դպրոցի մասին անշուշտ տարբերվում է այսօր ընդունվածից։ Ըստ նրա՝ թարգմանությունն այնքան տառացի չէ, որ տուժե՛ր ո՛ր կամ նույնիսկ իմաստը, տե՛ս **Н. Мэпп**, նույն տեղում, с. xxix:

առկայությունը³¹: Մեր ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տվել, որ այդ գլուխը, ինչպես նաև լրացուցիչ երկրորդ շարքի գլուխների մեծ մասը փոխառված է «Աշխարհացոյց»-ի մի ենթադրյալ չպահպանված խմբագրությունից³²:

Հունարան դպրոցի վերաբերյալ Մառի ենթագրությանն արձագանքել է Լ. Խաչիկյանը³³, ըստ որի թարգմանությունը 470 թվականից ուշ չի արվել, և կարող էր մի քանի տասնամյակ ավելի վաղ լինել (քանի որ նրա հետքեր կան Եզնիկի մոտ): Այնուամենայնիվ Ս. Արևշատյանի՝ թարգմանական գրականության պարբերացման մեջ այն հայտնվել է հունարան թարգմանությունների առաջին խմբում (որոնք նա թվագրում է V դարի երրորդ քառորդով)³⁴:

Հայերեն թարգմանության վերջում կա չորս անվերնագիր գլուխ (35-38), որոնք բացակայում են ինչպես հունարենում, այնպես էլ վրացերենում «Արջի մասին», «Ժրահավ թռչնի մասին», «Մեղվի մասին» և «Ագռավի մասին» (այս վերջինը բոլորովին տարբեր է հիմնական բնագրի՝ նույն թռչնին նվիրված 31-րդ գլխից): Լրացուցիչ գլուխների մի երկրորդ շարք հետևում է այդ չորսին՝ հիմնական խմբագրության մի քանի ձեռագրում՝ քսանմեկ գլուխ յոթում (ՄՄ532, ՄՄ735, ՄՄ466, ՄՄ5631, ՄՄ9303, ՄՄ5809, ՄՄ4287), ևս ինը՝ Եղմ.2531-ում:

Մաշտոցի անվան Մատենադարանի 35 և Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի յոթ ձեռագրի (Եղմ.11, 372, 536, 792, 1352, 1622 և 2531) ուսումնասիրությունը ցույց է տվել, որ որոշ ձեռագրերում «Բարոյախօս»-ին ուղեկցում են այլ առակներ և խրատական բնույթի բնագրեր³⁵:

«Բարոյախօս»-ի հայերեն երեք խմբագրություն կա՝

Ա — բուն թարգմանությունը հունարենից³⁶ շատ մոտ հունարեն Ս-ի բնագրին, այն նաև Մառի հայ-վրացական զուգահեռ բնագրի³⁷ հիմքն է և B ձեռագրով ներկայացված բնագրին է Վարդանի առակների նրա եռահատորյակում³⁸:

³¹ H. Mapp, նույն տեղում, էջ xxvi-xxvii: էջ xlix, ծան. 1-ում նա հիշատակում է Գ. Տեր-Մկրտչյանի ենթադրությունը, որ թարգմանությունը կարող էր ժամանակակից լինել Փիլոնի երկերին, քանի որ վերնագրում առկա են «գաղափարեր», «արտասանել», «տառ» բառերը:

³² Տե՛ս G. Muradyan, *Physiologus*, appendix 5, էջ 195-196:

³³ Լ. Խաչիկյան, *Եղիշեի Արարածոց մեկնությունը*, Երևան, 1992, էջ 159: Նա նշված հունարանություններին ավելացրել է «ստորանկեալ» բառը, սակայն ողջ վերնագիրը ոչ հավելում է համարում:

³⁴ С.С. Арешатян, *Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)*, Ереван, 173, с. 187 (2016², с. 194).

³⁵ Հմմտ. նաև Հ. Անասյան, *Հայկական մատենագիտություն*, հ. 1, էջ. 1074: Բեռլինի 273 ձեռագրում (Մառի հրատարակած «Վարդանի առակների» ամենաընդարձակ ժողովածուն է) վերնագիրն է «Վարդան վարդապետի ասացեալ առակ բարոյախօս», տե՛ս N. Karamianz, *Verzeichnis der Armenischen Handschriften der Königlichen Bibliothek zu Berlin*, Berlin, 1888, էջ 63, ձ. 80:

³⁶ Հրատարակել ենք գրքում (որպես TR) հունարեն սկզբնագրի հետ զուգահեռ (էջ 85-139), նաև թարգմանել անգլերեն (էջ 141-162): Բնագրի հիմքում ՄՄ2101 (1223 թ.), իսկ հունա-

Այն պարունակում է հետևյալ գլուխները (1-34 թարգմանված են, իսկ 35-38 հայերեն հավելյալ գլուխների առաջին շարքն են). 1. Մողես, 2. Առիւծ, 3. Աւթողոփս, 4. Քարինք հրահանաց, 5. Սղոց, 6. Քարաղր, 7. Հաւալուսն, 8. Բու, 9. Արծուի, 10. Փիւնիկ, 11. Յոպոպ, 12. Յիւ, 13. Իժ, 14. Աւձ, 15. Մրջիմն, 16. Յուշկապարիկք և իշացուք, 17. Ողնի, 18. Աղուէս, 19. Պանթեր/յովազ, 20. Վահանակրեայ, 21. Կաքաւ, 22. Անգղ, 23. Մրջնառիւծ, 24. Աքիս, 25. Միեղջիւր, 26. Կասդորիոս/կուղբ, 27. Բորենի, 28. Շնջրի, 29. Ինքնիմոն/հետահան, 30. Պերիդեքսիոն/կշտապանակ, 31. Ագուաւ, 32. Տատրակ, 33. Ծիծառն, 34. Եղջերու, 35. Արջ, 36. Ժրահաւ, 37. Մեղու, 38. Ագուաւ (տարբեր է 31-ից):

Ամենից անաղարտ կերպով այս տարբերակը պահպանվել է մի շարք ձեռագրերում՝ ՄՄ2101 (1223 թ.), թթ. 69ա-89ա (հավելյալ գլուխների առաջին շարքով 35-38), Եղմ.2531 (հավանաբար ԺԴ դ.), էջ 49-77, ՄՄ532 (1598 թ.), թթ. 110ա-129ա, ՄՄ735 (ԺԴ դ.), թթ. 41բ-50բ (վերջին երեքը՝ լրացուցիչ գլուխների երկու շարքով):

Մի քանի ձեռագիր՝ ՄՄ2174 (1309 թ.), թթ. 10ա-28ա, ՄՄ5631 (1620 թ.), թթ. 169ա-189բ, ՄՄ9303 (Ժէ դ.), թթ. 2ա-26բ, ՄՄ5809 (ԺԶ-Ժէ դդ.), թթ. 91բ-95ա և ՄՄ4287 (1640 թ.), թթ. 137ա-185բ, հարում են այս խմբագրությանը, սակայն բավական փոփոխված ու սխալաշատ բնագիր են պարունակում, մյուս կողմից էլ՝ պահպանել են հունարեն սկզբնագրին համապատասխանող բազմաթիվ ընթերցումներ, մինչ վերը նշված «լավագույն» ձեռագրերում դրանք աղավաղվել են: Դրանցում առկա է նաև հավելյալ գլուխների երկու շարքը: Այս խմբին է հարում նաև Պիտրայի հրատարակած բնագիրը:

Հավելյալ երկրորդ շարքի (Եղմ.2531, ՄՄ466, ՄՄ532, ՄՄ735, ՄՄ5631, ՄՄ9303, ՄՄ5809, ՄՄ4287 ձձ-ում) գլուխներն են. 1. «Սաղամանդրոս», 2. «Բոնոսոս», 3. «Վոռկոտիոս», 4. «Զետեբուս», 5. Կին-գազան, 6. «Այծամարդք» (սատիրոսներ³⁷), 7. «Ալլադէմ կենդանիք», 8. «Վագր», 9. «Շաւարշան», 10.

րենի՝ Սալայն 163 դեպքում հունարենի համար նախընտրելի են համարել առաջին խմբագրության (ըստ Սբորնի հրատարակության, տե՛ս ծան. 5) ընթերցումներ, որոնք հաստատվում են հայերենով: Իսկ 358 դեպքում հայերենի համար նախընտրելի են համարել ձձ. Եղմ.2531, ՄՄ532, ՄՄ735, ՄՄ2044, նաև մի առանձին ձեռագրախմբի (ՄՄ2174, ՄՄ5631, ՄՄ9303, ՄՄ5809, ՄՄ4287) ընթերցումները, քանի որ դրանք հաստատվել են հունարեն սկզբնագրով: Արդյունքում ստացվել են համարյա նույնական հայերեն և հունարեն բնագրեր: Չնայած Մառի հայ-վրացական զուգահեռ բնագրի հիմքում նույն ՄՄ2101 ձեռագիրն է, որը մենք հիմք ենք ընդունել մեր հրատարակության համար, այդ բնագրերի միջև որոշ տարբերություններ կան, քանի որ Մառը ձգտել է հնարավորինս մոտեցնել այն վրացերեն թարգմանությանը, մինչդեռ մեր նպատակն էր մոտեցնել այն հունարեն սկզբնագրին՝ արտացոլելով հայերեն «Բարոյախօս»-ի վաղագույն վիճակը: Ա խմբագրության ֆինանսական բնագիրը՝ առանց տարբերումների, գետեղված է հետևյալ կայքում՝ <http://titus.uni-frankfurt.de/texte/etcs/arm/physiom/physi.htm>:

³⁷ **Н. Марр**, Физиолог. Армяно-грузинский извод.

³⁸ **Н. Марр**, Сборники притч Вардана, ч. III, 129-175.

«Միեղջերու», 11. «Պասկուճ», 12. Վագր և պասկուճ, 13. «Ջրայնոց» մորթով մարդիկ, 14. «Էջ եղջիւրաւոր», 15. «Մարդիկ ագւտորք», 16. «Մարդակերք», 25. «Ծովակի ի Կապաղովկիա», 26. «Ծովակի ի Թրակէ», 27. «Աղբիւր ի Պեփլագոնիայ», 28. «Ջերմակ ի Փայտակարան», 30. «Մերկիմաստակք»: Եղմ. 2531-ն ունի ևս ինը գլուխ. 17. «Ալկիմոն», 18. «Ըռնգեղջերն», 19. «Աստակոս», 20. «Փոկ», 21. «Եքենէս», 22. «Եսբուէս», 23. «Եթիլ», 24. «Ղեմարոս» և 29. Զանազան հրաշալի լճեր ու աղբյուրներ: Եթե այս գլուխները միայն նշված ձեռագրերում են, ապա առաջին շարքինը՝ 35-38, Ա խմբագրության անկապտելի մասն են կազմում և թափանցել են Գ խմբագրության մեջ:

Հետաքրքրական է, որ այս 30 գլուխներից տասնչորսի (1, 2-7, 9-15, 30) դրանք հիմնականում ներկայացնում են կենդանիներ կամ մարդանման արարածներ, իսկ վերջինը նվիրված է հնդիկ փիլիսոփաներին) աղբյուրն ակնհայտորեն «Աշխարհացույցն» է: Ի դեպ, զուգահեռներ ենք գտել նրա և՛ ընդարձակ³⁹ (1, 2-7, 9-15, 30) և՛ համառոտ⁴⁰ (2-9, 15, 30) խմբագրություններում: 8, 9 և 30 գլուխները շատ ավելի երկար են, քան «Աշխարհացույցի» համապատասխան հատվածները: «Մերկիմաստակք» (30) գլխի որոշ մանրամասներ սերում են ընդարձակ, ուրիշները՝ համառոտ խմբագրությունից, կան նաև դրանցում զուգահեռ շունեցող տեղեկություններ: Եվս վեցի (19-24) համար զուգահեռ ենք գտել XIII դարի գիտնական Վանական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» կոչվող չհրատարակված երկում (ՄՄ561Դ ԺԳ դ., և ՄՄ6106 1255 թ.), որի մի լուսանցագրություն (ՄՄ6106, թ. 157ա՝ «Աշխարհացույց») հուշում է, որ սրանց աղբյուրն էլ կարող էր այդ երկը լինել: Այս ամենը վկայում է, որ եղել է «Աշխարհացույցի» մի ավելի ծավալուն չպահպանված (կամ գուցե դեռևս չհայտնաբերված) խմբագրություն, որից «Բարոյախոսի» շարունակողները տեղեկություններ են քաղել ֆանտաստիկ արարածների մասին:

Դատելով նկարագրություններից՝ Ա խմբագրությունն են պարունակում նաև հետևյալ ձ.ձ.՝ Վնտկ.1213 (ԺԳ դ.), թթ. 327բ-335բ (հավանաբար օգտագործվել է Պիտրայի հրատարակության մեջ), Վիեն.29 (1746 թ.), 5ա-19բ, Վիեն.167 (ԺԳ դ.), թ. 150բ, Վիեն.263 (1705-14 թթ.), թթ. 358բ-365ա, Վիեն.988 (1685-1720?), թթ. 10ա-25բ, Վիեն.1130 (ԺԷ-ԺԸ դդ.), թթ. 25ա-36ա (վերջինս հավանաբար մոտ է ՄՄ2174-ի տարբերակին), Վնտկ.1542 (1836-7 թթ.), թթ. 399-414 (հավանաբար մոտ է ՄՄ2174-ի տարբերակին և օգտագործվել է Պիտրայի գրքում), Վնտկ.902 (1670-ից առաջ), թթ. 451-476:

Բ խմբագրությունը բաղկացած է քսանվեց գլխից: Ա-ի համեմատ նրանում փոխված են որոշ կենդանիների բնութագրերը, մեկնողական հատվածներն ավելի երկար են կամ ավելի կարճ, կան և ուրիշ տարբերություններ: Ձեռա-

³⁹ Ա. Սուբրեան, Աշխարհացույց Մովսիսի Խորենացու, Վենետիկ, 1881:

⁴⁰ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 336-354:

գրերն են ՄՊբ10 (Մառի P), ՄՄ2285 (1725 թ.), թթ. 277ա-286ա, ՄՄ5626 (1696 թ.), թթ. 296բ-305ա, եղմ.1622 (1449-1455 թթ.), էջ 697-719: Կան նաև թերի ձեռագրեր՝ ՄՄ5118 (1412 թ.), թթ. 345ա-346բ, ՄՄ609 (1737), թթ. 198բ-201բ:

Գ խմբագրություն⁴¹. բաղկացած է 16 գլխից՝ Ա խմբագրության թարգմանված գլուխներից 13 (2-11, 13, 14, 18) և լրացուցիչ գլուխների առաջին շարքից երեք (35-37): Ա-ի բազմաթիվ գլուխներ բացակայում են, սակայն նրանց նախնական հերթականությունը պահպանված է. 1. Առիւծ, 2. Ուրիլոս (տարըն-թերցումներ՝ թէոփիլոս, թէոփալոս, թէոփալաս), 3. Հրաքար, 4. Սղոց, 5. Քարադրոս, 6. Հաւալուսն, 7. Բու, 8. Արծիւ, 9. Արմաւ, 10. Յոպոպ, 11. Իժ, 12. Օձ, 13. Աղուէս, 14. Արջ, 15. Ժրահաւ, 16. Մեղու: Այս խմբագրությանը հատուկ են խոսակցական լեզվի տարրեր: Նրա հիմնական ձեռագրերն են ՄՄ1887 (Ժէ դ.), թթ. 181բ-187ա, և ՄՄ5435 (1400 թ.), թթ. 539ա-542բ: Այս խմբագրությունից սերող մի տարբերակ բնորոշել ենք որպէս ենթախմբագրություն C՝ վկայված արդեն ԺԲ դարի մի ձեռագրում (ՄՄ2783), մեկ ուրիշն էլ՝ S:

C – ի ձեռագրերն են (նույն 16 գլուխներով). ՄՄ40 (ԺԳ դ.), թթ. 1ա-3բ, ՄՄ923 (Ժէ դ.), թթ. 13ա-16բ, ՄՄ1722 (Մառն այն անվանել է ձ. C²), ՄՄ2532 (ԺԳ դ.), թթ. 125բ-137բ, ՄՄ2783 (ԺԲ դ.), թթ. 222ա-226բ, ՄՄ2890 (1718 թ.), թթ. 333ա-336բ, ՄՄ4724 (1611 թ.), թթ. 219բ-223ա, ՄՄ4749 (1575 թ.), թթ. 442բ-443ա, ՄՄ5254 (1280), թթ. 182բ-190բ, ՄՄ6724 (Ժէ դ.), թթ. 134բ-138բ, ՄՄ7260 (Ժէ դ.), թթ. 13բ-142բ, ՄՄ8811, ՄՄ10236 (1700-1701 թթ.), թթ. 461բ- 467ա, եղմ.11 (1634 թ.), էջ 694-701, եղմ. 792 (1678 թ.), էջ 435-439, ՄՄ1722 (ԺԵ դ.), 77բ-83բ:

S – սա C ենթախմբագրությունից սերող ենթախմբագրություն է՝ «Արմաւ»-ի և «Յոպոպ»-ի միջև հինգ «Առակք, որ ասացին իմաստունքն և խրատ»-ի («Աղքատ և արծիւ», «Խոզք և էջր և աւանակք», «Այրի և գող տղայն», «Իմաստուն աւագէշ», «Իշխան և ձկունք»⁴²) և վերջում «Մարգարիտ»⁴³-ի հավելումով: Ձեռագրերն են ՄՄ679 (1660 թ.), թթ. 223բ-242ա, ՄՄ3854 (1471 թ.), թթ. 193ա-206բ, ՄՄ4231 (ԺԵ դ.), թթ. 59բ-66ա (Մառի S ձեռագիրն է):

Նշենք, որ Մառը ընդամենը յոթ ձեռագիր է օգտագործել (ներկայիս ՄՄ2101, ՄՄ466, ՄՊբ10, ՄՄ1887, ՄՄ1722, ՄՄ4231, ՄՄ40), որոնք պարունակում են բոլոր նշված խմբագրություններն ու ենթախմբագրությունները՝ բացի Ա-ի ՄՄ2174, ՄՄ5631, ՄՄ9303, ՄՄ5809 և ՄՄ4287 ձեռագրերով ներկայաց-

⁴¹ Հրատարակել ենք զբոս (որպէս C), էջ 166-184: Քննական բնագրի տողատակում արտացոլված են նաև նրա երկու ենթախմբագրությունները (c և S) պարունակող ձեռագրերի տարընթեցումները:

⁴² Այս գլուխների բնագիրը տե՛ս H. Mapp, *Сборнику притч Вардана*, ч. III, cc. 147-149:

⁴³ Այս գլխի բնագիրը տե՛ս G. Muradyan, *Physiologus*, էջ 208-209:

ված խմբից: Բոլորը՝ բացի ՄՄ2101-ից, առկա էին առաջին գրքում⁴⁴, որտեղ Ա խմբագրությունը (TR) ներկայացված է միայն բավական աղավաղված բնագիր պարունակող ՄՄ466-ով (B ձ.), Բ խմբագրությունը (P)՝ ՄՊբ10 (SABB640)-ով, Գ խմբագրությունը (C)՝ ՄՄ1887-ով, իսկ ենթախմբագրությունները՝ ՄՄ1722-ով ու ՄՄ40-ով (c) և ՄՄ4231-ով (S): P և C խմբագրության գլուխները գետեղված են որպես հիմնական բնագրի գլուխների տարբերակներ՝ անմիջապես դրանցից հետո: P-ի պարագայում որոշ գլուխների դեպքում Մառն այլ կերպ է վարվել՝ ներկայացնելով այն B-ից շեղվող ընդարձակ տարբերումների ձևով:

Մեր գրքի առաջաբանը, բացի ձեռագրերի և խմբագրությունների մանրամասն նկարագրությունից, պարունակում է նաև հետևյալ բաժինները. 8. «Քարգմանական տեխնիկա և լեզվական առանձնահատկություններ» (էջ 58-70. դրանք հատուկ են վաղ դասական շրջանի թարգմանություններին), 9. «Աստվածաշնչյան մեջբերումների արտացոլումը հայերեն թարգմանության մեջ» (էջ 71-72), 10. «Բարոյախոսի հետքերը հետագա հեղինակների մոտ» (էջ 72-81 այդպիսիք կան եզրիկի մոտ, Ագաթանգեղոսի երկի՝ Գրիգորի Վարդապետության մեջ, Նղիշի «Մեկնություն արարածոց»-ում, Հովհաննես Երզնկացու, Փիլոնի մի մեկնիչի մոտ, Վարդան Բարձրբերդցու՝ Սաղմոսների մեկնության մեջ, Ներսես Շնորհալու և Գրիգոր Խլաթեցի Մերենցի խորանների մեկնություններում, Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակներում և այլն), 11. «Քարգմանության ժամանակը» (էջ 81-82. բնագրում առկա՝ տարբեր տոմարների պատկանող ամսանունների համադրումը վկայում է, որ այն թարգմանվել է մինչև 470 թ., ընդ որում դեպի V դարի սկիզբ հավանականությունն աճում է), 12. «Եզրակացություններ»:

Մեր գրքում ներկայացված չէ միայն հայերեն Բ խմբագրությունը, ուստի ստորև հրապարակում ենք այն: Բ-ն Ա-ից տարբերվում է ոչ միայն գլուխների կազմով, այլև բնագրով. մասնավորապես բաց են թողած աստվածաշնչյան մեջբերումները, հատկապես գլուխների սկզբում, որոշ դեպքերում դրանք տեղափոխված են գլխի վերջ:

Բովանդակային տարբերություններից ամենից հետաքրքրականն է միեղջյուրի (գլուխ 26) հետևյալ «բարք»-ը: Երբ նա հայտնվում է լեռան գագաթին, և որսորդները նեղում են նրան, ցանկանալով բռնել, նա ցած է նետվում և կանգնում իր եղջյուրի վրա՝ առանց վնասվելու: Սա զարմանալիորեն հիշեցնում է քարայծի բնութագիրը Սանկտ-Պետերբուրգի Սալտիկով-Շչեգրինի գրադարանում պահվող XII դարի լատիներեն նկարազարդ «Բեստիարիում»-ում (Lat. Q.v. V.I.)⁴⁵:

⁴⁴ H. Mapp, *Сборники притч Вардана*, ч. III.

⁴⁵ Sĕ'u *The Medieval Bestiary*, Text and Commentary by Xenia Muratova, Moscow: Iskustvo Art Publishers, 1984, p. 114: Այստեղ նաև նշվում է, որ ֆառայծին սովորաբար

Նախավերջին՝ «Գաղտակրոս»⁴⁶ գլուխը, որը թարգմանական Ա խմբագրությունից չէ, այս խմբագրության անկապտելի մաս համարելով ներկայացրել ենք իր տեղում:

Օգտագործել ենք հետևյալ ձեռագրերը.

A – եղմ. 1622 (1449-1455 թթ.), էջ 697-719⁴⁷:

B – ՄՄ5626 (1696 թ.), թթ. 296ա-305ա: Գլուխների դասավորությամբ նույնանում է նախորդի հետ և նրա հետ բազմաթիվ տարբերություններ է կիսում:

C – ՄՄ2285 (1725 թ.), թթ. 277ա-286բ՝ չկա 20-րդ՝ պորդոքսոնի գլուխը, 16-րդ՝ աղվեսի գլուխը տեղափոխված է 12-րդ՝ օձին նվիրված գլխից և նրան հետևող հավելված «Արջ»-ից հետո: Վերջում ավելացված են գլուխներ՝ «Վիշապ մի ի հնդիկս», «Ծառ մի աշխարհն արևմտից», «Ասիդ և Նեսայն», «Փլիսոր», «Մեղուք»: Այս ձեռագրի բնագիրը բավական տարբերություններ ունի մյուսներից, իսկ նրա որոշ հատվածներ նույնանում են համառոտ Գ խմբագրության հետ (օրինակ՝ 2. «աթորոփս»-ի «ծարակոտ և մրգասէր» բարքը, 3. «հրաքար»-ի՝ «հրահան քարինք»-ի միմյանց շփելուց բոցավառվելը, 4. «սողոց»-ի՝ նավերը երկու կեսի պատռելու բարքը և նավի պաշտպան դելֆինները, 7. «բուս»-ն «գիշակեր է և հպարտ, խաւարաւ կերակրի», 9. «արմաւ»-ի ծափ տալը և մեկնողական հատվածը, 12. «աւծ»-ի՝ թույնը քարին դնելու և բերանը ողողելու բարքը, 13 «աղուէս»-ի խոսքը՝ «մեռեալս յարուցեալ ուտեմ գկենդանիքը»): Գ-ին է մոտեցնում նաև հավելյալ «Արջ» և «Ժրահաւ» գլուխների առակայությունը:

P – ՍՊբ10⁴⁸, թթ. 52բ-151ա՝ շունի մողեսի⁴⁹, նաև վերջին երկու՝ գաղտակրոսի և միեղջյուրի գլուխները, հրաքարից հետո ավելացված է Ողոմ-

պատկերում են եղջյուրները գետնի մեջ խրված: Ըստ այս և ուրիշ «Բեստիարիում»-ների՝ նրա եղջյուրներն այնքան ամուր են, որ փրկում են նրան՝ բարձր սարից ընկնելիս:

⁴⁶ Բառն այս ձևով բացակայում է բառարաններից, սակայն կա «գաղտակուր»՝ «ծովային խեցեմորթ» իմաստով, որի մի տարբերակ է «գաղտակրոս»-ը:

⁴⁷ Խորին շնորհակալություն ենք հայտնում Սուրբ Հակոբյանց վանքի ձեռագրաց մատենադարանի անօրեն Հայր Շնորհի Պաղոյանին՝ այդ էջերի թվային պատկերները մեզ սիրահոժար տրամադրելու համար:

⁴⁸ Այս ձեռագիրը (որ պահվում Ռուսաստանի Ազգային՝ նախկին Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանում) մեզ համար մատչելի չէ, ուստի օգտվել ենք նրա բնագրից Մառի վերատարոյությամբ (ինչպես նշվեց, նա որոշ գլուխների համար մեջբերել է այդ ձեռագրի բնագիրն ամբողջությամբ, որպես հիմնական բնագրի տարբերակ, իսկ այլ դեպքերում ներկայացրել այն ընդհանրակառուցումների տեսքով): Նկարագրությունը տես **К.Н. Юзбашян**, «Армянские рукописи в петербургских собраниях, Каталог», *Православный Палестинский сборник*, 104^н (41^н выпуск), СПб, 2005, сс. 9-10, рук. 10. Կ. Յուզբաշյանի նկարագրության մեջ ամբողջական կերպով գրված է. «Татеваци, Проповеди, нач. «Բարոյախօսն Փիլատոս...»», և ձեռագրի ժամանակը չի նշվում: Հավանաբար, այն նշված չէ նաև հին ձեռագրացուցակում, որը մեզ համար մատչելի չէ, տես

պիանոսի ինն առակ, «Ողնի»-ն (15) տեղափոխված է «Ծիծառն»-ից (24) հետո, իսկ «Ողնու»-ն հետևում է «Յովազ»-ը (17):

Գլուխների տարբեր հերթականության դեպքում նախընտրելի ենք համարել եղմ.1622 և ՄՄ5626 ձեռագրերինը, որն առավել մոտ է Ա խմբագրությանը:

Հերթականությամբ համարակալել ենք գլուխները՝ օժտելով դրանք ձեռագրերում բացակայող կարճ վերնագրերով, նաև քառակուսի փակագծերում ավելացրել Ա խմբագրության՝ բուն թարգմանության համապատասխան գլուխների և պարբերությունների համարները:

Dorn, *Catalogue des manuscrits et xylographes orientaux de la bibliothèque impériale publique de St.Petersbourg*, St.Petersbourg, 1852, p. 571, m. 640:

⁴⁹ Մառի հրատարակության մեջ այս գլխի P-ի տարբերակ չկա, սակայն նրա համարակալումից պակասում է 26 P, այնինչ կան 25 P (վահանակիր) և 27 P (պորդոֆտն), որոնց միջև այս խմբագրության մեջ տեղ է գտել մողեսի գլուխը: Թվում է՝ Մառը թյուրիմացաբար բաց է թողել 26 P-ն, մոռանալով բաղդատել այն 1 B-ի հետ:

ԽՐԱՏՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ ՎԱՍՆ ԳԱԶԱՆԱՅ ԵՒ ՍՈՂՆՈՅ ՅԱՂԱԳՍ ԱՐԳԱՐՈՅ ԵՒ ՄԵՂԱԽՈՐԱՅ ԱԻՐԻՆԱԿԻ¹

1. [Առիւծ²]

[2.2] Բարոյաբանն ասէ³ վասն առիւծուն, քանզի⁴ Յակոբ⁵ յորժամ արհնեաց զորդի⁶ իւր զՅուդայ, ասաց. «Կորիւն⁷ առիւծոյ Յուդայ»⁸: [2.3] Բարոյաբանն ասէ, թէ⁹ .գ. բարք են առիւծու¹⁰. [2.4] նախ¹¹ յորժամ ճեմեալ գնաւ¹² հոտ առնու ի¹³ յորսորդացն¹⁴, ձետովն խաղաղէ զհետ¹⁵, զի մի զհետ նորա գնասցեն որսորդքն¹⁶, գտանիցեն զնա¹⁷ և ունիցին¹⁸:

[2.5-7] Մեկնութիւն բանիս. Պարտ է իմանալ¹⁹ առիւծն զՏէրն մեր Յիսուս Քրիստոս նշանակէ²⁰, որ ի յազգէն Յուդայի էր և յարմատոյն յեսսեայ. ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ, որ առաքեցաւ ի²¹ հարէն, ծածկեաց²² և խաղաղեաց զիմանալի զհետն իւր, [2.8-10] որպէս ասէ մեծն Դաւիթ²³. «Խոնարհեցոյց զերկինս և էջ, և մէգ ի ներքոյ ոտից նորա»²⁴, և «բանն մարմին եղև և բնակեաց ի

¹ A B չիք վերնագիր | P Բարոյաբան Փիլատոս ըստ բնութեան բարոց ասացեալ
² Ա խմբ. Առիւծ = λέων
³ P Փիլատոս սկսաւ խօսել
⁴ C P թէ չիս վասն առիւծուն, քանզի
⁵ C + նախապետն
⁶ C զորդիսն
⁷ C կորիւնդ
⁸ Ծնն. ԽԹ 9 | C + [2.1] Զի առիւծն թագաւոր է ի վերայ ամենայն գազանաց՝ հօգօր, զօրաւոր և յիմաստուն:
⁹ P չիք | C չիք բարոյաբանն ասէ, թէ.
¹⁰ C ունի առիւծն չիս են առիւծու
¹¹ C մինն | P ա.
¹² C յորս ելանէ, հետի և յանկարծակի չիս յորժամ հետեալ գնաւ և
¹³ P հարկանի չիս առնու ի
¹⁴ C զհոտ յորսորդի և երկուցեալ փախչի և չիս ի յորսորդացն
¹⁵ C և զհետ ագուն խաղաղէ P վասն որոյ խաղաղէ ագովն զհետն չիս ձետովն խաղաղէ զհետ
¹⁶ P վարեացեն որսորդն C գնացեալ որսորդաց չիս նորա գնասցեն որսորդն և
¹⁷ P ի մայրոջն | C ըմբռնեացեն զնա
¹⁸ C չիք և ունիցին
¹⁹ C չիք մեկնութիւն բանիցս. Պարտ է իմանալ | P + զիմանալի
²⁰ P չիք
²¹ P + մշտընջեմաւոր
²² C ծածկեալ չիս որ առաքեցաւ ի հարէն, ծածկեաց
²³ P մարգարէն ասէ չիս ասէ մեծն Դաւիթ
²⁴ Սաղ. ԺԷ 10

մեզ»¹, և անձանաւթ եղեալ վերին զուարթնոցն, որք² ասէին ի վերանալն. «Ո՞վ է սա թագաւոր փառաց»³:

[2.11] Երկրորդ բարքն առիւծոյ⁴ յորժամ⁵ ննջէ⁶, ի բաց կան աչք նորա⁷: [2.12] Ըստ նմա որ ասէ. «Ես ննջեմ և սիրտ իմ⁸ արթուն կայ»⁹: [2.13] Զի թէպէտ և մարմնովն ննջէր տէրն¹⁰, այլ աստուածութեամբ ցանկ¹¹ արթուն կայր, [2.14] որպէս ասէ Դաւիթ¹². «ոչ ննջէ և ոչ ի քուն երթայ¹³ պահապանն Իսրայէլի»¹⁴:

[2.15] Երրորդ¹⁵ բարքն առիւծոյն¹⁶. յորժամ ծնանի մատակ¹⁷ առիւծն զկորիւնն, մեռեալ ծնանի¹⁸: [2.16] Ապա նստեալ¹⁹ պահէ զորդի²⁰ իւր, մինչև²¹ գայ հայրն նորա յերրորդ աւուրն²² և փչէ ի ճակատն²³ նորա և յարուցանէ զնա²⁴: [2.17] Այնպէս²⁵ և ամենակալն Աստուած²⁶ հայրն երկնաւոր, յարոյց զորդի իւր Յիսուս²⁷ զանդրանիկն ամենայն արարածոց²⁸ յաւուր յերրորդի և նստոյց ընդ աջմէ իւրմէ²⁹:

¹ Յովն. Ա. 14

² P չիք

³ Սաղ. 8 | ԻԳ C չիք որպէս ասէ մեծն Դաւիթ. «Փոնահեցոյց զերկինս և էջ, և մէզ ի ներոյ ոտից նորա», և «բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ», և անձանաւթ եղեալ վերին զուարթնոցն, որք ասէին ի վերանալն. «Ո՞վ է սա թագաւոր փառաց»

⁴ P չիք | C + այս է, զի

⁵ C + արթուն լինի և կամ

⁶ P + առիւծն

⁷ C աչք ի բաց մնա P ի բաց լինին աչք նորա փ/ս ի բաց կան աչք նորա

⁸ P + և աչք իմ

⁹ Երգ Ե 2 | C չիք Ըստ նմա ասէ. «Ես ննջեմ և սիրտ իմ արթուն կայ»

¹⁰ P + ե[ր]թէ | C նոյնպէս Տէրն մեր Յիսուս Քրիստոս թէպէտ ննջէր փ/ս Զի թէպէտ և մարմնովն ննջէր տէրն

¹¹ C P չիք

¹² P Դաւիթ ասէր

¹³ P երթայր

¹⁴ Սաղ. ձԻ 4 | C + նա և Սողոմոն ասէ, թէ. «Ես ննջեցի և սիրտ իմ արթուն կայ» (հմմտ. Երգ Ե 2)

¹⁵ C երեք P իսկ .գ.

¹⁶ P + այս է | C առիւծին այն է

¹⁷ P մանուկ

¹⁸ C լինի

¹⁹ C և մայրն նստեալ փ/ս ապա նստեալ

²⁰ P նստի պահել զորդիսն

²¹ C զնա և սգայ զատուրս .գ., և երբորդ ատուրն փ/ս զորդի իւր, մինչև

²² C և գոռա մեծաձայն և փ/ս նորա յերբորդ ատուրն

²³ C յերեսս

²⁴ C զմեռեալ կորիւնն

²⁵ P նոյնպէս C այսպէս

²⁶ A B + և

²⁷ C Յիսուս Քրիստոս զորդին իւր փ/ս զորդի իւր Յիսուս

²⁸ Կողոս. Ա. 15 | C չիք զանդրանիկն ամենայն արարածոց

²⁹ C իւր

[2.18] Ապա ուրեմն բարուք ասաց¹. «կորիւն առիւծու Յուդայ»². և «է որ² յարուցանէ զնա»³: [2.19] Բարուք խաւսեցաւ բարուախաւսն վասն առեւծոյ⁴:

2 [Աթոլաւիս⁵]

[3.1] Բարուախաւսն ասէ⁶. է էրէ ինչ⁷, որ կոչի աթոլաւիս⁸: [3.2] Սաստիկ գազան է, մինչ զի որսորդաց ոչ է հնար զնա ի բուն հարկանել⁹: [3.3] Ունի¹⁰ եղջիրս երկայնս և սղոցաձևս, մինչ զի զծառս մեծամեծս սղոցէ և կտրէ¹¹: [3.4-5] Եւ յորժամ ծարաւի, գայ ի գետն¹² ըմպել ջուր¹³, և են անդ պրակք մանրոստոց¹⁴: [3.6] Եւ խառնին ոստք ընդ եղջիրս նորա, և կապին եղջիրքն ընդ ոստն¹⁵, [3.7] և լսեն զձայն¹⁶ նորա որսորդքն և գան¹⁷ սպանանեն զնա:

[3.8] Մեկնութիւն բանիս այս է¹⁸: Այսպէս և դու, ով մարդ, մարմնովդ նահատակեա¹⁹, մինչդեռ վստահ ես յեղջուրսդ քո՝ սղոցեալ և կտրեալ²⁰ ի քէն²¹ զարծաթսիրութիւն, զմրուր աշխարհիս²², զպատրանք²³ սատանայի: [3.9] Եւ ապա²⁴ ուրախ լինին ի քեզ հրեշտակք, և բերկրին ի քեզ զարութիւնք երկնից:

¹ P + Յակոբ քէ

² C P ով *ի/ս* է որ

³ Մնն. հո⁹:

⁴ P + և վասն կորեանց նորա | C *չ/ք* Ապա ուրեմն բարուք... վասն առեւծոյ

⁵ Ա. խմբ. Արթողոփոս = ἀρθόλοψ

⁶ C P *չ/ք* բարուախաւսն ասէ

⁷ P ինչ էրէ

⁸ P արթողոփոս | C մի մեծ յոյժ և ահագին, որոյ անունն կոչի ոփիլոս *ի/ս* ինչ էրէ ինչ, որ կոչի արթոլաւիս

⁹ C ոչ է հնար որսորդացն ըմբռնել զնա *ի/ս* որսորդաց ոչ է հնար զնա ի բուն հարկանել

¹⁰ C + և

¹¹ P սղոցել և կտրել C սղոցէ և հատանէ

¹² P + Առաձայնի

¹³ P *չ/ք* ըմպել ջուր

¹⁴ P ոստք | C *չ/ք* Եւ յորժամ ծարաւի, գա ի գետն՝ ըմպել ջուր, և են անդ պրակք մանրոստոց

¹⁵ P ոստք | C Եւ ահագին գորութենէն ոչինչ հնարիւք կարեն որսալ զնա: Եւ զի է յոյժ ծարաւիտ և մեղաւտ, վասն որոյ և որսորդացն գնացեալ ի վտակս ջուրց, դնեն ակամատ ի ջուրն և ի մեղաց խնծորաց ի ծայրս և ընդ վիմա տարեալ արացուցեալ պարանն: Եւ գազանն ծարաւեալ գայ ի ջուրն և մտեալ ի նա ըմպէ: Եւ տեսեալ զխնծորն ի վերայ ջրոյն, խաղայ ընդ նա և ուրախանայ և ոչ զիտէ զորոգայթն ի ջուրն թագուցեալ: Իսկոյն ըմբռնի յորոգայթն և սաստիկ գոչէ *ի/ս* և խառնին ոստք... ընդ ոստքն

¹⁶ P զգոչիւն

¹⁷ C Առ որ լուեալ որսորդացն զձայնն նորա և եկեալ *ի/ս* և լսեն զձայն նորա որսորդքն և գան

¹⁸ C P *չ/ք*

¹⁹ C մարմնովդ ջանայ P նահատակեա մարմնովդ *ի/ս* մարմնովդ նահատակեա

²⁰ C P սղոցել և կտրել

²¹ P + զշատխօսութիւն

²² P զմրուր աշխարհի | C զամենայն շարութիւն և *ի/ս* զարծաթսիրութիւն... զմրուր աշխարհիս

²³ P զպատրանս

²⁴ P զի *ի/ս* և ապա

[3.10].Բ. եղջիւրք Հին և Նոր Կտակարանքն են¹: [3.11] Այլ զգոյշ լեր, գուցէ և² խաղայցես ընդ ոստքն, այսինքն՝ աշխարհի³ ցնորք՝ ընդ հեշտութիւն և կամ ընդ հանդերձս: [3.12] Եւ խաղաղիս և կամ շաղախիս⁴ յորոգայթ թշնամոյն, և գտանէ զքեզ⁵ որսորդն սատանայ⁶:

3 [Քարինք հրահանաց⁷]

[4.0] Ի գինոյ և ի կնոջէ ըմբռնեալ, և սպանիցէ⁸ զքեզ⁹: [4.1] Բարուախաւան ասէ¹⁰. Են քարինք¹¹ հրահանաց՝ արու և էգ¹². [4.2] մինչ ի զատ են ի միմեանց, ոչ հանեն¹³ հրդեհս. ապա թէ ի մաւտ տանիցեն զարուն առ¹⁴ յէզն, հուր հանէ¹⁵ և այրէ զվայրս բազումս¹⁶:

[4.3] Մեկնութիւն բանիս¹⁷. տէ՛ս, ո՛վ առաքինի, որ ի նահատակութեանդ¹⁸ ես, [4.4] Սամսոն և Յովսէփ արդարք էին և վասն կանանց անկան ի փորձութիւն¹⁹: [4.5] Ապա բարիոք ասաց բարուախաւան վասն կրանաւորացն, զի ապրեսցին²⁰:

¹ C չիք [3.9-10]

² B չիք P + դու

³ P որ աշխարհիս են *փիս* ոստքն, այսինքն աշխարհի

⁴ P շաղախեալ պատիս *փիս* խաղաղիս և կամ շաղախիս

⁵ P + շար

⁶ C Զի մի խաղալի լիցիս թշնամոյն և ըմբռնիս յորոգայթ նորա, և սպանանէ զքեզ յորոգայթն նորա հոգով յախտեան *փիս* [3.11-12]

⁷ Ա խմբ. Քարինք հրահանաց = λιθοι πυροβόλοι

⁸ P ապականիցէ

⁹ Հմմտ. Սիրաբ ԺԹ 2 | C չիք Ի գինոյ և ի կնոջէ ըմբռնեալ, և սպանիցէ զքեզ | *Ինչպէս և Ա խմբագրութեան ձեռագրերում, այս գլխի առաջին նախադասութիւնը հանգէս է գալիս որպէս նախորդ գլխի վերջին նախադասութիւն, սակայն ինչպէս այստեղ, այնպէս էլ մեր գրքում ուղղել ենք այդ սխալը:*

¹⁰ C չիք Բարուախաւան ասէ

¹¹ C + ինչ

¹² C ի լերինս, որ կոչի հրաբար *փիս* հրահանաց արու և էգ

¹³ P հատանեն

¹⁴ P չիք

¹⁵ P էլանէ հրդեհս *փիս* հուր հանէ

¹⁶ C որ ոչ զոք վնասեն, որքան հետի են ի միմեանց, մինչև առեալ գնա շփեն յիւրար, հուր էլեալ հրդեհէ *փիս* [4.2]

¹⁷ P չիք

¹⁸ A B նահատակութիւնդ *փիս* ի նահատակութեանդ

¹⁹ C Սոյնպէս և սատանայ ոչ կարէ վնասել ինչ, եթէ ոչ ընկեր և համահունչ լինին և շփեն: Սատանայ և հուր յախտենից հանեն և կամաւ հրդեհեն զհոգիս իւրեանց ի հուր անշիջելի *փիս* [4.3]

²⁰ C P չիք [4.5]

4 [Սղոց¹]

[5.1] Բարոյախօսան ասէ². է գագան ինչ³ ի ծովու⁴, որ կոչի սղոց, և թևս երկայն ունի⁵ բլրածևս: [5.2] Յորժամ⁶ տեսանէ զնանս առագաստեալս⁷, նմանի նաւանցն⁸ և ամբառնայ⁹ զթևս ի բարձրութիւն առագաստացն¹⁰ և հակառակի ընդ նան¹¹. [5.3] որպէս թէ¹² ասպարէզս .լ. կամ .խ., և յորժամ¹³ վաստակի, խոնարհեցուցանէ զթևսն և յինքն¹⁴ ամփոփէ յաշխատութենէն: [5.4] Եւ ալիքն տանին զնա յառաջին տեղին իւր¹⁵:

[5.5] Մեկնութիւն բանիս¹⁶. Մովն յաշխարհիս արիւնակ է, [5.6] և նան սրբոց մարգարէից, որք նաւեցին ընդ աշխարհս¹⁷: Եւ¹⁸ հակառակորդն սատանայ ոչ կարաց յաղթել նոցա: [5.7] Իսկ որք ոչ կարեն համբերել մինչև ի սպառ սրբութեամբ [5.8] կրթել ի գործ բարութեան և ոչ հանեն ի գլուխ զառաքինութիւնն կամ պոռնկութեամբ կամ զաւշաքաղութեամբ կամ արբեցութեամբ կամ այլ ինչ շարեաւք, [5.9] նոքա¹⁹ որպէս զնաւս ընկղմին ի խորս ծովուն²⁰:

¹ Ա խմբ. սղոց = πρίων

² C P չիք Բարոյախօսան ասէ

³ B է գագան մի P այլ ինչ գագան

⁴ C ծով

⁵ B և թևս երկայնութիւն C Եւ յոյժ թշնամի է նաւոց և ունի թևս երկայնս և P թևս երկայնս ունի և չիս և թևս երկայն ունի

⁶ P իբրև C Եւ յորժամ

⁷ C զնան առագաստեալ

⁸ C նաւոց P նոցա

⁹ P յամբառնայ չիս և ամբառնայ

¹⁰ C առագաստին

¹¹ C P նանս

¹² P և երբա չիս որպէս թէ

¹³ P .գ., բայց C .խ., և յորժամ չիս .լ. կամ .խ., և յորժամ

¹⁴ C և ինքն P յինքն չիս և յինքն

¹⁵ C Խաղաղի և նան վարեալ յալեացն յառաջ իբրև վտաւանդ մի: Եւ անդի արձակեալ գագանին, սրընթաց գայ անցանէ ընդ մէջ նաւին և պատառէ ընդ երկուս և կորուստ գործէ այնոցիկ, որ ի նաւին իցեն, և ի խորս ծովու ընկղմէ: Իսկ եթէ նան թեթև է ի բեռանց, ոչ կարէ վնասել: Եւ մին վասն պահապանացն, որ կոչին դրքին, որք պահեն զնան, և մէկ վասն թեթևութեանն [Չիս 5.4]

¹⁶ C P չիք Մեկնութիւն բանիս

¹⁷ C նան օրինակ է աշխարհիս չիս Մովն յաշխարհիս ... նաւեցին ընդ աշխարհս

¹⁸ C P չիք

¹⁹ P չիք այլ ինչ շարեաւք, նոքա

²⁰ C և գագանն՝ սատանայի, որ հակառակէ մարդկան, զի յորժամ գտանէ զմարդն մերկացեալ ի շնորհացն Աստուծոյ և զպահապան հրեշտակս հեռացեալ և մարդն մեղօժ ծանրացեալ, դիպօղ ժամանակ գտանէ, զի զիւր կամաց գործն կատարեցէ ի նոսա և դիւրեալ կորուսանէ զնոսա չիս հակառակորդն... ընկղմին ի խորս ծովուն [5.6-9]

5 [Քաղանդր¹]

[6.1] Բարուախաւան ասէ². է և թռչուն ինչ³, որ կոչի քաղանդր⁴, որ յերկրորդ յաւրէնս⁵ յիշէ: [6.2] Համակ⁶ սպիտակ է թռչունն⁷, աղբ փորոյն նորա⁸ բժշկէ զաչս շլացեալս⁹, [6.3] և առ թագաւորն¹⁰ հնդկաց¹¹ գտանի: [6.4] Թէ ոք իցէ մարդ հիւանդ¹², տանին զհասն առաջի նորա¹³, իբրև տեսանէ հիւանդն, թէ¹⁴ մահու իցէ¹⁵, դարձուցանէ զերեսն իւր ի նմանէ քաղանդրն¹⁶, [6.5] և¹⁷ թէ կենաց իցէ մարդն¹⁸ [6.6] բանայ զբերան իւր, կլանէ զցաւն¹⁹ հիւանդին, և նոյնժամայն ողջանայ²⁰ հիւանդն:

[6.7] Մեկնութիւն բանիս²¹. Համակ սպիտակն²² արինակ է գեղեցկութեան կենարարին²³, [6.8] զի ամենեկին սպիտակ է Տէրն, և սեւութիւն ի նմա ոչ գոյ, որպէս ասէ Սողոմոն. «Եղբարորդին իմ սպիտակ է, և կարմիր ընտրեալն ի բիրուց»²⁴, [6.9] որպէս և ինքն ասաց²⁵. «Քա իշխան աշխարհիս այսորիկ²⁶ և յիս ինչ²⁷ ոչ գտանէ»²⁸, [6.10] վասն զի եկն առ հրեայսն, և մերժեցին զաս-

¹ Ա իւմբ. քաղանդր = χαλανριός

² C չիք Բարուախաւան ասէ

³ C հա մի

⁴ C քաղանդրս P քաղանդրն

⁵ Ղևտ. ԺԱ. 19 | P օրէնք

⁶ C P ամենեկին

⁷ C P չիք

⁸ P փորոյ

⁹ A B շլացեալ C չիք աղբ փորոյն նորա բժշկէ զաչս շլացեալս

¹⁰ P ի թագաւորս

¹¹ C որ և ի տունս թագաւորաց հազիւ չիս և առ թագաւորն հնդկաց

¹² C Զի յորժամ չիս թէ ոք իցէ մարդ հիւանդ

¹³ P հիւանդին C առ հիւանդն չիս զհասն առաջի նորա

¹⁴ P եթէ հիւանդն

¹⁵ C պշուցեալ հայի ի նա, և ուման, թէ մահու է չիս իբրև տեսանէ հիւանդն, թէ մահու իցէ

¹⁶ A B քաղանդրն | C և այլ ոչ հայի չիս ի նմանէ քաղանդրն | P + քաղանդրն հանաչէ, թէ մեռա-

նելոց է

¹⁷ P ապա

¹⁸ P է, պշու ընդ հիւանդն քաղանդրն և չիս իցէ մարդն

¹⁹ A զցաւս

²⁰ P ապրի չիս նոյնժամայն ողջանայ | C է, նայելով քաղանդրն, և ողջանայ չիս իցէ

մարդն ... նոյնժամայն ողջանայ

²¹ C P չիք Մեկնութիւն բանիս

²² P + միանգամ

²³ P կենարարին մերոյ գեղեցկութեանն

²⁴ Երգ Ե 10 | P չիք ոչ գոյ... ի բիրուց

²⁵ P ասէր

²⁶ P չիք

²⁷ P չիք

²⁸ Յովն. ԺԳ 30

տուածուծիւն նորա, [6.11] և ապա եկն առ հեթանոսս և եբարձ զմեղս մեր և զհիւանդութիւնս¹, և վերացաւ խաչն, [6.12] «² և գերեաց զգերութիւնս»³, [6.13] և ետ զպարգևս որդոց մարդկան⁴, որք ընկալան զնա⁵: [6.15] Արդ եթէ ոք ասիցէ, եթէ քաղանդը⁶ պեղծ թռչուն⁷ է, զիա՞րդ արինակ է Քրիստոսի⁸: [6.16] Եւ վիշապն ո՞չ ապաքէն⁹ պիղծ է: Եւ զիա՞րդ ասէ, թէ¹⁰. «որպէս Մովսէս բարձրացոյց¹¹ զաւձն յանապատին, նոյնպէս և պարտ է բարձրանալ¹² որդոյ մարդոց»¹³: [6.17] Արդ է և յաւձն բարի, զի յիմաստուն է, է և յառիւծն բարի, զի հզար է, է և յոչխարն¹⁴ բարի, զի հանդարտ¹⁵ է [6.18] Արդ կրկին են արարածք, թէպէտ և յոռի ինչ կարծի, այլ գտանի և բարի ինչ¹⁶:

6 [Հաւալուան¹⁷]

[7.1]¹⁸ Ասէ մարգարէն. «Նմանեցայ ես հաւալսան յանապատի»¹⁹: [7.2] Բարոլոգիստան ասէ վասն հաւալսան թռչնոյ²⁰, թէ կարի որդէսէր է, [7.3] և յորժամ²¹ հանէ զձագն²² և սակաւ մի²³ աճեն²⁴, ապա թևաւքն հարկանեն²⁵ զերեսս հաւրն և մաւրն²⁶, [7.4] և նոքա յետ բազում համբերութեանցն ոչ կա-

¹ P զհիւանդութիւնս մեր *փի* զմեղս մեր և զհիւանդութիւնս

² P + էլ ի բարձունս

³ Սաղ. Կէ 19, Եփես. Գ 8

⁴ P *չիք* որդոց մարդկան

⁵ C Սոյնպէս և Քրիստոս ետես զհրեայսն, զի հիւանդացեալ էին մեղօք, դարձոյց զերեսն իւր ի նոցանէ, և մեռան զմահն յափտենից: Իսկ մեք զի հիւանդացեալ էաք մեղօք, յորժամ ետես զմեզ Քրիստոս, ոչ դարձոյց զերեսն իւր ի մէնջ, այլ զարիւնն իւր էնեղ ի վերա մեր և զցասաւ մեր վերացոյց և զհիւանդութիւնս մեր բժշկեաց *փի* [6.7-13]

⁶ C քաղանդոսն *փի* եթէ քաղանդ

⁷ C *չիք*

⁸ P է օրինակ վերկշին *փի* արինակ է Քրիստոսի

⁹ C Ո՞չ ապաքէն և վիշապն

¹⁰ C Տէրն

¹¹ C P բարձրացոյց Մովսէս

¹² C P բարձրանալ պարտ է

¹³ Յովն. Գ 14

¹⁴ C P օձն... առիւծն... ոչխարն

¹⁵ C + և սուրբ

¹⁶ P *չիք* [6.18] C Եւ իւրաքանչիւր սահմանի են *փի* [6.18]

¹⁷ Ա. խմբ. հաւալուան = πελεκάν

¹⁸ P + որպէս

¹⁹ Սաղ. ԺԱ. 7 | C *չիք* 7.1

²⁰ A B հաւալսանին C հալին

²¹ P իբրև

²² B զձագսն C հանեն զձագս, ոչ մեկնին ի նմանէ ծնօղին: Յորժամ

²³ P են | C *չիք* սակաւ մի

²⁴ C + և քաղցնուն ձագին

²⁵ C սկսանին ցտել *փի* ապա թևաւքն հարկանեն

²⁶ C ծնողացն | A + իւրեանց B զհոր և զմոր զերեսս իւրեանց

րասցեն տանել¹ և սրտմտեալ² կռփեն զնոսա և սպանանեն³: [7.5] Ապա վասն սաստիկ գթոյն դարձեալ⁴ սուգ առնուն զերիս աւուրս, թէ. «ընդէ՞ր սպանաք զորդեակսն մեր»: [7.6] Ապա յետ⁵ յերրորդ աւուրն⁶ գայ հայրն և⁷ նստի ի վերայ և ծակէ զկողս իւր և արին, որ իջանէ ի վերայ մեռեալ⁸ ձագուցն, կենդանացուցանէ զնոսա, և յառնեն⁹ ի մեռելոց¹⁰:

[7.7] Այսպէս Տէրն ասաց ի բերանոյ¹¹ մարգարէին Եսայեայ. «Որդիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին»¹²: [7.8] Վասն զի արարիչն ծնաւ զմեզ, և մեք զնա գան հարաք, վասն զի «պաշտեցին ազգ մարդկան¹³ զարարածս և ոչ զարարիչն»¹⁴: [7.9] Ապա եկն Տէրն¹⁵, ել ի բարձրութիւն խաչին և եբաց զսուրբ¹⁶ կողան իւր և կաթեցոյց արին և ջուր ի փրկութիւն յաւիտեանց: [7.10] Արինն՝ ըստ նմա, եթէ «Բաժակ առ և գոհացաւ»¹⁷ և ետ ի փրկութիւն ազգի մարդկան¹⁸: [7.11] Իսկ ջուրն՝ որով լուսաւորեցաք¹⁹ կենդանարար սուրբ աւագանին²⁰:

7 [Բու²¹]

[8.1] Բարուխաւան ասէ վասն բուոյ²², եթէ զգիշերն առաւել սիրէ, քան զցերեկն²³: [8.2] Այսպէս²⁴ Տէրն մեր Յիսուս Քրիստոս սիրեաց զաշխարհս²⁵,

¹ C P չիք յետ բազում համբերութեանցն ոչ կարացեն տանել

² P չիք և սրտմտեալ

³ C + գձագսն

⁴ P ի սուգ դառնան *ի/ս* վասն սաստիկ գթոյն դարձեալ

⁵ P չիք

⁶ C Եւ ինքեանմ հետանան զերիս աւուրս: Եւ յետ .գ. աւուրց *ի/ս* Ապա վասն սաստիկ... յետ յերրորդ աւուրն

⁷ C + ի սաստիկ գթոյն

⁸ C ցտէ զկողն և հանէ արին ի կողն իւր և կաթէ ի վերայ A B չիք և ծակէ զկողս իւր և արին, որ իջանէ ի վերայ մեռեալ

⁹ A B յառնէ

¹⁰ C Եւ առ ժամայն կենդանան ձագքն և թուցեալ կերակրին *ի/ս* կենդանացուցանէ զնոսա, և յառնեն ի մեռելոց

¹¹ P սոյնպէս ասաց Տէրն բերանով

¹² Եւ. Ա. 2

¹³ P չիք ազգ մարդկան

¹⁴ Հն. Ա. 25

¹⁵ P չիք

¹⁶ P չիք

¹⁷ Մտք. ԻԶ 27

¹⁸ P աշխարհի *ի/ս* ազգի մարդկան

¹⁹ P լուսաւորեալ կնեցաք

²⁰ C Սոյնպէս և Քրիստոս բացեալ զկողսն իւր խաչին եհեղ զարիւնն իւր սուրբ ի վերայ մեր և կերակրեաց զմեզ մարմնով և արեամբն իւրով *ի/ս* [7.7-11]

²¹ Ա. խմբ. բու = $\nu\kappa\tau\iota\kappa\acute{o}\rho\alpha\zeta$

²² C և դարձեալ ասացից վասն բու հատն *ի/ս* Բարուխաւան ասէ վասն բուոյ

²³ P գտիւ | C + և զի գիշակեր է և հպարտ, խաւարաւ կերակրի և զնոյն գործ սիրէ

²⁴ P սոյնպէս

²⁵ P զհեթանոսս

որպէս Եսայի ասէ. «Ժողովուրդ, որ նստէր ի խաւարի, ետես¹ զլոյս մեծ»², որ է Քրիստոս Աստուած:

[8.3] Որպէս փրկիչն ասաց. «Մի երկնչիր, հաւտ փոքրիկ, զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն»³: [8.4] Ապա թէ ասիցէ⁴, թէ բուն պեղծ թռչուն է, զի ա՞րդ է աւրինակ Քրիստոսի: [8.5] Ասեմ, թէ սուրբ առաքեալն զկենարարէն ասէ, թէ «այն, որ ոչ գիտէր մեղս, վասն մեր զմեղս արար»⁵, [8.6] եթէ «խոնարհեցաւ, զի զմեզ բարձրացուցէ»⁶, [8.6] զի «ընդ ամենայնի ամենայն եղև⁷, զի կեցուցէ զմեզ»⁸:

8 [Արծուի⁹]

[9.2] Բարուախաւան ասէ վասն արծուոյ¹⁰, թէ յորժամ ձերանայ, և ծանրանան թևքն նորա¹¹, և շլանան աչքն նորա¹², [9.3] ապա երթայ¹³ խնդրէ աղբեր ջրոյ և թռչի յաղբերէն ընդ աւդս¹⁴ և վերանայ ի բարձրութիւն արեգականն¹⁵ այնչափ, մինչև¹⁶ խարակէ զթևս և զաչացն շլութիւն թափէ և իջանէ յաղբիւրն երիցն անգամ մկրտի և դարձեալ մանկանայ¹⁷:

[9.4] Մեկնութիւն բանիս¹⁸: Այսպէս¹⁹ և դու, ով մարդ, եթէ կուրանան աչք սրտիդ, խնդրեա զիմանալի աղբիւրն Աստուծոյ՝ զարէնս և զմարգարէսն և

¹ P տեսին

² Մաթ. Դ 16

³ Դուկ. ԺԲ 32

⁴ P + nf

⁵ Բ Կոր. Ե 21

⁶ Բ Կոր. ԺԱ 7

⁷ A B ի խաչ բարձրացաւ և ապտակեցաւ *ի*ս վասն մեր զմեղս արար, եթէ խոնարհեցաւ, զի զմեզ բարձրացուցէ, զի ընդ ամենայնի ամենայն եղև

⁸ Հմմտ. Ա. Կոր. Թ 22 | C Իսկ առիւծն օրինակ է Քրիստոսի. յորժամ ի յորս ելանէ և ոչ ժամանէ յորջն, գա բոյն և մտանէ ի բուն առիւծին և գոր ինչ գտանէ, հափշտակէ: Սոյնպէս աստանայ երթայ ի գիշերի առ եկեղեցականս և գորս գտանէ, խաբեալ կորուսանէ *ի*ս [8.2-6]

⁹ Ա խմբ. արծուի = ἀετός

¹⁰ C Եւ դարձեալ արծիւն

¹¹ C *չ*բ

¹² C + և ոչ կարէ առնել որս, ջանայ թոչիլ և ոչ կարէ

¹³ C *չ*բ

¹⁴ P յօդս | C յակունս աղբերաց ֆաղցրահամս և անուշահոտս, նշանակէ զտեղին *ի*ս աղբեր ջրոյ ... ընդ աղս

¹⁵ C յօթս և հասանէ մինչև արեգակն *ի*ս ի բարձրութիւն արեգականն

¹⁶ P և *ի*ս այնչափ մինչև

¹⁷ C զի գիտենայ, որ թևն և անդամք մարմնոյն խանձեցաւ: Ապա իջեալ լուանայ աղբիւրն բազում անգամ և դարձեալ մտանէ ի ֆարանձաւս վիմաց, ի նեղ տեղի մի դէմ յարևելից: Եւ յորժամ ելանէ արեգակն, գոհանայ զԱստուծոյ և խնդրէ զնորոգումն մարմնոյ իւրոյ: Եւ տայ նմա Աստուած զխնդրելին իւր: Եւ դարձեալ մանկանայ ըստ Դաւթի, որ ասէ. «նորոգեցի որպէս արծոյ զմանկութիւն քո» (Սաղ. ճԲ 5) *ի*ս խաբակէ զթևս... մանկանայ

¹⁸ C P *չ*բ մեկնութիւն բանիս

¹⁹ C նոյնպէս P սոյնպէս

զսուրբ տաճարս¹, [9.5] և անտի թուուցեալ ել ի բարձր արեգակնն² արդարութեան, որ է Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և այրեսցէ զհին թևսն, զոր զգեցոյց սատանայ³, [9.7] և մկրտեա⁴ ի հոգևոր աղբիւրն, յանուն Հաւր և Որդւոյ և Հոգոյն սրբոյ⁵, և մերկացիր զհին մարդն գործովք իւրովք և զգեցիր զնորն, [9.8] որպէս ասէ Դաւիթ. «նորասցի⁶, որպէս արծուոյ զմանկութիւն քո»⁷:

9 [Արմաւ⁸]

[10.2] Բարուախաւան ասէ. է ինչ թուշուն ի հնդիկս, որ կոչի արմաւ: Ըստ .ՆՃ. (500) ամի գնա⁹ ի լեառն Լիբանանու և բառնայ ի վերայ թևոց իւրոց ծառս մեծամեծս¹⁰ [10.3] և երթայ ազդ¹¹ առնել քրմին Արեգ քաղաքին յամսեանն փարմութէս¹², որ է արեգ ամիս: [10.4] Եւ քուրմն իմանայ և¹³ մտանէ ի բագինն և լնու զնա որթոյ փայտիւ: [10.5] Գա հաւն և իջանէ յԱրեգ քաղաք և մտանէ ի բագինն¹⁴ և նստի ի վերայ դիզեալ փայտին և հարկանէ զանձն ընդ փայտին և անձամբ այրէ զանձն իւր¹⁵: [10.6] Եւ ի վաղիւն մտանէ քուրմն ի բագինն¹⁶ և սրբէ¹⁷ զմոխիրն և գտանէ անդ որդն¹⁸, [10.7] և ապա յերրորդ աւուր թևս արձակէ¹⁹ և երթայ ի տեղի իւր²⁰:

¹ P ակետարանս փ/ս զվարգարէսն և զսուրբ տաճարս

² P բարձունս արեգականն

³ P զգեցար ի սատանայէ

⁴ P չ/ք

⁵ A սուրբ Հոգոյն

⁶ P նորոգեսցէ

⁷ C յորժամ ծերանաս մեղօֆ, այսպէս արա, որպէս զարծիւ. թուուցեալ մերկացիր զամենայն աղտեղութիւնս մեղաց և ընդդէմ յարևելից խնդրեալ զարեգակն արդարութեան զՔրիստոս և հայցէ ի նմանէ զթողութիւն մեղաց քոց և զնորոգումն հոգոյ, որով մանկացեալ զօրասցիս նորափետուր արփիափայլ հրաշիւֆ և լուսեղէն ամպօվֆ վերանալ յօդս ընդառաջ Քրիստոսի Աստուծոյ մերո փ/ս եթէ կուրանան աչք սրտիդ... զմանկութիւն քո (9.4-8)

⁸ Ա խմբ. փիւնիփս = φοίνιξ

⁹ P գայ

¹⁰ C Եւ դարձեալ ասէ վասն հատուն, որ կոչի արմաւ: Ի փիւնիկեցոց աշխարհին է, զնա ի լեառն մայրին Լիբանանու մօտ առ խունկս անուշահոտս և բառնա ի վերա թևոց իւրոց ծառս մեծամեծս և տարեալ շինէ իւր բոյնս: Եւ ի սկսելոյն մինչև ի վերջն լինին ամֆ .ՆՃ.: Եւ իբրև կատարէ, մտանէ ի ներս ուրախանայ, ծափս հարկանէ փ/ս Բարուախաւան ասէ... մեծամեծս

¹¹ A B աստ

¹² P + այսինքն

¹³ P չ/ք իմանայ և

¹⁴ P չ/ք և իջանէ յԱրեգ քաղաք և մտանէ ի բագինն

¹⁵ C Եւ ի թևոցն հուր վառեալ, այրէ զտունն և զինքն ատուրս երիս փ/ս [10.3-5]

¹⁶ A ի բագինն հուրմն

¹⁷ P որոնէ

¹⁸ C չ/ք [10.6]

¹⁹ P թևս գործէ յերրորդ ատուրն

²⁰ C Եւ ատուրն երրորդի գտանի որդն մի ի մէջ նեխեալ մսին և օր ըստ օրէ գոյանայ և լինի հաւ որպէս զինքն փ/ս [10.7]

[10.9] Մեկնութիւն բանիս այս է¹ Այսպէս² և Տէրն մեր Յիսուս Քրիստոս խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ և էջ յարգանդ սուրբ կուսին յամսեանն արեգ, որ ար .ժ. էր ամսոյն³, և .լ. ամ շրջեցաւ յաշխարհի և կանգնեաց զփայտ խաչին իւրով սուրբ թիկամբքն և իշխանութեամբ ականդեաց զհոգին ի վերայ խաչին, ըստ այնմ. «Իշխանութիւն ունիմ դնել⁴ զանձն իմ»⁵, իջեալ ի գերեզման զկնի երից աւուրց յարեալ⁶ ի մեռելոց և թուրցեալ վերացաւ և նստաւ ընդ աջմէ հար ի բարձունս⁷:

10 [Ճայ⁸]

[11.3] Բարուխաւան ասէ վասն ճային, թէ որդիքն⁹ տեսանեն զճնաւդսն¹⁰ ծերացեալ և յաչացն վատեալ, փետեն¹¹ զհին թևս ծնողացն և լեզուաւք զաչսն ջեռուցանեն, և [11.4] անդէն մանկանան¹²: Եւ բառնան ի վերայ յուսոց¹³ և ըստ կամաց ծնողացն գնան: Համարեա թէ այնպէս ասեն, թէ¹⁴ [11.5] «որպէս¹⁵ թէ դուք զմեզ սնուցիք, և մեք ձեզ զփոխարէնն հատուցանեմք¹⁶»: [11.6] Եւ արդ¹⁷ զհարգ մարդիկ բանականք¹⁸ և խաւսունք¹⁹ ոչ սիրեն զհայր և զմայր իւրեանց: [11.1] Որպէս գիրք ասեն. «որ բամբասէ զճնաւդսն²⁰, մահու վախճանեսցի»²¹: Ապա պարտ է սիրել զճնաւդս, զի այն հաճոյ է աստուծոյ և մարդկան²²:

¹ B չիք բանիս այս է P չիք մեկնութիւն բանիս այս է

² P սոյնպէս

³ P չիք

⁴ B գնալ

⁵ P + և իշխանութիւն ունիմ առնուլ զսա | Հմմտ. Յովն. Ժ 18

⁶ P հայր յարոյց գնա

⁷ C Զի ոչ է սա իբրև զայլս ախտային, այլ սուրբ և միաձին օրինակ որդոյն Աստուծոյ: Զի որպէս Տէրն ասաց. «Իշխանութիւն ունիմ դնել զանձն և միասնգամ առնուլ զնա»: Որչափ ևս առաւել դու, որ ըստ պատկերի Աստուծոյ եղեալ ես, զի հաստատես զէզ և վերանաս ի յօդս վերին *ի/ս* [10.9]

⁸ Ա. իւմբ. յոպոպ = ξποψ

⁹ P իբրև

¹⁰ P զհայրն և զմայրն իւրեանց

¹¹ B քափեն

¹² C + ծնողքն

¹³ C + իւրեանց

¹⁴ C չիք համարեա թէ այնպէս ասեն, թէ

¹⁵ P չիք

¹⁶ P չիք փոխարէնն հատուցանեմք

¹⁷ C չիք

¹⁸ P ասունք

¹⁹ C բանականք մարդիկ

²⁰ A B չիք Որպէս գիրք... զճնուսն

²¹ Հմմտ. Ել. ԻԱ 17, Մաթ. ԺԵ 4, Մարկ. է 10:

²² C զի պարտ է սիրել զճնուսն, որպէս ասէ Տէր, թէ. «պատուեա զհայր և զմայր ևս», և «որ անարգէ զճնուսն, մահու վախճանեսցի» *ի/ս* Որպէս գիրք... և մարդկան

11 [ԻԺ¹]

[13.2] Բարուախաւան ասէ վասն իժին. յորժամ² ընդ իգին լինի, ընդ բերանն առնու գսերմն [13.3] և գսերմն³ կլանէ և զկարևորս⁴ արուին կտրէ, և մեռանի արուն: Քանզի գիտէ արուն, թէ յորժամ ընդ էգին խառնակի⁵, մեռանի, [13.4] բազում անգամ երթայ և գայ առ էգն և յետոյ⁶ դառնայ⁷: Եւ յետոյ ոչ կարէ ժուժել⁸ ցանկութեանն, լինի ընդ իգին⁹ և մեռանի: [13.5] Եւ իգին չիք¹⁰ որովայն, որով զծնունդն կրիցէ¹¹: Եւ¹² աճեն կորիւնքն, ծակեն զկողս մարն և ելանեն և սպանանեն զնա¹³: [13.6] Եւ այնպէս մայրասպանք և հայրասպանք լինին¹⁴: [13.7] Ապա Յովհաննէս բարիօք նմանեցոյց զփարիսեցիսն իժից: Զի որպէս իժն սպանանէ զհայրն և զմայրն իւր, այնպէս և հրեայքն զտէր Յիսուս սպանին¹⁵, զմարգարէքն կոտորեցին և զառաքեալքն սպանին¹⁶ և շարշարեցին¹⁷: [13.9] Բայց հայրն Աստուած¹⁸ և մայր սուրբ առաքեալքն և մարգարէքն սորա¹⁹ կենդանի են յաւիտեան, և հրեայքն սատակեցան²⁰:

12 [Աւձ²¹]

[14.2] Բարուախաւան ասէ, թէ²² .գ. բարք են աւձի. [14.3] նախ՝ յորժամ²³ ծերանայ²⁴, վատեն աչքն իւր²⁵, [14.4] ի պահս մտանէ .խ. արն²⁶, թուլանայ մորթն, [14.5] և ապա²⁷ գտանէ քարածերպ ինչ նեղ և մտանէ ի պինդս²⁸ և ձգէ

¹ Ա խմբ. իժ = էջիծոյ

² P զիժէ, իբրև

³ C P չիք

⁴ C զկարևորն

⁵ P խառնի

⁶ P յետս

⁷ C չիք և յետոյ դառնայ

⁸ C ոչ ժուժեալ | P ոչ կարէ ժուժկալել

⁹ C խառնակի փս լինի ընդ իգին

¹⁰ C ոչ գոյ

¹¹ C չիք որով զծնունդն կրիցէ

¹² P իբրև C յորժամ

¹³ P զնոսա C զմայրն

¹⁴ C ծնողքն սատակին, և ձագերն սնանին առանց ծնողաց փս [13.6]

¹⁵ P սպանին զտէր Յիսուս

¹⁶ P և զառաքեալսն և զմարգարէսն և փս զմարգարէքն կոտորեցին և զառաքեալքն

¹⁷ C Այսպէս և հրեայք սպանին զմարգարէքն և զՔրիստոս: Վասն այն սուրբն Յովհաննէս ասաց. «ծնունդի իժից» փս [13.7]

¹⁸ P + և սնուցիչ

¹⁹ P կեն

²⁰ C չիք [13.9] | P + իսպառ

²¹ Ա խմբ. աւձ = օփուց

²² C Եւ զի փս Բարուախաւան ասէ, թէ

²³ P ա՝ իբրև

²⁴ C P + և

²⁵ C չիք

²⁶ C P or և

²⁷ P + երթայ յետ .խ. տունջեան և զիշերոյ

²⁸ P պինդով | C մտանէ ի նեղ փարածերպ փս գտանէ փարածերպ ինչ նեղ և մտանէ ի պինդս

զխորխն և նոր¹ մանկանայ, [14.6] ըստ այնմ թէ. «նեղ է² դուռն և անձուկ ճանապարհն, որ տանի ի կեանսն յաւիտենից»³:

[14.7] Երկրորդ բարք աւձին՝ յորժամ երթայ ի գետն⁴ ըմպել ջուր, ոչ տանի զթոյնսն իւր ընդ իւր, այլ ի յայրի ուրեք և կամ ծածուկ տեղոջ թափէ⁵: [14.8] Այսպէս⁶ և մեք, յորժամ⁷ ժողովիմք ըմպել զջուրն կենդանի և լսել զաստուածային բանս⁸ յեկեղեցիս⁹, ոչ է պարտ տանել ընդ մեզ զերկրաւոր զթոյնս զպղծալիցս և մրրախառն զցանկութիւնս և զայլ սաստս¹⁰ մի ըստ միոջէ¹¹:

[14.9] Երրորդ բարք աւձին՝ յորժամ տեսանէ զմարդն մերկ, բերկրի և ցանկայ նմա¹²: Եւ եթէ անկեալ տեսանէ, յարձակի ի վերայ և սպանանէ զնա¹³:

[14.11] Այսպէս և առ մեզ զաներևոյթ աւձն իմացիր¹⁴. հայրն մեր Ադամ, որքան ի պատուիրանին էր¹⁵, ոչ կարաց դիմել ի վերայ սատանայ¹⁶: [14.1] Վասն այսորիկ Տէրն ասաց. «Եղերուք խորագէտ, որպէս գաւձ»¹⁷:

13 [Մրջիմն¹⁸]

[15.2] Բարոյախաւան ասէ, թէ երեք բարք են մրջման¹⁹. [15.3] նախ²⁰ յորժամ տողեալ միմեանց զհետ²¹ երթան և²² իւրաքանչիւր հատ բերիցեն²³, և

¹ P չիք

² C չիք

³ Հմմտ. Մտք. է 14 | C P չիք յաւիտենից

⁴ P + կամ յաղբիւր

⁵ C գրիւնսն թափէ ի վերայ քարի և սպա ողողէ զբերանն, զի մի թիւնն ի ջուր վաթեալ վնաս գործէ ըմպողացն *փի* ոչ տանի... տեղոջ թափէ

⁶ P սոյնպէս

⁷ P իբրև

⁸ A գբանս

⁹ P յեկեղեցոջն

¹⁰ P զայլս *փի* զայլ սաստս

¹¹ C չիք [14.8]

¹² C ուրախանայ, զի անպատրաստ եգիտ, և կամի, զի վազէ ի վերայ *փի* բերկրի և ցանկա նմա

¹³ P չիք և սպանանէ զնա | C հագումն լինի, ոչ իշխէ մերձենալ, զի ոչ ունի հրաման *փի* անկեալ տեսանէ... զնա

¹⁴ P իմացոմ

¹⁵ P մինչ մերկ էր ի դրախտին *փի* որքան ի պատուիրանն էր

¹⁶ C Քանզի ի դրախտին ոչ կարաց կատարել զշարոսթիւնն, զի Ադամ զգեցեալ էր աստուածային զփառսն: Իսկ յորժամ մերկացաւ, սպա յարեալ ի վերայ նորա: Այսպէս և սատանայ բազում անգամ հնարէ կորուսանել զմեզ, զի յորժամ մերկ գտանէ աստուածային պատուիրանացն զմարդն, դիւրաւ ընկղմէ *փի* 14.11

¹⁷ Մտք. Ժ 16 | C չիք 14.1

¹⁸ Ա. խմբ. մրջիմն = մւրջիմն

¹⁹ P վասն մրջման. .գ. բարբ ունի մրջիմն *փի* ասէ, թէ երեք բարբ են մրջման

²⁰ P .ա. բարբն

²¹ C տողեալ զհետ միմեանց P տողին զկնի միմեանց

²² C զի

²³ P իւրաքանչիւր երթեալ հատ բերիցէ

կէսքն դատարկք զկնի¹ շրջեսցին², [15.4] ոչ նախանձին ընդ դատարկքն³ և ոչ ասեն⁴, թէ «ընդէր մեք ունիմք, և դուք՝ ոչ⁵»: [15.5] Այս⁶ իմաստուն և յիմար կուսանացն⁷ է, որք ոչ ետուն յիւղոյն⁸, այլ առ⁹ վաճառականսն առաքեցին¹⁰:

[15.6] Երկրորդ բարք մըջմանն. [15.11-12] յորժամ երթան¹¹ յանդաստանն [15.12] ժողովել¹² զհատն, հոտոտի¹³ յանդաստանն, եթէ գարոյ է հատն, թէ ցորենոյ¹⁴. [15.13] Ի գարոյն փախչի և ի¹⁵ ցորեանն երթայ¹⁶, քանզի ասէ, թէ գարին անասնոյ է կերակուր¹⁷: [15.14] Որպէս Յոբ ասէ¹⁸. «փոխանակ ցորենոյ բուսցի¹⁹ գարի»²⁰: [5.15] Այսպէս և դու, ով մարդ, փախիր ի փարիսեցոցն շար վարդապետութենէն, զի գիրն սպանանէ, և հոգին կեցուցանէ²¹:

[15.6] Իսկ²² երրորդ բարք²³ մըջմանն. յորժամ երթայ²⁴ յանդաստան ժողովել զհատն²⁵ ի յորջսն իւր և²⁶, ընդ մէջն կտրէ²⁷ և ասէ²⁸ գուցէ ձմեռն գայցէ և անձրևք լինին²⁹ և բուսանին հատքն, և ես սովամահ մեռանիցիմ³⁰: [15.7] Այսպէս և դու, ով մարդ, իմացիր³¹, յորժամ շարն ի սիրտդ³² անկանի,

¹ B զկնի դատարկ

² C շրջին P շրջիցին

³ P չէք ոչ նախանձին ընդ դատարկքն

⁴ C չէք ընդ դատարկքն և ոչ ասեն

⁵ P + ոչ նախանձին ընդ միմեանս, մինչև երթան ի տեղին, ուստի նոքա բարձին

⁶ C և այն

⁷ C + օրինակ

⁸ P չէք

⁹ P ի

¹⁰ Հմմտ. Մտք. Իե 1-13 | C յղեցին

¹¹ C գնան

¹² C չէք

¹³ P հոտոտեն

¹⁴ C չէք յանդաստանն, եթէ գարոյ է հատն, թէ ցորենոյ

¹⁵ C չէք

¹⁶ C առնուն

¹⁷ C չէք փանզի ասէ, թէ գարին անասնոյ է կերակուր

¹⁸ C P ասէ Յոբ

¹⁹ P բուսուցի C բուսուցեք ինձ

²⁰ Հմմտ. Յոբ ԼԱ 40

²¹ C չէք [5.15]

²² C չէք

²³ A B բառն

²⁴ C գնան

²⁵ C գհատն

²⁶ C ի յորջն | P չէք և

²⁷ C մէջ կտրեն

²⁸ C զի մի չէք և ասէ

²⁹ C անձրև գայցէ փ/ս գայցէ և անձրևք լինին

³⁰ C բուսանիցի, և ինքեանք սովամահ լիցին փ/ս բուսանին հատքն, և ես սովամահ մեռանիցիմ

³¹ C չէք

³² C շար ի սիրտ ֆո

կտրել զնա, զի մի գայցէ ձմեռն սատանայ և բուսուցանէ¹ ի սիրտդ, և դու սովամահ մեռանիցիս² ի կենաց հացէն և յանմահական³ բաժակէն⁴:

14 [Յուշկապար⁵]

[16.2] Բարուախաւան ասէ յուշկապարէն, թէ⁶. մահաբերք⁷ են և⁸ ի ծով⁹ [16.3] երգեն զերգս քաղցրաձայն¹⁰. և նաւորդքն, որ անցանեն, այնպէս հեշտալի թվին¹¹ նոցա, մինչև ի հեշտութենէն¹² անկանին ի ծովն և կորնչին: [16.4] Եւ կերպարանք նոցա մինչև ի պորտն կնոջ մարդոյ¹³ է, և կէսն՝ ի նմանութիւն թռչնոյ: [16.5] Նոյնպէս և իշացուլն կէսն իշոյ¹⁴, և կէսն ցլոյ¹⁵:

[16.6] Այսպէս «մարդ¹⁶ երկմիտ անհաստատ է յամենայն ճանապարհս իւր»¹⁷: [16.8] Որպէս այժմ կան յեկեղեցի, որ ունին զկերպարանս աստուածապաշտութեան, և քաղցրաբանութեամբ¹⁸ և արհնութեամբ խաբեն զմարդիկ¹⁹: Յորժամ յեկեղեցիս մտանեն, զգառանց²⁰ կերպ²¹ ցուցանեն և ի ներքոյ են գալլ յափշտակաւոր: [16.9] Այսպիսիք են, որ²² զյուշկապարկացն արինակն յանձինս²³ ցուցանեն՝ զխաբէութիւն և զհերձուածս²⁴: [16.11] Որպէս ասէ. «Ապա-

¹ C բուսուցել

² C մեռցիս

³ C անմահ

⁴ P [15.6] .Բ. բարբն՝ յորժամ երթա յանդաստան ժողովել հատ և բերել յորչս իւր, ընդ մէջն կտ[րէ], ասէ. զուցէ ձմեռն գայցէ, և անձրևի լինին, և բուսանին հատն, և ես սովամահ մեռանիցիմ: [15.11] .Գ. բարբն այս է. իբրև ելանէ յանդաստանն ժողովել զհատսն, [15.12] հոտոտի, եթէ զարոյ իցէ, եթէ ցորենոյ, [15.13] ի զարոյն փաղչի և ի ցորենն երթայ, քանզի ասէ, թէ «գարին անասնոց է կերակուր», [15.14] որպէս և Յոբ ասէ. «փոխանակ ցորենոյ բուսցին ինձ գարի»: [15.7, (15.15)] Սոյնպէս և դու, ով մարդ, փախիր ի փարիսեցոցն չար վարդապետութենէն, «զի գիրն սպանանէ և հոգին կեցուցանէ» (Բ Կոր. Գ 6) *փխ* [15.6-7]

⁵ Ա խմբ. յուշկապարիկ = ΣΕΙΡΩΝ

⁶ C յուշկապարսն

⁷ P մահաբեր գազանք

⁸ C չիք

⁹ C ծովս P ծովու

¹⁰ C P քաղցրաձայնս

¹¹ P թուփ ձայնք C թուփ

¹² C անուշ եղանակէն թմրին և P ի հեշտութենէ ձայնին

¹³ C չիք

¹⁴ C P + է

¹⁵ P ցլոյ... իշու

¹⁶ C այր

¹⁷ Հմմտ. Յակ. Ա 8

¹⁸ P քաղցր բանիք

¹⁹ C չիք Որպէս այժմ կան յեկեղեցի... խաբեն զմարդիկ | P + և ի զօրութենէ անտի ուրագեալք գտանին

²⁰ C զգառան

²¹ P կերպարան

²² C այնպիսիքս, որք

²³ C ունեն զօրինակ *փխ* օրինակն յանձինս

²⁴ C զհերձուածոս *փխ* զխաբէութիւն և զհերձուածս

կանեն զբարս քաղցունս բարք շարք»¹: [16.1] Վասն այսորիկ² Եսայի ասէ³. «Յուշկապարիք բնակեսցեն անդ⁴»:

15 [Ոզնի⁵]

[17.1] Բարոյախաւան ասէ վասն ոզնոյ, թէ գնդաձև կերպարան ունի, և ողն իւր վառեալ և⁶ լցեալ է փշովք: [17.3] Եւ յորժամ⁷ ելանէ յողկոյզ որթոյն, [17.4] կորզէ⁸ և արկանէ ի վայր⁹ զպտուղն և շեղջէ¹⁰ ի գետնինն և իջեալ¹¹ թաւալի ի վերա¹², և կռուի պտուղն¹³ ի խոցիչ¹⁴ փուշն, և առեալ տանի ձագուց իւրոց¹⁵ և թողու շին միայն անդր¹⁶:

[17.6] Նոյնպէս և դու, ո՛վ կրանաւորդ նահատակեալդ, որ կաս պահապան ճշմարիտ¹⁷ այգոյն, որ եկեալ հասեալ է¹⁸ պտուղն յիմանալի¹⁹ հնձանն, ժողովէ²⁰ ի շտեմարանս երկնաւորի²¹ թագաւորին²² Քրիստոսի, ըստ այնմ բանին որ ասէ. «Գանձեցէ՛ք ձեզ երկինս, զի ուր գանձն լիցի, անդ և սիրտք ձեր եղիցին»²³: [17.7] Ընդէ՞ր տայցես թոյլ ոզնոյն ելանել ի բարունակս քո և ապականել զառաքինութիւնս²⁴, և խայթոցք մահու ծակոտեալ վտարանդի առնեն²⁵ զբարի գործս²⁶ քո: [16.1] Որպէս ասէ մարգարէն²⁷. «Ոզնիք ձագս հանցեն անդ»:

¹ Ա. Կոր. ԺԵ 33

² C չիք ասէ. «Ապականեն զբարս քաղցունս բարք շարք», վասն այսորիկ

³ C P ասէ Եսայի

⁴ Հմմտ. ես. ԺԳ 22 | P չիք

⁵ Ա. խմբ. ոզնի = ἔχινος

⁶ C չիք վառեալ և

⁷ P իբրև

⁸ C յորժամ գնայ յորթն, ողկոյզն կտրէ փիւ եւ յորժամ ելանէ յողկոյզ որթոյն, կորզէ

⁹ P խոնարհ

¹⁰ C կուտէ P շղջին

¹¹ P իջանէ C չիք

¹² C + նորա

¹³ B կպի պտուղն C շարէ զպտուղսն

¹⁴ C չիք

¹⁵ C ձագերուն

¹⁶ C թող անդ շին միայն P լոկ շրուանդն

¹⁷ P ճիշտ

¹⁸ P իցէ

¹⁹ P + և ի նշմարիտ

²⁰ P + և շտեմարանեա

²¹ P չիք

²² P + անդէն հասեալ ի սուրբ անտարանն

²³ Հմմտ. Մատթ. Զ 20-21 | P և ժամանեալ ի կեանսն յալիտենից փիւ ըստ այնմ բանին... և սիրտք ձեր եղիցին» | C չիք ո՛վ կրանաւորդ նահատակեալ... և սիրտք ձեր եղիցին»

²⁴ C P գառափնութիւն քո

²⁵ C առնել

²⁶ P գառափնութիւն

²⁷ P չիք

16 [Աղուէս¹]

[18.1] Բարուախաւսն ասէ զաղուեսէ², թէ ամենևին³ նենգաւոր է և խաբող անասնոց: [18.2] Ձի յորժամ⁴ քաղցնու և ոչ գտանէ կերակուր, երթայ գտանէ ջրաշէղջ⁵ կամ ցխոտ⁶ տեղիս, կամ ուր⁷ յարդ կայցէ⁸ կամ⁹ մոխիր, թաւալի և երթայ ի դաշտն¹⁰ և անկանի յորսայսն ի վեր¹¹ և զշունչն յինքն¹² ամփոփէ և զանձն ուռուցանէ¹³: [18.3] Եւ համարին թռչունք, թէ մեռեալ իցէ, և իջանեն յուտել զնա. [18.4] և այնպիսի խաբէութեամբ¹⁴ յարուցեալ թափէ զփորս նոցա և շարամահ մահուամբ մեռուցանէ¹⁵ զնոսա¹⁶:

[18.5] Նոյնպէս սատանայ՝ փոքր է, և մեքենայք նորա ծածուկք¹⁷: [18.6] Եւ որք կամին ճաշակել ի մարմնոյ նորա, մեռանին¹⁸: [18.7] Ձի մարմինք սատանայի պոռնկութիւնք են և արծաթսիրութիւն, ատելութիւն, հպարտութիւն, որովայնամորութիւն և զրկանքն, նախանձն և ագահութիւն¹⁹ և այլ ամենայն չարիքն²⁰: [18.8] Որ և զչերովդես աղուեսու նմանեցուցանէր տէրն²¹, [18.9] և դպիրն ի Տեառնէ լուա²², թէ. «աղուեսուց որջ²³ գոն և թռչնոց երկնից բոյնք²⁴»:

¹ Ա խմբ. աղուէս = ἄλωπιξ

² C աղուէսն է P վասն աղուէսէ

³ C չէք

⁴ P իբրև

⁵ C ջրաշէղջս P չէք

⁶ C ցեխոտ

⁷ P չէք

⁸ C լիցի P չէք

⁹ C չէք

¹⁰ P չէք ի դաշտն

¹¹ B վայր P վերև | C անդ, զկերպարանն այլայլէ և զնացեալ անկանի ի դաշտս *ի/ս* և երթայ... ի վեր

¹² C առ ինքն

¹³ C լինի իբրև զսատակեալ, որ ոչ ոք կարծէ զնա կենդանի *ի/ս* զանձն ուռուցանէ

¹⁴ P խաբանօք

¹⁵ P սատակէ

¹⁶ C տեսեալ հաւուց զնա մեռեալ և ժողովին յարուցանել, ըմբոնէ զնոսա և ոստէ ասելով. «մեռեալս յարուցեալ ոստեմ զկենդանիքդ» *ի/ս* [18.3-4]

¹⁷ P մեծամեծք | C Սոյնպէս և սատանայ քննի կերպարանօք և զբազումս մոլորեցուցանէ *ի/ս* [18.5]

¹⁸ C չէք [18.6] | P սատակին

¹⁹ P չէք ատելութիւն, հպարտութիւն, որովայնամորութիւն և զրկանքն, նախանձն և ագահութիւն

²⁰ C չէք [18.7]

²¹ Հմմտ. Ղուկ. ԺԳ 32 | P աղուէսուց նմանեցոյց

²² P լուա ի տեսունէ

²³ C որջք

²⁴ Մտք. Ը 20, Ղուկ. Թ 58 | C չէք և թռչնոց երկնից բոյնք

[18.10] Եւ յԱւրհնութիւնն¹ ասէ, «Կալարուք մեզ աղուեսս փոքուն² ապակա-
նիչս այգեացն³»: [18.11] Եւ Դաւիթ ասէ, «Բաժինք աղուեսուց եղիցին»⁴:

17 [Յովագ⁵]

[19.2] Բարուախաւսն ասէ վասն յովագու, թէ ամենայն անասնոց սիրելի⁶
է և աւծի թշնամի. [19.3] ամենախայտ է, որպէս զծաղկեայ պատմուճանն Յով-
սեփու, [19.4] գեղեցիկ և զարդարուն, որպէս⁷ զգլխոյ: [19.5] Զոր Դաւիթ
ասաց⁸. «Կացցէ դժխոյ ընդ աջմէ քումէ»⁹: [19.6] Յորժամ¹⁰ ուտիցէ ինչ կերա-
կուր և¹¹ ի քուն մտանէ ի մայրոջն և յետ երից աւուրց ապա¹² յառնէ յովագն ի
քնոյ անտի [19.8] և, յորժամ յառնէ¹³, գոչէ մեծաձայն. [19.9] և որ մատա-
կայ¹⁴ գազանքն են և որ հեռի¹⁵, զհետ նորա գնան¹⁶, վասն զի հոտ անուշ
բուրէ¹⁷ ի բերանոյ նորա¹⁸:

[19.10] Այսպէս¹⁹ և Տէրն մեր Յիսուս Քրիստոս²⁰ յերրորդ յաւուր յարեալ ի
մեռելոց, և հոտ անոյշ²¹ բուրեաց մեզ²², «հեռաւորացս և մերձաւորացս»²³:
[19.11] Եւ որպէս յովագն բազմաձողիկ է, այսպէս պարտ է իմանալ զիմաստ
Տեառն²⁴ մերոյ զողորմածութիւն և զմարդասիրութիւնն Քրիստոսի ի վերայ

¹ C յերգում

² C զաղուէսունս փոքունս | P չիք փոքուն

³ Երգ. Բ 15 | C P + մերոց

⁴ Սաղ. ԿԲ 11

⁵ Ա իսմբ. յովագ/պանթեր = πόνθηρ

⁶ P թշնամի

⁷ P իբրև

⁸ P յորմէ ասաց Դաւիթ

⁹ Հմմտ. Սաղ. ԽԴ 10 | C չիք [19.4-5]

¹⁰ P իբրև

¹¹ C չիք P + յագի

¹² C չիք

¹³ C չիք յովագն ի քնոյ անտի և, յորժամ յառնէ | P ի քնոյ իւրմէ և, իբրև յառնեն

¹⁴ P մօտ

¹⁵ C որբ մօտաւորբ և հեռաւորբ

¹⁶ C երթան

¹⁷ C բղխէ

¹⁸ P չիք

¹⁹ C որպէս

²⁰ C չիք Յիսուս Քրիստոս

²¹ C անուշութեան

²² P չիք

²³ Հմմտ. Եփես. Բ 17

²⁴ B զիմաստունս չիք զիմաստ տեառն

բարեաց¹: [19.1] Վասն այսորիկ² ասէ մարգարէն³ ի դէմս Քրիստոսի, թէ «պատահեցից նմա⁴ որպէս յովազ ի ճանապարհի»⁵:

18 [Վահանակիր⁶]

[20.2] Բարուախաւսն ասէ. է գազան ինչ ի ծովու⁷, որ կոչի վահանակիր: [20.3] Յոյժ սաստիկ է⁸ գազանն: [20.4] Եւ առ ի⁹ չգտանելոյ նաւորդացն հանգիստ¹⁰ անդր երթան¹¹ վարսելով ի նմա, և զխարիսիսն¹² ընկենուն ի ծովն: [20.5] Եւ յորժամ կրակ լուցանեն, առնու զնաւն և յատակ¹³ ծովուն իջանէ¹⁴, և կորնչին ամենեքեան¹⁵, որք ի նա ապաւինեցան:

[20.7] է և այլ ինչ բնական¹⁶ բարք գազանին: Յորժամ¹⁷ քաղցնու, բանայ զբերան¹⁸ իւր, և ի բերանոյն¹⁹ բուրէ հոտ անոյշ: [20.8] Ապա²⁰ երթան²¹ մանր ձկունքն ամենայն ի բերան նորա կուտին. և յորժամ լնու զբերանն²² ձկամբք, ածէ առ ամենեսեան²³ զցոռկսն և կլանէ զձկունսն²⁴, բայց մեծամեծքն ոչ ըմբռնին ի նմանէ:

[20.9] Արգ պարտ է իմանալ զծովն²⁵ զաշխարհս, և գազանն²⁶ սատանայ,

¹ P Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի, յորում է ողորմութիւն և կուտութիւն, հաւատք *փի* մերոյ զողորմածութիւն ... ի վերայ բարեաց | C *չիք* [19.11]

² C որպէս

³ C P մարգարէն ասէ

⁴ P վասն Աստուծոյ, թէ «պատահեցայց *փի* ի դէմս Քրիստոսի, թէ «պատահեցից նմա

⁵ Հմմտ. Օվս. ԺԳ 7 | P + քանզի ոչ առանց գիտութեան զանասնոց և զքոչնոց խօսեցան զիրք մարգարէից յաստուածային բանսն. օրհնեալ է Աստուած

⁶ Ա. խմբ. վահանակրեայ = ἄσπιδοχέλωνη

⁷ C ծով

⁸ P *չիք*

⁹ C *չիք*

¹⁰ C հանգիստ նաւորդացն

¹¹ P + իբրև ի կղզի ինչ ապաւինին, հաստատեն զցիցսն

¹² P զխարիսիս նաւին

¹³ C P յատակս

¹⁴ C իջեցուցանէ

¹⁵ P *չիք* և կորնչին ամենեքեան

¹⁶ C *չիք* և այլ ինչ բնական

¹⁷ C զի յորժամ P իբրև

¹⁸ C զբերանն

¹⁹ C *չիք* ի բերանոյն

²⁰ P և

²¹ C գնան

²² P իբրև լնուն բերան նորա

²³ P միմեանս

²⁴ C և մտանեն ի բերանն նորա, և նա կլանէ զամենեսեան *փի* ամենայն ի բերան նորա...

և կլանէ զձկունսն

²⁵ C զձկունսն

²⁶ P վիշապն

և ¹ մանր ձկունքն հեշտասէրքն ², և հոտ անոյշ ³, զցանկութիւն աշխարհիս: Յորժամ ⁴ դիմեն մարդիկ ի ⁵ նա, կլանէ և կորուսանէ զնոսա ⁶: Դարձեալ վիշապն սատանայ է, զոր մարգարէն ասէ. «Վիշապն, որ նստի ի ջուրս» ⁷ և ասէ, թէ ջուրք իմ են, և ⁸ բարձրացեալ է ի վերայ աշխարհի որպէս ⁹ կղզի, իսկ որք դիմեն ի ¹⁰ նա և ապաւինին ¹¹, առնու և իջանէ ի խորս դժոխոց: Վասն զի այսպէս պատուէ սատանայ զպատուիչս իւր ¹²: Այլ ¹³ մեծամեծ ձկունքն ¹⁴ գերծանին ի նմանէ ¹⁵, այսինքն ¹⁶ կուսութեամբ և սրբութեամբ ապրեցան ի նմանէ:

19 [Մուղեզ ¹⁷]

[1.1] Բարոյախաւան ասէ վասն մուղեզի, [1.2] թէ յորժամ ծերանայ, և վատին աչքն, և շտեսանէ ¹⁸ լոյսն արեգական, [1.3] յայնժամ երթայ իւրովին բնութեամբն և ¹⁹ [1.4] գտանէ տեղի ²⁰, որ ընդ արևելս հայի, և անդ բնակէ ²¹ .խ. ար, [1.5] և այգոյն այգոյն ելեալ ²² պշուցեալ հայի ընդ արեգական, և ընդ ծագել արեգականն բանին աչքն և լուսաւորին ²³:

[1.6] Նոյնպէս և դու, ով մարդ, թէ կուրանան աչք սրտի քո, [1.7] խնդրեա դու քեզ տեղի ինչ պահոց և աղաւթից և անդ բնակէ քառասնարեայ ժամ ²⁴, և ապա ծագէ քեզ փրկիչն Յիսուս լոյս հոգւոյդ և մարմնոյդ ²⁵, [1.8] և

¹ C nr

² P հրեշտակքն են

³ C անոյշ հոտն

⁴ P իբրև

⁵ B և

⁶ P չիք

⁷ Հմմտ. եզեկ. ԻԹ 3

⁸ P չիք

⁹ B չիք P աշխարհ իբրև փիս ի վերայ աշխարհի որպէս

¹⁰ P առ

¹¹ P + ի նա

¹² C չիք Դարձեալ վիշապն սատանայ է... զպատուիչս իւր:

¹³ P և

¹⁴ C մեծամեծ

¹⁵ C չիք ի նմանէ

¹⁶ P + nrf

¹⁷ Ա. խմբ. մողես = σαῦρα. P-ի Մատի հրատարակությունից այս գլուխը բացակայում է

¹⁸ C ոչ տեսանէ

¹⁹ C երթեալ

²⁰ C + մի

²¹ C բարկի

²² C ընդ ծագել արեգականն փիս այգոյն ելեալ

²³ C լուսաւորեալ պայծառանան աչք նորա փիս ընդ ծագել արեգականն բանին աչքն և լուսաւորին

²⁴ C ժամանակ

²⁵ C չիք և մարմնոյդ

բանայ զաշս սրտիդ քո, և [1.9] փոխանակ հնոյն եղիցիս նոր ի ձեռն հոգւոյն սրբոյ նորոգել ի¹ զգիտութիւն որդւոյն Աստուծոյ:

20 [Պորդոքսոն²]

[30.1] Բարուախաւան ասէ. է ծառ ինչ ի Հնդիկս, որոյ անուն պորդոքսոն³ կոչի: [30.2] Գեղեցիկ է ծառն⁴ և ամենավայելուչ⁵ և բազմապտուղ⁶, և ձէթ իջանէ ի նմանէ յոյժ⁷, և այնու մարզեն և աւծանեն զհիւանդն, և առողջանայ⁸: [30.3] Եւ ի⁹ հովանի նորա աղանիք հանգչին¹⁰ և ճաշակեն զպտուղն¹¹: [30.4] Իսկ աւձք բազում լինին ի տեղւոջն և¹² դիմեն առ ի հարկանել զաղանիսն, և ընդ հովանեաւ ծառոյն թաքչին աղանիքն: [30.5] Եւ որչափ ընդ հովանեաւ ծառոյն լինին¹³, ոչ հարկանէ զնոսա¹⁴ աւձքն, քանզի յորժամ ի շուք ծառոյն մերձենան և¹⁵ հասանին աւձքն, սատակին: [30.6] Ապա թէ արտաքոյ հովանեաւն¹⁶ գտանեն զաղանիսն, սպանանեն¹⁷:

[30.7] Արդ ծառն զհաւրն երկնի¹⁸ ունի զարինակն, և ճիւղքն¹⁹ զորդւոյ, և հովանին՝ զամենասուրբ հոգւոյն²⁰, իսկ աղանիքն՝ զմարդկան հոգոց²¹: [30.10] Եւ²² յորժամ քրիստոնեան պինդ հաւատով և դաւանութեամբ մնա առ հայր և որդի և ի սուրբ հոգին²³, ոչ կարէ²⁴ աւձն սատանայ մերձենալ ի նա: [30.11] Ապա թէ ծուլանայ ի հաւատոց²⁵ և ելանէ արտաքոյ եկեղեցոյ և առանց

¹ C իմանալ չիս և փոխանակ հնոյն եղիցիս նոր ի ձեռն հոգւոյն սրբոյ նորոգել ի

² Ա. խմբ. պերիդիփսոն/կշտապանակ = περιδέξιοσ: C այս գլուխը չունի

³ P պորոդոքսոն

⁴ P չիք է ծառն

⁵ P վայելուչ

⁶ P + յոյժ

⁷ P չիք

⁸ P ողջանայ: Եւ քաղցր է պտուղ նորա քան զմեղր

⁹ B չիք

¹⁰ P բնակին

¹¹ P ի պտղոյն

¹² P չիք

¹³ P + աղանիքն

¹⁴ P կարեն հարկանել

¹⁵ P իբրև ի հովանի ծառոյն

¹⁶ P ծառոյն

¹⁷ P սպանանեն զաղանիսն արտաքոյ հովանոյն

¹⁸ P չիք

¹⁹ A B հուղքն

²⁰ B հոգին

²¹ A B հոգիքն

²² P չիք

²³ P հոր և որդոյ... հոգոյն

²⁴ A B չիք

²⁵ P հաւատոյն

խոստովանութեան մնա, յայնժամ¹ մերձենայ ի նա սատանայ և կորուսանէ զնա հոգով² :

21 [Կուղբ³]

[26.1] Բարուխաւան ասէ, թէ կայ գազան ինչ ի ծովու⁴, որում⁵ կողբ ասեն: [26.2] Եւ⁶ կարևորացն կամին ունել զնա⁷: [26.3] Յայնժամ⁸ կտրէ զկարևորսն իւր ատամաւքն⁹ և ընկենու¹⁰ զնա նոցա¹¹, [26.4] իբր ասելով¹², թէ զձեր խնդիրս¹³ կատարեցի¹⁴: Թոյլ տուր¹⁵ և նոքա առեալ ի բաց գնան¹⁶ ի նմանէ:

[26.6] Այսպէս և դու, ով մարդ, յորժամ ի նեղութիւն անկանիս¹⁷, տուր զինչս քո, և ազատեաց¹⁸, զի «փրկանք առնն ինչք¹⁹ իւր»²⁰:

22 [Կաբաւ²¹]

[21.2] Բարոյխաւան ասէ վասն կաբաւոյ²², [2.3] թէ գողանայ զայլոց ձուսն²³ և թխէ²⁴, [21.4] և յորժամ²⁵ ելանեն ձագքն²⁶, ճանաչեն զձայն մաւրն²⁷ և զհետ նորա շրջին²⁸, և նա²⁹ դատարկ և ունայն մնա³⁰ :

¹ A B խ[խոստովանութեամբ փ/ս առանց խոստովանութեան մնա, յայնժամ

² P զհոգի նորա փ/ս զնա հոգով

³ Ա խմբ. կուղբ/կատարիոս = καστόριον

⁴ C ծով

⁵ C որոյ անուն

⁶ C որ ի

⁷ P կարևորքն բժշկութիւն է աչաց, որսան զնա բժիշկ փ/ս կարևորացն կամին ունել զնա

⁸ P իսկ նա ի փախչելն

⁹ C ատամաւքն P ատամաւքն

¹⁰ C ձգէ

¹¹ B ի նոսա P չիք և ընկենու զնա նոցա

¹² C P չիք

¹³ P խնդիրդ

¹⁴ C խնդիրսն քո կատարեցի

¹⁵ P չիք թոյլ տուր

¹⁶ C տուր ինձ և նա առեալ ի բաց գնայ փ/ս տուր և նոքա առեալ ի բաց գնան

¹⁷ P չիք յորժամ ի նեղութիւն անկանիս

¹⁸ P ապրեաց

¹⁹ C զինչք եմ

²⁰ Հմմտ. Առակ ԺԳ 8. «Փրկանք անձին մարդոյ մեծութիւն իւր» | C + են, որով ազատի ի նեղութեանէ

²¹ Ա խմբ. կաբաւ = πέρδιξ

²² C կաբաւուն

²³ C զայլոց ձուսն գողանայ

²⁴ C թխէ

²⁵ P իբրև

²⁶ C ձագքն ելանեն

²⁷ P զմաւրն ձայնին

²⁸ C երթան զհետ նորա

²⁹ C ինքն

³⁰ P չիք և նա դատարկ և ունայն մնա

[21.5] Սոյնպէս¹ գողացաւ սատանայ² զագգս մարդկան: [21.6] Եւ յորժամ³ տեսաք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս, ճանաչեցաք զարարիչն մեր ի ձայնէ Հաւր⁴, որ ասաց. «Դայ է որդի իմ սիրելի»⁵, և շրջիմք զհետ նորա ի տուէ և ի գիշերի⁶ և արհնեմք զնա յաւիտեան⁷:

23 [Տատրակ⁸]

[32.2] Բարուախաւան ասէ վասն տատրակին⁹, թէ յորժամ ամուսին նորա մեռանի, ամենեին ոչ մխիթարի և¹⁰ ի վերայ դալարի¹¹ ոչ նստի, այլ և ի¹² բոյնն պանդխտութեան ունի¹³ արինակ միայնացելոյ¹⁴: [32.6] Իսկ որ ընդ այլում ոչ զուգի, նշանակ է մարդկան¹⁵ շամուսնանալ ընդ բողի ի վերայ կնոջն¹⁶, զի յարարչութեան Եւայ¹⁷ միայն տուաւ Ադամայ:

24 [Ծիծառն¹⁸]

[33.3] Բարուախաւան ասէ վասն ծիծառն, թէ յորժամ¹⁹ գայ յաշխարս մեր յետ ձմերան և²⁰ մի անգամ ձագս հանէ և այլ ոչ ևս²¹:

[33.4] Այսպէս²² և Տէրն մեր Յիսուս Քրիստոս միածին²³ ի Հաւրէ և²⁴ միածին ի մարէ, անհայր ի յերկրի²⁵ և անմայր ի յերկնի²⁶ երևեալ յաշխարհի²⁷ և վերացաւ առ Հայր ի բարձունս²⁸:

¹ B այսպէս

² C և սատանայ գողացաւ

³ P իբրև

⁴ C հորն

⁵ Մարթ. Գ 17, Ժէ 5, Մարկ. Թ 6

⁶ C չիք ի տուէ և ի գիշերի

⁷ P ի տուէ և ի գիշերի C յաւիտեասն յաւիտենից

⁸ Ա իմբ. տատրակ = τρυγών

⁹ P տատրակի

¹⁰ C չիք

¹¹ C դալար խոտոյ և կանանչի

¹² P չիք

¹³ C պանդխտութեամբ կենայ

¹⁴ C P միայնացելոց

¹⁵ C մարդոյ, որ յետ առաջին կնոջն

¹⁶ C չիք ի վերայ կնոջն

¹⁷ C արարիչ աստուած զԵւայ

¹⁸ Ա իմբ. ծիծառն = χελιδών

¹⁹ P իբրև

²⁰ ձմուսն | C P չիք և

²¹ C չիք

²² C նոյնպէս P սոյնպէս

²³ P չիք

²⁴ B P չիք

²⁵ C յերկրէ

²⁶ P չիք անհայր ի յերկրի և անմայր ի յերկնի

²⁷ P յաշխարհիս B յաշխարհէ

²⁸ C P չիք ի բարձունս

25 [Քաղտակրոս¹]

Բարուախաւան ասէ. է կենդանի ինչ ի ծովուն, որ կոչի գաղտակրոս: Յաւուրս գարնանային ելանէ ի ծովուն² և ջեռնու յարեգականէ. խեցեմորթ է՝ բանայ զխեփորսն և զովանայ ի ջերմակիծ³ արեգակնէ: Եւ նոյնժամայն փայլատակիւնք և անձրև լինին⁴: Եւ նա ոչ ժամանէ առ միմեանս արկանել զխեփորսն: Եւ անդէն ի ներքս անկանի ի ջրոյ անդի, և ի հրոյ⁵ յղանայ և ծնանի մարգարիտս գեղեցիկս: Այսպէս⁶ պարտ է իմանալ զսուրբ աստուածածինն⁷, յղացեալ ի հոգոյն սրբոյ և ի զարութենէ բարձրելոյն⁸. Ծնաւ զմարգարիտն պատուական՝ զՏէր մեր Յիսուս Քրիստոս զմիածին բանն⁹, որ է արհնեալ յաւիտեանս ամէն¹⁰:

26 [Միեղջերու¹¹]

[25.1] Բարուախաւան ասէ վասն միեղջերուի¹², թէ է էրէ¹³ մի փոքր, և մի յեղջիւր միայն ունի, [25.2] և ոչ¹⁴ համարձակին որսորդք մերձենալ առ նա¹⁵ վասն ահաւոր զարութեան նորա: Եւ յորժամ երևեսցի ի գլուխ լերանց, և¹⁶ յաճախեն որսորդքն և նեղեն զնա¹⁷, արկանէ զանձն իւր¹⁸ ի բարձրութենէ լերինն¹⁹ ի խոնարհ²⁰ և կանգնի ի վերայ եղջիւրի իւրոյ²¹ և ոչ վնասի: Եւ վասն տեսութեան նորա փափագեն թագաւորք: [25.3-4] Հնար գտին որսորդք²², զի բերեն աղջիկ մի կոյս, որ յոյժ մաքուր և²³ սուրբ է մարմնով յամենայն խորհրդոց

¹ Այս գլխի բովանդակությունը նման է Ա. խմբագրությանը կցված հավելյալ գլուխների երկրորդ շարքի 19-ի (պահպանված միայն Եղմ.2531 ձեռագրում) աստակոսին. «Աստակոսն խեցեմորթ է. յորժամ փորն բանայ ի թիկանց կուտ, անձրև անդր անկանի, մարգարիտ գոյանայ յարինակ անսերմ յղութեան կուսին»: Համարյա բառացի նմանությամբ այսպիսի հատված կա Վանական Վարդապետի երկում (ՄՄ5611, ք. 37ա-բ):

² C ծովէն

³ B չիք C ջերմածիկ

⁴ B փայլատակիւն և անձրև լինին C փայլատակի և անձրև գայ

⁵ C ջրոյն... հրոյն

⁶ C սոյնպէս

⁷ C զսուրբ աստուածածինն պարտ է իմանալ

⁸ C ի զարութենէ բարձրելոյն և ի հոգոյն սրբոյ յղացեալ

⁹ C չիք զմիածին բանն

¹⁰ C չիք

¹¹ Ա. խմբ. միեղջիւր = μονόκερως

¹² C յեղջերուի

¹³ A էր փխ է էրէ՝ ուղղած էրէ | B չիք էրէ

¹⁴ C չիք

¹⁵ C չիք առ նա

¹⁶ C լերանցն

¹⁷ C + և նա

¹⁸ C զինքն փխ զանձն իւր

¹⁹ C լեռնէն

²⁰ C վայր

²¹ C իւր

²² C հնարեն փխ հնար գտին

²³ C չիք որ յոյժ մաքուր և

և մերձաւորութեան առն¹, և զարդարեն զնա պայծառ զգեստուք և ւաճանե՞ն² զնա անուշահոտ և ծանրագին իւղովք³, և տան ընդ նմա քաղցրաձայն քնարս⁴: Եւ յորժամ երգէ զձայնս հեշտալուրս, ունկն դնէ միեղջիւրն⁵, և լսէ զձայն քնարի և հոտոտէ ի հեռաստանէ⁶ զհոտ իւղոյն⁷ անուշութեան, գայ առ նա և հանգչի ի ծոց նորա, և գիրկ⁸ արկանէ նմա⁹ սիրաբար: Եւ այնչափ մեծապէս կապի ի¹⁰ սէր նորա, մինչև առցէ¹¹ զնա ընդ իւր և բերցէ¹² թագաւորութիւնն¹³:

[25.5-10] Նոյնպէս Աստուած բանն¹⁴, որ է իմանալի միեղջերու¹⁵, և ոչ կարեն նենգաւոր որսորդք յաղթել զաւրութեան նորա: Եւ¹⁶ կոյսն Մարիամ, որ¹⁷ զգեստուք սրբութեան¹⁸ և առաքինութեան¹⁹ զարդարեաց զանձն իւր և²⁰ ի հոգևոր հոտ անուշից մաքրութեան և պայծառութեան²¹ ուրախացաւ: Եւ ձայն երգոց²² աղաւթից հաճոյ եղև Բանին Աստուծոյ: Եւ նա եկն²³ ի վերին²⁴ բարձանց և յերկնային²⁵ լեռնէն ի ծոց²⁶ Կուսին: Եւ յորժամ ծնաւ ի նմանէ, ետ զանձն իւր կամաւ ընբռնել յորսորդաց կամաւոր մահուամբ: Եւ արդ ինքն Կոյսն եբեր մեզ զսուրբ գերէն զիմանալի միեղջերուն: Եւ զայս ասէ մարգարէն. թէ «սմա ւարինակի հոգիք սրբոց», յորժամ ճգնի հոգևոր երգով և ուրախանայ և ւաճանի յանոյշ իւղոցն, զոր կոյսն ետ աշխարհի, և ստանայ աղաւթիւք զանբեկանելի եղջիւրն, քանզի ոչ տկարանայ եղջիւր Բանին²⁷:

¹ C ամենայն իրոք փխ է մարմնով ... մերձաւորութեան առն

² C օձեմ

³ C մեծագ յիւղօք

⁴ A B հնարս

⁵ A միեղջերուն B միեղջերուն

⁶ C առնու փխ հոտոտէ ի հեռաստանէ

⁷ C չիք B իւղոցն

⁸ C գիրկս

⁹ C չիք

¹⁰ C չիք

¹¹ C առնի

¹² C բերէ

¹³ C թագաւորին

¹⁴ C բանն աստուած

¹⁵ C միեղջիւր

¹⁶ C զօրութեանն: իսկ սուրբ

¹⁷ C չիք

¹⁸ C զգեստեօք կուսութեան

¹⁹ C առաքինազարդութեամբ

²⁰ B C չիք

²¹ C չիք

²² C ի ձեռն անուշ երգ փխ և ձայն երգոց

²³ C եկեալ

²⁴ C B չիք

²⁵ C երկնային

²⁶ C + սուրբ

²⁷ B տեառն | C ի շարչարանս խաչի և մահու ի ձեռն շար որսորդաց հրէից վասն մեր փխ ընբռնել յորսորդաց... ոչ տկարանայ եղջիւր Բանին | A B + այսօր առ այս

ՄՄ2285 12. «Աւ»-ից հետո ունի «Արջ», իսկ 16. «Աղուէս»-ից հետո՝ «Ժրահաւ» (հմմտ Գ խմբագրության մեջ՝ «Աւ», «Աղուէս», «Արջ», «Ժրահաւ»):

[Արջ]

[35.1] Բարուախաւսն ասէ վասն արջոյն, որ գազան է գիշակեր, զգայուն և մարդասէր, մեղաւորաց յանդիմանիչ իւր գազանային բնութեամբն: [35.2] Զի յաղագս հնազանդ բարուցն, թէ զինչ որ ուսուցանեն, ուրախութեամբ առնէ և զիւր սահման ոչ ուրանայ: [35.3] Զի յորժամ շնչէ հողմն ցրտային, իմանայ զգալն ձմեռան եղանակին, գնայ ի վտակս ջուրց և բանայ զբերանն ընդդէմ ջրոյն: [35.4] Եւ ողողէ յորովայնն և զամենայն յաղիսն և նստոյ տեղէն արտահոսէ, մինչ որ գիտենայ, թէ այլ շմնաց աղտեղութիւն ինչ: [35.5] Եւ գայ մտանէ ի բոյնն և անկանի որպէս մեռեալ ի քուն՝ [35.6] զամիսս երիս, և ոչ շարժի ամենևին, և թէ մնացեալ լինի աղտ ինչ յաղիսն, ոչ կենդանանայ, մինչև նեխեալ մեռանի: [35.7] Իսկ թէ սուրբ լուանայ, շուտով զարթնու: [35.8] Եւ գայն .գ. ամիսն մեռեալ կայ, մինչև գարունն յառնէ և գոհանայ զԱստուծոյ և սկսանի կերակրիլ ըստ սահմանին: [35.9] Ապա որչափ ևս առաւել մարդս նորոգի, եթէ գնայ առ քահանայն և զամենայն աղտս մեղաց ի բաց ձգէ յինքնէ:

14 [Ժրահաւ]

[36.1] է և հաւ մի, որ կոչի ժրահաւ. բազում աշխատութեամբ հանէ ձու մեծագոյն և առեալ տանի յաբն ովկիանոս ծովուն: [36.2] և հազիւ իջեալ յատակն դնէ անդ զձուն և ինքն ելեալ, [36.3] նստի երեսս ջրոյն ի վերուստ հայի ի յատակ ծովուն ի վերայ ձվին և թխսէ զձուն, մինչև ժամանակն իւր: [36.4] Եւ ապա առնու ընդ իւր աւգնականս և իջեալ հանէ զձագսն ի ցամաք և երկրի սնուցանէ: [36.5] Իսկ Աստուած քաղցր աշաբ հայեցեալ յերկնից ի ծնունդս երկրայինս, [36.6] և թխսեալ հանէ նախախնամութեամբ ի մեղաց ծովէս [36.7] և զազիր բնակարանէս [36.8] և տանի վերինն յերուսաղէմ ի մայրն ամենայն ձագուց:

ГОАР МУРАДЯН

ФИЗИОЛОГ (БАРОЙАХОС). АРМЯНСКИЕ РЕДАКЦИИ¹

Ключевые слова: басня, животные, нрав, толкование, перевод, редакция, греческий, грузинский, Бестиарий.

“Физиолог” – прототип западных Бестиариев, раннехристианское произведение (ок. 200 г.) на древнегреческом языке, состоящее из миниатюрных описаний нравов реальных и фантастических животных, а также растений и камней, с их религиозным толкованием

¹ Статья является сокращенным вариантом английского предисловия к нашему изданию армянского “Физиолога”, см. с. 291. сн. 1.

– существовал в различных редакциях и переводах на несколько восточных и западных языков. Древнеармянский перевод (34 главы, с более поздними дополнениями из 4-х и 30-и оригинальных глав) относится к первой половине V века и наиболее близок к тексту греческой рукописи 432 Синодальной библиотеки в Москве (11 в.). Кроме собственно перевода есть две более поздние редакции, с сокращенным составом глав и перифразированным текстом. В указанной книге, кроме собственно перевода и параллельного греческого оригинала, нами была издана также позднейшая, самая краткая редакция (16 глав), отличающаяся элементами разговорного языка. Здесь мы прилагаем критический текст второй редакции.

GOHAR MURADYAN

PHYSIOLOGUS (*BAROYAKHOS*). ARMENIAN RECENSIONS¹

Keywords: fable, animals, character, interpretation, translation, recension, Greek, Georgian, Bestiary.

Physiologus – the prototype of Western Bestiaries, an early Christian writing (ca. 200) in Greek, consisting of cameo stories about the characters of real and fantastic animals, as well as plants and stones, with their religious interpretation – existed in various recensions and was translated into several Eastern and Western languages. The old Armenian version (34 chapters, and later additions of 4 and 30 original chapters) was made during the first half of the 5th c. and is very close to the Greek MS 432 of the Synodal Library in Moscow (11th c.). Besides the translation proper, there exist two later recensions with reduced numbers of chapters and a revised text. The mentioned book contains the critical edition of the translation proper with a parallel Greek text, as well as the latest and shortest recension (16 chapters) with elements of vernacular language. The critical text of the second recension is presented here.

¹ The article is an abridged version of the English introduction to our book mentioned in note 1 on p. 291.

ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆ

ԿԵՂԾ-ՄԵԹՈԴԻՈՍԻ «ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ» ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ¹

(ուսումնասիրություն և բնագրեր)

Բանալի բառեր՝ մարգարեություններ, բյուզանդական հայտնություններ, Իսմայելի որդիներ, վերջին հոռոմեական կայսեր հաղթանակ, Ստեփանոս Օրբելյան, Ստեփանոս Սյունեցի, հայերեն հատվածներ ու խմբագրություններ:

Արևելաքրիստոնեական երկրներում լայնորեն շրջանառվող ամենանշանակալի մարգարեական աղբյուրներից մեկն այս «Հայտնություն» է՝ վերագրված Լիկիայի եպիսկոպոս Մեթոդիոս Օլիմպացուն, որը քրիստոնյա սուրբ էր և բեղմնավոր հեղինակ. նահատակվել է մոտ 311 թ., Մաքսիմիոս Դայա կայսեր (310–313) ծավալած հալածանքների ժամանակ: Մեզ հասել են նրա գրվածքներից մի քանիսը՝ ամբողջությամբ, հատվածաբար կամ համառոտված, հունարեն բնագրով կամ հին սլավոներեն թարգմանությամբ, սակայն չափազանցություն չի լինի նշել, որ այդ բոլոր երկերից ավելի հանրածանոթ է մի կեղծ գործ՝ գրված Մեթոդիոսի մահից մոտ երեք ու կես դար հետո:

Չնայած Կեղծ-Մեթոդիոսին նախորդել է մի ուրիշ հայտնի մարգարեություն՝ լատիներեն «Տիբուրյան Սիբիլյան», որն արդեն բովանդակում էր բյուզանդական «հայտնությունների» հիմնական ու բնորոշ հատկանիշներից մի քանիսը, Կեղծ-Մեթոդիոսը հաստատեց մի ավելի մշակված նմուշ, և այն փոխառության ու ընդօրինակության աղբյուր դարձավ հետագա հեղինակների համար: «Տիբուրյան Սիբիլյանում», որ գրվել է IV դարի վերջին և հետագայում լրացվել ընդմիջարկություններով², հիշատակվում է «վերջին հոռոմեական

¹ Այս նյութը հրատարակության է պատրաստվել պրոֆ. Էրիկ Ռենհարտի սիրալիբ օժանդակությամբ, Գրացի համալսարանի Vestigia ձեռագրագիտական կենտրոնի հայագիտական ուսումնասիրությունների ծրագրի շրջանակում: Առաջաբանը, առանց բնագրերի, որոշ տարբերություններով հրատարակվել է իբրև հոդված. տե՛ս **Արամ Թոփչյան**, «Կեղծ Մեթոդիոսի «Հայտնություն» հայերեն թարգմանությունը», *Կեսն Խաչիկյան-90. նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի, 2008 թ.)*, Երևան, «Նաիրի», 2010, էջ 202-212 (անգլերեն տարբերակը՝ **Aram Topchyan**, “The Armenian Version of the Apocalypse of Ps.-Methodius,” in *The Armenian Apocalyptic Tradition: A Comparative Perspective, Essays Presented in Honor of Professor Robert W. Thomson on the Occasion of His Eightieth Birthday*, ed. **Kevoork B. Bardakjian** and **Sergio La Porta**, Leiden, Boston: Brill, 2014, p. 363-378):

² **Paul J. Alexander**, *The Oracle of Baalbek: The Tiburtine Sibyl in Greek Dress*, *Dumbarton Oaks Studies* 10 (Washington DC). 1967, pp. 41-65.

կայսեր» երևակայական կերպարը. նա հաջողությամբ կովում է քրիստոնեությունից թշնամիների, տվյալ դեպքում՝ առասպելական Գոգի, Մագոգի³ ու հյուսիսից եկող մյուս «պիղծ ազգերի» դեմ և ի վերջո իր իշխանությունը հանձնում Աստծուն՝ քրիստոնյաների գերագույն պաշտպանին⁴: Կեղծ-Մեթոդիոսի համապատասխան հատվածում «պիղծ ազգերը» փոխարինված են այսպես կոչված «Իսմայելի որդիներով», այսինքն՝ արաբներով (հետագայում այդպես էին կոչվում սելջուկները, ավելի ուշ՝ օսմանյան թուրքերը և այլք⁵): Այս պատճառով Կեղծ-Մեթոդիոսի «մարգարեությունը» լայն տարածում գտավ նաև Հայաստանում՝ մի երկրում, որ մշտապես տուժել է «Իսմայելի որդիների» հարձակումներից ու տիրապետությունից: Վերջին բյուզանդական կայսեր կերպարը, որը պարտություն է մատնում իսմայելացիներին, անշուշտ գրավիչ էր հայերի համար, հետևաբար «Հայտնությունը» թարգմանվեց հայերեն, ամենայն հավանականությամբ՝ VII դարի վերջին քառորդում, հունարեն թարգմանության ի հայտ գալուց (VII դ. վերջին քառորդում կամ VIII դ. առաջին տասնամյակում) կարճ ժամանակ անց:

Նախկինում «Հայտնություն» սկզբնագիրը համարվող հունարեն թարգմանությունը 1897 թ. հրատարակել էր ռուս գիտնական Վ. Իստրինը⁶: Համեմատելով տասնյակից ավելի ձեռագիր՝ նա եզրակացրել էր, որ երկն ունի չորս խմբագրություն և որ առաջինը հիմք է ծառայել մնացած երեքի համար: Մարգարեության բովանդակությունը ժամանակ առ ժամանակ փոխվել է և հարմարեցվել պատմական իրադարձություններին: Իստրինի հրատարակումից մոտ յոթ տասնամյակ անց հունարեն չորս խմբագրության քննական հրատարակություն է պատրաստել Անաստասիոս Լոլոսը և հրատարակել դրանք երկու հատորով՝ առաջին երկուսը 1976⁷, իսկ երրորդն ու չորրորդը՝ 1978 թ.⁸: 1898 թ.

³ Հայկական ավանդույթում Գոգի և Մագոգի մասին տե՛ս **Emeri van Donzel & Andrea Schmidt** (with a contribution by **Claudia Ott**), *Gog and Magog in Early Eastern Christian and Islamic Sources: Sallam's Quest for Alexander's Wall*, Leiden, Boston: Brill, 2010, pp. 38-44.

⁴ Հմմտ. **Paul J. Alexander**, "Medieval Apocalypses as Historical Sources," *American Historical Review* 73 (1968), pp. 998-1000:

⁵ Հմմտ. Նեոի մասին՝ Նպիփանին վերագրված հայերեն ճառը, որտեղ ֆրիստոնյա երկրները ներխուժած մահմեդականները հիշատակվում են իբրև Քամի որդիներ ու թուրքեր. *Pseudo Epiphani's Sermo de Antichristo (Armeniaca de Fine Temporum)*, introduzione, testo critico, versione latina e note di **Giuseppe Frasson**, Venezia: S. Lazzaro, 1976, p. 14:

⁶ **В.М. Истрин**, *Откровение Мефодия Патарского и апокрифические Видения Даниила в Византийской и Славяно-Русской литературах* (Чтения в Императорском Обществе Истории и Древностей Российских при Московском Университете), том 181 и 183, Москва 1897.

⁷ Տե՛ս *Die Apokalypse des Ps.-Methodios*, herausgegeben von **Anastasios Lolos** (Beiträge zur Klassischen Philologie, herausgegeben von **Ernst Heitsch**, **Reinhold Merkelbach** und **Clemens Zintzen**, Heft 83), Meisenheim am Glan: Verlag Anton Hain, 1976:

⁸ *Die dritte und vierte Redaktion des Ps.-Methodios*, herausgegeben von **Anastasios Lolos** (Beiträge zur Klassischen Philologie, herausgegeben von **Ernst Heitsch**,

Իստորինի գրքից մեկ տարի էր անցել, և լատիներեն թարգմանության հրատարակիչ էռնստ Զակուրը նրա մասին տեղյակ չէր, բայց նա առաջին անգամ կարծիք հայտնեց, թե Կեղծ-Մեթոդիոսի երկն ըստ երևույթին գրվել է ասորերեն, և ոչ հունարեն⁹: Այս վարկածը հետագայում հաստատվել է ասորերեն սկզբնագրի հայտնաբերումով՝ Վատիկանի ասորական № 58 ձեռագրում (XVI դ.): Մանրակրկիտ ուսումնասիրելով այն՝ հունարենի հետ համեմատությամբ, Միքայել Կմոսկոն¹⁰, իսկ հետագայում Պոլ Ալեքսանդրը¹¹ և Գերրիթ Ռայնինկը մի շարք համոզիչ փաստարկներով ցույց են տվել, որ գործը գրվել է ասորերեն՝ հավանաբար հյուսիսային Միջագետքում: Ավելացնենք, որ Ռայնինկը 1993 թ.¹² ասորերեն սկզբնագրի քննական հրատարակություն է պատրաստել, և մի քանի տարի անց, 1998 թ., լույս է տեսել հնագույն հունարեն ու լատիներեն տարբերակների մի նոր քննական հրատարակություն (Աերտսի և Կորտեկասսի աշխատասիրությամբ¹³): Զարմանալի է, որ չնայած «Հայտնության» հանդեպ բուն գիտական հետաքրքրությանը, քիչ ուշադրություն է դարձվել դրա հայերեն թարգմանության խնդրին:

Երկի գրություն տարբեր թվականներ են առաջարկվել, մեծ մասը՝ VII դարի երկրորդ կեսի սահմաններում: Օրինակ, Պոլ Ալեքսանդրի կարծիքով դա տեղի է ունեցել 644 և 678 թթ. միջև¹⁴: Հունարեն խմբագրությունները հրատարակության պատրաստած Անաստասիոս Լոլոսը գտնում է, որ ասորերեն սկզբնագիրը գրվել է 655 թ. և հունարեն թարգմանվել 674 թ.¹⁵, իսկ Սեբաստիան Բրոքը ենթադրում է, որ «Հայտնությունը» 690 թ. վաղ գոյություն չի

Reinhold Merkelbach und *Clemens Zintzen*, Heft 94), Meisenheim am Glan: Verlag Anton Hain, 1978.

⁹ **Ernst Sackur**, *Sibyllinische Texte und Forschungen*, Halle a.d.S., 1898 (վերահրատ.՝ Torino, 1963), S. 55.

¹⁰ **Michael Kmosko**, "Das Rätsel des Pseudo-Methodius," *Byzantion* 6, 1931, SS. 273-296.

¹¹ Տե՛ս **Paul J. Alexander**, *The Byzantine Apocalyptic Tradition*, edited with an introduction by **Dorothy de F. Abrahamse**, Berkeley, Los Angeles, London: University of California Press, 1984, pp. 31-33:

¹² *Die Syrische Apokalypse des Pseudo-Methodius*, herausgegeben von **G.J. Reinink** (Corpus Scriptorum Christianorum Orientalium 540-541, Scriptorum Syri 220-221), Leuven: Peeters, 1993.

¹³ *Die Apokalypse des Pseudo-Methodius. Die Ältesten griechischen und lateinischen Übersetzungen*, herausgegeben von **W.J. Aerts** und **G.A.A. Kortekaas** (I. Einleitung, Texte, Indices Locorum et Nominum, II. Anmerkungen, Wörterverzeichnisse, Indices) (Corpus Scriptorum Christianorum Orientalium 569-570, Subsidia 97-98), Louvain: Peeters, 1998.

¹⁴ Հմմտ. **Paul J. Alexander**, *The Byzantine Apocalyptic Tradition*, pp. 24-25 (Պոլ Ալեքսանդրի աշխատությունների այս ժողովածուն րնդգրկում է նաև «Հայտնության» նրա անգլերեն թարգմանությունն ասորերեն բնագրից. pp. 36-51):

¹⁵ *Die Apokalypse des Ps.-Methodios*, herausgegeben von **Anastasios Lolos**, SS. 20-22.

ունեցել¹⁶: Անշուշտ, Կեղծ-Մեթոդիոսի «մարգարեությունը» գրվել է այն բանից հետո, երբ մահմեդականները 633-634 թթ. Սասանյան Պարսկաստանից գրավեցին Միջագետքի մեծ մասը, քանի որ հեղինակի հիմնական մտահոգությունն արաբական նվաճումներն են (ինքն էլ համարվում է հյուսիսային Միջագետքի բնակիչ¹⁷): Ավելին, կասկածից վեր է նաև, որ VII դարի վերջին «Հայտնություն» արդեն գոյություն ուներ, քանզի դրա լատիներեն թարգմանությունը պարունակող հնագույն ձեռագիրը գրվել է ութերորդ դարի սկզբին¹⁸:

Այն հանգամանքը, որ ասորերեն սկզբնագրի ի հայտ գալուց կարճ ժամանակ անց երկը թարգմանվել է հունարեն, իսկ հունարենից՝ լատիներեն ու այլ լեզուների, վկայում է «Հայտնության» արագ տարածման մասին: Շեշտելով «Հայտնություն» կարևորությունը՝ Ալեքսանդրը նշում է, որ «հայտնութենական ոչ մի երկ, որ գրվել է (հունարեն) թարգմանությունից հետո, չի խուսափել դրա ազդեցության հետքերից»¹⁹ (չնայած կեղծ-Մեթոդիոսն ինքն օգտագործել է այլ աղբյուրներ, հատկապես՝ ոչ սուրբգրային, ինչպես, օրինակ, ասորերեն «Գանձերի քարայրն» է²⁰): Թեև հայերեն թարգմանության ժամանակը ճշգրիտ որոշելու բավարար հիմքեր չկան, սակայն պետք է տրամաբանորեն այն ներառել գրվածքի՝ հյուսիսային Միջագետքից մինչև Բյուզանդական կայսրություն և նրա սահմաններից դուրս (VII դարի վերջից – VIII դարի սկզբին) տարածման միևնույն գործընթացի մեջ: Ստորև վերադառնալու ենք ժամանակի խնդրին:

Ասորերեն բնագիրը, որ զբաղեցնում է Codex Vaticanus Syrus 58-ի 18 թերթ, ունի հետևյալ խորագիրը. «Աշխարհի Տեր Աստծո օգնությամբ գրեցինք օրհնյալ տեր Մեթոդիոսի՝ եպիսկոպոսի և վկայի ճառը թագավորների հաշորդականության և ժամանակի վերջի մասին»²¹: «Հայտնությունը» պայմանականորեն բաժանում են երկու մասի. առաջին՝ այսպես կոչված «պատմական» բաժինը բովանդակում է անցյալի առասպելական պատմությունը՝ սկսած դրախտից Ադամի ու Եվայի վտարումից մինչև յոթներորդ դար, որը Կեղծ-Մե-

¹⁶ Sebastian Brock, “Syriac Views of Emergent Islam,” in *Studies on the First Century of Islamic Society*, ed. G.H.A. Juynball (Papers on Islamic History 5), Carbondale: Southern Illinois University Press, 1982, pp. 9-22 (19), A. Palmer, S. Brock & R. Hoyland, *The Seventh Century in the West-Syrian Chronicles: Including Two Seventh-Century Syriac Apocalyptic Texts*, Liverpool: Liverpool University Press, 1993, p. 225 (Բոնֆր նշում է, որ մի ավելի վաղ թվական՝ 688/9 թ., առաջարկել է Ֆ.Խ. Մարտինեսսի իր չմատարակված թեզում) և այլն:

¹⁷ Տե՛ս Alexander, *The Byzantine Apocalyptic Tradition*, pp. 26-28 (բերվում են նաև նախկինում արտահայտված տեսակետներ):

¹⁸ Sackur, *op. cit.*, p. 57.

¹⁹ Alexander, *The Byzantine Apocalyptic Tradition*, p. 14.

²⁰ Sackur, *op. cit.*, pp. 10-16.

²¹ Տե՛ս Ալեքսանդրի թարգմանությունը՝ Alexander, *The Byzantine Apocalyptic Tradition*, 36-51 (36):

Թողիտուր կոչում է «յոթներորդ հազարամյակ» (այսպիսով «պատմական» մասը ներառում է նախորդ վեց հազարամյակները): Երկրորդ բաժինը, որ գրված է Ալեքսանդրի բնորոշմամբ՝ «բայի անցյալ անկատարով, որն ասորերենում մարգարեությունների ժամանակաձևն է»²², սկսվում է հավանաբար հեղինակի կյանքի օրոք տեղի ունեցած իրադարձություններից՝ արաբական նվաճումների սկզբնական շրջանից և Սասանյան թագավորության անկումից: Քանի որ հայերեն թարգմանությունամբ գոյություն ունի հենց այս բաժինը, իսկ «պատմական» մասից հայերեն միայն հատվածներ են պահպանվել, համառոտակի ներկայացնենք «յոթներորդ հազարամյակի» իրադարձությունները:

Նախ Կեղծ-Մեթողիտուր «գուշակում է» պարսկական թագավորության վերացումը. այնուհետև Իսմայելի որդիները, դուրս գալով Եթրիբի (Մեդինայի) անապատից, մի վճռական ճակատամարտում հաղթելու են նաև հույներին (բյուզանդացիներին): Սա պատահելու է Աստծո կամքով՝ ոչ թե որովհետև նա սիրում է իսմայելացիներին, այլ քրիստոնյաների գործած բազմաթիվ մեղքերի հետևանքով: Դրանք նկարագրելուց հետո հեղինակը թվարկում է այն երկրներն ու երկրամասերը, որոնք պիտի նվաճվեն ու ավերվեն, իսկ նրանց բնակիչները՝ գերեվարվեն կամ սպանվեն: «Իսմայելի որդիները» ծայրահեղ դաժան են լինելու. նրանք գետնին են հավասարեցնելու բարգավաճ քաղաքներ, ոչ մեկի չեն գթալու՝ ոչ որբերին ու այրիներին, ոչ հիվանդներին, թույլերին ու ծերերին, ոչնչացնելու են ոչ միայն մարդկանց, այլև կենդանիներին ու թռչուններին, ծառեր ու անտառներ, անտանելի հարկեր են դնելու բոլորի վրա, սպանելու են քահանաներին սուրբ վայրերում, կենակցելու են նրանց կանանց հետ և այլն:

Այս մասամբ առասպելական նկարագրությունը, որ ներկայացված է որպես հայտնություն՝ աստվածաշնչյան հատվածների վկայակոչումով, որոշակի ղեպքերում արտացոլում է Մերձավոր Արևելքում տեղի ունեցած կամ տակավին տեղի ունեցող իրադարձություններ, և Կեղծ-Մեթողիտուր գուցե եղել կամ ղեռ մնում էր դրանց մի մասի ականատեսը:

Բաժնի շարունակությունը բաղկացած է մի շարք մարգարեական տեսիլներից և պատմության հետ քիչ կապ ունի: Երբ արաբները, գուշակում է հեղինակը, պարծենան, թե քրիստոնյաների պաշտպան երբեք չի լինելու, հանկարծ մի հույն թագավոր (այսինքն՝ բյուզանդական կայսր) կարթնանա խորը քնից և հաղթական հարձակում կսկսի թշնամիների դեմ, կսպանի կամ կգերեվարի նրանց, ու կհաստատվի մեծ խաղաղության և ուրախության շրջան: Սակայն Աստված մեկ այլ պատիժ է պատրաստել ամբարիշտ մարդկանց համար. շուտով կբացվեն այսպես կոչված «հյուսիսի դռները» (կամ «Կասպից դարպասը»), որոնց հետևում Ալեքսանդր Մեծը բանտարկել էր Գոգին, Մագոգին ու մյուս «պիղծ ազգերին», և այդ մարդակեր ցեղերը դուրս կգան քրիստոնյանե-

²² Անդ. էջ 17:

րին սպանելու ու երկիրն ամայացնելու: Յոթ տարի հետո նրանց բոլորին կենսա-
 ջնջի Աստծո հրեշտակը, և այդժամ վերջին բյուզանդական կայսրը կենակվի
 Երուսաղեմում մինչև «կորստյան որդու», այսինքն՝ Նեոի հայտնվելը (որը
 «Հայտնության» մեջ հիշվող երրորդ մեծ աղետն է): Ապա կայսրը կբարձրանա
 Գողգոթա, իր թագը կդնի Սուրբ Խաչի վրա, ձեռքերը դեպի երկինք կպարզի և
 իր թագավորությունը կհանձնի Աստծուն: Այսպիսով ի կատար կածվի Սաղմոս
 ԿԸ 31-ը (հայերեն Աստվածաշնչում՝ ԿԷ 32). «Հնդիկք [Եբրայերենում՝ «Քուշը»,
 հունարենում՝ «Եթովպիան»] յառաջագոյն ձեռնտու լիցին առ Աստուած», քա-
 նի որ Կեղծ-Մեթոդիսի ծննդաբանության համաձայն՝ վերջին կայսրը սերում
 էր Եթովպիայի արքայադուստր Քուշեթից կամ Քուշից, որը նախկինում Փիլի-
 պոս Մակեդոնացու կինն էր եղել և աշխարհ էր բերել Ալեքսանդրին, իսկ հետո
 ամուսնացել էր Բյուզանդիայի հիմնադիր Բիզասի հետ: Հետագա տեսիլները
 բովանդակում են Նեոի՝ հավատացյալներին ճշմարիտ ուղուց շեղող շար գոր-
 ծերի, Երուսաղեմի տաճարում որպես Աստված նստելու և ի վերջո նրա պար-
 տություն ու Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ դժոխքն ընկնելու նկա-
 րագրությունը:

Ինչպես արդեն նշվեց, «Հայտնության» այս մասը՝ սկսած արաբական
 նվաճումից, թարգմանված է հայերեն (համապատասխանում է հունարեն՝ Լուր-
 սի և Աերտսի ու Կորտեկասսի հրատարակությունների XI–XIV.14 [+ VII.10]
 գլուխներին): Հայերեն հատվածը ձեռագրերում առկա է երկու տարբերակով՝
 որպես առանձին գրվածք և որպես Ստեփանոս Օրբելյանի († 1305) «Պատ-
 մութիւն նահանգին Սիսական» երկի ԼԲ գլուխ: Վերնագիրն է՝ «Տեսիլ սրբոյն
 Մեթոզի՝ եպիսկոպոսին Պատարայ և վկայի, յաղագս անցելոյն, ներկայիս և
 ապառնեացն, ասացուածք յԱստվածաշունչ գրոց, զոր թարգմանեալ է Տեառն
 Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի»²³:

Առաջին հերթին պետք է պատասխանել այն հարցին, թե ով է «Սյունյաց
 եպիսկոպոս տեր Ստեփանոսը»: Հնարավոր է երկու պատասխան. կամ Օրբել-
 յանը թարգմանությունը վերագրում է VII–VIII դարերի հայտնի հեղինակ ու
 հունարենից թարգմանիչ Ստեփանոս Սյունեցուն († 735), կամ էլ նկատի ունի
 ինքն իրեն (երկուսն էլ Սյունիք գավառի եպիսկոպոսներ էին, և Օրբելյանն էլ
 երբեմն կոչվում էր Ստեփանոս Սյունեցի): Պետք է նշել, որ Տաթևի, իսկ այնու-
 հետև Գլաձորի համալսարաններում լավ կրթություն ստացած Օրբելյանը հա-
 վանաբար տիրապետում էր հունարենին: «Քրիստոնյա Հայաստան» հանրագի-
 տարանում «Ստեփանոս Օրբելյան» բառահոդվածի անանուն հեղինակը, օրի-

²³ Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւ-
 նեաց, Քիֆլիս, Աղանեանց տպ., 1910 (Կ. Շահնազարեանցի պատրաստած երկխառոչյա-
 կի [Փարիզ, 1859] վերահրատարակություն), էջ 144-157:

նակ, կարծում է, թե թարգմանիչն ինքը՝ Օրբեյանն էր²⁴, մինչդեռ ուրիշ մասնագետներ, առանց հարցը քննարկելու, թարգմանությունը վերագրել են մյուս Ստեփանոսին²⁵:

ԼԲ գլուխը հետևում է Օրբեյանի գրած՝ Ստեփանոս Սյունեցու կենսագրությունը, որը հասնում է մինչև 735 թվականը՝ Ստեփանոսի եպիսկոպոսության ավարտը և նրա ողբերգական մահը: Քանի որ այս կենսագրությունը կազմում է ողջ ԼԱ գլուխը և անմիջապես նախորդում Կեղծ-Մեթոդիոսին, կարելի էր եզրակացնել, թե Օրբեյանն անկասկած նկատի ունի նույն անձին և ոչ ինքն իրեն՝ նախ պատմում է նրա կյանքը, հետո մեջբերում թարգմանությունը: Սակայն այդպես մտածելուն խանգարում է մի խոչընդոտ. Սյունեցու թարգմանությունները (Դիոնիսիոս Արեոպագոս²⁶, Գրիգոր Նյուսացու²⁷ ու Նեմեսիոսի²⁸ երկերի) պատկանում են հունաբան դպրոցին²⁹: Դրանց լեզուն հունարենի քերականությունն ու բառակազմությունն ընդօրինակող արհեստական հայերեն է: Ի տարբերություն այդ թարգմանությունների, Կեղծ-Մեթոդիոսի հատվածը հիմնականում դասական գրաբարով է՝ էպոս տարբեր Սյունեցու հունաբան թարգմանություններից (թեև այստեղ էլ կարելի է գտնել հատ ու կենտ հունաբանություններ³⁰): Մյուս կողմից, անհավանական է թվում, որ Օրբեյանն ինքը թարգմաներ ու ներմուծեր հատվածը ԼԱ և ԼԲ գլուխների միջև: Այն ոչինչ չի ավելացնում նրա պատմությանը և կարող է հեշտությամբ հանվել՝ առանց հիմ-

²⁴ Քրիստոնյա Հայաստան (հանրագիտարան), խմբ. Հովհաննես Այվազյան և ուրիշներ, Երևան, Հայկական համալսարանի գլխավոր խմբագրություն, 2002, էջ 933:

²⁵ Տե՛ս, օրինակ, Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, ՀՀ ՊԱ, էջ 22 և Բարսեղ Սարգիսեան, «Մեծին Ներսիսի ընծայուած մարգարէութեան յոյն բնագիրն եւ անոր վերայ եղած կրկին խմբագրութիւնն», մասն 1, Բազմավէպ 50 (1892), էջ 565-571, մասն 2, Բազմավէպ 52 (1894), էջ 25-32 (27):

²⁶ *The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite*, edited by Robert W. Thomson (Corpus Scriptorum Christianorum Orientalium 488-489, Scriptorum Armeniaci 17-18), Leuven: Peeters, 1987.

²⁷ Գրիգոր Նիսացի, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն (Յաղագս կազմութեան մարդոյ), քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ստեղծա Վարդանյանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, 2008:

²⁸ Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացույ յաղագս բնութեան մարդոյ, Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1889:

²⁹ Հունաբան հայերեն թարգմանությունների դասակարգումը տե՛ս С.С. Аревшатын, *Формирование философской науки в древней Армении*, Ереван, 1971, сс. 186-188 (2016², сс. 193-195):

³⁰ Օրինակ՝ թարգմանիչն ընդօրինակել է հին հունարենի շարահյուսությունը. «ի վերայ ուրացողացն զՏէր մեր» (*Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 153) – ἐπὶ τοὺς ἀρνησαμένους τὸν κύριον ἡμῶν (XIII.15). Էնթակայական դերբայը՝ «ուրացողացն», օգտագործվել է հայցական հոլովով ուղիղ խնդրի հետ՝ «զՏէր», մինչդեռ հայերեն կանոնավոր բառակապակցությունը կլինի՝ «ուրացողացն Տեառն մերոյ», այսինքն՝ էնթակայական դերբայն առակայական սեռականով խնդրի հետ:

նական շարադրանքը խաթարելու (Ա գլխի վերջում 735 թ. Ստեփանոս Սյունեցու մահից հետո Օրբելյանն իր պատմությունը շարունակում է ԼԳ գլխում հաջորդ՝ 736 թվականից, երբ, ըստ նրա, արաբները նվաճեցին Սյունիքը): Ուստի կարելի է նաև ենթադրել, թե ԼԲ գլուխը հետագա ընդմիջարկություն է Օրբելյանի «Պատմության» մեջ: Սա կարող է հաստատվել այն փաստով, որ Կեղծ-Մեթոդիոսի հատվածը հայերեն ձեռագրերում հանդիպում է նաև առանձին, Օրբելյանի երկից դուրս (առնվազն Գարեգին Զարբհանյանի նշած մեկ³¹ և Մատենադարանի երկու ձեռագրերում (ՄՄ 1487 ժէ դարի կես, և ՄՄ 2644 ժԹ դարի կես, որն իր հերթին հիշատակում է 1676 թ. ընդօրինակված՝ Կեղծ-Մեթոդիոսի հատվածը պարունակող մի չորրորդ ձեռագիր):

Այսպիսով պարզ է դառնում, որ հարցի վերաբերյալ հնարավոր չէ վերջնական եզրահանգման գալ: Թվում է՝ թարգմանությունը շատ ավելի հին է, քան Օրբելյանի «Պատմությունը». ինչպես նշեցինք, Կեղծ-Մեթոդիոսը պետք է որ հայերեն թարգմանվեր VII դարի վերջին՝ հունարեն տարբերակի ի հայտ գալուց կարճ ժամանակ անց, այսինքն՝ Ստեփանոս Սյունեցու կյանքի օրոք, սակայն հայերեն հատվածի լեզվական առանձնահատկությունները թույլ չեն տալիս այն աներկբայորեն վերագրել նրան: Ավելի շուտ թարգմանությունը մեկ ուրիշի գործ է, սակայն հետագայում վերագրվել է Սյունեցուն և Օրբելյանի «Պատմության» մեջ ներմուծվել կամ հեղինակի ձեռքով, կամ էլ ավելի ուշ:

Այն ենթադրությունը, թե հայերեն թարգմանությունն արվել է հունարենից քիչ ժամանակ անց, հաստատվում է նաև հետևյալ հանգամանքով: Օրբելյանի ԼԲ գլխի համեմատությունը հունարեն չորս խմբագրությունների հետ ցույց է տալիս, որ այն մոտ է առաջին՝ հնագույն խմբագրությանը: Մի ընդարձակ հատվածի բացակայությունը հայերեն թարգմանությունից և ասորերեն սկզբնագրից (XIII.6 *ἐκ τῶν χειρῶν τῶν Ἰσμαηλιτῶν* – «իսմայելացիների ձեռքերից») բառակապակցությունից հետո մինչև XIII.10 պարբերությունը ներառյալ, որտեղ հիմնականում խոսվում է հռոմեական իններորդ ինդիկտիոնի առաջին ամսվա դեպքերի մասին³²), սակայն, ստիպում է մտածել, թե այն ուշ հավելում է հունարենում³³, և որ հայ թարգմանիչն օգտագործել է մի էլ ավելի հին խմբագրություն, քան պահպանված հնագույնը:

³¹ Գարեգին Զարպհանյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Գ-ԺԳ), Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Գազարու, 1889, էջ 563:

³² Ավելի նիշտ՝ ասորերեն բնագրում բացակայում են XIII.7-10 պարբերությունները. տե՛ս Կեղծ-Մեթոդիոսի «մարգարեական» հատվածի՝ Սեբաստիան Բրոֆի անգլերեն թարգմանության 620-րդ ծանոթագրությունը. Palmer, Brock & Hoyland, *The Seventh Century in the West-Syrian Chronicles*, p. 237:

³³ Հետաքրքիր է, որ հունարեն երրորդ ու չորրորդ խմբագրությունները (որոնք առհասարակ զգալիորեն տարբեր են հայերենից) նույնպես բաց են թողնում XIII.7-10 հատվածը. տե՛ս *Die dritte und vierte Redaktion des Ps.-Methodios*, herausgegeben von Anastasios

Ամփոփելով Օրբելյանի Կեղծ-Մեթոդիոսի հատվածի մեր կարճ նկարագրությունը՝ նշենք, որ հայերեն թարգմանությունն ընդհանուր առմամբ ճշգրիտ է, սակայն թարգմանիչը համառոտել է բնագիրը՝ հաճախ բաց թողնելով բառեր, արտահայտություններ կամ ամբողջական նախադասություններ և ինքն էլ մանր հավելումներ ու տեղափոխություններ կատարելով (օրինակ, Գոգից ու Մագոգից հետո թվարկվում են մնացած քսան «պիղծ ազգերը», այդ ցանկն ու դրան նախորդող՝ եզեկիելի ԼԳ գլխի վկայակոչումը հունարեն «Հայտնության» «պատմական» բաժնի VIII.10 պարբերությունից են):

Կեղծ-Մեթոդիոսն ականջատորեն տարածված է եղել Հայաստանում տարբեր ժամանակներում: Այս առումով հետաքրքրի վկայություն է պահպանել Ֆրանցիսկյան վանական Գիյոմ դը Ռուբրուքը, որին 1253 թ. Ֆրանսիայի Լյուդովիկոս IX թագավորն առաքելությամբ ուղարկել էր մոնղոլների մեծ խանի մոտ: Կոստանդնուպոլսից Կարակորում (կենտրոնական Մոնղոլիայում) ճանապարհին վանականը 1254 թ. անցել է Հայաստանով: Նախիջևանի մոտ նա հանդիպել է մի եպիսկոպոսի, որը պատմել է նրան «երկու հայ մարգարեների» մասին՝ մեկին անվանելով «հայ նահատակ» Մեթոդիոս, ով կանխագուշակել էր Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից, իսկ մյուսին՝ «Ակակրոն» (Ագաթոն), ով նույնպես գուշակություն էր արել հյուսիսից այդ ներխուժման մասին³⁴: Այսպիսով երկու հեղինակների «Հայտնությունները» հայկական ավանդույթի մաս էին դարձել, իսկ իրենք նույնիսկ հայ էին համարվում: Ավելին, XIII դարի կեսին, 1236 թ. մոնղոլների կողմից Հայաստանի առաջին նվաճումից քիչ ժամանակ անց, տեղի բնակիչները հավատացած էին, որ մարգարեությունը հենց այդ իրադարձությունների մասին էր և որ Կեղծ-Մեթոդիոսն «Իսմայելի որդիներ» ասելով ի նկատի ուներ մոնղոլներին:

Օրբելյանի «Պատմության» ԼԲ գլուխը Կեղծ-Մեթոդիոսի հայերեն թարգմանության հիմնական վկայությունն է, բայց ոչ միակը: 1996 թ. Մայքլ Սթոունը հրատարակեց «Հարցումն» վերնագրով մի գրվածք³⁵ ՄՄ 9100 ձեռագրից, որը 1686 թ. ընդօրինակված ժողովածու է: Համեմատելով այն ասորերեն բնագրի՝ Պոլ Ալեքսանդրի անգլերեն թարգմանության հետ³⁶, նա եզրակացրեց, որ գրվածքը մասամբ հիմնված է Կեղծ-Մեթոդիոսի վրա: Այնուհետև Օրբելյանի ԼԲ

Lolos, S. 58-61: Կարելի է ենթադրել, որ դրանք էլ հիմնված են հունարեն այն կորած տարբերակի վրա, որից արվել է հայերեն թարգմանությունը:

³⁴ Guillaume de Rubrouck, *De gestis sive de moribus Tartarorum*, Recueil des voyages et des mémoires publié par la société de géographie, tome IV, Paris, 1839, p. 385 ff..

³⁵ Michael E. Stone, *Armenian Apocrypha: Relating to Adam and Eve* (Studia in Veteris Testamenti Pseudepigrapha 14), Leiden: Brill, 1996, p. 114-134. տե՛ս նաև նույնի “The Document called Question,” *Apocrypha, Pseudepigrapha and Armenian Studies: Collected Papers by M.E. Stone*, vol. 1, Leuven, Paris, Dudley, MA: Peeters, 2006, p. 237-242.

³⁶ Տե՛ս ծա՛ն. 14:

գլխում գուգահեռ ունեցող մի հատված մեջբերելով Մթոունը եկավ այն ճիշտ եզրահանգմանը, որ «Հայտնություն» հայերեն ամբողջական տարբերակ է եղել և աղբյուր ծառայել ինչպես Օրբելյանի ԼԲ գլխի, այնպես էլ «Հարցման» համար: Այժմ, վերջինս հունարեն բնագրի հետ համեմատելուց հետո, կարող ենք վստահաբար ասել, որ «Հարցումը» ամբողջովին, բացի հավանաբար գրչի ավելացրած վերջին նախադասությունից, հունարեն «Հայտնություն» «պատմական» մասի I.1–III.7 և VIII.1–10 (+ XIII.19–21) գլուխների մի համառոտված ու խմբագրված տարբերակ է: «Հարցման» անհայտ հեղինակը հավանաբար այն քաղել է ենթադրյալ ամբողջական հայերեն թարգմանությունից՝ ըստ իր նպատակների բնագիրը կրճատելով (հաճախ՝ շատ անհաջող):

Մթոունի հրապարակումից մի քանի տարի անց Թոբերտա էրվինը գտավ նույն երկը՝ առանց «Հարցումն» վերնագրի, եղմ. 578 (ժէ դարի) ձեռագրում³⁷, որը պարունակում է XIII դարի հեղինակ Վանական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» երկը³⁸ (չնայած էրվինն իր արձագանքն է հայտնում, որ «Հարցմունք և պատասխանիք»-ի ավելի հին 1273 թ. եղմ .1288 ձեռագիրն իրեն անմատչելի է եղել, ամեն դեպքում նշում է, որ երուս. 587-ի բնագիրը ՄՄ 9100-ից ավելի լավն է): Այսպիսով, հայերեն Կեղծ-Մեթոդիսի I.1–III.7, VIII.1–10 (+ XIII.19–21) գլուխները Վանականի գործի մաս էին դարձել: Անհայտ է, որ մի անհայտ հեղինակ (գուցե Վանականն ի՞նքը) քաղել էր հատվածը ենթադրյալ ամբողջական հայերեն թարգմանությունից՝ համառոտելով և խմբագրելով այն (երբեմն՝ բավական անհաջող) ու հարմարեցնելով իր նպատակին: Ով էլ լինեք այդ անհայտ հեղինակը, նրա համառոտած բնագիրը մեզ է հասել առնվազն չորս ձեռագրով, քանի որ պարզել ենք, որ այն գոյություն ունի Վանական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիք»-ի մեկ այլ օրինակում, այն է՝ ՄՄ 5611 (ժԳ դ.)³⁹:

«Հարցումն»-ը բովանդակում է Կեղծ-Մեթոդիսի՝ Ադամին ու Եվային, նրանց որդիներ Աբելին ու Կայենին, նրա հաջորդներին, Սեթին ու նրա հաջորդներին, Նոյին ու նրա որդիներին, հատկապես Մոնետոնին (հայերենում՝ «Մանիտոն»), ասորերենում՝ Յոնտոն), Բաբելոնի առասպելական արքա Նեմրոդին («Նեբրոդիթին»), Փիլիպոսից ու Եթովպիայի արքայազուստր Քուշեթից Ալեքսանդր Մեծի ծննդին, Ալեքսանդրիայի հիմնադրմանը, Դարեհի վախճանին և Ալեքսանդրի ձեռքով Գոգի ու Մագոգի և այլ «պիղծ ազգերի»՝ Հաբեթի սե-

³⁷ **Roberta Ervine**, “Antecedents and Parallels to Some Questions and Answers on Genesis In Vanakan Vardapet’s *Book of Questions*,” *Le Muséon* 113, 2000, pp. 417-428 (424-425).

³⁸ Սա կարող է բացատրել ՄՄ9100 ձեռագրում առկա տարօրինակ «Հարցումն» վերնագիրը, հմմտ. ամր. էջ 424–425:

³⁹ Եղմ. 1288 և 587 ձձ. մեզ մատչելի չեն եղել. փոխարենը սույն հրատարակության համար օգտագործել ենք ՄՄ5611-ը:

րունդների բանտարկմանը վերաբերող հատվածները (հետաքրքիր է, որ հայերենում Հաբեթը փոխարինված է Քամով, քանի որ հայերը Հաբեթին համարում էին իրենց նախնին, և ամոթալի կլինեք «պիղծ ազգերի» հետ ունենալ նույն նախահայրը): Բնագիրն այնքան փոփոխված է, որ դժվար է դատել թարգմանության որակի մասին: Կարելի է իբրև էական անճշտության օրինակ նշել, որ $\epsilon\nu$ $\tau\eta$ $\gamma\eta$ $\tau\eta\varsigma$ $\acute{\epsilon}\omega\alpha\varsigma$ («դեպի արևելքի երկիր») բառակապակցությունը թարգմանվել է որպես հատուկ անուն՝ «յժվեայն»:

Հետաքրքիր է, որ ինչպես Օրբելյանի գրքում հունարենի XIII.19 պարբերությանը համապատասխանող մասին ավելացված է եզեկիել ԼԸ-ի հիշատակումը և քսաներկու ազգերի ցանկը՝ մեջբերված հունարենի VIII.10-ից, այնպես էլ «Հարցմուն»-ի հեղինակն այստեղ ավելացրել է XIII.19–20-ից հատվածներ, որոնցում խոսվում է այդ ազգերի՝ դարպասի հետևից հայտնվելու, նրանց արգահատելի բարքերի և, ի վերջո, Աստծո հրեշտակի ձեռքով նրանց բնաջնջման մասին: Հենց այս տեղափոխված հատվածների շնորհիվ է, որ «Հարցմուն»-ը համեմատելի է Օրբելյանի երկում առկա մարգարեական բաժնին: Չնայած առաջինն զգալիորեն փոփոխված է, կան որոշ բառացի զուգահեռներ, սակայն դրանք ո՛չ հաստատում են, ո՛չ էլ հերքում, որ հայերեն երկու բաժիններն էլ սերում են նույն ամբողջական թարգմանությունից:

Պետք է անդրադառնալ հայկական ձեռագրերում պահպանված մեկ այլ գրվածքի՝ Կեղծ-Մեթոդիոսի մի շատ յուրօրինակ խմբագրության (այն իբրև աղբյուր օգտագործվել է Սուրբ Ներսեսի վարքում, որը վերագրված է X դարի հեղինակ Մեսրոպ Երեցին⁴⁰): Սա Կեղծ-Մեթոդիոսի մեկ այլ շատ տարբեր խմբագրություն է. հայերեն հին թարգմանությունն այնպես է վերամշակվել, որ շատ հատվածներ համարյա անճանաչելի են դարձել, սակայն մնացել է բառացի մի քանի զուգահեռ: Գրվածքի վերջին մասն ընդգրկված է մի XVII դարի ժողովածուում (ՄՄ 2270): Այն մոտ տասը թերթ է զբաղեցնում (169ա–179բ) և սկսվում հետևալ բառերով. «Այս յաղթութիւն քրիստոնէից է. առաջին թագաւորն արծիւն է» և այլն. Մեթոդիոսի անունը հիշատակված չէ: Շարունակության մեջ ասվում է, որ հաղթական «արծիւ» տիրակալը՝ «թագավորն հելենացւոց և հռոմեցոց, որք են ֆրոանգ», անսպասելի հարձակվում է իսմայելացիների վրա: Այս անգամ նա դաշնակիցներ ունի՝ երեք այլ թագավորներ (ակնարկվում են խաչակիրները) և Միքայել հրեշտակապետը: Իսմայելի որդիների պարտությունից և երկրի վրա խաղաղության հաստատումից հետո թագավորը հրեշտակապետի առաջնորդությամբ բարձրանում է Անտիոք քաղաքի դիմաց գտնվող բարձր լեռը: Ապա նա մեծ զորք է հավաքում և պարսիկներին հալածում մինչև Արաբիա ու եգիպտոս: Այս խմբագրությունը խաչակրաց արշա-

⁴⁰ Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց հայրապետի, Սովեթի հայկական Զ, Վենետիկ, տպարան Սրբոյն Ղազարու, 1853:

վանքների ակնհայտ հետքեր է կրում և հիշատակում Բյուզանդիայում Կոմնենոսների կայսերական հարստության անկումը (որը տեղի է ունեցել 1185 թ.), ուստի Սուրբ Ներսեսի վարքի վերագրումը X դարի հեղինակի, կարող է կասկած հարուցել (այլապես պետք է ենթադրել, որ գործը հետագայում ընդմիջարկության է ենթարկվել):

Ուշադրության արժանի է պարսիկների՝ որպես հաղթական թագավորի հետագա թշնամիների հատուկ հիշատակումը: Այն կարող է նշանակել, որ մի հայ գրվածքը խմբագրել է XVI–XVII դարերում, երբ Արևելյան Հայաստանը պարսիկների գերիշխանության տակ էր: Այս տարբերակում իսմայելացիներին հաղթող կայսրը չի համարվում վերջինը. նա առաջինն է կայսրերի վերջին խմբում, և մյուսներից ոմանք, ինչպես «արծիվը», իրենց խորհրդանիշներն ունեն՝ ձի, մանգաղ, եզ և այլն: Նրանցից վերջինի օրոք, որի անունն է Տիբերիոս, հայտնվելու է Նեոբ: Տիբերիոսը հավաքելու է Սուրբ Խաչի բեկորներն աշխարհի տարբեր մասերից, վերականգնելու է այն և տանելու Գողգոթա, որտեղ Աստծուն է հանձնելու Սուրբ Խաչը, իր թագն ու հոգին:

Դեռևս 1892 և 1894 թվականներին Մխիթարյան հայր Բարսեղ Սարգիսյանը մի հոդված հրատարակեց «Բազմավէպ»-ի երկու հատորներում քննարկելով այս խմբագրության մի ամբողջական օրինակ⁴¹ (հետագայում նա անդրադարձավ դրան հայ պարականոն գրականությանը նվիրված իր գրքում⁴²): Նա հաղորդում է, որ 73 էջանոց այդ գրվածքը «Ոսկեփորիկ» Ի-ի մաս է կազմում (Սարգիսյանն իր հոդվածում չի նշում ձեռագրի թիվը. միգուցե այն դեռևս համարակալված չէր): Մենք այդ «Ոսկեփորիկի» նկարագրությունը գտանք Վենետիկի ձեռագրացուցակի երկրորդ հատորում, որը նույն Բարսեղ Սարգիսյանը հրատարակել է 1924 թ.: Այն Մխիթարյան գրադարանի թիվ 259 ձեռագիրն է (հին համարը՝ 170) Ժէ-ԺԸ դարերի ընդօրինակություն: Ձեռագիրը մեզ մատչելի չի եղել, սակայն խնդրո առարկա երկից Սարգիսյանի մեջբերումների շնորհիվ, որի մեծ մասը նա համեմատում է Կեղծ-Մեթոդիոսի լատիներեն թարգմանության մի հին (1677 թ.) հրատարակության և Սուրբ Ներսեսի վարքի հետ, կարող ենք որոշ պատկերացնում կազմել դրա մասին: Այն անկասկած վերը քննարկված՝ ՄՄ 2270 ձեռագրում մասնակիորեն պահպանված խմբագրությունն է: Սարգիսյանը մեջբերում է վերնագիրը, որն սկսվում է հետևյալ բառերով. «Սուրբ հօրն մերոյ Մեթոսիոս Պատրիանոս եպիսկոպոսի»: Անվան ձևը, որն ամենայն հավանականությամբ արտացոլում է հունարենի սեռական հոլովը՝ Μεθοδίου Παταρίου, թույլ է տալիս ենթադրել, որ այս խմբագրու-

⁴¹ Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, «Մեծին Ներսիսի ընծայուած յոյն բնագիրն և անոր վերայ եղած կրկին խմբագրութիւնն», մասն 1, Բազմավէպ 50 (1892), մասն 2, Բազմավէպ 52 (1894):

⁴² Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվաներ գրոց վրայ, Վենետիկ, տպարան Սրբոյն Դազարու, 1898, էջ 155-193:

թյունը կարող է թարգմանված լինել հունարենից՝ «Հայտնություն» հին հայերեն թարգմանությունից անկախ: Սարգիսյանը մեջբերում է նաև երկի սկիզբը, որի բառապաշարն ու շարահյուսությունը տարբեր են «Հարցումն»-ի առաջին նախադասությունից (Վնտկ. 259 «Մինչ ելին ի դրախտէն Ադամ և Եւայ, կուսք էին, և զկնի Լ ամի ելանելոյ ի դրախտէն ծնան զԿայէն զանդրանիկն և զԿալմանայ քոյրն նորա»: – «Հարցումն» « Յորժամ Ադամ և Եւա ելեալք ի դրախտէն կոյսք գոլով, յետ Լ ամի ծնան զԿայէն և զքուր նորա զՔաղբան») ⁴³:

Ավելացնենք, որ 1889 թ. տպագրված իր գրքում Զարբհանալյանը հիշատակում է Կեղծ-Մեթոդիոսի մեկ ուրիշ խմբագրություն մի ձեռագրում, որի համարն ու պահպանման վայրը չի նշում ⁴⁴: Նա մեջբերում է գրվածքի սկիզբը՝ երկու նախադասություն («Յորժամ Ադամ և Եւա ելեալ ի դրախտէն կոյսք գոլով, յետ Լ ամի ծնան զԿայէն և զքոյր նորա զՔաղբանան: Եւ յետ այլ ևս Լ ամի ծնան զՀաբել և զԱղետովբա քոյր նորա»), որոնք համապատասխանում են «Հարցումն»-ի առաջին նախադասությանը (ՄՄ 5611-ի տարբերակին): Ըստ երևույթին՝ այդ ձեռագիրը պարունակել է հին թարգմանության մի ավելի ամբողջական բնագիր (թեև հունարենի համեմատ այն նույնպես համառոտված է թվում): Մյուս կողմից, սակայն, նրա մեջբերած վերնագիրը՝ «Սուրբ հօրն մերոյ Մեթօտիոս Պատրիանոս եպիսկոպոսի...» նույնն է, ինչ որ Սարգիսյանի ուսումնասիրած՝ Վնտկ. 259 ձեռագրում: Սա կարող է նշանակել, որ Զարբհանալյանի ձեռքին մի խառը խմբագրություն էր: Դժբախտաբար, մեզ չհաջողվեց Վենետիկի ձեռագրացուցակում նման ձեռագիր գտնել:

Փորձենք ամփոփել գոյություն ունեւ Կեղծ-Մեթոդիոսի «Հայտնություն» հայերեն մի բնագիր, որը գուցե ամբողջական էր և VII դարի վերջում կամ VIII դարի սկզբում թարգմանված հունարեն հնագույն տարբերակից: Այդ թարգմանության մասին վկայում են Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» ԼԲ գլուխը (որ համապատասխանում է «Հայտնության» «մարգարեական» բաժնին և ձեռագրերում հանդես գալիս նաև որպես առանձին գործ) և «Հարցումն» վերնագրով երկը (ՄՄ 9100 ձեռագրում ու որպես Վանական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիք»-ի մաս), որում հատվածներ կան Կեղծ-Մեթոդիոսի «պատմական» մասից: Սույն հին բնագրից բացի, Հայաստանում շրջանառվել է «Հայտնություն» մեկ այլ՝ շատ տարբեր խմբագրություն, որտեղ խաչակրաց արշավանքների և ավելի ուշ իրադարձությունների հետքեր կան: Այն, հնարավոր է, Կեղծ-Մեթոդիոսի հին հայերեն թարգմանության XII-XIII դարերում արված խմբագրություն է, որ գուցե մասնակի փոփոխությունների է ենթարկվել XVI կամ XVII դարում: Դրա մասին վկայում են Վնտկ. 259 ու ՄՄ 2270

⁴³ Տե՛ս այս և ուրիշ զուգահեռներ սույն հոդվածի վերջում:

⁴⁴ **Գարեգին Զարպհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, էջ 563-564:

ձեռագրերը, ինչպես նաև՝ Սուրբ Ներսեսի վարքը (եթե Մեսրոպ երեցն իրոք վերջինիս հեղինակն է, ապա պետք է ընդունենք, որ այս խմբագրության մի ավելի հին տարբերակ էլ գոյություն է ունեցել խաչակիրներից առաջ): Վերջապես, դատելով մեզ անհայտ մի ձեռագրի մասին Զարբհանալյանի հաղորդած կցկտուր տեղեկություններից, կարող ենք ենթադրել, որ միջնադարյան Հայաստանում հայտնի է եղել նաև մի երրորդ խառը խմբագրություն: Այս եզրակացությունները վերջնական համարվելու հավակնություն չունեն: Հետագա քննությունը կարող է այլ վկայություններ բացահայտել և դյուրացնել Հայաստանում Կեղծ-Մեթոդիոսի ավանդույթի բարդ խնդրի լուսաբանումը:

Բնագրերը պարունակում են հետևյալ նյութերը.

Ա) I.1–III.7, VIII.1–10 (+XIII.19–21) ՄՄ 5611-ի (ԺԳ դ.) և ՄՄ 9100-ի (1686 թ.) հիման վրա = Stone 1996,

Բ) XI.1–XIV.14 (+VII.10)՝ Օրբելեան 1910-ի (1910⁴⁵), Օրբելեան 1861-ի (Mos 1861⁴⁶), ՄՄ 271-ի (1513 թ., համարվում է Օրբելյանի երկի պահպանված լավագույն ձեռագիրը) և ՄՄ 1487-ի (1653–56թթ.) հիման վրա,

Գ) հայերեն ուշ խմբագրություն (մոտավորապես համապատասխանում է XIII.11 – XIV.14 գլուխներին)՝ ՄՄ 2270-ի (1661 թ.) հիման վրա:

Քանի որ երկը թարգմանված է հունարենից, տողատակում նշել ենք հայերեն ու հունարեն բնագրերի տարբերություններն ըստ Aerts & Kortekaas 1998-ի (Rec. 1) և երկրորդ խմբագրությունից (Rec. 2)՝ ըստ Lolos 1976-ի (ընդհանուր «հուն.» նշումը վերաբերում է առաջինին, իսկ անհրաժեշտության դեպքում ավելացված են այդ հրատարակության տարբերակները՝ օգտագործված ձեռագրերի նշաններով, առանձին դեպքերում էլ՝ «1-ին խմբ.» և «2-րդ խմբ.» հապավումները):

⁴⁵ Տե՛ս ծան. 23-ում բերված հրատարակության բնագիրը:

⁴⁶ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մակուա, 1861:

ԲՆԱԳՐԵՐ

Ա. I.1–III.7, VIII.1–10 (+XIII.19–21)

I (1) Յորժամ Ադամ և Եւա ելեալք ի դրախտէն կոյսք գորով, յետ Լ ամի¹ ծնան զԿայէն² և զքոյր նորա զՔաղբան³, և յետ այլ Լ ամի ծնան Հաբէլ և զԱղեբովբայ⁴ քոյր նորա⁵: (2) Եւ յետ⁶ Լ ամի⁷ սպան Կայէն զՀաբէլ⁸, և սուգ առեալ Ադամ և⁹ Եւա կոծեցան ի վերա նորա ամս ճ: Իսկ յետ ՄԼ ամի առաջին դարուն¹⁰ ծնաւ զՍէթ¹¹ այր հսկայ ի նմանութիւն Ադամայ, և Յ-երորդի առաջ-նեբորդի դարուն¹² որդիքն Կայէնի սուփէին ի կանայս եղբօր¹³ իւրեանց: (3) Գիտացեալ¹⁴ զայն¹⁵ Ադամայ, տրտմէր յոյժ¹⁶: (4) Իսկ Պ¹⁷ ամի կենացն Ադամայ տարածեցաւ¹⁸ պոռնկութիւն յորդոցն Կայէնի եղբայրասպանի¹⁹: (5) Եւ վախճա-

¹ Լ ամի // հուն. + τῆς ἐξόδου αὐτῶν ἐκ τοῦ παραδείσου «դրախտից նրանց դուրս գալու»:

² զԿայէն // հուն. + τὸν πρωτότοκον «անդրանիկին»:

³ զՔաղբան // հուն. Καλμάναν:

⁴ զԱղեբովբայ // հուն. Δεβόρα:

⁵ ՄՄ9100 չիք և յետ այլ Լ ամի ծնան Հաբէլ և զԱղեբովբայ քոյր նորա:

⁶ ՄՄ9100 յետ ևս:

⁷ յետ Լ ամի // հուն. τῷ δὲ ἑκατοστῷ τριακοστῷ χρόνῳ τῆς ζῶης τοῦ Ἀδάμ «Ադամի կյանքի հարյուր երեսուներորդ տարում»:

⁸ զՀաբէլ // հուն. + τὸν ἀδελφὸν αὐτοῦ «իր եղբորը»:

⁹ ՄՄ9100 չիք և:

¹⁰ ՄՄ9100 չիք առաջին դարուն // հուն. + ὁ ἔστιν ὁ πρῶτος αἰὼν «որն առաջին հարյուրամյակն է»: Հայերեն բնագրի «դար»-ը համապատասխանում է հունարեն χιλιάς («հազարամյակ»)-ին, իսկ αἰὼν նշանակում է «դար»՝ «հարյուրամյակ» իմաստով, ինչպես և լատիներեն թարգմանություն մեջ է (saeculum):

¹¹ ՄՄ5611 Սէթ:

¹² ՄՄ5611 դարուն և Յ-երորդի առաջներորդի դարուն // հուն. τῷ δὲ πεντακοσιοστῷ χρόνῳ «հինգհարյուրերորդ տարում»:

¹³ եղբօր // հուն. τῶν ἀδελφῶν «եղբայրների»:

¹⁴ ՄՄ9100 և գիտացեալ:

¹⁵ ՄՄ9100 չիք գայն:

¹⁶ ՄՄ5611 տրտմեցաւ յանձն // հուն. (2-րդ խմբ. չիք) + ἐν δὲ τῷ ἑξακοσιοστῷ χρόνῳ τῆς αὐτῆς <πρώτης> χιλιάδος οἴστρω ἔρωτος πορνείας αἱ τούτων κατεσχέθησαν γυναῖκες καὶ εἰς μανίαν ἐτράπησαν καὶ τοῖς ἰδίοις ἀνδράσιν ὡς γυναῖξιν ἐκέχρητο. καὶ γεγόνασιν ἀληθῶς προῦπτος αἰσχύνη τοῖς ὁρῶσι, καταπορευέσασθαι τὴν αἰδῶ «նույն առաջին հազարամյակի վեցհարյուրերորդ տարում նրանց կանայք համակվեցին պոռնկական կրքով և խելագարվեցին ու իրենց այրերի հետ վարվում էին, ինչպես կանանց հետ. և տեսնողների համար դարձան բացահայտ ամոք՝ տրվելով խայտառակ անառակությամբ»:

¹⁷ ՄՄ5611 յոյժ ճ:

¹⁸ տարածեցաւ // հուն. + ἐν τῇ γῆ «երկրի վրա»:

¹⁹ ՄՄ9100 եղբայրասպանէ:

նեցաւ Ադամ ամաց Ջլ առաջին դարուն, և յետ այսորիկ որոշեցան²⁰ ի միմեանց ազգքն Սէթայ յազգէն Կայէնի, և եհան Սէթ զազգն իւր զլերամբն²¹ յանդիման դրախտին: Իսկ Կայէն և իւր ազգն բնակեցան ի դաշտին²², յոր²³ եղբայրասպանութիւն գործեցաւ²⁴:

II (1) Իսկ ի Խ-երորդ²⁵ Բ դարուն²⁶ յարեան²⁷ շարարուեստք²⁸ յորդոցն Կայէնի. Յորալ²⁹ և Թողիկէլ³⁰ որդիք Ղամեքայ կուրի, սպանողի³¹ զԿայէն, որոց տիրեալ Բանսարկուն շփոթեաց, որ³² զամենայն երգեցողական արուեստ յարմարեցին³³: (2) Իսկ Պ-երորդի³⁴ ամին³⁵ Բ դարուն առաւել³⁶ բորբոքեցան պոռնկութիւնք³⁷ ի բանսարկուէն³⁸ Կայէն³⁹, քան զազգն որ յառաջ քան զնոսա, զի⁴⁰ զօրէն անասնոց անխտիր խառնակէին⁴¹, արուագիտութեամբ վարէին⁴²: (3) Իսկ⁴³ ի Ջ-երորդի ամին⁴⁴ Բ դարուն յաւել ևս շար⁴⁵ Բանսարկուն տալ պատե-

²⁰ ՄՄ9100 որոշեցան ազգն:

²¹ ՄՄ5611 լերամբն:

²² ՄՄ5611 չիք Իսկ Կայէն և իւր ազգն բնակեցան ի դաշտին:

²³ ՄՄ9100 չիք յոր // հուն. + θεήλατον «աստվածաւաճ»:

²⁴ գործեցաւ // հուն. (2-րդ խմբ. չիք) + τῷ δὲ τεσσαρακοστῷ χρόνῳ τοῦ Ἰάρεδ ἐπληρώθη ἡ πρώτη χιλιὰς ἤγουν ὁ πρῶτος αἰὼν «Հարեղի քառասուներորդ տարում լրացավ առաջին հազարամյակը կամ առաջին դարը»:

²⁵ Իսկ ի Խ-երորդ // հուն. τῷ δὲ τριακοσιοστῷ τεσσαρακοστῷ χρόνῳ τοῦ Ἰάρεδ, ἤγουν «Իսկ Հարեղի երեք հարյուր քառասուներորդ տարում, այն է»:

²⁶ ՄՄ9100 չիք Իսկ ի Խ-երորդ Բ դարուն:

²⁷ ՄՄ5611 յարար:

²⁸ ՄՄ9100 շար արուեստարք // հուն. + ἄνδρες, ποιητοὶ καὶ παράνομοι, πάσης ἀνομίας πλήρεις «այրեր՝ շար ու անիրավ, լի ամեն տեսակ անօրենությունք»:

²⁹ Յորալ, հմմտ. հուն. R' Ιουβήλ // DG' Ιουβήθ:

³⁰ ՄՄ9100 Թողիկէլ, հմմտ. հուն. Θουλουκίη | հավանաբար սրանք «Յովբէլ»-ն ու «Յովբալ»-ն են (Ծննդ. Գ 20-21), ըստ տարածված մի ավանդութեան՝ նրանց հայր Ղամեքը սպանեց Կայէնին (տե՛ս Stone, 120, n. 7):

³¹ ՄՄ9100 զսպանողի:

³² ՄՄ9100 որոց:

³³ ՄՄ9100 արմարեաց:

³⁴ ՄՄ5611 Ըճ-երորդի ամին // հուն. πεντακοσιοστῷ «հինգհարյուրերորդ»:

³⁵ ՄՄ5611 չիք ամին:

³⁶ ՄՄ5611 առաւելեալ:

³⁷ պոռնկութիւնք // հուն. ἐπὶ τῇ ἀθέσμῳ πορνείᾳ πάντες οἱ ἄνθρωποι «բոլոր մարդիկ անօրեն պոռնկությունք»:

³⁸ ի բանսարկուէն // ἐν τῇ παρεμβολῇ «ճամբարում». քարգմանությունն աղավաղված է:

³⁹ ՄՄ9100 Կայէնէ:

⁴⁰ ՄՄ9100 և:

⁴¹ ՄՄ9100 չիք խառնակէին:

⁴² անխտիր խառնակէին, արվագիտութեամբ վարէին // հուն. ἀλλήλοις ἐπέβαινον, ἐπὶ μὲν τοὺς ἄρρενας τὸ θῆλυ, ἐπὶ δὲ τὸ θῆλυ τὸ ἄρρεν «միմյանց վրա էին բարձրաճում այրերը կանանց, կանայք՝ այրերի»:

⁴³ ՄՄ9100 չիք Իսկ:

⁴⁴ ՄՄ5611 չիք ամին | ի Ջ-երորդի ամին // հուն. τῷ δὲ ἑπτακοσιοστῷ ἔτει τῆς τοῦ Ἰάρεδ ζωῆς ἦτοι ἐν τῇ «Իսկ Հարեղի կյանքի յոթհարյուրերորդ տարում, այն է»:

⁴⁵ շար // հուն. + καὶ ὀλέθριος «և կոռուսաբեր»:

րազմ՝ մերձեցուցանել⁴⁶ զուստերսն⁴⁷ Սեթայ ի դստերսն Կայէնի⁴⁸: Եւ մղեալ ընկեց զհակայսն զորդիսն⁴⁹ Սեթայ ի խորխորատ մեղաց: Եւ բարկացեալ Տեանն Աստուծոյ և⁵⁰ ի կատարել Բ դարուն, եղև շրհեղեղն⁵¹:

III (1) Ի Ռ-երորդի ամին⁵² կենաց Նոյի, յամի ժԲ-երորդի Գ դարուն⁵³, յետ ելանելոյ ի տապանէն շինեցին որդիքն Նոյի շինուած⁵⁴ յարտում երկրին⁵⁵, զոր անուանեցին Ռամնոն⁵⁶ ըստ անուան⁵⁷ ելոցն ի տապանէն անուանց⁵⁸ Ը-ից⁵⁹: (2) Իսկ ի Ջ⁶⁰ ամին⁶¹ Նոյի ծնաւ⁶² որդի ըստ նմանութեան իւրոյ, և անուանեցին զանուն նորա⁶³ Մանիտոն⁶⁴: Եւ կացեալ ամս ճ⁶⁵, որդւոյն իւրոյ Մանիտոնի ետ⁶⁶ ինչս և առաքեաց զնայ յովեայն: (3) Եւ յետ վախճանելոյն Նոյի ՈՂ ամի երրորդ դարուն⁶⁷, ելին⁶⁸ որդիքն Նոյի և շինեցին աշտարակ յերկրին Սենայար⁶⁹, և անդ խառնակեցան լեզուք⁷⁰: (4) Իսկ Մանիտոն⁷¹ յովեայն մինչև ցծովն, որ

⁴⁶ մերձեցուցանել // հուն. πορνείας προσάψαι «պոռնկությամբ մերձեցնալ»:

⁴⁷ ՄՄ9100 զորդիս:

⁴⁸ ՄՄ9100 չիք Կայէնի:

⁴⁹ զորդիսն, հմմտ. հուն. 2-րդ խմբ. ἐκ τῶν υἱῶν «որդիներից» // հուն. 1-ին խմբ. չիք:

⁵⁰ ՄՄ5611 չիք և:

⁵¹ շրհեղեղն // հուն. + καὶ ἠφάνισθη πᾶσα ἡ πρώτη δημιουργία τε καὶ διάπλασις «և անհայտացավ ողջ առաջին արարչագործությունն ու ստեղծագործությունը»:

⁵² ՄՄ5611 չիք ամին:

⁵³ ՄՄ9100 ԲԺ-ան երկրորդուն | Ի Ռ-երորդի ամին կենաց Նոյի, յամի ժԲ-երորդի Գ դարուն // հուն. + καὶ τῷ ἑξακοσιοστῷ δωδεκάτῳ ἔτει τῆς ζωῆς τοῦ Νῶε «Նոյի կյանքի վեց հարյուր տասներկուերորդ տարում»:

⁵⁴ շինուած // հուն. + νέον «նոր»:

⁵⁵ ՄՄ9100 յերկրին արտում շինուածս:

⁵⁶ Ռամնոն // հուն. Θάμνον. հմմտ. ասորերեն սկզբնագրի՝ Ալեքսանդրի անգլերեն թարգմանության մեջ (Alexander, *The Byzantine Apocalyptic Tradition*, 37). “Temanōn, because of the name of those eight [temanē] souls that survived in the world.”

⁵⁷ անուան // հուն. + τοῦ ἀριθμοῦ «թվի»:

⁵⁸ անուանց // հուն. ψυχῶν «հոգիների»:

⁵⁹ ՄՄ9100 ի տապանակէն անուանուացուեանց:

⁶⁰ ՄՄ9100 ԹՃ:

⁶¹ ի Ջ ամին // հուն. τῷ δὲ ἑκατοστῷ ἔτει τῆς τρίτης χιλιᾶδος «երրորդ հազարամյակի հարյուրերորդ տարում»:

⁶² ՄՄ9100 ծնաւ Նոյ:

⁶³ ՄՄ9100 անուանեաց զնա:

⁶⁴ Մանիտոն, հմմտ. հուն. R Μονίτων // հուն. հիմնական բնագիր՝ Ιώνητον:

⁶⁵ կացեալ ամս ճ // հուն. τῷ δὲ τριακοστῷ χρόνῳ τῆς τρίτης χιλιᾶδος «երրորդ հազարամյակի երեքհարյուրերորդ տարում»:

⁶⁶ ՄՄ9100 ետ որդոյ իւրոյ Մանիտոնի:

⁶⁷ ՄՄ5611 ի Ղ ամի:

⁶⁸ ելին // հուն. + ἐκ τῆς ἐφῶς γῆς «արևելյան երկրից»:

⁶⁹ ՄՄ5611 երկիրն Սենարա:

⁷⁰ խառնակեցան լեզուք // հուն. + καὶ διεμερίσθησαν ἐπὶ πρόσωπου πάσης τῆς γῆς «և բաժանվեցին երկրի երեսով մեկ»:

⁷¹ ՄՄ5611 Մանիտոնի. հմմտ. հուն. R Μονήτων // հուն. հիմնական բնագիր՝ Ιώνητος:

կոչի Արեգ Գաւառ⁷², աստանօր ել⁷³ և բնակեցաւ անդ: (5) Այս Մանիտոն⁷⁴ առ շնորհք յԱստուծոյ իմաստութեան, որպէս⁷⁵ զարուեստ աստեղագիտութեան: Առ նա երթեալ Նեբրովթայ⁷⁶ առնոյր խորհուրդ ի նմանէ⁷⁷: Այս Նեբրովթ⁷⁸ նախ թագաւորեաց ի վերայ երկրի: (6) Իսկ Ղ-երորդի⁷⁹ ամի Գ⁸⁰ դարուն շինեցաւ Բաբելոն մեծ և թագաւորեաց ի նմայ Նեբրովթ: Եւ յետ այսորիկ արարին որդիքն Քամայ⁸¹ իւրեանց թագաւոր, որում անուն էր Պոնտիպոս: Ղ⁸² ամի Գ դարուն⁸², Գ ամի թագաւորութեան Նեբրովթայ, առաքեաց արս իմաստունս⁸³ յորդուցն Աբեդի, ճարտարապետս⁸⁴: Եւ երթեալ⁸⁵ առ Մանիտոն⁸⁶, շինեցին նմա քաղաք, և կոչեաց զնա Մանիտոն⁸⁷ ըստ յորշորջման իւրոյ⁸⁸: (7) Եւ էր խաղաղութիւն⁸⁹ ի մէջ Մանիտոնի⁹⁰ և Նեբրովթայ⁹¹:

VIII (1) Լուր⁹² ստուգապէս զհարդ⁹³ Գ թագաւորութիւնք զուգեցան՝

Եթովպացիք, Մակեդոնացիք, Հոռմայեցիք, Հելենացիք⁹⁴, զոր ետես Դանիէլ Գ հողման⁹⁵: (2) Քանզի Փրիլպպոս⁹⁶ Մակեդոնացի⁹⁷ առ իւր կին զՔուսիդ⁹⁸

⁷² ՄՄ5611 արեգասառ // հուն. + ἔνθα ἡ ἀνατολή γίνεται τοῦ ἡλίου «այնտեղ Ժառնու է արևը» (2-րդ խմբ. չիք):

⁷³ ՄՄ5611 ել Քանան:

⁷⁴ Մանիտոն, հմմտ. հուն. R Μονήτων // հուն. Ἰώνητος:

⁷⁵ որպէս // հուն. ὅς πρῶτος ... ἐφεύρατο «որն առաջինը ... հայտնագործեց»:

⁷⁶ Նեբրովթայ // հուն. + ὁ γίγας καὶ παιδευθείς «որը հսկա էր և կրթված» (2-րդ խմբ. չիք):

⁷⁷ ի նմանէ // հուն. + ἐφ' ᾧ βασιλεῦσαι αὐτόν «քե ինքը որտեղ պիտի թագավորի»:

⁷⁸ Նեբրովթ // հուն. + τῶν ἡρώων ἐτύγγανεν τῶν τέκνων τοῦ Σήμ, καὶ αὐτὸς «Սեմի հերոս որդիներից էր. և սա»:

⁷⁹ ՄՄ9100 իններորդ. // հուն. τῷ δὲ ἑπτακοσιοστῷ ἐνενηκοστῷ ἔτει «յոթ հարյուր իննսուներորդ տարում»:

⁸⁰ Գ // հուն. τρίτης «երրորդ»:

⁸¹ ՄՄ9100 որդիքն Քամայ արարին:

⁸² Ղ⁸² ամի Գ դարուն // հուն. καὶ τῷ ἑπτακοσιοστῷ ἐνενηκοστῷ ἐνάτῳ χρόνῳ τῆς τρίτης χιλιᾶδος «երրորդ հազարամյակի 799-րդ տարում»:

⁸³ ՄՄ5611 իմաստուն. հմմտ. հուն. Ἐδυνατοῦς καὶ ἐπιστήμονας «հզոր ու գիտուն» // հուն. δυνατοῦς «հզոր»:

⁸⁴ ճարտարապետս // հուն. σοφοὺς πάνυ τεχνίτας καὶ ἀρχιτέκτονας «հույժ իմաստուն արհեստավորների և ճարտարապետների»:

⁸⁵ ՄՄ9100 երթալ // հուն. κατήλθον εἰς τὴν ἐῶαν γῆν «իրան արևելյան երկիրը»:

⁸⁶ առ Մանիտոն // հուն. πρὸς Ἰώνητον (R Μονήτονα) τὸν υἱὸν Νῶε «Նոյի որդի Յոնիտոնի (Մոնիտոնի) մոտ»:

⁸⁷ ՄՄ9100 չիք շինեցին նմա քաղաք, և կոչեաց զնա Մանիտոն:

⁸⁸ ՄՄ5611 չիք ըստ յորշորջման իւրոյ:

⁸⁹ խաղաղութիւն // հուն. + πολλή ἐπὶ τῆς βασιλείας «մեծ թագավորությունում»:

⁹⁰ Մանիտոնի // հուն. Ἰώνητου:

⁹¹ ՄՄ5611 չիք և էր խաղաղութիւն ի մէջ Մանիտոնի և Նեբրովթայ // հունարեն բնագրի մի գրաւի հատված (III.7-VII.2, էջ 84-106) թարգմանված չէ:

⁹² Լուր // հուն. + τοίνυν αὐθις «արդ կրկին»:

⁹³ ՄՄ9100 զի արք:

⁹⁴ Հելենացիք // հուն. + αὐταὶ εἰσιν «արանք են» (2-րդ խմբ. չիք):

⁹⁵ Գ հողման // հուն. + τῆς ὑπ' οὐρανόν ... συσσειόντας τὴν μεγάλην θάλασσαν «երկնի տակ... որոնք ցնցում էին մեծ ծովը», հմմտ. Դան. է 2-7:

⁹⁶ Փրիլպպոս // հուն. + Ἀλεξάνδρου πατῆρ «Ալեքսանդրի հայրը»:

⁹⁷ Մակեդոնացի // հուն. + ἦν καὶ «կար և»:

⁹⁸ ՄՄ5611 Քուսիդ, հուն. Χουσήθ:

դուստր Փաղայ⁹⁹ արքայի եթովպացոց, յորմէ ծնաւ Աղեքսանդրոս¹⁰⁰. և իբրև զգեղեցիկ ոմն ըստ Ոլոմպիէ անուանեցան¹⁰¹: (3) Սա շինեաց զԱղեքսանդր¹⁰² և թագաւորեաց ի նմա¹⁰³ ամս ժԲ¹⁰⁴: Սա¹⁰⁵ սպան զԴարեհ¹⁰⁶ և¹⁰⁷ տիրեաց աշխարհաց, քաղաքաց¹⁰⁸ և միաւորեաց զերկիրն շուրջանակի¹⁰⁹ մինչև ի ծովն, որ կոչի Արեգ Քաղաք¹¹⁰, և անդ¹¹¹ տեսեալ ազգս պիղծս¹¹² և դժվարատեսակս: (4) յՈրդոցն Քամայ¹¹³, որ ուտէին¹¹⁴ զսողունս և զամենայն¹¹⁵ զազրալի¹¹⁶ ճրճիս¹¹⁷, զճանճս¹¹⁸, զմկունս, զկատուս, զօձս¹¹⁹, և զմարմինս մեռելոց ոչ թաղէին այլ ուտէին: (5) Զայս¹²⁰ տեսեալ Աղեքսանդրոս, ապա խորհեցաւ¹²¹ շտալ թոյլ բնա-

⁹⁹ Փաղայ // հուն. Φώλι:

¹⁰⁰ Աղեքսանդրոս // հուն. Ἰ Ελλήνων τύραννος γεγωνός «որը դարձել էր հույների բռնակալը»:

¹⁰¹ ՄՄ5611 ընդ Ոլոմպիադ անուանեցաւ | և իբրև զգեղեցիկ ոմն ըստ Ոլոմպիէ անուանեցան հատվածը հունարենում չկա::

¹⁰² զԱղեքսանդր = հուն. G // հիմնական բնագիր + τὴν μεγάλην «մեծ»:

¹⁰³ ՄՄ5611 չիք ի նմա:

¹⁰⁴ ԺԲ = հուն. 2-րդ խմբ. δώδεκα // 1-ին խմբ. δέκα καὶ ἑννέα «ասանիներ»:

¹⁰⁵ Սա // հուն. + κατελθὼν εἰς τὴν ἑῴαν «իջնելով արևելյան երկիրը»:

¹⁰⁶ ԳԴարեհ // հուն. + τὸν Μηδον «մարին»:

¹⁰⁷ ՄՄ5611 չիք և:

¹⁰⁸ ՄՄ9100 չիք քաղաքաց | աշխարհաց, քաղաքաց // հուն. χωρῶν καὶ πόλεων πολλῶν «բազում երկրների ու քաղաքների»:

¹⁰⁹ միաւորեաց զերկիրն շուրջանակի // հուն. περιενόστησε τὴν γῆν καὶ κατήχθη «շրջանցեց երկիրն ու իջավ»:

¹¹⁰ Արեգ Քաղաք // հուն. ἡλίου χώρας «արևի երկիր»:

¹¹¹ ՄՄ9100 աստանօր:

¹¹² ՄՄ9100 պիղծոյ:

¹¹³ յՈրդոցն Քամայ // հուն. εἰσι τῶν υἱῶν Ἰαφέθ ἀπόγονοι, ὧν τὴν ἀκαθαρσίαν θεασάμενος ἐμυσάχθη «կան Հաբեթի որդիների հետևորդներ, որոնց անմաքությունը տեսնելով նա զզվեց»:

¹¹⁴ որ ուտէին // հուն. ἦσθιον οὖν ἅπαντες αὐτῶν καθαροειδῶς «նրանցից բոլորը անմաքուր ձևով ուտում էին»:

¹¹⁵ զսողունս և զամենայն // հուն. չիք:

¹¹⁶ զազրալի // հուն. + καὶ κίβδηλα «և անմաքուր»:

¹¹⁷ ՄՄ5611 ճիբս | ճիբս = հուն. R κόνωπας // հիմնական բնագիր κύνας «շներ»:

¹¹⁸ զճանճս // հուն. չիք:

¹¹⁹ զօձս // հուն. + νεκρῶν σάρκας, ἀμβλώματα, ἐκτρώματα, ἔμβρυα μήπω τελείως ἀπαρτισθέντα ἢ τινα τῆς διαπλάσεως ἀποσώζοντα χαρακτῆρα, καὶ ταῦτα κτηνῶν, οὐ μὴν ἀλλὰ καὶ ἅπαν εἶδος θηρίων ἀκαθάρτων «մեռածների մարմիններ, վիժվածներ, դեռևս կատարելապես չձևավորված և կազմավորման կերպարանք պահպանած սաղմեր. և դրանք՝ ընտանի կենդանիների, ինչպես նաև ամեն տեսակ անմաքուր զազանների»:

¹²⁰ զայս // հուն. + ὑπ' αὐτῶν ἐναγῶς μυσαρῶς γενόμενα «որ նրանց ձեռքով արվել է անիծյալ ու այլանդակ ձևով»:

¹²¹ խորհեցաւ // հուն. δεδουκῶς «վախեցնելով»:

կիլ նոցայ յերկրի սրբում¹²² և պղծել զնայ¹²³ գարշելի գործովք իւրեանց: Խնդրեաց յԱստուծոյ սրտի մտօք և¹²⁴ ժողովեաց զամենեսեան զնոսա.¹²⁵ զկանայս նոցա և զմանկունս նոցա¹²⁶: (6¹²⁷) Եւ զհետ մտեալ¹²⁸ վարեաց զնոսայ մինչև¹²⁹ ի ծագս հիւսիսոյ¹³⁰, որոյ ոչ գոյ մուտ¹³¹ յարևելից մինչ ի մուտս արևու և ոչ այլ ուստեք այսր մտանել¹³²: (7) Վաղվաղակի խնդրեաց¹³³ յԱստուծոյ, և¹³⁴ լուաւ աղօթից նորայ և հրամայեաց երկուց լերանց, որ յորշորջին Չոլք¹³⁵ Հիւսիսոյ¹³⁶, և մերձեցան¹³⁷ ի միմեանս կանկունս¹³⁸ ԲԺ: (8) Եւ յարեարեաց անդ դրունս պղնձիս և ծեփեաց զնա տեսակաւ ինչ անլուծանելիս¹³⁹, զի թէ խորհեսցեն¹⁴⁰ լուծանել երկաթով, մի կարասցեն, և եթէ հրով կամեսցին այրել, ոչ կարասցեն: Զի սա և զհուր¹⁴¹ շիջուցանէ, զի բնութիւն տեսակի այսորիկ¹⁴² ընդ կործանմամբ երկաթով ոչ անկանի և ոչ ընդ լուծմամբ¹⁴³ հրոյ¹⁴⁴, զի ամենայն դիւային մտածութեան¹⁴⁵ յաղթէ¹⁴⁶: (9) Զայս այժմ

¹²² ՄՄ5611 յերկիրն:

¹²³ ՄՄ9100 պղծեալն նոքա:

¹²⁴ ՄՄ5611 չիք և | և = հուն. R // հուն. հիմնական բնագիր + προστάξας «հրամայելով»:

¹²⁵ ՄՄ9100 զնոսա և:

¹²⁶ ՄՄ5611 չիք նոցա // հուն. + καὶ ἀπαξιαπλῶς πάσας τὰς παρεμβολὰς αὐτῶν «և անհասարակ նրանց բոլոր համբարները»:

¹²⁷ Հմմտ. հուն. [8].6¹:

¹²⁸ զհետ մտեալ // հուն. + ἐκ τῆς ἐώας γῆς «արևելքի երկրից»:

¹²⁹ մինչև // հուն. ἕως οὗ εἰσῆχθησαν ἐν «մինչև որ մտան»:

¹³⁰ ՄՄ5611 հիւսուսի:

¹³¹ մուտ // հուն. + οὐτε ἕξιδος «ոչ էլ ելք»:

¹³² ՄՄ5611 չիք այսր մտանել | այսր մտանել // հուն. δι' ἧς τις πρὸς αὐτοὺς ἢ εἰσέλθη ἢ ἐξέλθη «որի միջով մեկը նրանց մտտ մտներ կամ դուրս գար»:

¹³³ ՄՄ5611 վաղվաղակի այսր մտանել ընտրեաց | խնդրեաց. = հուն. R // հուն. հիմնական բնագիր + ὁ Ἀλέξανδρος «Ալեքսանդրը»:

¹³⁴ Եւ // հուն. + κύριος ὁ θεός «Տեր Աստված»:

¹³⁵ ՄՄ9100 ցոյք | Չոլք // հուն. Μαζοί «կրծեր»:

¹³⁶ ՄՄ5611 հիւսուսոյ:

¹³⁷ ՄՄ5611 մերձեցան մինչև:

¹³⁸ ՄՄ5611 մանկունք:

¹³⁹ ՄՄ9100 անտեսանելի | անլուծանելիս // հուն. 1-ին խմբ. ἀσυγκίτη «^հ» // հուն. 2-րդ խմբ. ἀσύγχυτον «անխառն»:

¹⁴⁰ ՄՄ9100 խորհիցեն:

¹⁴¹ ՄՄ9100 վասն զի հուր:

¹⁴² տեսակի այսորիկ // հուն. τοῦ ἀσυγκίτου ἐστιν «^հ»:

¹⁴³ ՄՄ9100 չիք երկաթով ոչ անկանի և ոչ ընդ լուծմամբ:

¹⁴⁴ ընդ կործանմամբ երկաթով ոչ անկանի և ոչ ընդ լուծմամբ հրոյ՝ բառացի թարգմանություն է հունարենից՝ οὐτε σιδήρου ὑφίσταται τὴν κατάλυσιν, οὐτε πυρὸς τὴν διάλυσιν:

¹⁴⁵ դիւային մտածութեան // հուն. + καὶ ἐπινοίας ἐώλους τε καὶ κενάς «և հնացած ու սին մտքեր»:

¹⁴⁶ ՄՄ9100 հանապարհաց յաղթէ մտածութեանց:

զգարշելի ազգս՝ շարարուեստութեամբ հարեալ և այսպիսի անմարդութեամբ վարժեալ, խաբանեաց¹⁴⁷, որպէս զի մի¹⁴⁸ կարացեն¹⁴⁹ բանալ դրունս գայտսսիկ¹⁵⁰: (10) Ըստ մարգարէին Եզէկիէլի¹⁵¹, թէ՛ «յԱւուրս յետինս ի կատարածի աշխարհի¹⁵² ելցեն Գովք և Մագովք յերկիրն Իսրայէլի»¹⁵³, որ են ազգք և թագաւորք¹⁵⁴ ԻԲ¹⁵⁵, զորս արգել Աղեքսանդրոս ի ծագս տիեզերաց¹⁵⁶, որ են այսոքիկ. Գովք և Մագովք, Անիգ և Անագիք¹⁵⁷, Քենարաս և Քեփար¹⁵⁸, Փոտինացիք, Մնիւացիք¹⁵⁹, Ղողինացիք, Փազիացիք¹⁶⁰, Ջարմատեանք, Եքեզիւք, Սարմատք, Թեփրացիք, Քանեհացիք, Արմազարդք, Գամիրարք, Մարդակերք, Ազիք, Ալանք, Փոզոսին, որ կոչին Շանագլուիք, Աթարբակացիք¹⁶¹ և Ասղատքացիք¹⁶²:

¹⁴⁷ ՄՄ5611 անմարդութեան վարժանեալ խափանէ | զգարշելի ազգս շարարուեստութեամբ հարեալ և այսպիսի անմարդութեամբ վարժեալ, խաբանեաց // հուն. ἐναγῆ καὶ κίβδηλα καὶ μυσαρῳάτα ἔθνη πάσαις ταῖς μαγικαῖς κακοτεχνίαις κέχρηνται, καὶ ἐν τούτοις αὐτῶν ῥυπαρὰν καὶ ἀπάνθρωπον, μᾶλλον δὲ λέγειν μισόθεον, κατήργησε γοήτειαν «ἀνίθῳյա և անմաֆուս ու ամենախայտառակ ազգերը կիրառում են ամեն մոգական շարավեստություն և այդու բանեցնում կեղտոտ ու անմարդկային, ավելին ասեմ՝ աստվածատյաց կախարդություն»:

¹⁴⁸ ՄՄ5611 մի զօրացեալ նոցա:

¹⁴⁹ մի կարացեն // հուն. + μήτε πυρὶ μήτε σιδήρῳ ἢ τινι ἑτέρῳ ἐπινοία «ոչ հրով, ոչ երկաթով, ոչ էլ որևէ այլ հնարով»:

¹⁵⁰ դրունս գայտսսիկ // հուն. + καὶ ἀποδράσαι. (10) ἐν δὲ τοῖς ἑσχάτοις καιροῖς «ու փախչել: (10) Իսկ վերջին ժամանակներում»:

¹⁵¹ Ըստ մարգարէին Եզէկիէլի // հուն. κατὰ τὴν τοῦ Ἰεζεκιὴλ προφήτειαν τὴν λέγουσαν «ῥυσὸν Եզէկիէլի մարգարէության, որն ասում է»:

¹⁵² ՄՄ9100 յետնումն ի կատարածիս:

¹⁵³ յԱւուրս յետինս... Իսրայէլի. հմմտ. Եզէկ. ԼԸ:

¹⁵⁴ ՄՄ5611 քագաւորութիւնք:

¹⁵⁵ ՄՄ5611 ԻԳ. Թվարկված ազգերը փաստորեն 23-ն են:

¹⁵⁶ ՄՄ9100 չիք զորս արգել Աղեքսանդրոս ի ծագս տիեզերաց // հուն. τοῦ βορρᾶ «հյուսիս»:

¹⁵⁷ Անիգ և Անագիք // հուն. 1-ին խմբ. Ἀούγ καὶ Ἀγήγ // 2-րդ խմբ. Ἀνώγ καὶ Γήγ:

¹⁵⁸ Քենարաս և Քեփար // հուն. 1-ին խմբ. Ἀχενάζ καὶ Διφάρ // 2-րդ խմբ. Ἀκελιάξ καὶ Διάφαρ:

¹⁵⁹ Փոտինացիք, Մնիւացիք // հուն. 1-ին խմբ. Φωτιανοὶ καὶ Λίβιοι // 2-րդ խմբ. Φωτιανοὶ καὶ Λεβαῖοι:

¹⁶⁰ Ղողինացիք, Փազիացիք // հուն. 1-ին խմբ. Εὔνιοι καὶ Φαριζαῖοι καὶ Δεκλημοί // 2-րդ խմբ. Ἐυναῖοι, Χαριζαῖοι, ὁ Δεκελμοῖ:

¹⁶¹ Եֆեզիսք, Սարմատք... Աթարբակացիք // հուն. 1-ին խմբ. καὶ Ζαρμάται καὶ Θηβλαῖοι καὶ Ζαρματιανοὶ καὶ Χαχώνιοι καὶ Ἀμαζάρθαι καὶ Γαρμίαρδοι καὶ ἀνθρωποφάγοι οἱ λεγόμενοι Κυνοκέφαλοι καὶ Θάρβιοι καὶ Ἄλανες καὶ Φισολονίκιοι καὶ Ἀρκναῖοι // 2-րդ խմբ. Δερματιανοί, Ζελματιανοί, Χαναταῖοι, Ἀμαχάρ, Τηγάρ, Βιαδαῖοι, ἀνθρωποφάγοι οἱ λεγόμενοι κυνοκέφαλοι, Θαρβιοί, Ἄλανοί, Φισολονίκιοι, Ἀρσινάριοι:

¹⁶² ՄՄ9100 ոչ կամեցայ գրել անուանֆս փիս. Գովք և Մագովք ... Ասղատքացիք / Ասղատքացիք // հուն. 1-ին խմբ. Ἀσαλτήριοι // 2-րդ խմբ. Ἀσαντάριοι + οὗτοι οἱ εἴκοσι δύο βασιλεῖς καθεστήκασιν ἐμφρούριοι ἔνδον τῶν πυλῶν, ὧν Ἀλέξανδρος ἔπηξεν «Այս քսաներկու քագավորները բանտարկված մնացին դռներից ներս, որոնք կողպել էր Ալեքսանդրոսը»:

XIII (19) Յայնժամ բացցին¹⁶³ դրունք հիւսիսոյ¹⁶⁴ յանկարծակի, և ելցեն ազգք¹⁶⁵ փակեալք ի ներքուստ, և սասանեսցի ամենայն¹⁶⁶ երկիր յերեսաց նոցա¹⁶⁷: Եւ ընդոստեալ¹⁶⁸ մարդիկ փախիցեն¹⁶⁹ ի լերինս, յայրս և ի փապարս¹⁷⁰, և ապականեսցին¹⁷¹ բազումք, և ոչ ոք իցէ, որ թաղիցէ զնոսայ: (20) Քանզի ելեալք ի հիւսիսոյ ազգք¹⁷² ուտիցեն զմարմինս մարդկան¹⁷³ և ըմպիցեն զարիւն գազանաց¹⁷⁴, և ոչ կացցէ ընդդէմ նոցա երկիր¹⁷⁵: (21) Եւ յետ է-եկի մի¹⁷⁶ ամաց, ի¹⁷⁷ հասանել նոցա ի քաղաքն Յոպպէ, առաքէ Տէր զօրավար իւր և հարցէ զնոսա¹⁷⁸:

¹⁶³ ՄՄ5611 բացցեն:

¹⁶⁴ ՄՄ5611 հիւսուսոյ:

¹⁶⁵ ազգք // հուև. αἱ δυνάμεις τῶν ἐθνῶν «ազգերի զորքերը»:

¹⁶⁶ ՄՄ9100 չիք ամենայն:

¹⁶⁷ յերեսաց նոցա = հուև. ἀπὸ προσώπου αὐτῶν // ՄՄ5611 առաջի նորայ:

¹⁶⁸ ՄՄ5611 ընդոստել:

¹⁶⁹ փախիցեն // հուև. + καὶ κρύψωσιν ἑαυτοὺς «և կրպնվեն»:

¹⁷⁰ Հմմտ. Եբր. ԺԱ 38. «յԱնապատի մոլորեալք և ի լերինս, և յայրս, և ի փապարս երկրի» // հուև. + καὶ ἐν τοῖς μνημείοις «և գերեզմաններում»:

¹⁷¹ ՄՄ9100 յանապատս ելցեն // հուև. + φόβῳ «վախից»:

¹⁷² ՄՄ9100 չիք ազգք:

¹⁷³ ՄՄ5611 զմարմին մարդոյ:

¹⁷⁴ զարիւն գազանաց // հուև. + ὥσπερ ὕδωρ καὶ ἐσθίουσι τὰ ἀκάθαρτα καὶ τοὺς ὄφεις καὶ σκορπίους καὶ πάντα τὰ μυσάρα καὶ βδελυκτὰ θηρία καὶ τὰ ἔρπετὰ τὰ ἔρποντα ἐπὶ τὴν γῆν τὰ τε κτηνώδη καὶ τὰ νεκρὰ σώματα καὶ τὰ ἔκτρώματα τῶν γυναικῶν. Καὶ σφάξουσι νήπια καὶ παράσχωνται ταῖς μητράσιν αὐτῶν καὶ ἐψήσουσι τὰ κρέα αὐτῶν καὶ κατέδονται αὐτὰ καὶ φθεροῦσι τὴν γῆν καὶ μίανωσιν καὶ ἀφανίσωσιν αὐτὴν καὶ «որպէս շուր. և ուտելու են անմաքուր բաներ՝ և օձեր ու կարիճներ և ամեն զզվելի ու պիղծ կենդանիներ և գետնի վրա սողացող սողուններ և մեռած մարմիններ և կանանց վիժածը, և սպանելու են մանուկների ու տարու իրենց մայրերին և եփելու են նրանց միսն ու ուտելու են այն, և ապականելու են երկիրն ու ավերելու այն և»:

¹⁷⁵ ոչ կացցէ ընդդէմ նոցա երկիր // հուև. οὐδεὶς ἔσται ὁ δυνάμενος στήναι ἐναντίον αὐτῶν «չի լինի ոչ ոք, ով կարողանա դիմակայել նրանց»:

¹⁷⁶ ՄՄ9100 չիք է-եկի մի:

¹⁷⁷ ՄՄ5611 չիք ի:

¹⁷⁸ ՄՄ9100 + սրով, և ի փառս Սատանայի երթիցեն: Ի՞նչ թագաւորք ընդ բռաւր արկեալ Աղէկաւանդրու. և գրեալ ի կամարին, թէ յորժամ անցանէ յետին դարէն ՊԿ ամ, անկանի դրուս. այս հրամանաւն Սատանոյ // հուև. + ἐν μία ῥοπή καιροῦ. Καὶ μετὰ ταῦτα καταβήσεται ὁ βασιλεὺς τῶν Ῥωμαίων καὶ κατοικήσει ἐν Ἱερουσαλήμ ἑβδομάδα χρόνων καὶ ἡμισυ καὶ ἐν τῷ πληρώματι τῶν δέκα καὶ ἡμισυ χρόνων φανήσεται ὁ υἱὸς τῆς ἀπωλείας «մի ակնբարբոս: Եվ դրանից հետո հոռմեացիների թագավորը կիջնի և բնակություն կհաստատի Երուսաղեմում յոթ ու կես տարի, և տասն ու կես տարին լրանալուն պես կհայտնվի կորստյան որդին»:

Բ. XI.1–XIV.14 (+VIII.10)

Տեսիլ արքայն Մեթոդի՝ եպիսկոպոսին Պատարայ և՛ վկայի, յաղագս անցելոյն², ներկայիս և ապառնեացն, ասացուածք յԱստուածաշունչ գրոց, զոր քարգմանեալ է Տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի

XI (1) Ի վերջնում դարի³ արմատաքի խլեսցի թագաւորութիւն Պարսից: Ելցե՛⁴ զօրականն Իսմայէլի⁵ յանապատէն Եթրիբայ⁶ և՛ ժողովեսցէ՛⁷ զԳաբաւոն⁹: (2) Անդ լիցի ասացեալն ի մարգարէէն Եզեկիէլէ. «Կոչեաց¹⁰ զգազանս անապատի և զթռչունս երկնից և հրաւիրեաց զնուիրեաց զնվեցարուք և եկայք¹¹, զի զենումն մեծ զենցի ձեզ: Կերայք¹² զմարմիննումրաց և արբէք զարիւն սկարաց¹³: (3) Յայս Գաբաւոն՝ ի Գաբեթ¹⁴, անկցին զորաւորք Հռոմայեցոց¹⁵ յորդոց Իսմայէլի¹⁶, զոր օրինակ նոքա սպանին զգորաւորսն Եբրայեցոց և Պարսից¹⁷:

¹ ՄՄ6271 չիք և:

² ՄՄ1487, ՄՄ6271 անցեալ:

³ Ի վերջնում դարի // հուն. + ἦτοι τῆ ἑβδομῆ, ἐν αὐτῇ «այսիքն՝ յոթներորդում, որի ժամանակ»:

⁴ Ելցե // հուն. καὶ ἐν αὐτῇ ἐξελεύσεται «և այդ ժամանակ դուրս կգա»:

⁵ զգորականն Իսմայէլի // հուն. 1-ին խմբ. τὸ σπέρμα τοῦ Ἰσμαήλ «Իսմայէլի սերունդը», ինչպէս ասորերենում. տե՛ս Alexander, *The Byzantine Apocalyptic Tradition*, p. 44 և Palmer, Brock & Hoyland, *The Seventh Century in the West-Syrian Chronicles*, p. 230:

⁶ Եթրիբը Մեդիան է:

⁷ և // հուն. + ἐξιόντες «դուրս գալով»:

⁸ Ժողովեսցէ // հուն. συναχθήσονται ὁμοθυμαδόν «հավաքվելու են միաբան»:

⁹ զԳաբաւոն // հուն. Γαβαῶθ (R Γαβαῶν) τὴν μεγάλην: «Գաբաւոն»-ը (Γαβαῶν) Գաբիթան է՝ այն հայտնի ճակատամարտի վայրը, որի ժամանակ 636 թ. արաբները պարտության մատնեցին բյուզանդական բանակին (հայտնի է նաև որպէս Յարմուկի ճակատամարտ՝ Հորդանանի վտակ Յարմուկի անունով): Զեռագրերի «ժողովեսցէ զԳաբաւոն» ընթերցումը կարելի է բացատրել կամ աղավաղումով, կամ էլ այն փաստով, որ թարգմանիչը Գաբաւոնն ընկալել է որպէս ցեղանուն:

¹⁰ Կոչեաց // հուն. σὺ ἐ ἀνθρώπου, κάλεσον «մարդու որդի, կանչի՛ր»:

¹¹ Եկայք // հուն. BDR δεῦτε «դե» // G ἴδετε «տեսե՛ք»:

¹² T1910, Mos1861 կերայք, կերայք:

¹³ Հմմտ. Եզեկ. ԼԹ՝ 17-18. «Եւ դու որդի մարդոյ՝ այսպէս ասէ Տէր. Ասա դու ցամենայն հաս թոշունս, և ցամենայն գազանս դաշտի. Ժողովեցարոմ և եկայք, ժողովեցարոմ յամենայն կողմանց երկրի ի զենումն իմ զոր ես զենի ձեզ՝ զենումն մեծ ի վերայ լեռանց Իսրայէլի, կերէք միս և արբէք արիւն. կերէք զմիս սկայից, և արբէք զարիւն իշխանաց երկրին»:

¹⁴ ՄՄ1487, ՄՄ6271 յայս Գաբաւոն ի Գաբեթան // հուն. ἐν ταύτῃ τοίνυν τῇ Γαβαῶθ (R Γαβαῶν):

¹⁵ ՄՄ1487 ի Հռոմացոց, ՄՄ6271 ի Հռոմացոց // հուն. Ἑλλήνων, τουτέστι τῶν Ῥωμαίων «հույների, այսիքն՝ հռոմեացիների»:

¹⁶ յորդոց Իսմայէլի // հուն. ἐν στόματι μαχαίρας «սրի սայրից»:

¹⁷ Պարսից // հուն. οὕτω καὶ αὐτοὶ πεσοῦνται ἐν στόματι μαχαίρας ὑπὸ τοῦ σπέρματος Ἰσμαήλ, ὅς ἐπικέκληται ὄναγρος «այդպէս և իրենք կընկնեն սրի սայրից Իսմայէլի սերնդի ձեռքով, որը կոչվում է վայրի էջ»:

Քանզի սրտմտութեամբ և բարկութեամբ առաքեսցէ յերկիր¹⁸ ի վերայ մարդկան և անասնոց և գազանաց, անտառի և¹⁹ տնկոց²⁰ և ամենայն պտղաբեր տեսակի: (4) Եւ եղիցի գալուստ նոցա խրատ անողորմ, և երթիցեն առաջի նոցա չորք հարուածք²¹ կործանումն, կոխումն և ապականութիւն և աւերումն: (5) Ասաց Մովսէս ցորդիսն Իսրայէլի²². «Ոչ, զի սիրէ զձեզ Տէր Աստուած, տանի²³ յերկիրն աւետեաց ժառանգել զնա, այլ վասն անօրէնութեան բնակչաց նորա»²⁴: Այսպէս և²⁵ զորդիսն Իսրայէլի՝ ոչ, զի սիրէ զնոսա Տէր Աստուած, տայ նոցա²⁶ զօրութիւն աւերել²⁷ զերկիրս²⁸ քրիստոնէից, այլ վասն անօրէնութեանն որ լինի²⁹. և վտանգ այսպիսի³⁰ ոչ եղև նոցա³¹ և ոչ այլ լինիցի երբէք³²: (6) Քանզի³³ զգեցուին արք հանդերձ շնացողաց³⁴ և որպէս կանայք պոռնիկք³⁵ զարդարէին զանձինս իւրեանց: Նոյնպէս և կանայք կային ի փողոցս և ի հրապարակս քաղաքաց յանդիման. «Եւ փոխանակեցին³⁶ զբնական պէտս յանբնականն»³⁷, որպէս ասէ աստուածային առաքեալն. նոյնպէս և կանայք³⁸: (7)

¹⁸ առաքեսցէ յերկիր // հուն. ἀποσταλήσονται ἐπὶ πρόσωπον πάσης τῆς γῆς «կառավելն ամբողջ երկրի երեսով»:

¹⁹ Mos1861 ի:

²⁰ տնկոց // հուն. + ἐπὶ τὰς λόχμας (R չիք) «մացառուաների վրա»:

²¹ T1910, Mos1861 հարուածք չորք // հուն. + ἐπὶ τῆς γῆς «երկրի վրա»:

²² Ասաց Մովսէս ցորդիսն Իսրայէլի // հուն. λέγει γὰρ ὁ θεὸς τῷ Ἰσραὴλ διὰ Μωϋσέως «Ասաված ասում է Իսրայէլին Մովսէսի միջոցով»:

²³ T1910, Mos1861 տանել:

²⁴ Հմմտ. Բ Օրին. Թ 5. «Քանզի ոչ վասն արդարութեան քն և ոչ վասն ամբոնութեան սրտի քն մտանես ժառանգել զերկիրն նոցա, այլ վասն անաւելնութեան ազգացն այնոցիկ Տէր Աստուած քն սատակեաց զնոսա յերեսաց քնոց»:

²⁵ T1919 չիք և:

²⁶ T1910, Mos1861 չիք նոցա:

²⁷ աւերել // հուն. κρατῆσαι «տիրանալ»:

²⁸ T1910 երկիրս, ՄՄ1487, ՄՄ6271 երկրիս:

²⁹ վասն անօրէնութեանն որ լինի // հուն. τὴν ἀμαρτίαν καὶ τὴν ἀνομίαν ὑπ' αὐτῶν γινομένην «նրանց գործած մեղքի և անօրէնութեան պատճառով»:

³⁰ T1910 այլ այսպիսի | վտանգ բառն ավելացրել է թարգմանիչը՝ մեկնաբանելով ὁμοία («նման բաներ») գոյականաբար կիրառված ածականը:

³¹ ՄՄ1487 չիք նոցա (ՄՄ6271 գրված ու շնչված):

³² երբէք // հուն. ἐν ὅλαις ταῖς γενεαῖς «բոլոր սերունդներում»:

³³ Քանզի // հուն. τί γάρ «քանզի ինչո՞ւ»:

³⁴ Mos1861 հանդերձս | զգեցուին արք հանդերձ շնացողաց // հուն. ἐνεδιδύσκοντο οἱ ἄνδρες ἐκ τῶν μοιχαλίδων γυναικῶν καὶ προϊσταμένων ἐσθῆτων «այրերը հագնում էին շնացող ու պոռնիկ կանանց զգեստներ»:

³⁵ ՄՄ1487 կանայք պոռնիկս T1910, ՄՄ6271 կանայս պոռնիկս // հուն. καθάπερ γυναικες... καὶ «ինչպէս կանայք ... և»:

³⁶ Mos1861 փոխանակեցին:

³⁷ Հմմտ. R չիք. | հմմտ. Հռոմ. Ա. 26. «Ձի էգք նոցա փոխանակեցին զպէտս բնականս ի պէտս անբնականս»:

³⁸ Mos1861 չիք նոյնպէս և կանայք // հուն. + ταῦτα ἅπερ καὶ οἱ ἄνδρες ἔπραττον «անում էին այն, ինչ և տղամարդիկ»:

եւ մտանէին առ մի կին հայր եւ որդի համանգամայն, եւ ամենայն եղբայր եւ ազգային առհասարակ³⁹: Վասն որոյ եւ իմաստունն Պօղոս նախ քան զժամանակն աղաղակեաց՝ ասելով. «Վասն այնորիկ մատնեաց զնոսա յախտ անարգութեան գործել զանարժանս, զի էգբ նոցա փոխանակեցին զպէտս բնականս. նոյնպէս եւ արուացն թողեալ զբնական պէտս՝ իգութեանն բորբոքեցան ցանկութեամբ ի միմեանս. արուք ընդ արուս⁴⁰ զխայտառակութիւն գործէին, որ պարտ էր մոլորութեան նոցա՝ յանձինս⁴¹ իւրեանց ընդունէին»⁴²: (8) Արդ, վասն այսորիկ մատնեաց զնոսա Աստուած ի ձեռս բարբարոսաց, յորոց անկցին ի մեղս եւ ի ժահահոտութիւն, եւ պղծեցին կանայք նոցա ի պղծոց, եւ արկցեն վիճակս ի վերայ նոցա որդիքն Իսմայէլի: (9) Եւ մատնեցին Պարսք յապականութիւն⁴³, եւ ի սուր անկցի Կապադովկիա⁴⁴ եւ յաւերումն եւ բնաւին⁴⁵ ի գերութիւն: (10) Սիկիլիա եղիցի անապատ, եւ բնակիչք նորա՝ ի գերութիւն եւ ի սպանումն⁴⁶: (11) Ելադայ⁴⁷ յապականութիւն⁴⁸ եւ ի գերութիւն⁴⁹, Հոռոմք⁵⁰ ի փախուստ դարձցին, եւ կղզիք ծովու՝ յաւերումն, եւ բնակիչք նորա սրով եւ գերութեամբ կորիցեն: (12) Հայք ի փախուստ դարձցին եւ բնակիչք նորա՝ ի գերութիւն: Եգիպտոս եւ⁵¹ Արևելք եւ Ասորեստան ընդ լծով եւ ընդ նեղութեամբ⁵² անկցին: Ծառայեցու-

³⁹ առհասարակ // հուն. + ἡγνοοῦντο γὰρ ὑπὸ τῶν ἑταιρίδων «Քանզի արհամարհվում էին ազատ բարբի տեր կանանցից»:

⁴⁰ ՄՄ1487, ՄՄ6271 արուս:

⁴¹ Mos1861 յանձինս նոցա:

⁴² Հմմտ. Հռոմ. Ա. 26-27. «Վասն այնորիկ մատնեաց զնոսա Աստուած ի կարիս անարգութեան. զի էգբ նոցա փոխանակեցին զպէտս բնականս ի պէտս անբնականս: Նոյնպէս եւ արուացն թողեալ զբնական պէտս իգութեանն, բորբոքեցան ցանկութեամբ իւրեանց ի միմեանս: Արուս ընդ արուս զխայտառակութիւն գործէին եւ զղարձ փոխարինին որ պարտ էր մոլորութեանն նոցա՝ յանձինս իւրեանց ընդունէին»:

⁴³ յապականութիւն // հուն. + καὶ ἀπώλειαν, καὶ οἱ κατοικοῦντες ἐν αὐτῇ εἰς αἰχμαλωσίαν καὶ σφαγὴν ἀχθήσονται. Ἀρμενία καὶ οἱ κατοικοῦντες ἐν αὐτῇ ἐν αἰχμαλωσίᾳ «ու կորստյան, եւ նրա բնակիչները կտարվեն գերության ու սպանման: Հայաստանն ու նրա բնակիչները գերության»:

⁴⁴ ՄՄ1487, ՄՄ6271 Կապոտկիա, T1910 Կապոտկիա (ուղղված է Կապադովկիա):

⁴⁵ ՄՄ1487, ՄՄ6271 բնաւոր | յաւերումն եւ բնաւին // հուն. εἰς φθορὰν καὶ ἐρήμωσιν, καὶ οἱ ταῦτης οἰκήτορες «և ամայացման, եւ նրա բնակիչները»:

⁴⁶ ի սպանումն = հուն. R // հուն. հիմնական բնագիր + ἡ γῆ Συρίας ἔσται ἔρημος καὶ διεφθαρμένη, καὶ οἱ κατοικοῦντες ἐν αὐτῇ ἀπολοῦνται μαχαίρα. Κιλικία ἐρημωθήσεται, καὶ οἱ κατοικοῦντες ἐν αὐτῇ ἀπολοῦνται καὶ εἰς αἰχμαλωσίαν ἔσονται «Ասորիքի երկիրը ամայանալու է եւ ավերվելու, եւ նրա բնակիչները սպանվելու են սրով: Կիլիկիան ամայանալու է, եւ նրա բնակիչները սպանվելու են ու գերեվարվելու»:

⁴⁷ T1910, Mos1861 եղիցի Յուդայ, ՄՄ6271 Ելադայ:

⁴⁸ յապականութիւն // հուն. + καὶ οἱ κατοικοῦντες ἐν αὐτῇ «և նրա բնակիչները»:

⁴⁹ ի գերութիւն // հուն. + καὶ εἰς μάχαιραν ἔσονται «և սրի են մատնվելու»:

⁵⁰ Հռոմմք // հուն. + εἰς φθορὰν καὶ «սպանման և»:

⁵¹ ՄՄ1487 չիք և:

⁵² ընդ նեղութեամբ // հուն. + ἄμετρον «անչափ»:

ցեն անխնայաբար և պահանջեսցեն յանձանց⁵³ նոցա կշիռ⁵⁴ ի վեր, քան զզօրութիւն⁵⁵ նոցա, և⁵⁶ եղիցին յանձկութեան և ի նեղութեան առաւել⁵⁷ քան⁵⁸ զորս ի գերութեան⁵⁹: (13) Եւ լցցի երկիրն աւետեաց մարդով ի չորից հողմոց երկնից, որպէս մարախոյ⁶⁰ բազմութեամբ⁶¹: Եւ եղիցի ի նոսա ապականութիւն և սով, և բարձրացի սիրտ սատակչաց նոցա, և յամբարտաւանութիւն ամբարձցին ի վեր քան⁶² զարժանն⁶³ մինչև ցաահմանեալ իւրեանց ժամանակ: Եւ կալցին⁶⁴ մինչև յելս⁶⁵ հիւսիսոյ⁶⁶, մինչև յարևմուտս⁶⁷: Եւ եղիցին ամենեքեան ընդ լծով նոցա. մարդ և անասուն և թռչունք և ջուրք ծովուն լուիցեն⁶⁸ նոցա: (14) Եւ անապատք⁶⁹ դատարկացեալք ի բնակչաց՝ նոցա⁷⁰ եղիցին, և իւրեանց գրեսցեն զլերինս⁷¹ և զձկունս ծովու⁷² և զփայտ անտառի և զհող երկրի և զքարինք⁷³ անպտուղք⁷⁴: Եւ երկք և քրտունք երկրագործաց և ամենայն շտեմա-

⁵³ ՄՄ6271 Mos1861 գանձինս:

⁵⁴ կշիռ // հուն. + χρυσίου «ոսկոս»:

⁵⁵ T1910 զզօրութիւնս:

⁵⁶ և // հուն. + οἱ κατοικοῦντες Αἴγυπτον καὶ Συρίαν «Եգիպտոսի և Ասորիի բնակիչները»:

⁵⁷ առաւել // հուն. ἐπταπλασίωνα «յոթնակի»:

⁵⁸ ՄՄ1487, ՄՄ6271 չիք քան:

⁵⁹ Խոսքը հավանաբար բարեբանյան գերության մասին է:

⁶⁰ ՄՄ1487, ՄՄ6271 մարախի:

⁶¹ մարախոյ բազմութեամբ // հուն. + ἥτις συναθροίζεται ὑπὸ ἀνέμου «որ հավաքում է քամին»:

⁶² ՄՄ1487, ՄՄ6271 չիք քան:

⁶³ յամբարտաւանութիւն ամբարձցին ի վեր քան զարժանն // հուն. εἰς ὑπερφανίαν ἀρθήσεται· καὶ λαλήσουσιν ὑπέρογκα «և (ներանց սիրտը) կբարձրանա առ ամբարտաւանություն. և հոռոմ կխոսեն»:

⁶⁴ Mos1861 կացցին:

⁶⁵ Mos1861, T1910 մինչ ցելս // հուն. τὴν τε εἴσοδον καὶ τὴν ἔξοδον «մտնում ու ելք»:

⁶⁶ հիւսիսոյ // հուն. + καὶ τῆς ἐώας «և արևելքի»:

⁶⁷ մինչև յարևմուտս = հուն. R ἔως δυσμῶν // հուն. հիմնական բնագիրը և ծրարում «արևմուտքի», G + καὶ θαλάσσης «ծովի»:

⁶⁸ լուիցեն = հուն. ὑπακούσωσιν «ենթարկվելու են»:

⁶⁹ անապատք = հուն. R // հուն. հիմնական բնագիրը + πόλεις «և քաղաքներ»:

⁷⁰ T1910, Mos1861 + յանձկութեան և ի նեղութեան առաւել քան զորս ի գերութեան, ՄՄ6271 յանձկութեան և ի նեղութեան առաւել զորս ի գերութեան (գրված ու ջնջված):

⁷¹ զլերինս // հուն. + καὶ τὰς ἐρήμους «և անապատներ»:

⁷² զձկունս ծովու = հուն. G τοὺς ἰχθύας τῆς θαλάσσης (հայցական հոլովով) // հուն. հիմնական բնագիրը οἱ ἰχθύες τῆς θαλάσσης (ուղղականով):

⁷³ T1910, Mos1861 քարինք | զփայտ ... զհող ... զքարինք // հուն. τὰ ξύλα ... χοῦς ... οἱ λίθοι, ուղղական հոլով:

⁷⁴ անպտուղք // հուն. καὶ ἡ εὐφορία τῆς γῆς ἔσται ἐν ταῖς εἰσόδοις αὐτῶν «և երկրի բարեբանությունը լինելու է ներանց ի շահ»:

րանք⁷⁵ նոցա եղիցին: Եւ բարձրացի սիրտ նոցա՝ պահանջել զմեռեալս ըստ⁷⁶ հաւասարութեան⁷⁷ կենդանեաց: Որբոց և այրեաց և սրբոց⁷⁸ ոչ ողորմեսցեն⁷⁹: (15) զՏնանկն և զաղքատն անարգեսցեն, և զամենայն ծեր խոռվեցուցեն, և ոչ գթացին ի տնանկս⁸⁰, և անզգայ այսն արասցեն և ծիծաղեսցեն զնորք, որք իմաստութեամբն են պայծառացեալք⁸¹: Եւ ամենեքին լռութեամբ⁸² ըմբռնեսցին և ոչ կարասցեն յանդիմանել կամ շրջել ինչ⁸³, այլ եղիցին ամենեքեան⁸⁴ յահէն զարհուրեալ: Եւ⁸⁵ խրատ նոցա շարաշար, և ոչ ոք իցէ, որ կարիցէ այլայլել կամ պարսաւել զբանս նոցա: (16) Եւ եղիցի ճանապարհ նոցա ի ծովէ մինչև ի ծով, յարևելից մինչև յարևմուտս, ի հիւսիսոյ մինչև յանապատն⁸⁶, և կոչեսցի ճանապարհ նոցա անձկութիւն⁸⁷: Եւ գնասցեն ընդ նա ծերք և պառաւունք, տնանկք և մեծամեծք, քաղցեալք և ծարաւեալք և կապեալք՝ երանելով զմեռեալս: (17) Քանզի ասացեալն յառաքելոյ խրատ ապստամբութեան⁸⁸ այս է, քանզի ասէ, եթէ՛ «Ոչ եկեսցէ նախ ապստամբութիւնն և յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ Որդին Կորստեան»⁸⁹. արդ, ապստամբութիւն խրատ է⁹⁰: Եւ վասնզի «էշ վայրի» կոչեաց Աստուած զԻսմայէլ⁹¹, վասն այսորիկ և իշավայրիք

⁷⁵ շտեմարանի // հուն. κληρονομία τῶν πλουσίων καὶ τὰ προσφερόμενα τοῖς ἁγίοις, κἂν τε χρυσὸς κἂν τε ἄργυρος κἂν τε λίθοι τίμιοι ἢ χαλκὸς ἢ σίδηρος, τὰ τε ἐνδύματα τὰ ἱερά τε καὶ ἔνδοξα καὶ τὰ βρώματα πάντα καὶ πᾶν ὃ, τι τίμιον «հարուստների ժառանգությունը և սրբերին մատուցած բաները՝ լինի դա ոսկի, թե արծաթ, թե թանկարժեք քարեր, կամ պղինձ կամ երկաթ, նաև՝ սրբազան ու փառահեղ հանդերձներ և ամեն սննդամթերք ու ամեն ինչ, որ արժեքավոր է»:

⁷⁶ ՄՄ1487, ՄՄ6271 և ըստ:

⁷⁷ ըստ հաւասարութեան = հուն. κατ' ἰσότητα:

⁷⁸ T1910 Mos1861 չիք և սրբոց:

⁷⁹ Որբոց և այրեաց և սրբոց ոչ ողորմեսցեն // հուն. ὡσαύτως ἔκ τε τῶν χηρῶν καὶ ὀρφάνων καὶ ἔκ τῶν ἁγίων «նմանապես նաև այրիներից ու որբերից և սրբերից»:

⁸⁰ տնանկս // հուն. οὐτε ἐπὶ τοῖς ἀσθενέσι καὶ ἀδυνάτοις «ոչ էլ թուլերին ու տկարներին»:

⁸¹ պայծառացեալք // հուն. + καὶ τοῖς ἐν πολιτικοῖς καὶ δημοσίοις διαπρέπουσι πράγμασι «և աչի են ընկնում քաղաքական ու հասարակական գործերում»:

⁸² ՄՄ1487, ՄՄ6271 և լռութեամբ // հուն. + καὶ φόβῳ «և վախով»:

⁸³ շրջել ինչ // հուն. ἀποφθέγγασθαι ...τί τοῦτο;... ἢ ...τί ἐκεῖνο;... «պատասխանել՝ «ի՞նչ է սա» կամ «ի՞նչ է նա» [հարցերին]» (հմմտ. R ...τί;... «ի՞նչ»):

⁸⁴ ամենեքեան // հուն. + οἱ κατοικοῦντες τὴν γῆν «երկրի բնակիչները»:

⁸⁵ Եւ // հուն. + ἔσται ἡ σοφία αὐτῶν καὶ «լինելու է նրանց իմաստությունը և»:

⁸⁶ յանապատն // հուն. + τῆς Ἐθρίβου «Եթրիբի»:

⁸⁷ անձկութիւն // հուն. ὁδὸς στενοχωρίας «անձկութեան հանապարհ»:

⁸⁸ ապստամբութեան // հուն. ἤτοι ἀποστασία «այն է ապստամբությունը»:

⁸⁹ Հմմտ. Բ Թեւ. Բ 3. «Ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն. եւ յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ Որդին Կորստեան»:

⁹⁰ խրատ է // հուն. καὶ παιδευθήσονται πάντες οἱ κατοικοῦντες τὴν γῆν «և պատժվելու են երկրի բոլոր բնակիչները»:

⁹¹ զԻսմայէլ // հուն. + τὸν πατέρα αὐτῶν «նրանց հորը»:

և այծեմունք անապատի և ամենայն տեսակք գազանաց ձեռնդէլք եղիցին և ընտանասցին⁹²: Սովեսցին և ապականեսցին⁹³ և հալածեսցին մարդիկ, և գազանք սատակեսցին: Եւ կոտորեսցին ամենայն փայտք անտառի, և գեղեցկութիւն լերանց ապականեսցի: Եւ աւերեսցին քաղաքք, և եղիցին սահմանք նոցա անկոխք, զի պակասեսցին մարդիկ: Եւ պղծեսցի երկիր արեամբ և արգելցէ զպտուղ իւր, քանզի որ բռնապէս⁹⁴ ունին զնոսա՝ չեն մարդիկ, այլ բարբարոսք և որդիք անապատի, և յանապատացուցանել եկեսցեն: Ապականեալք⁹⁵ և յապականել⁹⁶ առաքեսցին⁹⁷, և ծայրիւ սրոյ⁹⁸ իւրեանց հարցեն զյրիս և ի գրկաց մարց յափշտակեսցեն զմանկունս և հարցեն զգետնի, և եղիցին ի կերակուր գազանաց: (18) Եւ զքահանայսն ի ներքս ի սրբութիւնս⁹⁹ սպանցեն և ննչեսցեն ընդ կանայս նոցա ի տան սրբութեան¹⁰⁰, ուրանօր աստուածային խորհրդականութիւնն մատչէր¹⁰¹: Եւ զպատմուծան սրբութեան սպասու զգեցցին¹⁰² կանայք նոցա և որդիք նոցա և դստերք նոցա, և դիցեն զայն ի վերայ երիվարաց իւրեանց¹⁰³, և կապեսցեն զգրաստս իւրեանց ի հանգստարանս¹⁰⁴ սրբոցն: Եւ եղիցին սպանողք և ապականիչք՝ իբրև զհուր փորձիչ զգգի քրիստոնէից:

XII (1) Քանզի ասէ սրբազան առաքեալն. «Ոչ ամենեքեան որ յԽարայէլէն են Իսրայէլացիք են»¹⁰⁵: Ապա ուրեմն՝ ոչ ամենեքեան¹⁰⁶ քրիստոնեայք են,

⁹² գազանաց ձեռնդէլք եղիցին և ընտանասցին = հուն. G θηρίων τιθασσοῦται καὶ ἡμεροῦται // հուն. հիմնական բնագիր θηρίων ἀτιθάσων τε καὶ ἡμέρων «գազանների՝ վայրի և անընտել»:

⁹³ ապականեսցին // հուն. ὀλιγωθήσονται «կապականեն»:

⁹⁴ ՄՄ1487, ՄՄ6271 ըմբռնապէս:

⁹⁵ T1910 ապականեալ:

⁹⁶ ՄՄ1487, ՄՄ6271, Mos1861 յապականեալ, T1910 յապականեալ (ուղղված է՝ յապականել):

⁹⁷ ՄՄ1487 ՄՄ6271 T1910 Mos1861 առաքեսցեն (ուղղված է՝ առաքեսցին) // հուն. + ἐβδελυγμένοι εἰσιν καὶ τὸ μύσος ἀσπάζονται. Καὶ ἐν τῇ ἀρχῇ τοῦ καιροῦ τῆς ἐξόδου αὐτῶν τῆς ἐξ ἐρήμου γενομένης «պիղծ են և պղծություն են սիրում: Եվ անապատից նրանց էլնելու սկզբում»:

⁹⁸ ծայրիւ սրոյ // հուն. ῥομφαία «սրով»:

⁹⁹ ՄՄ1487 սրբութիւն:

¹⁰⁰ ի տան սրբութեան // հուն. ἐν τοῖς σεπτοῖς καὶ ἱεροῖς τόποις «պաշտելի և սրբազան վայրերում»:

¹⁰¹ ուրանօր աստուածային խորհրդականութիւնն մատչէր // հուն. ἐν οἷς ἡ μυστικὴ καὶ ἀναίμακτος θυσία τελεῖται «որոնցում կատարվում է խորհրդավոր և անարյուն զոհաբերությունը»:

¹⁰² ՄՄ1487 զգեցցին, ՄՄ6271 զգեցցեն:

¹⁰³ ի վերայ երիվարաց իւրեանց // հուն. + καὶ ἐν ταῖς κλίταις ἐφαπλώσουσιν «և փռելու են մահիճների վրա»:

¹⁰⁴ ի հանգստարանս // հուն. ἐν ταῖς λάρναξι «գերեզմաններում»:

¹⁰⁵ Հմմտ. Հոռմ. Թ 6. «Ոչ ամենեքեան որ յԽարայէլէն են, նոքա Իսրայէլեանք իցեն»:

¹⁰⁶ ոչ ամենեքեան // հուն. + ὅσοι χριστιανοὶ λέγονται «ովքեր կոչվում են քրիստոնյաներ»:

որպես ասէ գիր: Եօթն հազար ապրեցան յորդոցն Իսրայէլի, որք ոչ կրկնեցին¹⁰⁷ ծունր Բահաղու¹⁰⁸, և ամենայն Իսրայէլ¹⁰⁹ ապրեցաւ ի ձեռաց նոցա: (2) Այսպէս և ի ժամանակի ապստամբութեան և խրատու որդոցն Իսրայէլի, սակաւ գտցին ճշմարիտ քրիստոնեայք, որպէս և ինքն Փրկիչն մեր ի Սուրբ Աւետարանին ասէ. «Արդեօք և Որդի մարդոյ եկեալ՝ գտցէ՞ հաւատս յերկրի»¹¹⁰: Նուազեսցի ի ժամանակին յայնմիկ հոգին¹¹¹: (3) Եւ բազումք ուրասցին զճշմարտութիւն¹¹² և զկենարար Խաչն և զսուրբ խորհուրդն, և առանց բռնութեան շարշարանաց¹¹³ ուրասցին զՔրիստոս և երթիցեն զհետ ապստամբացն: (4) Քանզի յառաջագոյն աստուածային առաքեալն քարոզեաց՝ ասելով, թե՛ «Ի ժամանակս յետինս¹¹⁴ ապստամբեսցին մարդիկ ի հաւատոցն՝ առ ունողն հոգի մոլորութեան¹¹⁵ և ի վարդապետութիւն դիւաց¹¹⁶ կեղծաւորութեամբ¹¹⁷ ստաբանից՝ ստեալք իւրեանց խղճի մտաց»¹¹⁸: (5) Եւ դարձեալ նոյն ինքն՝ «Յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք շարք. զի եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք, անմիտք¹¹⁹, անագորոյնք, մատնիչք, յանդգունք, անժոյժք, վէսք, անբարեւէրք¹²⁰, որք ունին զկերպարանս աստուածպաշտութեան, և ի զօրութենէ նորա ուրացողք»¹²¹: (6) Եւ ամենայն տկարք հաւատով¹²² ի խրատուն յայնմիկ

¹⁰⁷ ՄՄ1487, ՄՄ6271 կրկնեսցեն:

¹⁰⁸ Հմմտ. Հոմ. ԺԱ. 4. «Եւրն հազար այր, որ ոչ կրկնեցին ծունր Բահաղու»:

¹⁰⁹ ամենայն Իսրայել = հուն. R ἅπας Ἰσραήλ // հուն. + ὁ λαὸς τοῦ Ἰσραήλ «Իսրայէլի ժողովուրդը»:

¹¹⁰ Հմմտ. Դուկ. ԺԸ 8. «Իսկ որդի մարդոյ եկեալ, գտանիցէ արդեւ հաւատս յերկրի»:

¹¹¹ հոգին = հուն. R // հուն. հիմնական բնագիր + τῶν τελείων «կատարյալների»:

¹¹² զճշմարտութիւն // հուն. τὴν ἀληθῆ πίστιν «ճշմարիտ հավատը»:

¹¹³ առանց բռնութեան շարշարանաց // հուն. χωρὶς βίας ἢ κολάσεως ἢ αἰκισμῶν «առանց բռնության կամ պատժի կամ տանջեր»:

¹¹⁴ ՄՄ6271 յերկինս:

¹¹⁵ առ ունողն հոգի. այսպէս է թարգմանված προσέχοντες πνεύμασι արտահայտութիւնք. դերբայի նախածանցն ընկալված է որպէս նախդիր՝ πρὸς ἔχοντες, և թարգմանված բառացի ու սխալ:

¹¹⁶ T1910, Mos1861 դիւաց, ի:

¹¹⁷ T1910, Mos1861, ՄՄ6271 կեղծաւորութիւն:

¹¹⁸ Հմմտ. Ա Տիմ. Գ 1-2. «Ի ժամանակս յետինս՝ փակեցին ոմանք ի հաւատոցն. և հայեցին յայսս մոլորութեան և ի վարդապետութիւնս դիւաց՝ կեղծաւորութեամբ. ստաբանք, խարեալք իւրեանց խղճին մտաց»:

¹¹⁹ անմիտք // հուն. ἄσπονδοι «անդաշինք»:

¹²⁰ յանդգունք, անժոյժք, վէսք, անբարեւէրք // հուն. ἀκρατεῖς, ἀνήμεροι, ἀφιλάγαθοι, προδότες, προπετεῖς, τετυφωμένοι, φιλήδοιοι μάλλον ἢ φιλόθεοι «անզուսպներ, անձեռնընտելներ, անբարեւէրներ, մատնիչներ, խելահեղներ, փիվածներ, ավելի ցանկաւերներ, քան աստվածասերներ»:

¹²¹ Հմմտ. Բ Տիմ. Գ 1. «Չայս գիտասցիք, եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք շարք. զի եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք, աննուէրք, անգոյք, բանասարկութ, անժոյժք, վէսք, անբարեւէրք, մատնիչք, յանդգունք, ամպարհաւանք. ցանկաւէրք՝ մանաւանդ քան աստուածասէրք. որ ունիցին զկերպարանս աստուածպաշտութեան, և ի զարուրթենէ անտի նորա ուրացեալ իցեն»:

¹²² ՄՄ1487, ՄՄ6271 հաւատովք:

յայտնեցին և ինքեանք զինքեանս որոշեցեն ի սրբոց եկեղեցեաց՝ իւրեանց յօժարութեամբն: Նոյն ժամանակն կոշեաց զնոսս ի մոլորութիւն, քանզի խոնարհամիտք¹²³ և լուինք, ճշմարիտ քրիստոնեայք¹²⁴ և ազատք տանն Քորգոմայ¹²⁵, և իմաստունքն¹²⁶ և ընտիրքն ոչ խնդրեցին ի ժամանակին յայնմիկ գճշմարտութիւնն¹²⁷: (7) Այլ փոխանակ նոցա¹²⁸ խնդրեցին¹²⁹ ինքնասէրքն, արծաթասէրքն, հայհոյիչքն, ամբարտաւանքն, յափշտակողքն, արբեցողքն, պոռնիկքն, շունքն, անողորմքն, գողքն, ապստամբքն, անագորոյնքն, բանսարկուքն, անժոյժքն, վէսքն, մատնիչքն, հպարտքն, ցանկասէրքն, ծառայաբարոյքն¹³⁰, որք ունին¹³¹ զկերպարանս բարեպաշտութեան և ի զօրութենէ նորա ուրացողք: (8) Այսպիսիքս եղիցին սպասաւորք¹³² աւուրցն այնոցիկ, և զամենայն զոր ինչ և հրամայեցի¹³³ նոցա՝ խնդութեամբ կատարեցեն: Եւ երկիրաւան ի Տեառնէ յոչ ինչ համարեցի առաջի¹³⁴ նոցա¹³⁵:

XIII (1) Եւ եղիցին մարդիկ ի խրատու որդւոցն Իսմայէլի¹³⁶ ի կարիս՝ մինչև անյուսալի մտաց¹³⁷ իւրեանց: Եւ բարձրի պատիւ քահանայից, և պակասեցէ պաշտօն ի տան¹³⁸ Աստուծոյ, և լռեցեն ամենայն պատարագք եկեղեցւոյ, և եղիցին քահանայքն որպէս ժողովուրդն¹³⁹: (2) Եւ եղիցի¹⁴⁰, յորժամ լցցի ժա-

¹²³ ՄՄ1487, ՄՄ6271 խոնարհք միտք:

¹²⁴ քրիստոնեայք = հուն. R. χριστιανοί // հուն. հիմնական բնագիրը χριστοί «լավ, ազնիվ [մարդիկ]»: Նոր Կտակարանում այդ ածականը թարգմանվել է «հաղթ» (օրինակ՝ Մատթ. ԺԱ 30, Գով. Ե 39, Զ 35, Ա Կոր. Ժ 33), իսկ գոյականացված՝ «հաղթութիւն» (օրինակ՝ Հռոմ. Բ 4),

¹²⁵ ՄՄ1487 տունն Քորգոմեա, ՄՄ6271 տունն Քորգոմեանն:

¹²⁶ ՄՄ1487, ՄՄ6271, T1910, Mos1861 ոչ իմաստունքն (ոչ՝ ջնջված) // հուն. չիք:

¹²⁷ ոչ խնդրեցին ... զճշմարտութիւնն // հուն. οὐ ζητηθήσονται «չեն փնտրվելու»: Հավանաբար հայերէն հատվածը հետագայում խմբագրվել է:

¹²⁸ T1910, Mos1866 նորա:

¹²⁹ խնդրեցին // հուն. ζητηθήσονται, οἵτινες ἔστι «պարզելու են, թե ովքեր են»:

¹³⁰ հպիցիչքն ... ծառայաբարոյքն // հուն. ἀλαζόνες, ὑπερήφανοι, βλάσφημοι, ἄρπαγες, πλεονέκται, μέθυστοι, ἀνελεήμονες, ἀποστάται, ἄσποնδοι, ἄστρογοι, ἀχάριστοι, ἀνόσοι, διάβολοι, ἀκρατεῖς, ἀνήμεροι, ἀτίθασοι, προδοῦται, προπετεῖς, τετυφωμένοι, φιλήδοιοι μᾶλλον ἢ φιλόθεοι, πόρνοι, μοίχοι, κλέπται, ἐπίορκοι, ψεῦσται, ἀνδραποδισταί:

¹³¹ ՄՄ1487 ունիքն:

¹³² ՄՄ6271 սպասաւորք:

¹³³ ՄՄ1487, ՄՄ6271, T1910, Mos1861 հրամայեցէ (ուղղված է հրամայեցի):

¹³⁴ առաջի // հուն. ἐνώπιον τῶν ὀφθαλμῶν «աչքերի առջև»:

¹³⁵ նոցա // հուն. + ἄλλ' ἐν ἀτιμίᾳ ἔσονται ὄν τρόπον καταπεπατημένη κόπρος «այլ անարգված կիճեն, ինչպես ոռնակոխ կղկղանք»:

¹³⁶ որդւոցն Իսմայէլի // հուն. + καὶ ἐλεύσονται «և գնալու են»:

¹³⁷ մտաց, հավանաբար օղակաղումն է կենաց բառի, քանի որ հունարենն է τῆς ζωῆς:

¹³⁸ ի տան // հուն. չիք:

¹³⁹ ՄՄ1487, ՄՄ6271 ժողովուրդն:

¹⁴⁰ T1910 եղիցին | և եղիցի // հուն. καὶ ἐν τῷ καιρῷ ἐκείνῳ, ἦτοι τῷ ἑβδοματικῷ ἑβδόμῳ χρόνῳ «և այդ ժամանակ, այն է՝ յոթներորդ յոթնյակի ժամանակ» (լատիներենն է in septimo ebdomatico tempore):

մանակ տէրութեան¹⁴¹ նոցա¹⁴², բազմասցի նեղութիւն մարդոյ և անասնոյ, և եղիցին ապականութիւն և սով¹⁴³, և ապականեսցին¹⁴⁴ մարդիկ և անկցին յերկիր¹⁴⁵, և յաւելցի¹⁴⁶ այլ միւս ևս հարուած մարդկան: (3) Ննջեսցէ այր յերեկորին և յարուցեալ ընդ առաւօտն գտցէ առ դուրս իւր¹⁴⁷ պահանջող ոսկւոյ և արծաթոյ¹⁴⁸: Եւ մաշեսցի¹⁴⁹ ամենայն տուրեալ ոսկւոյ և արծաթոյ, և վաճառեսցեն¹⁵⁰ զամենայն պիտանիս իւրեանց¹⁵¹: (4) Յայնմ¹⁵² ժամանակի վաճառեսցեն մարդիկ զորդիս իւրեանց: Արդ, է՞ր աղագաւ, ասեն, անտես առնիցէ Աստուած զհաւատացեալս կրել նեղութիւնս: Զի երևեսցին հաւատացեալքն և անհաւատքն, և որոշեսցի որոմն ի ցորենոյ, վասն զի հուր փորձիչ է ժամանակն այն: (5) Եւ երկայնամտէ¹⁵³ Աստուած, զի երևեսցին ընտրեալքն, ըստ որում ասէ¹⁵⁴. «Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն և շարշարիցեն և ասասցեն զամենայն բան¹⁵⁵ չար զձենչ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս»¹⁵⁶: (6) Իսկ ի¹⁵⁷ յետին նեղութեան¹⁵⁸ որդւոցն Իսմայէլի, ի

¹⁴¹ ՄՄ1487, ՄՄ6271, T1910, Mos1861 նեղութեան (ուղղված է՝ տէրութեան):

¹⁴² Ժամանակ տէրութեան նոցա // հուն. ἀριθμὸς τῶν ἔτων τῆς δυναστείας αὐτῶν, <δλ> ἦς κατεκράτησαν τῆς γῆς «նրանց իշխանության տարիների թիվը, որով տիրեցին աշխարհին»:

¹⁴³ ՄՄ6271, T1910, Mos1861 չիք եղիցին ապականութիւն և սով, ՄՄ1487 + մարդոյ և անասնոյ:

¹⁴⁴ ՄՄ6271 եղիցի ապականեսցին:

¹⁴⁵ անկցին յերկիր // հուն. ἐπὶ προσώπου τῆς γῆς ὥσπερ χοῦς καθ' ἑκάστην ἡμέραν. καὶ ἐν τῷ καιρῷ ἐκέλευ «երկրի երեսին՝ ինչպես փող ամեն օր, և այդ ժամանակ»:

¹⁴⁶ ՄՄ1487, ՄՄ6271, T1910, Mos1861 յաւելցէ (ուղղված է՝ յաւելցի):

¹⁴⁷ առ դուրս իւր // հուն. ἐπὶ τῆς φλιᾶς τῆς θύρας «իր դռան կողափայտի մոտ»:

¹⁴⁸ պահանջող ոսկւոյ և արծաթոյ // հուն. ἀπαιτοῦντας ὀκτὴν χρυσοῦ καὶ ἀργυρίου καὶ ἄγγαρεύοντας αὐτόν «ոսկու ու արծաթի բեռ պահանջողների և իր վրա բռնացողների»:

¹⁴⁹ ՄՄ6271 վաճառեսցեն և մաշեսցի:

¹⁵⁰ վաճառեսցեն // հուն. πωλήσει ὁ ἄνθρωπος «մարդը կվաճառի»:

¹⁵¹ պիտանիս իւրեանց // հուն. + καὶ τὰ ὀργανικὰ σιδηρᾶ καὶ τὰ ἐντάφια αὐτοῦ «և իր երկաթե գործիքներն ու քաղման հանդերձանքը»:

¹⁵² Յայնմ // հուն. + ἑβδοματικῶ «յոթնյակի»:

¹⁵³ երկայնամտէ // հուն. + ἐπὶ ταῖς θλίψεσι τῶν δικαίων καὶ τῶν πιστῶν «արդարների ու հավատարիմների նեղությունների հանդեպ»:

¹⁵⁴ ՄՄ1487, ՄՄ6271 ասէն. ըստ որում ասէ = հուն. R καθὼς εἶπεν // հուն. հիմնական բնագիրը προεῖπε γὰρ ἡμῖν ὁ κύριος οὕτως «Քանզի Տերը մեզ այսպես կանխավ ասաց»:

¹⁵⁵ ՄՄ1487, ՄՄ6271 բանս:

¹⁵⁶ Հմմտ. Գով. Զ 22. «Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ և յորժամ որոշիցեն զձեզ, եւ ատիցեն, եւ հանիցեն անուն չար զձենչ վասն որդոյ մարդոյ: Ուրախ լիչիք յատուր յայնմիկ և ցնծաչիք, զի անհ՝ վարձք ձեր բազում են յերկինս»: // հուն. + οὕτως γὰρ ἐδίδαξαν τοὺς προφήτας τοὺς πρὸ ἡμῶν «Քանզի այսպես են հավաճել մեզանից առաջ եղած մարգարեներին»:

¹⁵⁷ ՄՄ1487, ՄՄ6271 չիք ի:

¹⁵⁸ ի յետին նեղութեան // հուն. μετὰ τὴν θλίψιν «նեղությունից հետո»:

վտանգել մարդկան և ի¹⁵⁹ շունելն¹⁶⁰ յոյս փրկութեան¹⁶¹ ի ձեռաց որդուցն Իսմայելի¹⁶², (11) յայնժամ յանկարծակի¹⁶³ յարիցէ ի վերայ նոցա¹⁶⁴ թագաւորն Յունաց, այսինքն՝ Հոռոմոց¹⁶⁵, սրտմտութեամբ մեծաւ, և զարթիցէ որպէս այր¹⁶⁶ ի քնոյ, զոր համարէին մարդիկ իբրև¹⁶⁷ մեռեալ և յոչ ինչ պէտս: Սա ելցէ ի վերայ նոցա ի ծովէն եթովպացոց և արկցէ սուր և աւերումն յեթրիքն՝ յաշխարհն¹⁶⁸ նոցա, և գերեսցէ զկանայս և զմանկունս նոցա: Եւ ի բնակիչս երկրին¹⁶⁹ իջցեն որդիք թագաւորին սրով և հարցեն զնոսա¹⁷⁰: (12) Եւ արկցեն¹⁷¹ ի վերայ նոցա ահ, քանզի ամենայն բանակք նոցա¹⁷² տացին ի ձեռս թագաւորին Հոռոմոց¹⁷³: (13) Եւ եղիցի լուծ թագաւորին¹⁷⁴ ի վերայ նոցա եօթնապատիկ քան զոր էր լուծ նոցա ի վերայ նոցա¹⁷⁵: Եւ հասցէ ի վերայ նոցա անձկութիւն¹⁷⁶, քաղց և ծարաւ և նեղութիւն, և եղիցին ծառայք ինքեանք, և կանայք և որդիք նոցա, ծառայեսցեն՝ որոց ծառայեցին նոցա, և եղիցի ծառայութիւն¹⁷⁷ նոցա շարագոյն և դառնագոյն հարիւրապատիկ: (14) Եւ խաղաղասցի երկիրն աւերեալ ի նոցանէ: Եւ ելցեն իւրաքանչիւր ոք յերկիր իւր և ի ժառանգութիւն իւր¹⁷⁸. Հայք,

¹⁵⁹ ՄՄ6271 չիք ի:

¹⁶⁰ ՄՄ1487, ՄՄ6271 շունել:

¹⁶¹ փրկութեան // հուն. + ἡ ἀπολυτρόσεως «կամ ազատագրման»:

¹⁶² Իսմայելի // հուն. + XIII.6–10 (118.28–122.54) διωκόμενοι, θλιβόμενοι ... ἀφανισμὸν γενήσονται. Աերոսի և Կորոսեկասի հրատարակութեան մեջ 13.7–10 հատվածը հորըրջված է Interpolatio. այն առկա է հունարեն DBG ձեռագրերում և բացակայում է R ձեռագրից ու լատիներեն թարգմանությունից: Նախորդ 13.6 պարբերությունը ներառյալ այն չիա նաև հայերենում:

¹⁶³ յանկարծակի // հուն. + ἐπελεύσονται ἐπ’ αὐτοὺς θλίψις καὶ στενοχωρία «նրանց վրա գալու են նեղություններ ու աղետներ»:

¹⁶⁴ ՄՄ1487, ՄՄ6271, T1910, Mos1861 նոցա (ուղղված է նոցա):

¹⁶⁵ Mos1861 չիք այսինքն հոռոմոց:

¹⁶⁶ այր // հուն. + πῦρ οἶνον πολὺν «շատ գինի խմած»:

¹⁶⁷ T1910, Mos1861 չիք իբրև:

¹⁶⁸ ՄՄ1487 յաշխ:

¹⁶⁹ երկրին // հուն. + τῆς ἐπαγγελίας «ավետյաց»:

¹⁷⁰ հարցեն զնոսա // հուն. ἐκκόψουσιν αὐτοὺς ἀπὸ τῆς γῆς «կտրելու են նրանց երկրից»:

¹⁷¹ ՄՄ1487 արկեն | արկցեն // հուն. ἐπιπέση «ընկնելու է»:

¹⁷² քանզի ամենայն բանակք նոցա // հուն. πάντοθεν· καὶ οὗτοι καὶ οἱ γυναῖκες αὐτῶν καὶ τὰ τέκνα αὐτῶν καὶ οἱ τιθιγόμενοι τὰ βρέφη αὐτῶν καὶ πάσαι αἱ παρεμβολαὶ αὐτῶν αἱ οὖσαι ἐν τῇ γῆ τῶν πατέρων αὐτῶν «բոլոր կողմերից և նրանց և նրանց կանայք և նրանց երեխաները և նրանց մանուկների ստնտունները և նրանց բոլոր բանակները, որ հայրերի երկրում են»:

¹⁷³ թագաւորին Հոռոմոց // հուն. + ἐν ῥομφαίᾳ καὶ αἰχμαλωσίᾳ καὶ θανάτῳ καὶ φθορᾷ «արի և գերության և մահվան ու ապականության»:

¹⁷⁴ թագաւորին // հուն. + τῶν Ῥωμαίων «հռոմեացիների»:

¹⁷⁵ T1910 չիք եօթնապատիկ քան զոր էր լուծ նոցա ի վերայ նոցա:

¹⁷⁶ անձկութիւն // հուն. + μεγάλη «մեծ»:

¹⁷⁷ ՄՄ1487, ՄՄ6271, T1910 եղիցին ի ծառայութիւն, Mos1861 եղիցին ի ծառայութեան (ուղղված է եղիցի ծառայութիւն):

¹⁷⁸ ժառանգութիւն իւր // հուն. + κληρονομίαν τῶν πατέρων «և հայրերի ժառանգությունը»:

Կիլիկիա, Իսաւրիա¹⁷⁹, Ափրիկէ, Քաղաաղ¹⁸⁰, Սիկիլիա: Եւ մնացեալքն¹⁸¹ ի գե-
րութենէ մի ելցէն¹⁸² յաշխարհն¹⁸³ իւրեանց, յերկիր¹⁸⁴: (15)¹⁸⁵ Բազմասցին յերկ-
րին¹⁸⁶ որպէս մարախ: Եւ աւերեսցի¹⁸⁷ Արաբիա¹⁸⁸, և ծովեզերք խաղաղասցին, և
բորբոքեսցի բարկութիւն և սրտմտութիւն թագաւորին Հոռոմոց ի վերայ ուրա-
ցողացն¹⁸⁹ զՏէր մեր Յիսուս Քրիստոս¹⁹⁰: Եւ եղիցի խաղաղութիւն մեծ¹⁹¹, որպի-
սի ոչ եղև և ոչ եղիցի, զի յետին¹⁹²: (16) Եւ ի վախճանի¹⁹³ եղիցի ուրախու-
թիւն¹⁹⁴ յերկրի¹⁹⁵: Եւ շինեսցեն զքաղաքս և ազատեսցեն զքահանայս¹⁹⁶ ի
վտանգէ իւրեանց¹⁹⁷, և հանգիցեն մարդիկ ի ժամանակին յայնմիկ ի նեղութենէ
իւրեանց: (17) Այս է խաղաղութիւն, զոր աստուածային առաքեալն անուա-
նեաց, եթէ՛ «Յորժամ ասիցեն խաղաղութիւն և շինութիւն և ուրախութիւն,
յայնժամ յանկարծակի ի վերայ նոցա սատակումն»¹⁹⁸: Եւ դարձեալ Տէրն յԱւե-
տարանսն ասէ, եթէ՛ «Որպէս յաւուրսն Նոյի ուտէին և ըմպէին, կանայս առնէին
և արանց լինէին, այնպէս եղիցի և աւուրն յետնում»¹⁹⁹: (18) Եւ յայնմ խաղա-

¹⁷⁹ T1910 Սուրիա:

¹⁸⁰ Քաղաաղ // հուն. Ελλάς «Հունաստանը»:

¹⁸¹ Եւ մնացեալքն = հուն. πᾶς ὁ ὑπολιμπασθεῖς «մնացած ամեն ոք»:

¹⁸² ՄՄ1487, ՄՄ6271, T1910, Mos1861 մի ելցէն (մի ջնջված):

¹⁸³ T1910 յաշխարհացն: գողումն // հուն. + τὰ ἔρποντα ἐπὶ τὴν γῆν τὰ τε
κτηνῶδη «գետնի վրա սողացող և ընտանի կենդանիներ»:

¹⁸⁴ Mos1861 երկիր. յաշխարհն իւրեանց, յերկիր // հուն. εἰς τὰ ἴδια καὶ πατρικὰ
αὐτοῦ «ղեպի իրենց և հայրական [հողերը]»:

¹⁸⁵ + οἱ ἄνθρωποι «մարդիկ»:

¹⁸⁶ ՄՄ1487 չիք յերկրին // հուն. + τῆς ἐρημαθείσης «ամայացած»:

¹⁸⁷ ՄՄ6271 ասարեսցի:

¹⁸⁸ Եւ աւերեսցի Արաբիա // հուն. ἢ Αἴγυπτος ἐρημαθήσεται, Ἀραβία ἐν πυρὶ
καυθήσεται, ἢ γῆ τοῦ Ἀβρανοῦς ἐρημαθήσεται «եզիպտոսն ավերվելու է, Արա-
բիան այրվելու է հրով, Հաբրանոսի երկիրն ամայանալու է»:

¹⁸⁹ ՄՄ1487 յուրացողացն:

¹⁹⁰ Յիսուս Քրիստոս // հուն. + καὶ εἰρηνεύσει ἡ γῆ «և երկիրը խաղաղվելու է»:

¹⁹¹ խաղաղութիւն մեծ // հուն. + καὶ γαλήνη ἐπὶ τῆς γῆς «և հանդարտություն երկրի
վրա»:

¹⁹² T1910, Mos1861 ի յետինս | զի յետին // հուն. καθὼς ὅτι ἐσχάτη ἐστὶ «որպէս թէ
վերջինն է»:

¹⁹³ ի վախճանի. հմմտ. հուն. καὶ ἐν τῷ τέλει τῶν αἰώνων «դարերի վերջում». այս
հունարեն արտահայտությունը XIII.15-ի վերջում է:

¹⁹⁴ T1910 եղիցին յուրախութիւն:

¹⁹⁵ յերկրի // հուն. + καὶ κατοικήσουσιν οἱ ἄνθρωποι ἐν εἰρήνῃ «և մարդիկ ապրելու
են խաղաղությամբ»:

¹⁹⁶ ազատեսցեն զհանայս // հուն. ἐλευθερωθήσονται οἱ ἱερεῖς «հանաններն ազատ-
վելու են»:

¹⁹⁷ Mos1861 նոցա:

¹⁹⁸ Հմմտ. Ա. Թեա. Ե 3. «Յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն և շինութիւն է, յայնժամ
յանկարծակի հասցէ նոցա սատակումն»:

¹⁹⁹ Հմմտ. Մատթ. ԻԳ 37-39. «Այլ որպէս ատուրն Նոյի, նոյնպէս եղիցի զայտաւան որդայ
մարդայ: Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին եւ ըմպէին, կանայս
առնէին եւ արանց լինէին, մինչեւ յաւրն յորում եմուտ Նոյ ի տապանն»:

ղութեան նստցին մարդիկ²⁰⁰ խնդութեամբ յուտել և յըմպել²⁰¹, ի ցնծալ և յուրախ լինել, շինել շինուածս՝ որպէս զի ոչ գոլ նոցա²⁰² երկիւղ կամ հոգք: (19) Յայնժամ, ըստ մարգարէութեանն եզեկիելի, որ ասէ, եթէ՛ «յԱւուրս յետինս, ի վախճանի աշխարհիս ելցեն Գոգ և Մագոգ յերկիրն Իսրայէլի»²⁰³, բացցին դրունք հիւսիսոյ, և ելցէ զօրութիւն ազգացն, զորս արգել Աղէքսանդր ի ծագս հիւսիսոյ²⁰⁴ Գոգ և Մագոգ, Անիգ և Ագիգ, Աքիագ, Դիփոր, Փորինացիք, Ալրե-նացիք, Հոնք, Փարգիացիք²⁰⁵, Դեկղիմացիք, Սարմատք, Թեթղէացիք, Չարմե-տացիք, Կաքոնացիք, Ամազարդք, Գարմադացիք, Մարդակերք, Թարփացիք, Ալանք, Փասկղինկացիք, Արգնէացիք, Սատառէացիք²⁰⁶: Այսոքիկ ԻՔ թագաւո-րութիւնք²⁰⁷ են արգելեալք ընդ դրամբքն, զոր կանգնեաց Աղէքսանդր²⁰⁸: Եւ տեսցեն²⁰⁹ մարդիկ և զարհուրեսցին, և փախիցեն և թաքիցեն ի լերինս և յայրս և ի գերեզմանս²¹⁰: Եւ սատակիցին²¹¹ բազումք, և ոչ ոք իցէ որ կարիցէ թաղել²¹²: (20) Քանզի ազգքն, որ ելանեն ի հիւսիսոյ, ուտեն զմարմինս²¹³ և ըմպեն զարիւնս գազանաց²¹⁴, նոյնպէս և զամենայն պիղծս²¹⁵ և զկարիճս²¹⁶, զսո-ղունս²¹⁷ և զմեռելոտիս, զվիժածս կանանց. զենցեն զմանկունս²¹⁸ և տացեն

²⁰⁰ նստցին մարդիկ // հուն. + ἐπὶ τῆς γῆς «գետնին»:

²⁰¹ յըմպել // հուն. + γαμοῦντες καὶ ἐκγαμίζοντες «ամուսնանալով և կնութեան տալով»:

²⁰² նոցա // հուն. ἐν τῇ καρδίᾳ αὐτῶν «նրանց սրտերում»:

²⁰³ Հմմտ. Եզեկ. ԼԸ:

²⁰⁴ զորս արգել Աղէքսանդր ի ծագս հիւսիսոյ // հուն. αἱ εἰσιν καθειργμένοι ἕσθωθεν, καὶ σαλευθήσεται πᾶσα ἡ γῆ ἀπὸ προσώπου αὐτῶν «որոնք ներսից արգելափակ-ված են, և ողջ երկիրը ցնցվելու է նրանց երեսից»:

²⁰⁵ ՄՄ1487 չիք Փարգիացիք

²⁰⁶ Գոգ... Սատառէացիք. այս անուններից շատերն աղավաղված են: Նշված են մեծ մասամբ առասպելական ցեղեր:

²⁰⁷ ՄՄ1487, ՄՄ6271, T1910 քազաւորութիւն nrf, Mos1861 քազաւորութիւն // հուն.

βασιλείς «քազավորներ»:

²⁰⁸ Յայնժամ, ըստ մարգարէութեանն Եզեկիելի ... զոր կանգնեաց Աղէքսանդր = հուն. VIII.10.43–53 (82.43–51), բացի «բացցին դրունք հիւսիսոյ, և ելցէ զօրութիւն ազգացն, զորս» = հուն. XIII.19 (128.96–97) ἀνοιχθήσονται αἱ πύλαι τοῦ Βορρά, καὶ ἐξελεύσονται αἱ δυνάμεις τῶν ἔθνων:

²⁰⁹ տեսցեն // հուն. չիք:

²¹⁰ ի գերեզմանս // հուն. + καὶ νεκρωθήσονται φόβῳ «և մեռնելու են վախից»:

²¹¹ ՄՄ1487, ՄՄ6271, T1910 սատակիցեն:

²¹² թաղել = հուն. R // հիմնական բնագիր ὁ θάπτων τὰ σώματα «որ մարմինները թաղի»:

²¹³ զմարմինս // հուն. + ἀνθρώπων «մարդկանց»:

²¹⁴ զարիւնս գազանաց // հուն. + ὥσπερ ὕδωρ «որպէս ջուր»:

²¹⁵ Mos1861, T1910 պիղծ // հուն. + καὶ τοὺς ὄφεις «և օձեր»:

²¹⁶ զկարիճս // հուն. + καὶ πάντα τὰ μυστὰ καὶ βδελυκτὰ θηρία «և ամեն զգվելի ու պիղծ կենդանի»:

²¹⁷ զսողունս // հուն. + τὰ ἔρποντα ἐπὶ τὴν γῆν τὰ τε κτηνώδη «գետնի վրա սողա-ցող և ընտանի կենդանիներ»:

²¹⁸ ՄՄ1487 զմանուկս:

ուտել մարց իւրեանց²¹⁹: Եւ ապականեսցեն զերկիր²²⁰, և ոչ ոք իցէ որ կարիցէ կալ²²¹ առաջի նոցա: (21) Եւ յետ է և կիսոց ամաց²²² հասցեն²²³ ի քաղաքն Յոպպէ: Առաքեսցէ Տէր²²⁴ զգորավար իւր և հարցէ զնոսա ի վայրկենոջ միում: Եւ յետ այնորիկ իջցէ թագաւորն Յունաց²²⁵ և բնակեսցէ յերուսաղէմ եօթն և կէս [ամ], որք են ամբ 10 և կէս²²⁶: Եւ ի կատարել²²⁷ ամացն տասանց և կիսոց երևեսցի Որդին Կորստեան:

XIV (1) Սա ծնցի ի Քորագին²²⁸ և սնցի ի Բեթսայիդայ²²⁹, և թագաւորեսցէ ի Կափառնայում²³⁰: Եւ ուրախասցի Քորագին, զի ի նմա ծնաւ, և Բեթսայիդա՝ զի ի նմա սնաւ, և Կափառնայում զի ի նմա թագաւորեսցաւ: Վասն այսորիկ և յԱւետարանն Տէրն երիցս վայ տայ²³¹ ասելով. «Վա՛յ քեզ Քորագին և Բեթսայիդա, և դո՛ւ, Կափառնայո՛ւմ. մինչև յերկինս բարձրացար, մինչև ի դժոխս իջցես»²³²: (2) Եւ յորժամ երևեսցի Որդին Կորստեան, ելցէ թագաւորն Յունաց ի Գագաթան տեղի, ուրանօր կանգնեցաւ կենարար փայտ իսային, յորում բեռեցաւ Տէրն մեր Աստուած և զկամաւորն վասն մեր կրեաց զմահ²³³: (3) Եւ առցէ թագաւորն Յունաց զպսակն իւր և դիցէ ի վերայ իսային, և տարածեսցէ

²¹⁹ տացեն ուտել մարց իւրեանց // հուն. παράσχωνται ταῖς μηράσις αὐτῶν καὶ ἐψήσουςι τὰ κρέα αὐτῶν καὶ κατέδονται αὐτά «տալու են նրանց մարցերն և եփելու են նրանց միսն ու ուտելու»:

²²⁰ զերկիր // հուն. + καὶ μιáινωσιν αὐτήν καὶ ἀφανίσουσιν αὐτήν «և պղծելու են այն և վերացնելու են այն». հմմտ. հուն. GR չիք καὶ ἀφανίσουσιν αὐτήν «և վերացնելու են այն»:

²²¹ ՄՄ1487, ՄՄ6271, T1910, Mos1861 կեալ (ուղղված է կալ):

²²² յետ է և կիսոց ամաց // հուն. μετὰ οὖν ἑβδομάδα χρόνων, ἡνίκα «յոթ տարի անց, երբ»:

²²³ հասցեն // հուն. καταλάβωσι «գրավելու են» (καταλαμβάνω նշանակում է նաև «հասնել»): թարգմանվել է այդ իմաստով):

²²⁴ Տէր // հուն. + ὁ θεός «Աստված»:

²²⁵ Յունաց // հուն. Ῥωμαίων «հռոմեացիների»:

²²⁶ որք են ամբ 10 և կէս = հուն. D ὁ ἔστι χρόνος δέκα ἡμισυ // հիմնական բնագիր՝ չիք:

²²⁷ ՄՄ1487 կատարեալ:

²²⁸ Քորագին. գյուղ Գալիլեայի հյուսիսում (հմմտ. Մատթ. ժԱ. 21, Ղուկ. ժ 13):

²²⁹ Բեթսայիդա. հավանաբար՝ Կափառնայումի մոտակայքում գտնվող քաղաք (հմմտ. Մատթ. ժԱ. 21, Մարկ. Զ 45, Ը 22, Ղուկ. Թ 10, ժ 13, Յովն. Ա 44, ժԲ 21):

²³⁰ Կափառնայում. գյուղ Գալիլեայի լճի հյուսիս-արևելյան ափին (հմմտ. Նոր Կտակարանում բազմիցս՝ Կափառնայում):

²³¹ ՄՄ1487, ՄՄ6271 չիք տայ:

²³² Հմմտ. Մատթ. ժԱ. 21, 23. «Վա՛յ քեզ Քորագին, վա՛յ քեզ Բեթսայիդա՛ ... Եւ դո՛ւ, Կափառնայո՛ւմ, որ մինչև յերկինս բարձրացիս, այլ մինչև ի դժոխս իջցես»: Հմմտ. նաև Ղուկ. ժ 13, 15:

²³³ բեռեցաւ Տէրն մեր Աստուած և զկամաւորն վասն մեր կրեաց զմահ, հմմտ. հուն. R προσηλώθη ὁ κύριος ἡμῶν Ἰησοῦς Χριστὸς καὶ θεὸς ἡμῶν καὶ τὸν ἐκούσιον ὑπὲρ ἡμῶν ὑπέμεινε θάνατον // հիմնական բնագիր ὑπέμεινε θάνατον Χριστὸς ὁ θεὸς ἡμῶν «մեր Տեր Քրիստոսը մահ կրեց»:

զձեռս իւր յերկինս, և տացէ զթագաւորութիւնն իւր²³⁴ ի ձեռս Աստուծոյ և Հօր: (4) Եւ համբարձցի ի հաշն յերկինս հանդերձ թագիւն²³⁵, վասն զի ի հաշն յորում բեկեցան²³⁶ վասն հասարակաց ամենեցուն փրկութեան, նախ²³⁷ նա հանդերձցի²³⁸ երևիլ²³⁹ ի գալստեան նորա՝ ի²⁴⁰ յանդիմանութիւն անհաւատից²⁴¹: (6) Եւ աւանդեսցէ թագաւորն Յունաց զհոգի իւր, և յայնժամ խափանեսցին²⁴² իշխանութիւնք և պետութիւնք²⁴³, և լցցի մարգարէութիւնն Դաւթի, որ ասէ. «Լերինք ցնծասցեն առաջի Տեառն, զի գայ և գայ նա ի դատել զերկիր»²⁴⁴: Արդ, Որդին Կորստեան ի ցեղէն Դանայ է²⁴⁵, ըստ մարգարէութեան նահապետին Յակոբայ²⁴⁶. «Օձ դարանակալ ի ճանապարհի նստեալ սպասելով խածանել զգարշապար երիվարի և ընկենուզ զհեծեալն յետս՝ մնալով փրկութեան Տեառն»²⁴⁷: (7) Արդ, հեծեալ²⁴⁸ է ճշմարտութիւն և արքայութիւն²⁴⁹ արդարոց, իսկ գարշապարն են²⁵⁰ սուրբքն՝ ի ժամանակին յայնմիկ հեծեալ յերիվար²⁵¹ ճշմարիտ հաւատոյն. խածցին յօձէն²⁵² յորդոյն կորստեան ի գարշապարի²⁵³

²³⁴ գրագատորութիւնն իւր = հուն. R τὴν βασιλείαν αὐτοῦ // հիմնական բնագիր τὴν βασιλείαν τῶν χριστιανῶν «քրիստոնյաների թագավորությունը»:

²³⁵ թագիւն // հուն. + τοῦ βασιλέως «թագավորի»:

²³⁶ բեկեցան // հուն. ἐκρεμάσθη ὁ κύριος ἡμῶν Ἰησοῦς Χριστός «ԱԵՐ ՏԵՐ ՀԻՍՏԱ ՔՐԻՍՏՈՍԸ կախվեց»:

²³⁷ Mos1861 չիք նախ // հուն. ἔμπροσθεν αὐτοῦ «նրա առջև»:

²³⁸ Mos1861 հանդերձեցի:

²³⁹ ՄՄ1487, ՄՄ6271 երևեալ:

²⁴⁰ ՄՄ1487, ՄՄ6271 չիք ի:

²⁴¹ ՄՄ1487 յանհաւատիցն, ՄՄ6271 անհաւատիցն. // հուն. + (5) καὶ πληροῦται ἡ προφητεία τοῦ Δαβὶδ λέγουσα ἐπ' ἐσχάτου τῶν ἡμερῶν ... Αἰθιοπία προφθάσει χεῖρα αὐτῆς τῷ θεῷ ... διότι ἐκ σπέρματος τῶν υἱῶν Χουσήθ θυγατρὸς Φῶλ βασιλέως τῶν Αἰθίοπων αὐτοὶ ἐσχάτως προφθάσωσι χεῖρα αὐτῆς τῷ θεῷ. (6) καὶ ὑψωθήσεται ὁ σταυρὸς εἰς τὸν οὐρανὸν «և կառարվելու է Դաւթի մարգարէությունը, որն ասում է օրերի վերջում ... «հնդիկ յառաջագոյն ձեռնառ լիցին առ Աստուած» (Մաղ. Կէ 32): Քանզի նրանք՝ եթովպացիների (հնդիկների) թագավոր Փոլի դուստր Քուշիթի որդիների սերնդից, ի վերջո ձեռքերը մեկնելու են Աստծուն: (6) Եվ խաչը բարձրացվելու է երկինք»:

²⁴² ՄՄ1487, ՄՄ6271 խափանիցեն:

²⁴³ իշխանութիւնք և պետութիւնք // հուն. πᾶσα ἀρχὴ καὶ ἐξουσία «ամեն իշխանություն ու տէրություն»:

²⁴⁴ Հմմտ. Մաղ. Գէ 9. «Լերինք ցնծասցեն առաջի Տեառն, զի գայ և հասեալ է Տեր ի դատել զերկիր»:

²⁴⁵ է // հուն. R γεννᾶται «ծնվում է» // հուն. DB ἐμφανῶς γένηται «հայտնվում է»:

²⁴⁶ Յակոբայ = հուն. R // հիմնական բնագիր + τὴν λέγουσαν: Δάν «որն ասում է Դանը»:

²⁴⁷ Հմմտ. Ծնն. ԽԹ 17. «Եւ եղիցի Դան՝ աւձ դարանակալ ի հանապարհի, հարկանել զգարշապար երիվարի և ընկենուզ զհեծեալն յետս, և մնալ փրկութեան Տեառն»:

²⁴⁸ հեծեալ = հուն. R ἵππεύς // հիմնական բնագիր ἵππος «ծին»:

²⁴⁹ արքայութիւն // հուն. ἡ εὐσέβεια «բարեպաշտություն»:

²⁵⁰ ՄՄ1487 գարշապարան և, ՄՄ6271 գարշապարն ան և:

²⁵¹ յերիվար // հուն. չիք:

²⁵² յօձէն // հուն. + ἦτοι «այն է»:

²⁵³ ի գարշապարի // հուն. + ἦγουν «հենց»:

յաւուրն յետնում ի ցնորս և ի սուտ նշանս²⁵⁴: (8) Անգօրս և ամբարտաւանս²⁵⁵, քանզի կոյրք տեսցեն և կաղք գնասցեն, խուլք լուիցեն և դիւահարք բժշկեացին: Եւ փոփոխեսցէ զարեգական ի խաւար և զլուսինն՝ յարին: Այսոքիւք²⁵⁶ սուտ նշանօքս իւրովք և ցնորիւք²⁵⁷ մոլորեցուցէ զհաւատս²⁵⁸ և զընտրեալս²⁵⁹: (9) Որպէս և յայս հայեցեալ հայրապետին²⁶⁰ Յակոբայ մտաց ականքն՝ ետես զհանդերձեալ լինել նեղութիւն²⁶¹ ի վերայ երկրի և մարդկան անձկութիւն²⁶² ի սատակիչ յօձէն²⁶³ յորդուոյն կորստեան: Ասաց այսպէս ի դէմս մարդկայնոյ ազգի արարեալ²⁶⁴ զձայն²⁶⁵. «Փրկութեան քում սպասեսցուք, Տէր»: Իսկ Տէրն յառաջագոյն ասաց, եթէ հնար ինչ իցէ մոլորեցուցանել և²⁶⁶ զընտրեալսն: (10) Քանզի մտցէ²⁶⁷ յերուսաղէմ և նստցի ի տաճարին Աստուծոյ՝ հաւասար Աստուծոյ, մարդոյ տեսակով²⁶⁸ մարմնաւորի՝ ի սերմանէ առն և յարգանդէ կնոջ, ի ցեղէն Դանայ²⁶⁹. Յուրայ Իսկարիովտացի, որ մատնեացն իսկ զՏէրն, և նա ի ցեղէն Դանայ էր: (11) Իսկ ի բազմանալ անօրէնութեան որդուոյն կորստեան²⁷⁰ ոչ կարէ անտես առնել Աստուած զկորուստ ազգի մարդկան, զորս գնեաց իւրով արեամբն²⁷¹: Առաքեսցէ վաղվաղակի զմտերիմ ծառայս իւր²⁷² զճնովք և զճեղիա, ի յանդիմանութիւն հակառակորդին: Առաջի ամենայն ազգաց յանդի-

²⁵⁴ նշանս // հուև. + (8) ποιήσει γὰρ σημεῖα καὶ τέρατα πολλὰ ἐπὶ τῆς γῆς «(8) Քանզի շատ նշաններ ու հրաշքներ է գործելու երկրի վրա»:

²⁵⁵ ամբարտաւանս // հուև. ἐξίτηλα «խամբած»:

²⁵⁶ Mos1861 այսոքիւք:

²⁵⁷ ցնորիւք // հուև. φαντασιώδεσι τέρασι πλάνης «մոլորության երևակայական հրաշքներով»:

²⁵⁸ մոլորեցուցէ զհաւատս // հուև. πλανήσει, εἰ δυνατόν «մոլորեցնելու է, եթե հնարավոր է»:

²⁵⁹ ՄՄ1487 զնարեալս | զընտրեալս = հուև. R // հիմնական բնագիր + καθὼς ὁ κύριος προηγόρευσεν «ինչպես Տէրն է կանխագուշակել»:

²⁶⁰ ՄՄ6271, T1910 յայս հայրապետին:

²⁶¹ T1911 զհանդերձեալ լինելոց նեղութիւն, Mos1861 զհանդերձեալն նեղութիւն որ լինելոց էր:

²⁶² նեղութիւն ի վերայ երկրի և մարդկան անձկութիւն // հուև. ἐπὶ τοῖς ἀνθρώποις θλίψιν καὶ στενοχωρίαν «մարդկանց վրա նեղություն և անձկություն»:

²⁶³ ՄՄ1487 չիք յօձէն:

²⁶⁴ ՄՄ1471, ՄՄ6271 ասաց այսպիսի դէմս մարդկանոյս ազգիս արարեալ, T1910 ասաց այսպիսի դէմս մարդկան արարեալ:

²⁶⁵ ՄՄ1471, ՄՄ6271, T1910 զօձն, ասէ, Mos1861 զօձն (ուղղված է զձայն = հուև. τὴν φωνήν):

²⁶⁶ ՄՄ1487, ՄՄ6271 չիք և:

²⁶⁷ մտցէ // հուև. + οὗτος ὁ υἱὸς τῆς ἀπωλείας «այս որդին կորստյան»:

²⁶⁸ ՄՄ1487 չիք տեսակով, Mos1861 տեսակ մարդոյ | տեսակով // հուև. ὑπάρχων «գիներով»:

²⁶⁹ Դանայ = հուև. // հիմնական բնագիր + τυγχάνων «լինելով»:

²⁷⁰ անօրէնութեան որդուոյն կորստեան // հուև. τῆς θλίψεως τῶν ἡμερῶν ἐκείνων ὑπὸ τοῦ υἱοῦ τῆς ἀπωλείας «կորստյան որդու գործած՝ այն օրերի հալածանք»:

²⁷¹ Mos1861 մահուամբ:

²⁷² իւր // հուև. τοὺς ἰδίους αὐτοῦ καὶ «իր սեփական և»:

մանեցեն զնա²⁷³ սուտ գոլ և խաբեբայ²⁷⁴, և ասացեն²⁷⁵, եթէ վասն մոլորութեան և կորստեան բազմաց եկն: (12) Եւ տեսեալ զնա ազգացն²⁷⁶ յամօթ եղեալ և զմոլորութիւն նորա յանդիմանեալ²⁷⁷, թողցեն զնա և փախիցեն ի նմանէն, և յարեցին ի սուրբսն²⁷⁸ յայնոսիկ: Իսկ նա²⁷⁹ տեսեալ զինքն շարաշար յամօթ եղեալ և յամենեցունց արհամարհեալ՝ սրտմտութեամբ և բարկութեամբ բորբոքեալ սպանցէ զսուրբսն Աստուծոյ²⁸⁰: (13) Յայնժամ երևեսցի նշան փառաւոր²⁸¹ գալստեան Որդոյ մարդոյ՝ Աստուծոյ յերկնից: Եւ եկեսցէ ի վերայ ամպոց երկնից՝ փառօք երկնայնօք և ամենայն հրեշտակապետօք և²⁸² հրեշտակօք իւրովք: Եւ սատակեսցէ զշարն²⁸³ հոգևով բերանով իւրով՝ ըստ առաքելականին յայտնաբանութեան²⁸⁴: (14) Յայնժամ ծագեսցին արդարքն որպէս լուսաւորք²⁸⁵, և ամբարիշտք²⁸⁶ դարձցին ի դժոխս և ի կորուստն յաւիտենից²⁸⁷:

²⁷³ զնա // հուն. + αὐτοῦ τὴν πλάνην, καὶ ἀναδείξουσιν «նրա մոլորությունը և ցույց կտան»:
²⁷⁴ սուտ գոլ և խաբեբայ // հուն. ψεύστην ἐπὶ παντός ἀνθρώπου καὶ μηδὲν «ամեն մարդու առաջ ստախոս և ոչնչություն»:

²⁷⁵ ՄՄ6271 ասիցեն:

²⁷⁶ ՄՄ1487, ՄՄ6271 յազգացն:

²⁷⁷ յանդիմանեալ // հուն. + ὑπὸ τῶν τοῦ θεοῦ θεραπόντων «Աստծո սպասավորների կողմից»:

²⁷⁸ սուրբսն // հուն. τοῖς δικαίοις «արդարներին»:

²⁷⁹ Mos1861, ՄՄ6271, ՄՄ1487 չիք նա:

²⁸⁰ Աստուծոյ // հուն. ἐκείνου «այն»:

²⁸¹ փառաւոր // հուն. χηρ:

²⁸² ՄՄ1487 և ամենայն:

²⁸³ զշարն // հուն. αὐτὸν κύριος «նրան Տերը»:

²⁸⁴ ՄՄ1487, ՄՄ6271, T1910, Mos1861 և սստ առաքելականին յայտնաբանութիւն (ուղղված է ըստ առաքելականին յայտնաբանութեան):

²⁸⁵ լուսաւորք // հուն. + ἐν κόσμῳ λόγον ζωῆς ἐπέχοντες «աշխարհում կայնի խտր մատուցողներ» // R չիք ἐν κόσμῳ «աշխարհում»:

²⁸⁶ ամբարիշտք // հուն. + ἐκδιωχθήσονται καὶ «կվարվեն և»:

²⁸⁷ ի կորուստն յաւիտենից // հուն. ἐξ οὗ ῥυσθείμεν ἅπαντες οἱ θεὸν ζῶντα λατρεύοντες, χάριτι καὶ φιλανθρωπία τοῦ κυρίου καὶ θεοῦ καὶ σωτῆρος ἡμῶν Ἰησοῦ Χριστοῦ, μεθ' οὗ τῷ πατρὶ ἅμα τῷ ἁγίῳ καὶ ζωοποιῶ πνεύματι τίμη, δόξα, κράτος, μεγαλοσύνη τε καὶ μεγαλοπρέπεια, νῦν καὶ αἰεὶ καὶ εἰς τοὺς αἰῶνας τῶν αἰῶνων, ἀμήν «ուսից կազատվեիմք բոլորս, որ պաշտում ենք կենդանի Աստծուն, մեր Տեր և Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհով ու մարդասիրությամբ, որի հետ Հոր և Սուրբ ու կենդանաւոր Հոգու պատիվն է, փառքը, զորությունը, մեծությունն ու վայելչությունը, այժմ և հավիտ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

Գ. XIII.11–XIV.14

Հետագա հայերեն խմբագրություն (ՄՄ 2270, 169ա–179բ)

(169ա) Այս է յաղթութիւն քրիստոնէից¹: Առաջին թագաւորն Արծիւն է. այս ոչ է անուն սորայ, զի գանուն սորայ ոչ ոք գիտէ: Զառաջ դիմին այլ գործով իւրեանց դրոշմեցին²:

XIII (11) Յայնժամ փութանակի յարիցէ ի վերայ նոցա թագաւորն հելլենացոց և Հռոմեացոց, որք են Ֆռանգ. բազում բարկութեամբ զարթիցէ, որպէս ըզմարդ ի քնոյ, որ համարեալ էր ընդ մեռեալս և ոչ երևէր: Սա առնէ հրամանաւն աստուծոյ. յազգէն Խուսիթայ, որ նման է արծուի: Եւ դնէ ուխտ ընդ այլ Գ թագաւորաց, և ելանէ ի վերայ նոցա ընդ ծովն Թարսիս, և վարէ զիս մայելացիսն մինչև ի Գաբաուն: Եւ ի վերայ Մըղլուպ գետին սկսանին պատերազմել ընդ միմեանս և յանկանին յերկոցունց կողմանցն բազմութիւնսն յոյժ, մինչև գետն Մըղլուպ յարիւնն դարձի (169բ) և ներկէ զծովն մողոնս Կ: Եւ վերակացութեամբ սուրբ հրեշտակապետին Միքայէլի դնէ ի վերայ նոցայ սուր և հարցէ զնոսա. և մնացեալքն փախիցեն մինչև յանապատն Եթրիոյ՝ ի տեղի իւրեանց: Եւ զգերէվար նոցայ դարձուցէ և զկանայս և զորդիս նոցայ գերեսցէ: [Ի]սկ որ յերկիրն աւերեալ իցեն, առաքէ թագաւորն զորդի իւր, և նա երթեալ հարցէ զնոսայ անդ և ջնջեսցէ իսպառ: (12) Եւ անկանի ի վերայ նոցա ահա առաջին և դողումն³, զոր ունէին ի վերայ քրիստոնէից: Իսկ մեծութիւն և աւար նոցայ և կանայք նոցա և որդիք և ազգականք անկցին ի ձեռն թագաւորին Հռոմայեցոց: Եւ մատնին իսմայելացիք ի սուր և ի գերութիւնք, ի մահ և ապականութիւն: (13) Եւ լինի եօթնապատիկ լուծն Հռոմայեցոց ի վերայ նոցա, և վաղճանեսցէ զնոսա բազում նեղութեամբ, սովով և ծարավով և տանջանաւք: Եւ ծառայեն այնոցիկ, որ յառաջն ծառայէին նոցա, և լինի ծառայութիւն նոցա դառն քան զառաջնոցն հարիւրապատիկ: (170ա)(14) Եւ խաղաղանայ երկիր և իւրաքանչիւր ոք ի նոցանէ զնասցեն ի գաւառ իւր՝ ի բնակութիւն հարցն իւրեանց. ի Հայք, ի Կիլիկիա, Իսաֆրիա, յԱփրիկա, յԵլլագա, ի Ս[ի]կիլի[ի]այ: Եւ ամենայն, որ մնացեալ է ի գերութեան, զնասցէ ի գաւառն իւր: (15) Եւ բազմանան մարդիկ ի վերայ երկրի իբրև զմարախ յոյժ: Իսկ թագաւորն առաջնորդութեամբ հրեշտակապետին ելանէ ի լեռն բարձր, որ է դէմ յանդիման Անտիոքայ մեծին, և ժողովին առ նա բազմութիւն զաւրաց յոյժ: Եւ յայնմհետէ սկսանի առնուլ զՊարսիկս մինչև յարևելս, և զԱրաբիայ, և զԵգիպտոս: Եւ իբրև զարծիւի շրջի փոյթ ընդ տիեզերս և դարձուցէ յինքն զաշխարհս ի ներքոյ երկնից ի յամիսս եօթ, իսկ Արաբիայ և Եգիպտոս այրեսցի հրով: Իսկ եզր ծո-

¹ ՄՄ 2270 քրիստոնէից է (է ջնջված):

² ՄՄ 2270 դրոշմեցին (ուղղված է դրոշմեցին):

³ ՄՄ 2270 թողումն (ուղղված է դողումն):

վուն խաղաղեսցի և շինեսցի յամենայն, և սրտմտութիւն թագաւորին եղիցի ի վերայ ուրացողացն Քրիստոս. այրեսցէ զնոսա և զտունս նոցայ այրեսցէ: Եւ խաղաղանայ երկիր մեծաւ ուրախութեամբ: Եւ լինի խաղաղութիւն ի վերայ երկրի, ուրախութիւն և խնդութիւն, (170բ) որ ոչ այլ եղեալ էր ի սկզբանէ աշխարհի և այլ ոչ լինիցի, զի յետի աւուրք են: (16) Եւ լինի խաղաղութիւն և խնդութիւն ի վերայ երկրի, և շինեսցեն մարդիկ քաղաքս և բազմասցին, և ազատին քահանայք ամենայն հարկէ: (17) Այս է խաղաղութիւն, զոր ասէ առաքեալն թէ՛ «Յորժամ կարծեսցեն, թէ խաղաղութիւն է, եղիցի կատարած»⁴: Որպէս Փրկիչն ասէ, եթէ՛ «Որպէս յաւուրսն Նոյի», և որ զկնի այսմ ժամուս շինեսցեն մարդիկ, ուտիցեն և լըմպիցեն, գնեսցեն և վաճառեսցեն, ամուսնայցեն և շինեսցեն քաղաքս և բնակութիւնս»⁵: (18) Եւ ոչ լինի երկիւղ ինչ կամ նեղութիւն ի սիր[ա]ս նոցա: Իսկ թագաւորն ի ԺԲ ամ թագաւորութեան իւրոյ հիւանդասցի մերձ ի մահ: Եւ յայնժամ ուխտեսցէ Աստուծոյ զբարի կեալն և սուրբ կեալն և ազատէ զեկեղեցիս և զվանորայս ի հասարակաց, աղքատաց և որբոց աւգնական լինի: Եւ մինչ զայս արասցէ, լսէ տէր աղաւթից նոցա, յաւելու ի կեանս իւր ամս ԻԲ⁶: Իսկ ի ԺԵ թագաւորութեան նորա հասանէ յանկարծահաս (171ա) բարկութիւն սորա ի վերայ ամենայն երկրի: (19) Եւ անկանի դուռն հիւսիսի, զոր կանգնեաց Աղէքսանդրիոս ընդդէմ գազանաբարու ազգին՝ Ազոգք և Մագոգք կոչեցեալ, և ելանէ անտի բազմութիւն բարբարոսաց յոյժ անթիւ: ԻԲ թագաւորութիւնք, որ էին արգելեալ անդ, անչափ բազմութիւնք, մինչև կտրէ սմպակ ձիոյն զշէմն ներքին և ծայրքն նիզակացն զշէմն վերին. և է հաստատութիւն շէմոցն կանգուն Գ: Եւ արձակին նոքայ ի վերայ երկրի, ապականելով զսա, և զարհուրի ամենայն երկիր երեսաց նոցա, և փոխիցեն ի նոցանէն և թագիցեն ի լերինս, յայրս և ի գերեզմանս մեռելոց: Մեռանին բազումք ի փախուստ յայն, և ոչ ոք իցէ, որ թաղիցէ զնոսա: Զի երեմիայ մարգարէն ասէ, եթէ՛ «Երեսաց հիւսիսոյ բորբոքեսցին չարիք ի վերայ երկրի»⁷: (20) Զի հիւսիսոյ ելանեն նոքա և ուտեն զմարմինս մարդկան և զօձս և զկարիճս և զամենայն սողունս և զգազանս, և ըմպեն զարիւնս նոցա և խորովեն զմատղաշ մանկունսն և զնեն առաջի ծնողացն և ուտեն և ուտելոյ տան: Պատ(171բ)առեն զյղի կինն և հանեն⁸ զսաղմն, կերիցեն, և ապականեն զերկիր և աւերեն, և ոչ ոք կարէ կեալ ընդդէմ նոցա: (21) Եւ այս լինի տարիք և տարի և կէս տարոյ,

⁴ Հմմտ. Ա. Թեւ. Ե 3. «Յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն և շինութիւն է, յայնժամ յանկարծակի հասցէ նոցա սատակումն»:

⁵ Հմմտ. Մատթ. ԻԳ 37. «Այլ որպէս ասուրքն Նոյի, նոյնպէս եղիցի գալուստն որդոյ մարդոյ: Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զբրեւեղեղն, ուտէին և ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, մինչեւ յարն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն»:

⁶ ՄՄ 2270 ամս ԻԲ ամ (ամ ջնջված):

⁷ Հմմտ. Երեմ. Ա 14. «Երեսաց հիւսիսոյ բորբոքեսցին չարիք ի վերայ բնակչաց երկրի»:

⁸ ՄՄ 2270 հասեն (ուղղված է հասենն):

այս ինքն՝ ամբ եօթ և կէս: Եւ զկնի եօթ ամացն ժողովեալ գան մինչև ցքաղաքն Իոպէդ: Իսկ Արծիւն ի յամին ԻՒ-երորդի թագաւորութեան իւրոյ ելանէ ընդ առաջ նոցա և եկեալ յԵրիքոյ (՞) խնդրէ զԱստուծոյ օգնութիւն: Եւ առաքէ Աստուած զգօրագլուխ հրշտակաց և սատակէ զնոսա ի քթթել ականն, և ոչ մնասցէ և ոչ մի զորոցն զնիզակս և զասպարս և զնետս. այրեսցեն զեօթ ամ ամենայն աշխարհն: Եւ լինի խաղաղութիւն մեծ ամենայն աշխարհս և մի իշխանութիւն: Եւ թագաւորեալ սորայ ամս ԼԶ, բարի խոստովանութեամբ շնու զտապանն:

Թագաւորէ որ դրոշմեալ է Զի:

Յետ սորա թագաւորէ որդի սորա և վարի սրբութեամբ և խաղաղութեամբ, զի ոչ ուստէք ունի հակառակողս իւր: Եւ թագաւորեսցէ ամս ԺԲ և ննջեսցէ. աստ դադարէ թագաւորութիւն Կոմնիանոսաց: Եւ սա ձի դրոշմ(172ա)եցաւ, զի ոչ աշխատեցաւ:

Այս Մանկաղ թագաւորն է:

Իսկ զկնի թագաւորեսցէ, որ դըրօշմեալն է «Մանկաղ ունելով ի ձեռն», զի աւուր կիրակէի ի Կոստանդինուպօլիս ընդ թագաւորելն նորայ կոտորեսցին սրով հոգիք ԽԲԹ, և լինի շփոթ յոյժ և խռովութիւն, և ոչ հաճի ընդ նա Տէր, և զկնի Գ ամաց մահուամբ ելանէ յաշխարհէ:

Այս Եզն թագաւորէ:

Յետ սորա թագաւորէ, և միաբանին ընդ սա թագաւորք արեւմտից և գան մտանեն ի քաղաքն ընդ ոսկի դուռն: Եւ լինի խաղաղութիւն և սէր մեծ ընդ ամենայն երկիր, և հնազանդի ամենայն երկիր: Եւ ոչ ոք է որ հակառակ գայ նմա, զի հօր է և հեզ և անմեղ և սուրբ և բարեգործ: Եւ թագաւորէ ամս ԻԲ և հանգիցէ ընդ հայրս իւր ի թիւս սրբոց:

Այս Մե[ր] կ թագաւորն է:

Զկնի սորա թագաւորէ որ կոչի աղքատ. ինչ խնդրէ յաշխարհէ, այլ մերկ (172բ) յամենայն [ն] իւթականացս: Նստի իբրև ի վերայ վեմի. մարդ աստուածամիտ և սուրբ և բարեգործ: Եւ թագաւորէ մեծաւ խաղաղութեամբ ԺԲ ամ: Ի սորայ ամի պատրիարզ ոմն բարի և հաճոյ Աստուծոյ, որ հաւասար առաքինութեամբ է ամենայն առաջնոցն: Եւ ընդ սորայ բառնայ քահանայութիւն յաշխարհէ:

Այս Բարեմիտ թագաւորն է:

Յետ սորայ թագաւորէ ոմն մի բարի այր յոյժ և ուրախ, լի ամենայն սրբութեամբ և առաքինութեամբ: Եւ արասցէ իւր կին յոյժ շար և անարէն և պիղծ: Եւ թագաւորէ սրբութեամբ և ուղղափառութեամբ ամս ԼԲ և ննջէ ի Քրիստոս: Եւ թողու զաթոռն իւր կնոջն իւր շար սերման և աղանդաւորի և պղծոյն:

Վասն Պեղծ կնոջն.

Եւ ապա կալնու զթագաւորութիւնն նորա ի շար ոստ կինն այն այրի Գ ամ: Եւ գործէ շարիս մեծամեծս, և ուսուցանէ գործել նախ պեղծութիւնս յարուականս և իգականս: Յանա[ր] գս ուսուցանէ, մինչև այնպիսի թագաւորացն այն-

պիսի (173ա) սրբեալ ժողովն այնչափ խոտորին, մինչև զարուժութիւն և զի-
գականութիւն իբրև զանասունս յաւարի հրապարակի գործեսցեն: Եւ կախար-
դութիւնս և դիւթութիւնս, մինչև ուրանալ տայ զԱստուած և զինքն աստուած
տայ խոստովանել, և ապականութիւնս բազումս: Եւ լինու զաւագանս ջրով և
լուանայ զպեղծութիւնս իւր տեռատեսութեան և սրսքէ ի վերայ ամենայն ժողո-
վրդեանն և նշխարաց սրբոց և ուխտից և սուրբ սեղանոց, և պեղծէ զնոսա: Եւ
քարոզել տայ զինքն աստուած, և մտեալ ի մեծ եկեղեցոջն հանդերձ երգչաւք և
կաքաւողօքն: Եւ արբեալ ժողովն, և ինքն նստի ի վերայ սեղանոյն և խօսի
հայհոյութիւնս Աստուած Հայր և Որդի նորա և ի կոյան Մարիամ և ի սուրբս: Եւ
ժողովուրդքն իւր գործեն զանօրէն խառնակութիւնս: Յայնժամ հրամայէ Տէր
սուրբ հրեշտակապետին, և շարժէ երիցս անգամ զԲաբելոն մեծն, այս ինքն
Կոստանդինուպօլիս, և ընկղմի քաղաքն, և ծածկէ զնայ ծովն շար (173բ) ժո-
ղովն: Եւ լինի մարգարէութիւն Դանիէլի, որ ասէ. «Վա՛յ քեզ, եօթնաբլուր Բիւ-
զանդիայ, յորժամ այրին»⁹ ի քեզ թագաւորեսցէ»: Եւ այս լինի, զի ծնաւ մայրն
Նեոխնն, և յայնմհետէ լինի քաղաքն ծով: Եւ երևի Խաչն յեկեղեցոջն միայն և
սիւնն Կոստանդինոսի մեծի:

Այս Բարի թագաւորն է:

Եւ փոխի թագաւորութիւն ի նոր Բաբելոնէ ի Նիկո[մե]դեայ (°): Եւ ապա
թագաւորէ քարձ ոմն մի մարդ բարեմիտ և նեղեալ տայ զթագաւորութիւն իւր
այլում ումեմն մարդոյ բարեմտի և սրբոյ, որ լինի մարմնով տկար և շնորհաւքն
Աստուծոյ զօրաւոր: Եւ թագաւորէ ամս Ի և փոխի բարի խոստովանութեամբ ի
Քրիստոս:

Այս Զօրաւորն է:

Յետ այսորիկ թագաւորէ հօր զօրութեամբ հեզ և արդար Տիբերիոս: Ի սո-
րայ թագաւորութեան հինգ ամին ծնանի Նեոն, և թագաւորեսցէ սա ամս ԼԶ: Եւ ի
ԻԶ ամի թագաւորութեան սորա հերձի թագաւորութիւն ընդ ժ (174ա) յիշխա-
նութիւն:

XIII (21) Իսկ սա առաջնորդութեամբ հրեշտակին Աստուծոյ ելանէ յե-
րուսաղէմ և տանի անդ Փրկչին և զթագն: Եւ բնակէ անդ ամս ժ: Եւ զկնի ժ
ամին այն ժողովին ամենայն մասունք Խաչին ամենայն աշխարհէ և գան
միաբան ի Սուրբ Խաչն: XIV (2-4) Իսկ թագաւորն հանէ զԽաչն և զթագն ի Գող-
գոթայ և զհոգի իւր հանձնէ ի Աստուած: Իսկ առեալ հրեշտակաց յանդիման
ամենայն ժողովոյն նախ զԽաչն և ապա զհոգի թագաւորին և ի վերայ նորա
զթագն, և վերանան յերկինս: Զի ահա սա սուրբ և յետի թագաւոր աշխարհի
յանձն արար զթագաւորութիւն Աստուծոյ Հօր և զհոգի իւր և զԽաչն, յորում
վերայ բեւեռեցաւ Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս:

Եւ առժամայն վերացաւ յերկինս Խաչն և զթագն և ոգի թագաւորին, վասն
զի յերրորդ և փառաւորեալ գալուստ թագաւորին Քրիստոսի նախ պատուա-

⁹ ՄՄ 2270 այրեն (ուղղված է այրին):

կան Սուրբ Խաչն յերևի յերկինս՝ գալով առաջի նորայ ի խնդումն հաւատացելոց և ի կորուստ անհաւատից: Եւ աստ բարձաւ խաղաղութիւն աշխարհէ: Եւ անդ Քրիստոս է (174բ) յետին թագաւոր:

Վասն պիղծ Նեոին ասացեալ է:

Յայնժամ յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ Որդին Կորստեան, ծնունդն յանօրէնութեան: Եւ նշան յայտնելոյ սորա այս է. յորժամ լցի երկիր խռովութեամբ, և պակասի բարձր իշխանութեամբ ի Հոռոմայեցոց, զի որպէս Քրիստոս ի պակասել իշխանութեանն Յուդայի եկն, նոյնպէս և հակառակն նորա՝ ի պակասել թագաւորութեան Հոռոմայեցոց: Եւ որպէս ծանուցաւ ի ձեռն Դանիէլի շորից գազանացն՝ առիւծն թագաւորութիւն Մարաց, և արջն Բաբելացոցն, ինծն Պարսից: Էր և շորորդն՝ ահեղ և զարմանալի, որ ուտէր և մանրէր զերկիր¹⁰, որ են Հոռոմայեցոց թագաւորութիւն, որ բառնին անդ, յաւուրսն անդ ի Քրիստոսի: Արդ ծաղկի նախ անգթութիւն, և կուսանաց սէր բուսանի, և լինի սովբ և սրածութիւնք և սասանութիւնք¹¹, և, որպէս Տէր ասէ, բազում գուշակմունք եղիցին:

XIV (1, 6, 10) Արդ, մի կարծեք, թէ սատանայ է նա կամ և դե, այլ մարդ է ապականեալ մտաւք՝ ի տոհմէ մարդկան, ի սէր(175ա)մէ հաւր, յորովայնէ մաւր, որ ծնանի ի Քորոզին և սնանի ի Բեդսայիդայ, զարգանայ և մեծանայ ի Կափառնայումն՝ ի վերայ միոյ տասանց իշխանութեան, որ բաժանեալ լիցի: Յայնժամ մինն թագաւորէ ինքն և զերեքն սպանէ, և զայլն զբռամբ ածէ, և թագաւորէ ժամանակս երիս և կէս ժամանակաց, և ցնծասցէ Քորոզին, զի ծնաւ զնա, և Բեթսայիդայ, զի սնոյց զնայ, և Կափառնայումն, որ թագաւորեաց: Որպէս ասաց Տէրն, «Թէպէտ և բարձրասցիս, մինչև ի դժոխս իջցես»: ¹² Եւ ծնանի նա ի կնոջէ յազգէն Դանայ, յորմէ ազգէն էր Ակիրտոփել և Յուդայ Ակարիովտացի. ըստ մարգարէութեան Յակոբայ, որ ասէ. «Աւձ ծնեալ ի ճանապարհին հարկանէ զսմբակս ձիոյն. և անկանի յետոյ զհեծեալն, և մնայ փրկութեան Աստուծոյ» ¹³: (7) Հեծեալն՝ ճշմարտութիւն և աստուածպաշտութիւն արդարոցն, և

¹⁰ Հմմտ. Դան. է 2-7. «Եւ Դանիէլ տեսանէի ի տեսլեան գիշերոյ. Եւ ահա չորհ հողմք երկնից բախէին զծով մեծ: Եւ չորհ գազանք մեծամեծք ելանէին ի ծովէ անտի՝ այլակերպք միմեանց: Առաջինն՝ իբրեւ զմատակ առեւծ թեւատր, և թեւ նորա իբրեւ արծուոյ. հայէի մինչ թափեցան թեւ նորա և ջնջեցաւ յերկրէ: Եւ եկաց իբրեւ ի վերայ ոտից մարդոյ, և սիրտ մարդոյ տուաւ նմա: Եւ ահա երկրորդ գազանն նման արջոյ, և եկաց ի կողմն մի. և կողք երեք ի բերան նորա՝ ի մէջ ժանեաց նորա: Եւ այսպէս ասէին ցնա. Արի կեր զմարմինս բազմաց: Եւ զկնի նորա հայէի, Եւ ահա այլ գազան իբրեւ զինծ. և չորհ թեւ թռչնոյ ի վերայ նորա, և չորհ գլուխ գազանին. և իշխանութիւն տուաւ նմա: Եւ զկնի նորա հայէի. և ահա գազանն չորրորդ՝ ահեղ և զարմանալի և հզօր առաւել, և ժանիք նորա երկաթիք. ուտէր և մանրէր, և զմնացորդսն առ ոտն կոտորէր: Եւ ինքն առաւել այլակերպ քան զամենայն գազանսն որ յառաջ քան քնա. և եղբերք ժ ի նմա»:

¹¹ Հմմտ. Մատթ. ԻԿ 7. «Եւ եղիցին սով և սրածոփիւմք և սասանութիւնք ի տեղիս տեղիս»:

¹² Հմմտ. Մատթ. ԺԱ. 23 և Գուլ. Ժ 15. «Եւ դո՛ւ, Կափառնաւո՛ւմ, որ մինչև յերկինս բարձրասցիս, այլ մինչև ի դժոխս իջցես»:

¹³ Հմմտ. Ծնն. ԽԹ 17. «Եւ եղիցի Դան՝ աս զարանակալ ի ճանապարհի, հարկանել զգարչապար երկվարի. և ընկեմոյ զհեծեալն յետս, և մնալ փրկութեան Տեառն»:

սմբակ՝ յետին յաւուրսն այսպիսի են սուրբքն, որ հեծեալ են ի ձին ճշմարտութեան և հարցին յօձէն յայնմանէ շար՝ Որդոյն Կորստեան: Իսկ սմբակ զ[յ]ետին աւուրսն (175բ) ասէ՝ և զսուտն զօրութեանցն զոր¹⁴ առնէ, առ աշաւք է և ոչ ճշմարտութեամբ, զի գոյ և զօրանայ ի սատանայէ, որում ծնունդ նորա զօրութեամբ նորա է: Զինքն ծնեալ յազգէն Դաւթէ, զինքն Քրիստոս գոլ ասէ: Եւ ժողովին առ նայ հրեայքն, և հաւատան նմայ, և ազգն Դանայ՝ առաւել: Եւ առնէ նշանս մեծամեծս՝ 1260. շարժէ զերկինս և զերկիր և արկանէ յերկնից և խաւարեցուցանէ զարեգակն և զլուսինն, թօթափէ¹⁵ զաստեղս, փոփոխէ զօդս, կան[ա]չեցուցանէ զշոր փայտ: (8) Յարուցանէ մեռեալս, լուսաւորէ կոյրս, և կաղս միակողմանիս, բորոտս, դիւահարս բժշկէ, ջուր բղխէ, հաց անձրևէ: Այլ ամենայն առ աշօք է և ոչ ճշմարտութեամբ. և այնպէս ստութեամբ պատրէ զթեթևամիտ հրէայսն և «եթէ հնար է զընտրեալսն»¹⁶, որպէս Տէրն ասաց:

XIV(10) Յայնժամ մտանէ Որդին Կորուստեան յերուսաղէմ և նստի ի տաճարին Աստուծոյ, պատուեալ յամենեցուն որպէս զԱստուած¹⁷: Եւ որ հաւատան ի նա, ընկալցին նշան (176ա) ի ճակատս իւրեանց: Եւ որ ոչ հաւատան ի նա, այլ տեսանեն զզօրութիւնն նորա բազում բարկութեամբ, արձակի ի վերայ և սպանանէ զանթիւ բազմութիւնս սրով և հրով, բազում անօրինակ տանջանօք: Որոց որք համբերեն, առնուն զպսակն կենաց: (11) Եւ ի բազմանալ նեղութեանցն և շարեաց նորա ի վերայ երկրի, ոչ¹⁸ համբերէ ողորմածն Աստուած այնպէսի աղէտից և կոտորման մարդկան: Փութապէս առաքէ զկամա[կատա]րս իւր զենովք և զեղիայ՝ զսուրբ մարգարէսն իւր, զոր պահեաց կարապետ աւուրսն այնմիկ, որպէս առաջնոցն Յովհաննէս: Եւ սոքայ եկեալ յանդիմանեն զհակառակողն և զօրացուցանեն զհաւատացեալս, զի գան և յանդիմանեն առաջի ամենայն մարդկան զխաբէութիւն և զմոլորութիւն նորա՝ ասելով, թէ առ աշօք և խաբէութեամբ է գործք նորա և ոչ ճշմարտութեամբ, և մոլորեցուցանէ զմարդիք և մատնէ ի կորուստ: Եւ դէպ յանդիմանեն զնայ ի տաճարն աստուծոյ: (12) Իսկ մինչ տեսանեն (176բ) զնա մարդիք, թէ յանդիմանեցաւ ի սրբուցն ստութիւն նորա և խաբէութիւն, թողոյն զնա և հետեին սուրբ մարգարէիցն և փախչին յանօրէնէն: Իբրև տեսանէ Որդին Կորստեան զանդիմանութիւն իւր և զփախուստն մարդկան, և կալեալ զեղիայ և զենովք, շարշարէ և դառն տանջանօք, և սպանանէ զնոսս սրով: Եւ լցեալ խնդութեամբ՝ ասէ. «Եւ ոչ

¹⁴ ՄՄ 2270 գաւր (ուղղված է՝ գոյ):

¹⁵ ՄՄ 2270 թօթափէ (ուղղված է՝ թօթափէ):

¹⁶ Հմմտ. Մատթ. ԻԳ 24. «Զի յարիցեն սուտ քրիստոս և սուտ մարգարէք, և տայցեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչ մոլորեցուցանել թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն»: Հմմտ. նաև Մարկ. ԺԳ 22:

¹⁷ Հմմտ. Բ Թեւ. Բ 3. «Եւ յայտնեցի մարդն անօրէնութեան՝ Որդին Կորստեան, հակառակորդն հայարտացեալ ի վերայ ամենայնի, որ անուանեալ իցէ Աստուած կամ պաշտօն. մինչև նստել նմա ի տաճարին Աստուծոյ, եւ ցուցանել զանձն՝ թէ Աստուած իցէ»:

¹⁸ ՄՄ 2270 ո՛հ (ուղղված է՝ ոչ):

սորայ, որ անմահ կարծէին, կարացին զերծանել ի ձեռաց իմոց», և բազում հայհոյութիւնս խօսեսցի:

Իսկ հրեայքն, որ մնան, իբրև տեսանեն զայն, զղջանան, զի նեղին և տագնապին ի տանջանաց ծարաւոյ և սովու և ամենայն շարեաց, զի ոչ գտանի ի վերայ երկրի ջուր և ոչ կերակուր և ոչ դալար ինչ: Եւ տեսանեն ոսկի և արծաթ և յականս պատուականս և հանդերձս, և մեծագինս ի վերայ երկրի. և ոչ նային ի նմա մարդիկ: Եւ ասեն ցնա. «Եթէ դու ես Քրիստոսն, և իրաւի են սքանչելիքն քոյ, օգնեայ մեզ ի նեղութեանս, զի կոր(177ա)նչիմք ի սովու և ի ծարաւոյ: Տո՛ւր մեզ հաց, զի կերիցուք, զի հաց քո առ աշօք է և ոչ ուտելի: Տո՛ւր մեզ ջուր, զի արբցուք, խաղաղացո՛յ զերկիր, զի Քրիստոսն յիշխան խաղաղութեան է: Ապա թէ՛ ո՛չ առնես ընդ մեզ զայս. նա էր Քրիստոսն, որ եկն և զամենայն նշանս և զարուեստս ճշմարտութեամբ կատարեաց: Եւ հարքն մեր, անգիտացեալ նմա, ի խաչ հանին զնա, որպէս և գրեալ է վասն նորա ի մարգարէս. որ մեռաւ և թաղեցաւ և յարեաւ յերրորդ աւուր և վերացաւ յերկինս և գալոց է սպանանել զքեզ հոգով բերանոյ իւրոյ»¹⁹ և դատէ զերկիր: Իսկ դու հակառակ նորա ես և նեռն՝ խաբող և մոլորիչ մարդ, ծնեալ ի մարդոյ և լցեալ զօրութեամբ սատանայի»: Զայս լուեալ շարն, լցեալ բարկութեամբ, կոտորէ զնոսայ ի սուր սուտերի 24000 որք մկրտին յարեամբ իւրեանց: Եւ լինի մարգարէութիւն Պողոսի, եթէ՛ «Յորժամ լրումն հեթանոսաց մտցէ, յայնժամ ամենայն Իսրայէլ կեցցէ»²⁰, զի լրումն հեթանոսաց ընդ ենովքայ և եղիայի եղև: (177բ) Յետ այսորիկ ելանէ ի լեռնն ձիթենեաց և գտանէ զտապանակն տեառն, զոր Երեմիայ մարգարէն պահեաց: Եւ բանայ ճաշակել ի նմանէ, և ոչ կարէ ի մանանայէն, զի ելանէ հոր ի տապանակէն և այրէ զպեղծն հանդերձ հաւատացելովք իւր: Եւ յանկարծակի յականս թօթափելոյ լինին շարժմունք ասեղք, և որոտմունք գալարին երկինք, սասանի երկիր, խաւարի արեգակն և լուսին, թօթափին աստեղք, հիանան արարածք, ցամաքի ծովք:

(13) Յայնժամ երևի նշանն Որդոյ Մարդոյ յերկինս՝ հաշն տէրունական, որ է նշան գալստեան նորայ: Զի եկեսցէ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք և սպանանէ զնայ Տէր հոգւով բերանոյ իւրոյ:

Յայնժամ լուսափայլ երևի նշան արքունական՝ ի զօրացուցանել զպապաւինեալքս ի նա, ի պարծանս արդարոց, զի կապեսցեն զանձինս իւրեանց: Ի սէր նորա ցոլանան մասունք նշանից ամենայաղթ հաշին, և զօրութեամբ սուրբ եկեղեցեաց լուսաւորք նուագեն ի լուսոյ Սուրբ (178ա) հաշին, կոծեսցին ազգ առ ազգ: Զի գայ դատել զոչ դրոշմեալս նովաւ, որ ոչ ծանեան զյաղթութեան նշան ի հաշին: Յայնժամ գայցէ յերկնից անճառ փառօք Քրիստոս թագաւորն, գալարին երկինք, և հալի իբրև զմոմ ի հրոյ գետն հրեղէն և մթագոյն հոսի ի վերուստ ի վայր, մաքրելով զերկիր ի յանօրէնութեանց, ի շար գործոց: Լսին

¹⁹ Հմմտ. Բ Թեա. Բ 8. «Եւ ապա յայտնեսցի անօրէնն, զոր Տէր Յիսուս սատակեսցէ հոգով բերանոյ իւրոյ»:

²⁰ Հմմտ. Հռոմ. ԺԱ. 25. «Մինչև լրումն հեթանոսաց մտցէ, եւ ապա ամենայն Իսրայէլ կեցցէ»:

ձայնք լոյսեղեն զօրացն, շարժին զօրութիւնք երկնից, փողն սաստիկ հնչմամբ գոչէ ի գերեզմանս, թէ՛ «Յարի՛ք ընդ յառաջ Փեսային մեռեալք: Զի եկն եհաս հայրենի փառօք Որդին Աստուծոյ: Յարի՛ք արդարք և մեղաւորք, ընկալարուք զհաստուցումն»:

Յայնժամ առնեն ի քթթել ական արարածք ամենայն և զգենուն զանապական մարմինն փութապէս: Ապա մեղաւորքն երևին ստուերագոյնք մարմնով և բարձրանան յերկրէ, զի ներկեալ են գործովք շարութեան: Եւ խնդան արդարքն պայծառապէս մարմնով և բարձրանան յերկրէ լուսեղէն ամպօք՝ ի հանդիպումն փեսային Քրիստոսի: Եւ հիանան վերինքն ընդ նոսա և ասեն. (178բ) «զի՛նչ գործեցաք²¹ սոցա երկրի, որ երամովք գան առ Տէր զուարճացեալ»: Պատասխանի տաց նոցա Տէր. «Սոքա են բարեկամ զինուորքն իմ, որ ուրացան զանձինս իւրեանց, մեկնեցան յերկրէ և խաչեցին զանձինս իւրեանց կամօք²² ցանկութեամբ վասն իմ: Եւ արդ ես տաց զուրախութիւն իմ նոցա անսպառ»: Իբրև լսեն հրեշտակք զայս, ասեն. «Դու[ք] էք օրհնեալ ի Տեառնէ. արդ ուրախ լերուք յուրախութիւն ձեր»:

Յայնժամ նստի Թագաւորն փառաց յաթոռ իւր, և հրեշտակք սպասաւորեն նմա: Եւ նա կապեսցի սատանա և առաքի ի վիհ տարտարոսին, և շարալուկ կապին զօրքն նորա դեքն, որ ուսուցանէին մարդկան զգործս աղտեղիս: Ոչ են արժանիք նոքա ի դատաստան մտանել, զի չիք պատասխանիք նոցա: Կան և ընդ աջմէ նորա արդարքն մեծաւ յուսով, և կան յահեգէ նոցա մեղաւորքն մեծաւ ամօթով ի պահանջումն անաչառ գործոց: Ատեան դնին դպրութիւնք բանին, լինի (179ա) դատաստան: Յայնժամ ասէ Թագաւորն ընդ աջակողմեանն. «Եկա՛յք, արհնեա՛լք հօր իմոյ, ժառանգեցէ՛ք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի»:

(14) Յայնժամ արդարքն ծագեսցեն առաւել քան զարեգակն. և երևեսցին որպէս լուսաւորք յաշխարհի, որ պահեսցեն զբանն կենաց: Եւ շնորհեսցէ Թագաւորն արժանաւորացն զպսակն կենաց զբիրակնեաց: Իսկ զնոյն ձայն լսեն ձախակողմեանքն, թէ՛ «Երթա՛յք, յինէն անիծեալք, ի հուրն յաւիտենական»:

Յայնժամ կապեալ խրճունք որոմանց անկանին ի հուր: Եւ փակի նոցա դուռն ուրախութեան հարսանեացն: Եւ երթիցեն նոքա ի տանջանքն յաւիտենական, և արդարքն՝ ի կեանսն յաւիտենականս:

Եւ նորանայ երկինք, և երկիր նորոգի, և ոչ լինի յերկիր աշխատութիւնք և քրտունք, ոչ ի մարդիք ցաւք և տրտմութիւնք, ոչ օձն խաբող, ոչ կինն պարտող, այլ՝ կեանք յաւիտենական, յորմէ մերժեալ են տրտմութիւնք և հեծութիւնք: Եւ թագաւորեսցէ Տէր յաւիտեան, (179բ) Աստուած քո՝ Սիրոն ազգէ մինչև յազգ: Եւ թագաւորութեան նորա ոչ գոյ վախճան, զի նմա վայել է փառք, պատիւ և երկիրպագութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

²¹ ՄՄ 2270 գործեսցուի (ուղղված է գործեսցալ):

²² ՄՄ 2270 կամօք (ուղղված է կամօք):

ՀԱՎԵԼՎԱԾ
ԶՈՒԳԱՀԵՌ ՀԱՏՎԱԾՆԵՐ

Հատված «Հարցումն»-ից (Stone, p. 131–134) = հուն. VIII.10 + XIII.19–21

Ըստ մարգարէին եզեկիէլի. եթէ՛ յաւուրն յետնումն ի կատարածիս ելցեն Գօզ և Մագօֆ յերկիրն Իսրայելի, որ են ազգ և թագաւորք Ի՛ն, որ են այսոփիկ. ոչ կամեցայ գրել անուանքն:

Յայնժամ բացցին դրունք հիւսիսայ յանկարծակի, և ելցեն ազգ փակեալք ի ներքուստ, և սասանեսցի երկիր յերեսաց նոցա, և ընդոստեալ մարդիկ փախիցեն յայրս և ի փապարս, և <յ> անապատս ելցեն բազումք: Եւ ոչ ոք իցէ, որ թաղիցէ զնոսա, քանզի ելեալքն ի հիւսիսայ ուտիցեն զմարմինս մարդկան (= հուն. ἄνθρωπῶν, որն Օրբելցանի մոտ բացակայում է) և ըմպիցեն զգազանաց արինս: Եւ ոչ ոք կացցէ ընդդէմ նոցա <յ> երկիր. և յետ ամաց ի հասանել նոցա ի քաղաքն Յոպպէ, առաքէ Տէր զգօրաւոր իւր և հարցէ զնոսա սրով, և ի փառս սատանայի երթիցեն:

Վերնագիրն ըստ Օրբելյանի ԼԲ գլխի, ՄՄ 1487 ու ՄՄ 2644 և այլ ձեռագրերի (փոփր տարբերություններով)

Տեսիլ սրբոյն Մեթոքի՝ եպիսկոպոսին Պատարայ և վկայի. յաղագս անցելոյն, ներկայիս և ապառնեացն. ասացուածք յԱստուածաշունչ գրոց, զոր թարգմանեալ է Տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի

Հատված Օրբելյանի ԼԲ գլխից (1910 թ. վերահրատ., էջ 153–154) = հուն. XIII.19 + VIII.10

Յայնժամ ըստ մարգարէութեան եզեկիէլի, որ ասէ, եթէ՛ յաւուրս յետինս ի վախճանի աշխարհիս ելցեն Գօզ և Մագօֆ յերկիրն Իսրայելի. բացցին դրունք հիւսիսայ, և ելցէ զօրութիւն ազգացն, զորս արգել Աղեքսանդր ի ծագս հիւսիսոյ՝ Գոզ և Մագոգ ... այսոփիկ Ի՛ն թագաւորութիւնք, որք են արգելեալք ընդ դրամբքն, զոր կանգնեաց Աղեքսանդր: Եւ տեսցեն մարդիկ և զարհուրեսցին. և փախիցեն և թաքիցեն ի լերինս և յայրս և ի գերեզմանս. և սատակիցին բազումք, և ոչ ոք իցէ, որ կարիցէ թաղել, քանզի ազգքն որ ելանեն ի հիւսիսայ ոստեն զմարմինս և ըմպեն զարինս զգազանաց... Եւ ապականեսցեն գերկիր, և ոչ ոք իցէ, որ կարիցէ կեալ առաջի նոցա. և յետ եօթն և կիսոց ամաց հասցեն ի քաղաքն Յոպպէ: Առաքէսցէ Տէր զգօրաւոր իւր և հարցէ զնոսա ի վայրկենոց միում:

Վերնագիրն ըստ Վնտկ. թիվ 259 և Զարբհանայանի հիշատակած (էջ 563–564) մեզ անհայտ ձեռագրի (փոփր տարբերություններով)

Մեթօտիու Պատրիանու եպիսկոպոսի՝ ի մեկնութենէ Դանիէլի մարգարէին, զոր արար ի յետ բանից իւրոց. ի մեկնութենէ տեսեանն չորից հողմոցն և չորից գազանացն. ստոյգ պատմութիւն չորից ինքնակալ թագաւորացն. և վասն տիրելոյ հեթանոսացն և յետին ժամանակին, և նեղութեանց, որ լինելոց է. և վասն թագաւորացն, որ փոխադրեցան, և վասն գալստեանն Քրիստոսի՝ Աստուծոյ մերոյ

Սկիզբն ըստ «Հարցման»	Սկիզբն ըստ Զարբհանայանի ձեռագրի	Սկիզբն ըստ Վնտկ. թիվ 259-ի
Յորժամ Ադամ և Եւա ելեալք ի դրախտէն կոյս գոլով, յետ և ամի ծնան զԿայէն և զհուր նորա զՔաղբան: (Ջարբհանայանի ձեռագրում առկա երկրորդ նախադասութիւնն այստեղ բացակայում է:)	Յորժամ Ադամ և Եւա ելեալ ի դրախտէն կոյս գոլով, յետ և ամի ծնան զԿայէն և զհոյր նորա զՔաղբանան: Եւ յետ այլ ևս և ամի ծնան զՀաբել և զԱղետովբա քոյր նորա:	Մինչ ելին ի դրախտէն Ադամ և Եւայ, կուտ էին, և զկնի և ամի ելանելոյ ի դրախտէն ծնան զԿայէն զանդրանիկն և զԿալմանայ քոյրն նորա: (Սարգիսյանը չի մեջբերել այս հատվածի շարունակությունը:)
Հատված Սուրբ Ներսեսի վարհից (Վենետիկ 1853, էջ 95)	Հատված Զարբհանայանի ձեռագրից (էջ 29բ)	Երկու հատված Օրբելյանի և Գլխի տարբեր մասերից
Առդ, մի կարծիք, թէ սատանայ է կամ դև ի գորաց նորա. ոչ, այլ՝ մարդ ապականեալ մտօք ի տոհմէն Դանայ. և ծնանի ի Քորագին գեղջէ, յագգէ Իսրայէլի, և անուն հօր նորա Հոովմելայ և մօր նորա Ներկիմինէ, և անուն նորա Հոասիմ:	Առդ, մի կարծիք, թէ սատանայ է նա կամ դև, այլ մարդ է ապականեալ մտօք ի տոհմէ մարդկան, ի սերմէ հօր, յորովայնէ մօր. ծնանի ի Քորագին և անանի ի Բեղսայիդայ, զարգանայ և մեծանայ ի Կափառնատամն:	էջ 156-157 եւ նստցի ի տաճարին Աստուծոյ, հաւասար Աստուծոյ՝ մարդոյ տեսակով մարմնաւորի. ի սերմանէ առն և յարգանդէ կնոջ, ի ցեղէն Դանայ... էջ 155 Սա ծնցի ի Քորագին և սնցի ի Բեթսայիդայ, և թագաւորեսցէ ի Կափառնայում:

ARAM TOPCHYAN
THE OLD ARMENIAN VERSION OF THE APOCALYPSE OF PS.-
METHODIUS
 (Study and Texts)

Keywords: prophecies, Byzantine apocalypses, Sons of Ishmael, the victory of the Last Roman Emperor, old Armenian translation, Stepanos Orbelean, Stepanos Syunetsi, parts of the work and redactions in Armenian.

There existed an Armenian text of the *Apocalypse* of Ps.-Methodius, possibly complete and translated from the oldest Greek version in the late seventh or early eighth century. Witnesses to that translation are Chapter 32 of Stepanos Orbelean’s *History*, corresponding to the “prophetic” part of the *Apocalypse* and also found in manuscripts as a separate work, as well as the document entitled *Question* in M9100 and forming part of

Vanakan Vardapet's *Book of Questions* (it contains passages from the "historical" section of Ps.-Methodius). Alongside this version, another, very different redaction of the *Apocalypse* bearing traces of the Crusades and later events also circulated in Armenia.

This study discusses the existing old Armenian texts related to the *Apocalypse* of Ps.-Methodius and offers a new edition of the texts themselves with an appendix (a collation of parallel passages).

АРАМ ТОПЧЯН
ДРЕВНЕАРМЯСКИЙ ПЕРЕВОД АПОКАЛИПСИСА ПСЕВДО-
МЕФОДИЯ

(Исследование и тексты)

Ключевые слова: пророчества, византийские апокалипсисы, сыны Исмаила, победа Последнего Римского Императора, Степанос Орбелян, Степанос Сюнеци, части и редакции текста на армянском.

Существовал армянский текст *Апокалипсиса* Псевдо-Мефодия – возможно, полная его версия – переведенный с древнейшей греческой редакции в конце VII или начале VIII в. Свидетельствами перевода являются 32-ая глава *Истории* Степаноса Орбеляна, которая соответствует “пророческой” части *Апокалипсиса* (иногда фигурирует в рукописях как самостоятельное произведение), и документ, который в рукописи 9100 Матенадарана называется *Вопрошание*, а также входит в состав *Книги вопрошаний* Ванакана Вардапета (он содержит отрывки из “исторической” части Псевдо-Мефодия). Кроме этого перевода, в Армении была в обращении еще одна, сильно отличающаяся от него редакция *Апокалипсиса*, в которой заметны намеки на Крестовые походы и более поздние события.

В данной статье рассматриваются древнеармянские тексты, имеющие отношение к *Апокалипсису* Псевдо-Мефодия, и предлагается новое издание самих текстов с приложением (сопоставление параллельных отрывков).

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՀԱՆԳԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

1. Հոդվածին և ամփոփումներին, վերնագրից հետո, պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:

2. Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ ռուսերեն և անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն)՝ 100-300 բառ ծավալով: Այլապեզու հոդվածների դեպքում, ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», “Резюме”, “Summary” և նման նշումների:

3. Հայերենի համար օգտագործել AMM MairTcutcak (unicode) տառատեսակը: Ռուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (italic), չափը՝ 12, տողատակինը՝ ուղիղ, չափը՝ 10:

4. Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը.

ա. Գրքերի և պարբերականների վերնագրերը գրել շեղատառ (italic):

բ. Հոդվածների (և գրքերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), չակերտների մեջ:

գ. Շարքերի վերնագրերը գրել փակագծերում ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:

դ. Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:

ե. Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը (կամ ճանաչելի ձևով համառոտումով):

զ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «նույն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նույն հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել՝ «նույնի» և աշխատության տվյալները:

է. Մրանց գումարվում է *RU*-ում ավանդական դարձած՝ հեղինակի անունը թավ (bold), իսկ խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ (bold + italic) գրելու պահանջը:

Օրինակներ՝

Դափթ Անյաթ, *Սահմանք իմաստասիրութեան*, համահավաք ֆննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները *Ս. Ս. Արևշատյանի*, Երևան, 1960, պրակի ժե., էջ 132:

Paul J. Alexander, “Medieval Apocalypses as Historical Sources,” *American Historical Review*, 73, 1968, p. 998:

Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի* (ՄՀ¹, ԺԵ. հատոր, Ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437:

Philonis Alexandrini Quaestiones in Genesim et in Exodum. *Fragmenta Graeca*, ed. F. Petit (Les oeuvres de Philon d'Alexandrie 33), Paris, 1978:

5. Հանախակի հղվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ, որոնց ցանկը կցել հոդվածի վերջում:

6. Գլխավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):

Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք):

Վնտկ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն):

Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն):

Փրգ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան):

(Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն առաջիկայում: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայքէջում գետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilisés pour désigner les manuscrits*, (Coulie – 2002),

<http://sites.uclouvain.be/aiea/wp-content/uploads/2014/03/Sigles.pdf>:

¹ = Մատենագիրք հայոց: Այլ հանրահայտ հապավումներ են ՊԲՀ = Պատմաբանասիրական հանդես, ԲՄ = Բանբեր Մատենադարանի, ՀԱ = Հանդես ամսօրեայ, ԼՀԳ = Լրաբեր հասարակական գիտությունների, ԲԵՀ = Բանբեր Երևանի համալսարանի, REArm = Revue des Études Arméniennes:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գուրգեն Գասպարյան	Հրաչյա Թամրազյանի հիշատակին	6
Արուսյակ Թամրազյան	Հրաչյա Թամրազյանի կենսամատենագիտությունը	9

**ՆԱՐԵԿԱՅԻԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ (28-29 հոկտեմբերի, 2016)՝
ՆՎԻՐՎԱԾ ՀՐԱԶՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**

Ժան-Պիեռ Մանե	Հրաչյա Թամրազյանը և նարեկացիագիտությունը	20
Կլաուդիո Գուջերոտտի	Նարեկացու ծիսական պատկերների վերաբերեալ որոշ դիտարկումներ	30
Թեո Մասարոն Կան Լինա	For whom the Bell Tolls. Մատենան Ողբերգութեան ՂԲ Բանը և Ջոն Դոնի «Ում համար է ղողանջում գանգր»	37
Շանե Անանյան	Սողոմոնի ապաշխարությունը և Ս. Գրիգոր Նարեկացին	54
Արուսյակ Թամրազյան	Ջայնի, երաժշտական հնչողության փոխակերպումները Գրիգոր Նարեկացու պատկերային համակարգում	61
Գոհար Մուրադյան	Հրաչյա Թամրազյանի նարեկացիագիտական վերջին գրքերը	103

«ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՅՔ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԴԱՎԱՆԱՆՔ» (22-24 հունիսի, 2016) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Արփինե Ասրյան	Գիտաժողովի մասին	108
Հարություն Մարության	Տայֆի նարտարապետության պատմության ուսումնասիրությունը և խորհրդային գրաֆննությունը	112
Լիանա Նազարյան	Բագրատունիների վրացական նյուդի սկզբնավորումը	131
Արկաղի Ակոպով	Թորթովի գավառի վարչաժողովրդագրական պատկերը (XVI դ. –XVII դ. առաջին կես)	149

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգի Միրզաբեկյան	Վաղարշապատի 1728 թ. օսմանյան հարկացուցակը	170
Վեներա Մակարյան Մովսես Խեչո	Շարիա դատարանների արձանագրությունները հալեպահայության կարգավիճակի վերաբերյալ (XVII-XIX դ.)	194

Ռախսա Ամիրբեկյան	Un portrait en miniature du XV ^e siècle: Sultan Baysunkur Bahador khan, prince Timuride (collection du Matenadaran).....	209
-------------------------	---	-----

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Օլգա Վարդագարյան	Ինչպե՞ս Մաշտոցը դարձավ «ակիմիտ»	219
Մարի Մամյան	«Մանկության ատետարան»-ի և Հակոբոսի նախա-ավետարանի հայերեն թարգմանություններ	231

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՌԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Քրիստինե Կոստիկյան	Իրանի նախախալամական շրջանի գրականության նմուշները բովանդակող ձեռագրերը Մատենադարանում	245
---------------------------	---	-----

ԲՆԱԳՐԵՐ, ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ջուլիետա էյնաթյան	Հովհաննես Սարկավազի «Յաղագս անկիւնավոր թոռոց» աշխատությունը	260
Գոհար Մուրադյան	Բարոյախօս (Physiologus). հայերեն խմբագրություններ	291
Արամ Թոփչյան	Կեղծ-Մեթոդիոսի «Հայտնության» հին հայերեն թարգմանությունը	330

<i>Բանբեր Մատենադարանի</i> հանդեսի հոդվածների ձևավորմանը վերաբերող պահանջներ	379
--	-----

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 23

BULLETIN OF MATENADARAN


Volume 23

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 23

*Էջադրումը, համակարգչային ձևավորումը և ներդիրը՝ Շողիկ Զաղոյանի
Անգլերեն ամփոփումների խմբագրումը՝ Գոհար Թոփչյանի
Ոճական խմբագիր՝ Արմինե Գրիգորյան*

Հ. Մարտիան Տայֆի նարտարապետության պատմության ուսումնասիրությունը և խորհրդանայ գրաֆնությունը




Նկ. 1

Լիանա Նազարյան
Բագրատունիների վրացական ճյուղի սկզբնավորումը
(տոհմաձառեր ըստ աղբյուրների)


ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ




ԱՂՅՈՒՍԱԿ 2

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԾԻՐԱՆԱԾԻՆ




ԱՂՅՈՒՍԱԿ 3

ՎԱՐԳԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ ԿՈՍՏԱՆԳԻՆ ԾԻՐԱՆԱԾԻՆ




ԱՂՅՈՒՍԱԿ 4

Դավթի որդի Սմբատ




ԱՂՅՈՒՍԱԿ 5

Ջուանչեր պատմիչ




ԱՂՅՈՒՍԱԿ 6

«ՎՐԱՅ ԴԱՐՁ» (ՅՈՋՇԵՎԱԾ ԺԱՐՏԼՈՏԻՅԱԾ)




ԱՂՅՈՒՍԱԿ 7

«Վրաց Տարեգիրք»



ԱՂՅՈՒՍԱԿ 8

Վարիսուշտի Բագրատին



Raïssa Amirbekyan
Un portrait en miniature du XV^e siècle: sultan BaysunkurBahador khan,
prince Timuride



Fig. 1